Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Րաֆֆի

Դաւիթ Բէկ

1882

891.99
Ր-35

ՐԱՖՖԻ

ԴԱՒԻԹ ԲԷԿ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

(1722—1728)

«Խորհեցաւք զկապանս նոցա,
«Եւ ընկեցաւք ի մէնջ զլուծ նոցա»։
Սաղմոս

ԵՐՐՈՐԴ ԳԻՐՔ

(*Արտատպած «Մշակ» լրագրից*)։

ԹԻՖԼԻՍ
Կովկաս. փոխ. կառավ. տպարանում։
1882

24.08.2013
59.164

Дозв. ценз. Тифлисъ, 13-го Марта 1882 года.

445
46

(Перепечатано изъ газеты «Мшакъ»).

ԵՐՐՈՐԴ ԳԻՐՔ

ԴԱՒԻԹ ԲԷԿ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

(1722—1728)

ԵՐՐՈՐԴ ԳԻՐՔ

Ա.

1722 *թուին Դաւիթ բէկը թողեց Վրաստանը և վերադարձաւ իր հայրենիքը։*

Ի՞նչ դրութեան մէջ էր այն ժամանակ Հայաստանը, ի՞նչ քաղաքական նպաստիչ հանգամանքներ ի նկատի ունէր այդ հերոսը, որ այնպէս վստահութեամբ ձեռնարկում էր մի մեծ, մի և նոյն ժամանակ խիստ վտանգաւոր գործի։ —Այդ հարցերը պարզելու համար մենք համառօտ կերպով կը նկարագրենք այն ժամանակվայ մի քանի պատմական անցքեր։

Պարսկաստանը քայքայման վիճակի մէջ էր։ Շահ-Սուլէյմանի որդի Շահ-Յուսէյն իններորդի

28 տարվայ Թոյլ, անհոգ, մի և նոյն ժամանակ
թմրեցուցիչ կառավարութիւնը խլել էր այդ սոս-
կալի պետութիւնից նրա պատերազմական ոգին։
Արիւնհեղութիւնը, բարբարոսական անգթութիւ-
նը, դէպի ամեն կողմ ահ և սարսափ տարածելը,
որ այնքան յատուկ էր բոլոր Սէֆէվիներին և
որը այդ տոհմի բռնակալների իշխանութիւնը
պահպանելու ամենագլխաւոր պայմանն էր,—այդ
յատկութիւններից զուրկ էր երկչոտ Շահ-Յու-
սէյնը, Սէֆէվիների համարեա վերջին ժառանգը։
կրօնասէր, մոլեռանդ Թագաւորը շրջապատել էր
իրան հոգեորականներով, դէրվիշներով, սուրբ
գրքերի մեկնիչներով, և փոխանակ տէրութեան
գործերով զբաղվելու, իր ժամանակը անց էր
կացնում զօրանի ընթերցանութեամբ և անդա-
դար նամազներ անելով։ Այդ պատճառով նա
ստացաւ ժողովրդից «մօլլայ» կոչումը, որ մի
ծաղրական կոչում էր պարսից Թագաւորի հա-
մար։ Երկրի կառավարութիւնը Թողված էր աւա-
զակ, չահախնդիր փոխարքաների կամայականու-
Թեանը, որոնք անպատիժ կերպով կողոպտում
էին ժողովուրդը, որոնք ամեն տեղ տարածում
էին Թշուառութիւն և աղքատութիւն, իսկ Թու-
լամորթ Շահի սիրտը գրաւում էին նրանով միայն,
որ երբեմն նահանգներից նրա համար ընծայ էին
ուղարկում գեղեցիկ աղջիկներ։ Թագաւորի հա-
րեմը ճոխանում էր, լցվում էր աշխարհի ամեն

տեսակ գեղեցկուհիներով, իսկ ժողովուրդը ու-
տելու հաց չունէր։ Արքունիքի դիւանի մէջ մեծ դեր էին խաղում խորամանկ ներքինիները և բազմաթիւ շողոքորթները։ Խելացի մարդիկը, քաջ պատերազմողները, պետութեան փառքն ու պատիւը պահպանողները հեռացած էին ասպարէզից։ Ամեն տեղ տիրում էր դժգոհութիւն, ամեն կողմից յայտնվում էին բողոքներ։ Բայց ժողովրդի ցաւերին ճար ու դարման տանող չը կար։ Մի արտաքին զարկ բաւական էր, որ այդ ընդարձակ, ահեղ պետութիւնը քայքայվէր, և նրա բազմասեռ տարերքը լուծվելով, բաժան-բաժան լինելով, կազմէին զանազան անկախ իշխանութիւններ։

Պարսկաստանի այդ խարխուլ, անդադար օրօրվող դրութիւնը չէր կարող աննկատելի մնալ նրա հարևան պետութիւններից։ Աւղանիստանը, որ այն ժամանակ պարսից իշխանութեան ներքոյ էր գտնվում, առաջինը եղաւ, որ ապստամբութեան դրօշը բարձրացրեց։ Ղանդահարի սուլթան Միր-Վէյսը, սպանելով պարսից զօրապետ Գիօրգի-խանին, *) իրան Աւղանիստանի անկախ ամիր հրատարակեց։ Իսկ նրա որդի Միր-Մահմուդ-խանը, աւելի զօրանալով, մտածում էր տիրել Պարսկաստանին և ինքը նրա Թագաւորը դառնալ։

*) Մահմեդականութիւն ընդունած վրացի։

Երիտասարդ Մահմուդի փառասիրութեանը նըպաստեցին մի քանի սաստիկ պարտութիւններ, որ կրեցին պարսից զօրքերը այլ և այլ կողմերում։ Զանազան վայրենի, գաղանաբարոյ ցեղեր, որ բնակվում էին պետութեան մէջ, կամ թափառում էին նրա սահմանների վրա, ապստամբվելով, սկսեցին կողոպտել ժողովուրդը և ամայի դարձնել երկիրը։ Նրանք քանդեցին շատ քաղաքներ, կրակի մատնեցին բազմաթիւ գիւղեր։ Քրդերի աւազակ ցեղերը իրանց արշաւանքները տարածեցին մինչև պարսից մայրաքաղաքի՝ Սպահանի պարիսպների մօտ։ Հիւսիսից Խօրասանի նահանգը աւերակ դարձաւ կատաղի ուզբէկների և թուրքմէնների բարբարոսութիւններից։ Հարաւային կողմից ապստամբվեցան Լօրիստանի և Խուժիստանի թափառական ցեղերը։ Մի և նոյն ժամանակ Մասկաթի իմամը յարձակվեցաւ Պարսից ծոցի կղզիների վրա և տիրեց նրանց։ Արևմտեան կողմից լեզգիների Ղադի-Ղումուխ ցեղի գլխաւորը՝ Սուրխէյ-խանը՝ կովկասեան անթիւ լեռնաբնակներով յարձակվեցաւ Շիրվանի վրա, տիրեց Շամախին և անցաւ մինչև Սևանայ լիճը, կոտորելով ժողովրդի մեծ մասը։ Ի լրումն այդ բոլոր դժբախտութիւնների, արևմտեան Պարսկաստանի մայրաքաղաք Թաւրիզը ենթարկվեցաւ երկրաշարժութեան և բնակիչների մեծ մասը ոչնչացաւ։

Պարսկաստանը իր օրհասականի մէջն էր։ Երկնքի վրա յայտնվող զանազան երևոյթներ գուշակել էին տալիս շահի աստղագէտներին, թէ այդ պետութեան վախճանը հասել է։

Յիշեալ ներքին և արտաքին խռովութիւնների միջոցում, 24 տարեկան Միր-Մահմուդ-խանը, 20,000 աւղանական զօրքով, Ղանդահարից արշաւեց դէպի Պարսկաստան՝ այդ համարեա անիշխանութեան ենթարկված պետութիւնը տիրելու համար։ Նա արդէն գտնվում էր Սպահանից մի երկու օրվայ ճանապարհի հեռաւորութեան վրա, բայց անհոգ Շահ-Յուսէյնը տակաւին ոչ մի զօրեղ միջոց ձեռք չէր առել թշնամու առաջը կտրելու համար։ Նա բաւականացաւ նրանով, որ մարդիկ ուղարկեց Մահմուդի մօտ, առաջարկելով նրան մեծ գումար, որ թողնէ պարսից երկիրը և վերադառնայ իր տեղը։ Բայց հպարտ Մահմուդը, ուշադրութիւն չը դարձնելով Շահի առաջարկութեանը, շարունակեց իր արշաւանքը։ Այն ժամանակ միայն շահը ուղարկեց նրա առջև իր զօրքերը, երբ թշնամին կանգնած էր Սպահանից երեք մղօն հեռաւորութեան վրա։ Գիւլնաբադի ճակատամարտի մէջ պարսից զօրքերը սաստիկ ջարդվեցան, և մնացածները փախչելով, մտան քաղաքը։ Աւղանները պաշարեցին քաղաքը, որ տևեց մի քանի ամիս։ Բոլոր ուտեստները սպառվելով, բնակիչները

սկսեցին ուտել հին կօշիկների կաշի, ոսկորներ և մինչև անգամ փ է հ ի ն։ Մի տղայ, կտրելով սովից մեռած քրոջ ստինքը, կերաւ։ Այդ ժամանակ Շահը դեսպաններ ուղարկեց Մահմուդի մօտ այդ խօսքերով. «Կը տամ քեզ 100,000 թուման փող, Խօրասանի և Քիրմանի նահանգները,—իմ աղջիկն էլ կը տամ քեզ, միայն եկ հաշտվենք և կապրենք միասին ինչպէս հայրը որդու հետ։—Ա՛ռ այդ բոլորը և հեռացիր իմ քաղաքից»։ Մահմուդը այդ պայմանների հետ չը համաձայնվեցաւ։—«Գնա, յայտնիր քո թագաւորին, ասաց նա դեսպանին,—դու տալիս ես ինձ 100,000 թուման և այդ երկրները։ Ախար նրանք արդէն ինձ են պատկանում, իսկ դու առաջարկում ես ինձ հէնց իմ փողերն ու նահանգները։ Դու առաջարկում ես ինձ քո աղջիկը։ Ինչին է պէտք ինձ քո աղջիկը։ Քո բոլոր աղջիկներին, քո բոլոր որդիներին ես կը տամ իմ ծառաներին։ Խելքի մօտ բան չէ, որ դու մտածել ես։ Ես չեմ հեռանայ Սպահանից»։

Սպահանի պաշարման ժամանակ աւելի սարսափելի վիճակի ենթարկվեցան Նոր Ջուղայի հայերը։ Նրանց թիւը այն ժամանակ հասնում էր 30 հազար հոգու, բնակվում էին մի առանձին արուարձանում, որ համարեա մի ջոկ քաղաք էր Սպահանի մօտ։ Երբ աւղանները մօտե-

ցան, հայոց հասարակութիւնը իր դ ա ր ո ւ ղ ա յ ի ն և ք ա լ ա ն թ ա ր ի ն *) ուղարկեց Շահի մօտ, խնդրելով, որ զօրքեր տան իրանց քաղաքի պաշտպանութեան համար։ «Մեր զօրքերը ուղարկեցինք պատերազմելու, պատասխանեցին նրանց, դուք ուղարկեցէք Շահի արքունիքի պահպանութեան համար 3,000 լաւ զինուորված տղամարդիկ»։ Քալանթարը և դարուղան կատարեցին այդ հրամանը, բայց չահի դրանիկները բոլոր հայ զինուորների զէնքերը առնելով, ասեցին նրանց. «գնացէք, այլ ես մեզ պէտք չէք»։ Այս խաբէյութիւնը սաստիկ զայրացրեց հայերին, մանաւանդ երբ պարսիկները սկսեցին զինաթափ անել Նոր Ջուղայի մնացած հայերին ևս։ «Դուք մեզ զինուորներ չը տուեցիք, աղաղակում էին հայերը, այժմ չէք էլ թողնում, որ մեր զէնքերով պաշտպանենք մեր քաղաքը»։ Բայց անիրաւ պարսիկները նրանց բողոքը չը լսեցին, որովհետև հրամանը Շահիցն էր։ Այդ բաւական չէր, որ անզէն, անպաշտպան հայերին թողեցին գազանաբարոյ աւղանների կամքին, բացի դրանից, նշանաւոր ք է դ խ ո ւ դ ա ն ե ր ի *)

---

*) Դ ա ր ո ւ ղ ա յ նշ. ոստիկանութեան գլխաւոր. ք ա լ ա ն թ ա ր նշ. քաղաքապետ։ Սկսեալ Շահ—Աբաս մեծի օրերից, Նոր Ջուղայի հայերը զանազան ուրիշ արտօնութիւնների հետ ունէին և իրանց քաղաքային ինքնավարութիւնը։

*) Քէդխուդայ նշ. ժողովրդի գլխաւոր։

ընտանիքները որպէս պատանդ տարան Սպահան և փակեցին քաղաքի պարիսպների մէջ։ Այդ բոլոր դաւաճանութիւնները կատարվեցան այն նպատակով, որ բթամիտ Շահի խորհրդականները խրատ էին տուել նրան, թէ «հայերին զինաթափ անելով և աւղանների ձեռքը մատնելով, մենք կարող ենք ազատել Սպահանը, որովհետև աւղանները յափշտակասիրութեան նպատակով եկած են մեզ վրա, հայերի անբաւ հարստութիւնը կը կողոպտեն, և դրանով լիացած, բաւականացած, յետ կը դառնան ու մեզ հանգիստ կը թողնեն։» Բայց նրանք սխալվեցան իրանց յիմար հաշիւների մէջ։

Նոր Ջուղան Սպահանի արուարձանը լինելով, պէտք էր առաջ նրան տիրել և յետոյ անցնել բուն քաղաքին։ Ջուղայի հայերը, հաւաքելով իրանց մնացած ուժերը, սկզբում քաջութեամբ պաշտպանվեցան։ Բայց որովհետև չունէին ոչ թնդանօթներ և ոչ բաւականաչափ ռազմամթերք, այդ պատճառով ստիպվեցան վերջը անձնատուր լինել։ Չորս օր անցել էր, որ աւղանները տիրել էին Ջուղային, բայց դեռ հայերի ոչ քալանթարը, ոչ դարուղան և ոչ էլ քէդխուդաները չէին գնացել յաղթող Մահմուդին երկրպագելու և իրանց հպատակութիւնը նրան յայտնելու։ Այդ սաստիկ գրգռեց աւղան բռնապետի բարկութիւնը և հրամայեց բոլոր հայերին

կոտորել։ Բայց հայոց գլխաւորները իրանց արդարացրին նրանով, որ Մահմուդի ոտները ընկնելով, յայտնեցին. «մեր ընտանիքները պահված են Սպահանի մէջ իբրև պատանդ, եթէ մենք ձեզ մոտ գալու լինէինք, Շահը կը հրամայէր մեր կնիկներին, մեր զաւակներին կը կոտորէին»։ Այդ իրաւացի պատճառները թէև ամոքեցին Մահմուդի բարկութիւնը, բայց դարձեալ հրամայեց նա հայերից առնել 70,000 թուման տուգանք։ Ահա ինչպէս է նկարագրում մի ժամանակակից ականատես իր յիշատակարանի մէջ յիշեալ ահագին գումարի հաւաքման եղանակը․ «Այն րոպէում նշանակեցին հարկահաններ և ուղարկեցին 70,000 թումանը հաւաքելու։ Հարկահանները Ջուղայի քալանթարի և քէդխուդաների հետ սկսեցին ման գալ տնից տուն և հաւաքել բոլորը, որքան կնիկները ունէին թանգագին քարեր, մարգարիտ, ոսկի, արծաթ և մետաքսեղէն կերպասներ։ Այդ բոլորը դիզեցին մի տեղում։ Մետաքսեղէն կերպասները, արծաթը ընդունեցին քառորդ գնով։ Մէկ մսխալ ոսկուն նշանակեցին 1000 դիան *)գին։ Թանգագին քարերը, մարգարիտը և ոսկին կշռում էին այնպիսի կշիռքով, որը միայն գարի կշռելու համար էին գործածում։ Դրանց հետ աւղանները տարան 62 աղջիկներ։ Բացի դրանից Ջուղայե-

*) 1000 դիանը հաւասար է 30 կոպէկի։

ցիներից առնվեցաւ 5000 կտոր աթլաս, ղուժնի, մահուդ, շալեր, և զանազան զգեստներ, որ բաժանեցին զօրքերին։ Այլև առեցին նրանցից բազմաթիւ վերմակներ, բարձեր, անկողիններ, այդ բոլորը պատրաստված էր մետաքսից, ղուժնիից և աթլասից։ Այլ ես չեմ խօսում եկեղեցիների թանգագին անօթների և սուրբ սպասների յափշտակութեան մասին, որ կողոպտեցին աւղանները այն ժամանակ, երբ նրանք ինքնակամ թափվեցան հայոց տների մէջ, սկսեցին թալանել, և մինչև անգամ քանդել շինուածքները»։

Չը նայելով, որ պարսիկները այսպէս դաւաճանութեամբ Ջուղան մատնեցին աւղանների ձեռքը, որպէս զի Սպահանը ազատեն, բայց պարսից մայրաքաղաքը աւելի վատթար վիճակի ենթարկվեցաւ։ Ոչինչ չէր կարող լիացնել անյագ աւղանների յափշտակասիրութիւնը։ Շահի գանձը, նրա արքունիքը այնպէս կողոպտվեցաւ, որպէս Ջուղայեցի հայ տունը։ Նրա որդիները կոտորեցին, ամբողջ հարեմը բաժանեցին իրանց մէջ, տալով շահին երեք կին միայն։ Նրա որդիներից կենդանի մնաց միայն Թահմազ-Միրզան, որ Սպահանի պաշարման ժամանակ գաղտնի փախաւ դէպի Մազանդարան։ Մի քանի ամբողջ շաբաթներ Պարսկաստանի լայնատարած մայրաքաղաքում կատարվում էր աւարառութիւն և կոտորած։ Այդ միջոցին երիտասարդ Միր-Մահ-

մուդ-խանը դեռ չէր մտել քաղաքը։ Նա գտընվում էր Ֆարահաբադի *) փառաւոր ապարանքի մէջ և սպասում էր, մինչև իր զօրքերը վերջացնեն իրանց բոլոր բարբարոսութիւնները։

Երբ ամեն ինչ վերջացած էր, Միր-Մահմուդ-խանը պահանջեց, որ Շահը անձամբ գայ իր մօտ և տանէ քաղաքը յանձնէ իրան։ Ծերունի Շահ-Յուսէյնը իր պալատականներով գնաց յաղթողի մօտ։ Նա մտաւ Ֆարահաբադի այգին, այն այգին, որ թէ իր և թէ իր նախորդների մշտական զուարճութեան դրախտն էր, ուր վառնվում էին Պարսկաստանի ահագին գանձերը, ուր յաւերժական հուրիների նման փայփայվում էին այդ երկրի ամենագեղեցիկ կնիկները։ Նա մտաւ այդ այգին յաղթված, խոնարհված, անարգված։ Մի քանի ժամ արեգակի տակ սպասել տալուց յետոյ, ընդունեցին նրան Մահմուդի մօտ։ Նա արտասուքը աչքերում մօտեցաւ հպարտ աւղանին, և արքայական ջիխկան *) իր գլխից առնելով, և իր ձեռքով նրա ճակատին կապելով, ասաց. «Որդի, իմ մեղքերի համար Աստուած այլ ես

---

*) Ֆարահաբադ գեղեցիկ այգի է Սպահանի մօտ, որի մէջ կառուցված է Սէֆէվի թագաւորների ամառային ապարանքը։

*) Ջիխկա կոչվում է պարսից թագաւորների պսակը, որ ամբողջապէս շինված է լինում թանգագին քարերից։

ինձ արժանի չէ համարում կառավարելու իմ թագաւորութիւնը։ Իմ թագը Նա տուեց քեզ։ Ահա ես դնում եմ քո գլխին։ Եւ թող օրհնեալ լինի քո թագաւորութիւնը։»

Նոյն օրը Միր-Մահմուդ-խանը, որպէս պարսից թագաւոր, մտաւ Սպահան քաղաքը, և յաղթական փառքով գնաց Սէֆէվիների արքունիքը։ Այդ օրից այդ տան թագաւորութիւնը համարեա թէ վերջացաւ։

Բ.

Միր-Մահմուդ-խանը տիրելով Սպահանին, Պարսկաստանի արևելեան մասը ամբողջապէս ընկաւ աւղանների իշխանութեան ներքոյ։ Իսկ արևմտեան մասնում, որի հետ և Հայաստանում, այդ ժամանակ կատարեալ անիշխանութիւն էր տիրում։ Թէև աթոռազուրկ Շահ-Յուսէինի որդի Թահմազ-Միրզան, Սպահանի պաշարման միջոցում, գաղտնի փախչելով դէպի Մազանդարան, իրան պարսից թագաւոր հրատարակեց, և այնտեղից գալով Ատրպատական, երկրաշարժութիւնից քայքայված Թաւրիզը իրան աթոռանիստ քաղաք ընտրեց, բայց նրա ուժերը այնքան թոյլ էին, որ հազիւ թէ կարող էր այդ երկրները պահպանել։ Մտածելով, թէ իր բոլոր դժբախտութիւնների պատճառը հայերն են, թէ նրանք առաջնորդեցին աւղաններին, թէ նրանք միացած են իր թշնամիների հետ, Թահմազ-

Միրզան, որ այժմ կոչվում էր Շահ-Թահմազ, կամեցաւ իր վրէժխնդրութեան թոյնը թափել Թաւրիզի հայերի վրա, հրամայելով նրանց բոլորին կոտորել։ Բայց նրա Յովհաննէս անունով հայազգի ժամագործը, որ շատ սիրելի էր թագաւորին, ամոքեց նրա բարկութիւնը և ազատեց հայերին մի մեծ կոտորածից։

Բոլոր հանգամանքները նպաստում էին Պարսկաստանի բաժան-բաժան լինելուն և նրա իսպառ կործանմանը։ Այդ հանգամանքներից օգուտ քաղելով, երկու աւելի հզօր պետութիւններ՝ օսմանցիք և ռուսները՝ աշխատում էին իրանց ձեռքը գցել Պարսկաստանի արևմտեան մասը, որ դեռ ազատ էր մնացել աւղանների տիրապետութիւնից։ Ռուսաց թագաւոր Պետրոս մեծը աչք ունէր Կասպից ծովի հարաւային եզերքի ամենաբարեբեր նահանգների վրա։ Գիլանը և Ռաշտը արդէն ռուսների ձեռքումն էին։ Իսկ օսմանցիք մտածում էին տիրել պարսկական Հայաստանին, որպէս զի արգելեն ռուսների իրանց սահմաններին մօտենալը։

Ի՞նչ էին մտածում այդ ժամանակ հայերը. ի՞նչ էր մտածում ամենից շատ հալածված, ամենից շատ տանջված, ամենից շատ հարստահարված ժողովուրդը։— Հայերը նոյնպէս անտարբեր չէին. Նրանք ևս պատրաստվում էին ձգել պարսկական ծանր լուծը, որ դարերով ճնշել

էր նրանց։ Բայց նրանք մտածում էին, թէ իրանց պէտք է մի հովանաւորող ձեռք, մի արտաքին զօրեղ պաշտպանութիւն։ Այդ պատճառով ամենի աչքը դարձրած էր դէպի Պետրոս մեծը։

Պարսկաստանի հայերը շատ հին ժամանակներից յարաբերութիւններ ունէին ռուսաց արքունիքի հետ, իսկ Ալէքսէյ Միխայլօվիչ թագաւորի օրերում նրանց յարաբերութիւնները աւելի կանոնաւոր ձև ստացան։ Սպահանի հայերը, որ այն ժամանակ մեծ դեր էին խաղում հնդկա-եւրօպական վաճառականութեան մէջ, ոչ սակաւ անգամ ուղարկում էին իրանց պատուիրակներին յիշեալ թագաւորի մօտ, կապում էին նրա հետ զանազան առևտրական դաշնագրներ և ստանում էին նրանից զանազան արտօնութիւններ իրանց Ռուսաստանի վրայով դէպի Եւրօպա կատարած վաճառականութեան վերաբերութեամբ։ Ամեն անգամ երբ հայոց պատուիրակները յայտնվում էին ռուսաց արքունիքում, բերում էին իրանց հետ թանգագին ընծաներ. դրանցից մէկն էր այն գեղեցիկ բազկաթոռը, շինված արծաթից և ոսկուց, զարդարած խոշոր ալմաստներով, եաղութներով, մարգարիտներով ու ֆէրուզաներով, որը Սպահանի մի առևտրական ընկերութեան կողմից Խօջա-Զաքար Սարհադեանցը մատուց Ալէքսէյ Միխայ-

լօվիչին։ Բացի վաճառականական յարաբերութիւններից, Սպահանի հայերը ռուսների արևելեան քաղաքականութեան մէջ նոյնպէս մեծ դեր էին խաղում։ Նրանք շատ անգամ լինում էին միջնորդներ ռուսաց արքունիքի և պարսից դրան մէջ, պայմաններ էին կապում և վճռում էին այլ և այլ խճճված գործեր։

Պետրոս մեծի թագաւորութեան ժամանակ Պարսկաստանի հայերի յարաբերութիւնները ռուսաց արքունիքի հետ աւելի ևս ամրապնդվեցան։ Մեծ թագաւորի նախորդները գտնում էին հայերի մէջ աւելի առևտրական ընդունակութիւններ և նրանց ձեռքով կամենում էին վաճառականութիւնը Ռուսաստանում զարգացնել։ Իսկ Պետրոս մեծը, բացի այդ ընդունակութիւններից, գտաւ հայերի մէջ բոլոր այն յատկութիւնները, որ կարող էին նպաստել նրան իր աշխարհակալութիւնները դէպի արևելք տարածելու։ Կասպից ծովի վրա լողում էին հայերի բազմաթիւ նաւերը։ Արևելքի ամբողջ արդիւնաբերական աշխարհը նրանց ձեռքումն էր։ Հնդկաստանի բոլոր նշանաւոր առևտրական կենտրօններում նրանք ունէին կալօնիաներ։ Ջաւա, Սումատրա և ֆիլիպեան կղզիների վրա նրանք տեղափոխվեցան դեռ XVI-րդ դարու վերջերում, իսկ Մադրասի, Կալկաթայի, Բօմբայի, Սինգապուրի մէջ Շահ-Աբաս մեծի մահից յետոյ։

Ամեն տեղ նրանք առևտուր ունէին ոչ միայն ժողովրդի հետ, այլ գլխաւորապէս ժողովրդի իշխողների հետ, որոնց ձեռքում հաւաքվում էր երկրի հարստութիւնը որպէս հարկերի փոխանորդ։ Բիրմանիայի ալմաստը, որ սեպհականութիւն էր միայն թագաւորի, ծախվում էր հայերի ձեռքով։ Պարսկաստանի մետաքսը, որ ստանում էին թագաւորները, բոլորը հայերի ձեռքով էր տարվում դէպի Եւրոպա։ Անդադար յարաբերութիւններ ունենալով թագաւորների և զանազան երկրների իշխանների հետ, հայերը այն աստիճան մտերմացել էին նրանց հետ, այն աստիճան հաւատարմութիւն էին գտել նրանց մօտ, որ ծանօթ էին նրանց բոլոր թոյլ կողմերին, գիտէին նրանց բոլոր գաղտնիքները։ Այդ առիթ էր տալիս հայերին երբեմն մեծ դերեր խաղալ արևելքի իշխողների միմեանց հետ ունեցած յարաբերութիւնների մէջ, մանաւանդ որ այդ իշխողները նրանց փողին, խելքին և օգնութեանը միշտ կարօտութիւն ունէին։ Պետրոս մեծի արծուի աչքերից չէր կարող աննկատելի մնալ այդ իրողութիւնը և նա աշխատեց իր ձեռքը ձգել հայերին—արևելքի այդ ամենայարմար բանալին։

Հայերը ցոյց էին տալիս ամեն տեսակ պատրաստականութիւն մեծ թագաւորի մեծ նպատակները իրագործելու համար։ Բագուն և կասպից ծովի հարաւային եզերքի վրա գտնված պարս-

կական երկրները—Ռաշտը, Գիլանը, Մազանդարանը,—այդ կիտրոնիների, ձիթենիի, մետաքսի և վարդենիների աշխարհը տիրեց նա գլխաւորապէս հայերի առաջնորդութեամբ։ Հայերը նրա պ ի օ ն ե ր ը դարձան ամեն տեսակ գործողութիւնների մէջ։ Հաշտարխանում նստած էր որպէս հայոց հոգևոր առաջնորդ, բայց իսկապէս որպէս ռուսաց պատերազմական գործակատար, Մինաս վարդապետը։ *) Նրա հաւատարմատարը՝ Պետրոս Դի-Սարգիս Գիլանենց հայազգին *) նստած էր Ռաշտում և Պարսկաստանի ու առհասարակ արևելքի բոլոր նշանաւոր անցքերի մասին տեղեկութիւններ էր տալիս Սարգիս վար-

4415
46

*) Մինաս վարդապետը հնդկաստանցի նշանաւոր հայ իշխան Իսրայէլ Օրիի հետ գնաց Ռուսաստան դեռ 1701 թւին և մասնակցում էր ռուսաց կառավարութեան հայոց ժողովրդի հետ ունեցած բանակցութիւնների մէջ։ Վերջը նա ստացաւ Ռուսաստանում բնակվող հայերի արքեպիսկոպոսութիւնը։

*) Պետրոս Դի-Սարգիս Գիլանենցի ընդարձակ և խիստ հետաքրքիր օրագրութիւնը, որ կազմված էր 1722 և 1723 թւականներում, պրոֆէսոր Ք. Պատկանեանը 1870 թւին հայերէնից ռուսերէն թարգմանելով, ներկայացրեց Ս. Պետերբուրգի կայսերական ակադեմիային։ Օրագրութիւնը լուսաբանված է գիտնական պրոֆէսորի ծանօթութիւններով և կցած է սկզբին ընդարձակ պատմական ներածութիւն թարգմանչի կողմից։

դապետին, որը իր կողմից հաղորդում էր ռուսաց կառավարութեանը։ Ղարաբաղի մէլիքների բանակցութիւնները ռուսաց կառավարութեան հետ կատարվում էին սկզբում Գանձասարի առաջնորդ Եսայի եպիսկոպոսի ձեռքով, իսկ յետոյ Ներսէս եպիսկոպոսի և Դուզախի կառավարիչ մէլիք Եգանի ձեռքով։

Երբ ռուսները տիրեցին Դերբենդին և Բագուին, Ղարաբաղի մէլիքները առաջարկում էին Պետրոս մեծին 60,000 զինված մարդիկ, առաջարկում էին իրանց աջակցութիւնը տիրելու. ոչ միայն այժմեան Անդր-Կովկասը, այլ ամբողջ Ատրպատականը։ Նրանք խնդրում էին միայն մի քանի փորձված օֆիցերներ և 2000 ռուս զինուորներ, որ խոստանում էին իրանց ծախքով պահել։ Միայն թէ կարողանային ազատվել պարսից լծից և քրիստոնեայ մեծ թագաւորի հովանաւորութեան ներքոյ ունենային իրանց անկախ ինքնավարութիւնը։ Այդ բոլոր ծառայութիւնների փոխարէն հայերը ստանում էին միայն ապարդիւն խոստմունքներ և նրանց խորհուրդ էին տալիս դեռ ևս սպասել։

Բայց հայերի յարաբերութիւնները ռուսների հետ այն աստիճան ակներև և աչքառու էին դարձել, որ այլ ևս չէր կարող ծածուկ մնալ պարսից կառավարութիւնից։ Եւ այդ աւելի կատաղեցնում էր պարսիկներին, երբ պարզ տեսնում

էին, որ հայերը առաջնորդում են իրանց թշնամուն՝ «մոսկոֆների» թագաւորին՝ Պարսկաստանը տիրելու։ Զանազան տեղերում սկսվեցան խիստ հալածանքներ նրանց դէմ։ Երևանի նահանգում մինչև անգամ հրամայվեցաւ կոտորել բոլոր հայերին։ Համադանցի Աստուածատուր կաթողիկոսի եռանդոտ միջնորդութիւնը հազիւ կարողացաւ ազատել նրանց։ Նա հանգստացրեց Շահ-Թահմազին բաւական գումար նրան ընծայ տալով և հաւատացնելով, թէ ինքը և իր ժողովուրդը ամենևին ապստամբութեան նպատակներ չունեն և պարսից հաւատարիմ հպատակներ են։ Իսկ այդ խօսքերը միայն ժամանակաւոր կերպով կարողացան միամտացնել պարսիկներին։ Երբ պարսից կառավարութեան պատգամաւորները յայտնվեցան Ղարաբաղի ապստամբութեան գլխաւորների մօտ, խոստանում էին նրանց առատ փող, ընդարձակ երկրներ և պատիւներ, միայն թէ նրանք ցած դնեն իրանց զէնքերը և չօգնեն ռուսներին,— այսպէս պատասխանեցին հայոց մելիքները. «Մեզ պէտք չէ ձեր փողը, երկիրը և պատիւները։ Մեզ ոչինչ պէտք չէ։ Մենք ձեզ ճանաչել անգամ չենք կամենում։ Մենք հաւաքվել ենք մեծ կայսրի և թագաւորի (Պետրոսի) կամքով և մեր յոյսը դրել ենք նրա վրա։ Մենք նրա մարդիկն ենք։ Եթէ նա Աստուծոյ օգնութեամբ կը գայ դէպի մեր կողմը, մենք կը միա-

նանք նրա հետ և կը կատարենք բոլորը ինչ որ նա մեզ կը հրամայէ։ Բայց եթէ, Աստուած մի արասցէ, մեծ կայսրը չի գայ մեր կողմերը, և ոչ մի կարգադրութիւն չի անի մեր մասին, և կը մոռանայ իր խեղճ ծառաներին, այն ժամանակ մենք կը ցրւիմք ամեն մէկս դէպի մի կողմ։ Իսկ պարսից շահը թող չը երևակայէ, որ մենք երբ և իցէ կը խոնարհվենք նրան»։ *)

Ամենքը հաւատացած էին, որ Պետրոս մեծը հաստատ դիտաւորութիւն ունի Ղարաբաղի և Արարատեան աշխարհի հայերին ազատել պարսից լծից և նրանց անկախութիւն շնորհել։ Բանակցութիւնները հայոց ժողովրդի և ռուսաց կառավարութեան մէջ այդ հարցի մասին կատարվում էին Հնդկաստանցի հայազգի իշխան Իսրայէլ Օրիի միջնորդութեամբ, դեռ այն ժամանակ, երբ տակաւին Սպահանը առնված չէր աւղաններից։

Երբ Պետրոս մեծը ուղարկեց Սպահան պարսից Շահ-Յուսէինի մօտ մի դեսպանութիւն, այդ Իսրայէլ Օրին դեսպանախմբի գլխաւորն էր։ Դեռ դեսպանութիւնը պարսից մայրաքաղաքը չէր հասած, Շամախու խանը հաղորդեց Շահին, թէ այս կողմերում տարածվել են կարծիքներ, թէ այդ Օրին պիտի վերականգնէ հայոց թագա-

*) Օրագրութիւն Պետրոս Դի-Սարգիս Գիլանենցի։

ւորութիւնը, թէ ժամանակը հասել է, որ հայերը պիտի ազատվեն պարսից իշխանութիւնից։ Այդ տեղեկութիւնները մեծ տպաւորութիւն գործեցին Սպահանում. պարսիկները սաստիկ վըրդովվեցան, իսկ տեղային հայերի ուրախութեանը չափ չը կար։ Շահ-Յուսէինին յայտնի լինելով Պետրոս մեծի պատերազմական ձգտումները, մանաւանդ մօլլաների խորհրդով, մինչև անգամ չէր կամենում ընդունել այդ քրիստոնեայ դեսպանութիւնը։ Բայց կայսրի անունը այն աստիճան սարսափ էր տարածել Պարսկաստանում, որ Շահը ակամայ ընդունեց դեսպանութիւնը։ Այդ օրից Հայաստանի անկախութեան խնդիրը միօրինակ զբաղեցնում էր ամեն կողմերում տարածված հայերին։

Սպահանի և Հնդկաստանի հայերը, թէև հեռու էին հայրենի երկրից, բայց այնքան ոգևորված էին իրանց եղբայրների ազատութեան գաղափարով, այնքան մեծ էր նրանց բաղձանքը անկախ Հայաստան տեսնել, որ պատրաստ էին յանձն առնել ամեն տեսակ զոհողութիւններ։ «Դուք, գրում էին նրանք Սիւնեաց աշխարհի ապստամբութեան պետերին, սիրտ ունէք և քաջութիւն, իսկ մենք փող ունենք և միջոցներ ձեզ օգնելու։ Կռուեցէք հայրենիքի ազատութեան համար, մենք ձեզ փող և զէնքեր կուղարկենք։ Մենք կը դիմենք բոլոր քրիստոնեայ

թագաւորների դռները, ձեզ համար կը բարեխօսենք։ Մեր մարդիկը արդէն ուղարկել ենք ֆրանգների և Մոսկօվի թագաւորների մօտ»։

Յարաբերութիւններ ունենալով Եւրոպայի նոյն ժամանակվայ բոլոր նշանաւոր առևտրական կենտրոնների հետ, Սպահանի և Հնդկաստանի հայերին խիստ դիւրին էր Եւրոպայից զէնքեր տեղափոխել Հայաստան։ Նրանք ունէին կասպից ծովի վրա սեպհական նաւեր։ Եւ դեռ XVII-րդ դարու կիսում Մոսկվայի կառավարութեան հետ կապած դաշնադրութեան համեմատ, իրաւունք ունէին իրանց ապրանքները Ռուսաստանի վրայով անցկացնել *) տրանզիտի պայմաններով։ Հայերի նաւերը և կարաւանները, որ սովոր էին ծանրաբեռնվել Եւրոպայի ու Ասիայի

*) Ապրանքները տեղափոխվում էին հետևեալ ճանապարհով. Սպահանից Թաւրիզ և Շամախի, այնտեղից կասպից ծովով Հաշտարխան։ Իսկ Հաշտարխանից ցամաքային ճանապարհով Մոսկվայի վրայով տարվում էր Արխանգելսկ։ Այստեղից նաւերի վրա ուղարկվում էր Ստօքհօլմ, իսկ այնտեղից Հօլանդիայ, Անգլիայ, Դանիայ և այլ երկիրներ։ Նրանք վերադարձնում էին իրանց եւրօպական ապրանքները երբեմն Ամստերդամի, Շվէդիայի միջով Ռուսաստան, Հաշտարխան և կասպից ծովը։ Նրանք յարաբերութիւններ ունէին Մարսելիայի և Վենետիկի հետ, ուր սուրբ Մարկոսի հրապարակը լցված էր հայ վաճառականներով։

հարստութիւններով, այդ ժամանակ զբաղված էին զէնքերի և զանազան ռազմամթերքի տեղափոխութիւններով։ Շահախնդիր վաճառականը, մոռացած արծաթի և ոսկու անյագ բաղձանքը, այժմ հրապուրված էր հայրենիքի ազատութեան սիրով։ Այդ սէրը սրբել, մաքրել էր նրա սիրտը, և նա պատրաստ էր նուիրել հայրենիքին բոլորը, ինչ որ ունի։

Գ.

Մնում է մի քանի խօսք ասել, թէ ինչ դրութեան մէջ էր այն ժամանակ Վրաստանը, ինչ էին անում վրացիները, երբ հայերը իրանց հայրենիքի ազատութեան մասին էին աշխատում։ Արդեօք այդ երկու հարևան քրիստոնեայ ազգերը, որոնք մի և նոյն վիճակի մէջ էին գտնվում, մտածում էին ձեռք ձեռքի տալ և միասին, ընդհանուր ուժերով թօթափել պարսից լուծը։

Վրաստանը բաժան-բաժան էր եղած այնքան մանր, միմեանցից անկախ իշխանութիւնների, որքան միմեանցից տարբեր ցեղեր և բարբառներ կային այնտեղ։ Կարթալինիան, Կախեթիան, Իմերեթիան, Օսէթիան, Մինգրելիան, Գուրիան, Աբխազիան և ուրիշ շատ երկրներ առանձին-առանձին իշխանութիւններ էին կազմում։ Տիրապետող իշխանների քաղաքական նշանակութիւնը ոչինչով չէր տարբերվում, օրինակ, նոյն

ժամանակվայ Ղարաբաղի մէլիքների *) իշխանութիւնից։ Ղարաբաղի մէլիքը թէ իր կառավարած երկրի տարածութեամբ և թէ իր վայելած արտօնութիւններով նոյնքան իրաւունք ունէր իր գաւառի մէջ, որքան վրաց իշխանը իր նեղ, սահմանափակ երկրի մէջ։ Թէ վրաց իշխանները և թէ Ղարաբաղի մէլիքները միօրինակ կախումն ունէին պարսից կառավարութիւնից, նրանցից նշանակվում էին և նրանց հարկ էին վճարում։ Ղարաբաղի մէլիքները այն առաւելութիւնը ունէին, որ իրանց հաւատարմութեամբ այնքան համարում էին ստացել պարսից կառավարութեան առջև, որ առանց իրանց կրօնը փոխելու, առանց մահմեդականութիւն ընդունելու հաւատում էին նրանց։ Թէև լինում էին դէպքեր, որ հայ մէլիքներից մէկը ուրանում էր իր կրօնը փառք և իշխանութիւն ձեռք բերելու համար, բայց այսպիսիներին հայ հասարակութիւնը բոլորովին մերժում էր իր միջից։ Որի ընդհակառակն, պարսից արքունիքում, Սէֆէվիների տիրապետութեան ժամանակ համարեա ընդունված սովորութիւնների կարգն էր անցել, որ մինչև վրաց իշխանները մահմեդականութիւն չընդու-

---

*) Մէլիք կամ մալիք նշանակում է տիրող, իշխող այլև թագաւոր. դրանից է մամլաքաթ բառը որ նշանակում է տէրութիւն, երկիր, թագաւորութիւն։

նէին և իրանց անունը չը փոխէին, իրաւունք չունէին ստանալ Վրաստանի կառավարութիւնը։ Շահ-Աբաս մեծի տիրապետութիւնից յետոյ (1617 Թ.), երբ Վրաստանը պարսկական նահանգ դարձաւ, յիշեալ սովորութիւնը բոլորովին օրինական ձև ստացաւ։ Վրացիների պարսից կառավարութեան հետ կապած դաշնագրի գլխաւոր պայմաններից մէկը այն էր, որ Վրաստանի կառավարիչները կարող են լինել տեղացիներ, վրացիք, միայն մահմեդականութիւն ընդունած, և պիտի նշանակվեն պարսից կառավարութիւնից։ Այդ օրից մինչև ռուսների տիրապետութիւնը գտնում ենք մի շարք մահմեդականութիւն ընդունած վրացի ազնուականներ, որ կառավարում են երբեմն Կախեթիան և երբեմն Կարթալինիան, որպէս պարսից «վալիներ» և որոնց վրացիք «մէփէ» են կոչում։ *)

---

*) Մի քանի մահմեդական անունները դժուար է գտնել. պատմութիւնը յիշում է նրանց քրիստոնէութեան ժամանակ ունեցած անունները միայն, որպիսի են՝ Թէյմուրազ I. Բագրատ, Սիմօն։ Իսկ ոմանք յայտնի են մահմեդական անուններով, որպիսի են՝ Դաւութ-խան և նրա որդիները՝ Ռօստոմ-Միրզայ ու Խօսրով-Միրզայ։ —Շահնավազ (Վախթանգ V-ը) և նրա որդիները՝ Մուրթուզա-Ալի-խան (Արչիլ), Գիօրգին-խան ու Լևան-խան։— Նազար-Ալի-խան Կուլլար-աղասի (Հերակլ I.) և նրա որդիները՝ Իմամ-Ղուլի-խան (Դաւիթ III.), Մամատ-Ղուլի-խան

Սպահանը՝ պարսից մայրաքաղաքը լիքն էր այդ ժամանակ վրացի ազնուականներով. Նըրանք պատուի և պաշտօնի համար ծախում էին ամէն բան, ինչ որ սուրբ և նուիրական էր իրանց ազգի համար, և մահմեդականութիւն ընդունելով, ստանում էին պաշտօններ կամ իրանց հայրենիքում, կամ Պարսկաստանում։ Շատերը այնտեղ ամուսնանում էին պարսիկների հետ, որդիք էին ծնում, որոնք պարսկական սովորութիւնների մէջ կրթվելով, բերում էին պարսից զեղխութիւնը, չռայլութիւնը, անբարոյականութիւնը դէպի իրանց հայրենիքը։ Այսպիսով վրաց ազնուականների վաղեմի պարզ, նահապետական բարքուվարքը փչացաւ և նրան փոխարինեց պարսից հարեմներից ստացված ծոյլ, անհոգ, ամէն ինչ վատնող, ամէն ինչ ոչնչացնող բնաւորութիւնը, որի հետքերը մնում են մինչև այսօր։ Վրաց այն ժամանակվայ տիրապետող իշխաններից ոչ մէկը չէ կարելի ցոյց տալ, որ իր կեանքի մեծ մասը Պարսկաստանի մայրաքաղաքում մաշած չը լինէր։ Նրանք կողոպտում էին իրանց երկիրը,

---

(Կոստանդին II.) և Թէյմուրազ։ — Յուսէյին-Ղուլի-խան (Վախթանգ VI.) նրա որդի Շահնավազը (Բակարը), Վախթանգի եղբայրները՝ Քէյ-Խոսրով-խանը, Ալի-Ղուլի-խանը (Եասսէն) ու Սիմօնը։ Դրանք ուրիշ ոչինչ չէին, եթէ ոչ պարսից կառավարութեան ներկայացուցիչներ.

աղքատացնում էին ճորտերին, և նրանց դառն աշխատութեան պտուղը չռայլութեամբ վատնում էին Պարսկաստանում։ Վրաստանը լէզգիների ոտքի տակ աւերակ էր դարձել. Դաղստանը լիքն էր վրացի գերիներով, բայց վրաց իշխանները, փոխանակ իրանց աշխարհը պահպանելու, նրան անտէր թողած, իրանց երկրի ամենաընտիր տղամարդիքը տանում էին Պարսկաստան և պարսից շահի համար հեծելազօրք էին կազմում, աւղանների հետ էին պատերազմում, որ խ ա ն ու թ ի ւ ն ստանան։ *) Պատուի և պաշտօնի համար ամէն բան ծախում էին նրանք, մինչև անգամ իրանց քոյրերը, հարազատ աղջիկները, որ տալիս էին պարսից մեծամեծներին, նրանց պաշտպանութիւնը վայելելու համար **)։ Խիստ ճիշտ է նկատում մի գրող, որ իրանք վրացիները այնքան գեղեցիկ աղջիկներ տարան Պարսկաստան ***), որ պարսիկների ցեղը ազնուացրին։

---

*) Ռոստոմ-Միրզայ, Գիօրգին-խան, Քէյ-Խոսրով-խան։

**) Վախթանգ V-ը (Շահնավազ) իր Աննա անունով աղջիկը տուեց Շահ-Աբաս II-ին։

***) Վախթանգ VI-ի եղբայր Եասսէն, որ կոչվում էր Ալի-Ղուլի-խան (վրաց երևելի Անտօն կաթողիկոսի հայրը) պարսից Յուսէին-շահից ստացաւ Կարթալինիայի կառավարութիւնը,

Պարսից Շահ-Սէֆի I-նի և օսմանցոց Սուլթան Մուրադ IV-ի ժամանակ (1636 թ.) Վրաստանը բաժանվեցաւ պարսիկների և թիւրքերի մէջ. Կարթալինիան և Կախէթիան դարձաւ պարսկական նահանգ, իսկ Ախալցխայի նահանգը և Վրաստանի ամբողջ արևմտեան մասը ընկաւ թիւրքերի իշխանութեան ներքոյ *)։ Ախալցխան դարձաւ թիւրքերի գլխաւոր բերդաքաղաքը և այստեղից մահմեդական իշխանութեան հետ նրանց ազդեցութիւնը տարածվեցաւ Իմերեթիայի, Մինգրելիայի, Գուրիայի և Աբխազիայի վրա։ Ղօրանը փոխարինեց Աւետարանին։ Մոլեռանդ թիւրքերը ամեն տեղ մտցրին իրանց հոգևորականներին, սկսեցին հալածել քրիստոնէութիւնը և տարածել մահմեդականութիւն **)։ Թիւրքերը ա-

---

խոստանալով ուղարկել նրան որպէս ընծայ 500 ընտանիք վրացիներ, այլև իր եղբայր Վախթանգի ամբողջ ընտանիքը։ Վախթանգի ընտանիքը ազատեցին, փախցնելով Իմերեթիայի կողմերը՝ Ռաճայ, իսկ մնացեալ 500 ընտանիքը թագնվեցան լեռների մէջ, երբ լսեցին այդ անզգամի գալուստը։

*) Փոփոխութիւններ լինում էին, որ երբեմն պարսիկները տիրում էին թիւրքերի ձեռքում գտնված երկրները, իսկ երբեմն թիւրքերն էին տիրում պարսիկների ձեռքում գտնված տեղերը։

**) Այժմեան աջարացիք, լազերը, ենգիլօյները, և զանազան մահմեդական լեռնաբնակներ գլխաւորապէս այն ժամանակների արդիւնք են։

ւելի խստութիւններ էին գործ դնում կրօնի վերաբերութեամբ, քան թէ պարսիկները։ Թիւրքաց նահանգապետ Ասլան-փաշայի կառավարութեան ժամանակ (1659—1679) այդ կողմերի ազնուականները, մահմեդականութիւն ընդունելով, ըստանում էին «բէկ», «փաշայ», «աղա» տիտղոսներ և պաշտօններ էին վարում որպէս թիւրքերի ներկայացուցիչներ։ Վրաստանը այդ ժամանակներում ընկած էր երկու կրակների մէջ.—մի կողմից պարսիկները, միւս կողմից թիւրքերը։ Դէպի որ կողմը երեսը շուռ էր տալիս, այրւում էր...։ Վրաց ազնուականները իրանց դիրքը պահպանելու համար, երբ պարսիկներից յուսահատվում էին, դիմում էին դէպի թիւրքերը, իսկ երբ այդ վերջիններից յուսահատվում էին, դիմում էին դէպի պարսիկները։ Ամեն տեղ կրօնափոխութիւնը մեծ դեր էր խաղում պաշտօններ և իշխանութիւն ձեռք բերելու համար։ Վերջին ժամանակներում նրանք ծանօթացան ռուսաց կառավարութեան հետ և երբեմն անձամբ կամ խնդիրքներով դիմում էին ռուսաց թագաւորներին, որ իրանց օգնեն *)։

---

*) Վախթանգ V-ի (Շահնավազի) որդի Արչիլը, մահմեդականութիւն ընդունելով և կոչվելով Մուրթուզա-Ալի-խան, պարսից կառավարութիւնից ստացաւ Կախեթիայի իշխանութիւնը։ Երբ պարսիկները վերջը խլեցին նրանից այդ իշխա-

Գաւիթ բէկի Վրաստանում գտնված ժամանակվայ վերջին տարիներում այնտեղ կային երեք նշանաւոր իշխանութիւններ՝ Իմերեթիայի իշխանութիւնը, որ կառավարում էր Ալեքսանդր V-ը, որպէս Թիւրքաց ներկայացուցիչ, Կարթալինիայի իշխանութիւնը և Կախեթիայի իշխանութիւնը, որոնք կախումն ունէին պարսից կառավարութիւնից։ Մենք կը խօսենք վերջին երկուսի մասին։

Կարթալինիայի իշխանութեան կենտրոնը Թիֆլիսն էր. այստեղ Մետեխի բերդի մէջ կանգնած էր մի ամբողջ գունդ պարսկական պահապան զօրք, որը մի և նոյն ժամանակ հսկում էր թէ քաղաքի և թէ վրաց իշխանի գործողութիւնների վրա։ Այդ գունդը պահվում էր այնտեղ սկսեալ այն օրից, երբ Վրաստանը պարսկական նահանգ դարձաւ։

Գաւիթ բէկը իր մանկութեան հասակում բերվեցաւ Մըցխէթ աւանը, որ այդ ժամանակ դադարել էր Վրաստանի մայրաքաղաք լինելուց։

նութիւնը, նա վերառեց իր հետ մի քանի սրբութիւններ—Յիսուս Քրիստոսի սպանման գեղարդը, թաղման պատանքը—դիմեց ռուսաց թագաւոր Ֆէօդոր Ալեքսէեվիչին, և իր ուղղափառութեան բարեպաշտութիւնը ցոյց տալով, պաշտպանութիւն խնդրեց։ Յուսացած օգնութիւնը չը գտնելով, նա իր գլխին թիւրքի չալմայ փաթաթեց և դիմեց թիւրքաց կառավարութեանը։

Այստեղ առաջին անգամ ծանօթացաւ նա Վախթանգ VI-ի *) հետ, որը հալածված իր եղբօր Նասաէի (Ալի-ղուլի-խանի) չարագործութիւններից, անպաշտօն առանձնացել էր Վրաստանի հին մայրաքաղաքում։ Սկզբում նա վարում էր լի զուարճութիւններով անհոգ կեանք և անձնատուր էր եղած արբեցութեան։ (Մեր վէպի երկրորդ գրքում յիշված «մեծ պարոնը» նոյն իսկ այդ Վախթանգն է։) Յետոյ նա մօտենալով Մըցխէթի աբեղաներին, սկսեց պարապվել վրաց գրականութեամբ և օրինաւոր կեանք վարել։ Գաւիթ-բէկը այդ ժամանակ թողեց նրան և ծառայում էր երբեմն Կարթալինիայի, երբեմն Կախեթիայի իշխանների մօտ, որոնք անդադար մինը միւսի ետևից փոփոխվում էին պարսից կառավարութիւնից։ Իսկ երբ Կարթալինիայի իշխանու-

*) Այստեղ մի պատմական անճշտութիւն կայ, որ մենք հարկաւոր ենք համարում պարզել. մեր պատմագրները Գաւիթ-բէկին Վախթանգ V-ի ժամանակումն են դնում և շփոթում են նրան Վախթանգ VI-ի հետ, որը առաջինի թոռն էր, այսինքն նրա որդի Լեան-խանի որդին։ Վախթանգ V-ի օրերում դեռ Գաւիթ-բէկը ծնված չէր։ Նա մեռաւ Պարսկաստանում 1675 թւին. այդ ժամանակ Գաւիթ-բէկը Վրաստանում լինել չէր կարող։ Նա եկաւ Վրաստան Վախթանգ VI-ի ժամանակ, որը նոյնպէս շահնաւազ (շահի հաւանած) տիտղոս էր կրում, որպէս իր պապը։

թիւնը անցաւ Գիօրգին-խանի *) ձեռքը, այդ ժամանակ Վախթանգը թողեց Մըցխէթը, տեղափոխվեցաւ Թիֆլիս, և սկսեց որպէս փոխանորդ կառավարել Կարթալինիան, որովհետև Գիօրգին խանը բացակայ էր, Պարսկաստանում էր գտնվում։ Այդ ժամանակ Դաւիթ բէկը կրկին յանձն առեց Վախթանգի մօտ ծառայել և չը բաժանվեցաւ նրանից, մինչև իր Հայաստան գնալը։

Գիօրգին-խանը սպանվեցաւ Ղանդահարում առանց ժառանգ թողնելու։ Որովհետև Վախթանգը պահպանել էր քրիստոնէական կրօնը, շահը նշանակեց Գիօրգին-խանի փոխարէն Կարթալինիայի իշխան Վախթանգի եղբօրը՝ մահմեդականութիւն ընդունած Քէյ-Խօսրով խանին։ Երբ այդ վերջինն էլ սպանվեցաւ պարսից աւղանների հետ ունեցած պատերազմում, այն ժամանակ Վախթանգը կանչվեցաւ Սպահան, որ իշխանութիւնը նրան յանձնեն։

Բայց բարեպաշտ Վախթանգը **) չը խոնարհվեցաւ այն կանոններին, որ ընդունված էին իր նախորդների օրերում, այսինքն՝ նա չը համաձայնվեցաւ իր կրօնը փոխելով ընդունել Կարթա-

---

*) Գիօրգին-խանը Վախթանգի հօր եղբայրն էր, կրօնով մահմեդական։

**) Դա մի և նոյն պատմագիր, օրէնսդիր Վախթանգ VI-րդն է, որ վրաց պատմութեան մէջ բաւական փայլուն անուն է թողել։

լինիայի իշխանութիւնը։ Շահը բարկացաւ նրա վրա, հրամայեց բանտարկել։ Եօթը տարի որպէս կալանաւոր մնաց Սպահանում։ Երկար ընդդիմադրութիւններից յետոյ, երբ լսեց հայրենիքի դժբախտութիւնը, նրա աւերակ դառնալը մի կողմից լեզգիների ձեռքով, միւս կողմից, իր եղբօր Եսսէի (Ալի-ղուլի-խանի) չարագործութիւններով,—վշտացած Վախթանգը վերջապէս յակամայից ընդունեց մահմեդականութիւն, կոչվեցաւ Յուսէին-Ղուլի-խան, և ստանալով Կարթալինիայի իշխանութիւնը, վերադարձաւ Թիֆլիս։

Այստեղ հանդիպեց նա իր երկու վաղեմի անհաշտ թշնամիներին, մէկը՝ իր եղբայր Եսսէն, միւսը Կախեթիայի իշխան Մամադ-Ղուլի-խանը (Կոստանդին II-ը) *)։ Եղբօր հետ Վախթանգը կարողացաւ հաշտվել, թէև այդ հաշտութիւնը երկար չը տևեց, բայց Կոստանդինի հետ ունեցաւ անվերջ կռիւներ։ Կոստանդինը աշխատում էր տիրել Կարթալինիային և ամբողջ Վրաստանի իշխանը դառնալ։ Այստեղից ծագում էին բոլոր երկպառակութիւնները, որ տակնուվրա էին անում երկիրը։

---

*) Կոստանդին II-ը կամ Մամադ-Ղուլի-խանը Հերակլ I-ինի, այսինքն Նազար-Ալի-խանի որդին էր. և ծնված էր Սպահանում. թէ հայրը, թէ որդին երկուսն էլ մահմեդականութիւն էին ընդունել։

Վախթանգը նեղվելով իր թշնամիներից, խընդիրքով դիմեց ռուսաց թագաւոր Պետրոս Մեծին, առաջարկեց իր հպատակութիւնը և սկսեց նրանից օգնութիւն խնդրել։ Այդ բաւական փաստ էր Կոստանդինի համար մատնել նրան պարսից կառավարութեան առջև, թէ նա խաբում է շահին, թէ նա անունով միայն մահմեդական է, իսկ սրտով քրիստոնեայ է և գաղտնի բանակցութիւններ ունի ռուսաց թագաւորի հետ, կամենում է Վրաստանը դուրս բերել պարսից իշխանութիւնից և յանձնել ռուսներին։

Վախթանգը այժմ ստիպված էր երկերեսանի դեր խաղալ, մի կողմից պահպանել իր յարաբերութիւնները ռուսների հետ, միւս կողմից արդարացնել իրան պարսից կառավարութեան առջև, թէ ինքը պարսից հաւատարիմ հպատակ է, թէ Կոստանդինի հաղորդածները բոլորը զըրպարտութիւն են, թէ նա դիտաւորութիւն ունի իր երկրին ես տիրելու, այս պատճառով չարախօսութիւններ է անում, և այլն։ Ռուսաց կառավարութեանը ուղղած թղթերի վրա Վախթանգը ստորագրում էր «Թագաւոր Վրաստանի», իսկ պարսից կառավարութեանը ուղղած թղթերը ստորագրում է «վալի» *) Պարսկաստանի։

---

*) «Վալի» կոչվում են որ և իցէ վիլայէթի

Մինչ Վրաստանը այդ խռովութիւնների մէջ տակնուվրա էր լինում, Սիւնեաց աշխարհում հայոց ապստամբները պատրաստվում էին։ Էջմիածնի Աստուածատուր կաթողիկոսը, որ գաղտնի ուժ էր տալի ապստամբութեանը, աշխատում էր կազմել վրացիներից և հայերից մի ընդհանուր միութիւն, որ միասին կռուեն պարսիկների դէմ։ Բայց այդ նպատակին հասնելու համար նախ պէտք էր, որ Վրաստանի մէջ երկպառակութիւնները դադարէին, վրացիները միմեանց հետ միանային, որ յետոյ կարելի լինէր կայացնել նրանց հայերի հետ միութիւնը։ Այս մտքով հայոց կաթողիկոսը անձամբ Վրաստան գնաց, որ Վախթանգին հաշտեցնէ Կախեթիայի իշխան Կոստանդինի հետ։ Բայց չը նայելով կաթողիկոսի եռանդոտ աշխատութեանը, հաշտութիւնը չը կայացաւ։ Մինչև անգամ Կոստանդինը թշնամացաւ կաթողիկոսի հետ և նրա նամակները բռնելով, մատնեց պարսից կառավարութեանը, որից կաթողիկոսը հազիւ կարողացաւ ազատվել, ուրանալով, թէ նամակները իր գրածը չեն, այլ իր կնիքը գողանալով, դրոշմել են նրանց վրա։ Այդ պատճառաբանութիւնը, ի հարկէ, բաւական թանդ նստեց նրան, որով-

---

կամ նահանգի կառավարիչները։ Իսկ պարսից վալիները աւատական իշխանների նշանակութիւն ունէին։

հետև կաթողիկոսի բացակայութեան ժամանակ, երբ նա Վրաստանումն էր, պարսիկները եկան Էջմիածինը կողոպտեցին։

Դաւիթ-բէկը դեռ Վրաստանում էր, երբ կատարվեցան այդ բանակցութիւնները։ Նա ինքը աշխատում էր, որ հայոց կաթողիկոսի միջնորդութիւնը ապարդիւն չը մնայ, բայց վերջը ցաւելով հասաւ այն համոզմունքին, թէ հայերի և վրացիների մէջ միութիւն կազմել անհնարին էր։ Վրացիները աւելի բարւոք էին համարում իրանց կամ ռուսների գիրկը գցել, կամ պարսից ծանր լծի տակ մնալ, կամ օսմանցիներին հպատակել, — բայց ոչ երբէք միանալ հայերի հետ և ազատ լինել։ Այդ երկու համանման վիճակի մէջ գտնվող, համանման պայմանների ենթակայ ազգերի միմեանց դէմ ունեցած ատելութիւնը սաստիկ վշտացնում էր Դաւթի զգայուն սիրտը։ Նրա հեռատես աչքը խիստ պարզ տեսնում էր, թէ ինչ բախտաւոր ապագայ կարող էին պատրաստել այդ երկու հարևան ազգերը, եթէ իրանց շահերը միացնէին, եթէ ձեռք ձեռքի տուած, մի սրտով, մի հոգով առաջ տանէին իրանց ընդհանուր գործերը։ Ո՞ր սատանան մտցրեց այդ դարևոր ատելութիւնը երկու ազգերի մէջ, — այդ միտքը սաստիկ տանջում էր Դաւթին։ Բայց ինչ կարող էր անել. դարերով կազմված նախապաշարմունքին դարեր հարկաւոր էին ոչնչացնելու համար,

իսկ նրան պէտք էր շուտափոյթ ձեռնարկութիւն իր հայրենիքի փրկութեան համար։ Այդ էր պատճառը, որ նա բաժանվեցաւ Վախթանգից առանց իր դիտաւորութիւնը նրան յայտնելու, երբ նկատեց թէ վրացիների վրայ յոյս դնելը անօգուտ էր։

Դաւիթ-բէկի հեռանալուց յետոյ Վրաստանը սաստիկ պառակտվեցաւ։ Պարսից կառավարութիւնը նկատելով Վախթանգի համակրութիւնը դէպի ռուսները, հրամայեց Կախեթիայի կառավարիչ Կոստանդինին տիրել Թիֆլիսը և հրաժարեցնել Վախթանգին Կարթալինիայի իշխանութիւնից։ Կոստանդինը մի այսպիսի հրամանի էր սպասում, որ իր վաղեմի բաղձանքը իրագործէ և Թիֆլիսը իր ձեռքը գցէ։ Նա միացաւ լէզգիների հետ, եկաւ տիրեց Թիֆլիսը, նրան աւերակ դարձրեց և մինչև անգամ կողոպտեց Սիօնի եկեղեցին։

Թիֆլիսի առումից յետոյ, Վախթանգը փախաւ Իմերեթիայի կողմերը։ Բարեսիրտ իշխանը այնուհետև շատ աշխատեց կրկին ձեռք բերել Վրաստանի մայրաքաղաքը, և ռուսներից յուսացած օգնութիւնը չը գտնելով, իր եղբայր Եասսէին ուղարկեց Ախալցխայի թիւրքաց Իսակ փաշայի մօտ և նրանից օգնութիւն խնդրեց։ Բայց դաւաճան Եասսէն, փոխանակ յօգուտ իր եղբօր աշխատելու, առաջարկեց թիւրքերին իր ծառա-

յութիւնը, թէ կառաջնորդէ նրանց Թիֆլիսը գրաւելու, միայն թէ իրան այնտեղի կառավարիչ նշանակէին։ Այդ չարագործը, որ մի ժամանակ Կարթալինիայի իշխանութիւնը ստանալու համար, պարսիկներին իր հպատակութիւնը առաջարկելով, ընդունել էր Ալիի կրօնը և կոչվում էր Ալի-ղուլի խան,—այժմ մի և նոյն իշխանութիւնը ձեռք բերելու մտքով, և թիւրքերից օգնութիւն գտնելու համար, ընդունեց Թուրքաց Օմարի կրօնը և կոչվեցաւ Մուստաֆա-փաշա։

Եւ այսպէս, Կոստանդինի իշխանութիւնը Թիֆլիսում երկար չը տևեց, որովհետև Իսակ-փաշան Եասսէի առաջնորդութեամբ եկաւ, տիրեց Թիֆլիսը, և Կոստանդինին բռնելով, բանտարկեց։ Նրան ազատեց բանտից մէլիք Աշխարաբը,*) գիշերով Կուր գետի վրա նաւակ կանգնեցնելով, և Կոստանդինին նրա մէջ իջեցնելով, փախցրեց։ Դրա համար Իսակ-փաշան հրամայեց մէլիքին գլխատեցին։

Վրաստանը այժմ պարսիկների ձեռքից դուրս գալով, ընկաւ թիւրքերի իշխանութեան ներքոյ (1724 թ.), կառավարում էր Իսակ փաշան։ Իսկ դաւաճան Եասսէն իր նպատակին չը հասաւ, որովհետև օսմանցիք փոխանակ Թիֆլիսը նրան

*) Այդ մէլիք Աշխարաբը իշխան Բէհբութեանների պապն էր։

յանձնելու, յանձնեցին Վախթանգի որդի Բակարին։ Այդ վերջինս էլ տեսնելով, որ պարսիկների դարը անցաւ, ընդունեց թիւրքաց կրօնը, և իր գլխին օսմանցոց չալմայ փաթաթելով, կոչվեցաւ Իբրահիմ-փաշայ։—Ահա այդ էր վրացոց երևակայական թագաւորութիւնը։ Նրա իշխանները պարսից տիրապետութեան ժամանակ՝ պարսից կրօնն էին ընդունում և պարսից խաների անունով էին կոչվում, իսկ օսմանցոց տիրապետութեան ժամանակ՝ թիւրքաց կրօնն էին ընդունում և թիւրքաց փաշաների անունով էին կոչվում։

Այդ բոլոր դժբախտութիւններից յետոյ Վախթանգը իր ընտանիքով և 1400 հոգով գնաց Ռուսաստան։ Նա չը գտաւ Պետրոս մեծին կենդանի, նրան պատուով ընդունեց Եկատերինայ կայսրուհին։ Վերջը մեռաւ Պարսկաստանում, և մարմինը բերվելով թաղվեցաւ Հաշտարխանում։

Դ.

Սիւնեաց աշխարհի Սիսիան *) գաւառի Ուչթէփէ կոչված դաշտավայրի վրա երևում էին մի քանի սպիտակ վրաններ։ Այդ խուլ, մարդկային բնակութիւնից հեռու անապատում երբեմն թափառում էին Կարա-չօռլու կոչված թիւրք ցեղի կիսավայրենի խաշնարածները։ Ուրիշ ոչ ոք այդ

*) Սիսական գաւառ։

աւազակների երկիւղից այն կողմերից անցնել չէր համարձակվում։ Իսկ այժմ սպիտակ վրանների երևոյթը բաւական աչքի զարկող էր։ Ո՞ւմն էին այդ վրանները, ովքեր էին բնակվում նրանց մէջ,—ոչ ոք չը գիտէր։ Կարծես, նրանք սունկի նման յանկարծ բուսել էին գետնից և ոչ ոք չէր տեսել նրանց տէրերի որ և իցէ կողմից գալը։

Վրանները կազմված էին դաշտավայրի լեռնային կողմում, մի ձորի մէջ, որ երեք կողմից պատած էր բարձր սարերով, իսկ մի կողմից նեղ փապարով բացվում էր դէպի ընդարձակ, ամայի անապատը, որ ծածկված էր ճոխ խոտաբոյսերով։ Մի խումբ թամքած ձիաներ արածում էին վրանների չուրջը։ Մարդիկ չէին երևում։ Նրանք, երևի, նոր էին եկել հեռաւոր ճանապարհից և պառկած էին վրանների մէջ իրանց յոգնածութիւնը կազդուրելու համար։ Մի մարդ միայն, մերձակայ քարաժայռի բարձրութեան վրա նըստած, այդ դիտանոցից զգուշութեամբ նայում էր իր չուրջը։ Դա, երևի, նրանց պահակն էր։

Արեգակը մայր մտնելու վրա էր։ Սարերի գագաթները դեռ լուսաւորված էին վերջին ճառագայթներով, բայց խուլ ձորի մէջ, որտեղ կազմված էին վրանները, արդէն տիրում էր երեկոյեան մուայլը։

Վրաններից մէկի մէջ նստած էր Դաւիթ-բէկը, իսկ նրա մօտ իր մանկութեան ընկեր և բա-

րեկամ Ստեփաննոս Վարթանէսեանը։ Երիտասարդ իշխանը համարեա նոր էր իջել ձիուց և նրա անբաժան ծառաները՝ Աղասին ու Ջումշուդը դեռ ման էին ածում յոգնած, քրտինքի մէջ թաթախված ձիաները, որ հանգստացնեն։ Երկար տարիների անջատումից յետոյ, երկու կարօտեալ բարեկամները, առաջին անգամ միմեանց հանդիպելով, որպէս երկու սիրահարներ, երկար համբուրվեցան, երկար ողջագուրեցին միմեանց։ Իսկ այժմ թէ բէկը և թէ իշխանը երկուսն էլ լուռ էին։ Ի՞նչ լռութիւն էր այդ, որ տեղի ունեցաւ այն ջերմ գրկախառնութիւններից, այն առաջին սիրալիր խօսքերից յետոյ։

—Ես կամենում եմ քեզ հետ կարճ կտրել, Դաւիթ, ասաց իշխանը գլուխը վեր բարձրացնելով և ուղիղ բէկի երեսին նայելով։—Նախ քան քո հարցուփորձը սկսելը, իմացած եղիր, որ ես խաբել եմ քեզ։

—Ի՞նձ... խաբե՞լ ես... հարցրեց բէկը զարմացած կերպով։

—Այո՛, քեզ, պատասխանեց նա ծանր կերպով։—Այն նամակները, որ դու ինձանից ստացար, դրօշմված զանազան եպիսկոպոսների և մէլիքների կնիքներով,—բոլորը կեղծ էին։ Այդ կնիքները ես շինել էի տուել մի հրէայ քանդակագործի, իսկ նամակները ինքս էի շարադրել։ Իմ նպատակս էր քեզ բերել մեր հայրենիքը և

ես հասայ իմ նպատակին։ Գործի մեծութիւնը ինձ թոյլ տուեց մի այսպիսի խորամանկութեան դիմել։ Այժմ կամենում ես բարկացիր, կամենում ես ինձ խաբեբայ անուանիր,—մի և նոյն է։

Լսելով այդ խօսքերը, բէկը կարծում էր, որ իր բարեկամը, երևի, կատակ է անում։

—Դու, Ստեփան, ասաց նա ժպտելով,—դեռ չես թողել քո հին սովորութիւնները։

—Ես հանաք չեմ անում, ինչ որ ասում եմ, ճշմարիտ է, պատասխանեց նա սառնութեամբ։

—Ուրեմն ոչինչ պատրաստութիւններ չը կան այստեղ։

—Այստեղ կան անհաշտ, միմեանցից բաժանուած, անշարժ ուժեր միայն, որոնց միացնելու համար մեծ ջանք է հարկաւոր։

Բէկին տիրեց մի տեսակ շուարում, մի տեսակ թուլացնող վհատութիւն։ Այդ մարդը, որ երբէք յուսահատուել չը գիտէր, սաստիկ զայրացաւ, երբ նկատեց, որ իր ձեռնարկութեան հէնց առաջին քայլափոխում հանդիպում է դատարկութեան, հանդիպում է մթին ունայնութեան։ Ի՛նչ քաղցր յոյսերով եկել էր նա իր հայրենիքը. ինչեր էին խոստացել նրան. որքա՜ն մեծ ակնկալութիւններ ունէր իր հայրենակիցներից, իսկ այժմ ասում էին նրան՝ «դու խաբուած ես»…։ Ուրեմն այդ բոլորը երազ էր, բոլորը մի տաքարիւն երիտասարդի երևակայութեան ցնորք էր, որ մի հնար-

քով կամեցել էր նրան իր հայրենիքը բերել։

—Ես այս աստիճան անհեռատես չէի համարում քեզ, Ստեփան, ասաց նա փոքր ինչ խռովեալ ձայնով.—եթէ դու ինձ ուղիղը գրէիր և ոչինչ չը թագցնէիր ինձանից, ես դարձեալ կը գայի, բայց բոլորովին ուրիշ պատրաստութիւններով։ Իսկ քո այդ գործ դրած ձևը կը փոխէ իմ ծրագիրը, որ առաջուց կազմել էի, հիմնուելով այն խոստումների վրա, որ դու արել էիր ինձ քո նամակների մէջ։ Այսու ամենայնիւ, ես պէտք է շնորհակալ լինեմ քո հնարագիտութեան համար, Ստեփան, դու ցանկանում էիր, որ ես իմ հայրենիքումը լինեմ,—ահա այստեղ եմ։

Վերջին խօսքերի ժամանակ նա բռնեց իր բարեկամի աջը և համակրութեամբ սեղմեց։

—Վհատելու ոչինչ չունենք, ասաց երիտասարդ իշխանը,—ես դարձեալ քեզ համար գունդեր կը կազմեմ, ինձ հարկաւոր էր միայն քո այստեղ ներկայութիւնը,—և այդ բաւական է ժողովուրդը ոտքի կանգնեցնելու համար։

Այդ խօսքերը այնպիսի մի զգացմունքով արտասանեց նա, որ սաստիկ ազդեց բէկի սրտին։ Նրա մի քանի րոպէ առաջ մռայլուած դէմքը կրկին պայծառացաւ և նրա զգայուն հոգին լցուեցաւ անսահման ուրախութեամբ։ Նա տեսնում էր իր առջև մի եռանդոտ երիտասարդ, որ այնքան անկեղծ և ջերմ սրտով նուիրուած էր հայ-

րենիքի փրկութեան գործին և դրանով մխիթարվում էր։

—Ես ամենևին չեմ վհատում, Ստեփան, ասաց նա,—որ այստեղ չը գտայ այն, ինչ որ սպասում էի։ Ես դարձեալ ուրախ եմ, որ իմ հայրենիքում գտնում եմ գոնէ մի բարեկամ, որ համակրում է ինձ։

—Մի մարդով ոչինչ չի դառնայ։

—Այդ մի մարդը կը դառնայ հարիւր, իսկ հարիւրը—հազարներ։

—Ես քեզ ասեցի, որ իմ առաջուց կազմած ծրագիրը փոխեցի արդէն, շարունակեց նա այժմ աւելի համոզիչ եղանակով։— Ես յոյս ունէի, որ այստեղ կը գտնեմ բազմաթիւ պատրաստի ուժեր, որոնց գլուխը անցնելով, կը սկսեմ գործը։ Այժմ հանգամանքները փոխվեցան, ես էլ ստիպված եմ փոխել իմ ձեռնարկութեան ձևը։ Ես այժմ գործը փոքրով կը սկսեմ և դրա համար բաւական մարդիկ ունեմ։

—Քառասուն հոգի միայն... ընդհատեց իշխանը ծիծաղելով։

—Սկսելու համար քառասուն հոգին փոքր չէ, ասաց բէկը վստահութեամբ։

—Եթէ դու կը սպասէիր, ես մի քանի օրվայ մէջ մի քանի գունդեր կը պատրաստէի։ Դարձեալ կրկնում եմ իմ խօսքը։

—Այժմ գունդեր ամենևին պէտք չեն։ Մար-

դիկների բազմութիւնը կը ծանրաբեռնէ ինձ։ Մեր գունդերը ինքն ըստ ինքեան կը կազմվեն։ Շտապել պէտք չէ։ Բոլորը կախված է գործի սկզբնական յաջողութիւնից։ Եթէ այս գիշեր Աստուած կը տայ ինձ ջարդել Կարա-չօբլուների ցեղը, որ մեզանից մի մղոն հեռաւորութեան վրա է գտնվում,— այնուհետև յաղթութիւնը մեր կողմը կը լինի։ Եւ այն բոլոր անհաշտ, միմեանցից բաժանված, անշարժ ուժերը, որոնց մասին ակնարկեցիր դու, այնուհետև իրանք կը գան և կը միանան մեզ հետ։

—Ես չեմ հասկանում, թէ ինչ վնաս կը լինէր, եթէ սկզբից հրաւիրէինք նրանց, խօսեց իշխանը, չը համաձայնվելով բէկի չափազանց անձնավստահութեան հետ։— Ես կարծում եմ, քո անունը բաւական հաստատ երաշխաւորութիւն կարելի է համարել, որ նրանք չեն մերժիլ քո հրաւէրը։

—Դու դեռ անփորձ ես, Ստեփան, ասաց բէկը ժպտելով։— Այդ զգոյշ, մտածող և իրանց կարծիքով խոհեմ պարոններին,— որ իրանց մէլիքներ, տանուտէրներ ու բէկեր են կոչում և որոնց իւրաքանչիւրը մի-մի վիճակի տէր է,— լոկ խօսքերով չես կարող համոզել։ Նրանք դարձեալ կը մնան իրանց խոհեմութեան մէջ, որ ուրիշ ոչինչ չէ, բայց միայն մի տեսակ խոհեմ անտարբերութիւն,

ավելի լաւ է ասել՝ մի տեսակ խոհեմ մեռելութիւն։ Նրանց պէտք է ցոյց տալ չօչափելի փաստ. պէտք է ցոյց տալ, որ փոքրաթիւ մարդիկներով ես կարելի է մեծ գործ սկսել, միայն թէ պէտք է գիտենալ, թէ ինչպէս սկսել։

Այդ փոքրիկ պատերազմական խորհուրդը տևեց մի քանի ժամ. Նրանք երկար խօսումէին, վիճում էին և մի քանի կէտերի մէջ միմեանց հետ չէին համաձայնվում։ Վէրջը իշխանը հարցրեց.

—Ուրեմն դու վճռել ես հէնց այս գիշեր յարձակում գործել, այն էլ Կարա-չօռլուների վայրենի ցեղի վրա։

—Այո, Կարա-չօռլուների վրա։ Վիշապին պէտք է գլխից զարկել. ուրիշ կերպ չես սպանի նրան։ Դրա համար ես ընտրեցի այդ բարբարոս ցեղը, որ սարսափի մէջ էր պահել ամբողջ երկիրը։

—Դա խիստ վտանգաւոր վստահութիւն է, եթէ չը յաջողվի, մենք ամեն ինչ կը կորցնենք։

—Իսկ եթէ յաջողվի, մենք ամեն ինչ կը շահենք։ Վտանգի մեծութեան հետ կապված է և արդիւնքի մեծութիւնը։

—Գոնէ ինձ թոյլ տուր հրաւիրել մի քանի վստահութեան արժանի մարդիկ, որոնց ես ի նկատի ունեմ։

—Դու դարձեալ նոյնն ես կրկնում ինչ որ մի

քանի րոպէ առաջ ասեցիր։ Մեզ պէտք չեն այն մարդիկը, որոնց մենք ստիպված պիտի լինենք հրաւիրել։ Մարդիկ իրանք իրանց սեպհական կամքով պէտք է հետևեն մեզ։ Գործի բնաւորութիւնն այդ է պահանջում։ Իսկ մարդիկ գրաւելու համար, որպէս քեզ ասեցի, հարկաւոր է ցոյց տալ նրանց մի չօչափելի օրինակ։ Խրատներով բան չի դառնայ։ Իմ անցեալը, իմ Վրաստանում ունեցած հեղինակութիւնը բաւական չէ մարդկանց հաւատը որսալու համար։ Նրանք պէտք է տեսնեն, թէ այստեղ ինչ եմ շինում ես։ Եւ այդ ես ցոյց կը տամ հէնց այս գիշեր։

Դաւիթ բէկը ընտրել էր իր հայրենիքի ամենաընդարձակ մասը, որ ընդհանուր անունով կոչվում էր Մեծ-Սիւնիք։ Այստեղ դեռ շարժում չը կար, թէև այս կողմերումն էին երկրի գլխաւոր ուժերը, թէև այստեղ էին հայոց նշանաւոր մելիքները։ Մեծ-Սիւնիք նահանգը կազմված էր այդ ժամանակ եօթը ընդարձակ գաւառներից, որոնք սկսեալ Երասխի ափերից տարածվում էին մինչև Սևանայ լիճը, մինչև Ղազախի և Շամշադինի սահմանները։ Այդ եօթը գաւառները հետևեալներն էին՝ Գողթան, Բարգիւշատ, Գենուազ, *) Սիսիան, Ղափան, Ջավնդուր և Ջանգազօր։ Այս կողմերում դեռ

---

*) Գենուազ գունէուզ բառի աղճատվածն է.

սպառում էին. դեռ գտնվում էին անվճռականութեան մէջ։

Շարժումը սկսվել էր յիշեալ գաւառների, այսինքն Մեծ Սիւնիքի արևելեան կողմերում։ Այստեղ սկսեալ Երասխի ափերից մինչև Գանձակի սահմանը, որ էր Քուրաքչայ գետը, տարածվում էին երկու նահանգներ՝ փոքր Սիւնիք և Արցախ։ փոքր Սիւնեաց նահանգը ունէր երկու գաւառներ՝ Դուզախ և Վարանդայ։ Արցախի նահանգը ունէր երեք գաւառներ՝ Խաչէն, Ջարաբերդ և Գիւլիսթան։ *) Վերջին գաւառը կազմում էր Ուտէացոց աշխարհի մի մասը։

Յիշեալ հինգ գաւառները՝— Դուզախ, Վարանդայ, Խաչէն, Ջարաբերդ, Գիւլիսթան — կազմում էին հինգ հայ մելիքութիւնների դաշնակցական մի իշխանութիւն, որոնց պարսիկները կոչում էին Խամսայ մելիքլարի։ **) Այդ հինգ մելիքներից մէկը, Մելիք-Աւան խանը, գերիշխանութիւն ունէր միւսների վրա։ Այդ պատճառով Խաչէնը, Ջարաբերդը, Գիւլիսթանը

որ նշանակում է արևահայաց. այդ գաւառը հին ժամանակներում կոչվում էր Արևիք։

*) Գիւլիսթանը կոչվում էր և Իգիրմի-դորդ, որ նշանակում է 24. այդ գաւառում 24 գիւղեր լինելու համար։

**) Խամսայ արաբերէն նշանակում է հինգ. իսկ խամսայ մելիքլարի՝ հինգ մելիքներ։

գտնվում էին նրա կառավարութեան ներքոյ։ Դուզախը գտնվում էր Մելիք-Եգանի կառավարութեան ներքոյ, իսկ Վարանդան գտնվում էր Հնոտեցի աւան մինբաշիի *) կառավարութեան ներքոյ։

Մելիք-Աւան-խանը մեր պատմութեան մէջ յայտնի է անունով Յովհաննէս իշխան։ Նրան երբեմն կոչում են գուգարացոց, երբեմն ուտէացոց, իսկ երբեմն Մեծ Սղնախի իշխան։ Նա հայոց հին իշխանական տոհմից էր, կենում էր իր անմատչելի ամրոցում, որ շինված էր Թարթար գետի մօտ և կոչվում էր Մեծ Սըղնախ **)։

Յովհաննէս իշխանը չափազանց խիստ, կամակոր և հպարտ մի անձնաւորութիւն էր։ Իր թշնամիներին սարսափի մէջ պահելը—գլխաւոր պայմանն էր նրա զօրութեան։ Լինելով գլուխ հինգ դաշնակցական մելիքութիւնների, նա միացրել էր Փոքր Սիւնիքը ու Արցախը և այսպիսով կազմել էր մի ահագին ուժ։ Երբ ռուսները տիրեցին Դէրբէնդը և Բագուն, նա սկսեց

---

*) Մին բաշի նշանակում է հազարապետ։

**) Յովհաննէս իշխանը ռուսաց Աննա Իվանովնա կայսրուհու ժամանակ Դէրբէնդից և Հաշտարխանից գնալով Ս. Պետերբուրգ, ստացաւ գեներալ մայօրութիւն։ Նրա երբեմն գուգարացոց և երբեմն ուտէացոց իշխան կոչվելու պատճառն այն էր, որ տիրում էր այդ երկրների մի մասի վրա։

իր դաշնակից Մէլիք-Եգանի ձեռքով բանակցութիւններ անել Պետրոս մեծի հետ, առաջարկելով կայսրին իր ծառայութիւնը և խընդրելով նրա հովանաւորութիւնը պարսից լծից ազատվելու համար։

Եւ այսպէս փոքր Սիւնիքի և Արցախի նահանգներում շարժումը սկսվել էր, որովհետև այստեղ միութիւն կար, մէլիքների դաշնակցութիւն կար։ Իսկ Մեծ Սիւնիքի նահանգում, որտեղ Դաւիթ բէկը կամենում էր սկսել իր գործողութիւնները, դեռ ամեն ինչ անշարժ էր, որովհետև այստեղ մելիքները ոչինչ կապ չունէին միմեանց մէջ։

Ցաւալին այն էր, որ փոքր Սիւնիքը և Արցախը թէ քաղաքական և թէ եկեղեցական կառավարութեան կողմից բոլորովին բաժանված էին Մեծ Սիւնիքից։ Քաղաքական կողմից բաժանված էին նրանով, որ մեր յիշած հինգ դաշնակցական մելիքութիւնները իրանց առանձին ինքնավարութիւնն ունէին և կապված չէին Մեծ Սիւնիքի հետ։ Իսկ եկեղեցական կառավարութեան կողմից նոյնպէս բաժանված էին, որովհետև սկսեալ ամենահին դարերից Աղուանից կաթողիկոսները, միտրապօլիտները, եպիսկոպոսները առանձին հոգևոր իշխանութիւն ունէին Էջմիածնից անկախ։ Գանձասարի վանքը որպէս առաջ, նոյնպէս և Դաւիթ բէկի օրերում Աղուա-

նից հոգևոր իշխանութեան աթոռանիստն էր։ Նրա ներկայացուցիչները, որպէս էին՝ սկզբում Եսայի եպիսկոպոսը, իսկ յետոյ Ներսէս եպիսկոպոսը ձեռք ձեռքի տուած, միասին էին գործում Յովհաննէս իշխանի հետ։ Թէ ռուսների հետ ունեցած բանակցութիւնների մէջ և թէ իրանց ներքին զինուորական պատրաստութիւնների մէջ այդ երկրի հոգևոր և մարմնաւոր իշխանութիւնների ներկայացուցիչները համերաշխ էին։

—Պէտք է աշխատել գոնէ միանալ Յովհաննէս իշխանի հետ, ասաց Ստեփաննոսը, երբ նըկատեց, որ բէկը չարունակում է յամառութեամբ պնդել իր կամքը։—Ես կարող եմ այդ միութիւնը կայացնել, իմ յարաբերութիւնները իշխանի հետ շատ լաւ են։

—Ես միութեան հակառակ չեմ, Ստեփան, պատասխանեց բէկը։—Բայց դու գիտես, Յովհաննէս իշխանը ո՛ր աստիճան հպարտ մարդ է. նա, շատ հասկանալի է, որ ինձ չի ենթարկվի, իսկ ես նրա զօրապետը լինել չէի ցանկանայ։

—Պէտք է աշխատել գոնէ Գանձասարի միտրապօլիտներին միացնել Էջմիածնի հետ, ասաց իշխանը։

—Թէև մի առանձին օգուտ չունի, բայց այդ մասին ինքը՝ Էջմիածնի Աստուածատուր կաթողիկոսը աշխատում է, պատասխանեց բէկը։

Յետոյ նա սկսեց պատմել, թէ ինչպէս ինքը դուրս եկաւ Վրաստանից Էջմիածնի ուխտաւորի անունով, գնաց այնտեղ գլխաւորապէս կաթողիկոսի հետ տեսնվելու նպատակով։ Այդ մարդը «շարժման» եռանդոտ և ամենաջերմ գործիչներից մէկն է, ասաց նա, աւելացնելով, թէ հայերը միշտ հրաշքներ են գործել, երբ հոգևոր գլուխները միացած են եղել ժողովրդի ներկայացուցիչների հետ։

—Այստեղ նոյնպէս ունենք մի ամենալաւ եկեղեցական, որի վրա կարելի է յոյս դնել, ընդհատեց իշխանը բէկի խօսքը։

—Ո՞վ է։

—Տաթևի վանքի Ներսէս արքեպիսկոպոսը։ Ես ամեն ինչ յայտնել եմ նրան և նա մեծ անհամբերութեամբ սպասում էր քո գալստեանը։

—Ներսէսներին հաւատալ կարելի է. մեր պատմութեան մէջ Ներսէսները ներկայացնում են միշտ պայծառ բացառութիւններ։

Արեգակը վաղուց մայր էր մտել, բայց վրաններից ոչ մէկի մէջ դեռ ճրագ չէր երևում։ Լուսնկայ գիշերը բաւական պարզ էր։ Բէկի և իշխանի մէջ խօսակցութիւնը ընդհատվեցաւ, երբ հեռուից լսելի եղաւ սուլելու խորհրդաւոր ձայն։ Բէկը աւելի ուշադրութեամբ ականջ դրեց, երբ ձայնը կրկնվեցաւ։ Այդ միջոցին երկու ձիաւորներ ամենայն թափով իրանց նժոյգ-

ները վազեցնելով, մտան ձորի մէջ և մօտեցան բէկի վրանին։ Եկւորները նրա մարդիկն էին, մէկը մեծ Գիօրգին, միւսը փոքր Գիօրգին։ Նըրանք ուղարկված էին Կարա—չօռլուների կեցած տեղի դիրքերը հետազօտելու։ Բէկը իսկոյն իմացում տուեց իր ծառաներից մէկին, որ Մխիթար սպարապետին և Բայինդուր իշխանին կանչեն իր մօտ։

Երբ նրանք եկան, բէկը ծանօթացրեց Ստեփաննոսին նրանց հետ, ասելով.

—Ահա այն մարդը, որ մեզ հրաւիրել էր այստեղ—իշխան Ստեփաննոս Շահումեանը։

Բայինդուր իշխանը թեք աչքով նայելով նրա վրա, ասաց.

—Դուք կանչեցիք, մենք եկանք, եթէ այս րոպէիս ինձ հինգ հազար հրացանաւոր չը տաք, պարսից թագաւորի «բաթման գլխը» քեզ հինգ հազար կտոր կանէ։

Բոլորը ծիծաղեցին։ Այդ միջոցին մեծ Գիօրգին և փոքր Գիօրգին նոյնպէս մտան բէկի վրանը։ Սկսվեցաւ խորհուրդը գիշերային արշաւանքի մասին Կարա-չօռլուների ցեղի վրա։

Ե.

Առաւօտ էր, վաղորդեան այն ժամը, երբ մութը դեռ չէր բաժանվել լոյսից։ Տաթևի վանքի առաջնորդարանի դուռը կամաց բացվեցաւ. մի

բարձրահասակ աբեղայ յայտնվեցաւ շէմքի վրա։ Նա աչք ածեց իր շուրջը, ոչ ոք չէր երևում։ Ամբողջ միաբանութիւնը դեռ քնած էր։ Վեղարը աւելի ցած թողնելով աչքերի վրա, նա սկսեց գլխել դէպի վանքի շրջապարիսպի մեծ դուռը։ Դռնապանը փաթաթված իր վերարկուի մէջ, նոյնպէս քնած էր։ Զը զարթեցնելով նրան, աբեղան հանեց իր գրպանից մի բանալի, բաց արեց ահագին երկաթէ կողպէքը, որ քարշ էր ընկած նոյնպէս երկաթէ սողնակից։ Երկփեղկեայ մեծ դուռը նրա ոտքի մի հարուածով յետ-յետ գնաց։ Նա դուրս եկաւ և իր ետևից կրկին կողպեց դուռը։

Վաղորդեան լռութիւնը սքանչելի էր. ամեն ինչ չորս կողմում դեռ նիրհում էր քաղցր, խաղաղ անդորրութեան մէջ։ Նա աչքերը դարձրեց դէպի արևելք, տեսնելու, արդեօք շա՞տ էր մնացել մինչև արևի ծագելը։ Արշալոյսը դեռ նոր էր սկսել պարզվել։ Յետոյ դիմեց նա դէպի վանքի մերձակայ բլուրներից մէկը, բարձրացաւ նրա գագաթի վրա։ Այստեղից սկսեց նայել դէպի նեղ ճանապարհը, որ ոլոր-մոլոր պտոյտներով բարձրանում էր դէպի վանքի դռները։ Ոչ ոք չէր երևում։ Իսկ նա արձանի պէս կանգնած, երկար նայում էր։ Վաղորդեան մուայլը թոյլ չէր տալիս խիստ հեռուն նշմարել. Նա այժմ լարեց իր լսողութեան բոլոր ուժը։ Արդեօք չէ՞ր

լսվում մի որ և իցէ ոտնաձայն, արդեօք ճանապարհի վրա ոչ ոք չէ՞ր գալիս։

Դա մի բարձրահասակ աբեղայ էր, որի փառաւոր սև մօրուքի մէջ դեռ նոր երևում էին հատ-հատ սպիտակ մազեր։ Նրա նոյնպէս սև և խոշոր աչքերը դեռ պահպանել էին երիտասարդական փայլը։ Փոքր ինչ թուխ դէմքը արտայայտում էր տաք, եռանդոտ, անվեհեր բնաւորութիւն։ Իսկ այժմ նրա կրակոտ աչքերում կարելի էր նկատել սաստիկ անհանգստութիւն, որ աւելի բարկութեան նշան էր, քան թէ յուսահատութեան։ «Ի՞նչ եղան... հիմա պէտք է եկած լինէին... ինչու ուշացան»... կրկնում էր իր մըտքում անհամբերութեամբ։

Երկար սպասելուց յետոյ, երբ նկատեց, ոչ ոք չէ երևում, ցած իջաւ բլուրից և վերադարձաւ վանքը։ Այժմ միայն նա զարթեցրեց դռնապանին, պատուիրելով.

—Արթուն եղիր, երբ դռան ձայնը կը լսես, շուտ բաց արա ու ինձ իսկոյն իմացում տուր։

—Ե՞րբ էք տեսել, սրբազան, որ Օհանը քնի, — ասաց նա աչքերը տրորելով, — Օհանը միշտ մի աչքը խուփ միւսը բաց է քնում. ճանճն էլ անցնելիս իսկոյն զարթնում է։

Սրբազանը միայն ժպտաց ծերունի դռնապանի ինքնագովութեան վրա և հեռացաւ, կրկին պատուիրելով, որ արթուն կենայ։

Մտնելով իր խուցը, նա մօտեցաւ ճրագին, շարունակեց գրել նամակը, որ դեռ չէր վերջացրել։ Նրա ուրախ դէմքի վրա կարելի էր կարդալ բոլորը, թէ ինչ է գրում։ Մերթ-մերթ մի ինքնաբաւական ժպիտ ցնցում էր նրա փոքր ինչ ուռած շրթունքը և աչքերի մէջ փայլում էր խիստ վսեմ, խորհրդաւոր բերկրութիւն։ Կարծես նրա հոգին թափում էր իր բոլոր սրբազան ըղձացմունքները այն թղթի մէջ, որի վրա վազում էր նրա գրիչը։

Մէկ ժամից յետոյ լսելի եղան վանքի զանգակների մեղմ հնչիւնները։ Հրաւիրում էին մենակեացներին կատարելու առաւօտեան ժամերգութիւնը։ Նա չը շարժվեցաւ իր տեղից. դեռ գրում էր։ Ամբողջ միաբանութիւնը զարթնեցաւ։ Նրանք մինը միւսի ետևից դուրս եկան իրանց նեղ խցերից, և լուռ, դանդաղ քայլերով սկսեցին դիմել դէպի Աստուծոյ տաճարը աղօթելու։

Այդ միջոցին Օհանը բաց արեց սրբազանի խցի դուռը, յայտնեց, թէ վանքի ջորիները վերադարձան, որտեղ է հրամայում դարսել բեռները։

Սրբազանի սպասածն էլ հէնց այդ էր. նա իսկոյն նամակը թողեց և դուրս եկաւ։ Արշալոյսը արդէն սկսել էր շառագունիլ, բայց դեռ բաւական մութն էր։ Մի խումբ բեռնած ջորիներ

վանքի մեծ դռնից մտան բակը։ Ջորեպանները տեսնելով սրբազանին, գդակները վեր առին, մօտեցան, համբուրեցին նրա աջը։

Նա դարձաւ դէպի նրանցից մէկը, որի ծպտեալ հագուստը ամենևին չէր ցոյց տալիս թէ աբեղայ է, հարցրեց.

—Խորէն հայր սուրբ, ինչու այդչափ ուշացաք։

—Ուշացանք, իրաւ է, պատասխանեց Խորէն հայր սուրբը ուրախ ծիծաղով.—բայց լաւ բեռնով ու բարձով յետ դարձանք... Ոչ մի տարի այսքան առատ «պտուղ» հաւաքած չունէինք... ինչ ասես, բերել եմ՝—իւղ, պանիր, չորաթան, բուրդ, բամբակ,—ինչ որ ուզէք...

—Օրհնեալ լինի ժողովուրդը, նա իր տուրքը երբէք չի խնայել մեր վանքից, երբ ունեցել է, տուել է, ասաց սրբազանը ժպտելով, և հրամայեց բեռները ցած իջեցնեն։

Ջորեպանները կատարեցին նրա հրամանը և սկսեցին բեռները կրել ոչ թէ վանքի ամբարը, ուր սովորաբար պահվում էին վիճակներից հաւաքված իւղը, պանիրը և այլ «պտուղները»—այլ տարան դարսեցին մի ստորերկրեայ մառանում, որի դուռը սրբազանը իր ձեռքով բաց արեց։

—Ես կարծում եմ, այժմ մի ամբողջ տարվայ համար պաշար կունենանք... ասաց Խորէն հայր

սուրբը, մի առանձին հրճուանքով նայելով այնտեղ դիզված մթերքների վրա։

—Ով գիտէ, եթէ սպառողները շատ կը լինեն, գուցէ այդ չի բաւականանայ... պատասխանեց սրբազանը և խորհրդաւոր ժպիտը դարձեալ երեւաց նրա համակրական դէմքի վրա։

Երբ բոլոր բեռները ներս բերեցին, սրբազանը հրամայեց ջորեպաններին, որ տանեն անասունները հանգստացնեն։ Նրանք հեռացան։ Իսկ ինքը մօտեցաւ, սկսեց նոր բերված հակերից մէկը բաց անել, ասելով.

—Տեսնենք, Խորէն հայր սուրբ, ձեր այս անգամ բերած իւղն ու պանիրը ինչ համ ունի։

—Շատ համեղ է, սրբազան, պատասխանեց Խորէն հայր սուրբը և սկսեց օգնել սրբազանին հակը բաց անելու։

Հակի մէջ յայտնվեցաւ ոչ իւղ, ոչ պանիր և ոչ ուրիշ ուտեստներ, այլ դրանց փոխարէն առատ վ ա ռ օ դ և գ ն դ ա կ, որ լցրած էին կաշեայ պարկերի մէջ։ Սրբազանը մեծ բաւականութեամբ ձեռքերով շօշափում էր այդ մահաբեր մթերքը, որից ամեն մի եկեղեցական սարսափում է։—Օրհնեալ լինիս, Խորէն հայր սուրբ, ասաց նա դառնալով դէպի երիտասարդ աբեղան։—Շատ համեղ է, անչափ շատ համեղ...

Յետոյ նա կողպեց ստորերկրեայ մառանի դուռը, բանալին դրեց գրպանը, և դիմեց իր խուցը,

Խորէն հայր սուրբին ևս իր մօտ հրաւիրելով։

—Ես այս րոպէիս կը գամ ձեզ մօտ, սրբազան, ասաց նա գնալով դէպի իր խուցը.—ինձ պէտք է առաջ հագուստս փոխել։

Խորէն հայր սուրբը բոլորովին նորընծայ, երիտասարդ աբեղայ էր, միջակ հասակով և բաւական նուրբ կազմուածքով։ Նրա գեղեցիկ դէմքը կնոջ դէմքի քնքոյշ արտայայտութիւնն ունէր, թէև այժմ բաւական այրվել էր արևից, որովհետև մի քանի ամբողջ շաբաթներ ճանապարհորդում էր։ Մտնելով իր խուցը, նա արձակեց զէնքերը, մի կողմ դրեց, յետոյ սկսեց մերկանալ հագուստը, որի մէջ չիրվանաձորցի բեռնակիր գիւղացու էր նմանում։ Վանքի ծառաներից մէկը ջուր բերեց լուացվելու համար։ Երբ նա շապիկի թևքերը ծալած լուացվում էր, այդ ժամանակ կարելի էր նկատել նրա սպիտակ պարանոցի վրա, ետևի կողմից, մի վարդագոյն սպի, որ առաջ էր եկած սրի հարուածից։ Այդ սպին կրում էր նա այն ժամանակից, երբ դեռ իրան չէր նուիրել կուսակրօնութեան։ Այդ սպիի հետ կապված էր նրա կեանքի ամենատխուր պատմութիւններից մէկը...

Նա հագաւ իր վանականի հագուստը և դիմեց սրբազանի խուցը։ Անցնելով վանքի մօտից, նկատեց, որ առաւօտեան ժամերգութիւնը դեռ աւարտված չէր։ Ներս չը մտաւ, միայն համբու-

րեց վանքի դուռը, երեսը խաչակնքեց և անցաւ։

—Նստիր, Խորէն հայր սուրբ, ասաց սրբազանը, նրան տեղ ցոյց տալով փոքրիկ տախտի վրա, որ դրած էր նրա խցում և ծածկած պարսկական գորգով։ Իսկ ինքը տեղաւորվեցաւ գրասեղանի հանդէպ, որի վրա դիզված էր թըղթերի մի կոյտ։ Ամբողջ գիշերը նա անքուն էր մնացել և գրել էր այդ թղթերը։ Այժմ մէկ-մէկ վեր էր առնում, խնամքով ծալում էր, և նրանց նամակի ձև տալով, կնքում էր, գրում էր հասցէները։ Նա դարձաւ դէպի վարդապետը ասելով.

—Խորէն հայր սուրբ, այս նամակները հէնց այս առաւօտ պէտք է ուղարկվեն, աշխատեցէք մեր ծառաներից այնպիսիներին ընտրել տանելու համար, որ համ սրտումը քաջութիւն ունենայ, համ գլխումը խելք։

Վարդապետը նայեց հասցէներին, նամակները գրված էին Սիւնեաց աշխարհի նշանաւոր իշխանների և մէլիքների անուններով։

—Դուք արդէն հրաւիրում էք նրանց, հարցրեց վարդապետը հետաքրքրութեամբ։

—Հրաւիրում եմ... «բէկը» արդէն յայտնվել է... պատասխանեց սրբազանը։

Այս խօսքը այն աստիճան ուրախութիւն ազդեց երիտասարդ աբեղայի մէջ, որքան չէր ուրախանայ մի բարեպաշտ իսրայէլացի, եթէ նըրան ասէին. «Մեսիան յայտնվել է, որ պիտի

վերանորոգէ քանդված Երուսաղէմը և պիտի վերականգնէ Դաւթի թագաւորութիւնը»։

—Այս գիշեր լաւ տեղեկութիւններ ստացայ, Խորէն հայր սուրբ, բէկը հասել է արդէն Սիսիան. այնտեղ Ուչ-թէփէի դաշտավայրի վրա զարկել է Կարա-չօռլուների ցեղը. մեծ յաղթութիւն է գործել. ամբողջ Սիսիանը սարսափի մէջ է. թիւրքերը թողնելով իրանց գիւղերը, փախչում են դէպի լեռները։ Տեղացի հայերը տեսնելով բէկի փառաւոր յաղթութիւնը, հաւաքվում են նրա դրօշի տակ։ Այժմ մօտ 500 ձիաւոր ունի, բոլորը ամենաընտիր տղամարդիկ։ Բայց գիտէ՞ք քանի հոգով կատարեց նա իր առաջին յաղթութիւնը,—իր հետ Վրաստանից բերած քառասուն հոգով։

—Այդ հրաշք է, կատարեալ հրաշք, բացականչեց երիտասարդ աբեղան և ուրախութիւնից չը գիտէր ինչ անել։

—Այո, հրաշք է, և մի այդպիսի հրաշք պէտք էր։ Կոյր ժողովուրդը միշտ հրաշք է պահանջում. նա սեպհական հաւատ չունի։ Յիսուս Քրիստոսը քանի որ խօսքերով էր քարոզում, ոչ ոք չէր լսում, բայց երբ սկսեց հրաշքներ գործել, ժողովուրդը հետևեց նրան։ Այսպէս էլ բէկը իր հետևողները ունեցաւ. յաղթութեան հէնց միւս օրը հաւաքվեցան նրա մօտ աւելի քան չորս հարիւր ձիաւորներ։

—Այդ տեղեկութիւնները ումից ստացաք։

—Իշխան Սանփաննոս Շահումեանից։ Կարող էք կարդալ նրա նամակը, որ ստացայ բանակից։ Սրբազանը տուեց նրան մի նամակ, որ գրված էր շտապ ձեռքով։

Նամակի մէջ նկարագրված էր Ուչ-Թէփէի արշաւանքի մանրամասները, թէ ինչպէս բէկը գիշերով յանկարծ յարձակւում գործեց Կարա-չօռլուների վրա, և որպէս նրանք խռովութեան մէջ ընկան, կարծելով, թէ զօրքերի ահագին բազմութեան հետ գործ ունեն, այդ պատճառով մեծ մասը իրանց չադրները ու անասունները թողնելով փախան, իսկ նրանք որ ընդդիմադրութիւն գործեցին, սաստիկ ջարդվեցան։ Իշխանը իր նամակը վերջացնում էր, հրաւիրելով սրբազանին բէկի մօտ մի քանի կարևոր կարգադրութիւնների մասին խորհրդակցելու համար։

—Ուրեմն դուք պէտք է գնաք, հարցրեց Խօրէն հայր սուրբը նամակը կարդալուց յետոյ։

—Ես պատրաստվում եմ իսկոյն ճանապարհ ընկնել, պատասխանեց սրբազանը։—Նոր և աւելի ուրախալի համբաւ ևս կը հաղորդեմ ձեզ՝ Շընհէրը *) գրաւված է բէկի կամաւորներով։

*) Շընհէրը կոչվում է և Շինուհայր, այսինքն չէների կամ աւանների հայրը. դա գիւղաքաղաք էր Ղափանի մէջ։

—Շընհէրը… միթէ, Երբ… հարցրեց հայր սուրբը, դժուարանալով հաւատալ իր ականջներին։

—Ուչ-Թէփէի արշաւանքից յետոյ, երբ բէկի յաղթութեան լուրը տարածվում է Սիսիանի մէջ, ինչպէս ասեցի ձեզ, հաւաքվում են նրա մօտ աւելի քան չորս հարիւր կամաւորներ։ Դրանցից շատերը զէնք և ձիաներ չեն ունենում։ Բէկը զինւորում է նրանց Կարա-չօռլուներից խլած աւարով, և առանց ժամանակ կորցնելու, սկսում է դիմել դէպի Շընհէր։ Շընհէրը առանց կռուի անձնատուր է լինում և տեղային հայերը միանում են բէկի հետ։ Նրա ուժերը այժմ աւելի զօրութիւն են ստանում, մանաւանդ երբ բէկը զարկում է շրջակայ այլազգիներին և նրանցից խլած զէնքերը բաժանում է իր նոր կամաւորներին։

—Այդ լաւ է, հայր սուրբը ծիծաղելով ընդհատեց սրբազանի պատմութիւնը.—թշնամիներից խլել և իր կամաւորներին զինուորել։ Այսպիսով բէկը մեծ ծախսեր չի ունենայ։

—Այսպէս էլ պէտք է, պատասխանեց սրբազանը.—միթէ պարսիկները մեզ հետ մի և նոյն կերպով չէին վարվում։ Մեր փողը, մեր կայքը, մեր զէնքերը խլում էին, իրանց համար ասպատակներ էին պատրաստում ու յետ դառնում կրկին մեզ կողոպտում, կրկին մեր զէնքերով

մեր արիւնն էին թափում։ «Ակն ընդ ական, ատամն ընդ ատաման»—այդ օրէնք է, և բէկը խիստ խելացի կերպով է վարվում, որ հետևում է այդ օրէնքին։

—Բայց նոր առակ լուարուք, խորէն հայր սուրբ, շարունակեց սրբազանը։—Շընհէրը գրաւելուց յետոյ և շրջակայ այլազգիներին ջարդելուց յետոյ, պարսիկների Ջուանշիր կոչված ցեղը, որ շատ հեռու չեն այնտեղից, լսում են բէկի յաղթութիւնները և կատաղում են։ Տասն և վեց հազար հոգով դրանք գալիս են բէկի վրա։ Կռիւը տևում է երկու ամբողջ օր և երկու ամբողջ գիշեր, վերջը Ջուանշիրները յաղթվում են, և թողնելով պատերազմի դաշտում ահագին աւար, սկսում են փախչել։ Ջուանշիրներին օգնութեան են հասնում Կուրթլար աւանի պարսիկները։ Բէկը ուղարկում է նրանց դէմ Մխիթար սպարապետին և հրամայում է բոլորովին ոչնչացնել այդ աւանը։ Այժմ Կուրթլարը ներկայացնում է մոխիրի ահագին կոյտ միայն, իսկ բնակիչներին սրից անց է կացրած։

—Այդ, եթէ չասեմ անգթութիւն է, բայց փոքր ինչ խիստ է, նկատեց հայր սուրբը։

—Դուք սխալվում էք, խորէն հայր սուրբ, պատասխանեց սրբազանը։—Բէկի սկսած գործի յաջողութեան ամենագլխաւոր պայմանը ոչ թէ նրա յաղթութիւնները կարող են լինել, այլ այն

սարսափը, որ նա կը տարածէ թշնամիների վրա։ Իսկ թշնամուն սարսափի մէջ ձգելու համար, գոնէ սկզբում, այս տեսակ անգթութիւններ պէտք են։ Եւ բէկը այդ անհրաժեշտութիւնը շատ լաւ է հասկանում։ Գազանների հետ բարեսրտութեամբ ոչինչ չես կարող շինել։

—Մի բան էլ կայ, առաջ տարաւ սրբազանը.—բէկի այս տեսակ գործողութիւնները ոչ միայն մեծ սարսափ կը տարածեն մահմեդականների վրա, այլ սաստիկ ազդեցութիւն կունենան նոյն իսկ հայերի վրա, որոնք առանց առաջնորդի, առանց ուղեցոյցի միշտ դժուարանում են գտնել ուղիղ և անմոլոր ճանապարհը։ Նա իր յաղթութիւններով նպաստեց և մեր նպատակներին։ Ես մեծ վստահութիւն չէի ունենալ, թէ իմ նամակներով, թէ իմ հրաւէրքով հայոց իշխանները կը հաւաքվէին այստեղ և կը միանային բէկի հետ, եթէ նա այդ հրաշքները գործած չը լինէր։ Համարեա մէկ շաբաթվայ մէջ նա կատարեց չորս փառաւոր յաղթութիւններ, ինչպէս են՝ Ուչ-թէփէի, Շընհէրի, Ջուանշիրների և Կուրթլարի ճակատամարտը, և այդ բոլորը սկսեց նա քառասուն հոգով։

—Վերջին տեղեկութիւնները նոյնպէս Ստեփաննոս իշխանն է հաղորդել ձեզ, սրբազան, հարցրեց խորէն հայր սուրբը։

—Նա է հաղորդել։—Բայց մենք ուշանում

ենք, Խորէն հայր սուրբ, խօսքը փոխեց սրբազանը, նամակների ծրարները գրասեղանի վրայից առնելով և նրան տալով։—Այս նամակները հէնց այս առաւօտ պէտք է ուղարկվեն։ Շուտով կը կատարվի սուրբ Վարդանանց նահատակների հոգեհանգիստը։ Ես իմ նամակների մէջ նշանակել եմ, որ այդ հանդիսաւոր տօնին բոլորը այստեղ գտնվեն, որպէս զի այդ խորհրդաւոր օրում կնքվի և խորհրդաւոր գործի ուխտը։

—Նամակները ես ինքս կը տանեմ, ասաց Խորէն հայր սուրբը։

—Դուք նոր եկաք ճանապարհից, բաւական յոգնած կը լինէք, պատասխանեց սրբազանը։

—Ձեր հաղորդած ուրախալի տեղեկութիւնները բոլորովին կազդուրեցին իմ յոգնածութիւնը։ Այդ նամակների հետ նշանակութիւն ունի և կենդանի խօսքը։ Թոյլ տուեցէք, սրբազան, որ այդ ցանկալի դեսպանախօսութիւնը ես կատարեմ։

—Օրհնեալ լինիք, որդի, ասաց սրբազանը։ Իսկ Խորէն հայր սուրբը, առնելով նամակների ծրարները, համբուրեց իր մեծաւորի աջը և հեռացաւ։

Արեգակը արդէն ծագել էր։ Վանքի ծառազարդ շրջակայքը վառվում էին առաջին ճառագայթների ջերմ լուսով։ Առաւօտեան ժամերգութիւնը

աւարտված էր։ Վանքի բազմաթիւ միաբանները դուրս գալով Աստուծոյ տնից, այլ ևս իրանց սովորութեան համեմատ չէին նստած բակի ծառերի հովանիների տակ և ժամանակը սպանում դատարկ շատախօսութիւններով, կամ բամբասանքով։ Նրանք առանձնացել էին իրանց մըթին խցերում, ինչ որ գործով լուռ ու մունջ զբաղված էին։ Եթէ մէկը աներևոյթ հոգու նըման մտնէր նրանց փակված խցերի դռնից, կը տեսնէր, որ այս սաղմոս և Նարեկ կարդացող, ծոյլ մարդիկը, նստած իրանց մենարանների խուլ գաղտնարանում, վառօդից և գնդակներից փամփուշտներ են շինում։

Այդ միջոցին վանքի ախոռապետ հայր սուրբը ներս մտաւ սրբազանի սենեակը, յայտնեց, թէ ձիաները պատրաստ են։

—Իսկ թուանքչիները (հրացանաւորները) նոյնպէս պատրաստ են, հարցրեց սրբազանը։

—Պատրաստ են, որպէս հրամայեցիք, տասն և երկու ձիաւորներ։

—Լաւ, ես այս րոպէիս դուրս կը գամ, կանչեցէք ինձ մօտ Մեսրոպ սրբազանին։

Ախոռապետ հայր սուրբը հեռացաւ։ Քանի րոպէից յետոյ ներս մտաւ մի ծերունի եպիսկոպոս, սպիտակ, փառաւոր մօրուքով։ Դա սըրբազանի տեղապահը և վանքի կառավարիչն էր նրա բացակայութեան ժամանակ։

—Հայր Մեսրոպ, ասաց նրան սրբազանը կանգնելով և պատրաստվելով ճանապարհի համար, —ես այս րոպէիս գնում եմ Շընհէր՝ բէկի հետ տեսնվելու, դուք, ի հարկէ, գիտէք, թէ ինչ կարգադրութիւններ պիտի անէք իմ գնալուց յետոյ: Մենք երէկ բաւական խօսեցինք այդ մասին:

—Գիտեմ... պատասխանեց Մեսրոպ եպիսկոպոսը.—իմ ծերացած յիշողութիւնը դեռ այնքան չէ բթացել, որ մոռանամ, ընդհակառակն, այդ վերջին օրերում բաւական սրվել է...

—Գոհութիւն Աստուծոյ, ասաց սրբազանը ժպտելով, և տալով իր տեղապահին մի քանի նոր պատուէրներ, միասին դուրս եկան սենեակից:

Վանքի դրանը սպասում էին տասն և երկու զինված ձիաւորներ. այնտեղ պահած էր և սրբազանի երիվարը: Նա դուրս եկաւ, երեսը խաչակնքելով, նստեց իր ձին և գնաց դէպի Շընհէր, բէկի բանակը:

Դա Տաթևի վանահայր, մի և նոյն ժամանակ Սիւնեաց աշխարհի առաջնորդ Ներսէս արքեպիսկոպոսն էր:*)

---

*) Այդ Ներսէս արքեպիսկոպոսին պէտք չէ շփոթել Գանձասարի Ներսէս եպիսկոպոսի հետ, որ այդ ժամանակ Աղուանից առաջնորդն էր:

Ջ.

Տաթևի վանքը կառուցված էր նոյն անունով աւանի մօտ և սկսեալ 896 թւից գոյութիւն ունէր: Շաղատայ վանքից յետոյ Տաթևը աթոռանիստ եղաւ Սիւնեաց արքեպիսկոպոսների, որոնք այլ անունով կոչվում էին միտրապօլիտներ: Տաթևի միտրապօլիտները թէև ճանաչում էին Էջմիածնի Հայրապետի գերիշխանութիւնը, բայց մի և նոյն ժամանակ իրանց առանձին հոգևոր կառավարութիւնն ունէին:

Վանքը շինված էր լեռնային դժուար մատչելի բարձրաւանդակի վրա, շրջապատած աշտարակներով և ամուր պարիսպներով, որոնք դրսից նրան աւելի մի անառիկ բերդի նմանութիւն էին տալիս: Նրա առջևից ընկած էին անդունդի նման խոր և մթին ձորեր, որոնց միջով գոռալով, որոտալով անցնում էր Որոտան գետը: Շրջակայ բոլոր լեռները, որոնց սուր գագաթները կորչում էին ամպերի մէջ, պատած էին խուլ, անանցնելի անտառներով: Դէպի վանքը տանող ճանապարհները ընկած էին նեղ փապարների, սարսափելի կիրճերի միջով, որտեղից մի մարդ միայն կարող էր անց կենալ: Մի յիսուն հրացանաւոր բաւական էր կանգնեցնել մի որ և իցէ բլուրի գլխին, որ թոյլ չը տային մի ամբողջ լէգէօնի մուտք գործել դէպի վանքը: Գուցէ վանքի այդ անառիկ դրութիւնը, որ

պաշտպանված էր բնական ամրութիւններով, պատճառ տուեց տեղափոխել այնտեղ Սիւնեաց աշխարհի արքեպիսկոպոսութեան մայր աթոռը, ժամանակի փոթորիկներից անվտանգ պահելու համար։

Դաւիթ բէկի օրերում այստեղ կային՝ մի արքեպիսկոպոս, տասն և երկու եպիսկոպոսներ, քսան և չորս վարդապետներ։ Վանքը ունէր շատ գիւղեր, ագարակներ, ընդարձակ անտառներ, լայնատարած արօտամարգեր և ուրիշ շատ կալուածքներ, որոնք ընծայված էին Սիւնեաց թագաւորներից, իշխաններից, իշխանուհիներից, կամ գնել էր ինքը միաբանութիւնը։

Վարդանանց տօնն էր։ Վանքի մէջ կատարվում էր Աւարայրի դաշտի նահատակների հոգեհանգիստը։ Տաճարի մէջ, սեղանի հանդէպ, դրած էր մի դագաղ, որ ծածկված էր ոսկեհուռ դիպակներով։ Երեք մոմեր արծաթէ աշտանակների մէջ լուսաւորում էին դագաղը։ Նրա վրա դրած էին՝ մի խաչ, մի աւետարան և մի քանի հատ սրեր։

Սեղանի վրա մատուցվում էր սուրբ պատարագը։ Ինքը վանահայրը՝ Ներսէս արքեպիսկոպոսը պատարագիչ էր։ Վանքի ամբողջ միաբանութիւնը, զարդարված թանգագին զգեստներով, սպասաւորութիւն էր անում սուրբ խորհրդին։

Նահատակի դագաղը շրջապատել էին Սիւնեաց աշխարհի նշանաւոր աւագները։ Նրանց մէջ կանգնած էր Դաւիթ բէկը Մխիթար սպարապետի և իր միւս ընկերների հետ։ Տաճարը լիքն էր բազմութիւնով։ Վանքի բակում նոյնպէս ասեղ գցելու տեղ չը կար։ Վանքի դուրսը շրջապատած էր բազմաթիւ կամաւոր զինուորներով և մերձակայ գիւղացիների ամբոխով։

Պատարագի խորհուրդը աւարտվելուց յետոյ, եկեղեցական դասը կատարեց հոգեհանգիստը։ Երբ ամէն ինչ վերջացած էր, Ներսէս արքեպիսկոպոսը խօսեց մի քարոզ։

«Այստեղ ձեր աչքի առջև դրած է մի դագաղ,—այսպէս սկսեց իր քարոզը,—դա Վարդանի դագաղն է։ Ձեզանից ամէն մէկը գիտէ, թէ ով էր Վարդանը։ Բայց գուցէ շատերը չը գիտեն, թէ ինչ էր Վարդանը։—Վարդանը մի ամբողջ ժողովուրդ էր. Վարդանը այդ ժողովրդի մարմնացած բողոքն էր։ Բողոք՝ բռնութեան դէմ. բողոք՝ անարդարութեան դէմ. բողոք՝ անազատութեան դէմ։

«Մեր պատմութիւնը տուել է մեզ շատ նշանաւոր մարդիկ։ Մենք ունեցել ենք Հայկ, որ տիտանների հետ էր պատերազմում։ Մենք ունեցել ենք Արամ, որ սպանեց ասորոց արևի որդուն։ *) Մենք ունեցել ենք Տիգրան, որ

*) Ասորոց դիցազը, որին սպանեց Արամը՝

ջնջեց վիշապների ցեղը։ Մենք ունեցել ենք մի ուրիշ Տիգրան, որ ջարդում էր Լուկուլլոսի ու Պոմպէոսի լէգէոնները։ Մենք ունեցել ենք ուրիշ շատ հերոսներ, բայց դրանցից և ոչ մէկը Վարդան չէ կարող լինել։

«Այդ քաջերի հետ միացած էր զօրքը, այսինքն վարձկանների մի դասակարգ, որոնց գործն էին անում շատ անգամ աննպատակ աշխարհակալութիւնների մէջ, միայն իրանց դրօշի փառքը բարձրացնելու համար։ Զօրքը արիւն էր թափում, իսկ նրանք փառք էին վայելում։ Զօրքը հողեր էր տիրում, բայց նրա որդիքը քաղցած էին մնում. արդիւնքը չռայլում էր զօրքի տէրը։

«Բայց Վարդանի անձնաւորութեան մէջ միացած էր ժողովուրդը։ Նրա փառքը ժողովրդին էր պատկանում։ Վարդանը—ինքը ժողովուրդն էր։

«Նրա հետ միացած էր կղերը, մի ձեռքում խաչ՝ միւս ձեռքում սուր բռնած։ Նրա հետ միացած էր շինականը, մի ձեռքում բահ՝ միւս ձեռքում նիզակ բռնած։ Նրա հետ միացած էր ազնուականը, քաղաքացին, և որ ամենագլխաւորն է՝—հայ կինը։

«Սկսեալ նախարարների չքեղ դահլիճներից,

կոչվում էր Բար-շամ. Նա համարվում էր արևի որդի, և Բար-շամ բառը ասորոց լեզուով այդ է նշանակում։

մինչև գիւղական աղքատ խրճիթը, զարթնեց ազատասիրութեան վսեմ հոգին։ Զարթնեց և հայ կինը։ Նա իր հրեշտակային կենսատու շընչով աւելի վառեց, աւելի բորբոքեց ժողովրդի եռանդը։ Նա թողեց իր պաճուճանքը, մոռացաւ իր փափկութիւնը և սովորեց տանել զինուորի կեանքի խստութիւններին։ Թանգագին բեհեզների, նուրբ կերպասների փոխարէն զգեցաւ պատերազմող մարդու կոշտ հագուստը։ Ոսկեհուռ մարգարիտների փոխարէն նա իր կուրծքը զարդարեց երկաթէ զրահով։ Գոհարեղէն պսակի փոխարէն նա իր գլխին դրեց պողովատեայ սաղաւարտը։ Ոսկի մատանիների փոխարէն կրեց սուր, վահան, նիզակ։ Ամեն ինչ տուեց նա, ամեն ինչ զոհեց հայրենիքը փրկելու համար։

«Երբ կինը խառնվում է գործի մէջ, դա նրա յաջողութեան ամենապարզ նշանն է։ Հայ կինը շարժեց, ոգևորեց, ոտքի կանգնեցրեց ժողովրդի բոլոր դասակարգերը։ Իսկ Վարդանը այդ դասակարգերի միաւորիչ յօղը, նրանց միմեանց հետ կապող օղակը դարձաւ։

«Վարդանը ժողովրդի հոգու արտայայտութեան ծնունդն էր։ Բայց ինչ էր ժողովրդի պահանջը. ինչ նպատակ ունէին նրա հոգեկան ձգտումները։

«Հայաստանը իր օրհասականի մէջ էր գտնվում։ Արշակունեաց հզօր պետութիւնը զոհ էր

գնացել Տիզբոնի նենգութեանը։ Օծեալ թագաւորների գահը խորտակված էր. Նրանց փոխարէն տիրում էին պարսիկ մարզպանները։ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի հայրապետական օրհնեալ տան ներկայացուցիչները վերջացած էին։ Պարսիկը իր պիղծ ձեռքը տարածել էր մինչև եկեղեցու սրբարանը։ Քրիստոսի հօտը մնացել էր առանց անձնանուէր հովուապետի։ Ներսէս Մեծի, Սահակ Պարթևի, Արիստակէսի և Վրթանէսի աթոռի վրա պարսիկները նստեցնում էին Սուրմակին, Շմուէլին, Բրքիշօին ու դրանց նման չարագործներին։

«Կանգուն մնացել էին միայն հայոց նախարարները։ Դրանք, որպէս հայրենիքի բոլոր ծանրութիւնը իրանց վրա կրող սիւներ, դեռ պահպանում էին կործանված Հայաստանի մնացած փշրանքները։ Պարսկական նենգութիւնը սկսեց այդ նեցուկներն ևս տապալել, նրանց ևս խորտակել, որպէս զի ազգային շէնքը միանգամայն քարուքանդ անէ։ Հայաստանը թողնում էին հայ զինուորից թափուր, հայ նախարարից զուրկ, իսկ նրանց երկար տարիներով ուղարկում էին հեռաւոր արևելքում, Խուժաստանի կամ Սագաստանի կողմերը, Քուշանաց հետ պատերազմելու։ Անսովոր կլիման, տաժանակիր կեանքը, հայրենիքի կարօտը հալում, մաշում էր պանդուխտ հայ զինուորին օտար, անծանօթ աշխարհում։ Նը-

րանցից շատերը չէին վերադառնում։ Այդ անում էր պարսիկը, որ հայ ժողովուրդը անտէր, անգլուխ մնայ, որպէս զի նրան կարողանայ աւելի հեշտութեամբ կլանել։ Ընդդիմութիւն գործել դժուար էր։ Ով որ փոքր ի շատէ դժգոհութիւն էր յայտնում, նրան ցմահ թողում էին անել բանտի մէջ։

«Ժողովուրդը աւելի սարսափելի դրութեան մէջ էր։ Աղքատութիւնը, չքաւորութիւնը պարսիկները ընդունել էին որպէս գլխաւոր պայման ամբոխը հնազանդութեան մէջ պահելու համար։ Այդ պատճառով ծանրաբեռնում էին նրան անտանելի հարկերով։ Բայց խորամանկ պարսիկը չէ բաւականանում միայն նիւթապէս աղքատացնելով։ Նա աշխատում էր աղքատացնել և հոգեպէս, և բարոյապէս և մտաւորապէս։ Հայոց սրբարանները, որոնց մէջ հայ մարդը համ աղօթում էր իր Աստծուն, համ սովորում էր իր մայրենի լեզուի դպրութիւնը,—փակված էին։ Եկեղեցիների փոխարէն հիմնել էին կրակապաշտութեան ատրուշաններ։ Հայոց մանուկների դաստիարակութիւնը քահանաների ձեռքից անցել էր մոգերի ձեռքը։ Հայոց խօսքը, այն լեզուն, որով խօսում էր Ադամը և Նոյը,—արգելված էր։ Հայ մարդը պէտք է պարսկերէն խօսէր, պարսկերէն գրէր և պարսկերէն աղօթէր։

«Ամեն ինչ, որ թանգ և նուիրական էր հայի

համար, ոչնչանալու վրա էր։ Նրա հայրենիքը պարսկական նահանգ էր դարձել։ Նրա եկեղեցին սրբապղծված էր։ Նրա լեզուն, այդ մայրենի սուրբ աւանդութիւնը, խլում էին նրանից։ Ազատութեան փոխարէն տիրում էր բռնութիւն։ Արդարութեան փոխարէն տիրում էր անիրաւութիւն։ Խաղաղութեան փոխարէն տիրում էր հալածանք, խռովութիւն, երկպառակութիւն։ Պարսիկը ինքն էր սերմանում խռովութիւնը։ Անարժաններին առաջ էր քաշում, իսկ արժանաւորներին յետ մղում։ Վատերը, մատնիչները, ուրացողները ստանում էին փառք, պատիւ և բարձր պաշտօններ, իսկ ազնիւ մարդիկ անարգւում էին։ Ազգասիրութիւնը, հայրենասիրութիւնը, կրօնասիրութիւնը մի քրէական յանցանք էր, որ պատժւում էր ամենասաստիկ կերպով։ Պարսկաստանի բանտերը, Սագաստանի աքսորավայրերը լցված էին այս տեսակ զոհերով։ Ժողովրդի ընտիր, օգտակար, բարեմիտ անդամներին ոչնչացնում էին և թողնում էին վատերին, անպիտաններին միայն, որպէս զի ազգը, կորցնելով իր լաւ ու կենդանի ուժերը, բոլորովին դիականանայ, որ կարողանան հեշտութեամբ կլանել, հեշտութեամբ մարսել նրան։

«Տեսնելով այդ բոլոր չարիքները, ժողովուրդը այլ ևս չը կարողացաւ համբերել։ Նա անցաւ Վարդանի դրօշի տակ, մտածեց ազատվել ան-

տանելի դրութիւնից։ Մի քանի օրվայ մէջ Արտաշատում կազմվեցաւ 60 հազարից բաղկացած մի բանակ։ Այդ բանակի մէջ, որպէս մի ամբողջ մարմին, միացած էին ժողովրդի բոլոր դասակարգերը։ Նրանց առաջնորդում էին՝ հոգևորականութիւնը և ազնուականութիւնը, երկուսն էլ ձեռք ձեռքի տուած, երկուսն էլ մի սիրտ՝ մի հոգի դարձած։—Այդ միութիւնն էր պատճառ, որ հայոց քաջերը Աւարայրի դաշտում կատարեցին այն փառաւոր յաղթութիւնը, որը մեր պատմութեան մէջ մինչև դարերի վերջը կը փայլի որպէս մի պայծառ աստղ։ Թէև այդ յաղթութեանը զոհ գնաց մի մեծ մարդ, որի գաղափարը դրած է ձեր աչքի առջև, որի հոգեհանգիստը կատարում ենք այսօր։

«Այժմ ես այդ պատկերից դուրս կը կոչեմ Վարդանի հոգին, թող նա խօսէ ձեզ, թող նա բացատրէ ձեզ մեր աշխարհի այժմեան դրութիւնը։

«Մեր վիճակը այժմ ինչով է տարբերվում Վարդանի ժամանակներից։ Միթէ օտարի դառն լուծը նոյնքան ծանրացած չէ՞ մեզ վրա, որպէս Վարդանի օրերում։ Միթէ այսօր ևս մեզ վրա չէ՞ տիրում նոյն պարսիկը, նոյն խորամանկ, նենգաւոր և չարամիտ պարսիկը։ Ի՞նչով են ապահովված մեր կեանքը, մեր ընտանիքը, մեր կայքը, մեր ազգային սրբութիւնները։ Միթէ մեր դրու-

թիւնը չէ՞ տանում մեզ դէպի արագ ոչնչութիւն, դէպի յաւիտենական կորուստ։

«Մի լաւ մտածենք, թէ ինչ էինք մենք առաջ, իսկ ինչ ենք այժմ։ Այդ երկու համեմատութիւնների մէջ երկնքից մինչև գետինք հեռաւորութիւն կայ։ Մեր ներկան ոչինչով չէ նմանում մեր անցեալին։

«Մենք ապրում ենք Սիւնեաց աշխարհում։ Այդ երկիրը իր բնական յատկանիշներով միշտ պահպանել է մի առանձնական, ինքնուրոյն դրութիւն Հայաստանի միւս նահանգների վերաբերութեամբ։ Սկսեալ մեր Սիսակ նահապետի օրերից, հայոց իշխանութիւնը անպակաս է եղել մեր երկրից։ Հայաստանում երբեմն ընկել է հայոց թագաւորութիւնը, երբեմն կանգնել է, երբեմն անիշխանութիւն է տիրել, երբեմն օտարներն են տիրել,—բայց Սիւնեաց աշխարհը պահպանել է իր առանձին պատմութիւնը և խիստ սակաւ անգամ ենթարկվել է Հայաստանում պատահած փոփոխութիւններին։ Մենք ունենք թագաւորների ու իշխանների մի երկայն շարք, որոնք միմիայն մեր աշխարհին են պատկանում։ Բայց այժմ ո՞ւր են նրանք։ Ո՞ւր են այն քաջերը, որոնք պարսիկներին, հոններին, արաբներին, թաթարներին սարսափեցնում էին։ Ո՞ւր են մեր աշխարհի բազմամարդ քաղաքները, հա-

զարաւոր գիւղերը, անառիկ բերդերը։ Ո՞ւր է մեր անկախութիւնը։

«Միթէ դուք չէ՞ք լսում Վարդանի դառն յանդիմանութիւնը. միթէ նա չէ՞ ասում մեզ. «անարժ և վատ մարդիկ, դուք այնքան թոյլ գտնուեցաք, որ կորցրիք բոլորը, ինչ որ ձեր նախնիքը գնել էին արեան գնով և թողել էին ձեզ որպէս ժառանգութիւն»։

«Այսօր հայը ամօթի, նախատինքի, ծաղրածութեան առարկայ է դարձել։ Ով որ կամենում է մէկին վիրաւորել, ով որ կամենում է ցոյց տալ, որ նա ցած, անարգ և չնչին արարած է, ասում է՝ «դու հայ ես»։ Ի՞նչով ժառանգեցինք մենք այդ նախատինքը,—ի հարկէ, մեր վատութիւններով։ Մենք մեր հայրերի անարժան, անհարազատ սերունդն ենք, այն հայրերի, դէպի որոնք յարգանք և պատկառանք էր զգում ամեն մի օտարազգի։ Ի՞նչով կարող ենք վերականգնել մեր պատիւը։—Ոչինչով, քանի որ մենք կը մնանք ստրուկ, օտարի գերի, քանի որ մենք մեր երկրի ու գլխի տէրը չենք լինի։

«Եթէ մի օր հայոց Աստուածը կը խնդրէ Հայաստանի կործանման ու նրա զաւակների արեան վրէժը մեր ազգի թշնամիներից,—առաջին պատասխանատուն կը լինեն մեր եկեղեցականները։ Դրանք թուլացրին ժողովրդի սիրտը, խլեցին նրա քաջութիւնը, մեռցրին նրա բոլոր կենսա-

կան ուժերը, և քրիստոնէական խոնարհութեան, քրիստոնէական համբերութեան անունով սովորեցրին նրան։ ստրուկ լինել։

«Մարդկութեան գազանները իրանց բարբարոս հրոսակներով մինը միւսի ետևից անդադար գալիս էին, և ոտնակոխ անելով Հայաստանը, անցնում էին։ Նրանք թողնում էին իրանց ետևից արիւն, կոտորած, աւերմունք և բոլորովին անապատ դարձրած մի երկիր։ Այսպիսի դէպքերում եկեղեցականները, որոնք առաջնորդում էին ժողովրդին, փոխանակ նրա մէջ կեանք և քաջութիւն ներշնչելու, փոխանակ նրան խրախուսելու, որ սուրը ձեռքում պաշտպանէ իր հայրենիքը, ասում էին. «Դու արժանի էիր այդ պատուհասին. քո մեղքերի համար Աստուած պատժեց քեզ. Նրա դատաստանը արդար է. ինչ որ Աստուած է անում, նրա դէմ բողոքել յանցանք է»... Եւ այս տեսակ խօսքերով քարոզում էին ժողովրդին, որ ապաշխարէ, որ աղօթէ, որպէս զի Աստուծոյ բարկութիւնը անցնի։

«Մեր պատմութեան մէջ խիստ փոքր է եղել այն եկեղեցականների թիւը, որոնք դրա հակառակն են քարոզել, և այդ մարդիկն են, որ պաշտելի անուն են թողել։

«Մեր կրօնը անձնապաշտպանութեան դէմ չէ։ Նոյն հնազանդութիւն քարոզող Յիսուս Քրիստոսը, որ ասում էր՝ «թէ ձախ երեսիդ ապտակ

տալու լինեն, աջն էլ շուռ տուր»,—երբ իր անձի վրա փորձեց այդ պատուիրանքը, երբ Կայիափա քահանայապետի ծառայից մի ապտակ կերաւ, ինքը առաջինը եղաւ, որ բողոքեց այդ անիրաւութեան դէմ։ Քրիստոնէութիւնը ազատութեան և մարդկային հաւասարութեան կրօն է։ Ինչ որ ընդդէմ է ազատութեան, ինչ որ ընդդէմ է հաւասարութեան, ընդդէմ է և քրիստոնէութեան։

«Սեպհականութեան իրաւունքը սուրբ է Աստուծոյ համար։ «Մի գողանար» Նրա մեզ տուած տասն պատուիրանքներից մէկն է։ Ինչ որ ունէ մի անհատ, ինչ որ ունէ մի ամբողջ ազգ, պէտք է նրան պատկանի։ Իսկ երբ մի ուրիշը գողանում է, յափշտակում է,—յանցանք է գործում։ Այսպիսիներին ոչ միայն զրկուած մարդը, այսինքն սեպհականատէրը իրաւունք ունի պատժելու և յափշտակութիւնը յետ խլելու,—այլ Աստուած ինքը օգնում է զրկուածին։

«Մենք մի ազգ ենք։ Ազգը—մի մեծ անհատ է, որ ունէ իր սեպհականութիւնները։ Մենք էլ ունէինք մեր հայրենիքը, որ մեր հօրերից մնացել էր մեզ որպէս ժառանգութիւն։ Այդ հողի վրա, որպէս մեր սեպհական տան մէջ, մենք ազատ վարում էինք, ցանում էինք, հնձում էինք ու հանգիստ ապրում էինք։ Այստեղ մենք ունէինք մեր օրէնքները և մեր կառավարութիւնը։ Մեր

թագաւորը, որպէս ազգային մեծ ընտանիքի հայրը, իշխում էր մեզ վրա։ Բայց թշնամին եկաւ, բոլորը յափշտակեց, բոլորը ոչնչացրեց և մեզ իր ստրուկը դարձրեց։— Այդ էլ գողութիւն է, մի ահագին գողութիւն։ Եւ Աստուած ինքը կը օգնէ մեզ, երբ մենք կը պատժենք գողին և յետ կը խլենք նրա յափշտակութիւնը։

«Աստուած իր սուրբ գրքի մէջ մեզ տուել է հազարաւոր օրինակներ այդ մասին. ես կը յիշեմ մի քանիսը միայն։

«Ահա ինչ է ասում Եհովան Մովսէսի բերանով Իսրայէլի ժողովրդին. «Երբ որ քո Տէր Աստուածը քեզ կը տանէ այն երկիրը (Քանանացոց երկիրը), ուր որ պիտի մտնես ժառանգելու համար, Նա քո առջևից շատ ազգեր պիտի հալածէ, այսինքն՝ քետացիներին, գերգեսացիներին, ամորհացիներին, քանանացիներին, փերեզացիներին, խեւացիներին ու յեբուսացիներին։ Այս եօթը ազգերին, որոնք քեզնից մեծ ու զօրաւոր են, երբ որ քո Տէր Աստուածը դրանց քո ձեռքը կը տայ, պէտք է դրանց կոտորես ու բոլորովին ոչնչացնես» *)

«Աբրահամի, Իսահակի և Յակոբի հայրենիքին տիրում էին օտարազգիները։ Աստուած կամենում էր, որ Իսրայէլը կրկին տէր դառնար

*) Երկրորդ օրինաց Է. գլ. համար 1—5

իր հայրենական ժառանգութեանը և հրամայում էր նրանց կոտորել, եթէ չը հնազանդվէին։

«Դարձեալ ասում է Եհովան Մովսէսի բերանով Իսրայէլի ժողովրդին. «Երբ որ մէկ քաղաքի մօտենալու լինես, նրա հետ պատերազմելու համար, նախ նրան խաղաղութեան հրաւիրէ։ Եւ թէ որ քեզ խաղաղութեան պատասխան կը տայ ու դռները քո առջև կը բաց անէ, այն ժամանակ քաղաքի մէջ գտնված բոլոր ժողովուրդը պէտք է քեզ հարկատու լինի և քեզ ծառայութիւն անէ։ Բայց թէ որ քեզ հետ խաղաղութիւն անել չը կամենայ, և պատերազմ անէ, այն ժամանակ պէտք է քաղաքը պաշարես։ Եւ երբ որ քո Տէր Աստուածը քո ձեռքը կը մատնէ այդ քաղաքը, նրա բոլոր արուներին պէտք է սրի բերնից անցկացնես։ Իսկ կնիկներին, տղաներին, անասուններին և ինչ որ կայ այն քաղաքի մէջ,— նրա բոլոր աւարը քեզ համար պէտք է վեր առնես, և քո Տէր Աստուծուդ քեզ մատնած քո թշնամիների աւարը պիտի ուտես։ Ահա այսպէս պիտի անես քեզնից հեռու գտնվող բոլոր քաղաքների հետ։ Եւ քո Տէր Աստուծու քեզ ծառայութեան տուած այս ազգերի (օտարների) քաղաքների մէջ մի որ և իցէ շունչ ունեցողին պէտք է բնաւ ողջ չը թողնես» *)

*) Երկրորդ օրինաց Ի. գլ. համ. 10—16

«Եւ Աստուած կատարեց իր խոստումնքները, օգնելով իսրայէլի ժողովրդին, որ նա տիրէ իր հայրենական երկրին և ոչնչացնէ այնտեղ բնակւող բոլոր օտարազգիներին, որ նոյն երկրի տէրն էին դարձել։ Իր հրեշտակներով Նա մինչև անգամ միջամտութիւն էր գործում, միանում էր իսրայէլացոց բանակի հետ։ Երբ Յեսուն ամորհացոց հինգ թագաւորների հետ պատերազմ ունէր, Աստուած նրան օգնութեան հասաւ, և Գաբաւոնի ճակատամարտի ժամանակ, երկնքից քարէ կարկուտ թափելով ամորհացիների վրա, բոլորին կոտորեց։ Իսկ Յեսուն նրանց հինգ թագաւորներին բռնել տալով, հրամայեց կախ տալ հինգ ծառից։*)

«Երբ ասորոց Սենեքերիմ թագաւորը իսրայէլի Եզեկիայ թագաւորի հետ կռիւ ունէր, Աստուած իր հրեշտակի ձեռքով մի գիշերվայ մէջ կոտորեց Սենեքերիմի զօրքերից հարիւր ութսուն և հինգ հազար հոգի։

«Հազարաւոր այսպիսի օրինակներ կարելի է բերել սուրբ գրքից, որոնք ցոյց են տալիս, թէ հայրենասիրութիւնը, ազգասիրութիւնը ամեն մի անհատի սուրբ պարտաւորութիւնն է։ Եւ հայրենիքի ազատութեան, հայրենիքի պաշտպանութեան համար կատարված պատերազմը սուրբ

*) Յեսու Ժ. գլ. համար 11

պատերազմ է։ Այլ ես չեմ խօսում Դաւթի, Սողոմոնի պատերազմների մասին, որոնք մի և նոյն ժամանակ իսրայէլի թէ մարգարէն և թէ թագաւորն էին։ Բայց կասեմ ձեզ մի փոքրիկ դէպք Մովսէսի կեանքից, որ ցոյց է տալիս, թէ ո՛ր աստիճան մոլեռանդութեան էր հասած ազգասիրութիւնը այդ մեծ մարգարէի և օրէնսդրի մէջ։ Մի անգամ Մովսէսը տեսնում է մի եգիպտացու, որ նախատում էր մի իսրայէլացուն, այն րոպէում սպանում է նրան և նրա դիակը թաղում է Նեղոսի աւազների մէջ։ Այստեղից շատ պարզ է ազգային նախանձախնդրութիւնը։

«Բայց մեր կոյր, տգէտ, անկիրթ եկեղեցականները, որոնք ամեն օր Աստուծոյ տաճարի մէջ կարդում են ձեզ Մովսէսի, Յեսուի, Դաւթի և իսրայէլի մարգարէների գործերը,—երբէք չը բացատրեցին, երբէք չը քարոզեցին ձեզ, թէ Աստուծոյ այդ ընտրեալները ո՛րքան միլիօնաւոր մարդիկ են կոտորել, որքան ազգեր են ոչնչացրել, մինչև կարողացել են իրանց ազգը՝ իսրայէլը հաստատել իր հայրենական երկրում։

«Եւ մենք տեսնում ենք Հայաստանի բարօրութիւնը այն դարերում միայն, երբ նրա հոգևոր հովիւները Մովսէսի, Դաւթի, Յեսուի հոգին ունէին։ Երբ նրանք խաչի հետ կրում էին և սուր։ Երբ նրանք քրիստոնէական առաքինութեան հետ քարոզում էին և՛ անձնապաշտպա-

նութեան և հայրենիքի պաշտպանութեան առաքինութիւնը։ Երբ նրանք հայրապետական աթոռի պարտաւորութիւնները միացրել էին թագաւորի գահի պարտաւորութիւնների հետ։ Երբ նրանք եկեղեցու շահերը հաշտեցրել էին պետութեան շահերի հետ։ Հայաստանը երջանիկ էր դրանց օրերում։ Բայց ցաւելով պիտի խոստովանվեմ, որ այսպիսիների թիւը այնքան սակաւ է, որ նրանք ներկայացնում են փոքրիկ, կանաչազարդ օազիսներ մեր հոգևորականութեան ամուլ, լայնատարած անապատի մէջ։ Ես կարող եմ մի քանիսի անունները միայն յիշել։ Ներսէս Մեծը, մի ոտքը Բիւզանդիայ, միւսը Տիզբոն դրած, անդադար բանակցութիւնների մէջ էր, երբեմն պարսից, երբեմն յունաց արքունիքի հետ։ Երբ դիւանագիտական բանակցութիւնները ցանկացած նպատակին չէին հասցնում, նա դիմում էր կռուել։ Ձիրաւ դաշտի ճակատամարտի ժամանակ, երբ հայերը պարսիկների հետ պատերազմում էին, նա Նպատ լեռան գագաթի վրա, ձեռքերը դէպի երկինք բարձրացրած, հայոց քաջերի բազուկներին զօրութիւն էր խնդրում։ Նրա որդին՝ Սահակ Պարթևը տուեց Հայաստանին գիր, դպրութիւն, գիտութիւն։ Որպէս զոհ քաղաքական հալածանքների, նա շատ անգամ աքսորվեցաւ, բանտարկվեցաւ Պարսկաստանում։ Յովսէփ եպիսկո-

պոսը, Ղևոնդ երէցը այն հոգևորական-հերոսներն էին, որ միացան Վարդանի հետ և կատարեցին այն հրաշալի պատերազմը պարսից ահագին զօրութեան դէմ։

«Այսօր մենք կատարեցինք նոյն պատերազմի մէջ ընկած քաջերի հոգեհանգիստը։ Այսօր Վարդանանց նահատակների տօնախմբութեան օրն է։ Մեր առջև դրած է Վարդանի դագաղը, իսկ նրա վրա դրած են մեր սրերը։ Մենք հաւաքվել ենք այս տաճարի մէջ մի մեծ ուխտադրութեան համար։ Մեր ուխտը նոյն բնաւորութիւնը, նոյն նպատակն ունի, ինչ որ էր Վարդանի հետ միաբանված հոգևորականների, նախարարների և ժողովրդի ուխտը։ Այստեղ, այս տաճարի մէջ, նոյնպէս հաւաքված է մեր աշխարհի հոգևորականութիւնը և իշխանաւորները։ Իսկ ձեր մէջ կանգնած է մի նոր Վարդան, որ կամենում է հայրենիքի ազատութեան դրօշը բարձրացնել։—Վերջին խօսքերի միջոցին քարոզիչը ձեռքը մեկնեց դէպի Դաւիթ բէկը։— Թող ձեզանից ամեն մէկը մօտենայ այդ սուրբ դագաղին, թող-համբուրէ խաչն ու աւետարանը և ուխտ դնէ, հաւատարմութեան երդում տայ, որ կը հետևի այդ հերոսին, որը իր փառաւոր յաղթութիւններով մեզ ցոյց տուեց, որ ընդունակ է իր յանձն առած գործին։

Քարոզիչը աւարտեց իր խօսքը, և մինչև որ

կը կատարվէր ուխտադրութեան արարողութիւնը, նա կարդաց մի աղօթք.

«Ով Տէր Աստուած, Աստուած Հայկի, Արամի և Տիգրանի, առաքիր մեզ Վարդանի ու նրա աջակից քահանաների՝ Յովսէփի ու Ղևոնդի հոգին։ Թող հայրենիքի այդ մեծ պաշտպանների հոգին ուժ և զօրութիւն տայ մեզ, թող ներշնչէ մեր մէջ հայրենասիրութեան եռանդը, որ հետևենք այդ քաջերի օրինակին, որ նրանց պէս մեր հայրենիքի ազատութեան համար պատերազմենք, որ նրանց պէս փառաւոր մահով մեռնենք։ Ով Տէր Աստուած, Դու, որ առաջնորդեցիր Մովսէսին Իսրայէլը դուրս բերել Եգիպտոսի գերութիւնից, Դու, որ քո օգնական աջը տարածելով Աբրահամի զաւակների վրա, ծովի և կրակի միջից անցկացրիր նրանց, և ահագին ազգեր նրանց առջևից ոչնչացնելով, Իսրայէլը բնակեցրիր նրա հայրերին խոստացած երկրում,—նոյն օգնական աջի հովանաւորութիւնը տարածիր և Հայկի զաւակների վրա, որոնք նախ քան բոլոր ազգերը ընդունեցին Քո սուրբ Աւետարանի լոյսը, որոնք ամեն ինչ զոհեցին, ամեն ինչ կորցրին Քո տաճարների սրբութիւնը պահպանելու համար։ Ո՛վ Տէր Աստուած, յիշիր դրախտը, ուր բնակեցրիր մարդկութեան նախաստեղծ զոյգը, յիշիր Քո սուրբ Արարատը, ուր Նոյ առաջին անգամ զոհաբերութեան սեղան կանգնեց Քեզ համար, յի-

շիր սուրբ Էջմիածինը, որ Քո միածին Որդին երկնքից իջնելով, տեսնվեցաւ Հայաստանի Լուսաւորչի հետ և օրհնեց հայկական նորնծայ հօտը,—յիշիր աշխարհի սկզբից Քեզ նուիրված այդ երկիրը և նրա հաւատարիմ ժողովուրդը, և մի՛ թող տուր, որ նա կորչի, ոչնչանայ անօրէնների ձեռքից։ Ով Տէր Աստուած, մաքրիր մեր սրտերը, որ հաւատով և անկեղծութեամբ մօտենանք Քո սուրբ խաչին ու աւետարանին, և ընդունիր մեր ուխտը որպէս կրօնի, ազգութեան և հայրենիքի փրկութեան ուխտ, և առաքիր մեզ Քո օրհնութիւնը, տուր զօրութիւն Քո ծառաներին, որ քաջութեամբ կատարեն այն մեծ գործը, որ սկսած են Քո անունով։ Եւ որի համար լինի Քեզ փառք, յաւիտեանս, ամէն։

Աղօթքից յետոյ եկեղեցական ամբողջ դասը երգեց երկրորդ սաղմոսը. «Խզեսցուք զկապանս նոցա, և ընկեսցուք ի մէնջ զլուծ նոցա»։ Այդ սաղմոսերգութեան ժամանակ վանքի զանգակները սկսեցին հնչել, և կարծես, երկնքի բոլոր անմահները ցած իջան և սկսեցին ձայնակցել հայոց ուխտաւորների ոգևորութեանը։

Յետոյ կատարվեցաւ ուխտի խորհուրդը։ Ներսէս արքեպիսկոպոսը նախ օրհնեց իշխանների սրերը, որ դրած էին Վարդանի դագաղի վրա, խաչի և աւետարանի մօտ։ Իսկ յետոյ կարդացվեցաւ երդման թուղթը։ Դա համարեա նոյն

բովանդակութիւնն ունէր, որ գրվեցաւ Վարդանանց պատերազմի սկզբում. փոփոխութիւնը մի քանի աւելուածների մէջ էր միայն։ Ահա նրա օրինակը.

«Հարազատ եղբօր սուրը իր մերձաւորի վրա պիտի բարձրանայ, երբ որ նա դաւաճանութիւն կը գործէ ուխտի և միաբանութեան դէմ։ Հայրը պիտի չը խնայէ իր որդուն, և որդին ակնածութիւն չի պիտի անէ հօր պատուին։ Կինը պէտք է կռուէ իր ամուսին այրի հետ և ծառան պիտի դառնայ իր տիրոջ դէմ, երբ նրանում անհաւատարմութիւն կը նկատի։ Հայրենիքի սէրը և նրա ազատութեան միտքը պէտք է թագաւոր լինի ամեն գործողութիւնների վրա, և ամեն ինչ պիտի զոհվի այդ ազատութիւնը գնելու նպատակին։ Անպայման հնազանդութիւն դէպի գործի գլխաւորը,—պէտք է լինի օրէնք, և այդ օրէնքի հակառակորդը կընդունի իր դատապարտութեան պատիժը նոյն գլխաւորից։»

Երբ երդման թղթի ընթերցումը վերջացաւ, եպիսկոպոսը հրաւիրեց Դաւիթ բէկին կանգնել իր մօտ։ Օրվայ հերոսի դէմքը չէր ցոյց տալիս այն անսահման հոգեզմայլութիւնը, որ տիրում է ամեն մի մարդու սրտին այսպիսի հանդիսաւոր րոպէներում։ Նրա ընթացքը, որով մօտեցաւ նա սրբազանին, արտայայտում էր մի առանձին վեհութիւն, որ ծածկված էր համեստութեան քօղի

տակ։ Կանգնելով եպիսկոպոսի մօտ, խօսեց մի փոքրիկ ճառ։

«Եղբայրներ, ասաց նա իր սովորական ամուր ձայնով,—ես ինձ բախտաւոր եմ համարում, որ ինձ վիճակվեցաւ անցնել այն շարժման գլուխը, որին կարօտ էր մեր հայրենիքը, որին վաղուց սպասում էր նա։ Իմ յոյսը մեծ է։ Ես հաւատացած եմ, որ Հայաստանի Աստուածը նոյնպէս կը պսակէ մեր գործը, որպէս շատ անգամ ցոյց է տուել իր աջակցութիւնը մեր հայրերին։ Մեր նպատակը սուրբ է. մեր ձեռնարկութիւնը չէ կրում իր վրա անիրաւութեան ոչ մի բիծ։ Մենք պիտի կռուենք բռնութեան, անարդարութեան և ստրկութեան դէմ։ Իսկ բռնութիւնը, անարդարութիւնը և ստրկութիւնը պիղծ են Աստուծոյ առջև։ Իմ յոյսը դրել եմ նեղված, տանջված, հարստահարված ժողովրդի վրա և ձեզ վրա, եղբայրներ, որ ժողովրդի ներկայացուցիչներն էք։ Հաւատքով, անկեղծութեամբ, անձնազոհութեամբ դիմենք մեր նպատակին,—և այդ նրա յաջողութեան ամենագլխաւոր պայմանն է։»

Այնուհետև իշխաններից իւրաքանչիւրը սկսեցին հերթով մօտենալ բէկին։ Նրանք նախ համբուրում էին Վարդանի դագաղի վրա դրած խաչն ու աւետարանը, յետոյ հաւատարմութեան ձեռք էին տալիս բէկին։ Իսկ բէկը վեր էր առնում

դաշտի վրայից նրանց սրերը և իր ձեռքով յանձնում էր տէրերին։

Ամենից առաջ մօտեցաւ Զանգուրի Թորոս իշխանը, յետոյ նրա աներձագը՝ Գինուալի իշխան Ստեփաննոս Շահումեանը և Թորոսի ազգականը՝ մելիք Նուբարը։ Յետոյ մօտեցաւ Հալիձորի մելիք Փարսադանը իր փեսայ տէր Աւետիքի և իր որդի Բալի զօրավարի հետ։ Դրանցից յետոյ մօտեցան հետևեալ անձինքը՝—Կալերից՝ Թապ զօրավարը. Սիսիանից՝ մելիք Կաջօ՝ սիսական զօրավարը և տէր Գասպարը, որ կոչվում էր «Աւշար երէց». Բաղաբերդից՝ Ագամ զօրավարը. Գիւլ-բերդից՝ Ղազար զօրավարը. Շիրվանաձորից՝ Սարգիս զօրավարը. Ջուղայից՝ Մաղայ մելիքի երկու որդիները՝ Աշոտ և Սմբատ. Տաթևից՝ Կիջի տանուտէրը. իսկ Տաթևի շրջակայքից՝ Այտի, Եսայի և տիրացու Սիմէօն տանուտէրները. Շնհերից՝ Մինաս և Ստեփան տանուտէրները. Զանգուրից՝ Վարդան, Թովմաս, Թաւրինջ և Յովհաննէս տանուտէրները. Մեղրիից՝ մելիք Կոստանդինը, իսկ նրա շրջակայքից՝ Յովհաննէս, Սարի և առաքել տանուտէրները։

Այնուհետև մօտեցան Դաւիթ-բէկի հետ Վրաստանից եկած քաջերը՝ Մխիթար սպարապետը, Բայինդուր իշխանը և միւսները, որոնց անունները յայտնի է մեզ։ Բոլորից յետոյ հաւատարմութեան երդում տւեց Տաթևի վանքի միաբա-

նութիւնը՝ վանահայր Ներսէս արքեպիսկոպոսը, որ այնօր պատարագիչ էր, տասն և երկու եպիսկոպոսներ, և քսան ու չորս վարդապետներ։

Վանքի մեծ դահլիճը, որ կոչվում էր «Թանաքի», այսօր սովորականից աւելի զարդարած էր։ Այնտեղ պատրաստուած էր մի ճոխ սեղան ճաշի համար։ Տաճարից դուրս գալով, եկեղեցական դասը իշխանների ու երկրի աւագների հետ գնացին դէպի դահլիճը։ Բազմութիւնը այդ միջոցին լցրել էր վանքի բակը։ Երբ տեսան բէկին, հազարաւոր ձայներ ողջունեցին նրան «կեցցէներ» գոչելով։ Նա բոլորին գլուխ տւեց և անցաւ։

Նոյն օրը հաւաքվեցան նրա շուրջը 6628 կամաւոր զինուորներ։

Ի.

Տաթևի վանքը թէ իր շինուածքների ընդարձակութեամբ և թէ իր ամրութիւններով ամեն յարմարութիւններ ունէր բերդի տեղ ծառայելու։ Այս պատճառով Դաւիթ բէկը ընտրեց նրան որպէս կենտրոն իր գործողութիւնների։

Կար և մի ուրիշ բան. այդ վանքը, որպէս Սիւնեաց աշխարհի հոգևոր կառավարութեան մայր աթոռը, ունէր առանձին հարստութիւն։ Վանքի միաբանութիւնը իր հարստութիւնը դրեց բէկի տրամադրութեան ներքոյ, իրաւունք տալով նրան, գործ ածել իր պատերազմական ծախքերի

համար, որպէս կը բարեհաճի։ Աւելի քան ութ հարիւր տարի գոյութիւն ունեցող այդ վանքը, դարերի ընթացքում, դիզել էր արծաթի, ոսկու, թանգագին քարերի մեծ քանակութիւն։ Ամէն մի թագաւոր, ամեն մի թագուհի, ամեն մի իշխան և իշխանուհի, իր հոգու փրկութեան համար, նուիրել էր վանքին՝ որը գիւղ, որը ագարակ, որը ընդարձակ անտառներ, որը թանգագին անօթներ, խաչեր և այլն։ Զանազան ժամանակներում պատահած յափշտակութիւնները, աւարառութիւնները չէին կարողացել բոլորովին սպառել այդ ահագին հարստութիւնը։ Վանքի գաղտնի պահարանները խիստ ապահով տեղեր էին աւազակների ձեռքից նրանց պահպանելու համար։

Վանահօր կացարանը բաղկացած էր մի քանի սենեակներից, որոնց դռները բացվում էին միմեանց մէջ։ Դրանցից մէկը, որ ետևի կողմումն էր, ունէր մի նեղ լուսամուտ միայն առաստաղի մօտ և այնքան մութն էր, որ ցերեկով ևս պէտք էր ճրագ վառել մի բան տեսնելու համար։ Այստեղ միայնակ նստած էր մի ծերունի աբեղայ և նրա առջև դրած էր մի շարժական քուրա, որ սովորական ոսկերիչների հալոցի ճիշտ նմանութիւնը ունէր։ Նա մի ձեռքով փչում էր փուքսը, իսկ միւսով, որով բռնած ունէր փոքրիկ ունելի, անդադար շարժում էր ածուխները, որ աւելի շիկանան, որ աւելի բոցավառուեն։ Ածուխ-

ների մէջ ծածկված էր մի մեծ բութակ, *) որի մէջ հալվում էր մետաղ։ Ծերունի աբեղան դեռ իր գործողութիւնը չէր վերջացրել, երբ ներս մտաւ վանահայրը՝ Ներսէս սրբազանը։

—Տեսնում էք, Վահան հայր սուրբ, ասաց նա ծիծաղելով, — ձեր ոսկերչութիւնը վերջապէս պէտք եկաւ մեզ.

Վահան հայր սուրբը միայն բարեպաշտութեամբ ժպտաց և շարունակեց փուքսը փչել։ Նա իր պատանեկութեան հասակում, իրաւ, ոսկերչի աշակերտ էր, վարպետից փախչելով, եկաւ վանքը և աբեղայ դարձաւ։

—Այդ ինչ էք հալում, հարցրեց սրբազանը, նայելով քուրայի մէջ։

—«Սուրբ սքանչելագործի» աջը, պատասխանեց աբեղան, և նկատելով, որ մետաղը բոլորովին հալված էր, բութակը ունելիով դուրս հանեց քուրայի միջից և հեղուկ դարձած արծաթը խնամքով ածեց մի կաղապարի մէջ, ուր սառչելով, երկայն չերտի ձև ստացաւ։ Յետոյ կաղապարի միջից դուրս հանեց չերտը, դրեց միւսների մօտ, որ դիզված էին միմեանց վրա։

Վանահայրը սկսեց համբարել արծաթէ չերտերը։ Երբ վերջացրեց, նա դարձաւ դէպի ծերունի աբեղան, հարցնելով.

---

*) Բութակ կամ բութա ռչ. հալոց։

—Երեւում է, դեռ բոլորը չէք վերջացրել, Վահան հայր սուրբ։—Շատ է մնացել։

Չը սպասելով Վահան հայր սուրբի պատասխանին, որն ինքն էլ չը գիտէր, թէ որքան է մնացել,—վանահայրը մօտեցաւ մի ահագին արկղի, որ շինված էր ամուր սև փայտից և զամած երկաթներով։ Նրա մէջ լցրած էին զանազան արծաթեայ անօթներ, խաչեր, բուրվառներ, աշտանակներ և այլ եկեղեցական սպասներ։

Վանահայրը վեր առեց մի գեղեցիկ սկիհ, ըսկսեց նայել։ Սկիհի պատուանդանի վրա բաւական ճարտարութեամբ քանդակած էր նուիրողի անունը։ Վանահայրը կարդալով այդ, ասաց.

—Մօտ վեց հարիւր տարվայ հնութիւն է, հայոց Լեւոն թագաւորից ընծայված. Երբ Սիւնեաց Հայրապետ եպիսկոպոսը գնաց Երուսաղէմ, Կիլիկիայով անցաւ. այնտեղ տեսնվեցաւ Լեւոնի հետ։ Թագաւորը նուիրեց մեր վանքին այդ սկիհը ուրիշ շատ անօթների հետ։ Այնօրից մեր միաբանութիւնը սահմանեց ամեն տարի զատկի միաշաբաթի օրը պատարագի ժամանակ յիշել բարեպաշտ թագաւորի յիշատակը։

—Մենք կը շարունակենք դարձեալ յիշել, ասաց Վահան հայր սուրբը,—բայց սկիհը կը հալենք այդ քուրայի մէջ, որովհետև այժմ նա ուրիշ բանի պէտք է։ Վերջին խօսքերի հետ նա

առեց սկիհը, և դնելով սնդանի վրա, մուրճով ջարդեց, յետոյ ձգեց բութակի մէջ։

Վանահայրը վեր առեց մի ահագին արծաթէ կոնք (լագան), որի մէջ ոտնալուայի խորհուրդը կատարելու ժամանակ լուանում էին միաբանների ոտները։

—Այդ կոնքը Սիւնեաց Փիլիպպէ գահերէց իշխանի նուիրածն է, ասաց վանահայրը։—Նա ընծայեց մեր վանքին ահագին կայք ու կալուածներ։ Տաթեւ գիւղը, Արծիւ գիւղը, Բերդկամէջ գիւղը նրա հայրենական կալուածքներն էին, բոլորը տուեց մեր վանքին։ Նա շինեց մեր վանքի մօտ և սուրբ Լուսաւորիչ անունով եկեղեցին։ Այն ժամանակվայ վանահայր Դաւիթ եպիսկոպոսը պարտաւորացրեց վանքի միաբանութեանը, որ ամեն տարի իշխանի հոգու փրկութեան համար քառասուն օր պատարագ մատուցանեն և վաթսուն օր «Տէր ողորմեա» ասեն։

—Մենք այսուհետև եօթանասուն օր «Տէր ողորմեա» կասենք իշխանի հոգու փրկութեան համար, պատասխանեց ծերունի աբեղան,—այսու ամենայնիւ, նրա նուիրած կոնքը պէտք է մտնի իմ քուրայի մէջ։

Այնուհետև վանահայրը վեր առեց մի փոքրիկ արծաթէ արկղիկ, զարդարած գեղեցիկ քանդակներով և ոսկեջրած։ Նրա մէջ պահվում էր սուրբ Աստուածածնի գիսակների մի մասը։

—Այդ արկղիկը, ասաց նա, ընծայել է աղուանից Վարազ-Տրդատ անունով գահերէց իշխանի դուստրը՝ Շահանդուխտ օրիորդը։ Երբ հայկազուն իշխանները նրան հարսնութեան էին տանում Բաղաց երկիրը, *) և երբ հասան Տաթևի հանդէպ, այդ միջոցին վրա հասան մի գունդ սպառազինված պարսիկներ։ Նրանք կամենում էին առևանգել չքնաղագեղ օրիորդին և իրանց թագաւորի համար տանել։ Օրիորդը անօրէնների ձեռքը չընկնելու համար, երեսը խաչակնքեց, մտրակեց իր ձին, և ահագին բարձրութիւնից գահավէժ եղաւ խորին անդունդի մէջ։ Աստուծոյ հրեշտակները նրան օգնութեան հասան, և կարծես կառքի մէջ նստած, անվնաս իջաւ անդունդի յատակի վրա։ Նոյն տեղում բարեպաշտ օրիորդը շինեց մատուռ և այնուհետև իր անձը նուիրեց ճգնութեան։ Վերջը այդ մատուռը կուսանոց դարձաւ։ Նա իր հարստութեան կէսը բաժանեց կարօտեալներին, իսկ մնացածը նուիրեց մեր վանքին։ Շընհէրի սահմաններից սկսած մինչև Գինական գետը, մեր ունեցած կալուածքների բոլորը նրա ընծայածն է։ Իսկ այդ գեղեցիկ արկղիկի մէջ պահում էր նա իր հարսնութեան զոհարեղէնները։ Նա այդ զոհարեղէնները վաճառեց, արծաթը բաժանեց աղքատներին; իսկ արկղիկը նուիրեց մեր վանքին, որ դրա մէջ պահվի սուրբ Աստուածածնի գիսակները։

*) Բաղաց երկիրը այժմեան Ղարա-բաղն է։

—Աստուած հոգին լուսաւորեսցէ, պատասխանեց ծերունի աբեղան.—մենք այսուհետև սուրբ Աստուածածնի գիսակները մի հասարակ տուփի մէջ կը պահենք. այդ մասին ես հաւատացած եմ, որ սուրբ Աստուածածինը չի բարկանայ։

—Ես էլ կարծում եմ, որ չի բարկանայ, պատասխանեց սրբազանը և վեր առեց արկղի միջից մի արծաթէ բուրվառ։

—Այս բուրվառը, ասաց նա,—Սիւնեաց տիկին Շուշանի նուէրն է։ Նա Աշոտ իշխանի ամուսինն էր։ Դրա ժամանակում Վայոց ձորի լեռների մէջ ցրւած էին մի կարգ կրօնաւորներ, որոնց «խոտաճարակներ» *) էին կոչում։ Եւ իրաւ, այդ ճգնաւորները ոչ հաց, ոչ միս և ոչ էլ այն բոլոր ուտեստները, որ գործ են ածում մարդիկ, չէին ուտում։ Կերակրվում էին բանջարներով, ընդեղէններով, որ գտնում էին լեռների մէջ։ Մարդկային բնակութեան չէին մօտենում, և երբ հեռուից մարդիկ էին տեսնում, իսկոյն փախչում էին ու թագնվում քարերի մէջ։ Զարմանալին այն էր, որ այդ կրօնա-

*) Խոտաճարակ նշ. խոտով կերակրվող։

ւորները հագուստ չէին հագնում, բոլորն էլ Ադամի նման մերկ էին։ Պատմում են, որ նրանց մօրուքի, գլխի և մարմնի մազերը այնքան աճում էին, որ ծածկում էին նրանց մերկութիւնը։ Այրերը, լեռների մէջ գտնվող քարանձաւները նրանց ծառայում էին որպէս բնակարան։ Միայն կիրակի օրերը հաւաքվում էին մի տեղ և կատարում էին պատարագի խորհուրդը, յետոյ կրկին ցրիւ էին գալիս լեռների մէջ և միմեանց երես չէին տեսնում։ Շուշան տիկինը, ցանկանալով մի տեղ հաւաքել այդ կրօնաւորներին, նոյն լեռների մէջ շինեց մի վանք, որ կոչվեցաւ «խոտաճարակաց» վանք։ *) Նա նուիրեց այդ վանքին իր սեպհական Արաստամուխ անունով գիւղը որպէս մշտական ժառանգութիւն։ Խոտաճարակները հաւաքվեցան այդ վանքում, բայց երկար ժամանակ չը թողեցին իրանց սովորութիւնները. դարձեալ կերակրվում էին բանջարեղէններով. դարձեալ հագուստ չէին հագնում, կրում էին երկայն, սպիտակ շապիկ միայն, ոտնամաններ չունէին, ման էին գալիս բոբիկ ոտներով։ Այդ Շուշան տիկինը շինեց ուրիշ հինգ եկեղեցիներ իր հինգ որդիների յիշատակը անմահացնելու համար։

---

*) Այդ վանքը կոչվում է և Քարկոփի վանք, կոփված ու սրբատաշ քարերից շինված լինելու համար։

—Հինգ եկեղեցիներ... կրկնեց Վահան հայր սուրբը, գլուխը շարժելով,—որոնցից մէկն էլ այժմ չէ մնացել։

—Չէ մնացել...։ Քարն ու կիրը երկար ժամանակ չեն պահպանում մարդկերի յիշատակը. նրանք ժամանակների հետ քսվում են, մաշվում են և անհետանում են, իրանց կառուցողների յիշատակն էլ իրանց հետ տանելով։

Այդ խօսքերը սաստիկ դառնութեամբ արտասանեց սրբազանը, կարծես, նրա սրտի վրա ծանրացած էր մի անախորժ բեռ, որ կամենում էր թօթափել։

—Այն օրից, Վահան հայր սուրբ, երբ մեր թագաւորները, իշխանները ու իշխանուհիները սկսեցին իրանց հարստութիւնը վատնել եկեղեցիների ու վանքերի թիւը բազմացնելու,—այն օրից մեր զօրութիւնը օրըստօրէ թուլացաւ և մենք բոլորովին ընկանք։ Երբ Յիսուս Քրիստոսին ցոյց տուեցին Երուսաղէմի տաճարի շքեղութիւնը, այն տաճարի, որ կուլ էր տուել իսրայէլի մի քանի ամենահարուստ թագաւորների գանձերը,—Յիսուս Քրիստոսը ասաց նրանց. «կը գայ մի օր, որ մի քար էլ չի մնայ քարի վրա»։ Նրան չէր հետաքրքրում հոյակապ տաճարի փառքը. նրան աւելի թանգագին էր մի ճշմարիտ հաւատացող, որի սիրտը Աստուծոյ համար ամենամաքուր տաճար է։ Երևակայեցէք,

միայն Սիւնեաց աշխարհում մենք ունենք 43 հոյակապ վանքեր, իսկ երեք հատ օրինաւոր բերդեր չունենք։ Այլ ես չեմ խօսում եկեղեցիների մասին, որոնք թիւ չունեն։ Այդ վանքերից ամեն մէկը ունի իր ընդարձակ կալուածքները, սեպհական գիւղերը, անտառները և այլն։ Բայց ինչ օգուտ են քաղում նրանցից։ Օրինակ, վեր առնենք մեր վանքը. նա ունի այնքան գիւղեր, *) այնքան լայնատարած հողեր, որոնց վրա մի փոքրիկ իշխանութիւն կարելի է հիմնել։ Բայց մեր ձեռքը գցելով այդ երկրները, դարձրել ենք բոլորովին ապարդիւն։

—Հողերի հարցը թողնենք, սրբազանի խօսքը ընդհատեց Վ. ահան հայր սուրբը.—դուք տուէք ինձ Շուշան տիկնոջ ընծայած բուրվառը։

Սրբազանը տուեց նրան բուրվառը, որ դեռ իր ձեռքում պահած ունէր։ Խորէն հայր սուրբը մուրճի տակ ջարդելով նրան, ասաց.

—Այդ հոյակապ բուրվառը մենք գործ էինք ածում հանդիսաւոր օրերում միայն մեր վանքի տաճարը խնկարկելու համար։ Այժմ կը հալենք, նրա արծաթով հրացան կը գնենք։ Վառօդի

*) Միմիայն Փիլիպպէի որդի Աշոտ իշխանը նուիրեց Տաթեւի վանքին 15 գիւղ, թողեալ զանազան ժամանակներում ուրիշներից ընծայվածները։

ծուխը այժմ աւելի փրկարար է մեզ համար, քան թէ խունկի ծուխը։

Վանահօր՝ Ներսէս արքեպիսկոպոսի նպատակն էլ հէնց այդ էր, որ վանքի աւելորդ արծաթեղէնները վաճառքի հանէ ստացած փողը պատերազմական գործողութիւնների համար գործ դնելու։ Ի հարկէ, այդ արծաթեղէնները, որպէս եկեղեցական անօթներ, իրանց ողջ ձևով ոչ մի քրիստոնեայ չէր գնի, այդ պատճառով հալում էին նրանց։

Սրբազանը թողեց Վ. ահան հայր սուրբին շարունակել իր գործը, իսկ ինքը դուրս եկաւ սենեակից, երբ նրան յայտնեցին, թէ Դաւիթ բէկը կանչում է։ Նա դիմեց դէպի վանքի թանարին (դահլիճը), ուր այդ միջոցին առանձնացած էր բէկը։ Նրա մօտ նստած էին՝ Մխիթար սպարապետը, Թորոս իշխանը, մէլիք Փարսադանը, նրա փեսայ տէր Աւետիքը և իր սիրելին՝ Ստեփաննոս Շահումեանը։

Դահլիճի պարսկական ձևով շինված փէնջէրէները (լուսամուտ) նայում էին դէպի ընդարձակ բակը, որ զարդարված էր դեռ նոր տերևները բաց արած ծառերով։ Բակում ոչ ոք չէր երևում։ Վանքի դռները դեռ կողպված էին, թէև առաւօտից մի քանի ժամ անցել էր։

Այդ միջոցին դէպի վանքը տանող ճանապարհով գալիս էին մի խումբ ձիաւորներ, որ

բերում էին իրանց հետ մի կալանաւոր։ Վերջինը ոտքով էր գնում, նրա ձեռքերը ետևի կողմից կապված էին մէջքի վրա, իսկ երկայն պարանի ծայրը բռնած ունէր մի ձիաւոր։ Այդ դրութեան մէջ նա նմանում էր մի փախստական չան, որի վզից թոկով կապելով, ձիաւորը իր ետևից քարշ է տալիս, և նա ստիպված է իր ընթացքը յարմարեցնել ձիու քայլերին, եթէ ոչ կը խեղդվի։

Երբ մօտեցան վանքին, մի քանի մարդիկ հեռուից տեսնելով նրանց, գոչեցին. «բերեցին... բերեցին»... և վազելով վանքը, շտապեցին ուրախալի համբաւը տանել։

Ձիաւորները իջան վանքի դրանը, և կալանաւորին իրանց առջևը առած, ներս տարան։ Նրա կնճռած դէմքի վրա չէր երևում սարսափած կամ յուսահատված մարդու գունաթափութիւնը, ընդհակառակն, բաւական հանգիստ կարելի էր համարել նրան, եթէ աչքերի մէջ չը նկատվէր մի տեսակ գազանային կատաղութիւն։ Երբ նրան հասցրին դահլիճի առջև, լուսամուտները ներսից բացվեցան, Դաւիթ բէկը իր մօտ նստած աւագների հետ մօտեցան լուսամուտներին և սկսեցին վերևից նայել կալանաւորի վրա։

Ցեխոտված, փոշիներում թաթախված, այդ պատառոտած հագուստով մարդուն այժմ դժուար էր ճանաչել։ Այն մարդը, որ ամբողջ

երկիրը պահել էր ահի և սարսափի մէջ, այժմ մի թրջված հաւի էր նմանում։

Բայինդուր իշխանը, որ նրան բերող ձիաւորներից մէկն էր, առաջ անցաւ, ասելով.—Ահա, Սիւնեաց աշխարհի քանդողը։ Թոյլ տուեցէք ինձ հէնց այս րոպէիս դրան բարձրացնեմ սուրբ Երրորդութեան սիւնի *) վրա և այնտեղից ցած գլորեմ, որ իր արժանաւոր հատուցումը ստանայ։

—Ո՞րտեղից բռնեցիք, հարցրին վերևից։

—Ճանապարհից։ Նզովից արմատը գնում էր Ֆաթալի-խանի մօտ, մեր դէմ պատերազմի պատրաստվելու համար, բայց չը գիտէր, որ պարսից թագաւորի «բաթման ղլիջի» ձեռքից ինքը սատանան էլ չի կարող պրծնիլ։

—Անիծեալ... ասաց սրբազանը, նայելով չարագործի վրա։

—Ի՜նչ զարշելի դէմք ունի... ասաց Մխիթար սպարապետը։

Դաւիթ բէկը ոչինչ չը խօսեց։ Այդ մարդուն նա առաջին անգամն էր տեսնում։ Այդ մարդը նրա հօր, մօր, ազգականների դահիճն էր։ Այդ մարդն էր վառել այն կրակը, որի մէջից նա մի

*) Այդ անունով մինչև այսօր կայ Տաթևի վանքի տաճարի հարաւային կողմում մի բարձր, մինարէթի ձև ունեցող սիւն, որը օրօրվում է, երբ որ շարժում են նրան։

բախտով ազատւեցաւ իր պատանեկութեան հասակում։ Այժմ հին եղեռնագործը, գլուխը դէպի ցած խոնարհած, կանգնել էր նրա առջև։

—Տարէք, բանտարկեցէք, ասաց բէկը և հեռացաւ լուսամուտից։

Կալանաւորը մեր նախածանօթ մէլիք Դաւիթ ուրացողն էր։

Ը.

Վանքը մերկանում էր իր տաճարի զարդերը։ Խաչերը, բուրվառները, սկիհները, որ մինչև այնօր ծառայում էին որպէս անօթներ, որ գործ էին դրւում մեղքերի քաւութեան համար,— այդ դարևոր հարստութիւնները այժմ սկսվեցան գործածվիլ հայրենիքի փրկութեան համար։ Այդ ժամանակ ինքը ժողովուրդը ոչ սակաւ զոհաբերութիւններ էր անում։ Ծնողներից որն որ ունեւոր էր և պատերազմելու ընդունակ որդի ունէր, իր ծախքով զինւորում էր նրան և ուղարկում էր կռւելու։ Իսկ այն ընտանիքները, որ զուրկ էին չափահաս տղամարդից, օգնում էին իրանց աղքատ դրացուն. եթէ ձի չունէր, ձի էին տալիս նրան, եթէ զէնք չունէր, զէնք էին տալիս։ Եւ այսպէս, ընդհանուր զինւորութիւնը օր ըստ օրէ աճում էր, ընդարձակվում էր ժողովրդի ջերմ ոգևորութեան հետ։

Այլ ևս սեպհականութեան խնայողութիւն չը կար։ Ով ինչ որ ունէր, բոլորը ծառայում էր

միայն մէկ նպատակի և այդ նպատակը ամենի համար սուրբ էր։ Եթէ գտնվում էին այնպիսիները, որոնք խնայում էին, որոնք չէին ցանկանում նուիրել, պատահած կամաւոր զինւորը համարձակութիւն ունէր մտնել նրա տունը և իրան հարկաւոր եղած բանը՝ մի ձի, մի զէնք դուրս տանել, առնելով.

—Քեզ համար մի և նոյն է, այդ խօ պարսիկը պիտի տանէր, և դու լաւ ու մունջ պիտի մտիկ տայիր։ Այժմ ինձ պէտք է. ես գնում եմ պարսկի հետ կռւելու և քեզ նրա հարստահարութիւնից ազատելու։ Գոնէ քո որդիների կայքը ապահովված կը լինի։

Թէ բէկը և թէ նրա զօրապետները այս տեսակ կամայականութիւնների վրա միշտ ներողամտութեամբ էին նայում։

Ուխտագրութեան օրվայ երեկոյեան պահուն վանքի մէջ տեղի ունեցաւ մի սրտաշարժ տեսարան։ Բէկը նստած էր դահլիճում, նրան շրջապատել էին իր աւագները։ Վանքի հիւրնկալը ներս մտաւ, յայտնեց, թէ կնիկների մի պատգամաւորութիւն կամենում է ներկայանալ։

—Կնիկների պատգամաւորութիւն... կրկնեց բէկը ժպտալով.—տեսնենք ինչ են կամենում մեր քոյրիկները։

Նա վերկացաւ, և գեղեցիկ սեռը աւելի յարգած լինելու համար, ինքը անձամբ գնաց նրանց դիմա-

ւորելու։ Ներսէս արքեպիսկոպոսը և բոլոր աւագները, որ դահլճում նստած էին, գնացին նրա հետ։

Մի քանի հարիւր կնիկներ լցրել էին վանքի բակը։ Հայոց աշխարհի այդ համեստուհիները, որոնք հայ կնոջ վաղեմի սովորութեամբ երեսները միշտ կալած ունէին և ցոյց էին տալիս իրանց ամենամերձաւոր ազգականներին միայն,— այն օր, ընդհակառակն, բոլորի երեսներն էլ բաց էին։ Կարծես, նրանք ներկայանում էին հարազատ եղբօրը կամ իրանց ծնողին։ *) Դրանք Տաթևի աւանից էին։ Երբ բէկը յայտնվեցաւ բակում, նրանցից երկուսը բաժանվեցան խմբից և առաջ եկան։ Մէկը Տաթևի աւագ քահանայի երէցկինն էր, իսկ միւսը նոյն տեղի տանուտիրոջ տիկինն էր։

---

*) Երևում է, կանանց ծածկապահութեան վերաբերութեամբ մեր և պարսից մէջ մի և նոյն սովորութիւններն էին տիրում։ Պարսիկները թէև շատ խստութեամբ պահպանում են հարեմական կանոնները, բայց իրանց ազգային մեծ տօնի օրը, որ կատարվում է գարնանամուտին և կոչվում է Նօվրուզ (Նոր օր), բարձր դասի կանանց հասարակութիւնը նոյնպէս ներկայանում է շահին հանդիսաւոր սէլամի ժամանակ և շնորհաւորում է թագաւորի «Նոր օրը»։ Նրանց բոլորի երեսները բաց է լինում, ներկայանում են առանց ծածկոցի, որպէս կարող էին երևնալ միայն ամուսիններին կամ ծնողներին։ Թագաւորը այսպիսի դէպքերում հասարակաց հայր է համարվում, կինը նրանից պէտք է չը ծածկվի։

—Մեր տղամարդիկը, ասաց երէցկինը առաջ ընթանալով,—զոհում են իրանց կեանքը, իրանց արիւնը մեր հայրենիքի ազատութեան համար. իսկ մենք՝ կնիկներս, որպէս զի անմասն չը մնանք սուրբ գործից, նուիրում ենք մեր զարդերը։ Ընդունեցէք, բէկ, մեր կողմից այդ փոքրիկ նուէրը, որպէս նշան մեր համակրութեան և խորին զգացմունքի։ Այդ զարդերով թող զէնք, վառօդ ու գնդակ գնվի, թող մեր երկրի տղամարդիկը պատերազմեն նրանցով։ Երբ նրանց յաղթութեան համբաւը կը լսենք, այնուհետև մեր ամենաթանգագին զարդը կը լինի նրանց քաջութիւնը։

Բէկը չը կարողացաւ թագցնել իր սրտի ամենազգալի ցնցումը. Ուրախութեան արտասուքը դուրս ցայտեց նրա խորախորհուրդ աչքերից, երբ մի քանի ուրիշ կնիկներ առաջ մատուցին պղնձէ սինիների վրա դիզած նուէրները։ Այդ նրանց զարդերն էին։ Սինիների մէջ կային՝ գընտեր, մատանիներ, պարանոցի մանեակներ, ապարանջաններ և զանազան այլ տեսակ արծաթեղէն, ոսկեղէն զարդեր։ Առաջին սինու վրա դրած էր մի փունջ ծաղիկ։ Պսակ պատրաստելու գաղափարը դեռ անծանօթ էր նրանց։ Տանուտէրի կինը, որ աւելի մանկահասակ էր քան թէ առաջինը, վեր առեց փունջը և իր ձեռքով տուեց բէկին։ Նա, երևի, կամենում էր մի բան

ասել, բայց շփոթութիւնից լեզուն կապվեցաւ։ Իսկ այդ լուռ շփոթութեան մէջ զգացմունքի և շնորհակալութեան այնքան ազդու արտայայտութիւն կար, որ բէկը իսկոյն ըմբռնեց, թէ ինչ էր կամենում ասել հայրենասէր կինը, և նրա ձեռքից առնելով փունջը, ասաց.

—Ձեր վարմունքով դուք նմանում էք ձեր հինգերորդ դարու քոյրերին. նրանք էլ ձեզպէս նուիրեցին իրանց զարդերը հայրենիքի ազատութեան գործին։ Նրանք նուիրեցին և իրանց արիւնը, մասնակցելով կռւի մէջ։ Իսկ եթէ դուք չէք կարող հետևել նրանց օրինակին՝ վէրք տալ և վէրք ստանալ թշնամուց, գոնէ ընդունեցէք դարմանել ձեր տղամարդերի վէրքերը։ Եւ այդ ամենամեծ առաքինութիւնն է, որ կինը կարող է մատուցանել պատերազմող մարդուն։

—Մենք ամեն բանի պատրաստ ենք, ամեն զոհաբերութիւն յանձն կառնենք, պատասխանեցին կնիկները։—Թշնամին մեր տունը քանդեց, մեր օջախի ծուխը մարեց, էլ ո՞ր օրվայ համար ենք ապրում։ Նա արատաւորեց ամեն ինչ, որ սուրբ և մաքուր էր մեզ համար։ Այլ ևս համբերութիւն չէ մնացել։ Կամ պէտք մի անգամով մեռնենք, կամ պէտք ազատվենք վատ դրութիւնից։ Մենք մեր պատւի, մեր ընտանիքի, մեր կայքի տէրը չէինք։ Որդիք էինք մեծացնում, նա էր տանում. անասուններ էինք

հասցնում, նա էր տանում, մեր զաւակների համար շալեր էինք գործում, կտաւ էինք պատրաստում, նա էր տանում, իսկ մեր զաւակները մնում էին մերկ։ Նա մեզ մօտ ոչինչ չէր թողնում, ինչ որ լաւ էր, ինչ որ մեզ հարկաւոր էր։ Եւ ինչի՞ն է պէտք այսպիսի կեանքը, երբ մարդ իր գլխի, իր տան տէրը չէ։ Մենք շատ անգամ ցոյց ենք տուել թէ հարկաւոր ժամանակ ինչպէս պէտք է վարվել թշնամու հետ։ Այն երևելի կինը, տաթևացի Սօսան, մեր քոյրերից մէկն էր, որ իր գեղեցկութեամբ հրապուրեց Ալի-խանին, և մի գիշեր իր տունը բերելով, գլուխը կտրեց։ Նա մեր երկիրը ազատեց մի բռնակալից, թէև ինքն էլ իրան սպանեց գործողութիւնը կատարելուց յետոյ։ Նրա պատմութիւնը մենք միշտ համակրութեամբ ենք լսել մեր ծնողներից։

Թէ բէկը, թէ Ներսէս եպիսկոպոսը և թէ այնտեղ կանգնած աւագները մեծ ուրախութեամբ էին լսում կնիկների խօսքերը։ Երբ նրանք աւարտեցին, եպիսկոպոսը ասաց.

—Ես հաւատացած եմ, որ սիւնեցի կինը նոյնքան քաջասիրտ է, որքան սիւնեցի տղամարդը։ Բայց դուք մոռանում էք մի անցք, որ պատահեց մեզանից մօտ քսան տարի առաջ։ Այդ անցքը կարող է ձեզ լաւ օրինակ լինել։ Պարսիկները տիրեցին Գենուազի ամբողջ գաւառը,

մնաց միայն Կալեր աւանը, որը չը կամեցաւ անձնատուր լինել և քաջութեամբ պաշտպանւում էր։ Վերջը պարսիկները խաբէութեամբ տղամարդերին կանչեցին իրանց բանակը, հրամայեցին բոլորին կոտորել։ Այդ դաւաճանութիւնից յետոյ կամենում էին տիրել Կալերին։ Բայց կնիկները զինուեցան թշնամու դէմ և ըսկսեցին կռւել։ Երկար պաշտպանվում էին նրանք, իսկ երբ նկատեցին, որ այլ ևս ընդդիմանալ չեն կարող, թունաւորեցին բոլոր աղբիւրները, և իրանց տներին կրակ տալով, պատսպարվեցան անտառների մէջ։ Այդ բոլորը դուք գիտէք, շատ ժամանակ չէ անցել այն օրից։

Կնիկները յայտնեցին, որ ամեն մի դէպքում կաշխատեն հետևել իրանց այդ արժանայիշատակ քոյրերի օրինակին։ Եւ նրանց ներկայացուցիչները՝ երէցկինը ու տանուտէրի կինը համբուրեցին սրբազանի աջը, և նրա օրհնութիւնն առնելով, բոլորը գլուխ տուեցին, ուրախութեամբ դուրս եկան վանքից։

Բէկը հրամայեց նրանց բերած նուէրները տանել իր գանձարանը, որ արդէն կազմված էր վանքում։ Յետոյ իր աւագների հետ դիմեց դէպի դահլիճը։ Գնալու միջոցին եպիսկոպոսը մի առանձին ոգևորութեամբ ասաց նրան.

—Տեսնում էք, բէկ, իմ այսօրվայ քարոզը հինգերորդ դարու կանանց մասին, երևում է

ազդեցութիւն է գործել դրանց վրա։ Ես ուրախութեամբ նկատում էի, որ քարոզի ժամանակ տաճարում կային բազմաթիւ կնիկներ, որոնք ուշադրութեամբ լսում էին ինձ։ Ա՜խ, որպէս սաստիկ ազդում են կենդանի քարոզները, որ ուղղակի վերաբերվում են իրական կեանքին։ Ո՜րքան մեղաւոր ենք մենք ժողովրդի առջև, որքան շատ կորցրել ենք մենք մեր նախապաշարմունքներով, անդադար խօսելով դժոխքի և արքայութեան վրա։

—Երանի թէ, այդ տեսակ քարոզները մի քանի դար առաջուց կրկնվէին մեր եկեղեցու բեմից, այժմ մենք կը գտնէինք հողը բոլորովին պատրաստ, ասաց բէկը տխրութեամբ։—Բայց մենք հայերս սովորութիւն ունենք հիւանդի մասին մտածել միայն այն ժամանակ, երբ նրա կենսական ուժերը բոլորովին սպառված են, երբ բժշկի օգնութիւնը հազիւ թէ կարող կը լինէր ուղղել, կարգի բերել հիւանդի խանգարված կազմուածքը…

Վերադառնալով դահլիճը, բէկը հէնց նոյն գիշերը կատարեց իր զինուորական կարգադրութիւնները։ Նա իր ուժերը երկու գլխաւոր մասների բաժանեց. մէկին կոչում էր տիրապետող ուժ, իսկ միւսին՝ «թշնամու գլուխը խառնող», այսինքն՝ նրան չփոթութեան մէջ գցող ուժ։

Այս վերջինը կազմված էր զանազան մանր խումբերից, որոնք աւազակների հրոսակի բնաւորութիւն ունէին։ Խումբերից իւրաքանչիւրը ունէր իր առանձին առաջնորդը, որին անպայման կերպով պէտք է խոնարհվէին ստորադրեալները։ Ամեն մի խումբի թիւը յիսուն ձիաւորից չէր անցնում։ Նրանց նպատակը պէտք է լինէր անակնկալ կերպով յարձակումներ գործել մահմեդականների կարաւանների և գիւղերի վրա, այրել, յափշտակել և անցնել, առանց մի տեղում երկար մնալու։ Այդ խումբերը, թէև առանձնացած պիտի գործէին, բայց ընդհանուր կապ պիտի ունենային միմեանց հետ, և հարկաւորած ժամանակ, պէտք է մինը միւսին օգնութեան հասնէր։ Այս պատճառով իւրաքանչիւր վիճակի համար որոշված էին մի քանի խումբեր։ Խմբապետները գլխաւորապէս այն անձինքն էին, որ բէկը իր հետ բերել էր Վրաստանից։ Լօռեցի Աւթանդիլ գնդապետը և երևանցի կաղ Օհանէսը, որ յայտնի էր իր ճարպկութիւններով, ուղարկվեցան դէպի Հին Նախիջևանի կողմերը։ Մեծ Գիօրգին և փոքր Գիօրգին ուղարկվեցան դէպի Զանգազորի կողմերը։ Զաքարիայ իշխանը և պատանի Մօսին ուղարկվեցան Երասխ գետի ափերի վրա՝ դէպի Բարգիւշատի կողմերը։ Թաթէոս բէկը և գանձակեցի Եղիազար աղան ուղարկվեցան դէպի Սիսիանի կողմերը։ Վաղարշապատցի Յարութիւն տանուտէրը ուղարկվեցաւ դէպի Գողթնեաց երկրի կողմերը։

«Եթէ թշնամու տունը կամենում ես հրդեհել, պէտք է կրակը մի քանի տեղից վառել, որ չը կարողանայ հանգցնել», ասում էր բէկը։ Վերոյիշեալ խումբերը ուրիշ նշանակութիւն չունէին, բայց միայն կայծեր գցել Սիւնեաց աշխարհի զանազան կողմերում, խռովել, աղմկել և զբաղեցնել թշնամուն։

Բայց բէկի գլխաւոր ուժերը, որոնց նա կարգել էր որպէս պատերազմող և տիրապետող ուժեր, կազմված էին աւելի խոշոր խումբերից։ Այդ խումբերը յանձնված էին Սիւնեաց աշխարհի նշանաւոր աւագների ձեռքը, որոնք ուխտակից եղան բէկին և հաւատարմութեան երդում տուեցին։

Զաւնդուրի Թորոս իշխանը ունէր իր հրամանի ներքոյ 2000 հոգի. նրան օգնական էր տուել բէկը Բայինդուր իշխանին և Թորոսի ազգական մէլիք Նուբարին։ Հալի-ձորի մէլիք Փարսադանը և նրա որդի Բալի զօրապետը ունէին իրանց հրամանի ներքոյ 500 հոգի։ Մէլիք Փարսադանի փեսայ տէր Աւետիքը ունէր իր հրամանի ներքոյ 468 հոգի։ Կալերի Պապ զօրապետը և բէկի սիրելի Ստեփաննոս Շահումեանը ունէին իրանց հրամանի ներքոյ 700 հոգի։ Սիսիանի Լեոն զօրավարը ունէր իր հրամանի ներքոյ 500 հոգի։

Սիսիանի մէլիք Կաջօն ունէր իր հրամանի ներքոյ 200 հոգի։ Սիսիանի տէր Գասպարը, որ և կոչվում էր «Աւչար էրէց», ունէր իր հրամանի ներքոյ 250 հոգի։ Բաղաբերդի Ադամ զօրավարը ունէր իր հրամանի ներքոյ 150 հոգի։ Գիւլ-բերդի Ղազար զօրավարը ունէր իր հրամանի ներքոյ 110 հոգի։ Շիրվանաձորի Սարգիս զօրավարը ունէր իր հրամանի ներքոյ 250 հոգի։ Ջուղայի Մաղայ մէլիքի երկու որդիները՝ Աշոտ և Սմբատ ունէին իրանց հրամանի ներքոյ 400 հոգի։ Տաթևի Կիջի, Այրի, Եռայի և տիրացու Սիմէօն տանուտէրները ունէին իրանց հրամանի ներքոյ 400 հոգի։ Շնհէրի Մինաս և Ստեփան տանուտէրները ունէին իրանց հրամանի ներքոյ 550 հոգի։ Մեղրիի մէլիք Կոստանդինը, Յովհաննէսը, Սարի և Առաքել տանուտէրները ունէին իրանց հրամանի ներքոյ 400 հոգի։ Բոլոր զօրքերի թիւը համնում էր 6878 հոգու։ Յիշեալ գունդերի վրա բէկը սպարապետ կարգեց Մխիթարին, բայց ընդհանուր հրամանատարութիւնը իր վրա պահեց։

Այդ կամաւոր զինուորները հաւաքված էին նոյն զօրապետների ձեռքով, որոնց հրամանի ներքոյ և գտանվում էին նրանք։ Զօրապետներից շատերը, որպէս էին Թորոս իշխանը, Մէլիք Փարսադանը, Պապ զօրապետը, իրանց ծախքով զինուորել էին իրանց գունդերը։ Իսկ ոմանք

հաւաքել էին իրանց իշխանութեան տակ եղող գիւղերից։

Բէկը վճռեց շուտով սկսել իր յարձակողական գործողութիւնները։

Թ.

Դաւիթ ուրացողին կալանաւորելուց յետոյ Տաթևի վիճակը ազատվեցաւ մի չարագործից։ Այդ նոր Վասակը, որ Ֆաթալի խանի աջ ձեռքն էր, հէնց որ լսեց բէկի Սիսիանի մէջ կատարած յաղթութիւնները, հէնց որ իմացաւ նրա Տաթեւին մօտենալը, պատրաստվեցաւ առաջն առնել։ Նա հաւաքեց իր ձեռքի տակ գտնված պարսկական զօրքերը, և տեղային հայերից ևս բաւական բազմութիւն ստիպմամբ պարսիկների հետ միացնելով, աշխատում էր թոյլ չը տալ բէկին Տաթևի սահմանը մտնել. Հօրը աջակցում էր Շահկուլի անունով որդին, որ ծնված էր պարսիկ կնոջից։

Բէկի հրամանի ներքոյ, ինչպէս մեզ յայտնի է, այդ ժամանակ կային մօտ 500 զինված մարդիկ։ Իսկ ուրացողի ուժերը հնգապատիկ աւելի էին։ Նրանք բռնել էին դէպի Տաթև տանող ճանապարհների բոլոր անցքերը։

Բէկը նստած էր իր սառուլար *) ձիու վրա,

---

*) Սառուլար կոչվում են Սիւնեաց աշխարհի ոսկեգոյն ձիաները, որ մի առանձին ցեղ է։

որ Սևանեաց աշխարհի ամենաընտիր նժոյգների տեսակից էր։ Նա գնում էր ամենից առաջ, շրջապատած իր թիկնապահներով։ Նրա կողքին ձիավարում էր Ներսէս արքեպիսկոպոսը։ Ճանապարհը ընկած էր նեղ ձորի միջով, որ իր դըժուարին ելևէջներով երբեմն բարձրանում էր լեռների բարձրաւանդակների վրա, իսկ երբեմն իջնում էր խորին անդունդների մէջ։ Սարերը պատած էին անթափանցելի անտառով։ Ամեն րոպէ կարելի էր սպասել խիտ ծառերի ետևից դարանամուտ թշնամու հրացանի արձակվելը և գնդակի սլացումը։

Բայց բէկը, այդ զգոյշ, շրջահայեաց զինուորը, կարծես, ուշադրութիւն չէր դարձնում։ Նա լուռ էր և մտախոհ։ Ակամայ տխրութիւնը, որ տիրեց նրա սրտին, համարեա մոռանալ էր տուել, թէ ինչ վտանգաւոր տեղում է գտնվում ինքը, ուր ամեն մի քար, ամեն մի ժայռ, ամեն մի թուփ ու ծառ մահ էին սպառնում անցորդին։ Նա մինչև անգամ մոռացել էր այն զինված բազմութիւնը, որ նրա ետևից գալիս էր։

Նրա աչքի առջև տարածվում էր իր ծննդավայրը՝—Տաթևի երկիրը։ Բոլոր լեռները, անտառները, ձորերը ու հովիտները ծանօթ էին նրան։ Բոլոր ճանապարհները, ամենաաննշան շաւիղներն անգամ գիտէր նա։ Այդ լեռների վրա, իր մանկութեան օրերում, արածացնում էր նա իր

հօր այծերը։ Այդ անտառներում իր ընկերների հետ քաղում էր նա զանազան տեսակ պտուղներ։ Այդ սրնթաց, փրփրացող գետակների մէջ շատ անգամ լողացել է նա։ Բոլորը մնացել էր մի և նոյնը. ոչինչ չէր փոխվել. փոխվել էր միայն ինքը…

Շուտով կը տեսնէր նա Տաթևի աւանը։ Գուցէ դեռ ևս չէն էր մնացել իր հայրական խրճիթը, որի մէջ անցուցել էր իր մանկութեան անհոգ, պայծառ օրերը։ Բայց ովքեր էին բնակվում այժմ այն խրճթի մէջ։ Ովքեր և բնակվէին, բայց նրանցից և ոչ մէկը այն չէր լինելու, որին նա կը փափագէր տեսնել։

Ծանօթ առարկաները զարթուցին նրա մէջ տխուր յիշողութիւններ։ Արդեօք կը տեսնէր այն մօրը, որ այնքան քնքուշ սրտով սիրում էր իրան։ Արդեօք կը տեսնէր այն հօրը, որ այնքան բարի էր, որ իր չքաւորութեան և դժբախտութեան մէջ ևս դարձեալ գիտէր լաւ կրթել, սնուցանել սիրելի որդուն։ Ո՞րտեղ էին նրանք։ Ինքը չի պիտի կարողանար ուրախացնել նրանց, ասելով. «տեսէք, ահա ձեր որդին, վերադառնում է ձեզ մօտ փառքով ու պատուով։ գրկեցէք նրան։»

Նա յիշեց Ֆաթալի խանի բանակը, յիշեց այն կրակը, որի մէջ այրվեցան իր հայրը, իր մայրը, իր ազգականները…։ Յիշեց այն մարդուն, որ

իր ծնողների մահուան պատճառ դարձաւ։ Այսօր նոյն չարագործը պարսիկ զօրքերով կանգնած էր իր ճանապարհի վրա, որ արգելէ նրան իր հայրենիքի գոնէ աւերակները տեսնելու։

—Տեսնում էք, սրբազան, ասաց բէկը Ներսէս արքեպիսկոպոսին, որ եկել էր Շնհէրից նրան Տաթև տանելու,—մեր ձեռնարկութեան հէնց ըսկզբում մեր առջև դուրս է գալիս մի ուրացող հայ։

—Այն հայը, որի հարստահարութիւններից ազատվելու համար ձեր ծնողները իրանց այրեցին կրակի մէջ, պատասխանեց սրբազանը։—Այն կըրակից դուք միայն ազատվեցաք, բէկ։

—Այդ տխուր պատմութիւնը դուք արդէն գիտէք, սրբազան, խօսեց բէկը։—Երևում է, իմ և այդ մարդու ճակատագրի մէջ մի բան կայ, ուր կրակը մեծ դեր է խաղում...

—Այո՛, այն ժամանակ նա կրակ թափեց ձեր ծնողների վրա, իսկ այսօր դուք կրակ կը թափէք նրա գլխին, ասաց սրբազանը ծիծաղելով։ —Հաշիւը պարզ կը դուրս գայ։

—Տեսնենք... պատասխանեց բէկը և դարձեալ ընկաւ տխուր մտախոհութեան մէջ։

Նրանք դուրս գալով ձորից, գտնվում էին այժմ մի լեռնային բարձրաւանդակի վրա, որտեղից երևում էր բոլոր շրջակայքը։ Սրբազանը, նկա-

տելով բէկի տխուր տրամադրութիւնը, թողեց նրան, և իր ձին յետ պահելով, կանգ առեց, մինչև հասաւ Մխիթար սպարապետը Բայինդուր իշխանի հետ։

—Նայեցէք, ասաց նրանց,— նայեցէք այդ հրաշալի բնութեանը։ Սիւնեցի հայը ոչ մի բանով իրաւունք չունի գանգատվելու Աստծուն, թէ ինչու ինքը թշուառ է և օտարի ծառայ։ Երբ Աստուած մի ժողովրդի տալիս է այսպիսի երկիր, որ իր բնական ամրութիւններով ամեն յարմարութիւններ ունի պաշտպանելու նրան թշնամու յարձակումներից,— այդ ժողովուրդը ինքն է մեղաւոր, որ չէ կարողանում օգուտ քաղել Աստուծոյ շնորհած պարգևից։

Եւ իրաւ, վայրենի բնութիւնը հիացնելու չափ սքանչելի էր։ Դէպի ամեն կողմ անկանոն կերպով տարածվում էին լեռնային ցանցատեսակ շղթաներ, որոնք խիտ կերպով զետեղված էին մինը միւսի մօտ, թողնելով իրանց միջնավայրում նեղ և խորին ձորեր։ Այդ շղթաների վրա, սղոցի ատամների նման, բարձրանում էին սարերի սուր գագաթները, որ կորչում էին ամպերի մէջ։ Կուսական անտառը, որպէս մի կանաչազարդ վերարկու, ծածկում էր լեռների մերկութիւնը և նրանց աւելի անմատչելի էր դարձնում։ Ոչ մի մարդկային արարած չէր կարող ոտք կոխել այդ բարձրութիւնների վրա. միայն

արագաթռիչ արծիւը այնտեղ ժայռերի պատառվածքի մէջ դնում էր իր բոյնը։

—Ճշմարիտ է, սրբազան, պատասխանեց Մըխիթար սպարապետը,— սիւնեցի հայը ինքն է մեղաւոր, որ չէ կարողացել օգուտ քաղել իր հայրենիքի ամուր դիրքերից։ Բայց Հայաստանի մի կողմը այսպէս չէ։ Հայաստանը ամեն տեղ տալիս է մեզ բնական ամրութիւններ։ Բայց մեր լեռներից աւելի օգուտ են քաղել օտարները, քան թէ մենք ինքներս։

Բայինդուր իշխանը, որ լսում էր այդ խօսակցութիւնը, և ինքը ոչ սակաւ հիացած էր շրջապատող լեռներով և անտառներով, խօսակցութեան մէջ մտաւ, ասելով.

—Աստուած է վկայ, այդ ժողովուրդը մորթելու արժանի է։ Ես ինքս մեծ ուրախութեամբ կը վեր առնէի մի սուր և բոլորին կը կոտորէի։ Բայց մի զարմանալի բան կայ, որ ինքս էլ չեմ հասկանում թէ ինչ է։ Ես սաստիկ ատում եմ մեր հայերին, բայց մի և նոյն ժամանակ սիրում եմ։ Այդ ատելութիւնից բղխած սէրը ես չեմ կարողանում բացատրել ինձ։— Սիրում եմ այդ ազգը, որպէս մի սիրահար բորբոքված սրտով սիրում է մի ցած, բարոյապէս ընկած, պոռնիկ կնոջ։ Նա տեսնում է, թէ ինչպէս այդ կինը թաթախվել է բարոյական ցեխի մէջ, նա զզվում է, բայց հէնց որ աչքն ընկնում է աչ-

քին, չէ կարողանում համբերել, սկսում է գըրկել, սկսում է համբուրել նրան։ Թէև գիտէ, որ նրա մարմնի վրա ոչ մի մաքուր տեղ չի մնացել։ Մեր ազգը մի այսպիսի անբարոյական կին է. նա մի մեծ պոռնիկ է. նրա երեսին ամօթի և պատուի մի կաթիլ անգամ չէ մնացել։ Մօտ չորս հազար տարի նա պոռնկութիւն է անում, բայց տակաւին չը կշտացաւ, տակաւին չը յագեցաւ օտարներից։ Ասորեստանցին դարերով գործ դրեց նրա վրա իր անբարոյական կրքերը։ Հազարաւոր տարիներ անցկացրեց նա երբեմն յոյնի, երբեմն պարսկի և երբեմն հռոմայեցու գիրկն ընկնելով։ Մինչև անգամ անապատի սև արաբը իր հաստ շրթունքով չօշափեց նրա երեսը։ Մինչև անգամ թուրանի տափակաքիթ, դեղնակաշի մօնղոլը դարերով պառկեց նրա հետ։ Ի՞նչ ազգ մնաց, որի վրա չը սիրահարվէր նա, որին անձնատուր չը լինէր։ Նա բոլոր օտարներին տալիս էր իր սէրը, անհաւատարիմ էր միայն իր ամուսնին, որի հետ կապված էր օրինաւոր պսակով։—Այսուամենայնիւ, ես դարձեալ սիրում եմ այդ թեթևամիտ, վավաշոտ կնոջը, որ դարերի ընթացքում, իր անբարոյական կեանքով մաշվել, տըրորվել, քրքրվել է և միայն իր վաղեմի գեղեցկութեան կմախքն է պահպանել։ Սիրում եմ այդ կմախքը։ Սիրում եմ այդ թունաւորված, հազարաւոր հիւանդութիւններով վարակված մար-

մինը, որից մահուան հոտ է փչում,—հիւանդութիւններ, որ նա ստացել է իր բազմաթիւ համանիներից, որոնց նա չապիկի նման մինը միւսի ետևից փոխում էր։ Սիրում եմ, բայց ինչու համար, ինքս էլ չը գիտեմ։ Սիրում եմ ատելով, սիրում եմ զզուելով... բայց սիրում եմ...

—Սիրելուց բղխած այդ զզուանքը, այդ դառն ատելութիւնը շատ բնական է, ասաց սրբազանը, կտրելով իշխանի խօսքը։—Դա սիրող մարդու արդար վրդովմունքն է, որ առաջ է գալիս նրանից, երբ իր սիրած առարկայի մէջ գտնում է մի որ և իցէ արատ, մի որ և իցէ բիծ, որ մաքրել չէ կարող։ Ձեր ատելութիւնը դէպի այն ազգը, որին դուք շատ իրաւացի կերպով պոռնիկ կնոջ հետ համեմատեցիք, ես բոլորովին բաժանում եմ։ Այդ ատելութիւնը ցոյց է տալիս, իշխան, ձեր չափազանց բարի ցանկութիւնները, որով փափագում էք պոռնիկը դուրս քաշել իր բարոյական ցեխից և նրան օրինաւոր, պատուաւոր կեանքի սովորեցնել։ Բայց երբ նկատում էք, որ նա ուղղվելու ոչ մի ընդունակութիւն չէ ցոյց տալիս, սկսում էք բարկանալ, սկսում էք ատել, բայց չը դադարելով մի և նոյն ժամանակ սիրելուց։ Ինքը Յիսուս Քրիստոսը սիրում էր ընկած կնիկներին, սիրում էր նրանց ուղղելու համար։ Եւ նա հասաւ իր նպատակին։ Նրա վարդապետութեան ամենաջերմ տա-

րածողները եղան այդ ժողովրդից մերժված կնիկները։

—Ի՞նչու ենք հեռու գնում, առաջ տարաւ սրբազանը իր խօսքը.—ահա մի մարդ, ինչպէս է մէլիք Դաւիթ ուրացողը. նա բարոյապէս ընկած մի մարդ է։ Նա դաւաճանեց իր հայրենիքին, և պարսիկների ձեռքում գործիք դառնալով, սկսեց նրան աւերակ դարձնել։ Նոյն չարագործութիւնները շարունակելու համար և պարսից լուծը մեր ժողովրդի վրա պահպանելու համար, նա կանգնած է այժմ մեր ճանապարհի վրա, որ արգելէ մեր մուտքը, որ թոյլ չը տայ մեզ պարսիկների անիրաւութեամբ տիրած երկրի վրա ոտք կոխենք։ Այսպիսի դաւաճաններին ոչ սակաւ անգամ ծնել են Հայաստանի մայրերը։ Բայց դրանք ինչով են մեղաւոր։ Դրանք արդիւնք են նոյն անբարոյականացած, նոյն փչացած ժողովրդական կեանքի։ Հիւանդոտ կինը չէ կարող առողջ որդիք ծնել։ Հիւանդ ժողովրդից այս տեսակ հրէշներ առաջ կը գան։ Եթէ կամենում ենք, որ դրանք չը լինեն, պէտք է ուղղենք ժողովրդի առողջութիւնը,—ուղղենք նրան սիրելով։

Այդ խօսակցութիւնը, որ բոլորի համար հետաքրքիր էր, ընդհատվեցաւ։ Նրանք նկատեցին, որ բէկը բաւական տարածութիւն առաջ էր անցել։ Այժմ կանգնել էր նա և խօսում էր

Ստեփաննոս Շահումեանի հետ, որին առաջուց ուղարկել էր Թշնամու բռնած գիրքերը հետազօտելու։

—Ստեփաննոսը վերադարձաւ, ասաց Մխիթար սպարապետը,—տեսնենք, ինչ տեղեկութիւններ է բերել։

Երեքն էլ՝ սրբազանը, Մխիթար սպարապետը և Բայինդուր իշխանը, իրանց ձիաները թափով քշեցին, և մի քանի րոպէի մէջ հասան բէկի կանգնած տեղը։

Ստեփաննոսի բերած տեղեկութիւններից երևաց, որ Դաւիթ ուրացողը բռնել էր երկու գըլխաւոր անցքեր, որտեղից պէտք էր մտնել Տաթև։ Մի անցքի վրա կանգնել էր նա ինքը, իսկ միւսի պահպանութիւնը յանձնել էր իր Շահ-կուլի որդուն։ Երկուսի ձեռքի տակ կային աւելի քան երկու հազար մարդիկ։

—Ես ձեզ մի ուրիշ ճանապարհով կը տանեմ, ասաց սրբազանը,— որը թէև բաւական դժուարանցնելի է և բաւական երկար է, բայց աւելի ապահով է։ Այդ ճանապարհով մենք չենք հանդիպի Թշնամուն։

—Ի՞նչ օգուտ դրանից, պատասխանեց բէկը, —ես կամենում եմ անպատճառ հանդիպել նրանց։ Ինձ պէտք է այսօր ձերբակալել այդ անզգամին։

—Այդ ձեր կամքն է, ասաց սրբազանը։—

Եթէ դուք վճռել էք ուղղակի նրանց վրա գընալ, իմ կարծիքով, աւելի լաւ կը լինէր փոքր ինչ սպասել, մինչև մութը պատէր։ Մենք համեմատաբար շատ փոքր թւով մարդիկ ունենք մեզ հետ։ Եթէ ցերեկով Թշնամին մեզ տեսնելու լինի, մեր սակաւութիւնը նկատելով, աւելի սիրտ կառնի։ Բայց խաւարի մէջ փոքրիկ խումբերն էլ, եթէ քաջութեամբ կը գործեն, կարող են սարսափեցնել Թշնամուն։

—Դուք, սրբազան, ժպտալով ասաց բէկը,— ոչ միայն հմուտ աստուածաբան էք, այլ ձեր մէջ երևում է և պատերազմական տաղանդ։

—Կատակը մի կողմ կենայ։ Թոյլ տուեցէք այսօր փորձել իմ տաղանդը, որը ծաղրում էք դուք։

—Այդ խիստ վտանգաւոր փորձ կը լինի։ Այսուամենայնիւ, ես կարող եմ ապահովացնել ձեզ, սրբազան, որ մինչև Թշնամու մօտ հասնելը, ձեր ցանկացած խաւարը կը պատէ մեր աշխարհը։ Նայեցէք արեգակին, որքան թեքվել է դէպի իր մուտքը։ Եւ ես ցաւում եմ, որ դուք Յեսուի հրաշքը կատարել չէք կարող, որ արեգակը առժամանակ կանգնեցնէիք, մինչև մենք լուսով աւարտէինք մեր կռիւը։

—Դարձեալ կատակ։ Ես չեմ հասկանում, թէ դուք ինչու էք փախչում խաւարից։

—Նրա համար որ, խաւարի մէջ մենք աչքից

կը կորցնէինք այն մարդուն, որին ես ցանկա-
նում եմ այսօր անպատճառ բռնել, պատաս-
խանեց բէկը։

Յետոյ նա իր մօտ գտնուած զինուորներին եր-
կու մասների բաժանեց. մի մասը յանձնեց Մը-
խիթար սպարապետին և նրան Ներսէս արքե-
պիսկոպոսի հետ ուղարկեց ուրացողի որդի
Շահ-կուլու վրա, իսկ միւս մասը ինքը վեր առ-
նելով, ուղղակի դիմեց ուրացողի վրա, իր հետ
տանելով Բայինդուր իշխանին և իր սիրելի
Ստեփաննոս Շահումեանին։

Ժ.

Խաւար գիշեր էր։ Մի երիտասարդ, անդադար
մտրակելով իր ամեհի նժոյգը, ձիավարում էր։
Բայց ոչ մի ժամանակ այդ ուժեղ, սրնթաց ա-
նասունը այնպէս վատ ծառայութիւն չէր արել
իր տիրոջը, որպէս այս գիշեր։ Բաւական էր
փոքր ինչ խթել նրա կողքը և նա արծուի պէս
կը սլանար։ Իսկ այս գիշեր նրա տէրը ստիպված
էր գործ դնել իր մտրակի ուժը, որ նա շարժվի։
Գիշերվայ մթութիւնը մի կողմից, ձիաւորի խռո-
վութիւնը միւս կողմից, թոյլ չէին տալիս նկա-
տել նրան, որ խեղճ անասունը համարեա երեք
ոտքի վրա էր ընթանում, իսկ մի ոտքից սաս-
տիկ կաղում էր։ Վերջապէս ընկաւ նա, այլ ևս
չը բարձրացաւ։

Երիտասարդը աշխատում էր կանգնեցնել ձիուն,
բայց նա գլուխը գետնին զարկելով, խռխռում
էր, ցաւալի ձայներ էր արձակում, որ նշան էին
մահուան տագնապի։ Նրա մի ոտքը բոլորովին
ջախջախվել էր գետնի հարուածքից, արիւնը
սաստիկ վազում էր, և այդ դրութեան մէջ նա
անցել էր մի քանի մղոն ճանապարհ։ Մարմնի
մի այլ տեղից նոյնպէս վէրք էր ստացել։

Այդ դրութեան մէջ թողնելով ձիուն, երիտա-
սարդը անցաւ։ Նա սկսեց այժմ փախչել ոտքով,
այնպիսի արագութեամբ, որ շատ անգամ զարկ-
վում էր քարերին, շատ անգամ խրվում էր թու-
փերի մէջ, պատառոտում էր իր հագուստը, և
շատ անգամ չը նկատելով ճանապարհի տարու-
փոսը, գլորվում էր, վայր էր ընկնում։ Այսպէս
մնում էր նա մի քանի րոպէ, երբ մի փոքր
շունչ էր առնում, հանգստանում էր, յետոյ վեր
էր կենում, դարձեալ շարունակում էր իր փա-
խուստը։

Նա աչքը դարձրեց դէպի երկինքը, տեսնելու,
թէ գիշերից որքան էր անցել։ Ոչինչ նշմարել
չը կարողացաւ. երկինքը պատած էր ամպերով։
Նա ամեն բան կը տար, որ գիշերը երկար ու
շատ երկար լինէր, և ինքը խաւարով շրջապա-
տած, կարողանար անցկենալ ընդարձակ տարա-
ծութիւն։

Յանկարծ նա սոսկաց։ Կարծես, նրա ոտքերից

բռնեցին և ցած գլորեցին։ Կարծես, հարիւրաւոր մարդիկ շրջապատեցին նրան։ «Մի սպանէք, գոչեց նա ողորմելի ձայնով,—ես անձնատուր կը լինիմ... ահա իմ զէնքերը»։ Նա իր դատարկ ձեռքերը տարածեց օդի մէջ, որպէս թէ մի բան տալիս էր։ Բայց նրա զէնքերից և ոչ մէկը չէր մնացել իր վրա։ Գօտին կորցնելով, թուրը ճանապարհին վայր էր գցել. ատրճանակները նոյնպէս կորցրել էր. նրա գդակը մինչև անգամ գըլխին չէր։

Նկատելով, որ երևակայական զէնքերը իր ձեռքից ոչ ոք չէ առնում և թշնամիներից ոչ ոք չէ մօտենում, նա խօսեց ինքն իրան. «Երևի, վախեցան, երևի, փախան, էլ չեն երևում»...

—Ես այստեղ եմ... լսելի եղաւ մի ձայն։

Երիտասարդը դարձեալ սարսափեցաւ։ Ձայնը լսելի եղաւ հէնց նրա մօտից, հէնց նրա ոտքերի տակից։ Նա դողդողաց և ընկաւ մի դիակի վրա։

—Էդ էր պակաս, ես շարժվել չեմ կարողանում, դա էլ իմ վրա մի ծանր բեռ դարձաւ... խօսեց դիակը, աշխատելով իր վրայից հեռացնել ընկած երիտասարդին։ Բայց երիտասա՛րդը ինքն իրան գլորվեցաւ դէպի մի կողմ։

—Երևի դա էլ վիրաւորված է, խօսեց առաջին ձայնը։

—Ես վիրաւորված չեմ, պատասխանեց երիտասարդը,—ի սէր Աստուծոյ, մի՛ սպանեցէք ինձ։

—Շատ էլ որ ուզենամ, չեմ կարող սպանել, ինձ մօտ սպանելու ոչինչ չէ մնացել. իսկ մի փոքր հեռու գնալու և մի քար վեր առնելու չափ ուժ չունեմ։

Վերջին խօսքերից խրախուսվելով, երիտասարդը հարցրեց.

—Դու ո՞վ ես։

—Ես վիրաւորված զինուոր եմ։ Անիրաւները այնպէս ծակեցին կողքս, որքան էլ ձեռքով հուփ եմ տալիս, չեմ կարողանում արիւնը կանգնեցնել։—Ա՜խ, մի փոքր ջուր եթէ կարելի լինէր գտնել այստեղ։

Երիտասարդը առանց ուշադրութիւն դարձնելու նրա աղաչանքի վրա, հարցրեց.

—Ո՞ր կողմից ես։

Կամենում էր գիտենալ՝ Դաւիթ բէկի զինուորներից է, թէ Դաւիթ ուրացողի։

—Մելիք Դաւիթի կողմիցն եմ, պատասխանեց վիրաւորը։

Երիտասարդը այդ լսելով, աւելի սիրտ առեց։ Զինուորը թշնամու բանակին չէր պատկանում։

—Ի՞նչպէս վերջացաւ կռիւը, հարցրեց նա։

—Կռիւը... շատ վատ վերջացաւ... պատասխանեց վիրաւորը։—Մեզ բոլորիս ջարդեցին։ Ի՞նչ կարող ես անել դրանց հետ։ Դրանք մարդիկ չեն, կատարեալ սատանաներ են։ Մտնում են ամեն տեղ, որտեղ ուզում ես։ Ոչ կրակից են

վախենում և ոչ սրից։ Թռչում են անդունդների վրայով և ծտի նման անցնում են սարսափելի ժայռերից։ Նրանց սրի առջևից մարդիկ այնպէս ցած են թափվում, որպէս չորացած հասկերը հնձւորի մանգաղի առջևից։ Ես իմ աչքով տեսայ և հիմայ հաւատում եմ, որ այդ մարդիկների մարմինը անխոցելի է։ Ի՞նչ կարող ես անել կախարդված մարդու հետ, որի մարմնի վրա ոչ հրացանի գնդակը և ոչ էլ նիզակի սուր ծայրը չեն ներգործում։

Դաւիթ բէկի և նրա զօրապետների մասին արդէն տարածվել էին անհաւատ ժողովրդի մէջ շատ առասպելական զրոյցներ, որոնք սարսափ էին գցում բէկի թշնամիների վրա։

—Դու ո՞ր զօրաբաժնի մէջն էիր, հարցրեց երիտասարդը ցաւալի պատմութիւնը լսելուց յետոյ։

—Ես Մէլիք Դաւիթի զօրաբաժնի մէջն էի, ասաց վիրաւորը.—բռնել էինք դէպի Տաթև տանող ճանապարհի անցքը։ Բայց վերևից այնքան քարեր թափեցին մեր գլխին, կարծես, բոլոր լեռները փուլ եկան մեզ վրա։

—Իսկ հայրս... ի՞նչ եղաւ հայրս... հարցրեց երիտասարդը դողդոջուն ձայնով։

Վիրաւոր զինւորը ճանաչեց նրան. երիտասարդը Դաւիթ ուրացողի որդի Շահ-կուլին էր։

—Հա՜յրդ... ասաց նա ձգական ձայնով,—Ո՞վ

է իմանում, թէ ինչ եղաւ։ Սպանվեցաւ, մնաց, փախաւ, բռնեցին,—ո՞վ կարող էր գիտենալ այն խառնակութեան ժամանակ, երբ ամէն մարդ իր գլխի մասին էր մտածում։

Երիտասարդը բաւական տեղեկութիւններ ստացաւ հօր անաջողութիւնների մասին, իսկ իր հրամանի տակ գտնվող զօրքերի պարտութիւնը նրան արդէն յայտնի էր։ Նա վերկացաւ, մի վերջին հարց առաջարկեց վիրաւոր զինուորին և կամենում էր շարունակել իր փախուստը, մի գուցէ ընկնի բէկի զինուորների ձեռքը։

—Դու գիտես, մենք այժմ ո՞րտեղ ենք գտնվում։

Վիրաւոր զինւորը ոչինչ չը պատասխանեց և ոչ լսեց երիտասարդի հարցմունքը։ Նրա ձեռքը, որով բռնել էր իր վէրքը, թուլացել, ընկել էր գետին, իսկ աչքերը փակվել էին...

Նոյն դրութեան մէջ թողնելով զինուորին, երիտասարդը սկսեց վազել, թէև ուր գնալը ինքն էլ չը գիտէր։ Առաւօտեան լոյսը դեռ չը ծագած, նա հասաւ մի գիւղի, սկսեց բաղխել առաջին հանդիպած խրճիթի դուռը։ Երկար բաղխում էր նա, մինչև մի մանկահասակ կին, դուռը բաց անելով, յայտնվեցաւ շէմքի վրա։

—Ի՞նչ էք կամենում, հարցրեց նա, ուշադրութեամբ նայելով օտարականի վրա, թէև խաւարի մէջ դժուար էր նրան ճանաչել։

—Ճանապարհից մոլորված եմ, ի սէր Աստծու, մի անկիւն շնորհեցէք ձեր տան մէջ, որ փոքր ինչ հանգստանամ։

Այդ խօսքերը այնպիսի մի ողորմելի եղանակով արտասանեց նա, որ տանտիկինը խղճալով, ներս հրաւիրեց։

Երբ մտան խրճիթը, տանտիկինը իսկոյն ճրագ վառեց, այժմ միայն տեսաւ իր հիւրի այլանդակված կերպարանքը, որ աւելի սարսափելի էր իր պատառոտած և աղտոտված հագուստի մէջ։

Խրճիթում ուրիշ ոչ ոք չը կար. մի քանի երեխաներ պառկած էին թոնրի մօտ, փսիաթի վրա և ծածկված էին ցնցոտիներով։ Չը նայելով դառն չքաւորութեանը, որ ամէն կողմից աչքի էր զարկում, տանտիկինը առաջարկեց հիւրին, արդեօք չէ՞ր կամենայ նա մի բան ուտել։

—Շնորհակալ եմ, պատասխանեց երիտասարդը, —ուտելու ախորժակ չունեմ, ինձ տուեցէք միայն խմելու ջուր։

Տանտիկինը տուեց նրան ահագին թասը լիքը ջրով։ Երիտասարդը կէսը խմեց և թասը դրեց իր մօտ, որ մնացածն էլ խմէ։ Կարծես, նրա ներսում կրակ էր վառվում, որ պէտք էր հանգցնել։

—Դուք տանը մենակ էք, հարցրեց երիտասարդը իր չուրջը նայելով։

—Մենակ եմ, պատասխանեց տանտիկինը, —մարդս տանը չէ։

—Ո՞ւր է գնացել։

—Գնացել է կռուելու։

—Ո՞ւմ դէմ։

—Պարսիկների դէմ։

Երիտասարդը հասկացաւ, որ թշնամու տան մէջ է ընկել և աշխատեց ծածկել իր ով լինելը։ Տան տղամարդը գնացել էր պարսիկների դէմ կռուելու, կը նշանակէ, նա մտել էր Դաւիթ բէկի խմբի մէջ, կը նշանակէ՝ նա նոյն կամաւոր զինուորների թւումն էր, որ այս գիշեր ջարդեցին իր հօր և իր զօրքերը։

Տանտիկինը նստեց իր երեխաների անկողնի մօտ։ Երիտասարդը նստած էր նրանից փոքր ինչ հեռու կապերտի կտորի վրա։ Նա մտատանջութեան մէջ էր, թէ ինչ կը լինի իր դրութիւնը, եթէ այդ կինը կը ճանաչի իրան։ Մտածեց կաշառել նրան։

—Երևի, ձեր ամուսին այրը աղքատ է, հարցրեց նա, դարձեալ նայելով իր չուրջը։

—Տեսնում էք իմ խրճիթը, պարոն, էլ ինչու էք հարցնում, պատասխանեց տանտիկինը մաղձոտ կերպով։—Անիծվի՜ մէլիք Դաւիթը, նա ոչ մի գիւղացու մօտ ուտելու հաց չի թողել։ Հինգ օր չը կայ, որ մեր տան կայքը ծախել տուեց հարկերի փոխարէն։

Երիտասարդը բարկութիւնից գունաթափվեցաւ։ Նրա աչքի առջև նզովում էին, հայհո-

յում էին իր հօրը։ Բայց նա զսպեց իրան և ոչինչ չը պատասխանեց։ Այդ նզովքը, ընդհակառակն, սկսեց նրան փոքր առ փոքր հանգստացնել, որովհետև դրանից կարելի էր եզրակացնել, որ տան տիրուհին չէ ճանաչում իրան. եթէ ճանաչելու լինէր, չէր համարձակվի որդու մօտ հայհոյել հօրը։

Եւ իրաւ, նա սկզբից չը ճանաչեց, բայց երբ աւելի ուշադրութեամբ նայեց նրա վրա, իսկոյն ճանաչեց, որ դա նոյն չարագործի որդին էր, որ Ցամեխի ամբողջ վիճակը սարսափի մէջ էր պահում, որ աղքատութիւնը տարածել էր ոչ միայն իր տան մէջ, այլ բոլոր գիւղացիների խըրճիթներում։ Անողորմ մարդու նոյնպէս անողորմ որդին իրան լաւ ծանօթ էր։ Շատ անգամ նրան տեսել էր իրանց գիւղում հարկերը հաւաքելիս, կամ գիւղացիներին ծեծելիս։ Բացի դրանցից նա ունէր մի բնական նշան, որ միանգամ նրան տեսնողը, միւսանգամ պատահելու ժամանակ, իսկոյն կարող էր ճանաչել։ Նրա աչքերից մէկը սև գոյն ունէր, միւսը կապոյտ։

Բայց ինչու լռեց նա, ինչու ոչինչ չը պատասխանեց, երբ լսեց աղքատ կնոջ նզովքը իր հօր մասին։ Մի ուրիշ ժամանակ այսպիսի մի խօսք բաւական էր, որ Ցամեխի մէլիքի հզօր որդին հրամայէր անդգամին խեղդելին։ Այժմ ինչու համբերեց նա։ Եւ ինչու նա մենակ էր,

ճուր էին նրա բազմաթիւ ծառաները։ Այս գիշերային անագան պահուն, այսպէս պատառոտված, ցեխերում թաթախված, նա որտեղից էր գալիս։—Ահա այդ հարցերը ծագեցան տանտիկնոջ գլխում, երբ նա բաւական քննողական աչքով հետազօտեց երիտասարդի աննախանձելի դրութիւնը։

Տանտիկնոջը դժուար չէր հասկանալ, որ երիտասարդը յաղթված և պատերազմի դաշտից փախած պէտք է լինի։ Բէկի կռիւների համբաւը արդէն տարածվել էր ամեն տեղ, բոլորը նրա մասին էին խօսում։ Նա լսել էր և այն, որ Գաւիթ ուրացողը իր որդու հետ հաւաքել են բազմաթիւ զօրք, որ արգելեն բէկի Ցամեխի սահմանը մտնելը։ Այժմ ուրացողի որդին, ողորմելի դրութեան մէջ, իր խրճիթում ապաստան էր գտել։ Այժմ ամեն ինչ պարզ էր տանտիրուհու համար։ Իսկոյն ծագեց նրա գլխում մի միտք և նրա շրթունքը զգալի կերպով դողդողացին։

—Ձեր խրճիթում չը կա՞յ մի առանձին տեղ, հարցրեց երիտասարդը։

—Ի՞նչու համար է, ասաց տանտիկինը։

—Ես սաստիկ յոգնած եմ, կամենում եմ փոքր ինչ հանգստանալ, կը ցանկանայի առանձին տեղում պառկել, որ ինձ ոչ ոք չը խանգարէր։

«Նա կամենում է թաքնվել»... մտածեց կինը և մի և նոյն ժամանակ նրա դէմքի վրա փայլեց մի չարագուշակ ուրախութիւն։

—Իմ ամբողջ տունը ձեր աչքի առջեն է, պատուելի պարոն, պատասխանեց կինը,—տեսնում էք, որ առանձին տեղ չունեմ։ Բայց եթէ յարմար կը համարէք, ես ձեզ ցոյց կը տամ մի տեղ։

Նա վեր առեց ճրագը, և իր հիւրի ճանապարհը լուսաւորելով, տարաւ նրան բակը, և մի անկիւնում ցոյց տուեց փոքրիկ շինվածք նեղ դռնով։ Այստեղ մի ժամանակ հաւաբուն էր, բայց երբ հարկահանները (այսինքն նոյն իսկ հիւրը) տարան հաւերը, այնուհետև այդ շինվածքը մնաց դատարկ։ Այնտեղ ժամանակ առ ժամանակ, անձրևային եղանակներում պառկում էր տանտիրոջ շունը, և այժմ աւելի շան որջ էր, քան թէ հաւաբուն։ Երիտասարդը գլուխը ներս տարաւ, նայեց, ասելով.

—Վատ չէ, դուք միայն մի չոր տարածեցէք, որի վրա կարելի լինէր պառկել։

—Ես ձեզ համար բարձ էլ կը բերեմ, ասաց տանտիկինը և վազեց դէպի խրճիթը։

Երկիւղը այն աստիճան տիրել էր երիտասարդի սրտին, որ նա պատրաստ էր այդ շնաբունի մէջ ես ապաստան գտնել։ Նա գիտէր, որ բէկի մարդիկը իրան հետամուտ եղան, գիտէր, որ հի-

մոյ որոնում են իրան,—և դրանից աւելի յարմար, աւելի անկասկած տեղ գտնել չէր կարող իր գլուխը ազատելու համար։ Պէտք էր մի փոքր հանգստանալ, մի փոքր կազդուրել սպառված ուժերը, որ կարող լինի, դեռ արևը չը ծագած, շարունակել իր փախուստը։

Մի քանի րոպէից յետոյ տանտիկինը վերադարձաւ, բերելով իր հետ մի փալասի կտոր, մի բարձ և մի վերմակ։ Աւելով շնաբունի անմաքրութիւնները մի կողմ տանելով, պատրաստեց նա իր հիւրի անկողինը։

—Դուք մի քանի րոպէ առաջ գանգատվում էիք ձեր աղքատութեան վրա, ասաց նրան երիտասարդը.—ահա ձեզ տալիս եմ բոլորը, ինչ որ ինձ մօտ ունեմ. դրանով դուք կարող էք ուղղել ձեր դրութիւնը։

—Ձեր արծաթը թող ձեզ մօտ մնայ, պատասխանեց կինը.—մենք սովորութիւն չունենք Աստուծոյ հիւրերից փող ընդունելու։

—Բայց ես մի շատ թեթև բան կը խնդրէի ձեզանից։

—Ինչ որ կամենում էք հրամայեցէք։

—Դուք ձեր հիւրի այստեղ լինելը բոլորովին գաղտնի պիտի պահէք։ Իսկ պատճառները յետոյ կիմանաք։

Այդ մասին անհոգ կացէք, պարոն, դուք

կարող էք հանգիստ քնել այստեղ։ Ինձ համար մի և նոյն է, թէ դուք ով էք, կամ ինչ հանգամանքներից ստիպված ձեզ թաքցնում էք։ Բաւական է, որ ես մի լաւութիւն արած կը լինեմ ձեզ։ Ինքս լաւ եմ հասկանում, որ պատերազմական ժամանակ է, քիչ բաներ կարող են պատահել մարդիկների հետ...

—Շնորհակալ եմ բարեխիղճ կին, ասաց երիտասարդը և մտաւ շնաբունի մէջ,— ես հաւատացած եմ, որ դուք կը կատարէք ձեր խոստումը։

Այն մարդը, որ սովորած էր գեղեցիկ սենեակներում, մետաքսից պատրաստած փափուկ անկողինների մէջ պառկել, տարածվեցաւ կապերտի կտորի վրա, գլուխը դրեց կաւէ բարձի վրա, որ լցրած էր խոտով և մի քրքրված վերմակով ծածկվեցաւ։ Այդ ողորմելի անկողինը նա ինքն էր պատրաստել իր համար։ Դա մի պատիժ էր, որ Աստուած ցոյց էր տալիս նրան, ասելով. «հիմայ քո անձի վրա փորձիր, թէ ինչ բան է աղքատութիւնը. քանի հազար ընտանիքներ դու զրկել ես հացից և հագուստից. հիմայ տես, թէ ինչ տեսակ տեղում են պառկում քո զոհերը»...

Բայց երիտասարդը ամենևին ուշադրութիւն չը դարձրեց իր կացութեան վրա։ Նրա զգայա-

րանքները այն աստիճան բթացած էին, որ ամենևին չէր զգում շնաբունի մէջ տիրող անտանելի գարշահոտութիւնը։ Նրա յոգնած, ջարդված անդամները իսկոյն հրաւիրեցին մի խորին և հանգիստ քուն, որ երբէք չէր վայելած իր հօր տան մետաքսեայ անկողիններում։

Տանտիկինը ձեռքի ճրագը հանգցնելով, կանգնած մնաց շնաբունի դրան մօտ և երկար ուշադրութեամբ լսում էր քնած հիւրի խռմփալու ձայնը։ Եթէ մէկը խաւարի մէջ կարող լինէր նշմարել այդ մանկահասակ կնոջ դէմքի ուրախ արտայայտութիւնը, կը հասկանար, թէ որպիսի անսահման հոգեկան բերկրութեան մէջ է գտնվում նա։ Իր երկրի տիրող իշխանի որդուն, իր հարստահարչին նա կոխել էր շնաբունի մէջ։ Դա մի կատակ էր, մի դառն և չար կատակ։ Ուրիշ կերպով վրէժխնդիր լինել չէր կարող նա, բայց դրանով ևս չը բաւականացաւ։

Երբ բոլորովին համոզվեցաւ, որ նա քնած է, հեռացաւ շնաբունից, դիմեց դէպի բակի դուռը, ձեռքը տարաւ փականքին, տեսաւ, որ կողպված է։ Թէև դուռը ինքն էր կողպել, բայց կամենում էր նորից ստուգել։ Յետոյ մտաւ խըրճիթը և կրկին վառեց ճրագը։ Մօտեցաւ պառկած երեխաներին, նրանք նոյնպէս քնած էին, բոլորը մէկ վերմակի տակ։ Նա ուղղեց վերմակը, որ անհանգիստ երեխաները մի կողմ էին

գցել։ Եւ ապա սկսեց ճրագով խրճթի քունջուպուջախը որոնել։ Նա անդադար վեր էր առնում այս և այն առարկաները, նայում էր և մի կողմ էր դցում։ Կարծես, նրանք չէին յարմարվում մի նպատակի, որի համար կամենում էր ծառայեցնել։ Յետոյ գտաւ մի կոտրած դանակ, փորձեց ձեռքի վրա, տեսաւ որ շատ բութ էր։ Դանակը նոյնպէս մի կողմ դրեց։ Վերջապէս գտաւ մի թաւլամեխ. *) այդ լաւ էր, բայց պէտք էր մի ուրիշ գործիք ևս նրան ցանկացած տեղը խրելու համար։ Վեր առեց քուփթայ ծեծելու օթակը։ **) Այդ երկու զէնքերով դիմեց նա դէպի շնաբունը։ Կատուի նման իր քայլերը այնքան ուշիկ-ուշիկ էր փոխում, որ ամենևին ձայն չէր լսվում։ Մի քանի րոպէ կանգնեց շնաբունի դրան առջև, ականջ էր դնում։ Երիտասարդը ոչ միայն ծանր կերպով խռնփում էր, այլ սկսել էր քնի մէջ խօսել։ Այդ աւելի հաստատ նշան էր, որ նա արթուն չէ։

---

*) Թաւլամեխ նշանակում է ախոռատներում գործ ածվող երկաթէ մեծ մեխ, որ գլխի կողմում օղակ ունի և այնտեղից կապում են անասուններին։

**) Օթակ նշանակում է փայտից շինած մեծ մուրճ։

Նա զգոյշ կերպով մտաւ շնաբունի մէջ, ճրագը վառեց մի կողմ դրեց և սկսեց նայել երիտասարդի վրա։ Շնաբունը այնքան նեղ էր, որ դժուար էր արձակ շարժումներ գործել, այսուամենայնիւ, նա առանց մի ձայն հանելու, տեղաւորվեցաւ երիտասարդի գլխի մօտ։ Նա քնած էր քամակի վրա։ Գլուխը թեքվել էր դէպի բարձի եզրի կողմը։ Սկսեց կամաց-կամաց գլուխը տանել դէպի բարձի մէջ տեղը, և նրան այնպիսի դիրք տալ, որ ճակատը դէպի վեր լինի, իսկ ծոծրակը բարձի վրա դրած։ Այդ գործողութեան ժամանակ յանկարծ նրա ձեռքերը սկսեցին դողալ. խղճահարութեան նման մի զգացմունք սկսեց տանջել նրան։ Նա մեղանչում էր հիւրասիրութեան դէմ, մեղանչում էր տուած խոստման պահպանելու դէմ։ Այդ մարդը ապաստան էր գտել նրա խրճթում, երկրի իշխանը պատսպարվել էր մի աղքատ կնոջ հովանաւորութեան ներքոյ։ Ի՞նչպէս դաւաճանել նրան, ինչպէս մեղանչել խղճի և ազնուութեան դէմ։ Այդ յանցանք չէ՞ր լինի, մի մեծ և սարսափելի յանցանք։ Նրա սիրտը սկսեց սաստիկ բաբախել։ Պատրաստ էր վեր կենալ, թողնել և հեռանալ այդ զարհուրելի բնակարանից։

Այդ միջոցին երիտասարդը դեռ շարունակում էր խօսել քնի մէջ։ Նրա անկապ, խառնափնթոր խօսքերից կինը խիստ պարզ որոշեց այդ

նախադասութիւնը՝ «պէտք է կոտորել բոլոր բէկեաններին»... *)

Նա բոլորովին կատաղեց այդ խօսքերը լսելու ժամանակ: Նա ինքը պատկանում էր նոյն կուսակցութեանը: Նրա ամուսին այրը նոյնպէս բէկեան էր, և բէկի կամաւորների թւում, գուցէ հէնց նոյն ժամում, կռւում էր նոյն մարդուզօրքերի հետ, որ այժմ տարածվել էր իր առջև, որի կեանքը այդ րոպէում իր ձեռքումն էր·

«Դրանց պէտք չէ խնայել»... ասաց նա իր մտքում և նրա աչքերը վառվեցան կատաղի բարկութեամբ,—«որքան մարդիկ են կոտորել դրանք, որքան կնիկներ են անբախտացրել... չը կայ մի գիւղ, չը կայ մի խրճիթ, որ դրանց ձեռքով ոչնչացած չը լինի...: Դրանց պէտք չէ խնայել»...

Վերջին խօսքերի ժամանակ նա խաչակնքեց իր երեսը, ահագին երկաթեայ մեխի սուր ծայրը դրեց երիտասարդի ճակատի վրա և օթակով այնպէս սաստիկ զարկեց, որ մեխը մինչև կէսը խրվեցաւ նրա գլխի մէջ: Նա կրկնեց զարկը և տաք արիւնը դուրս ցայտեց վէրքից: Երիտասարդը գործեց մի քանի ցնցողական շարժումներ և հանգստացաւ:

*) Բէկեան կոչվում էին Դաւիթ բէկի կուսակիցները:

կինը իսկոյն դուրս եկաւ, իր ետևից կողպելով ննջարանի դուռը:

ԺԱ.

Տաթևի վանքի բոլոր խուցերը շինված էին տաշած քարից, ունէին նեղ լուսամուտներ, նոյնպէս քարէ շրջանակներով, որոնց միջով մի կատու միայն կարող էր անցկենալ: Շատ հասկանալի է, որ նրանք փեղկերի պէտք չունէին, կէս թերթ թուղթ բաւական էր ամբողջ լուսամուտը կալելու համար:

Խուցերից մէկի մէջ դրած էր մի կոճղ, որ տեղացիք «քունդա» էին կոչում, դա կաղմարարների մամուլի նմանութիւնն ունէր և յատկապէս շինված էր բանտի գործածութեան համար: Մի կալանաւորի ոտները ամրացրած էր այդ կոճղի մէջ: Նա պառկած էր քամակի վրա և անկարող էր շարժվել, որովհետև թևքերը քամակի կողմից պրկած էին չուանով, որի երկու ծայրերը կապել էին խուցի սիւնին:

Դուռը բացվեցաւ, վանքի աբեղաներից մէկը ներս մտաւ: Կալանաւորը թէև քնած չէր, բայց գտնվում էր մի տեսակ թմրած դրութեան մէջ: Դռան ճռոցը լսելով, նա աչքերը բաց արեց: Վանքի զինված շաթրներից երկուսը կանգնած էին դրսում: Աբեղան իր ետևից դուռը կողպելով, մօտեցաւ կոճղին, թուլացրեց նրա գալերան-

ները *), կալանաւորի ոտները դուրս բերեց։ Նա նստեց, բայց թևքերը կապված մնացին։

Կալանաւորի դէմքը բոլորովին այլանդակված էր, աչքերում վառվում էր մի տեսակ տենդային կրակ, մօրուքի և գլխի մազերը անկարգ կերպով խճճված էին։

—Դուք երազահան ունե՞ք, հայր սուրբ, դարձաւ նա դէպի աբեղան։

—Չունեմ, բայց երազների միտքը հասկանում եմ, պատասխանեց աբեղան, նստելով նրա մօտ։

—Երևի, երազ էք տեսել, մէլիք։

—Տեսել եմ, շատ վատ երազ, ասաց կալանաւորը հոգւոց հանելով։—Ֆաթալի խանի ընծայած խալաթը երազումս այրվում էր... Ինչքան էլ աշխատում էի հանգցնել, ինչքան էլ ջուր էի ածում, նա աւելի և աւելի բոցավառվում էր...։ Վերջը այրվեցաւ, բոլորովին մոխիր դարձաւ...

—Այդ երազը այնքան պարզ է, որ ամենևին բացատրութեան կարօտութիւն չունի, ասաց աբեղան։—Ֆաթալի խանի ձեզ ընծայած խալաթը նրա ձեզ տուած իշխանութեան նշանակն էր. խալաթը այրվեցաւ, նրա հետ էլ վերջացաւ ձեր իշխանութիւնը

---

*) Ժողովրդական բառ, կազմված է գալարել բառից, նշանակում է որ և իցէ մեքենայի այն պտուտակը, որ ամրացնում է, հուփ է տալիս։

—Ի՞նչպէս, հարցրեց կալանաւորը կատաղած կերպով։

—Միթէ չէք հասկանում, մի լաւ նայեցէք, թէ որտեղ էք գտնվում և ինչ դրութեան մէջ...

—Այդ ես հասկանում եմ... ասաց կալանաւորը խորին վրդովմունքով.—եթէ խանը մի ժամ առաջ հասցնէր ինձ իր զօրքերը, ես այստեղ չէի գտնվի։ Բայց նրանք հասան այն ժամանակ, երբ ամեն ինչ վերջացած էր...

—Ես յոյս ունէի գտնել ձեզ, մէլիք, բոլորովին զղջացած, բոլորովին փոշմանած, խօսեց աբեղան ծանր կերպով։—Բայց դուք, ինչպէս երևում է, դեռ չէք կամենում հեռանալ հին մեղքերից, դեռ չէք մտածում թողնել ձեր առաջվայ խորհուրդները, որոնք այնքան վնասներ, այնքան դառն ցաւեր պատճառեցին մեր հայրենիքին։ Միթէ ձեր խիղճը բոլորովին մեռած է, միթէ նրա մէջ չէ մնացել մի նշոյլ անգամ կենդանութեան։ Ի՞նչի համար կուզէիք պարսիկ զօրքերը, ո՞ւմ դէմ պիտի պատերազմէիք, մեր հայրենիքի ազատչի դէմ, հա՞։

—Ոչ, մի աւազակի դէմ, մի ապստամբի դէմ, մի անզգամ խռովարարի դէմ, որ ձգտում է հայոց իշխան դառնալ։

—Նա իր գործով արժանի է ոչ միայն հայոց իշխան դառնալու փառքին, այլ աւելի ևս մեծ փառքի, պատասխանեց աբեղան։

—Նա իր գործով արժանի է գլխատման, արժանի է, որ մի թոկ կապէին նրա պարանոցին և քարշ տային Տաթևի բոլոր փողոցներով։

Խօսողը Տաթևի մէլիք Դաւիթ ուրացողն էր։ Մենք արդէն գիտենք, թէ ինչպէս վերջացաւ նրա կռիւը բէկի հետ, գիտենք, նոյնպէս, թէ ինչպէս ջարդվեցան պարսից և հայոց զինուորներից կազմված նրա զօրքերը։ Իր անաջողութիւնից յետոյ ուրացողը մի քանի ձիաւորներով փախաւ դէպի Բարգիւշատի կողմերը, որ իր մեծաւորից՝ Ֆաթալի-խանից օգնութիւն ստանայ և կրկին վերադառնայ բէկի վրա։ Բայց Բայինդուր իշխանը նրան հետամուտ լինելով, փախչելու միջոցին բռնեց։ Ֆաթալի խանի օգնական զօրքերը հասան նրան այն ժամանակ, երբ արդէն կալանաւորված էր։

Նրա այցելուն, որ եկել էր հոգևորապէս մխիթարել նրան և դարձի բերել, Խորէն հայր սուրբն էր, վանքի միաբանութեան բաւական զարգացած վարդապետներից մէկը, որ իր երիտասարդ հասակում միացրել էր իր մէջ կրօնի և քաջութեան առաքինութիւնները։ Հանդիպելով կատաղի յամառութեան ուրացողի կողմից, նա սաստիկ վշտացաւ, որ մի հայ մէլիք կարող էր բարոյապէս այնքան ընկած լինել, որ պարսից լուծը աւելի գերադասէր, քան թէ տեսնել մի անկախ հայոց իշխանութիւն։

—Մէլիք Դաւիթը չի խոնարհվի աւազակ Դաւթին, ասաց նա դառնութեամբ։

—Դուք պիտի խոնարհվէք Աստուծոյ կամքի և ժողովրդի պահանջի առջև, մէլիք, պատասխանեց աբեղան հանդարտ կերպով։—Բէկը ժողովրդի պահանջի արտայայտութիւնն է։ Ուրիշ ապացոյց բերել պէտք չէ. գործը ինքը վկայում է իր համար։ Դուք տեսաք, թէ ինչպէս ժողովուրդը առանց հրաւէրքի, ինքնակամ հետևեց նրան։

—Տեսայ, պատասխանեց կալանաւորը հեգնական ժպիտով։—Բայց ինչ ասել է ժողովուրդ։ Ժողովուրդը մի կտոր փափուկ մոմ է, նրան դէպի ո՛ր կողմը և հուփ տաս, դէպի այն կողմը կը թեքվի. նրան ինչ կաղապարի մէջ և գնելու լինիս, այն ձևը կը ստանայ։ Այսօր բէկը յաղթող հանդիսացաւ, ժողովուրդը նրան կը հետևի, իսկ եթէ էգուց ես յաղթելու լինիմ, ինձ կը հետևի։ Ես աւելին կասեմ. ժողովուրդը մի հլու գրաստ է, մի մեծ աւանակ է. նրա երասանակը (նօխտան) ում ձեռքը որ ընկաւ, իր ետևից քարշ կը տայ, կը տանէ ամեն կողմ, որ կողմը և ցանկանում է։ Ժողովուրդը սեպհական կամք չունի։

—Դուք սխալվում էք, մէլիք, ասաց աբեղան, —ժողովուրդը սեպհական կամք ունի։ Այդ ուրիշ բան է, որ նա երբեմն ճնշված, երբեմն կաշկանդված է լինում և իր կամքը արտայայ-

տել չէ կարողանում։ Բայց երբ նա կտրեց իր կապանքները, այլ ևս նրա թափին ընդդիմադրել անկարելի է։ Նա դառնում է մի հսկայական հեղեղ և փոթորկի նման որոտում է, ալեկոծվում է, առաջ է վազում, խորտակելով, ոչնչացնելով իր առջևից ամեն տեսակ խոչնդոտներ։ Ո՞ր մահկանացուն կարող է ժողովրդի կատաղի հոսանքի առաջը կտրել։ Դժուար է միայն շարժել նրան, երբ միանգամ շարժվեցաւ, այլ ևս այնուհետև կանգ չի առնի, որպէս մի ահագին ժայռ, որ բեկվում է լեռան բարձրութիւնից, գլորվում է դէպի ցած, և առաջ ընթանալով, հետզհետէ աւելի և աւելի սաստկացնում է իր թափը....

—Մինչև ընկնում է անդունդի մէջ... կտրեց կալանաւորը աբեղայի խօսքը։—Բայց գիտէ՞ք, հայր սուրբ, այդ ձեր նկարագրած ահագին քարաժայռը իր գլորման ընթացքում, միւս ժայռերին զարկվելով, որքան փշրվում է, որքան մաշվում է, և միայն նրա կտորտանքն են հասնում մինչև սարի ստորոտը...

—Գիտեմ... ինչպէս էլ և լինի, շարժման մէջ կեանք կայ։

—Դիակի շարժումները կեանքի նշաններ չեն, նրանք բոլէական ցնցումներ են միայն, պատասխանեց կալանաւորը և սովորական դառն ծիծաղը դարձեալ երևաց նրա գունաթափ շըր-

թունքի վրա։— Հայ ժողովուրդը կատարեալ դիակ է։ Դիակին կարելի է ձեռքով բարձրացնել, ոտքի վրա կանգնեցնել, բայց հէնց որ բաց թողեցիր, իսկոյն կընկնի, կը տարածվի գետնի վրա, դարձեալ անշարժ կը մնայ։

—Թէ որքան դուք սխալվում էք ձեր կարծիքի մէջ հայոց ժողովրդի վերաբերութեամբ,— ես այդ մասին հարկաւոր չեմ համարում խօսել, մելիք, ասաց աբեղան։—Բայց դիցուք թէ այդպէս լինի, որպէս դուք կարծում էք, թէ հայ ժողովուրդը մի դիակ է. մի՞թէ դուք չէք մտածում կեանք տալ դիակին, քանի որ ինքներդ նոյն ժողովրդի ծնունդն էք, քանի որ ինքներդ ազգով հայ էք, թէև մահմեդական կրօնը ընդունած։

—Ես, եթէ կը ցանկանայի հայ ժողովրդի հետ գործ ունենալ, ոչ այլ կերպով չէի ընդունի, բայց միայն նրա գլուխը լինել և ոչ ոքի ստորադրեալ։

Վերջին խօսքերը բարկութեան չափ վրդովեցրին աբեղային, և նա չը կարողանալով պահպանել իր սառնասրտութիւնը, պատասխանեց.

—Դուք դեռ ձեր հին ցնորքների մէջն էք գտնվում, մելիք։ Ով որ ձգտում է ժողովրդի գլուխ լինել միայն նրան կեղեքելու, միայն նրան կողոպտելու համար, եթէ հասնելու ևս լինի իր նպատակին, չէ կարող երկար պահպանել իր

գիրքը: Բռնաւորների կեանքը կարճ է լինում: Ժողովրդի գլուխ լինելու համար պէտք է պաշտպանել նրա բարին, պէտք է ունենալ նրա հետ նոյն յարաբերութիւնները, ինչ յարաբերութիւններ որ ունի մարմնի բնական գլուխը մարդու անդամների և ամբողջ կազմուածքի վերաբերութեամբ: Դուք անբնական գլուխ էիք, մէլիք,—հայ պարսկի հոգով, պարսկի սրտով: Այս պատճառով էլ ժողովուրդը մերժեց ձեզ: Դուք այժմ ամեն ինչ կորցրել էք. ձեզ մնում է երկու բան՝ կամ զղջալ և բէկից ներումն ստանալ, կամ կրել ձեր դատապարտութեան պատիժը: Որը կամենում էք, ընտրեցէք: Ես հաւատացած եմ, որ բէկը այնքան մեծահոգի է, որ կը ներէ ձեզ, եթէ զղջալու լինիք:

—Ես ինձ չեմ հասցնի այն ստորութեան, որ որ և իցէ հայից ներումն խնդրեմ, պատասխանեց կալանաւորը արհամարհանքով:— Ինչ լինելու է, թող լինի. ես կը խոնարհվեմ ճակատագրի առջև:

—Ձեր ճակատագիրը դրանով կը վերջանայ, որ բէկը կը հրամայէ այսօր գլխատել ձեզ:

—Այդ ինձ համար մի և նոյն է, բայց ես հաւատացած եմ, որ իմ որդին վրէժխնդիր կը լինի հօր արեան համար:

—Այդ յոյսը մի ունեցէք, ձեր որդին չէ կարող այդ անել:

—Կարող է. Նա պարսիկ զօրքերով կը ոչնչացնէ բէկի բոլոր զօրութիւնը:

—Եթէ կենդանի լինէր.... Ձեր որդին սպանված է:

—Որդի՜ս... սպանվա՜ծ է... գոչեց նա կատաղի հառաչանքով և նրա գլուխը թեքվեցաւ կոճղի վրա:

Աբեղան հասցրեց երկրորդ և աւելի սաստիկ հարուածը.

—Այո, սպանված է. գիտէ՞ք ում ձեռքով. մի գիւղացու աղքատ կնոջ ձեռքով, որը նոյն ժողովրդի զաւակն է, որին մի րոպէ առաջ գլուխ էիք կոչում: Տեսնում էք, այդ ժողովուրդը գիտէ հարկաւորած ժամանակ պատժել իր բռնաւորներին: Նա զգում է անիրաւ ձեռքից կրած վէրքը և աշխատում է վրէժխնդիր լինել: Բայց գլուխները ոչինչ չեն զգում:

Վերջին խօսքերը չը լսեց կալանաւորը: Բոթաբեր լուրը միանգամայն խորտակեց թէ նրա սիրտը և թէ նրա յոյսերը: Մինչև այժմ նա հանգիստ էր, հանգիստ էր գլխաւորապէս այն պատճառով, որ մտածում էր, եթէ իրան կը գլխատեն, եթէ իրան կախաղան կը բարձրացնեն, դարձեալ կը թողնէ երկրի վրա իր շարունակութիւնը—որդուն: Որդին կը պահպանէ անիրաւութեամբ ձեռք բերած իշխանութիւնը: Իսկ այժմ բոլորը կորաւ, բոլորը ոչնչացաւ. փառա-

սիրութեան ցանկութիւնը աւելի զօրեղ էր նրա մէջ քան որդեսիրութեան զգացմունքը։ Եւ նա ափսոսում էր ոչ այնքան սպանված որդուն, որքան կորած փառքը։ Արտասուքի ոչ մի կաթիլ չը յայտնվեցաւ նրա անգութ աչքերում, որ այժմ լի էին վայրենի կատաղութեամբ, միայն երբեմն խորին հառաչանքներ դուրս էին թռչում խստասիրտ մարդու ջախջախված կուրծքից։ Երբ նա փոքր ինչ հանգստացաւ, հայր սուրբը խօսեց.

—Այսպիսի յուսահատական րոպէներում միակ մխիթարութիւնը մարդ կարող է գտնել Աստուծոյ մէջ։ Դիմեցէք Աստծուն, մէլիք, հեզութեամբ և խոնարհված սրտով, նրանից թողութիւն խնդրեցէք։ Ձեր աշխարհային թշուառութեամբ անցաւ, գոնէ միւս կեանքում դուք երջանիկ կը լինէք, եթէ կը զղջաք, եթէ կը խոստովանվէք ինձ մօտ ձեր մեղքերը։

—Եթէ ես գործել եմ մի մեղք, լաւ է, որ նրա մէջ մեռնեմ, ասաց կալանաւորը դառն ատելութեամբ.—դա կը լինի մի ազդու բողոք բարութեան Աստուծոյ դէմ, որ որդուս ինձանից խլելուց յետոյ՝ ինձ ձգեց այդ կապանքների մէջ։

—Դուք հայհոյում էք Ամենակալի արդարադատութիւնը, մէլիք։ Դարձեալ կրկնում եմ, այսօր բէկը կը տայ ձեր մահուան դատավճիռը.

դեռ բաւական ժամանակ ունէք զղջալու և ներումն խնդրելու։

—Ես ներում խնդրելու սովորած չեմ, ոչ երկնքից և ոչ երկրի վրա բնակվող մարդերից։ Լաւ է, որ ինձ հանգիստ թողնէք, հայր սուրբ։

Աբեղան վեր կացաւ, ներս կանչեց դրսում կանգնած չաթրներին, կրկին կալանաւորի ոտները ամրացրին կոճղի մէջ, և խուցի դուռը կողպելով, նրան թողեցին այնտեղ միայնակ։

Նոյն աւուր կէսօրային պահուն Տաթևի հրապարակի վրա հաւաքվել էր խուռն բազմութիւն։ Բոլորը անհամբերութեամբ սպասում էին հանդիսատես լինելու երկրի բռնաւորի և աւերիչի մահուան պատժին։ Բոլորի աչքերը դարձրած էին դէպի վանքի ճանապարհը, որտեղից պէտք է բերէին մահապարտին։

Հրապարակի մէջտեղում կանգնած էին զինված մարդիկ, թողնելով իրանց միջնավայրում բոլորակ տարածութիւն։ Այստեղ դանակը սրելով ման էր գալիս արբած դահիճը, ոտքից գլուխ կարմիր հագնված։

—Ի՛նչպէս արդար է Աստուծոյ դատաստանը, ասաց մի գիւղացի իր մօտ կանգնած հանդիսականին.—հինգ տարի առաջ չարագործը հէնց այս հրապարակի վրա գլխատել տուեց քսան և հինգ անմեղ երիտասարդներ, և որպիսի քաջ երիտասարդներ, ամեն մէկը հազար մարդու ար-

մէր։ Հիմա ինքը նոյն տեղում գլխատվում է։

—Յիշում եմ... հոգւոց հանելով ասաց միւսը.—այդ երիտասարդները պատկանում էին վանքեցի Խէչօի խմբին, որոնք ամրացել էին Ցուրայ բերդում, կողոպտում էին պարսիկ հարկահաններին, և զանազան միջոցներով սպանում էին այն հայերին, որոնք պարսիկներից պաշտօններ ընդունելով, նեղացնում էին իրանց ազգայիններին։ Չարագործը կաշառեց մի գիւղացու, և այդ անիրաւը իրան բարեկամ ձևացնելով Խէչօի մարդիկներին, իր տան դռները ամեն ժամանակ բաց էր անում նրանց առջև։ Մի գիշեր հարբեցրեց նրանց, քնացրեց, յետոյ մատնեց ուրացողի եասաւուլների ձեռքը։

Վանքի ճանապարհի վրա երևաց մի խումբ, որ շարժվում էր դէպի հրապարակը։

—Բերում են... լսելի եղաւ ամեն կողմից։

Հրապարակի վրա հաւաքված բազմութիւնից շատերը վազեցին դէպի այն կողմը. շատերը անշարժ մնացին իրանց ընտրած տեղում, որ մի ուրիշը չը կանգնէ այնտեղ, որ կարողանան լաւ տեսնել։

Բերում էին մահապարտին։ Ամեն բերանից լսվում էին անէծք, նզովք, հայհոյանք, որ խառնվում էին ուրախութեան բացականչութիւնների հետ։ Մանուկները, որոնց սիրտը աւելի անխղճութեամբ է արտայայտում ամբոխի

զգացմունքը, հարիւրներով խմբվել էին չարագործի շուրջը, թնդեցնում էին օդը իրանց աղաղակներով։ Նրանք երգում էին մի ժողովրդական ասացուածք, որ առածի ձև էր ստացել։

«Լոյսը Լուսաւորչի հաւատին,

«Վայ ուրացող մարդին»։

Երգը թռչում էր հարիւրաւոր մանուկների բերանից, և որպէս բարկութեան շանթեր, տարածվում էր դէպի ամեն կողմ։ Ոմանք մանուկներից քարեր էին վեր առնում և ձգում էին դատապարտեալի վրա։ Նա այդ միջոցին նմանում էր մի կատաղած շան, որ չորս կողմից կաշկանդված, տարվում էր դէպի խեղդանոցը։

Մահապարտին նստացրել էին սև աւանակի վրա, առանց համետի, երեսը դէպի գաւակի կողմը դարձրած։ Սանձի փոխարէն նրան բռնել էին տուել աւանակի պոչը։ Այդ խայտառակութիւնը աւելի սպանիչ էր քան թէ մահը, այն մարդու համար, որ սովորել էր հեծնել ամենաընտիր նժոյգների վրա, զարդարած թանգագին ասպազէնով։

Երբ նրան հասցրին հրապարակը, ամբոխը ճեղքվեցաւ և ճանապարհ բաց արեց։

Զինւորները մօտեցան նրան, ցած բերեցին աւանակից։ Այժմ կանգնած էին նրա մօտ երկու մարդիկ, մէկը դահիճը դանակը ձեռին, միւսը քահանան խաչը ձեռին։ Վերջինը սկսեց մխի-

թարել Թշուառին հոգևոր խօսքերով, յորդորում էր խոստովանվել և համբուրել խաչը։ Դատապարտեալը մերժեց որպէս խոստովանութիւնը, նոյնպէս և խաչի համբուրելը։ Նրան ասեցին՝ չէր ցանկանայ, որ կանչէին մի մահմեդական մօլլայ։ Այդ ևս մերժեց նա։

—Շուտով... մի ուշացրէք... աղաղակում էր ամբոխը, որ այդ ժամանակ գտնվում էր սաստիկ վրդովմունքի մէջ։

Դահիճը մօտեցաւ, կապեց դատապարտեալի թևքերն ու ոտները։ Մի ձեռքի հարուածքով նա փայտի նման ընկաւ, տարածվեցաւ գետնի վրա։

Ոչ մի դէմք ցաւակցութեան նշան չէր ցոյց տալիս, ոչ մի սիրտ չէր բաբախում նրա համար։ Բոլորի սրտերը լցրել էր նա թոյնով և դառնութեամբ։

Մանուկների բազմութիւնը, դարձեալ սկսեց եղանակել իր երգը։ Այդ երգի հնչիւնները հասան դատապարտեալի ականջներին ուղիղ այն րոպէում, երբ դահիճը բռնելով նրա մօրուքից, դանակը դրեց կոկորդի վրա։

«Լոյսը լուսաւորչի հաւատին,
«Վայ ուրացող մարդին»...

Կրկնեց և Թշուառը, իսկ դահիճը աւարտեց իր գործը։

Ամբոխի մէջ տիրեց ընդհանուր ցնծութիւն,

երբ դահիճը չարագործի կտրած գլուխը, ցցելով նիզակի ծայրին, բարձրացրեց օդի մէջ։

Այդ միջոցին սկսեցին ածել դաւուլ և զուռնայ, և դահիճը շրջապատած նուագածուներով, սկսեց նիզակի ծայրին ցցած գլուխը ման ածել Տաթևի փողոցներում։ Կնիկները դուրս էին գալիս տներից, թքում էին նրա վրա և տալիս էին դահճին մի քանի սև փող։

ԺԲ.

Դէպի Ջէվու բերդը տանող ճանապարհի մի կողմում, աղբիւրի մօտ, որ հովանաւորված էր չինարի ահագին ծառերով, նստած էին մի քանի յոգնած ուղևորներ։ Թուփերով պատած լեռների մէջ տիրում էր կէսօրվայ տօթը։ Ուղևորներից մի քանիսը պառկած էին խոտերի վրա և հանգիստ քնի մէջ էին։ Իսկ երեք հոգի, որ նոր էին հասել այնտեղ, առանձնացած էին միւսներից, նստել էին մի կողմում, ճաշում էին։ Նրանց առջև դրած էր մի կտոր պանիր և չոր հաց։

—Այնքան չորացել է հացը, որ չէ ուտվում, ասաց սեղանակիցներից մէկը։

—Առանց սամբայի հրայանը լցնել չես կարող, նրան պատասխանեց սեղանակիցներից միւսը,—այդ հացին սամբայ պէտք է։

Նա հանեց պարկի միջից խեցեղէն փոքրիկ աման, լիքը արաղով, առաջ ինքը խմեց, յետոյ տուեց ընկերներին, ասելով.

—Աստուած է վկայ, մարդու կոկորդը փափկացնում է։

Միւսներն էլ ընդունելով ամանը, խմեցին, մի և նոյն կարծիքը յայտնելով փափկացնող ըմպելիի մասին, և այժմ աւելի ախորժակով սկսեցին ուտել չոր հացը։

Երբ ճաշը վերջացած էր, նրանցից մէկը ժամացոյցի փոխարէն նայեց արևին, իր ընկերին ասաց.

—Հիմայ կարելի է ճանապարհ ընկնել, շուտով զօվը կը սկսուի։

—Կարելի է, աւելացրեց միւսը,—մեր առջևում անտառը աւելի խիտ է, արևը շատ չի նեղացնի։

—Ինչպէս էլ և լինի, պէտք է գնալ. դեռ բաւական ճանապարհ ունենք, ասաց երրորդը։ —Արեգակը ինչ կարող է անել. խօ ձիւն չենք, որ հալվենք։

Սկսեցին պատրաստվել։

Այդ միջոցին միւս ուղևորներից մէկը, պառկած տեղից գլուխը վեր բարձրացնելով, ծոյլ կերպով հարցրեց.

—Եղբայրներ, ո՞ւր էք գնում։

—Դէպի Ջէվու, պատասխանեցին նրան։

—Հիմայ Ջէվուից ամենքը փախչում են, դուք ինչ խելքով այնտեղ էք գնում։

—Ի՞նչու են փախչում։

—Չէք լսել, շուտով Ջէվուն կը պաշարվի Դաւիթ-բէկի զօրքերով։ Նրա բանակը հիմայ գտնվում է բերդից ոչ այնքան հեռու Ղարաչիման գիւղի մօտ։

—Մեզ ինչ վնաս, եթէ կը պաշարվի, ասաց երեք ընկերներից մէկը։

—Ձեզ այն վնասը կը լինի, որ վտանգի մէջ կընկնէք, պատասխանեց ուղևորը դարձեալ չը շարժվելով իր պառկած տեղից։—Շատ ախորժելի բան չէ պաշարված բերդի մէջ լինել, երբ ամեն կողմից կրակ են թափում։

—Բայց բաւական ախորժելի բան է պաշարված բերդից կռվել թշնամու դէմ, ասաց երեք ընկերներից մի ուրիշը։

—Ի՛նչ ասել կուզէ, պատասխանեց պառկած ուղևորը հեգնական կերպով,—ձեզ խիստ սաղ է գալիս թշնամու հետ կռվելը... Աւելի լաւ կանէք, որ գնաք ձեր բանին, ինչպէս տեսնում եմ, կռիւը ձեր գործը չէ։

—Բոլորովին ուղիղ է քո ասածը, խօսեց երեք ընկերներից մէկը։—Շնորհակալ եմ, եղբայր, որ մեզ զգուշացրիք. մենք արհեստաւոր մարդիկ ենք. Ջեվուի մէջ այժմ հազիւ թէ կարելի կը լինի մի աշխատութիւն գտնել, երբ ամեն մարդ իր գլխի համար է մտածում։ Մենք կը գնանք մի ուրիշ կողմ, արհեստաւոր մարդուն ամեն տեղ հացը պակաս չի լինի։

Նրանք բոլոր ժամանակը խօսում էին թուրքերէն։ Պառկած ուղևորը նկատելով, որ իր խըրատները ազդեցութիւն գործեցին երեք ճանապարհորդների վրա, գլուխը կրկին դրեց խոտերի վրա, աչքերը փակեց, սկսեց քնել, ասելով.

—Գնացէք, Աստուծուն եմ յանձնում ձեզ։

Ցոյց տալով թէ ուրիշ կողմ են գնում, նրանք դուրս եկան դէպի բերդը տանող ճանապարհից։ Բայց երբ բաւական հեռացան աղբիւրից, երբ ծածկվեցան բլուրների ետևում, իսկոյն շեղվեցան իրանց բռնած ուղղութիւնից և կրկին բռնեցին բերդի ճանապարհը։

Ճանապարհին ոչ ոք չէր երևում, միայն երբեմն պատահում էին բերդից փախստականներ, որոնք մի և նոյն հարցերն էին առաջարկում. «Ո՞ւր էք գնում, բերդը շուտով կը պաշարվի»…

Երեք ճանապարհորդներից մէկը սափրիչ էր, գոնէ այսպէս երևում էր այն բոլոր գործիքներից, որ նրա մօտ գտնվում էին։ Նա իր ամբողջ խանութը իր վրա բարձած ունէր։ Կաշեայ լայն գօտիի առջևի կողմում ունէր մի պահարան, զինուորների փամփուշտներ դարսելու պահարանի նման, այն զանազանութեամբ միայն, որ փամփուշտների փոխարէն այնտեղ խրած էին ածելիներ, մկրատներ և բութ նշտարը, որով երակներից արիւն էր բաց թողնում։ Աջ կող-

մում, նոյն գօտիից քարշ էր ընկած նրա երկայն յեսանաքարը և մի ահագին քալփաթին, որով ատամներ էր դուրս քաշում և որը աւելի յարմար էր էշի ոտներից նալեր պոկելու համար։ Ձախ կողմում, նոյն գօտիից քարշ էր ընկած նրա մեծ լագանը, որի մէջ մաղեր էր թըրջում։ Առջևից կախված էր սև ժապաւէնի նման մի երկայն կաշի, որի վրա սրում էր ածելիները։ Եթէ աւելացնենք դրանց վրա՝ մի կտրած հայելի, որ նա պահած ունէր իր ծոցում, և փոքրիկ մաղաշը, որով քթի մաղեր էր դուրս քաշում,—կը ստանանք մի օրինաւոր սափրիչի արհեստի բոլոր պարագայքը։ Մոռացանք յիշել, որ նոյն կաշեայ գօտիի խորհրդաւոր պահարաններից մէկի մէջ կար բաւական քանակութեամբ բամբակ, որից նա սափրելու միջոցին կպցնում էր ածելիով կտրած տեղերը, որ արիւնը դադարի։

Ինչպէս աչուղները ըստ մեծի մասին կոյր են լինում, այնպէս էլ գիւղական սափրիչները կամ կաղ են լինում, կամ սապատող։ Մեր վարպետը վերջին տեսակիցն էր, այն առաւելութեամբ, որ նա ունէր երկու սապատներ, մէկը մէջքի վրա, միւսը կուրծքի վրա։ Այդ երկու սապատների միջից, մի փոքրիկ գունդի նման, հազիւ երևում էր նրա գլուխը։ Նա ունէր մի ուրիշ յատկանիշ ևս. սապատողները առհասա-

րակ կարճահասակ են լինում, բայց բնութիւնը այդ մարդու վերաբերութեամբ մի սխալ էր գործել. նա բարձրահասակ էր և իր սապատներով աւելի նմանում էր ուղտի, քան թէ մի այլ արարածի։

Երկրորդ ուղևորը երիտասարդ էր. դրան սափրիչը կոչում էր իր աշակերտ, բայց աշակերտելու հասակից շատ մեծ էր նա։ Իր ճանապարհորդական մահակի ծայրին անցուցել էր նա մի փոքրիկ խուրջին և դրել էր ուսի վրա։ Այդ խուրջինի մէջ գտնվում էին նրա վարպետի միւս պարագայքը՝ զանազան տեսակ սպեղանիներ, որ լցրած էին փայտեայ փոքրիկ տուփերի մէջ։ Սափրիչը գիտէր և վիրաբուժական արհեստը։ Նոյն խուրջինի մէջ կային և զանազան կտաւեք վէրքեր փաթաթելու համար։ Բայց նրա աշակերտի քնքուշ կազմուածքը, երեսի և ձեռքերի մաքուր կաշին, որ, կարծես, դիտմամբ պատած էր թանձր կեղտով,—ցոյց էին տալիս, որ այդ դեղահասակ երիտասարդը ծնված էր աւելի վայելուչ պարապմունքի համար, քան թէ բժիշկ—սափրիչի աշակերտ լինել։

Երրորդ ուղևորը մի ամրակազմ երիտասարդ էր. նրա առողջ և զօրեղ անդամները ամեն ընդունակութիւններ ունէին լաւ բանուոր լինելու համար։ Մի տոպրակի մէջ լցրած պարագայքից, որ կրած ունէր մէջքի վրա, կարելի էր իսկոյն

հասկանալ, որ արհեստով նա հիւսն էր։ Տոպրակի մէջ կային մի քանի տեսակ սղոցներ, մեծ և փոքր ուրագներ, չափիններ և ատաղձագործի այլ գործիքներ։ Դա այն թափառաշրջիկ հիւսներից մէկն էր նմանում, որ գիւղից գիւղ ման են գալիս, շինում են կամ ուղղում են երկրագործական անօթները։

Դեռ արեգակը մայր չէր մտել, նրանք հեռուից տեսան բերդը։ Նա գտնվում էր Փուխուրութայ *) լեռների մէջ և առջևից, խոր ձորի միջով, վազում էր Հալիձորի գետը։ Անառիկ բերդը շրջապատած էր ամուր պարիսպներով, որի հպարտ աշտարակները բարձրանում էին դէպի վեր, կարծես, ձգտելով մրցութիւն անել սրածայր լեռների հետ։ Այդ բերդը առաջ պատկանում էր Ղափանի հայոց իշխաններին, իսկ այժմ նրան գրաւել էր Ասլամազ-կուլի անունով մի թուրք բռնապետ, որ ահի և սարսափի մէջ էր պահել բոլոր շրջակայքը։

Ուղևորները, որ առաջ շտապով էին գնում, երբ հեռուից տեսան բերդը, սկսեցին մեղմացնել իրանց քայլերը։

—Շտապել պէտք չէ, հարկաւոր է մտնել բերդը ուղիղ այն ժամանակ, երբ խաւարը բաւական պատած կը լինի, ասաց սափրիչը։

---

*) Ոմանք գրում են Փուխսարաթայ։

—Շուտով կը մթնի, արևը մայր մտնելու վրա է, ասաց նրա աշակերտը։

Հիւսը ոչինչ չը խօսեց, որովհետև այդ միջոցին մօտեցաւ մի ուրիշ ուղևոր, որ գալիս էր ճանապարհի հակառակ կողմից։ Նա ողջունեց առաջիններին նոյն խօսքերով, որպէս ողջունում է մահմեդականը մահմեդականին։ *) Որովհետև երեք ուղևորների թէ հագուստի ձևերը և թէ արտաքին կերպարանքը ոչինչով չէին ցոյց տալիս, որ նրանք քրիստոնեայ լինէին, թէև իրանց մէջ հայերէն էին խօսում։

—Երևի, բերդից էք գալիս, հարցրին նրանից։

—Ուղիղ բերդից, պատասխանեց նա կանգնելով։

—Ինչ խաբար կայ։

Նա պատմեց, թէ շրջակայ գիւղերի բոլոր մահմեդականները փախել, մտել են բերդի մէջ և մեծ երկիւղով սպասում են բէկի զօրքերի պաշարելուն։ Խանը ամրացնում է բերդը և բնակիչներին զէնքեր է բաժանում, որ ընդդիմա-

*) Մահմեդականը մեղք է համարում քրիստոնեային ողջունել այն արաբական խօսքերով, որ ընդունված է գործ ածել միայն մահմեդականին ողջունելու ժամանակ։ Քրիստոնեաների վերաբերութեամբ գործ են ածում ուրիշ ասացուածներ։

նան։ Բայց ժողովրդի սարսափը այնքան մեծ է, որ յուսահատութեան մէջ են ընկած։ Մօլլաները լցրել են մզկիթները, հրաւիրում են մարդկանց աղօթել և Աստուծուց օգնութիւն խընդրել։

Այդ պատմութեան ժամանակ սափրիչի դէմքի վրա երևաց բարկութեան նման մի բան, և ձեռքը դնելով ածելիների պահարանի վրա, ասաց.

—Ախ, եթէ այդ անհաւատ բէկին տային իմ ձեռքը, ես մեծ ուրախութեամբ այդ ածելիով նրա կոկորդը կը կտրէի։

—Իմ ուրագով աւելի յարմար կը լինէր նրա գլուխը ջարդել, մէջ մտաւ հիւսը։

—Ո՞ւր էք գնում, հարցրեց սափրիչը։

Ուղևորը նկատելով իր նախանձախնդիր խօսակիցների վրդովմունքը դէպի «անհաւատ բէկը», այնքան մտերմացաւ նրանց հետ և այն աստիճան հաւատաց նրանց անկեղծութեանը, որ յայտնեց իր ինչ մարդ լինելը և ուր գնալը։

—Ուրեմն դուք սուրհանդակ էք, խանից նամակ էք տանում, հարցրեց սափրիչը։

—Նամակ եմ տանում Ֆաթալի խանին, պատասխանեց սուրհանդակը.—պէտք է էգուց առաւօտեան հասցնեմ։

—Աստուած ոտներիդ զօրութիւն տայ, ասաց սափրիչը.—էգուց առաւօտեան կը հասցնես, ե

հարկէ, կը հասցնես։ Երևի, խանը օգնութիւն է խնդրում։

—Այո, օգնութիւն է խնդրում, եթէ Ջեւլուն տունվլի, նրանից յետոյ Սրտանայ բերդը, Բաղաբերդը, որտեղ նստած է Ֆաթալի-խանը, հեշտութեամբ կը տիրեն։ Այս պատճառով Ֆաթալի խանը պարտաւոր է օգնել մեր խանին։

—Աստուած յաջողէ, պատասխանեց սափրիչը մի առանձին զգացմունքով։— Շտապեցէք, եղբայր, շտապեցէք, մենք բաւական ճանապարհից յետ գցեցինք ձեզ։

Միամիտ սուրհանդակը չը նկատեց, թէ ինչպէս սափրիչը վերջին խօսքերի միջոցին նայեց հիւսի երեսին և իր յօնքերի խորհրդաւոր շարժուածքով մի գաղտնի ակնարկութիւն արեց նրան։ Հիւսը իսկոյն հասկացաւ, թէ ինչ էր կամենում ասել նա։

Սուրհանդակը մնաք բարով ասելով, կամենում էր բաժանվել իր խօսակիցներից։ Այդ միջոցին սափրիչը բռնեց նրա ձեռքից, և մի կողմ տանելով, ասաց.

—Եղբայր, այդ ճանապարհով մի գնա, ամեն րոպէ կարող ես ընկնել բէկի մարդիկների ձեռքը. սատանայի ծնունդները ամեն տեղ սար ու ձոր բռնել են. եկ, այս կողմից քեզ մի լաւ ճանապարհ կը ցոյց տամ, համ մօտիկ է, համ անվտանգ։

Այս խօսքերով նա դուրս հանեց սուրհանդակին մեծ ճանապարհից, տարաւ դէպի մի նեղ շաւիղ, որ անցնում էր թփապատ բլուրների միջով և յետոյ ծիւղաւորվում էր դէպի զանազան կողմեր։ Սուրհանդակին ես ծանօթ լինելով այդ ճանապարհը, շնորհակալութիւն յայտնեց սափրիչի բարի խորհրդի համար, ասաց, ինքը ամենևին չէր մտածել այդ մասին։

Այդ խօսակցութեան ժամանակ հիւսը կանգնած էր սուրհանդակի ետևի կողմում. երբ վերջինը շարժվեցաւ, կամենում էր գնալ, նա ձեռքը արագութեամբ տարաւ դէպի իր ուսից քարշ ընկած տօպրակը, և նրա միջից ուրագի հանելը ու սուրհանդակի գլխին մի սաստիկ հարուած տալը՝ մի րոպէի գործ եղաւ։

Շուարած, սասանված սուրհանդակը ձեռքը տարաւ դէպի ատրճանակը, որ քարշ էր ընկած նրա գօտիից։ Այդ միջոցին սափրիչի աշակերտը դանակը խրեց նրա կուրծքի մէջ։ Նա ընկաւ գետին։ Հիւսը զօրեղ ձեռքով դիակը քարշեց ճանապարհի մի կողմը, ծածկեց թուփերի մէջ, նախապէս նրա ծոցից հանելով նամակը, որ նա պիտի տանէր Ֆաթալի-խանին, բերդի պաշտպանութեան համար օգնութիւն խնդրելու։

Արևը արդէն մայր էր մտել. երեկոյեան խաւարը բաւական թանձրացել էր։ Երթևեկութիւնը դէպի ամեն կողմ դադարած էր։ Երեք ուղևոր-

ները, որպէս թէ կատարել էին մի սովորական գործ, հանգիստ, անխռով կերպով շարունակեցին իրանց ճանապարհը։

—Եթէ լոյս լինէր, ես շատ կը ցանկանայի այդ նամակը կարդալ, ասաց հիւսը։

—Առանց կարդալու էլ, ես կարող եմ ասել, թէ նրա մէջ ինչ գրված կը լինի, պատասխանեց սափրիչը։—Մեզ հարկաւոր էր այսքան միայն, որ այդ նամակը Ֆաթալի-խանի ձեռքը չը հասնէր։—Մենք ուշանում ենք, եղբայրներ, մի փոքր ոտքներիդ ուժ տուեցէք, աւելացրեց նա։

Նրանք հասան բերդը, երբ գիշերից բաւական անցել էր։ Բերդի մէջ տիրում էր խորին լռութիւն, երբեմն միայն լսելի էին լինում գիշերապահ պահապանների զգուշացնող ձայները։ Բոլոր դռները կողպված էին. անկարելի էր ուրիշ տեղից ներս մտնել. բարձր պարիսպները միանգամայն անմատչելի էին կացուցել աւազակների այդ որջը։

Նրանք դիմեցին դէպի բերդի մի կողմում ընկած ձորը, որի խորութեան միջով անցնում էր Հալիձորի սրնթաց գետը։ Գետի ափերի վրա ձորի երկարութեամբ, տարածվում էին գեղեցիկ, մրգաբեր այգիներ և ձեռատունկ ծառեր, որոնք այժմ ծածկված էին գիշերային խաւարի մէջ։ Այստեղ մէկին որոնում էին նրանք։

—Բըժժ... բըժժ... կոչեց սափրիչը այնպիսի

մի ձայնով, որպէս հոգատար տանտիկինը կոչում է թուփերի մէջ կորած, մոլորված հորթին։

Հորթը չը յայտնվեցաւ։ Սափրիչը կրկնեց իր կոչելը։ Այդ միջոցին հեռուից լսելի եղաւ հորթի ձայնը՝ «բա՜-ա՜յ»... և մի մարդ, որ ծածկված էր ծառերի մէջ, դուրս եկաւ իր թագստի տեղից, մօտեցաւ երեք ուղևորներին։

—Վերջապէս եկաք դուք, ասաց նա հազիւ լսելի ձայնով.—հոգիս դուրս եկաւ սպասելուց, ինչու այդքան ուշացաք։

—Ճանապարհին մի փոքրիկ գործ ունեցանք խանի սուրհանդակի հետ, այդ խլեց մեզանից մի քանի րոպէ, պատասխանեց սափրիչը։—Դու այն ասա, ո՛ր կողմից պիտի տանես մեզ։

—Ուղիղ բերդի դռնից, ասաց անծանօթը,—և ինքը դռնապանը կը բաց անէ դուռը։ Եկէք իմ ետևից, ես ամեն բան սարքել եմ...

Բոլորը միասին սկսեցին դիմել դէպի բերդի գլխաւոր դուռը։

Եթէ մէկը ցերեկով տեսնելու լինէր այդ անծանօթ մարդուն, իսկոյն կընդունէր նրան բերդի տէր խանի ֆէրրաշներից մէկի տեղ։ Նրա թէ հագուստը և թէ զէնքերը այդ էին ցոյց տալիս, թէև նա այժմ խօսում էր հայերէն այնքան վարժ կերպով, որպէս կը խօսի ամեն մի սիւնեցի հայ։

Երբ հասան բերդի գլխաւոր դռանը, անծանօ-

թը սկսեց բաղխել դուռը, ձայն տալով այժմ քրդերէն լեզուով.

—Հասան, բաց արա։

Հասանին թէև հրամայված էր գիշերը ոչ ոքի առջև չը բաց անել դուռը, բայց խանի ֆէրրաշները բացառութիւն էին կազմում։ Իսկ նա աւելի կարգ պահպանելու համար, ներսից հարցրեց.

—Գիշերվայ անունը։

—«Աղամիր», պատասխանեց անծանօթը։ *)

Լսելի եղաւ ծանր բանալիի դառնալու ձայնը և շուտով ահագին դարպասի դռնակը բացվեցաւ։ Անծանօթը ներս մտաւ, նրան հետևեցին միւսները։ Բացի դռնապանից այնտեղ կային մի խումբ պահապաններ։ Մի մեծ լապտեր լուսաւորում էր մուտքը։

—Դրանք ովքեր են, հարցրեց դռնապանը, ցոյց տալով երեք ուղևորների վրա։

—Մոռացայ, ես առաւօտեան այս տեղից դուրս գալու ժամանակ քեզ ասեցի. Հասան, ես գնում

*) Պարսկաստանում մինչև այսօր պահպանվել է այդ կարգը. բերդապահը ամեն օր նշանակում է գիշերվայ անունը և որպէս պարօլ հաղորդում է ոստիկանութեան գործակատարներին։ Երբ գիշերը փողոցներում հանդիպում են մի մարդու, որ չը գիտէր գիշերվայ անունը, իսկոյն կալանաւորում են նրան։

եմ, բայց գիշերը կրկին կը վերադառնամ, զգուշ կաց, որ դուռը շուտ բաց անես։—Ասեցի՝ խանի կնոջ ատամները ցաւում են, գնում եմ մի սափրիչ կանչելու։ Հիմա տեսնում ես, դա սափրիչն է, դա նրա աշակերտն է, դա էլ մի հիւս է, որ խանի համար փայտից մի այնպիսի սատանայական բան պիտի շինէ, որ նրանով ահագին քարեր կարելի է նետել թշնամիների վրա, երբ մեր բերդը պաշարելու լինեն։

Թէ խանի կնոջ ատամների ցաւը և թէ բերդի պաշարումը այնպիսի կարևոր բաներ էին, որ երկուսին էլ պէտք էր շուտափոյթ օգնութիւն հասցնել։ Մանաւանդ Հասանին աւելի գրաւեց այն «սատանայական բանը», որ պիտի շինէր հիւսը, և իր հաւանութիւնը յայտնելով, ասաց.

—Այդ լաւ բան է, եթէ մի այսպիսի բան չը լինի, այն ժամանակ մեր բերդը Աստուած ազատէ...

Երեք ուղևորները անծանօթ մարդու հետ հեռացան դռնապանից, բայց փոխանակ խանի տունը գնալու, կորան բերդի խուլ փողոցների մէջ, որ պատած էին գիշերային խաւարով։

ԺԳ.

Ջևլու բերդի մէջ, հայոց թաղի մի անկիւնում, ուղիղ ամրոցի պարսպի մօտ կանգնած էր մի քարաշէն տուն։ Այնտեղ իր միակ փոքրիկ որդու հետ բնակվում էր մի այրի կին։ Նրա ա-

մուսին այրը ունէր սեպհական այգի, որի թթենիների պտուղներից արաղ էր քաշում, իսկ խաղողից գինի էր պատրաստում։ Նա գինեվաճառ էր և նրա տունը ուրիշ ոչինչ չէր, եթէ ոչ գինետուն։ Ամուսնի մեռնելուց յետոյ նրա առևտուրը շարունակեց կինը։ Նա յայտնի էր ամբողջ բերդի մէջ որպէս լաւ արաղ քաշող և նրա պատրաստած գինիները ամենաընտիրն էին իրանց տեսակի մէջ։

Այդ կինը կոչվում էր Սառա. նրա տարիքը անցել էին եռեսունից, բայց տակաւին թարմ էր մնացել և պահպանել էր իր երիտասարդութեան գեղեցկութիւնը։ Սառան այն վարպետ կնիկներից մէկն էր, որ անդադար ընկնելուց և կանգնելուց յետոյ, նոր ճանաչում են կեանքը, որ գիտեն, թէ այժմ ինչպէս պէտք է վարվել մարդիկների հետ։ Նա իր յաճախորդների մէջ լաւ ընտրողութիւն անել գիտէր. երբէք թոյլ չէր տալիս, որ իր չը հաւանած գինի կամ արաղ գնողները իր տանը նստէին կամ այնտեղ խմէին, այլ պարտաւոր էին առնել և դուրս տանել։ Դրա համար բակի մեծ դրան մէջ բացված էր մի դռնակ, որտեղից նա յաճախորդների փողը և դատարկ ամանները ընդունում էր, և արաղով կամ գինիով լցնելով, ճանապարհ էր դնում։

Երկրի սովորութիւնը արդարացնում էր Սառայի վարմունքը. Սառան կին էր, բաւական

գեղեցիկ կին. նրա տղամարդը մեռած էր և իր տանը օտար մարդիկ ընդունելը անպատշաճ էր նրա համար։ Իսկ այդ գիշեր, ընդհակառակն, նրա տան ստորերկրեայ մառանում, ուր դրած էին գինու կարասները, ճրագ էր վառվում։ Հինգ հոգի նստած էին այնտեղ խմում էին։ Նրանց առջև դրած էր հաց և տաք խորոված։ Ինքը Սառան շամփուրներով ներս էր բերում և բաժանում էր ընթրողներին։ Արդեօք նրա ծառաները տանը չէին, թէ տանտիրուհին ցանկանում էր, որ իր հիւրերին ոչ ոք չը տեսնէ, և այդ պատճառով ինքն էր յանձն առել ծառայութիւնը,—յայտնի չէ։ Միայն նա մի առանձին յարգանքով էր վերաբերվում դէպի իր հիւրերը, որոնց թէ դէմքերը և թէ հագուստը բաւական կասկածաւոր արտայայտութիւն ունէին։

—Կէս գիշերից անցաւ, ասաց հիւրերից մէկը.

—դեռ ոչինչ ձայն չը կայ։

—Եթէ մի ձայն լինէր, իմ շունը առաջինը կը լինէր, որ խաբարը մեզ կը տար, պատասխանեց տանտիկինը։—Դուք ձեր քէֆին կացէք, ես իսկոյն կը բաց անեմ, երբ դռան թխկոցը կը լսեմ։

Նա դուրս գնաց։ Երևում էր, այդ մարդիկը անհամբերութեամբ սպասում էին ուրիշներին, որոնց ուշանալը նրանց անհանգստութիւն էր պատճառում։ Մէկը ասաց.

—Չի լինի թէ մի վտանգի պատահած լինեն։

—Նրանց եթէ ջրաղացի տակն էլ դցես, ողջ կը դուրս գան, պատասխանեց միւսը։

—Ապա ինչու այդքան ուշացան։

—Ո՞վ է իմանում, կարելի է մի արգելք պատահած լինի։

Նրանք սկսեցին դարձեալ խմել, հանգստանալով այն մտքով, թէ իրանց սպասած մարդիկը եթէ ջրաղացի տակն էլ ընկնելու լինեն, ողջ կը դուրս գան։

Իսկ Սառան դուրս գալով մառանից, որտեղ նստած էին հիւրերը, քարեայ սանդուղքներով բարձրացաւ և մտաւ մի սենեակ, որ կացուցանում էր նրա քնարանը։ Այստեղ պառկած էր նրա միակ զաւակը՝ փոքրիկ Գեորգը։ Բարակ վերմակը ծածկում էր նրա երեսը. մայրը յետ քաշեց, որ շնչառութիւնը ազատ լինի։ Սենեակի տաքութիւնից նա քրտնել էր, և կաթիլները մանրիկ ցօղի նման պատել էին նրա շուշանի գոյն ճակատը և շառագունած, վարդագոյն թշերը։ Մայրը խոնարհվեցաւ, համբուրեց նրան, այնքան զգուշութեամբ, որ երեխան ոչինչ չը զգաց։ Յետոյ նստեց անկողնի մօտ և խորին տխրութեամբ նայում էր նրա երեսին։ Շուտով խեղճ կնոջ աչքերը լցվեցան արտասուքով. ըսկսեց խուլ կերպով լաց լինել։ Այդ կինը, որ հազարաւորներին սէր էր ծախել և ոչ մէկին չէր սիրել,—սիրում էր իր զաւակին, այն ջերմ և բը-

նական սիրով, որ տուած է մայրերին միայն։ Բայց ինչու էր լա՛ց լինում նա։

Բերդի մէջ բնակվում էին յիսունի չափ հայ ընտանիքներ. երբ լուր տարածվեցաւ, թէ Գաւիթ բէկի զօրքերը պիտի պաշարեն բերդը, հայերը կամեցան դուրս գալ այնտեղից։ Ասլամազկուլի խանը, բերդի տէրը, արգելեց, ասելով. «Ձեզ պէտք է պահեմ իմ ձեռքիս մէջ, եթէ ձեր հաւատակիցները կը պաշարեն իմ բերդը, այն ժամանակ ձեր գլուխները ռումբերի փոխարէն թնդանօթների մէջ կը դնեմ և կը նետեմ դէպի թշնամու բանակը»։ Պարսիկը պահել էր նրանց որպէս պատանդ, եթէ թշնամին նեղէր, պէտք է նրանց վրա թափէր իր վրէժխնդրութեան թոյնը։ Այդ պատճառով բոլորը մեծ երկիւղով ըսպասում էին իրանց սարսափելի վախճանին։ Այդ բոլորից յետոյ շատ հասկանալի էր, թէ ինչու էր լաց լինում Սառան։ Գուցէ իր զաւակն ևս այն բազմաթիւ երեխաներից մէկը կը լինէր, որ պիտի մորթվէին բերդի փողոցների մէջ։

Նրան իր հոգեկան տխրութիւնից դուրս բերեց դռան ձայնը, որ հազիւ լսելի կերպով բաղխեցին։ Նա վազեց դէպի դուռը և իսկոյն բաց արեց։ Ներս մտան չորս հոգի։ Սառան նրանց տարաւ մառանը, ուր նստած էին առաջին հիւրերը։ Նորեկներից մէկը կուզ սափրիչն էր իր կրկնակի սապատներով, միւսը նրա գեղեցկադէմ աշա-

կերտն էր, երրորդը հսկայատիպ Հիւսն էր, իսկ չորրորդը՝ այն անծանօթ տղամարդը, որ բերդի դրսում միացաւ նրանց հետ և իրան խանի ֆէրրաշ էր կոչում։

Առաջինները, տեսնելով Նորեկներին, սկզբում շփոթվեցան, խռովութեան մէջ ընկան։ Բայց երբ սափրիչը մօտենալով ասաց.—«Ողջոյն ձեզ», բոլորը ուրախութեամբ շրջապատեցին և սկսեցին համբուրել նրա աջը, բացականչելով.

—Աստուած է վկայ, տէր հայր, դժոխքի սատանան էլ չէր կարող ճանաչել ձեզ, եթէ դուք ինքներդ ձեզ չը մատնէիք։

Սափրիչը հալեձորցի տէր-Աւետիքն էր, Դաւիթ-բէկի ամենաքաջ զօրապետներից մէկը։

—Ներեցէք, տէր հայր, ասեցին նրան.—խորովածը դեռ չէ սառել, ձեր բաժինը պահել ենք։

—Օրհնեալ լինիք, որդիք, պատասխանեց քահանան,—կը նստեմ, ի հարկէ, կը նստեմ։ Թող առաջ այդ բաները վրայիցս արձակեմ, յետոյ կը նստեմ։ Եւ նա սկսեց արձակել սափրիչի բոլոր պարագայքը, որ իր վրա կրած ունէր, սկսեց քանդել թէ կուրծքի և թէ մէջքի սապատները, որ արհեստական կերպով կազմել էր։

Այդ միջոցին առաջիններից մէկը մօտեցաւ սափրիչի գեղեցկադէմ աշակերտին, որը մի կողմում կանգնած էր, տեսնելու համար, արդեօք իրան կը ճանաչեն, թէ ոչ։

—Ա՛խ, Խորէն հայր սուրբ, գոչեց նա ծիծաղելով.—ճշմարիտ, ես քեզ ճանաչել չէի կարող, եթէ պարանոցիդ վրայի սպին չը տեսնէի։

Խորէն հայր սուրբը Տաթևի երիտասարդ աբեղաներից մէկն էր։ Նրան առաջին անգամ մենք տեսանք չիրվանաձորցի բեռնակրի հագուստով, երբ վիճակից հաւաքած «հոգևոր պտուղի» անունով ռազմամթերք էր տեղափոխում վանքը։ Այժմ սափրիչի աշակերտի հագուստի մէջ բոլորովին անճանաչելի էր դարձել։

Նորեկների երրորդ ընկերը՝ Հիւսը իսկոյն ճանաչվեցաւ. նրա հսկայատիպ կազմուածքը, դէմքի խոշոր գծագրութիւնը ոչ մի կեղևի տակ ծածկվել չէին կարող. ով որ միանգամ տեսել էր նրան, միւսանգամ տեսնելիս կարող էր ճանաչել։ Դա Ստեփաննոս Շահումեանն էր, Դաւիթ-բէկի սիրելին։

—Իշխան, ասաց նրան առաջիններից մէկը.—քո այդ սղոցները, ուրագները հազիւ թէ կարող են քեզ բանւոր մարդու տեղ դնել։

—Ի հարկէ, նրանց մօտ, որոնք ինձ ճանաչում են, պատասխանեց իշխանը, ցած դնելով իր խուրջինը, որ լցված էր ատաղձագործի գործիքներով։

Չորրորդը, որ իրան բերդի տէր խանի ֆէրրաշ էր կոչում, հալիձորցի Մէլիք-Փարսադանի որդի Բալի զօրավարն էր, մի չափազանց հնարագէտ

և ճարպիկ երիտասարդ, որ սատանայի նման ամէն կերպարանքի մէջ կարող էր մտնել։

Մառանի մէջ գտնվող առաջին հիւրերը տեղացի հայերից էին, որոնցից մէկը բերդաբնակ հայոց տանուտէրն էր։

Երբ բոլորը նստեցին, ներս մտաւ Սառան, բերելով իր հետ մի մեծ լագան և իբրիղի մէջ սառը ջուր, որ նոր եկած ճանապարհորդները լուացվեն, կազդուրվեն և սկսեն ընթրիք ուտել։ Նրա երեսը ծածկող սպիտակ քօղի միջից երեւում էին գեղեցիկ աչքերը և յօնքերը միայն։ Այդքանը ես բաւական ազդու նմուշ էր նրա դէմքի հրապուրանքը արտայայտելու համար։

Ընթրիքից յետոյ տէր-Աւետիքը դարձաւ դէպի առաջինները, հարցնելով.

—Հիմայ պատմեցէք, թէ գործերը ինչ դրութեան մէջ են։

Տանուտէրը պատասխանեց, որ բերդի բոլոր նշանաւոր դիրքերը ամրացրած են. տեղային մահմեդականները զինված են, մինչև վերջին շունչ պիտի պաշտպանվեն. Թշնամին թնդանօթներ ունի, բայց բէկի զօրքերը չունեն, այդ պատճառով բերդը գրաւելը շատ դժուար պիտի լինի, եթէ ներսից չը մատնվի։

—Մենք նրանց թնդանօթները հէնց իրանց դէմ կը գործածենք, ասաց տէր Աւետիքը մի այնպիսի վստահութեամբ, որ նրան միայն յա-

տուկ էր։—Դու այն ասա, այստեղի հայերը կարող են փոքր ի շատէ օգնել մեզ։

—Կարող էին, եթէ զէնք ունենային, ասաց տանուտէրը.—բայց այն րոպէից, որ խանը լսեց բէկի արշաւանքը դէպի իր բերդը, բոլոր հայերի զէնքերը խլեց։ Այդ բաւական չէ, նա սպառնացաւ ամենքին կոտորել, երբ բէկը կը պաշարէ իր բերդը։ Եւ այդ կը կատարէ նա. այսօր ամեն տեղ խօսվում էր, թէ խանը պատգամաւոր կուղարկէ բէկի մօտ, յայտնելու, եթէ չը հեռանայ իր բերդից, նրա միջի հայերին կը կոտորէ։

—Դա խիստ յիմար մտածութիւն է,—մէջ մտաւ Ստեփաննոս Շահումեանը.—եթէ տասն այդքան հայեր կոտորվէին, բէկը դարձեալ ոչինչ տեղ կը դնէր և կը յարձակվէր բերդի վրա։ Նրա համար ոչինչ նշանակութիւն չունի՝ կորցնել մի յիսուն ընտանիքի կեանքը, երբ դրանով կարող էր ազատել շատերին։ Բայց ես հաւատացած եմ, որ ոչ մէկին վնաս չի հասնի, եթէ մենք գործը խոհեմ կերպով կը տանենք...

Այդ խօսակցութեան միջոցին ոչ ոք չը տեսաւ, որ Խորէն հայր սուրբը աննկատելի կերպով դուրս եկաւ ստորերկրեայ մառանից, որի դրանը Սառան, խաւարի մէջ կանգնած, սպասում էր։ Մանկահասակ կինը բռնեց նրա ձեռքից և տարաւ իր քնարանը։ Այստեղ պառկած էր նրա զաւակը՝ փոքրիկ Պետրոսը։ Աբեղան ա-

ռանց մօր վրա մի առանձին ուշադրութիւն դարձնելու, վեր առեց ճրագը, լռութեամբ մօտեցաւ քնած մանուկին և խորին զգացմունքով սկսեց նայել նրա վրա։ Երիտասարդ վանականի սիրտը բաբախում էր, նրա ամուր ծնկները դողդողում էին, և փոքր էր մնում, որ ճրագը նրա ձեռքից պլոծ վայր ընկնէր, գեղեցիկ երեխային տեսնելու ժամանակ։ Այդ միջոցին երեխան իր փոքրիկ թաթիկը բարձրացնելով, շարժեց երեսի վրա, կարծես թէ, այնտեղից մի ճանճ էր քշում։ Այդ գործողութիւնը այնքան սրտաշարժ էր, որ աբեղան այլ ևս իրան պահել չը կարողացաւ, խոնարհվեցաւ քնած երեխայի վրա, և բռնելով նրա թաթիկը, սեղմեց իր շրթունքին։ «Ո՛րքան նման է»... այդ միտքը անցաւ նրա վրդովմունքով լի սրտից։

Երեխայի մայրը անշարժ կանգնած էր հեռու, որպէս մի քարացած արձան։ Նրա գունատված, անհանգիստ դէմքը կրում էր իր վրա ամօթի և խղճահարութեան բոլոր նշանները։ Երբ աբեղան, ճրագը մի կողմ դնելով, նստեց փոքրիկ մանուկի անկողնի մօտ, երեխայի մայրը արտասուքը աչքերում մօտեցաւ, և չոքելով աբեղայի առջև, նրա աջը բռնեց իր սառն ափի մէջ, ասաց դողդոջուն ձայնով.

—Դու ինձ հետ չես խօսում, երևում է, դեռ չես ներել ինձ, դեռ առաջվայ նման բարկացած

ես ինձ վրա։ Խորէն, նայիր, ով է խօսում քեզ հետ,—այն կինը, որին մի ժամանակ սիրում էիր դու, որին յետոյ ատեցիր։ Քո առջև չոքած է նա, այն թշուառը, որ նոյնպէս սիրում էր քեզ, երբ մի մաքուր և անարատ աղջիկ էր։ Քո առջև չոքած է նա, որպէս մի յանցաւոր, որ ոչինչով չէ կարող քաւել իր մեղքը, եթէ դու չը ներես նրան։ Խորէն, ես դաւաճանեցի քեզ, ես ձգեցի քեզ և իմ սէրը տուեցի օտարին, որը յետոյ իմ անբախտ ամուսինը դարձաւ։ Այո, անբախտ, որովհետև ես նրան գերեզման ուղարկեցի, որ աւելի ազատ լինեմ, որ աւելի անարգել կերպով կարողանամ մի տղամարդի գրկից միւսի գիրկը ընկնել։ Ես հասայ իմ նպատակին։ Ինձ այնուհետև ոչինչ չէր արգելում, ոչ ամօթը, ոչ ամուսինը և ոչ էլ հասարակաց կարծիքը։ Անառակութիւնը իմ մէջ այն աստիճան զօրացել էր, որ ոչինչ զսպել չէր կարող ինձ։ Աղի ջուր խմող մարդու նման, որքան խմում էի, այնքան աւելի սաստկանում էր ծարաւս։ Ես ընկայ, օրըստօրէ ընկայ, որքան կարող էր ընկնել մի թեթևամիտ, յիմար կին։ Ես այժմ անարժան եմ քեզ. իմ հպաւորութիւնն անգամ կարող է պղծել քեզ։ Ես ամենևին չեմ պահանջում վերադարձնել ինձ այն քնքուշ սէրը, որը ես գնահատել չը կարողացայ, որը ես ոտքի տակ տուեցի։ Ես միայն քեզանից ներումն եմ խնդրում,

Դու պէտք է ներես ինձ, Խորէն, որպէս մի կընոջ, որին մի ժամանակ սիրել ես։ Դու պէտք է ներես ինձ, որպէս աշակերտ մեր Տէր Յիսուս Քրիստոսի, որ ներում էր աշխարհից արհամարհուած անպատիւ կիներին, որոնք նրա ոտները թրջում էին իրանց արտասուքով և սրբում էին իրանց գլխի մազերով։ Ես նրանցից մէկն եմ։ Ներիր ինձ։ Եթէ ես կորցրել եմ քեզ մօտ ամեն ինչ, որով կարող էի գրաւել քո ուշադրութիւնը, գոնէ այդ երեխայի համար, որ մեր երկուսի սիրոյ պտուղն է.—Ներիր ինձ։

Մինչ թշուառ կինը թափում էր աբեղայի առջև իր սրտի դառն ցաւերը, նա գտնւում էր մի տեսակ տենդային խռովութեան մէջ, որ նրան մոռանալ էր տուել սիրած կնոջ ներկան և յիշեցնում էր միայն բախտաւոր անցեալը։ Նա, կարծես, դարձեալ զգում էր նոյն անմեղ և անարատ աղջկայ հպաւորութիւնը, զգում էր նրա ջերմ շնչառութեան հրեշտակային սօսափիւնը, որ մի ժամանակ լցնում էր իր հոգին անհուն բերկրութեամբ։ Կարծես, լսում էր բաբախման ձայնը նոյն կուսական սրտի, որի մէջ իր սէրը մի ժամանակ այնքան ընդարձակ տեղ ունէր բռնած։ Նա, նստեցնելով իր մօտ չոքած կընոջը, և նրա դողդոջուն ձեռքը առնելով իր բռան մէջ, ասաց խորին զգացմունքով.

—Իզուր ես կարծում, Սառա, որ դու այն-

քան յանցաւոր ես իմ առջև, որ հարկաւոր լինէր քեզ ներողութիւն խնդրել։ Դու ոչնչով մեղաւոր չես։ Եթէ դու ընկար, մեղաւորը ես եմ, որովհետև իմ մէջ չը կար այնքան ուժ և սրտի զօրութիւն, որ կարողանայի պահպանել քեզ անկումից։ Դու մի որբ, անփորձ աղջիկ էիր, զուրկ հօր և մօր խնամակալութիւնից։ Ես, որ պիտի նեցուկ լինէի և պահպանէի քեզ անկումից, թողեցի քեզ բախտի կամքին։ Ես, որ պիտի առաջնորդէի քեզ կեանքի ուղիղ ճանապարհի վրա, անհոգ գտնվեցայ և իմ անհոգութիւնով թոյլ տուեցի քեզ ընկնել մոլորութիւնների մէջ։ Քո գեղեցկութիւնը բաւական ազդու գրաւական էր քո բոլոր մոլորութիւնների, իսկ ես այնքան անշնորհք գտնվեցայ, որ չը կարողացայ նախատեսել այդ։ Ես զգացի իմ սխալը այն ժամանակ, երբ արդէն ուշ էր, երբ դու այլ ես ինձ չէիր պատկանում.... Բայց ինչու եմ սխալմունք կոչում, դա մի անիրաւութիւն էր իմ կողմից, մի աններելի յանցանք էր, որը ես քաւելու համար մտայ վանքը։ Կարծում էի՝ այնտեղ սրտի խաղաղութիւն և հոգու անդորրութիւն կը գըտնեմ։ Կարծում էի այնտեղ երկնքի սէրը մոռանալ կը տայ ինձ կնոջ սէրը։ Բայց իզուր.... Այնտեղ աւելի բորբոքվեցան սրտիս մարած կայծերը. այնտեղ աւելի սկսեց տանջել ինձ կորած սէրը։ Ամեն անգամ, երբ ծունկ իջած Աստուա-

ծամոր պատկերի առջև. աչքերս դէպի վեր դարձնելով, աղօթում էի, նոյն րոպէում քո գեղեցիկ պատկերն էր աչքերիս առջև երևան գալիս... Ամեն անգամ, երբ կամենում էի սաղմոսներ երգել, քո երգն էր թռչում իմ բերանից... Վանքը չը կարողացաւ բուժել վիրաւորված սրտի վէրքերը. վանքը չը կարողացաւ տալ ինձ այն, որ խլված էր ինձանից...

—Որոնում էի մի հոգեկան և մտաւոր պարապմունք, շարունակեց նա,—որ գրաւէր իմ մտածութիւնները, որ միանգամայն մոռանալ տար քեզ, բայց վանքի դատարկութեան մէջ ոչինչ չէի գտնում։ Երբ սկսվեցաւ մեր հայրենիքի ազատութեան գործը, ես հոգով և մարմնով նուիրվեցայ նրան։ Նրա մէջ գտնում էի և իմ փրկութիւնը, որովհետև այդ գործը զբաղեցնում էր ինձ, քեզ վրա մտածելու ժամանակ չէր տալիս, իսկ երբ ձեռնարկվեցաւ այդ բերդի պաշարմանը. երբ իմացայ, թէ ինչ վտանգ է սպառնում այստեղի բնիկներին,—ես կրկին մտաբերեցի քեզ, Սառա, մտաբերեցի իմ զաւակին և աճապարեցի օգնութեան հասնել։

Վերջին խօսքերի միջոցին Սառան ընկաւ աբեղայի կուրծքի վրա, և իր գլուխը թագցնելով նրա գրկի մէջ, սկսեց լաց լինել։ Արտասուքի միջից լսելի էին լինում այդ խօսքերը. «Նա դեռ չէ մոռացել անառակին... նա չէ զզվում,

չէ ատում նրան... ախ, ես բախտաւոր եմ, շատ բախտաւոր»...

—Երանի թէ ատել կարողանայի, Սառա, երանի թէ զզվել կարողանայի... ասաց աբեղան ցաւալի ձայնով։—Երանի թէ դու մի մեծ վատութիւն արած լինէիր ինձ, որով պատճառ տայիր քեզ ատելու, որ մոռանայի, յաւիտեան մոռանայի քեզ։ Բայց դու այդ չարեցիր, և եթէ դու ընկար վատութեան մէջ, ես եղայ առաջին գլորողը... դու մեղաւոր չես...

Սառան գրկեց նրան, և գեղեցիկ կնոջ ջերմ շրթունքը սեղմվեցան աբեղայի երեսի վրա։ Նա, որպէս մի կախարդող հպաւորութիւնից խորշելով, բացականչեց.

—Սառա, մի համբուրիր ինձ, հայհոյիր, նախատիր ինձ։ Սառա, անէծքներ թափիր իմ գլխին, որ ես բարկանամ, որ ես կարողութիւն ստանամ քեզ չը սիրելու։ Այդ եմ ցանկանում ես և այդ կը հանգստացնէ ինձ։ Տուր ինձ մի պատճառ քեզ ատելու,—դրա մէջն է իմ բախտաւորութիւնը...

—Ի՞նչու, հարցրեց Սառան։

—Իմ մէջ դեռ մնացել է կամքի և սրտի նոյն թուլութիւնը, որ ունէի առաջ, պատասխանեց աբեղան վրդովված կերպով։—Ես այնքան ուժ չունեմ, որ թողնեմ վանքը և քո գրկում հանգստութիւն ու ապաստան գտնեմ։ Ես մի թշուառ

արարած եմ, զուրկ մարդկային բոլոր իրաւունքներից...

—Ես այդ դժբաղդութիւնը քեզանից չեմ պահանջում, խորէն, և իրաւունք էլ չունեմ պահանջելու։ Դու միայն սիրիր ինձ, խորէն, քո առաջին սիրոյ մի նշոյլն անգամ բաւական է, որ սրբէ և մաքրէ իմ կեղտերը... Քո սէրը միայն կարող է ուղղել ինձ, կանգնեցնել հաստատ ճանապարհի վրա։ Կորցնելով քո սէրը, ես աւելի յօժարութեամբ նետվեցայ բարոյական ցեխի մէջ, որպէս մի թշուառական, որ պատահած անբախտութիւնից յետոյ, սրտի վշտերը մոռանալու համար, անձնատուր է լինում արբեցութեան, և օրըստօրէ աւելի ու աւելի թունաւորում է իր մարմինը և հոգին։ Խորէն, սիրիր ինձ, և այդ կը փրկէ ինձ...

—Կը սիրեմ... պատասխանեց աբեղան և նրա խօսքը ընդհատվեցաւ, որովհետև այդ միջոցին դրսից լսելի եղաւ տէր Աւետիքի ձայնը, որ կոչում էր նրան։

Նրա ընկերները, վերջացնելով իրանց խորհուրդը, կանգնած էին բակում։ Աբեղան միացաւ նրանց հետ, և դուրս գալով Սառայի տնից, անհետացան բերդի մթին փողոցների մէջ։

ԺԴ.

Հետևեալ օրվայ առաւօտեան պահուն, Ալամազ-Կուլի խանը, մի խումբ թիկնապահ ձիա-

ւորներով, բերդի ներսի կողմից, վազվզում էր պարիսպների մօտով, քննում էր աշտարակները, նայում էր նշանաւոր գիրքերին, կարգադրութիւններ էր անում, պատուէրներ ու հրամաններ էր տալիս։

Բերդը բոլորած էր ամուր, բարձր շրջապարիսպով. բացի դրանից, նա ունէր բնական ամրութիւններ ես. մի կողմում խոր անդունդի նման ձգվում էր մի վիհ, որի միջով անցնում էր Հալձորի գետը. միւս կողմում, բարձրանում էին սրածայր լեռներ։ Շրջապարիսպը իւրաքանչիւր քսան քայլ հեռաւորութեան վրա ունէր աշտարակներ, որոնց վերևի մասը վերջանում էր ժանիքների նման ատամնաւոր բարձրութիւններով։ Այդ բարձրութիւնների ետևում շարված էին զինուորներ, և հրացանների ծայրերը դնելով վերնապարսպի մէջ բացված ծակերում, սպասում էին։ Նրանք թաքնված էին աշտարակների ժանիքների ետևում, որ ծառայում էին նրանց որպէս պատսպարան։

Մի քանի նշանաւոր գիրքերի վրա դրած էին փոքրիկ թնդանօթներ, որոնց զամբուրակներ են կոչում, և հարկաւորած ժամանակ, ուղտերի մէջքի վրա կապելով, շատ հեշտութեամբ կարելի էր մի տեղից միւս տեղ փոխադրել։ Բերդի շուրջը պատող ահագին խրամը լցրած էր ջրով։ Բոլոր կամուրջները քանդված էին, պահվում էր

մէկը միայն հաղորդակցութիւնը դրսի հետ առժամանակ պահպանելու համար, մինչև թշնամու մօտենալը։

—Ես այդ անհաւատներին ցոյց կը տամ, թէ ինչ է նշանակում պաշարել իմ բերդը, ասաց խանը կատաղութեամբ, և դիտակը դնելով աչքերին, սկսեց վերնաբերդի բարձրութիւնից նայել, արդեօք երևում էր թշնամին, թէ ոչ։ Ոչինչ չէր երևում։

—Եթէ ծովերի աւազները զօրքեր դառնան, ձեր զօրութեան առջև կը փշրվեն և փոշու նման օդի մէջ կը ցնդվեն, խան, պատասխանեցին շողոքորթները, որ շրջապատել էին նրան։

Խանը միջահասակ մարդ էր. փառաւոր սև մօրուքը հասել էր մինչև գօտին։ Այսօր ոտքից ցգլուխ զինված էր նա, իր հպատակներին օրինակ տալու համար։ Նա ցած իջաւ վերնաբերդից, կրկին նստեց իր ձին և դիմեց դէպի մի այլ դիրք հետազօտելու համար։ Թիկնապահ ձիաւորների բազմութիւնը հետևեց նրան։

Բերդի մէջ տիրում էր սարսափելի խռովութիւն և իրարանցում։ Դեռ չը լուսացած, բոլորը ոտքի վրա էին։ Տղամարդիկը զինվում էին պաշտպանվելու համար. կնիկները տների իրեղէնները թաքցնում էին յափշտակութիւնից զերծ պահելու համար։ Ամեն կողմից լսելի էին լինում յու-

սահատական ձայներ, խառն աղաղակների և արտասուքի հետ։

Վաղորդեան ժամն էր. թէև արևը դեռ չէր ծագել, բայց այնքան լոյս էր, որ կարելի էր առարկաները փոքր հեռաւորութեան վրա որոշել։ Շրջակայ լեռները ծածկված էին թանձր մառախուղով։ Հեռուից ոչինչ չէր տեսնվում։

Այդ միջոցին Դաւիթ բէկի զօրքերը, զանազան գունդերի բաժանված, դժուարին, զարտուղի ճանապարհներով դիմում էին դէպի բերդը։ Առաջապահների մի խումբ, Բայինդուր իշխանի հրամանատարութեան ներքոյ, բաւական մօտեցել էր բերդին։ Մի այլ խումբ, Մխիթար սպարապետի հրամանի ներքոյ, մօտենում էր բերդին ուրիշ ճանապարհով։ Ինքը Դաւիթ բէկը Թորոս իշխանի հետ պահել էին իրանց ձեռքի տակ գըլխաւոր ուժը, որ բաղկացած էր երկու հազար հետևակներից և երեք հարիւր ձիաւորներից։

Մինչև բերդը հասնելը, զանազան կէտերի վրա, թուրքերը ամրացրել էին մի քանի դիրքեր, որ թոյլ չը տան թշնամուն մօտենալ և պաշարել բերդը։

Այդ դիրքերից մէկը գտնվում էր դէպի բերդը տանող նեղ ճանապարհի վրա և բոլորից ամուրն էր։ Երկու լայնանիստ բլուրներ, երկու հսկայական սիւների նման, բռնել էին նեղ ճանապարհի աջ և ձախ կողմերը, թողնելով իրանց

մէջ տեղում մի նեղ և երկայն կիրճ։ Այդ կիրճից պէտք է անցնէր բէկի զօրքը, բերդին մօտենալու համար։

Բայինդուր իշխանը, առաջապահ խումբերից մէկի հրամանատարը, դիմում էր ուղիղ դէպի կիրճը։ Նրա հետ էր հալիձորցի մէլիք-Փարսադանը։ Երբ մօտեցան, նա դարձաւ դէպի մէլիքը, ասելով.

—Լսիր, մէլիք, այսօր պարսից թագաւորի «բաթման ղլիճը» այդ անպիտանների գլխին մի խաղ պիտի խաղայ։

—Ի՞նչ խաղ, հարցրեց մէլիքը ժպտալով։

—Մի այնպիսի խաղ, որ իրանց կեանքում տեսած չը լինեն, պատասխանեց պարսից թագաւորի «բաթման ղլիճը» իր սովորական եղանակով։—Անպիտանները վատ տեղ են բռնել, եթէ այդ նեղ կիրճի մէջ մտնելու լինինք, մեզ կը խեղդեն, իսկ եթէ նրանց գտնուած բարձրութեան վրա գնանք, վերևից մեզ լաւ կը քօթկեն։

—Պէտք է մի հնար գործ դնել, որ նրանք բլուրների գագաթից ցած իջնէին։ Ներքևում աւելի հեշտ կը լինէր նրանց ջարդել։

—Ի՞նչ հնարքով կարելի է ցած բերել, հարցրեց մէլիքը։

—Ահա ինչ հնարքով. դրանք հաւի խելք ունեն, «քիշ» անես, կը փախչեն, «ջու-ջու» անես, կը մօտենան։ Հարկաւոր է սկզբում մի թեթև

յարձակում գործել. երբ նրանք կընդդիմանան, պէտք է կամաց-կամաց խոյս տալ և ասպա փախուստ ձևացնել։ Այդ ժամանակ նրանք մեր ետևից ընկնելու համար կիջնեն իրանց բարձրութիւններից, և տափարակի վրա մենք նրանց «հոգւոցը» կը կարդանք...

—Փորձենք.... ասաց մէլիքը, և Բայինդուր իշխանի հետ իրանց ձեռքի տակ եղած խումբը երկու մաս բաժանելով, երկու կողմից սկսեցին դիմել դէպի կիրճի աջ և ձախ կողմերում գտնուած բարձրութիւնները, որ ծածկված էին թուրք հրացանակիրներով։

Զուռնայի և դհօլի ձայնը տուեց յարձակման առաջին նշանը։ Չը նայելով, որ հայ զինուորներին հրամայված էր ձևի համար միայն յարձակում գործել, բայց այդ թուրքի արեան ծարաւի քաջերը, «կեցցէ Դաւիթ բէկ» գոռալով, առաջ մղվեցան, կամենում էին սար ու ձոր ոտքի տակ տալ և իրանց վրէժը առնել։ Նրանք զինված էին հրացաններով, նիզակներով և խէնջարներով։ Բոլորի թիւը հազար հոգի էր, հինգ հարիւր Բայինդուր իշխանի հրամանի ներքոյ, հինգ հարիւր ևս մէլիք Փարսադանի հրամանի ներքոյ։ Բայինդուր իշխանը, իր խումբի առաջն անցած, դիմում էր դէպի կիրճի աջ կողմի բարձրութիւնը, իսկ մէլիք Փարսադանը ձախ կողմի բարձրութիւնը։ Բլուրների ղառիլները

սաստիկ ուղղաձիգ էր. հայոց զինուորները երբեմն կատուի նման ճանկռտելով ապառաժները, երբեմն օձի նման սողալով մացառների միջով, իսկ երբեմն գազանների նման ոտիւններ գործելով խորին խրամատների վրայով, առաջ էին խաղում։ Վերևից Թուրքերի հրացանները որոտում էին. բայց դեռ այնքան տարածութիւն կար, որ գնտակները չէին հասնում։ Հայերը չէին պատասխանում, երբեմն միայն արձակում էին իրանց հրացանները օդի մէջ։

Արևը ծագեց, բայց ճառագայթներ դեռ չէին երևում. Թանձր մառախուղը պատել էր հորիզոնը. սար, դաշտ, հովիտ կորած էին մթին մռայլի մէջ։

—«Գայլը ամպ օր կուզէ, գողը մութ գիշեր»... մտածեց պարսից թագաւորի «բախման ղլիճը»։

—Այդ մառախուղից կարելի է օգուտ քաղել....

Թաւ յօնքերի տակ թաղնված խոշոր աչքերը առիւծի նման դարձրեց նա դէպի իր շուրջը։ Մառախուղը հետզհետէ թանձրանում էր, և կարծես, ձիւնի պէս սպիտակ, փրփուրն լեռներ կուտակվում էին մինը միւսի վրա։ Եղանակի այդպիսի փոփոխութիւնը Հայաստանում յատուկ է Սիւնեաց աշխարհին միայն.. յանկարծ ամենապարզ օրը ընդունում է մառախլապատ մթնոլորդ։

Եղանակի փոփոխութեան համեմատ Բայինդուր իշխանը փոխեց և իր գործողութեան ծրագիրը, որ կազմել էր մէլիք Փարսադանի հետ։ Նա թողեց այն կարգադրութիւնը, որով մտածում էր՝ սկզբում թեթև յարձակում գործել, յետոյ փախուստ ձևացնել, և թշնամուն հրապուրելով, իր բարձրութիւնից ցած իջեցնել։ Այդ բաւական կը գրաւեցնէր նրան։ Իշխանը սիրում էր գործի մէջ տեսնել շուտափոյթ վախճան։ Նա նկատեց, որ լեռան ղաւիվերը մագլցելը հետզհետէ դժուարելանելի էր դառնում. եթէ երկար շարունակվէր, զինուորները բոլորովին ուժաթափ կը լինէին յոգնածութիւնից։ Միւս կողմից, տեսնում էր, որ բլուրների կողքերով ուղղակի գնալով, կարելի էր մի պտոյտ գործել և անցնել կիրճի միւս կողմը։ Շրջապատող մառախուղը հնար կը տար այդ պտոյտը բոլորովին աննկատելի կերպով կատարելու։ Անցնելով կիրճի միւս կողմը, նա կը վաստակէր երկու յաջողութիւններ, առաջինը, հայոց զինուորները ազատ կը մնային կիրճի մէջ մտնելուց և Թուրքերի գնտակակոծութեանը ենթարկվելուց, երկրորդ, նա թշնամուն կը թողնէր իր ետևում, երկու կրակի մէջ,— խրա և մէլիք Փարսադանի զօրքերի մէջ տեղում։

Նա կանչեց իր մօտ երևանցի մէկ ոսկերչից կաղ Օհանէսին, որ իր թիկնապահների թւումն էր գտնվում և յայտնի էր իր ճարպիկութիւններով։

—Տօ, կաղ սատանայ, մօտ եկ, ասաց նրան, հարցնելով.—դու իմանում ես, եթէ այդ ուղղութեամբ առաջ գնալու լինենք, որտեղ կը դուրս գանք։

Նա ձեռքով ցոյց տուեց ուղղութիւնը։

—Իմանում եմ, ուղիղ կը դուրս գանք կիրճի միւս կողմը, առանց նրա մէջ մտնելու, պատասխանեց կաղ Թիկնապահը։— Բայց դրա համար պէտք է ահագին պտոյտ գործել։

—Իրաւ է, բայց այդ ահագին պտոյտը մեզ կազատէ ժայռերի կուրծքը ճանկռտելուց և քարափների գլխից ցած գլորվելուց, որով շատ հեշտ կարելի է վիզը կոտրել։

—Կարելի է, պատասխանեց կաղը, հաւանութիւն տալով։

—Այդ էլ կարելի է, որ մենք անցնելով կիրճի միւս կողմը, թշնամուն կը բռնենք երկու կրակի մէջ։

—Կարելի է, եթէ նրանք մեր շարժումը չը նկատեն։

—Ուզում ես ասել, մեր առաջը կը կտրեն, կաշխատեն մեր ընթացքը արգելել.—այդ աւելի լաւ, մենք էլ հէնց այդ ենք ցանկանում, որ նրանք ցած իջնեն իրանց բարձրութիւններից։ Բայց ես կարող եմ տասն և երկու առաքեալների և երեք հարիւր վաթսուն ու վեց հայրապետների անունով քեզ հաւատացնել, որ նրանք

չեն տեսնի մեր շարժումը։ Տեսնո՞ւմ ես մառախուղը, այժմ աւելի ու աւելի մռայլ գոյն է ստանում։

Թիկնապահը նայեց իր շուրջը, և իրաւ, սպիտակ մառախուղը այժմ սկսել էր մոխրագոյն ամպերի կերպարանք ստանալ։

—Այդ բոլորը գիտես թէ ինչու համար քեզ հետ խօսեցի, յառաջ տարաւ Իշխանը.—որ քեզ հասկացնեմ իմ դիտաւորութիւնը։ Ես ահա այդ ուղղութեամբ պէտք է առաջ գնամ։ Իսկոյն կը վազես մէլիք Փարսադանի մօտ, կը յայտնես իմ միտքը։ Հասկացա՞ր։

—Հասկացայ... պատասխանեց կաղը և պատրաստվեցաւ ճանապարհ ընկնելու։

—Դէ, իմ քաջ, շուտով, խրախուսեց նրան Իշխանը.—դու քո կաղ ոտքով դարձել իմ թիկնապահների մէջ ամենից աւելի արագավազն ես։ Իմ կողմից կը յայտնես մէլիքին, որ իր տեղում անշարժ մնայ. մի քանի ժամից յետոյ թշնամին իմ ու նրա մէջտեղում կը լինի. այն ժամանակ պէտք է խեղդել երկու կողմից։

Կաղ Թիկնապահը սատանայի նման աներեւութացաւ։

Իշխանը իր ձեռքի տակ գտնված խմբից չորս հարիւր. հոգի իր հետ վեր առնելով, դիմեց դէպի ընտրած ուղղութիւնը, իսկ հարիւր հոգի թողեց առաջվայ տեղում, որ չզբաղեց-

նեն» թշնամուն, շարունակելով հրացանաձգութիւնը, որպէս զի կարծել տան, թէ ամբողջ զօրքը այնտեղ է գտնվում։

Իշխանի ընտրած ուղղութեամբ, որպէս կարծում էր նա, այնքան հեշտ չէր անցնել։ Պէտք էր իջնել ահագին վիհերի մէջ, յետոյ վեր բարձրանալ, կրկին իջնել, կրկին բարձրանալ, և այսպէս սարսափելի ելևէջներով շարունակվում էր ճանապարհը, որտեղից վայրենի այծերը միայն կարող էին անցնել։

Անընդհատ անձրևները, սրնթաց հեղեղատները կտրատել էին լեռների կուրծքը և ամեն տեղ բաց էին արել խորին, ահելի անդունդներ, որ ծածկված էին փշոտ թփերով և ճոխ մացառներով։ Խիտ պատատուկները հիւսել էին միմեանց հետ այդ հարուստ, վայրենի բուսականութիւնը, որի միջով օձերը միայն կարող էին սողալ։ Բայց հայ զինուորը, իր լեռների հարազատ որդին, անցնում էր այնտեղից։ Դըժուարութիւնները աւելի գրգռում էին, աւելի բորբոքում էին նրա գործն ու ոգևորութիւնը։ Հայրենասիրութիւնը, հայրենիքի ազատութեան գաղափարը նրա մէջ հասած էր վերին աստիճանի անձնազոհութեան։ Այսօր պէտք էր տիրել մի բերդի, որ երկրի ամենանշանաւոր ամրութիւններից մէկն էր. պէտք էր կամ մեռնել, կամ տիրել,— այդ էր իւրաքանչիւրի ուխտը։

Մինչ Բայինդուր իշխանը իր խմբով դանդաղ, բայց եռանդոտ կերպով առաջ էր գնում, այդ միջոցին մէլիք Փարսադանը լեռան միւս կողմում բոլորովին այլ ձեռնարկութեան վրա էր մտածում։ Նրա տարիքը անցել էին վաթսունից։ Ծերունի զօրապետի մազերը ճերմակել էին անընդհատ կռիւների և արիւնհեղութեան մէջ։ Հոգով նա մի հմուտ և փորձված զինուոր էր, իսկ խելքով երկրի լաւ կառավարիչ։ Հալիձորը իր շրջակայ գիւղօրայքով պատկանում էր նրան։

Նրա և թուրք զինուորների մէջ շարունակվում էին թեթև հրացանաձգութիւններ։ Ոչ մի կողմը չէր կամենում վճռական քայլ անել և յարձակում գործել։ Հրացանները արձակվում էին աւելի ցոյցի համար, կարծես, մինը միւսին ասել էր ուզում. «տես, ես այստեղ եմ»...

Մառախուղը այժմ բոլորովին կորցրել էր իր ճերմակութիւնը և մոխրի գոյն էր ստացել։ Յանկարծ բարձրացաւ թեթև, բայց սառն քամի. սկսեց մանր կերպով անձրևել։ Այդ երևոյթը, որ կռուի ժամանակ կարող էր ուրիշներին տհաճութիւն պատճառել, ազդեց ծերունի զօրապետի մէջ մի ներքին ուրախութիւն։ Նրա դէմքի կնճիռները ցնցվեցան և ժպիտի նման մի բան փայլեց խորին աչքերի մէջ։ Այդ միջոցին յայտն-

վեցաւ կաղ Օհանէսը և հաղորդեց նրան Բայինդուր իշխանի պատուէրները։

—Կռուի ժամանակ այսպիսի հաստատ և անփոփոխ որոշումները շատ անգամ կարող են վնասակար հետեւանք ունենալ, պատասխանեց նա իր սովորական հանդարտութեամբ։—Պէտք է յարմարվել հանգամանքների և պայմանների փոփոխութեան հետ։ Նա հրամայում է ինձ իմ տեղում անշարժ մնալ, բայց դուք ինչ կասէք այդ անձրևին։

—Անձրևին ես ոչինչ ասել չեմ կարող, պատասխանեց կաղ պատգամաբերը ծիծաղելով.—նա իր քէֆը ուղածի չափ, որքան կամենայ, այնքան էլ կը գայ։

—Այո՛, որքան կամենայ, այնքան կը գայ, ասաց ծերունի զօրապետը նոյնպէս ծիծաղելով։ —Բայց ես այդ մթին ամպերից գուշակում եմ, որ երկար կը գայ։ Մանր անձրևները մեր երկրում շուտով չեն դադարում։ Եւ այդ անձրևի հետ կապված է մեր յաջողութիւնը…

—Այսինքն, շուտով ամենքս թրջված հաւ կը դառնանք…

—Ես կրկնում եմ, որ այդ անձրևի հետ կապված է մեր յաջողութիւնը։ Այդ կարելի է վճռված բան համարել։ Դու գիտես, որ Թուրքերը զինված են այնպիսի հրացաններով, որ վառվում են փիլթաներով (ֆիտիլ)։ Անձրևը ան-

պատճառ կը թրջէ փիլթաները և ոչ մի հրացան արձակել չեն կարող։ Իսկ մեր մարդիկը ունեն գեղեցիկ կայծհանաւոր հրացաններ, որ անձրևից շատ չեն վախենում։ Այժմ կարելի է համարձակ յարձակում գործել և մի քանի ժամից յետոյ բոլոր Թուրքերին իրանց բարձրութիւններից կը թափենք ձորի մէջ։

Մելիք-Փարսադանի ձեռնարկութիւնը իսկապէս չէր հակառակում Բայինդուր իշխանի դիտաւորութեանը, այլ աւելի-նպաստում էր նրան։

Իրաւ է, որ հայերը զինված էին լաւ հրացաններով, որ սպահանցի վաճառականների միջնորդութեամբ, Ռուսաստանի և Կասպից ծովի վրայով, ստացվել էին Եւրոպայից։ Հայ զինուորը առաջին անգամ տեսնում էր իր հրացանի ծայրին սուին և այդ այնքան զուարճացնում էր նրան, որքան մի նոր խաղալիք երեխայի ձեռքում։

Որի ընդհակառակն, թշնամու հրացանները բոլորովին հին ձևի էին և սաստիկ ծանր։ Նրանք սուինների փոխարէն ունէին իրանց ծայրին երկճղի եղջիւրներ, որ շինված էին փայտից և ծառայում էին որպէս նեցուկ։ Եղջիւրները այնպէս էին յարմարեցրած, որ հեշտութեամբ շարժվում էին. արձակելու ժամանակ կարելի էր նրանց սուր ծայրերը ամրացնել գետնի մէջ, որպէս երկու ոտիկներ, և հրացանի փողը հօրիզօնական ձևով կանգնեցնել նրանց վրա։ Այդ այն յար-

մարութիւնն ունէր, որ ծանր հրացանը դողդոջուն ձեռքի մէջ բնաւ չէր շարժվի։ Իսկ երբ պէտք չէր գործ ածել, կարելի էր եղջիւրները հրացանի փողի ուղղութեամբ շուռ տալ, այդ դրութեան մէջ նրանք սուինի ձև էին ստանում, միայն փայտից շինված։ *)

Անձրևը մանրիկ կաթիլներով դեռ մաղվում էր։ Բարեբախտաբար ցեխ չէր գոյացնում. աւազոտ հողը ծծում էր իր մէջ վերևից թափված խոնաւութիւնը։ Բացի դրանից, լեռների տափարակները պատած էին կամ խիտ խոտաբոյսերով, կամ սալացած ապառաժներով, որոնց վրայից վազում էր ջուրը։

Այդ բոլոր հանգամանքները լցնում էին մէլիք-Փարսադանի սիրտը անսահման ուրախութեամբ։ Ծերունի զօրապետը, կարծես, կրկին մանկացել, երիտասարդական աշխոյժ և եռանդ էր ստացել։ Խորտակված, միմեանց վրա դիզված ժայռերը, պատի նման ուղղաձիգ ապառաժները, լեռների դժուարելանելի դարիդուրը, և տեղ-տեղ խորին խրամատները ամենևին չէին վհատեցնում նրան։ Իր զօրքերի առաջն անցած, խրախուսում էր նրանց, սիրտ էր տալիս, և յորդորում էր առաջ մղվել։

*) Այդ տեսակ եղջիւրաւոր հրացաններ այդ կողմերում այժմ գործ են ածում որսորդները, երբ պէտք էր խոշոր կենդանիներ սպանել։

— Դէ, զաւակներս, այդ սարն էլ անցնենք, թշնամին մեր ճանկերի մէջ կը լինի։

Իսկ նրա զաւակները առիւծի նման առաջ էին գնում, և բնաւ պէտք չունէին հրամանատարի քաջալերութեանը։

Երբ բաւական տարածութիւն անցան, ծերունի զօրապետը հրամայեց զինուորներին, որ փոքր ինչ հանգիստ առնեն, կազդուրվեն, վերջնական յարձակումը գործելու համար։ Նրանք անկանոն կերպով նստոտեցին քարերի վրա։ Ոմանք սկսեցին ծխել, ոմանք իրանց պարկերի միջից դուրս բերելով արաղի փոքրիկ սրուակները, խմում էին և իրանց ընկերներին «համեցէք» էին անում։ Նրանց զուարթ երեսները, շառագունած, փթթած լեռնային օդից ու եղանակի զովութիւնից, արտայայտում էին խորին բաւականութիւն։ Կարծես, խնճոյքի մէջ էին նստած, կամ հարսանիքի հանդէս էին կատարում։

Զինուորները մի առանձին համազգեստ չունէին, այլ կրում էին իրանց տեղային հագուստը, որ պատրաստված էր հայ կնոջ ձեռքով մանված բուրդից, նրա ձեռքով գործված շալից. և նրա մատներով կարված «գէյմայից»։ Այդ փոքր ինչ կոշտ գործուածները այն առաւելութիւնն ունէին, որ անձրևի տակ թրջվելով, աւելի պնդանում էին և բոլորովին անթափանցիկ էին դառնում։ Այդ պատճառով, նրանք խիստ

անհոգ կերպով նստած էին անձրևի տարափի ներքոյ, միայն իրանց զէնքերը ծածկելով վերարկուների տակ։

Մինչ զինուորները նստած հանգստանում էին, ծերունի զօրապետը ոտքի վրա անհանգիստ կերպով այս կողմ և այն կողմ էր գնում։ Երբեմն կանգնում էր նա և ականջ էր դնում։ Մթին թուխպերի թանձրութիւնից, մի յիսուն քայլ հեռաւորութեան վրա, ոչինչ չէր կարելի տեսնել։ Աչքի փոխարէն ծառայում էր ականջը։ Ծերունի զօրապետի լսողութիւնը, չը նայելով նրա հասակին, դեռ չէր կորցրած իր վաղեմի սրութիւնը։ Նա հետազօտում էր ամեն մի աննշան շըշունջ, քննում էր ամեն մի անորոշ հնչիւն և ձայնահմայի *) նման նրանցից գուշակութիւններ էր անում։ Նա կանչեց իր մօտ Աւթանդիլ գնդապետին, ասելով.

—Նկատո՞ւմ ես, թշնամու հրացանների ձայնը հիմայ սկսեց նուաղիլ, երևում է, անձրևը թոյլ չէ տալիս նրանց շուտ-շուտ կրակ տալ։

—Ես էլ այդպէս եմ կարծում, պատասխանեց գնդապետը, ինքն էլ նոյնպէս ականջ դնելով։

—Նկատո՞ւմ ես, դարձեալ հարցրեց ծերունի զօրապետը,—հրացանների ձայնը աւելի մօտից է

*) Ձայնահմայ նշ. ձայներից գուշակութիւններ անող, որպէս էին Արմաւիրի սօսիաց անտառի քուրմերը։

լսվում, երևում է, թշնամին մեզանից շատ հեռու չէ գտնվում։

—Նրանք այդ բլուրի ետևումն են, խօսակցութեան մէջ մտաւ կալ Օհանէսը, յանկարծ յայտնվելով, կարծես, գետնից բուսաւ նա։

—Ի՞նչ գիտես, հարցրեց ծերունի զօրապետը հետաքրքրութեամբ։

—Մի ժամ առաջ ես նրանց բանակի մօտից անցայ, այնքան մօտից, որ կարողացայ բոլորը տեսնել։ Եւ նա սկսեց պատմել իր տեսածները, որից երևաց, թէ թշնամին բաւական բազմաթիւ է, թէ նրանց հրացանները, թէև բանի պէտք չեն, բայց ամենքն ունեն սրեր, որ ձեռնամերձ կռուի ժամանակ կարող են գործ ածել։ Մի քանի ուրիշ մանրամասնութիւններ ևս հաղորդելուց յետոյ, աւելացրեց նա.

—Երևում է, Բայինդուր իշխանը բաւական հեռու է գնացել, և գուցէ անցել է կիրճի միւս կողմը։ Թշնամին, որպէս ես նկատեցի, հօտը առել է. պատրաստվում էին շարժվել դէպի այն կողմը։

—Բայինդուրից շատ խէր չեն տեսնի, ասաց ծերունի զօրապետը ժպտալով, և դարձաւ դէպի Աւթանդիլ գնդապետը.

—Մերոնք բաւական կազդուրվեցան, հիմայ պէտք է վրա տալ. սկզբում հրացանի բռնել, յետոյ սկսել ծակծկել....

Ութանդիլ գնդապետը Դաւիթ բէկի հետ Վ. Ըրաստանից եկած քաջերից մէկն էր, մօտ քառասուն տարեկան մի տղամարդ, որ յայտնի էր իր յանդուգն և անվեհեր անձնավստահութեամբ։

—Պէտք է սկսել... կրկնեց նա ծերունի զօրապետի վերջին խօսքը։—Մենք բաւական ժամանակ կորցրինք։ Թէև արևը չէ երևում, բայց կէսօր է արդէն։ Մենք մինչև այժմ պէտք է մաքրէինք ճանապարհը։ Շուտով կը հասնեն բէկի զօրքերը, բայց մինչև նրանց հասնելը, այդ անպիտաններին պէտք էր քշել ճանապարհից։

Այդ կարճ պատերազմական խորհրդից յետոյ, որ կատարվեցաւ ոտքի վրա, ծերունի զօրապետը հարկաւոր պատուէրները տուեց գնդապետներին, և հայկական զօրքը մի քանի խումբերի բաժանելով, սկսեցին գնալ։

Թէև ամպամած մթնոլորտի մէջ անկարելի էր նշմարել թշնամուն, բայց նրանք արդէն գիտէին, թէ գլխաւորապէս որտեղ էր ամրացած նա։ Կաղ Օհանէսի հաղորդած տեղեկութիւնները բոլորովին ուղիղ էին։ Նա ճշտութեամբ լրտեսել էր թշնամու բանակը։ Պէտք էր անցնել մի բլուր. թշնամին նորա ետևումն էր։ Իսկ բլուրը անցնելու համար բաւական դժուարութիւններ կային. նրա գագաթի վրա կանգնած էին մի խումբ Թուրքեր, որ մթին ստուերի նման նկարված էին

հօրիզօնի վրա։ Երբ բոլորովին մօտեցան, ծերունի զօրապետը ձայն տուեց։

—Կրակ...

—«Կեցցէ Դաւիթ բէկ», գոռացին հայ զինուորները և նոյն վայրկենում հրացանները միանգամից որոտացին։ Թանձր ծուխը միախառնվեցաւ մթին Թուղպերի հետ և սոսկալի դղրդիւնը շանթերի բոմբիւնի նման կոտրատվելով տարածվեցաւ լեռների մէջ։

Հօրիզօնի վրա նկարված ստուերը չքացաւ։ Երևում էր, Թուրքերի խումբը կամ ընկաւ, կամ ցրվեցաւ։

—Դրանք այդպէս են, ասաց հայ զինուորներից մէկը իր ընկերին.— երբ վրա տաս, կը փախչեն, երբ յետ դառնաս, գազան կը դառնան։

Առաջին կրակից յետոյ կրկին տիրեց խուլ լռութիւն. միայն լսելի էր լինում սումբաների խչխչոցը, որոնցով դարձեալ լցնում էին հրացանները։

Եւ իրաւ, բլուրի գագաթի վրա կանգնած թշնամու խումբը ցրվեցաւ խիստ փոքր կորուստով։ Նրանք պահակներ էին և աւելի ոչինչ։ Բայց գլխաւոր ուժը գտնվում էր բլուրի միւս կողմում։

Հայ զինուորները առանձին խումբերով, գազանների արագութեամբ անցան նոյն բլուրի

գագաթի վրա, որտեղ առաջ կանգնած էին թըշնամու պահակները։ Այդ գիրքին տիրելը մի մեծ յաջողութիւն էր, որ կատարվեցաւ կէս ժամվայ մէջ։

Բլուրի գագաթը այնքան սրածայր չէր, որպէս հեռուից երևում էր։ Այստեղից տարածվում էր մի հարթ տափարակ, որ պատած էր խոտով։ Տեղ-տեղ բուսել էին ոլորմնլի թուփեր, կամ կարելի էր տեսնել մի-մի վայրենի տանձենի։

Անձրևը դադարել էր. երկինքը փոքր առ փոքր պարզվում էր. ամպերի ետևից աղօտ կերպով տեսնվում էր արևի սքօղված բոլորակը։

Օդի նսեմութեան միջից թշնամին նկատեց հայ զինուորների մօտենալը, և մի քանի զամբուրակներ արձակվեցան դէպի հայոց զօրքը։

—Այդ անպիտանները թնդանօթներ էլ են ունեցել, բացականչեց ծերունի զօրապետը ուղիղ այն րօպէում, երբ ռումբերից մէկը ընկաւ նրանից մի քայլ հեռու։— Տղերք, կրակ տուեցէք։

Այս անգամ ոչ բոլորը միասին, այլ իւրաքանչիւր խումբ փոփոխակի կերպով սկսեցին հրացաններ արձակել և մի և նոյն ժամանակ առաջ խաղալ։ Թշնամու կողմից հրացաններ շատ փոքր թւով էին արձակվում. նրանք պատասխանում էին զամբուրակներով, որ երեք

հատից աւել չը պիտի լինէին։ Կռիւը այս կերպով շարունակվեցաւ մի ամբողջ ժամ։

Այդ միջոցին Աւթանդիլ գնդապետը, մօտենալով ծերունի զօրապետին, ասաց.

—Այդ երեխայական խաղից ոչինչ չի դուրս գայ, հրամայեցէք վերջնական կերպով յարձակում գործեն։

—Այժմ վտանգաւոր է... պատասխանեց ծերունի զօրապետը փոքր ինչ վրդովված ձայնով։ —Նայեցէք, թշնամու բանակները միացան։

Գնդապետը նայեց դէպի այն կողմը, որ ցոյց տուեց ծերունի զօրապետը։ Նա տեսաւ, իրաւ, թշնամու միւս զօրաբաժինը, որ գտնվում էր կիրճի աջ կողմում, (այսինքն այն կողմում, որտեղից պէտք է անցնէր Բայինդուր իշխանը) թողնելով իր դիրքը, եկաւ, միացաւ առաջինների հետ։

—Պատրաստ եմ երդվել, որ Բայինդուրը այդ յիմարներին մոլորութեան մէջ է ձգել, խօսեց Աւթանդիլ գնդապետը ուրախութեամբ ծափ տալով։— Դուք ինչպէս էք կարծում, մէլիք։

—Շուտով կը յայտնվի, պատասխանեց ծերունի զօրապետը։— Բայինդուրը գործի մէջ զանցառութիւն չէ սիրում, նա ինքը տեղեկութիւն կը տայ մեզ։ Բայց մինչև տեղեկութիւն ստանալը պէտք է այդ բլուրը, որ մենք ձեռք բերեցինք, պահպանել։

Մինչ հայ զօրապետները այսպիսի անորոշ կարծիքների մէջ էին, թշնամու բանակները միմեանց հետ միանալով, աւելի և աւելի ստուարացան։ Եւ նրանք, որ մինչև այժմ պաշտպանողական դիրք էին բռնած, սկսեցին յարձակողական կերպարանք ընդունել։

«Եա Ալի»... գոռացին հազարաւոր ձայներ և լեռները թնդացրին վայրենի աղաղակներով։

Այդ սրբազան անունը լցնում է մահմեդականի սիրտը կատաղի ոգևորութեամբ. այդ անուան հետ կապված է նրա բոլոր կրօնական զգացմունքը. այդ անունը արտասանելիս նա մոռանում է ամեն ինչ՝ թէ իր անձը, թէ իր կեանքը, և խաւար մոլեռանդութեամբ պատրաստ է բոլորը զոհել նրա սիրոյ համար։

«Եա Ալի»... կրկնվեցան աղաղակները և սոսկալի փոթորկի նման բոլորը միասին յարձակում գործեցին։

«Կեցցէ Դաւիթ բէկ» գոռացին հայոց քաջերը և պատասխանեցին թշնամու հրացանների կրակով։

Գետինը ծածկվեցաւ դիակներով։ Բայց թշնամին դրանից չը վհատելով, մի երկրորդ յարձակում ևս գործեց։ Զամբուրակները այժմ աւելի ստէպ և ստէպ կերպով սկսեցին որոտալ։ Հայերը ոչ մի թնդանօթ չունէին. միայն ժայռերի ետևում պատսպարված, թուփերի մէջ թագնված,

կամ խրամատների խորութեան մէջ մտած, հրացաններ էին արձակում։

Այդ միջոցին մի երիտասարդ, երեսից քրտինքը սրբելով և հազիւ շունչ քաշելով, մօտեցաւ ծերունի զօրապետին, ասելով.

—Ինձ ուղարկեց ձեզ մօտ Բայինդուր իշխանը. ասաց՝ իմ կողմից շատ բարև արա մելիքին, յայտնիր, որ պարսից թագաւորի «բաթման ղըլըճը» մ ա ղ է կ ա մ ո ւ ր ջ ի ց անցաւ. այժմ թշնամին մեր երկուսի մէջ տեղումն է գտնվում, եթէ հնար ունես, բանացրու,—դու այն կողմից, ես այդ կողմից։

Պէտք էր ծանօթ լինել Բայինդուր իշխանի միտք արտայայտելու ձևի հետ, որ կարելի լինէր հասկանալ նրա իմաստը։ Իսկ այդ անգամ նրա հաղորդած տեղեկութիւնը բաւական պարզ էր։ Իշխանը անցել էր «մաղէ կամուրջից», այսինքն կատարել էր այն սարսափելի պտոյտը լեռների տարուփոսերի միջով, որը այնքան անձնավտանգութեամբ յանձն առեց նա։ Այժմ թշնամին գտնվում էր երկու հայ բանակների մէջտեղում և հեշտ էր երկու կողմից ջարդել նրան։

Մի քանի րոպէում այդ ուրախալի լուրը տարածվեցաւ բոլոր հայ զինուորների մէջ, բոլորը առիւծի սիրտ և արծուի թռիչք ստացան։

—Տղերք, ձեր հոգուն մատաղ, ձայն տուեց ծերունի զօրապետը, արագութեամբ իր գունդե-

րի միջից անցնելով.— այնպէս շարժվեցէք, որ ոչ մի հոգի ձեռքից բաց չը թողնէք։

Թշնամու զամբուրակները կրկին որոտացին։

—Այդ զամբուրակները մեր գա՛նլէն տարան, ասաց հայ զինուորներից մէկը.—մինչև երբ դըրանց ձեռքում պիտի թողնենք...

—Շուտով կը խլենք... պատասխանեց մի ուրիշ զինուոր։

Այդ միջոցին թշնամու զօրքերի մէջ նկատվեցաւ խռովութիւն։ Նրանց ետևից նոյնպէս կրակ էին թափում։

—Բայինդուրը հասաւ... լսելի եղան հարիւրաւոր ուրախալի ձայներ։

Թշնամին սեղմվեցաւ երկու կրակների մէջ։ Բայց նա այնքան յամառ էր, որ հեշտութեամբ անձնատուր չէր լինի։ Կռիւը իւրաքանչիւր կողմից, զանազան կէտերի վրա, կատաղութեամբ շարունակվում էր։ Օդը մռայլված էր թանձր ծխով։

Այդ միջոցին մի խումբ, Աւթանդիլ գնդապետի առաջնորդութեամբ, գնդակների կարկուտի միջից անցնելով, յարձակվեցաւ ճեղքել թշնամու վաշտերը և տիրել զամբուրակներին։ Նըրանցից մէկը, մի երիտասարդ, առաջ անցնելով, արծուի արագութեամբ ընկաւ թիւրքաց գլխաւոր դրօշակակրի վրա, և իր սրի մի հարուածով նրան գետին տապալելով, խլեց դրօշակը։ Այդ

միջոցին մի գնդակ անցաւ նրա ոտքի ազդրի միջից։ Նա վեր բարձրացրեց դրօշակը, և «կեցցէ Դաւիթ բէկ» գոչելով, ծիծաղելով ասաց.

—Ես այդ ոտքից հէնց առաջ էլ կաղում էի...

Եւ իրաւ, նա երևանցի կաղ Օհանէսն էր։

Դրօշակի յափշտակութիւնը ազդեց թշնամու զօրքերի մէջ ընդհանուր վհատութիւն։ Նրա վրա կարմիր գոյնով նկարված էր Ալիի աջը, որ հովանաւորում էր նրանց, որ ուժ և զօրութիւն էր տալիս նրանց։

Բայց մի փոքր հեռու կատարվում էր սարսափելի կոտորած։ Աւթանդիլի խումբը կռվում էր թիւրքաց թնդանօթաձիգների հետ։ Հայերը աշխատում էին գրաւել թնդանօթները, իսկ թուրքերը պաշտպանում էին։ Այստեղ վառօդի փոխարէն գործում էր սուր երկաթը։ Հայոց սուսերները հրաշք էին կատարում։ Արիւնը առուակներով վազում էր։ Մարդիկ տապալվում էին մինը միւսի վրա...

—Անիրաւ, մինչև երբ պիտի տանջես մեզ... գոչեց Աւթանդիլ գնդապետը և իր ծանր սուրը իջեցրեց մի վիթխարի թուրք զինուորի գլխին, որը տասնից աւելի վէրք ստանալուց յետոյ, դարձեալ ձեռքից բաց չէր թողնում թնդանօթը։

Նա թնդանօթի փողը գրկած պահելով, այնպէս էլ մնաց, միայն ճեղքված գլուխը թեքվե-

ցաւ մի կողմ, և տաք արիւնը շատրուանի նման դուրս ցայտելով խոր վէրքից, ներկեց իր պաշտպանած մահային անօթը։ Գնդապետը ձեռքով գետին գլորելով գլխակը, գրաւեց թնդանօթը։ Մնացած թնդանօթները նոյնպէս անցան հայերի ձեռքը։

Մինչ այստեղ այս էր կատարւում, միւս կողմից Բայինդուր իշխանը իր որոտալից ձայնով գոռում էր իր զինուորներին.

—Տղերք, չարժէ դրանց վրա վառօդ փչացնել, ծակծկեցէք, ծակծկեցէք...

Եւ հայ զինուորները գրոհ տալով, մէկը սրով, միւսը նիզակով, մի այլը սուինով, ոմանք հաստաբակ քարերով խորտակում էին պատահած զինուորին։ Կոտորածը երկու կողմից ևս տևեց մի քանի ամբողջ ժամ, մինչև թուրքերը աղաղակեցին.

—Ռայեմ... ռայեմ...

Այսինքն անձնատուր ենք լինում կամ հպատակւում ենք։

Բայինդուր իշխանը և նրա հետ շատերը այն կարծիքը յայտնեցին, թէ պէտք է բոլորին կոտորել, բայց ծերունի զօրապետը ընդդիմացաւ, հրամայելով, միայն զինաթափ անել և գերի վերցնել։ Թշնամու անասունները, սայլակները և անհագին քանակութեամբ ռազմամթերք ընկան հայերի ձեռքը։ Այդ ճակատամարտի մէջ հայե-

րը կորցրին մօտ 300 հոգի, բայց թշնամուց ըսպանուածների թիւը 2.000-ից աւել կը լինէր, չը հաշուելով վիրաւորներին, որ համեմատաբար խիստ շատ էին։

—Այդ բոլոր ղալմաղալի մէջ, ասաց Բայինդուր իշխանը մօտենալով ծերունի զօրապետին, —մի ուրախալի բան կայ միայն, որ մենք ձեռք ձգեցինք թշնամու թնդանօթները, որ մենք չունէինք։

—Այդ ուղիղ է, բերդը պաշարելու ժամանակ հարկաւոր կը լինեն մեզ, պատասխանեց ծերունի զօրապետը իր սովորական բարի ժպիտով։

—Ես կարծում եմ, որ բէկն էլ շատ գոհ կը լինի դրանով. նա սիրում է թշնամու զէնքերը խլել, յետոյ իր դէմ գործ դնել։

—Բայց որտեղ մնաց այդ բէկը, չէ երևում, հարցրեց Բայինդուր իշխանը իր շուրջը նայելով, կարծես բէկը նրանց հետ լինէր։

Դեռ ծերունի զօրապետը չը պատասխանած, յայտնվեցաւ մի սուրհանդակ, որը հաղորդեց, թէ բէկը Թորոս իշխանի հետ և իրանց մօտ ունեցած զօրքերով մտան կիրճի մէջ, այնտեղից անցնում են դէպի բերդը գնալու համար։ Նա աւելացրեց, որ բէկին արդէն յայտնի էր կատարւած յաղթութիւնը, և այդ պատճառով նա անհրկիւղ կերպով մտաւ կիրճի մէջ, գիտէր, որ ճանապարհը թշնամիներից մաքրված է։

—Իսկ Մխիթար սպարապետից լուր չունե՞ք, հարցրեց սուրհանդակից ծերունի զորապետը։

—Ունեմ, նա էլ մի գեղեցիկ յաղթութիւնով դուրս է եկել Կարա-բուրունի անցքից, որ բռնած էր թշնամիներով։ Այժմ բերդին հասած կը լինի սպարապետը։

—Իսկ մենք ինչ սպասելիք ունենք, ասաց Բայինդուր իշխանը, և հրաման տուեց ճանապարհ ընկնելու։

Գերիների թևքերը կապեցին չուաններով, նրանցից խլած ռազմամթերքը բարձեցին նրանց սայլակների վրա, նոյն սայլակների վրա տեղաւորեցին և հայ վիրաւորներին, յետոյ ճանապարհ ընկան։

Բոլորովին մութն էր, երբ բէկը Թորոս իշխանի հետ մի կողմից, Մխիթար սպարապետը միւս կողմից, հասան բերդին։ Երբ Բայինդուր իշխանը մելիք-Փարսադանի հետ եկան,—սկսվեցաւ պաշարումը։

ԺԵ.

Անձրևային մառախլապատ օրին յաջորդեց պարզ, աստղազարդ գիշեր։

Ձևու *) բերդը պաշարուած էր հայոց զորքե-

*) Ձևու. կոչվում է և Ձէյվայ. այդ բերդը պէտք չէ շփոթել այն Ձէյվայ ամրոցի հետ, որ գտնվում է Ղարաբաղի Գիւլիստան կոչված մահալում, Ղարաչինար կամ Աղջա-Ղալայ գիւղի

րով։ Պարսից զօրքերը ամեն կէտերի վրա յաղթվելով, մի մասը ջարդված էր, մի մասը գերի էր ընկած, իսկ մնացածները փախել, պատսպարվել էին բերդի մէջ։ Դէպի բերդը տանող բոլոր կամուրջները պարսիկները քանդել էին։ Հաղորդակցութիւնը դրսի հետ կտրված էր։

Ձևու բերդը գտնվում էր Հալիձորի գետի ձախ ափի վրա, հին Բաղաբերդից մէկ մղոն հեռաւորութեամբ դէպի հարաւ։ Սիւնեաց աշխարհի շատ բերդերի նման, նա շինված էր մի այնպիսի տեղում, ուր երկու գետեր խառնվելով միմեանց, կազմում են մի սուր եռանկիւնի։ Մի այսպիսի եռանկիւնու մէջ գտնվում էր բերդը։ Հարաւային կողմից գալիս էր Հալիձորի գետը, իսկ արևմտեան կողմից Գեղվայ գետը կտրելով նրան, կազմում էր եռանկիւնին։ Նա Ղափանի միւս բերդերի նման բոլորովին բարձրավանդակի վրա չէր գտնվում, այլ նեղ ձորի մէջ, սեղմված յիշեալ երկու գետերի գրկում։ Մի կողմից միայն բարձրանում էր դէպի արևմտեան կողմի բլուրը, ուր կանգնած էր անմատչելի միջնաբերդը։

Բերդը պատած էր հաստ պարսպով, որը չոր-

մօտ, և ոչ շփոթելու է Բարգիւշադի վիճակի Մուղանջիկ կոչված մասի Ջէյվայի հետ։ Մեր նկարագրած Ձէվուն յայտնի է Սիւնեաց պատմութեան մէջ Գեղի անունով, որը Բաղաց իշխանների բերդն էր, գտնվում է Ղափանի մէջ։

ջանակի ամրացրած էր բրգաձև աշտարակներով։ Պարսպի շուրջը տարածվում էր մի երկրորդ ամրութիւն. դա էր ածուխի հողից կազմված թանձր թումբը, որը իր փափուկ կողքերի մէջ այնպէս էր ընդունում թնդանօթների ռումբերը, որպէս փետուրեայ բարձը ընդունում է իր մէջ գնդասեղի ծայրը, առանց ցաւ զգալու։ Դա մի ամուր պատնէշ էր, միայն հողից թափված։ Այդ պատնէշի մօտով, խորին, բնական խրամատների միջով, որոտալով, քարերին և ժայռերին զարկվելով, անցնում էին Հալիձորի և Գեղվայ գետերը, որոնք նոյն իսկ բերդի ստորոտում միանում էին, նրա դիրքը աւելի անմատչելի կացուցանելու համար։

Միջնաբերդի մէջ այդ միջոցին տիրում էր կատարեալ խաղաղութիւն։ Կարծես, մի չար մարգարէի գուշակութեամբ մարդիկ համոզված լինէին, թէ ահա մի քանի րոպէից յետոյ աշխարհս կը կործանվի, և ամեն ինչ կը լուծվի, կը կորչի յաւիտենական ոչնչութեան մէջ։ Ամեն ոք սարսափելի տագնապով սպասում էր վճռական րոպէին։ Խանի կանանոցի մէջ յուսահատութիւնը աւելի սոսկալի էր։ Չը նայելով, որ գիշերից բաւական անցել էր և այդ ժամուն բոլոր խանումները հանգստացած էին լինում իրանց փափուկ օթեակներում, իսկ այդ գիշեր դեռ ոչ ոք քնած չէր։ Նրանք ընթրիք անգամ չէին վայե-

լել։ Բազմածախ խոհանոցի բոլոր պատրաստութիւնները պղնձէ մեծ մատուցարանների վրա սառչում էին։ Ներքինիները իրանց շողոքորթութեան բոլոր հմտութիւնով մնացել էին շուարած։ Նրանք չը գիտէին ինչով մխիթարել, ինչով հանգստացնել տիկիններին։

Այդ միջոցին մանկահասակ խանումներից մէկը, իր շքեղազարդ օթեակում, խելագարի նման, մի անկիւնից դէպի միւսն էր վազում, ինքն էլ չը գիտէր, թէ ինչու համար։ Նրա գլխին քօղ չը կար. մետաքսեայ նեղ վարսակալը միայն հաւաքել էր ճոխ գիսակները գեղեցիկ գլխի վրա, որոնք առանց հիւսերի թափվել էին կիսամերկ ուսերի վրա, ծածկում էին նրա դալար մէջքը։ Դէմքը գունաթափ էր. աչքերի մէջ վառվում էր տենդային երկչոտութիւն։ Նա մօտեցաւ պատուհանին, դողդոջուն մատներով բարձրացրեց վարդագոյն-թաւիշեայ վարագոյրը։ Այնտեղից վեր առեց մի փոքրիկ արկղիկ, որ Սպահանի ընտիր գործ էր հիանալի քանդակներով։ Նա դրեց արկղիկը գորգի վրա, ինքը նստեց նրա մօտ։ Փոքրիկ բանալին պտտվեցաւ նրա նուրբ մատիկների մէջ, արկղիկը բացվեցաւ։ Նրանում, կարծես, թագցրած լինէին երկնքի աստղերի ամենագեղեցիկները, որոնք իսկոյն փայլել սկսան ճրագի լոյսի առջև։ Դրանք գոհարներ էին, որոնք ոչ միայն հանդիսաւոր օրերում, այլ հասա-

րակօրէն զարդարում էին գեղեցիկ կնոջ բազուկները, մատները, կուրծքը, պարանոցը և մինչև անգամ ոտների սրունքները։

Այդ արկղիկի մէջն էր ամփոփված նրա ուրախութիւնը, դրանով էր գնել անտանելի ամուսինը նրա սէրը։ Իսկ այժմ երկար մի առանձին տխրութեամբ նայելուց յետոյ աչք շլացնող ակների վրա, նա կրկին կողպեց արկղիկը, մտածում էր իր գանձը թաքցնել մի ծածուկ տեղում։ Նա վեր կացաւ, արկղիկը սեղմած գողտրիկ կուրծքի վրա, որ այդ միջոցին սաստիկ զարկում էր։ Աչք էր ածում իր շուրջը, տեսնելու, թէ որտեղ աւելի յարմար էր թաքցնելու։ Նոյն րոպէում լսելի եղաւ թնդանօթի որոտը, որի արձագանքը գղրգալով տարածվեցաւ բերդը շրջապատող նեղ ձորերի մէջ։ Տիկինը մի ակամայ ճիչ բարձրացրեց, ձեռքերը թուլացան, արկղիկը ցած ընկաւ, և փշրվելով, գոհարները սփռվեցան նաշխուն գորգերի վրա, նրանց նկարները աւելի բազմատեսակ անելու համար։

Այդ թշնամու թնդանօթների ձայնն էր։ Առաջին անգամը չէր, որ որոտում էին նրանք, բայց տիկինը, խորասուզված իր հոգեկան խռովութիւնների մէջ, դեռ ոչինչ չէր լսել։

Նա մոռացաւ գոհարները։ Մայրական սէրը խեղդեց պճնասիրութեան ցանկութիւնը։ Միակ առարկան, որ այժմ մտաբերեց նա, էր իր զա-

ւակը։ Սկսեց սենեկում կատաղաբար որոնել նըրան, ամենեւին չը մտաբերելով, որ նա այնտեղ չէր, այլ պառկած էր կից սենեակում աղախնի հսկողութեան ներքոյ։

Տիկնոջ պահապան ներքինին նախասենեակում նիրհում էր, ամենեւին ուշադրութիւն չը դարձնելով, թէ ինչ է կատարվում իր շուրջը։ Ծերունի ներքինին աֆիօն ընդունելու սովորութիւն ունէր, այս գիշեր՝ երևի, սրտի տխրութիւնից, փոքր ինչ աւել ընդունեց և արբեցուցիչ թոյնը բոլորովին թմրեցրեց նրան։ Բայց տիկնոջ արձակած ճիչը վրդովեց նրա հանգստութիւնը, նա կիսաքուն դրութեան մէջ գլուխը վեր բարձրացրեց, և նախասենեակի խաւարի մէջ ոչինչ չը տեսնելով, կրկին գլուխը դրեց իր կարծր բարձի վրա, սկսեց մրափել։ Նրա բարձը, որ մի տափրակ էր, լցրած աղոցած փայտի թեփով, դրած էր ուղիղ տիկնոջ դռան հանդէպ, գլխի կողմից։ Եթէ աւելցնենք այդ բարձի վրա ներքինու ածիլած գլուխը,—երկուսը միասին կազմում էին մի ամուր պատնէշ, որ արգելում էր տիկնոջ սենեակի դռան ներսից բացվելը։ Այսպիսով ինքը ներքինին ներկայացնում էր մի մեծ կողպէք, որ փականք էր դրել խանի գեղեցիկ կնոջ, օթեակի դռան վրա։ Որպէս մի հաւատարիմ շուն, գլուխը կպցրած դռանը, նա ամբողջ գիշերը պառկած էր լինում նախասենեակում։ Ոչ մի

անցուդարձ տիկնոջ սենեակի դռնով կատարվել չէր կարող, առանց նրան զարթեցնելու։ Բայց երբ այդ սոսկալի պահապանը զարթեցաւ, յանդուգն այցելուի մահը պէտք էր վճռւած համարել։

Չը նայելով, որ ամրոցի մէջ տիրում էր կատարեալ անկարգութիւն, բայց կանանոցի մէջ դեռ սովորական կարգերը բոլորովին չէին խանգարված։ Կանանոցը այն միակ հիմնարկութիւնն է մահմեդական աշխարհում, որի օրէնքները կամայականութեան չեն ենթարկվում։ Թող աշխարհը քանդվի, թող ամեն ինչ տակնուվրա լինի, բայց կանանոցի գերին իր օթեակից դուրս գալու իրաւունք չունի։

Բայց նոյն րոպէում տիկինը այդ խստութիւնների վրա ուշադրութիւն չէր դարձնի։ Եթէ մըտաբերէր, որ իր զաւակը գտնվում է աղախնի սենեակում, դուռը բաց կանէր, և ներքինու գըլուխը ու մարմինը ոտնակոխ անելով, կանցնէր և կը մտնէր աղախնի սենեակը։ Նա վանդակի մէջ բռնված անընտել թռչունի նման անդադար թռվռում էր այս կողմ և այն կողմ։ Հարիւր անգամ նայեց իր անկողնի մէջ, հարիւր անգամ շօշափեց նրան, բայց դարձեալ չէր հաւատում իր աչքերին, թէ իր զաւակը այնտեղ չէր։ Որդեկորոյս մայրը բոլորովին շփոթված էր։ Կասկածը նրա մէջ կատաղութեան հասաւ, երբ թնդանօթ-

ները սկսեցին այժմ աւելի և աւելի յաճախ որոտալ։ Նա ուշաթափ եղաւ, ընկաւ այն գոհարների վրա, որ մի քանի րոպէ առաջ սփռված էին գորգերի վրա և զարդարում էին նրանց գեղեցկութիւնը։

Աղախնի սենեակում ճրագը դեռ վառվում էր։ Ինքը, աղախինը, որին կոչում էին Փարիչան, նստած էր իր տիկնոջ երեխայի փոքրիկ անկողնի մօտ։ Երեխան քնած էր։ Նրա ծանր շնչառութիւնը ցոյց էր տալիս, որ բոլորովին առողջ չէ. և իրաւ, մի քանի օր էր, որ կոկորդի ուռոյցք էր ստացել։

Նա գլուխը վեր բարձրացրեց, և կիսաբաց աչքերով նայելով աղախնի վրա, ասաց.

—Ջուր եմ ուզում։

—Կը տամ, զաւակս, կը տամ, ասաց աղախինը և վեր կացաւ կատարելու նրա պահանջը։

Երեխան ջուրը խմելուց յետոյ, գլուխը կրկին դրեց բարձի վրա և իսկոյն քուն եղաւ։ Աղախինը դարձեալ նստեց իր առաջվայ տեղում, հիւանդի անկողնի մօտ։ Արդեօք ցաւակցութիւնը, թէ պարտաճանաչութիւնն էր ստիպում այդ մանկահասակ կնոջը հսկել իր հիւանդի մահճի մօտ,—յայտնի չէ, միայն երևում էր, որ նա վճռել էր այս գիշեր ամենևին չը քնել։ Գուցէ նա նոյնքան վախենում էր, որպէս միւսները և երկիւղը խլել էր նրա աչքերից քունը. գուցէ

պաշարված ամրոցը նրան նոյնքան սարսափեցնում էր, որպէս միւսներին։

Կրկին լսելի եղաւ թնդանօթի որոտումը։

Բայց այդ կործանիչ որոտումը, որ ուրիշների վրա սոսկում էր բերում, կարծես, նրան մի առանձին զուարճութիւն էր պատճառում։ Նրա տխրամած դէմքը աւելի և աւելի պայծառանում էր և խոշոր աչքերում վառվում էր ուրախութեան կրակը։ Թշնամու թնդանօթի ձայնը արձագանք էր գտնում նրա սրտում, խորին բերկրութեան արձագանք։

Նա վեր կացաւ, ճրագը վեր առեց, ուշիկ քայլերով դուրս եկաւ։ Մի քանի վայրկեան կանգնեց նախասենեակում, նայում էր պառկած ներքինու վրա։ Ներքինու խռմփալու ձայնը արդէն ցոյց էր տալիս, որ նրա քունը խիստ ծանր էր։ Նա զգուշութեամբ մօտեցաւ տիկնոջ սենեակի դռանը։ Թէև ներքինու գլուխը և բարձը դրած էին նրա հանդէպ, բայց նրանք այնքան տեղ չէին բռնում, որ արգելէին աղախնի մօտենալը։ Նա մի կողմում կանգնելով, թեքվեցաւ և ականջը ուշադրութեամբ տարաւ դէպի դռան փոքրիկ ճեղքը։ Ներսից ոչ մի շշունջ լսելի չէր լինում։ Նա մտածեց, որ տիկինը, երևի, քնած է, թէև նա դեռ ուշագնացութեան մէջ էր գտնվում։

Նա կրկին ուշիկ քայլերով վերադարձաւ իր

սենեակը, ճրագը դրեց իր տեղում և նստեց հիւանդի անկողնի մօտ։ Մի քանի րոպէ գտնվում էր մի տեսակ անվճռականութեան մէջ, որ խիստ հեշտ կարելի էր նկատել նրա բազմահոգ դէմքից։ Յետոյ կամաց-կամաց ձեռքը տարաւ դէպի հիւանդի վերմակը և զգուշութեամբ կիսով չափ բարձրացրեց։ Նա այժմ մի առանձին երկիւղածութեամբ նայում էր գեղեցիկ երեխայի երեսին, նայում էր դողալով և չէր վստահանում կատարել այն, ինչ որ մտածում էր։

—Քնե՜լ... քնե՛լ...լսելի եղաւ կանանոցի բարձր աշտարակի գլխից։

Դա ներքինապետի հրամայական ձայնն էր, որ իր գիտանոցից նայում էր ամբողջ հարեմի վրա։ Այդ աշտարակը մի այնպիսի տեղում էր կանգնած, որ նրա բարձրութիւնից կարելի էր տեսնել կանանց բոլոր օթեակների լուսամուտները։ Այդ սպառնալից ձայնը լսելի էր լինում ամեն գիշեր երեք անգամ։ Առաջին անգամին պէտք է բոլոր կնիկները իրանց ընթրիքը կերած, վերջացրած լինէին. երկրորդ անգամին պէտք է ճրագները մարէին և քուն լինէին. իսկ երրորդ անգամին դռները փակվում էին և յարաբերութիւնները բոլորովին արգելվում էին։

Ներքինապետի այժմեան զգուշացուցիչ ձայնը երկրորդ անգամին էր պատկանում, որով մի քանի րոպէից յետոյ ամբողջ հարեմի մէջ պիտի

տիրէր խաւարը։ Այդ ձայնը, կարծես, չտապեցրեց աղախնին կատարել իր դիտաւորութիւնը, որի համար նրա քաջութիւնը պակասում էր։ Նա ձեռքը դողդողալով տարաւ դէպի հիւանդի պարանոցը, բռնեց նրա կոկորդից և բթամատով ու ցուցամատով այնպէս պինդ սեղմեց ուռոյցքը, որ երեխան թփրտաց, դողդողաց, խռխռաց և ապա սկսեց սաստիկ ճիչ բարձրացնել։

Այդ միջոցին աղախինը զարմանալի արագութեամբ վեր թռաւ, ոտքով զարկեց ճրագին, ցած գցեց, ճրագը հանգաւ, իսկ ինքը խաւարի միջից դուրս պրծաւ բարձր ձայնով գոչելով. «խեղդւեցաւ, խեղդւեցաւ, օգնեցէք, խեղդւեցաւ»...

Նա վազեց դէպի տիկնոջ սենեակը, իր ոտքերի տակ կոխ տալով, տրորելով պառկած ներքինուն, որը սարսափելով զարթնեց, և չը կարողանալով իսկոյն հասկանալ պատահածը, իր սոսկալի շփոթութեան մէջ կարծում էր, թէ ահա թշնամիները ներս թափւեցան ամրոցի մէջ, սկսել են բոլորին կոտորել։—«Օգնեցէք... օգնեցէք»... սկսեց աղաղակել և նա, դուրս վազելով դէպի կանանոցի բակը։

Ոչ սակաւ եղաւ և աղախնի զարհուրանքը, երբ նա մտաւ տիկնոջ սենեակը։ Տեսնելով նըրան գունաթափ, դիակի նման ընկած յատակի վրա,—տեսնելով այնտեղ սփռված գոհարները,

սենեակի անկարգութիւնը, փշրված արկղիկը,—նա կարծեց, թէ հէնց նոյն րոպէում այնտեղից փախաւ աւազակը, որը իր տիկնոջը սպանելով, կողոպտել էր նրա սենեակը։

Բայց նա այնքան սրտի և մտքի ամրութիւն ունէր, որ բոլորովին չը շուարվեցաւ։ Մանաւանդ, երբ նայեց լուսամուտներին, գտաւ նըրանց ամբողջութեամբ իրանց տեղում փակված։ Իսկոյն մտաբերեց, թէ ինքն էր, որ ներքինուն կոխ տալով, անցաւ նրա վրայից և բաց արաւ դուռը։ Ուրեմն ոչ մի տեղից աւազակ մտնել չէր կարող։ Նա զգաց իր սխալը և շտապեց իր ձեռնարկութեանը մի այլ կերպարանք տալ։

Առանց մի վայրկեան կորցնելու, տիկնոջը նոյն դրութեան մէջ թողնելով, նա դուրս վազեց կանանոցի բակը, որ թոյլ չը տայ յիմար ներքինուն շատ աղմուկ բարձրացնել։

—Աստղ, Աստղ, ձայն տուեց նրան մօտենալով,—ինչ ես խելքդ կորցրել, այստեղ մեր տիկինը մեռնում է, այնտեղ նրա երեխան խեղդվում է, իսկ դու բակում կանգնած, աղաղակներ ես բարձրացնում։ Գնանք, գնանք շուտով։

—Ի՞նչ է պատահել, հարցրեց շփոթված Աստղը, ամենևին չը հասկանալով իր լսածը։

—Եկ, տես, թէ ինչ է պատահել, քաւթառ, մեռելի նման քնում ես, ու ոչինչ բանից տեղեկութիւն չունես։ Վերջին խօսքերից յետոյ

աղախինը համարեա ուժով բռնեց նրա ձեռքից և քարշ տուեց դէպի տիկնոջ սենեակը։

Բայց Ներքինին, ցոյց տալու համար, թէ ինքն էլ մի բանից տեղեկութիւն ունի, մտաբերեց աղախնի խօսքերից մէկը միայն՝ «խեղդվում է» և հարցրեց.

—Դու ասացիր խեղդվում է, ո՞վ է խեղդվում։

—Երեխան, յիմար, դու չես իմանում, քանի օր է, որ նա հիւանդ է, կոկորդը ուռչել է, հիմայ ցաւը սաստկացել է, խեղդվում է։

—Տիկնոջ հետ ինչ է պատահել։

— Ես ինչ գիտեմ, ինչ է պատահել, տիկինը իր սենեակում ընկած է։

Ներքինին այժմ բաւական բան հասկացաւ և աղախնի հետ շտապեց դէպի տիկնոջ սենեակը։

Բարեբախտաբար թէ աղախնի և թէ Ներքինու բարձրացրած աղաղակները արձակվեցան մի և նոյն րոպէում, երբ բերդից սկսեցին պատասխանել թշնամու թնդանօթներին։ Դրանց ձայնը խլացաւ հրանօթների ընդհանուր գղրգումների մէջ։ Կանանոցում ոչ ոք չիմացաւ պատահած աղմուկը, և ոչ Ներքինապետը, որը իր դիտանոցի բարձրութիւնից ամեն մի շարժում, ամեն մի շշնջիւն լրտեսում էր։

Լսեց միայն մէկը, որ աւելի պատճառ ունէր չը լսելու, լսեց նա, որ ուշաթափ, գետնատարած, ընկած էր իր սենեակի յատակի վրա։

Հէնց որ դժբաղդ մօր ականջին դիպաւ «խեղդվում է» բառը, նա մի մոգական հարուածքով ցնցվեցաւ, աչքերը բաց արաւ, սկսեց շփոթված կերպով նայել իր շուրջը։ «Օգնեցէք» բառը բոլորովին արթնացրեց նրան։ Նա իսկոյն վեր թռաւ և վազեց աղախնի սենեակը։ Այստեղ ճրագ չը կար։ Երկար նա խաւարի մէջ խարխափելով, որոնում էր զաւակի անկողինը, մինչև աղախինը և Ներքինին ճրագով ներս մտան։

Երեխան դեռ լաց էր լինում. կոկորդի խըռխռոցը իսպառ վերջացած չէր. յետոյ սկսեց թքել արիւն, շարաւի հետ խառն։ Երևում էր, որ աղախնի մատների սաստիկ ճնշելուց, կոկորդի ուռոյցքը պայթել էր և այժմ դուրս էր ժայթքում այնտեղ հաւաքված շարաւը։ Այդ թէև օգտաւէտ էր հիւանդին, բայց աղախնի գործողութիւնը ոչ նրան բժշկելու և ոչ խեղդելու նպատակ ունէր։ Նա միայն ցանկանում էր հիւանդի վրա դարձնել մօր ուշադրութիւնը և հասաւ իր նպատակին։

Տեսնելով իր զաւակի դրութիւնը, մայրը մոլեգնաբար գրկեց նրան և սկսեց լաց լինել։

—Հիմայ կը մեռնի երեխաս... կը մեռնի, փարիչան, հառաչում էր նա, դառնալով դէպի աղախինը։

—Փարիչանը մատաղ լինի քո հոգուն, տիկին

ջան, պատասխանում էր աղախինը դառնացած ձայնով, և ձևացնելով, իբր թէ արտասուքը սըրբում է.— երկիւղ չը կայ, ամենևին երկիւղ չը կայ. վտանգը անցաւ. Թող Աստուած Ֆարհադի (այսպէս էր երեխայի անունը) ցաւը իմ վրա բերէ, եթէ նրան մի բան պատահի։

Ծերունի ներքինին սառած կանգնել էր, հեռուից նայում էր ցաւալի տեսարանի վրա։ Աղախնի խօսքերը չը հանգստացրին մօրը, մանաւանդ երբ երեխան, թէև դադարեց լաց լինելուց, բայց գլուխը դրեց մօր կուրծքի վրա, և ընկաւ մի տեսակ տենդային դրութեան մէջ։

—Այդ լաւ է, շատ լաւ, առաջ տարաւ աղախինը.—տեսնում էք, Ֆարհադը հանգստացաւ, հիմայ կը քնէ, անուշ քնով կը քնէ.—հանգստացաւ։ Սառան էլ էր այդպէս ասում։ Առաւօտեան երբ մոխկ տուեց, ասաց, այս գիշեր կը ծակվի ուռոյցքը։ Հիմա նրա խօսքը կատարվեց։ փառք քեզ, տէր Աստուած, Ֆարհադը հանգստացաւ։

—Բայց նա ասաց, երբ ուռոյցքը ծակվելու լինի, ինձ շուտ իմացում տուէք։ Այս րոպէիս կը գնամ կը կանչեմ։ Գիշերից չեմ վախենում. Ֆարհադի համար դժոխքն էլ կը գնամ։

Աղախնի վերջին խօսքերը փոքր ինչ մխիթա-

րեցին տիկնոջը։ Իրաւ, Սառան առաւօտեան տեսաւ հիւանդին, ասաց, շատ կարելի է, որ այս գիշեր ուռոյցքը ծակվի։ Այն ժամանակ թէև փոքր ինչ արիւն և չարաւ կը գայ բերանից, բայց դրանով վտանգը կանցնի. միայն պէտք է իրան շուտ իմացում տալ, որ հարկաւոր դարմանները գործ դնէ։

Բայց ո՞վ էր այդ Սառան.— մեր նախածանօթ գինեվաճառ այրին, որ նախընթաց գիշերը իր տանը ընդունեց ծպտեալ հիւրերին.—տէր Աւետիքին սափրիչի կերպարանքով, Խորէն հայր սուրբին նրա աշակերտի կերպարանքով, Շահումեան Ստեփաննոս իշխանին հիւսնի կերպարանքով, իսկ Մելիք-Փարսադանի որդի Բալի զօրավարին խանի ֆէրրաշի կերպարանքով։ Սառան ծանօթ էր խանի ամրոցի հետ։ Այդ ծանօթութեան առիթը նրա ունեցած երկու պարապմունքն էր։ Իբրև գինեվաճառ, նա շատ անգամ ծածուկ, իր ձեռքով ըմպելիքներ էր բերում խանի համար, որը չէր ցանկանում իր ծառաների ձեռքով ստանալ, որպէս զի, իր գինարբութեան սովորութիւնը մահմեդականներին չը յայտնվի։ Հաւատարիմ Սառան ամենայն խոհեմութեամբ պահում էր այդ գաղտնիքը։ Իսկ կանանոցի հետ յարաբերութիւն ունէր նրանով, որ նրան շատ անգամ կանչում էին, երբ երեխաների կոկորդը ուռչում էր։ Սառան իր ինք-

նուս փորձերով բաւական հմուտ էր այդ հիւանդութիւնը բժշկելու մէջ։

—Գէ՛ գնա կանչիր, մի՛ ուշացիր, ձայն տուեց տիկինը։—Երեխաս կը մեռնի, եթէ նա չը գայ։

—Ես չը գնա՞մ փարիչանի հետ, հարցրեց Ներքինին երկչոտ ձայնով։

—Հէնց դու էիր պակաս, քաւթառ, պատասխանեց աղախինը մի առանձին սպառնալիքով նայելով Ներքինու երեսին։—Դու չես իմանում, որ հրամայված է այս գիշեր բոլոր հայերին կոտորել, և երկիւղից ոչ մի հայ այս գիշեր իր տանից դուրս չի գայ։ Ես կը գնամ, մի կերպով կը համոզեմ, կը բերեմ Սառային, բայց եթէ քո ռեխը տեսնելու լինի, կը վախենայ, ու չի գայ։

Որովհետև գործը վերաբերվում էր մի ծանրակշիռ հարցի, ինչպէս էր իր տիկնոջ զաւակի կեանքը, այդ պատճառով բարկացած Ներքինին լուռ կացաւ և չը պատասխանեց աղախնի կոպտութիւններին։ Բայց եթէ մի ուրիշ անգամ լսելու լինէր նրանից այդ խօսքերը, անտարակոյս նրա ծամերը կը փետէր։

—Դու միայն անցկացրու ինձ դռներից, որ պահապանները չարգելեն, կրկին դարձաւ նա դէպի բարկացած ծերուկը։

Ներքինապետի գիտանոցի բարձրութիւնից վաղուց արդէն լսելի էր եղած նրա երրորդ անգամի հրամայական ձայնը՝ «քնել», և կանանոցի

մէջ բոլոր դռները փակված էին, ոչ ոք իրաւունք՝ չունէր ներս ու դուրս անելու։ Այս պատճառով Ներքինին նախ քան առաջնորդելը աղախնին դէպի Սառայի տունը, դիմեց Ներքինապետի մօտ, որ նրան յայտնէ հիւանդի անցքը, և խնդրէ գիշերվայ անունը, որովհետև առանց գիշերվայ անունը տալու, պահապաններից և ոչ մէկը դռները չէր բաց անի։

Մինչև ներքինու վերադառնալը փարիչանը բոլորովին պատրաստ էր ճանապարհ ընկնելու համար։ Նա փաթաթեց իր գլուխը մի հաստ շալով, ծածկվեցաւ իր կապտագոյն չադրայի մէջ և դուրս գնաց։ Տիկինը մնաց միայնակ աղախնի սենեակում, գրկած ունելով երեխան մայրական կուրծքի վրա, որը այդ միջոցին սաստիկ բաբախում էր։ Երեխան այժմ աւելի անհանգիստ էր, գտնվում էր ջերմի մէջ, և երբեմն ամբողջ մարմնով ցնցվում էր, կարծես աղախնի անգութ մատները կրկին սեղմվում էին նրա կոկորդի վրա։ Եթէ նա գիտենար իր հետ պատահածը, բոլորը կը պատմէր մօրը. բայց ամեն ինչ կատարվեցաւ նրա հետ, երբ նա քնած էր։

Կանանոցի բակում վառվում էին չորս լապտերներ միայն, որոնք տնկած էին չորս սիւների գլխին, և իւրաքանչիւրը գտնվում էր քառակուսի բակի մի անկիւնում։ Հարեմների օթեակների լուսամուտներից լոյս չէր երևում։ Նրանք քնած

էին, թէ արթուն,—յայտնի չէ, բայց որովհետև նրանց հրամայված էր «քնել», թէկուզ աշխարհն էլ տակնուվրա լինէր, պէտք է ցոյց տային, որ քնած են։

Ներքինին աղախնի հետ մօտեցան առաջին դռանը, կամաց բաղխեցին։ Դռան ետևից հարցրին.

—Գիշերվայ անունը։

—«Փասիան», պատասխանեց ներքինին հազիւ լսելի ձայնով։ Դռները բացվեցան։

Կանանոցի բակից դուրս գալով, նրանք մտան մի երկայն ծածկված դալան (կօրիդօր), որ լուսաւորված էր երկու լապտերներով։ Այստեղից մի դուռ տանում էր դէպի մի երկրորդ փոքրիկ բակ, որտեղ էր կանանոցի խոհանոցը։ Այդ դռնից անցնելու համար դարձեալ նոյն հարցը և պատասխանը տրվեցաւ։ Այսպէս նրանք անցան մի քանի բակեր, մի քանի դալաններ, մինչև դուրս եկան խանի պալատի լաբիրինթոսից։

Դրսում տիրում էր խաւար, իսկ բերդի փողոցների մէջ աղմուկ և իրարանցում։ Մարդիկ խելագարի նման դռում-դոչումներով վազվզում էին։ Աղախինը ներքինուն թողեց կէս ճանապարհի վրա, պատուիրելով իրան սպասել, իսկ ինքը շտապեց դէպի Սառայի տունը։

ԺԶ.

Խանի ամրոցը բաժանված էր երկու գլխաւոր մասների. մէկի մէջ գտնվում էր ընդարձակ կանանոցը, իսկ միւսի մէջ նրա դիւանատունը։ Այս գիշեր դիւանատան մասը իր կատարեալ կազմակերպութեան մէջն էր. ֆէրրաշները, գզիրները, բոլոր զինուորական և դիւանական պաշտօնականները իրանց տեղումն էին։ Մէկ սենեակ չը կար, որ լուսաւորված չը լինէր. բոլորի մէջ խմբված էին խանի ծառայողները, անհամբերութեամբ սպասում էին նրա հրամանին։

Խանը իր վէզիրի հետ առանձնացած էին մի մեկուսի սենեակում, խորհուրդ ունէին։ Գուցէ նրա կեանքում առաջին անգամն էր պատահում, որ գիշերվայ այդ ժամում կանանոցում չէր գտնվում։ Սենեակը, որի մէջ առանձնացած էին նրանք, շատ փոքր էր, վարագոյրները իջեցրած էին և դռները փակած։ Նախասենեակում սպասում էր խանի մտերիմ մանկլաւիկներից մէկը միայն։

Ամրոցի իշխանը ծալապատիկ նստած էր մի թանգագին գորգի վրա, իսկ նրա առջև աղերսաւոր կերպարանքով չոքած էր վէզիրը։ Երկուսի մէջ տիրում էր խորին, չարագուշակ լռութիւն։ Միայն լսելի էր լինում ղէյլանի մելամաղձոտ կրկրոցը, որ ներդաշնակաբար ձայն էր արձակում խանի ամեն մի ծխելու հետ։ Իսկ այս գիշեր նա մի առանձին ախորժակով էր ծխում «քօրօղլուի»

թամբաքուն *), որ թմրեցնելու չափ արբեցուցիչ էր: Նրա դէմքի վրա նկարված էր կատաղի վըրդովմունք, ճակատը կնճռած էր, կրակոտ բիբերը վայրենի կերպով շարժվում էին թաւ յօնքերի տակից:

—Ձեր ծառան դարձեալ թոյլ է տալիս իրան աղերսարկու լինել, խան, խօսեց վէզիրը խոնարհութեամբ.—ուրիշ ճար չը կայ, ամեն ընդդիմադրութիւն ապարդիւն կը լինէր և աւելի կը գրգռէր թշնամու կատաղութիւնը: Ես դարձեալ խորհուրդ եմ տալիս վաղ առաւօտեան անձնատուր լինել: Մենք խաղաղութեան նշան կը տանք, եւ ինքս կը գնամ թշնամու բանակը և հաշտութեան դաշն կը կապեմ բէկի հետ:

—Ես երդվում եմ իմ պապերի գերեզմանով, եթէ դու միւսանգամ կը համարձակվես այսպիսի յիմարութիւններ խօսել, ես կը հրամայեմ շան նման քեզ սատակեն, գոռաց բռնակալը գազանի մռնչիւնով:

Սպառնալիքը չը շփոթեցրեց վէզիրին, նա բաւական սառնասրտութեամբ պատասխանեց:

—Ինձ համար մի և նոյն է, առանց այդ էլ բէկի զինուորները ինձ կը սատակեն, աւելի լաւ է որ շուտ կատարվի և իմ տիրոջ ձեռքով:

---

*) «Բօրօզլուի» կոչված թամբաքուն ծխում են հին փայտակարանի կողմերի թափառական ցեղերը, որը սաստիկ թունդ է:

Վերջին խօսքը փոքր ինչ մեղմացրեց խանի կատաղութիւնը վէզիրի վերաբերութեամբ: Նա խոժոռալով պատասխանեց.

—Դու խելքդ կորցրել ես, վէզիր, Ասլամադկուլի-խանը չէ կարող անձնատուր լինել մի պիղծ դաւուրի, որը իր աւազակային խմբով յանդգնել է պաշարել իմ բերդը: Էգուց, մեծ մարգարէի օգնութեամբ, ես նրա արիւնը իմ շներին լափել կը տամ:

—Եթէ, Աստուած տայ, իմ տիրոջ ասածը կատարվի, ձեր շները մի գեղեցիկ նախաճաշիկ կունենան, բայց ես չեմ կարծում, որ նրանք այդքան բախտ ունենան, պատասխանեց վէզիրը հեգնութեամբ:

Խանը դարձեալ կատաղեցաւ և ձեռքը տարաւ դէպի իր սրի երախակալը, ասելով.

—Դու ինձ վրա ծիծաղում ես անզգամ... Վէզիրը չը թողեց նրան խօսքը աւարտել, իսկոյն պատասխանեց.

—Ծերունի վէզիրը երբէք իրան թոյլ չի տայ ծիծաղել իր գլխի պսակի վրա, որին միշտ յարգել է: Նա հաւատարմութեամբ ծառայել է ձեր հանգուցեալ հօրը (թող նրա հոգին յաւիտենական լուսի մէջ լինի): Նա իր հոգատար ձեռքերի վրա է մեծացրել ձեզ: Նա այդ տան աղ ու հացը կերել է, երբէք չի դաւաճանի իր տէրերին:

—Բայց խորհուրդ կը տաս խոնարհվել մի անհաւատի առջև, կտրեց խանը նրա խօսքը:

—Ոչ, խորհուրդ կը տայ խոնարհվել Աստուծոյ կամքի առջև, պատասխանեց վէզիրը:

Խանը լռեց և մտախոհութեամբ սկսեց զօր տալ ղէյլանին, որով, կարծես, աշխատում էր արթնացնել իր թմրած ուղեղը: Բայց վէզիրը, բաւական ծանօթ լինելով բռնակալների բնաւորութեանը, գիտէր, որ նրանք որքան խիստ են, աւելի այնքան թոյլ են: Երբ բարկանում են, պէտք է շողոքորթել. երբ յամառում են, պէտք է վախեցնել. երբ թուլանում են, պէտք է անմիջապէս բռնանալ նրանց մտածութիւնների վրա:

—Մեր գլխաւոր ուժերը թշնամին ոչնչացրեց, խան, մենք այժմ դէմ դնելու կարողութիւն չունենք:

—Բայց դու մոռանում ես մի բան, վէզիր,—մեր բերդի ամրութիւնը: Նա այնքան անմատչելի է, որ կը դիմանայ, մինչև Ֆաթալի-խանից մեզ օգնութիւն կը հասնի:

—Ֆաթալի-խանից օգնութիւն մի՛ սպասէք, խան, մեր ուղարկած թղթատարին գտել են ճանապարհի վրա սպանված:

Խանը գունաթափվեցաւ:

—Քեզ ո՞վ ասաց, հարցրեց նա վրդովվելով:

—Նրանք, որ դիակը տեսել էին դէպի Բարգիւշատ տանող ճանապարհի վրա, Ջանհուր գետի ափի մօտ, պատասխանեց վէզիրը հանդարտութեամբ, և աւելացրեց.—Եթէ մեր նամակը հասած

ևս լինէր Ֆաթալի-խանի ձեռքը, դարձեալ նա մեզ օգնել չէր կարող, որովհետև նա այժմ իր կաշուցն է վախենում, ամրացնում է իր բերդը Գաւդաղըղ աւանի մօտ: Բէկլի յաջողութիւնները ամենի վրա սարսափ է գցել:

Խանը մի փոքր մտածելուց յետոյ ասաց.

—Մեզ օգնութեան կը հասնի Լեհվաղի խանը՝ Սէֆի-Կուլին. մենք նրա մօտ ևս դեսպան ենք ուղարկել:

—Սէֆի-Կուլին այժմ թողել է Լեհվաղը և փախել է Ալանդեաղի լեռների վրա: Կալերցի Պապ զօրապետը, որը Դաւիթ-բէկի քաջերից մէկն է, չարաչար կերպով հալածում է Սէֆի-Կուլիին:

—Մեզ օգնութեան կը հասնի Աստուած, հասկանո՞ւմ ես, Մուհամմէդի և Ալիի Աստուածը, Նա որ մի բուռն մուսուլմաններով տարածեց իսլամի տիրապետութիւնը ամբողջ աշխարհի վրա:

—Աստուծոյ օգնութեանը ապաւինել մենք պարտաւոր ենք, բայց պէտք է մտածել, որ մեր թշնամիներն էլ Աստուած ունեն:

—Նրանց առաջնորդում է սատանան, իսկ ճշմարիտ Աստուածը երեսը դարձնում է անհաւատներից:

—Երբեմն սատանան աւելի գործ է կատարում, ինչպէս այսօր: Մեր առաջապահ զօրքերը բոլորը ջարդվեցան:

—Դրանով Աստուած կամեցաւ մի փոքրիկ խրատ տալ մեզ:

—Ի՞նչու չէք ասում՝ մի մեծ խրատ:

Տհաճութեան մռայլը դարձեալ անցաւ խանի սարսափելի դէմքի վրա և նա դայրացած կերպով պատասխանեց.

—Վէզիր, դու միշտ սովորութիւն ունէիր խրախուսել, սիրտ տալ ինձ, իսկ այսօր ինչ է պատահել քեզ հետ. քո բոլոր խօսքերը յուսահատական են:

—Այսօր ես ցանկութիւն չունեմ ձեզ շողոքորթելու. եթէ խօսում եմ ճշմարտութիւնը, այդ առաջ է գալիս իմ դէպի ձեզ ունեցած հաւատարմութիւնից:

—Այդ հաւատարմութիւն չէ, վէզիր, դու ցանկանում ես անպատուութեամբ արատաւորել իմ սուրը, ասաց նա բաւական զգացված կերպով:— Լսիր իմ վերջին խօսքը. առանց Աստուծոյ կամքի ոչինչ չէ կատարվում. եթէ հասել է իմ իշխանութեան վախճանը, կը լինի այն, ինչ որ վճռել է Նախասահմանութիւնը: Իսկ եթէ դեռ ևս Ամենակալի աջը պիտի հովանաւորէ իմ իշխանութեանը, այն ժամանակ, եթէ երկնքի աստղերի թւով զօրքեր ևս գալու լինեն մեզ վրա, դարձեալ մեր գըլխից մի մազ անգամ չի պակսի: Մենք պիտի ընդդիմանանք մինչև վերջին շունչը, կամ կաղատենք

մեր բերդը, կամ նա մեր գերեզմանը կը դառնայ...

—Վերջինը աւելի հաւանական է...

—Թո՛ղ այդպէս լինի:

Երկուսի մէջ ևս տիրեց մի խորհրդաւոր լռութիւն: Դա վտանգաւոր հիւանդի և բժշկի մէջ տիրող լռութեան նմանութիւնն ունէր, երբ վերջինը սկսում է մտածել, թէ ինչ դարման պէտք էր տանել նրա ցաւերին:

—Դուք յայտնեցիք ձեր վերջին խօսքը, խան, ասաց վէզիրը ծանր կերպով,— բայց խիղճս հանգստացնելու համար, թոյլ տուեցէք ինձ ևս յայտնել իմ վերջին խօսքը:

Խանը ոչինչ չը պատասխանեց: Վէզիրը շարունակեց.

—Ամբողջ Ղափանը ապստամբված է մեր դէմ: Մենք կենում ենք շրջապատող կրակի և սրերի մէջ: Հալիձորցի ծերունի Մելիք-Փարսադանը, որ երկաթի սիրտ ունի, իսկ գայլի խիղճ, իր փեսայ տէր Աւետիքի հետ առաջնորդում են տեղային ապստամբներին: Ամբողջ Գենուազը ապստամբված է. կըզասատանցի Ստեփաննոս իշխանը, որ սատանայի խելք ունի և Ռուստէմի քաջութիւն, կալերցի Գապ զօրավարի հետ առաջնորդում են տեղային ապստամբներին: Ամբողջ Զանգուրը ապստամբված է. խորձորցի Թորոս իշխանը, որ փղի ուժ ունի և առիւծի սիրտ, իր ազգակից Մելիք Նու-

բարի հետ առաջնորդում են տեղային ապըս-
տամբներին։ Ամբողջ Սիսիանը ապստամբված է.
բայինդուրլեցի Բայինդուր իշխանը,— այդ սարսա-
փելի հսկան, որ իզուր չը ստացաւ մեր Շահ-
Յուսէյն Թագաւորից «բաթման-ղլըճ» անունը,—
Ուժանիս գիւղացի վիթխարի տէր Կարապետի հետ, որ
կոչվում է «աւշար երէց», առաջնորդում են տեղային
ապստամբներին։ Դեռ չէ շարժվել միայն Բարգիւ-
շատը, որովհետև Երիցվանիկ աւանի Մէլիք-Ֆրան-
գիւլը տակաւին պահպանում է իր բարեկամու-
թիւնը Ֆաթալի-խանի հետ, և դեռ չէ անցել
ապստամբների կողմը։

—Ես չեմ կամենում երկար խօսել մանրամասն
խումբերի մասին, որոնք զանազան կողմերում,
այս և այն զօրավարի առաջնորդութեամբ ասպա-
տակում են երկիրը։ Օրինակ, Բաղաբերդի Ադամ
զօրավարը սարսափի մէջ է գցել իր բերդից սկը-
սած մինչև Սևանայ լիճը։ Գիւլ-բերդի Ղազար զօ-
րավարի արշաւանքները տարածվում են մինչև
Կուր և Երասխ գետերի խառնվելու տեղը։ Շիր-
վանաձորի Սարգիս զօրավարը տակնուվրա է
անում ամբողջ Աղաջրանի վիճակը։ Ջուղայեցի
Մաղայ-մէլիքի երկու որդիները՝ Աշոտ և Սմբատ
բոլորովին կտրել են Պարսկաստանից դէպի Նա-
խիջևան և Երևան տանող ճանապարհը, ասպա-
տակում են Երնջակի կողմերի թիւրքաց գիւղերը։
Մեղրեցի մէլիք-Կոստանդինը մինչև անգամ հա-

մարձակվում է անցնել Երասխը և աւերել Քիւր-
դաշտի ամրութիւնները։ Տաթևացի Կէջի իշխա-
նին՝ Այրի, Եսայի, տիրացու Սիմէօն տանուտէր-
ների հետ՝ ամայի են դարձնում Մուղանը և
վերին Սիսիանը։ Շնհէրի Մինաս և Սանախան
տանուտէրները հանգստութիւն չեն տալիս Ջան-
գեզօրի ամբողջ վիճակին։

—Հիմայ կասեմ, թէ ինչ են անում այդ բար-
բարոսները, առաջ տարաւ ծերունի վէզիրը.—
կատաղում են անօգուտ կերպով, առանց խտրու-
թիւն դնելու սեռի և հասակի։ Կնիկների փորերը
պատռում են, և տղաներին դուրս հանելով, ցցում
են իրանց նիզակների ծայրին։ Ծերունու ալիքը ներ-
կում են իր արիւնով։ Գենուայի գաւառում ոչըն-
չացրել են՝ Վանհրաւարայ, Բաղաքար, Գոմերանց,
Թօս, Թաղամէր, Աքիս (Աւկէս), Ջուար, Լիճք
թիւրքաբնակ գիւղերը։ Լեհվազի ձորի բոլոր թիւրք
բնակիչները ոչնչացրած են. մի փոքրիկ մասը
միայն փախել է դէպի Օրդուար։ Ղափանի գա-
ւառում բնաջինջ են արել Կաց և Քիս գիւղերը։
Բարգիւշատի գաւառում բնաջինջ են արել Զաւ-
նիսը։ Սիսիանի կողմերում բնաջինջ են արել
Քուրթլար աւանը և Աջրէջը։ Իսկ այդ բոլորը
դեռ գործի սկիզբն է։

—Ամեն տեղ, ինչ որ գնում են, յափշտակում
են։ Զանգուրի խուստուփ կոչված լեռների վրա-
յից Թօրոս իշխանը թալանել է տարել Ֆաթալի-

խանի 2000 ոչխարները, սպանել են նրա 12 հովիւներին։ Մխիթար սպարապետը և տէր Աւետիքը, Ղազան-Գօլլու կոչված լեռների վրա, կոտորել են Թուրքմէնների մի քանի խաշնարած ցեղեր, թալանել են նրանցից 6300 ոչխար և 430 այլ անասուններ։ Կարբելլու լեռների վրա նրանք զարկեցին Թուրքմէնների մի այլ ցեղ և թալանեցին 900 անասուններ։ Ալանգազի լեռների վրայից թալանել են Կաց աւանի Միրզայ-Սաֆիլ իշխանի գեղեցիկ նժոյգների երամակը։

Բացի խոշոր, պատերազմող գունդերից, բէկի մանր, աւազակային խումբերը, ցրված զանազան տեղերում, սարսափելի յաջողութիւններ են գործում։ Կրճաւանի անտառներում բոյն է դրել վաղարշապատեցի Յարութիւն տանուտէրը իր խումբով։ Որոտնայ անտառներում բոյն են դրել գանձակեցի Եղիազար աղան և Թաթէոս բէկը իրանց խումբերով։ Երասխ գետի ափերի վրա և Զարրայիլի անապատներում թափառում են Զաքարիայ իշխանը և պատանի Մօսէն իրանց խումբերով։ Զարրայիլի կամրջով այժմ անկարելի է անցկենալ։ Մեծ Գիօրգին և փոքր Գիօրգին գազանների նման դարան են մտած Ջանգէզօրի այրերում։ Մի քանի օր առաջ նրանք, Կօրխսից դէպի Նախիջևան տանող ճանապարհի վրա, կողոպտեցին մեր ուխտաւորների քարաւանը, որ բաղկացած էր աւելի քան 200 հոգուց։ Լօռէցի Աւ-

Թանգիլ գնդապետի մարդիկը և Երևանցի կաղ-Օհանէսի մարդիկը այժմ թողել են Նախիջևանի, Դարալագեազի և Սևանայ լճի կողմերը, անցել են Մուղանջիկի խիտ անտառներում։ Օքուզարաթի ճանապարհը բոլորովին փակված է։

—Այդ կատաղի ապստամբութիւնների, այդ զանազան շարժումների գլխաւորն է մի մարդ, որին ես այլ անուն տալ չեմ կարող, բայց միայն կոչել անգութ հրէշ, որի մօտ տարտարոսի բոլոր ճիւաղներին կարելի է դառնուկներ համարել։—Ես Դաւիթ-բէկի մասին եմ խօսում, իսկ նրա գործակիցը, Տաթևի Ներսէս եպիսկոպոսը, Օմարի և Եազիդի նման արիւնարբու է, իսկ Հարուն-ալ-Ռաշիդի նման անողոքելի։ Դա իր մոլեռանդ հայրենասիրութեամբ կամենում է սրով և արիւնով մաքրել այն երկիրը, որ մի ժամանակ, իր կարծիքով, պատկանելիս է եղել իր ազգի նախնիքներին և ոչ մեզ։ Որեմն մեր դէմ են երկու սարսափելի ուժեր՝ ժողովրդի և կրօնի ներկայացուցիչները։ Այդ ուժերի դէմ պատերազմել շատ դժուարին է, երբ ամբոխը կուրօրէն հպատակում է նրանց ձայնին։ Չը խոստովանել թշնամու առաւելութիւնը, այդ կը նշանակէ խաբել իրան, և խաբելով կորստեան մատնել։ Թշնամին անհամեմատ զօրաւոր է մեզանից։ Մեր զօրքերը նրանց առջևից այնպէս էին փախչում, որպէս աշնան ցամաք տերևները կատաղի մրրիկի առջևից։ Այդ

թնդանօթները, որ արձակում են մեզ վրա, մեզանից են խլել. մեր զէնքը գործ են դնում մեր դէմ: —իսկ այդ աներկիւղ, անձնանուէր և ճարպիկ զինուորներին կառավարում է, որպէս ընդհանուր հրամանատար, մի հմուտ, փորձառու և հաստատամիտ մարդ, որպիսին է՝ Մխիթար սպարապետը:

—Ես առանց կեղծելու, առանց չափազանցութեան հաղորդեցի ձեզ այն բոլոր տեղեկութիւնները, ինչ որ մեծ աշխատութեամբ ձեռք էի բերել թշնամու գործողութիւնների վերաբերութեամբ: Այժմ մնում է ինձ բացատրել մեր պաշարված բերդի դրութիւնը: Ձեզ յայտնի է, որ երեք ճանապարհով միայն կարելի է մօտենալ մեր բերդին. առաջինը Գեղվայ գետի ձորամիջով, իսկ երկրորդը և երրորդը՝ Հալիձորի գետի ստորին և վերին կողմերից:—Այդ երեք ճանապարհները բռնված են թշնամու զօրքերով: Բայինդուր իշխանը, Մելիք-Փարսադանը և Աւթանդիլ գնդապետը բռնել են Գեղվայ գետի անցքը: Մխիթար սպարապետը բռնել է Հալիձորի գետի վերին անցքը: իսկ Դաւիթ բէկը և Ներսէս եպիսկոպոսը բռնել են Հալիձորի գետի ներքին անցքը: Մենք գտնըվում ենք քարէ արկղի մէջ. ոչ մի կողմից փախուստի ճանապարհ չունենք:

Վէզիրը վերջացրեց իր զեկուցումը: Խանը կամ բոլորովին չէր լսում, կամ եթէ լսում էր, դժուա-

րանում էր հաւատալ իր ականջներին: Նա երեւակայել չէր կարող, որ հայը, իր կարծիքով, ստոր, անարգ և երկչոտ հայը, կարող էր այն հրաշքները գործել, ինչ որ պատմում էր «ցնդած» վէզիրը: Վէզիրի խօսքերը փոխանակ մեղմացնելու, աւելի խստացրին նրա յամառութիւնը: Նա ասաց.

—Եթէ երկինքն էլ փուլ գալու լինի իմ վրա, եթէ դժոխքի բոլոր չար ոգիները իրանց զէնքերը իմ դէմ դարձնելու լինեն, ես դարձեալ անձնատուր չեմ լինի:

—Բոլորովին հաւատում եմ, պատասխանեց վէզիրը սառնութեամբ,—դուք անձնատուր չէք լինի: Բայց առաւօտեան, երբ թշնամին կը կատարէ հէնց առաջին յարձակումը, ձեր զօրապետները իրանց ձեռքով կը բաց անեն բերդի դռները թշնամու առջև:

—Երբ որ իմ զօրապետները այս աստիճան ցած կը լինեն, ինձ կը մնայ այնուհետև մի բան անել. —այդ ամրոցը կը թռչի օդի մէջ.... Ես թոյլ չեմ տայ, որ իմ կնիկները, իմ զաւակները ընկնեն անհաւատների ձեռքը:

Վէզիրը ոչինչ չը պատասխանեց: Նա գիտէր, որ ամրոցի ներքնայարկերում դրած էին հարիւրաւոր տոպրակներ, լցրած վառօդով: Մի փոքրիկ կայծ բաւական էր, որ կատարվէր խանի բաղձանքը:

Խանը վեր կացաւ. վեր կացաւ և վէզիրը: Նրա

դէմքը սաստիկ զայրացած էր, բայց զսպելով իր խորին վրդովմունքը, մի առանձին անսովոր մեղմութեամբ դարձաւ դէպի վէզիրը, ասելով.

—Ես ձեզանից մի բան եմ խնդրում, վէզիր, թոյլ տուեցէք ինձ կարգադրել գործը այնպէս, որպէս ինքս ցանկանում եմ։ Ձեր կարծիքը, ձեր համոզմունքը ձեզ համար պահեցէք։ Ես ձեզանից միայն լռութիւն եմ պահանջում։ Այն խօսքերը, որոցմով աշխատում էիք յուսահատացնել ինձ, թէև չը յաջողվեցաւ ձեզ,—կարող են աւելի հեշտութեամբ յուսահատացնել իմ զօրապետներին։ Նրանց մօտ ոչինչ մի խօսեցէք։

Նա դուրս եկաւ սենեակից։ Վշտացած վէզիրը լուռ մտախոհութեան մէջ հետևում էր նրան։ Ամրոցի բակում մի խումբ ծառաներ, վառած ջահերը ձեռներին բռնած, սպասում էին նրան։ Երբ տեսան իրանց տիրոջ յայտնվելը, կարգով շարվեցան նրա առջև, լուսաւորեցին նրա ուղին։ Խանը դիմեց դէպի մեծ դահլիճը, ուր այդ միջոցին հաւաքված էին նրա զօրապետները և նշանաւոր պաշտօնակալները։ Բոլորը ընդունեցին նրան ընդհանուր երկրպագութեամբ։ Նա նստեց իր պատշաճաւոր տեղը, մնացածները ոտքի վրա կանգնած, լռութեամբ սպասում էին լսել նրա հրամանը։ Նա հանդիսաւոր կերպով սկսեց խօսել, թէ ինչ եզրակացութիւնների հասցրեց իր և վէզիրի հետ ունեցած համաձայն խորհուրդը։ Եւ սկսեց

հրահանգներ տալ, ի հարկէ, բոլորովին հակառակ վէզիրի կարծիքին։ Իր փոքրիկ ճառը նա վերջացրեց այդ խօսքերով.

—Առաւօտեան նամազը կատարելուց յետոյ, մենք կը սկսենք կռիւը դրանով, որ այդ բերդում գտնված բոլոր հայ բնակիչների գլուխները կը դնենք մեր թնդանօթների մէջ և կարձակենք դէպի թշնամու բանակը...

Բոլորը ուրախութեամբ ընդունեցին խանի հրամանը, և մինչև գետին երկրպագելով, սկսեցին օրհնել նրա կեանքը։

Վէզիրը լուռ կացաւ. ոչինչ չը խօսեց։

ԺԷ.

Գիշերային խաւարը սկսել էր թանձրանալ։ Աստղեր այլ ևս չէին երևում։ Սիւնեաց աշխարհի քմահաճ երկինքը, սիւնեցի ամօթխած կնոջ նման, սիրում է շուտ-շուտ իր գեղեցիկ դէմքը թաքցնել։ Սպիտակ ամպերը նուրբ քօղի նման ծածկել էին երկնքի երեսը։ Աստղերի փոխարէն վառվում էին հայոց բանակատեղերում զինուորների բացօթեայ խարոյկները։ Նրանք սփռում էին իրանց շուրջը խիստ աղօտ լուսաւորութիւն, որով կարելի էր տեսնել զինուորների ուրախ դէմքերը, որոնք կրակի շուրջը նստած, կամ երգում էին, կամ զրուցում էին և կամ ծառերի ճիւղերից պատրաստած շամփուրների վրա միս էին խորովում։ Այնօրվայ աւարի առած ոչխարների շնորհիւ բանակի մէջ

տիրում էր մեծ կատարեալ առատութիւն: Մի այսպիսի առատութիւն չունեցաւ մինչև անգամ Մովսէսի բանակը, երբ Իսրայէլի Աստուածը նրա զինուորներին լորամարգիներ էր ուղարկում:

—Թէ որ մեր տէր Յարութը այստեղ լինէր, ինչքան նէրլներ ու մորթիներ կը հաւաքէր, ասաց զինուորներից մէկը իր ընկերին, սաստիկ ծիծաղելով իր սրախօսութեան վրա:—Խաչը վկայ, մեր Տաթևի վանքի ուխտի օրն էլ այսքան մատաղներ չեն մորթվում:

—Մեր մորթածները մատաղներ չեն, ապա ինչ են, պատասխանեց նրան մի այլ զինուոր, նոյնպէս ծիծաղելով:— Միայն տէրտէրն է պակաս, որ աղը օրհնէ:

—Ես կօրհնեմ, զաւակներս, լսելի եղաւ խաւարի միջից մի ձայն: Մատաղ է, ապա ինչ է, և Աստծուն շատ ընդունելի մատաղ:

Զինուորները կրակի շուրջը նստած լինելով, նրա լոյսը թոյլ չէր տալիս նկատել խաւարի մէջ միայնակ կանգնած բարձրահասակ մարդուն, որ փաթաթված էր իր լայն վերարկուի մէջ: Բայց հէնց որ նրա ձայնը լսեցին, բոլորը պատկառանքով ոտքի ելան, ասելով.

—Ա՛խ, սրբազան, դո՛ւ ես...

—Ես եմ, զաւակներս, նստեցէք, ասաց բարձրահասակ մարդը մօտենալով.— Նստեցէք և ձեր

քէֆին կացէք, ես վաղուց արդէն օրհնել եմ ձեր զոհաբերութիւնները:

Զինուորները կրկին շարվեցան կրակի շուրջը, իսկ բարձրահասակ մարդը չքացաւ գիշերային խաւարի մէջ: Դա ամբողջ Սիւնեաց աշխարհի առաջնորդը՝ Ներսէս եպիսկոպոսն էր, որ միայնակ շրջում էր բանակների մէջ, դիտելու զինուորների դրութիւնը:

—Նա միշտ ման է գալիս, ասաց զինուորներից մէկը:

—Գիշերները քուն չունի, աւելացրեց միւսը:

—Ասում են, տարէնը միայն մի անգամ է քնում, զատկի առաջ շաբաթի օրը, խօսեց երրորդը:

—Ի՞նչու անպատճառ զատկի առաջ շաբաթի օրը:

—Նրա համար, որ Աստուած վեց օրում այդ աշխարհը ստեղծեց, իսկ եօթներորդ օրում, որ շաբաթ էր, ինքն էլ քնեց,—հանգստացաւ:

Զինուորի բացատրութիւնը բոլորին հաւանական թւեց: Նա գրից տեղեակ մարդ էր, փոքր հասակից վարդապետների մօտ սպասաւորութիւն էր արել: Իսկ որքան ճիշտ էր նրա ասածը, հասկանալի է, միայն այսքանը ճշմարիտ էր, որ Ներսէս սրբազանը շատ փոքր էր քնում, երբեմն անցնում էին օրեր, որ ամենևին չէր քնում: Նրա մի այսպիսի խստակեցութիւնը առիթ տուեց ժա-

ղովրդի մէջ իր վերաբերութեամբ զանազան լե-գէոնների ստեղծվելուն:

Բարձրահասակ մարդը դանդաղ քայլերով ան-ցաւ բանակի միջից, մօտեցաւ մի առանձնացած վրանի, որ լուսաւորված էր փոքրիկ լապտերով: Այստեղ պառկած էին մի քանի հիւանդներ, որոնք նոյն օրվայ կռւի դաշտում վէրք էին ստացել: Մի քանի կնիկներ, հաւաքված հայոց մերձակայ օբաներից *) խնամք էին տանում վիրաւորներին:

Հայոց բանակները, ինչպէս յիշեցինք, տեղաւոր-ված էին երեք կէտերի վրա: Այդ երեք կէտերից, որպէս երեք դռներից, բացվում էին երեք մուտ-քեր, որ տանում էին դէպի բերդը: Բանակներից մէկը գտնվում էր Գեղվայ գետի ձորամիջում. այս-տեղ էր Բայինդուր իշխանը, Մէլիք-Փարսադանը և Աւթանդիլ զօրապետը: Երկրորդ բանակը գտն-վում էր Հալիձորի գետի վերին կողմի վրա. այս-տեղ էր Մխիթար սպարապետը իր զօրապետների հետ: Իսկ երրորդ բանակը գտնվում էր Հալիձո-րի գետի ներքին կողմի վրա. այստեղ էր Դաւիթ-բէկը իր զօրապետների հետ: Հալիձորի գետը և Գեղվայ գետը, կտրելով միմեանց, կազ-մում էին մի եռանկիւնի, որի մէջ դրած էր բեր-դը: Իսկ երեք բանակների իւրաքանչիւրը զետեղված

*) Օբայ նշանակում է խաշնարածների օթեւան, չադրներում, լեռնային արօտատեղերի վրա:

էր այդ եռանկիւնին կազմող գծերի վրա, որոնք ուրիշ ոչինչ չէին, եթէ ոչ, խոր ընկած և անտա-ռախիտ լեռներով պատսպարված ձորեր, որոնց միջով անցնում էին յիշեալ երկու գետերը: Այս-պիսով բերդից ելքը դէպի ամեն կողմ փակված էր: Ալլահ-Կուլի-խանը իր ամրոցում պաշար-ված էր, որպէս մի գազան իր որջի մէջ: Որսորդ-ները սովորաբար գազանների որջի մուտքի առջև մուխ են դնում, որ նրանք դուրս գան իրանց գարանից: Այդ միջոցի փոխարէն ծառայում էր հայոց թնդանօթների ծուխը, որ աւելի թանձրաց-նում էր գիշերային մթութիւնը:

Դաւիթ-բէկի վրանի վարագոյրները իջեցրած էին: Նա միայնակ էր իր վրանում, որպէս մի օտարա-կան հիւր, որ խնդրել էր իրան չը խանգարեն: Ճանապարհորդական փոքրիկ ծալովի լապտերը լուսաւորում էր վրանի ներսը: Նա փաթաթված էր իր հաստ վերարկուի մէջ, որ ծառայում էր նրան և՛ որպէս օթոց, և՛ որպէս վերմակ: Ձեռքը ծնօտին դրած, թէք էր ընկած թանձր թաղիքի վրա, որ տարածված էր ճախնային ցամաք բոյսերի վրա: Մի քանի պահապաններ շրջապա-տել էին նրա վրանը, և հեռու նստած, ծխում էին: Իսկ թիկնապահները քնած էին առանձին վրանում, մի քանի քայլ հեռաւորութեան վրա. այստեղ ճրագ չէր վառվում:

Կոշտ, խստասիրտ զինւորը այս գիշեր դարձել

էր փափկամիրտ, զգայուն, երևակայող։ Նրա յիշողութեան մէջ, մինը միւսից յետոյ, զարթնում էին այն օրվայ տխուր տպաւորութիւնները և լցնում էին նրա սիրտը ցաւալի զգացմունքներով։ Յաղթութեան աջողութիւնը չէր ուրախացնում նրան. նա յաղթութիւններ շատ էր արած։ Նրան տխրեցնում էր իր հայրենիքի խորտակված փառքը և ներկայ թշուառութիւնը։

Մինչև Ջևլու բերդը հասնելը, նա իր զօրքով անցել էր Հալիձորի միջով, որտեղից հոսում է նոյն անունով գետը։ Այդ խուլ, անդնդախոր ձորը կարելի է նմանեցնել մի երկայն, անվերջանալի, նեղ փողոցի, որի աջ և ձախ կողմերից, հսկայական բարձրութեամբ, կանգնած են պատի պէս ուղղաձիգ, անտառապատ լեռներ։ Այդ վիթխարի լեռների վրա նայելիս, մարդ կարծում է, թէ ծառերը բուսել են ամպերի վրա։ Այդ նեղ փողոցը, այդ մթին ձորը, այն անցքն է, որ տանում է դէպի Սիւնեաց աշխարհի ներսը։—Դա Սիւնեաց մեծ տան ահագին դահլիճն (կօրիդօրն) է։ Մեր նախնիքը նրան կոչում էին Կապան *) և այդ անունով կոչվում էր ամբողջ անտառապատ գաւառը, ուր բնակվում էին հայ մարդիկ, որ շատ չէին զանազանվում իրանց ծմակներում բնակվող վագրներից։

---

*) Այժմ կոչվում է Ղափան։

Կապան, այդ փոխաբերական բառի մէջ ամփոփվում է նրա սարսափելի նշանակութիւնը։ Կապան, նշանակում է՝ կապված, փակված անցք։ Կապան, դա անդնդախոր խոռոչների մի ցանց է, դա մի հրէշաւոր ծուղակ է, որի մէջ Սիւնեաց աշխարհի իշխանները կաշկանդում էին թշնամու լեգէոնները։

Բայց ինչ էին այդ ահարկու ձորի փականքները, նրա կապանները։ — Այդ բոլորը այսօր տեսաւ Դաւիթ-բէկը և այժմ նրանց վրա էր մտածում։

Նա տեսաւ Հալիձորի բերդը, իսկ նրա հանդէպ՝ Աչաղու բերդը։ *) Այդ երկու բերդերը, որպէս երկու վիթխարի պահակներ, կանգնած նեղ ձորի աջ և ձախ կողմերում, լեռների բարձրութիւնից մահ էին սպառնում յանդուգն թշնամուն, եթէ կը համարձակվէր այնտեղից անցնել։ Բայց այդ երկու բերդերի սոսկալի աւերակներն էին միայն մնացել։ Զանազան Վասակները, Սահակը, Բարկէնը, հսկայ Գեղհամը, Գրիգոր «քաջաց նուիրակ» կոչվածը,—որոնք մի ժամանակ նրանց միջից կրակ էին թափում պարսիկների, մօղօլների, արաբների վրա,—Բաղաց թագաւորութեան այդ հերոսները այժմ չը կային…

Յիշեալ երկու բերդերի միջով անցնելով, նա մտաւ Բաղաբերդ քաղաքի աւերակների մէջ։ Դա

---

*) Այդ բերդը այժմ կոչվում է Ղըր-Ղալայ։

Բաղաց թագաւորների մայրաքաղաքն էր: Բնութիւնը հազիւ երբեք հրաշակերտել է մի այսպիսի ամրութիւն մարդկանց պաշտպանութեան համար: Այդ անառիկ քաղաքը նմանում էր մի վիթխարի քարեղէն սնդուկի, որի մէջ կողքերի փոխարէն ծառայում են ահագին պարսպաձև լեռները: Բայց ինչ էր մնացել այնտեղ: Թագաւորների, իշխանների խորտակված պալատները, հոյակապ եկեղեցիները, ամրոցների կիսաւեր աշտարակները,— բոլորը, ինչ որ յիշեցնում էր հին փառքը և մեծութիւնը,—ծածկված էին խուլ, մթին անտառի տակ: Տաճարների միջից բուսել էին ահագին կաղնիներ, վեհապետների արքունիքի փշրանքները, խառնվելով քարաւների կոյտերից պոկված, ցած գլորված ժայռերի հետ, ներկայացնում էին մի սարսափելի զանգուած:

Քարեղէն սնդուկը, որի մէջ անմատչելի կերպով պահվում էր Բաղակի հռչակաւոր քաղաքը, այժմ ներկայացնում էր մի տխուր, քարեղէն գագաղ, որի մէջ վաղուց արդէն թաղված էր Սիւնեաց աշխարհի մեռած մայրաքաղաքը...

Դաւիթ-բէկին հիացնում էր հին հայերի պատերազմական և ռազմագիտական հանճարը: Նա զարմանում էր, տեսնելով, թէ ո՛ր աստիճան նրանք օգուտ քաղել գիտէին իրանց աշխարհի բնական ամրութիւններից: Ուր որ բնութիւնը մի բան թերի էր թողել, նրանք լրացնում էին արհեստական

ամրութիւններով: Բայց ի՞նչ էր պատճառը, որ նոյն իսկ ամրութիւնները նրանց գերեզմանը դարձան:—Ահա այդ հանելուկի վրա էր մտածում նա:

Բաղաբերդը *) իսկապէս դրած էր մի քարեղէն սնդուկի մէջ, ահագին լեռներից և ապառաժներից- կազմված սնդուկի մէջ: Երկու ծայրերից երկու նեղ փապարներ միայն կարող էին տանել դէպի սնդուկի ներսը, այսինքն դէպի քաղաքը: Այդ նեղ փապարներից մէկը, ինչպէս տեսանք, ամրացրած էր երկու բերդերով՝ Աչաղու-բերդով և Հալիձորի բերդով: Երկուսն էլ կանգնած էին միմեանց հանդէպ, լեռնային բարձրաւանդակների վրա: Քաղաքի միւս ծայրի անցքը նոյնպէս ամրացրած էր երկու բերդերով. մինը կոչվում էր Բաղակայ—քար, միւսը Շլորուտ: Այդ երկու բերդերը նոյնպէս կանգնած էին մինը միւսի հանդէպ, մէջտեղից թողնելով նեղ փապարը, որտեղից միայն կարելի էր մտնել քաղաքը: Այստեղ էր իսկական Կ ա պ ա ն ը,—այն վիթխարի փականքը, որ արգելում էր թշնամու մուտքը *):

Բաղակայ-քար, խիստ հեշտ արտասանելի բա-

---

*) Բաղաբերդը հիմնել է Բաղակ իշխանը, որը Սիսակի տոհմից էր:

*) Յիշեալ բերդերի աւերակները և մինչև այսօր սարսափ են գցում ճանապարհորդի վրա. նրանց լիակատար նկարագրութիւնը լոյս կը տեսնի մեր Սիւնեաց աշխարհի ուղեգրութիւնների մէջ:

ւեր են։ Բայց նա բնութեան հրէշաւոր ստեղծագործութիւններից մէկն է.—մի ամեհի, սեպացած, միապաղաղ քար ձորի խորքից վեր է բարձրացել դէպի երկինքը, և իր հպարտ գլխի վրա, որպէս մի գեղեցիկ պսակ, դրել է Բաղակ իշխանի անառիկ ամրոցը, զարդարած բարձր աշտարակներով և անքակտելի պարիսպներով։

Այստեղ սարսափելի Անդոկ իշխանը, Բաղակի տոհմի հսկայ ներկայացուցիչներից մէկը, բերեց պարսից Շապուհ թագաւորի գանձերը։ Այստեղ նա վայելում էր Տիգրոնի հարուստ աւարը, երբ յաղթութեամբ վերադարձաւ սասանեանների աշխարհից։ Այդ սոսկալի բերդի ապառաժներին զարկվելով, փշրվեցան պարսից ահագին գունդերը։

Բայց ի՞նչ էր տեսնում այնտեղ այժմ Դաւիթ-բէկը։ Բաղակայ-քարի բարձր աշտարակները և հըզօր պարիսպները դեռ մնացել էին։ Դարերով պատերազմելով ժամանակի և թշնամու բարբարոս ձեռքերի հետ, այդ ամրութիւնները դեռ պահպանել էին իրանց վաղեմի վեհութիւնը։ Բայց նրանց բերանից լսում էր բէկը մի խուլ բողոք, մի դառն նախատինք դէպի հսկայ նախորդների թղուկ յաջորդները։ «Մենք, ասում էին այդ աւերակները, շատ անգամ պահեցինք ձեզ, շատ անգամ պահպանեցինք թշնամու հարուածներից, իսկ դուք այնքան թոյլ գտնվեցաք, որ մեզ պահել չը կարողացաք»...

Նախատինքը իրաւացի էր։ Կապանի եօթն բերդերից *), որոնք եօթն կողպէքների նման դրած էին զանազան անցքերի վրա, շէն մնացել էր մէկը միայն՝ Գեղվայ բերդը կամ Զէվուն, այն ևս մի թուրքի ձեռքում։ Այդ բերդն էր, որ պաշարել էր Դաւիթ-բէկը։

Այդ տխուր մտածութիւնների մէջ էր բէկը, երբ բարձրահասակ մարդը, բանակների մէջ շրջելուց յետոյ, մտաւ նրա վրանը։

—Ես ձեզ սպասում էի, սրբազան, ասաց բէկը իր տեղից շարժվելով և նրան տեղ տալով։—Նըստեցէք։

Սրբազանը տեղաւորվեցաւ նրա մօտ, բայց չը կարողացաւ զսպել իր հետաքրքրութիւնը, երբ նըկատեց բէկի գունաթափ դէմքը։

—Դուք, երևի, պաշարման ընթացքի վրա էիք մտածում, ասաց նրան.—գործերը, փառք Աստուծոյ, յաջող են գնում։

—Ոչ, ես ամենևին այդ մասին չէի մտածում... պատասխանեց բէկը յայտնի տհաճութեամբ.—միայն ինձ փոքր ինչ ձանձրացնում է մեր արշաւանքի կանգ առնելը։

—Օրհնած, ասաց սրբազանը իր ուրախ ծիծաղով.—Գեղվայ բերդը այն ամրութիւնն է, որ ամիսներով իր շուրջը պահել է տաւել պաշարողներ-

*) Կապանը, կամ Ղափանը կոչվում է եօթնաբերդեան հէնց այդ եօթն բերդերի պատճառով։

րին, մեծ բան չէ, որ մի երկու օր էլ մեզ սպասել տայ։—Առաւօտեան նա իր դռները կը բացանէ մեր առջև։

—Ի՞նչ գիտէք։

—Գիտեմ։ Ինչպէս երևում է, տէր Աւետիքը, Խորէն սրբազանը, Ստեփաննոս իշխանը և Բաղի զօրապետը հասել են իրանց նպատակին։ Ես այս րոպէիս նրանցից մի փոքրիկ տոմսակ ստացայ և շտապեցի ձեզ մօտ։

—Տեսնեմ։

Սրբազանը տուեց բէկին մի հատ ընկոյզ։

Բէկը իսկոյն հասկացաւ խորամանկութիւնը, և ժպտելով ասաց.

—Վատ չեն հնարել. տոմսակը ծրարել ընկուզի կեղևի մէջ։ Երևի, այդ ընկուզի միջուկի տեղ ես կը գտնեմ տոմսակը։

Նա հուփ տուեց ընկուզը, կեղևը երկու մաս բաժանվեցաւ և միջից ցած ընկաւ մի թղթի կտոր։ Նրա վրա մանր, նօտր գրով կարդացվում էր հետևեալ տողերը.

«Գործերը յաջող են գնում։ Շուտով բերդի զինարանը մեր ձեռքում կը լինի. նրանով կը զինաւորենք տեղացի հայերին։ Խանի ամրոցի բանալիները նոյնպէս մեր ձեռքումն են. մենք նրան սա-ողջ կը բռնենք։ Բերդի արևմտեան պարսպի տակից փորված է մի ական. գրաբերիս ծանօթ է տեղը. այստեղից կարող էք համարձակ մուտք

գործել։ Երբ կը նկատէք մի փչանք, բերդից բարձրացած օդի մէջ,—դա յարձակման ճիշտ նշանն է»։ Ստորագրված էր՝ տէր Աւետիք։

—Ո՞վ բերեց այդ թուղթը, հարցրեց բէկը, երբ վերջացրեց կարդալը։

—Տեղացի երիտասարդներից մէկը, պատասխանեց սրբազանը։—Որը դուրս էր եկած նոյն ականի միջով, որի մասին խօսվում է տոմսակի մէջ։

—Դուք նրան մի բանով վարձատրեցիք։

—Ոչինչ չը պահանջեց։

—Իսկ մերոնք պատրաստ են։

—Ես սպասում էի, թէ ինչ հրաման կը տաք դուք. դրա համար ոչինչ չը յայտնեցի։

—Ուրեմն գնանք միասին, ես կը տամ հարկաւոր հրամանները։

Բէկը և եպիսկոպոսը դուրս գնացին վրանից։ Նրանց հետևեցին երկու զինուորներ միայն։

Ճանապարհին բէկը ասաց սրբազանին.

—Երևում է, որ այդ տէր Աւետիքը շատ ճարպիկ մարդ է։

—Եւ քաջ է, պատասխանեց եպիսկոպոսը։

ԺԸ.

Զեվու բերդի մէջ բնակվող, գինեվաճառ տիկին Սառայի ներքնատան սենեակներից այս գիշեր միայն մէկը լուսաւորված էր։ Բայց դրսից լոյս ամենևին չէր երևում։ Նրա երկու հատիկ նեղ լուսամուտները, որ բացված էին դէպի բակը,

այնքան ցած էին, որ հաւասարվում էին բակի յատակի մակերևոյթին։ Այդ լուսամուտները պատած էին հաստ, կապտագոյն թղթով, այնպէս որ, դրսից անկարելի էր մի բան նշմարել ներքնատան մէջ, առանց թուղթը պատռելու։

Այդ գերեզմանի պէս լուռ, մութ, խոնաւ սենեակը, որ հոտում էր գինու ու արաղի կծու արտաշնչութեամբ, այս գիշեր այն տեսարանը չէր ներկայացնում, ինչ որ տեսանք այստեղ նախընթաց գիշերում։ Ոչ տէր Աւետիքը, ոչ Խորէն հայրսուրբը, ոչ Սոփիաննոս իշխանը և ոչ էլ Մէլիք-Փարսադանի որդի Բալի զօրավարը, դրանցից և ոչ մէկը չէր երևում։ Չէր երևում և տան տիկինը, որ նախընթաց գիշերը իր ձեռքով խորովածի շամփուրները ներս էր բերում և իր հիւրերին պատւում էր իր պահած ամենապատուական խմիչքներով։ Տան փոքրիկ երեխան անգամ տանը չէր, նրա ձայնը չէր լսվում։

Միայն աշտանակի վրա դրած խեցեղէն ճրագը, որ իր ձևով նմանում էր աղաւնու, և որի կտուցի միջից դուրս թողած պատրոյգը իւղի պակասութեան պատճառով աղօտ կերպով վառվում էր,— միայն այդ ճրագը ցոյց էր տալիս փոքր ի շատէ կեանքի նշոյլ, բայց յայտնի չէր, թէ ում էր սպասում նա։

Վերջապէս բակի դռան փականքը շարժվեցաւ, փեղկերից մէկը կամաց բացվեցաւ, մի մարդ լու-

թեամբ ներս մտաւ։ Նա զգուշութեամբ կողպեց իր ետևից դուռը և դիմեց դէպի ներքնատունը։ Սենեակի դատարկութիւնը, երևի, վատ տպաւորութիւն գործեց նրա վրա, որ կարելի էր իսկոյն նըկատել այն մռայլ տհաճութիւնից, որ սև ամպի նման անցաւ նրա գեղեցիկ դէմքի վրա։ Նա մի կողմ ձգեց լայն վերարկուն, որի մէջ փաթաթված էր և ճակատից բարձրացրեց ահագին մորթէ գդակը, որ իջել էր մինչև աչքերը։ Նրա զէնքերը բաղկանում էին մի զոյգ ատրճանակից և ծանր խենջարից միայն, որոնք իսկոյն յայտնվեցան, երբ նա վերարկուն մի կողմ ձգեց։

Նա աշտանակի վրայից առեց աղաւնաձև ճրագը և շտապով դիմեց դէպի տան տիրուհու սենեակը։ Այստեղ նոյնպէս ոչ ոք չը կար։ Տհաճութիւնը, որ սկզբում առաջ եկաւ նրա մէջ անհամբերութիւնից, այժմ երկիւղի փոխվեցաւ։ «Ի՞նչ եղաւ, ու՞ր մնաց, ի՞նչ պատահեց նրա հետ»—այդ հարցերն էին կարդացվում նրա տխրամած դէմքի վրա։

Եղել են ժամանակներ, երիտասարդական ջերմ, սիրաբորբոք հասակում, որ այդ մարդը ժամերով սպասել է նրան, որին այժմ անհամբերութեամբ կամենում էր տեսնել։—Սպասել է անտառի լռութեան մէջ, թաւուտ ծմակներում, ժայռերի քարանձաւներում։ Եւ նա, մի գիւղական դեռահաս աղջիկ, իր ծնողներից գաղտնի, շատ անգամ այ-

ցելել է նրան և իր կուսական անմեղ համբոյր-
ներով քաղցրացրել է նրա առանձնութեան րոպէ-
ները։ Բայց երբէք նրա սիրտը այսպէս սաս-
տիկ չէր բաբախել այն արարածի համար, որին
այժմ մեծ անհամբերութեամբ սպասում էր։
Դա սիրոյ բորբոքը չէր, որ այնպէս սաստիկ
յուզում էր, ալեկոծում էր նրա սիրտը։ Նա մինչև
անգամ այդ րոպէում մոռացել էր, որ մի ժամա-
նակ սիրել է նրան։ Դա մի մեծ ձեռնարկութեան
այն դրութիւնն էր, երբ մի մազից էր կախված
նրա յաջողութիւնը կամ անյաջողութիւնը։ Եւ
այդ ձեռնարկութիւնը պիտի կատարվէր այն
կնոջ ձեռքով, որին մի ժամանակ սիրել էր
նա։

Երիտասարդը կրկին դիմեց դէպի ներքնատունը։
Այստեղից աւելի մօտ էր բակի դուռը, կարելի
էր իսկոյն լսել, եթէ ամենաթեթև կերպով անգամ
բաղխելու լինէին։ Դեռ չը մտած ներքնատունը,
նայեց դէպի երկինքը, տեսնելու, թէ գիշերվայ ո՛ր
ժամն էր։ Երկինքը պատած էր նուրբ, սպիտակ
շղարշի նման մառախուղով. աստղեր չէին երև-
ում։ Այդ աւելի զայրացրեց նրան, աստղերից
կարող էր գիտենալ ժամանակը։ Այդ միջոցին
սկսեցին խօսել աքաղաղները։ Նա բարկութիւնից
ամբողջ մարմնով դողաց։ Գիշերը թռչում էր...

Նա մտաւ ներքնատունը, ճրագը դրեց իր ա-
ռաջվայ տեղում, սկսեց անհանգիստ կերպով ան-

ցուդարձ անել նեղ, խեղդող սենեակի մէջ։ «Ոչ,
նա կը կատարէ... անպատճառ կը կատարէ... մը-
տածում էր նա։ Նա ինձ մինչև այսօր էլ սիրում
է. այդ սէրը նրան ոյժ, եռանդ և վստահութիւն
կը ներշնչէ։ Նա ինձ համար ամեն բան կանէ,
միայն թէ կրկին կարողանայ գրաւել իմ սէրը։
Ա՛խ, եթէ կարողանար կատարել... ես նրան կըր-
կին կը սկսէի պաշտել։ Մինչ հսկաները վառօդով
և սրով են գործում, թոյլ կինը կարող է այլ տե-
սակ հրաշքներ գործել... Եւ այդ բանին ընդու-
նակ է Սառան։ Ո՛րքան ուրախացաւ նա, ո՛րքան
անհուն եղաւ նրա հրճուանքը, երբ լսեց իմ առա-
ջարկութիւնը... Կարծես, սպասում էր մի մեծ զո-
հաբերութիւն յանձն առնել, միայն թէ կարողա-
նայ ինձ մի որ և իցէ ծառայութիւն անել։ Բայց
նա այնքան պաշտելի չէր լինի, եթէ այդ ծառա-
յութիւնը կատարէր միայն իմ սէրի համար։ Նրա
մէջ անգիտակցաբար եռ էր գալիս և մի բարձր,
աւելի վսեմ սէր,—ազգի սէրը։ Ո՞վ մտցրեց նրա
մէջ այդ զգացմունքը։ Կարծում եմ, ոչ ոք։ Նա
տեսաւ, որ իր սիրած տղամարդը նուիրված է մի
գաղափարի, ինչու ինքը չը մասնակցանէ մի և
նոյն զոհը, երբ այդ կարող էր հաճելի լինել սի-
րած տղամարդին։ Կինը սիրում է հաճոյանալ. և
սէրը, ճշմարիտ սէրը կարող է առաջնորդել նրան
դէպի ամեն ինչ, որ բարձր է։ Մի լաւ գործ կա-
տարելու համար նա անպատճառ պէտք է սիրէ.

սէրի համար նա ամէն բան կանի: Իսկ տղամարդից է կախված ուղղել նրա ճանապարհը թէ դէպի վատը և թէ դէպի լաւը»…

Կարծես, բակի դուռը մի ձեռք դիպաւ: Նա ուրախութեամբ դուրս վազեց: Մօտեցաւ դռանը:

—Ո՞վ ես, հարցրեց ներսից:

—«Ես»… լսելի եղաւ դրսից:

Երիտասարդը բաց արաց դուռը: Երկուսը միասին խաւարի միջով անցան դէպի խորին ներքնատունը: Նոր եկուորը նոյնպէս փաթաթված էր լայն վերարկուի մէջ: Նա դարձաւ դէպի առաջինը, հարցնելով:

—Դու մենակ ես այստեղ, Խորէն հայր սուրբ:

—Մենակ եմ, իշխան, պատասխանեց Խորէն հայր սուրբը:

Իշխանը երիտասարդ Ստեփաննոս Շահումեանն էր:

—Դեռ չի՞ վերադարձել տիկինը:

—Ես նրան սպասում եմ, պատասխանեց աբեղան և նրա ձայնի մէջ լսվում էր սրտի խորին անձկութիւնը:— Կարծում եմ, նա շատ չի ուշանայ, որտեղ որ է, շուտով կը յայտնվի:

—Այսու ամենայնիւ, ես երկար սպասել չեմ կարող, ժամանակը թռչում է, պատասխանեց իշխանը:— Դուք ինձ միայն այն ասեցէք, վստահ էք, որ նա կարող է կատարել…

—Վստահ եմ :

—Այն աղախինը չի՞ խաբի նրան:

—Երբէք:

—Ի՞նչ հիմք ունէք այսպէս կարծելու:

—Այն աղախինը, որին կոչում են Փարիչան, ազգով հայ է, բռնութեամբ մահմեդական են դարձրել: Նա շատ բարեկամ է Սառայի հետ, չեմ կարծում, որ նրան խաբէ: Նա սաստիկ տանջված է եղել հարեմի մէջ, այժմ, եթէ ոչ ընդհանուր գործի օգուտը, շատ հաւանական է, որ վրէժխնդրութեան զգացմունքը կը դրդէ նրան Սառայի խորհուրդը կատարելու: Ես կը հաղորդեմ ձեզ մանրամասները, միայն խնդրեմ մի քանի րոպէով նստեցէք:

Իշխանը, թէև շատ շտապում էր, բայց հետաքրքրվեցաւ լսել մանրամասնութիւնները, որովհետև նրանք մի և նոյն գործին էին վերաբերում, որի համար շտապում էր նա:

Խորէն հայր սուրբը պատմեց խանի ամենասիրելի հարեմներից մէկի որդու ունեցած հիւանդութիւնը. պատմեց Փարիչանի գործ դրած խորամանկութիւնը հիւանդի կոկորդի վրա, որ նրանով ստիպեցին իր տիկնոջը անմիջապէս կոչել տալ Սառային որպէս բժիշկ: Պատմեց Փարիչանի միայնակ գալը Սառայի տունը և նրան իր հետ տանելը խանի ամրոցը:

—Դուք այստեղ էիք, երբ Փարիչանը եկաւ,

կորեց իշխանը Խորէն հայր սուրբի պատմութիւնը:

—Այստեղ էի. ես որոշեցի թէ Սատայի և թէ փարիշանի դերերը, թէ իւրաքանչիւրը ինչպէս պիտի գործէ:

—Ի՞նչպէս պիտի գործեն, հարցրեց իշխանը:

—Փարիշանը կը կատարէ այն, ինչ որ մենք մեր մէջ վճռեցինք... իսկ Սատան կը բերէ ինձ զէնքի պահեստի բանալիները:

—Նրանք գիտեն մեր պայմանները:

—Գիտեն: Գործողութիւնները կը կատարվեն ճիշտ այն րոպէում, երբ կը տեսնեն բերդից օդի մէջ բարձրացած փշանքը:

—Շատ գեղեցիկ, ասաց իշխանը և մի և նոյն ժամանակ Նրա սառն դէմքի վրա երևաց մի տեսակ ինքնաբաւական ցնծութիւն:—Մենք էլ այսպէս իմացում տուեցինք բէկին, ասաց նա, վերկենալով տեղից:

—Ի՞նչ միջոցով, հարցրեց հայր սուրբը զարմանալով:

—Տէր Աւետիքը տոմսակ գրեց:

—Տոմսա՞կ, ո՞վ տարաւ:

—Մի երիտասարդ, ականի միջով:

—Ականը արդէն պատրաստ է:

—Պատրաստ է: Աւելի քան յիսուն հոգի աշխատում էին նրա վրա:

Իշխանը աւելի պինդ կերպով փաթաթվելով իր

վերարկուի մէջ, ահագին մորթէ գդակը քարշեց աչքերի վրա, և իր քայլերը ուղղեց դէպի բակի դուռը:

—Մենք այլ ևս չենք տեսնվի, հարցրեց հայր սուրբը Նրան ճանապարհ դնելու ժամանակ:

—Տեսնվելու հարկ չը կայ, պատասխանեց նա շտապելով. — մեզանից ամեն մէկը գիտէ, թէ ինչ պիտի անէ: Ես այժմ գնում եմ տէր Աւետիքի մօտ հաղորդելու Նրան ձեզանից ստացած տեղեկութիւնները, իսկ դուք կը սպասէք այստեղ մինչև Սատայի վերադարձը:

—Տէր Աւետիքը այժմ ո՞րտեղ է:

—Իւզբաշի Սարգսի տանը. այնտեղ մարդիկ է պատրաստում...

Իւզբաշի Սարգիսը բերդի մէջ բնակվող հայերի տանուտէրն էր:

Իշխանը դեռ չը դուրս եկած Ներքնատնից, կրկին դարձաւ դէպի հայր սուրբը, ասելով.

—Ի նկատի ունեցէք, հայր սուրբ, այստեղի հայ. բնակիչների կեանքը կոտորածից ազատելու համար և մեր գործը գլխացնելու համար անպատճառ պէտք է գրավել զէնքերի պահեստը: Մենք կը յարձակվենք պահեստի վրա այն ժամանակ, երբ ամրոցի մէջ կը յայտնվի հրդեհը:

—Իսկ ես այդ միջոցին կը բաց անեմ ձեր առջև դռները....

—Ձեզ ծանօթ է ամրոցի դիրքը:

—Սառան կառաջնորդէ ինձ, նա բաւական ծանօթ է:

—Մնում է մի բան. մենք պէտք է գիտենանք ձեր գնալու րոպէն:

—Ես սպասում եմ Սառային, եկածին պէս ճանապարհ կընկնենք. և նոյն րոպէում մարդ կուղարկենք ձեզ իմացում տալու: Ձեր տեղը ինձ արդէն յայտնի է՝ Իւզբաշի Սարգսի տունը:

—Հէնց այնտեղ:—Բարի գիշեր:

Հայր սուրբը նրան ճանապարհ դրեց մինչև բակի դուռը և ետևից դուռը կրկին կողպեց:

—Այս գիշեր, ինչպէս երևում է, ես անդադար դռնապանի պաշտօն պիտի կատարեմ... ասաց նա իր մտքում, երբ կրկին վերադարձաւ ներքնատունը:— Կարծես, ճակատագիրը դրա համար է ստեղծել ինձ...

Եւ իրաւ, նա Տաթևի միաբանութեան մէջ նոյնպէս դռնապանի պաշտօն էր կատարում. վանքի լուսարարն էր, բանալիները նրա մօտ էին պահվում:

Նա մի առանձին բաւականութեամբ սկսեց անցուդարձ անել սենեակում, շարունակելով իր խօսքը.

—Մինչև այսօր, ամեն առաւօտ, ամեն երեկոյ, բաց էի անում վանքի տաճարի դռները, ժամասէր միաբանութիւնը, մանելով այնտեղ, աղօթում էր: Իսկ այս գիշեր կը բացանեմ խանի ամրոցի դռ-

ները և իմ ընկերները կը մտնեն այնտեղ կոտորելու համար...

—Ահա քեզ բանալիները... լսելի եղաւ մի ձայն նրա ետևից:

Հայր սուրբը շուռ եկաւ, տեսաւ իր առջև Սառային: Ուրախութիւնը և զարմացումը փոփոխակի կերպով տիրեցին նրա սրտին:

—Դու ո՞ր տեղից եկար, բակի դուռը փակ էր:

Երևում էր, Սառան շատ վազվզել էր, նրա ձայնը սաստիկ շնչասպառութիւնից կտրատվում էր:

—Մեր կտուրի վրայով եկայ, ասաց նա.—այնտեղից ճանապարհ կայ: Առաջ մտայ մեր հարևանի տունը, երեխաս տեսնելու. նրանց մօտ պահ էի տուած: Խեղճ տղայ, ինչպէս հանգիստ քնած էր: Նա չը գիտէ, թէ քանի րոպէից յետոյ ինչեր կը պատահեն.... Չուզեցի զարթեցնել, թողեցի այնպէս քնած: Յետոյ շտապեցի այստեղ, գիտէի, որ դու ինձ սպասելիս կը լինես:

Արագ շարժումը մի կողմից, ուրախութիւնը միւս կողմից, տուել էին տիկնոջ դէմքին խիստ գուարթ պայծառութիւն: Նա մի առանձին քընքշութեամբ բանալիները մեկնեց դէպի հայր սուրբը, ասելով.

—Ա՛ռ, ինչ որ ցանկանում էիր...

Հայր սուրբը ընդունեց բանալիները, հարցնելով.

—Ի՞նչով կարող եմ վարձատրել քեզ:

—Նրանով, որ դու թոյլ տաս ինձ ասել՝ գրկիր ինձ:—Այդ ասելու իրաւունքը ինձ համար մեծ վարձատրութիւն է: Մեր հին, դժբախտ անցքերից յետոյ ես կորցրել էի այդ իրաւունքը, իսկ այժմ, կրկին արժանացրու քո սէրին:

Վերջին խօսքերը արտասանելու միջոցին գեղեցիկ կնոջ աչքերում երևացին արտասուքի կաթիլներ: Այդ սրտաշարժ խոստովանութիւնը արեղային մոռանալ տուեց բոլոր անցեալը.... Նա գրկեց նրան, սկսեց ջերմ կերպով համբուրել:

—Ես մոռանում եմ, Սառա, մոռանում եմ բոլորը, թէ որքան ցաւ, որքան դառնութիւն պատճառեցիր ինձ քո անհաւատարիմ վարմունքով: Ոչինչ ապաշխարութիւն չէր կարող քաւել այդ յանցանքը. ոչինչ սպեղանի չէր կարող բժշկել իմ սրտի վէրքը, իսկ այս գիշեր բոլորը անցաւ: Դու ապացուցիր, որ արժանի ես սիրվելու և ես իմ հոգու բոլոր զօրութեամբ կը սիրեմ քեզ:

Տիկինը ոչինչ չը պատասխանեց: Սաստիկ ուրախութիւնը և սաստիկ երկիւղը միօրինակ կապում են մարդու լեզուն: Նա բաւական էր, որ կրկին գտնվում է իր մի ժամանակ սիրած տղամարդի գրկում. դրանով բախտաւոր էր, դրանով երջանիկ էր համարում իրան:

—Հիմայ դառնանք դէպի գործը, ասաց երիտասարդը.—դրանք որ դռների բանալիներն են:

—Այդ մէկը դրսի դռան բանալին է, որ տանում է դէպի մի փոքրիկ քառակուսի բակ, որի իւրաքանչիւր անկիւնում գտնվում են մի-մի ահագին չինարիներ և հովանաւորում են ամբողջ բակը: Այդ բակի միջից մի նեղ դուռ տանում է դէպի զէնքերի պահեստի ամբարանոցը, իսկ մի մեծ դուռ տանում է դէպի խանի գլխաւորան ընդարձակ բակը:

—Ի՞նչ ես կարծում, ես չէի մոլորվի այդ լաբիրինթոսի մէջ:

—Ես քեզ հետ կը լինեմ,-ինձ բոլոր ծակուծուկերը յայտնի են, ես քեզ միայնակ չեմ թողնի:

Փոխանակ պատասխանի, երիտասարդը միւս անգամ գրկեց իր հերոսուհուն և սեղմեց իր կուրծքի վրա:

—Դու երբէք ինձ այդքան քաղցր չես եղել, որպէս այս գիշեր, հաղելիս, ասաց նա խորին հոգեզմայլութեան մէջ:—Հիմայ պատրաստվենք գընալու:

—Ես շատ չեմ ուշացնի քեզ, պատասխանեց տիկինը, նրա գրկից դուրս պրծնելով.—ինձ հարկաւոր է միայն փոխել հագուստս:

Նա վազեց իր սենեակը և մի քանի րոպէից յետոյ վերադարձաւ տղամարդի հագուստով:

—Պէտք է մարդու հագուստը սաղ գայ իր գոր-

ծին, այդպէս չէ՞, սիրելիս, ասաց նա ծիծաղելով։

—Հիմայ գնանք։

—Սպասիր, ասաց աբեղան նրան կանգնեցնելով.—ես մոռացայ քեզ հարցնել, թէ ինչպէս յաջողվեցաւ քեզ ձեռք բերել այդ բալանիները։

—Դա մի ամբողջ պատմութիւն է, լաւ է, որ չը հարցնէք, պատասխանեց Սառան հրաժարվելով։

—Ի՞նչու։

—Կարելի է Փարիչանը բարկանայ, եթէ քեզ պատմելու լինեմ։

—Երևի, մի գաղտնիք կայ. բայց դու գիտես, որ մենք հոգևորականներս իրաւունք ունենք ամեն մարդու գաղտնիքները գիտենալու, ասաց երիտասարդը ծիծաղելով։—Փարիչանը չի բարկանայ, պատմիր, սիրելիս։

—Փարիչանը գողացել է այդ բալանիները ամրոցի «ղափուչի-բաշիից» (դռնապանների գլխաւորից) ասաց Սառան, երկար մտածելուց յետոյ։

—Ի՞նչպէս։

—Հէնց այդ ինչպէսի մէջն է բոլոր գաղտնիքը, լսիր.—Դռնապանների գլխաւորը մի ծերունի է, այն ծերունիներից մէկը, որ մազերը սպիտակելուց և ատամները թափվելուց յետոյ նորից սկսում է սիրել։ Նա մի առանձին սէր ունի սիրահարվել միայն կանանոցի աղախինների վրա, որոնք անգամ նրա աչքերի առջևից անցուդարձ են ա-

նում, երբ նա ամեն առաւօտ դռները բաց անելով, փառաւորապէս նստում է ամրոցի մեծ դռան մօտ։ Դա իր մտքում սիրում էր Փարիչանին, որը, կարելի է ասել, աղախինների մէջ ամենագեղեցիկն է։ Շատ անգամ գնում էր իր երևակայական սիրուհու համար թանգագին ընծաներ, քաղցրաւենիք և ուրիշ այդպիսի բաներ։ Փարիչանը ուրախութեամբ ընդունում էր ընծաները, վայելում էր և քթի տակից ծիծաղում էր ծերունու յիմարութիւնների վրա։

Երբ ես Փարիչանին առաջարկեցի, թէ պէտք է ձեռք բերել զէնքերի պահեստի բալանիները, նա մի րոպէ մտածեց ու ինձ ասաց. «Այդ հեշտ է. ես հէնց այս գիշեր ձեռք կը բերեմ բալանիները»...

Փարիչանը, որ միշտ աշխատում էր խույս տալ անտանելի սիրողից, այս գիշեր, ընդհակառակն, միջոց է որոնում հանդիպել նրան։—«Այդ ինչ է պատահել քեզ հետ, Ասկար «ամի» (կանանոցի բոլոր աղախինները նրան «ամի» *) են կոչում) ասում է նրան։—Վաղուց է ինձ համար ոչինչ չես գնել»։

Այդ խօսքերը զուարճացնում են «ամիին». առաջին անգամ նա Փարիչանի կողմից գտնում է մի այդպիսի մտերմութիւն։

—«Ասկար ամիի հոգին քեզ մատաղ լինի, պա-

---

*) Ամի նշ. հօրեղբայր։

տասխանում է ծերունին,—«դու միայն Ասկար ամիի հետ այդպէս քաղցր խօսիր, նա իր բոլոր ունեցածն ու չունեցածը քեզ կընծայէ:

—«Ես քեզ հետ քաղցր կը խօսեմ, Ասկար ամի, էլ քեզ ուշունցներ չեմ տայ, ասում է փարիշանը աւելի հրապուրիչ կերպով ու մօտենում է, ձեռքը քսում է նրա ուսին:

Փարիշանը սովորութիւն ունէր Ասկար ամիի սիրոյ ցոյցերին միշտ հայհոյանքով պատասխանել և երբեմն գլխին խփել: Ասկար ամին մի առանձին բախտաւորութիւն էր համարում, երբ սիրած կնոջ գեղեցիկ ձեռքը դիպչում էր իր գլխին: Բայց փարիշանի այս անգամի անակնկալ քնքշութիւնը նրան միանգամայն զարմացնում է, և նա վստահանում է փարիշանին հրաւիրել իր սենեակը, ասելով.

—«Գնանք, հոգիս, գնանք ինձ մօտ, ինչ որ ուզում ես, Ասկար ամին կը տայ քեզ:

Փարիշանը հաճութեամբ հետեւում է ծերունուն, մտնում է նրա սենեակը: Ասկար ամիի պահանջը խիստ համեստ է լինում. նա խնդրում է, որ փարիշանը յետ քաշէ երեսի քօղը և մի կողմ գցէ իր չադրան, որ ինքը կարողանայ կուշտ կերպով նայել նրա մարմնի սիրուն կազմվածքի վրա: Պէտք է գիտենալ, որ պարսիկ կնիկները իրանց չադրան վեր առնելուց յետոյ, ներկայանում են համարեա կիսամերկ դրութեան մէջ: Ներքին հագուստները

խիստ կարճ են. կուրծքը, ուսերը, սրունքները, բազուկները մնում են բոլորովին բաց:

—«Նայիր, ասում է փարիշանը, մի կողմ գցելով թէ չադրան և թէ երեսի քօղը.—«որքան կամենում ես նայիր:

Ծերունին, բոլորովին հիացած իր տեսածից, աւելի հեռուն է գնում, կամենում է գրկել, համբուրել նրան:

—«Այդ անկարելի է, Ասկար ամի, ասում է փարիշանը.—այդ թող չեմ տայ: Այն էլ բաւական էր, որքան նայեցիր իմ վրա:

Փարիշանը ձեռքով հրում է, մի կողմ է ձգում ծերունուն, իսկ ինքը սկսում է աչք ածել սենեակի չուրջը, ձևացնելով, թէ շատ հետաքրքրւում է այնտեղ գտնված առարկաներով: Ծերունին չէ զրկում նրան այդ զուարճութիւնից: Սենեակի մի ճակատի վրա, ուր մօտ նրա անկողինն էր դրած, պատի մէջ ցցած մեխերից քարշ էին ընկած դռնապանների գլխաւորի բազմաթիւ բալանիները: Այդ բալանիները նա գիշերը քարշ էր տալիս մեխերից, իսկ ցերեկը քարշ էր տալիս իր գօտիից, հպարտութեամբ ման էր գալիս ամրոցում, իր նըշանաւոր պաշտօնը ցոյց տալու համար: Փարիշանի աչքերը կանգնում են պատից քարշ ընկած բալանիների վրա:

—«Այդ որքան բալանիներ ունես, Ասկար ամի,

ասում է նրան կրկին մի քաղցր ժպիտ գործելով իր սիրուն դէմքի վրա:

—«Ապա, ի՞նչ ես կարծում, այդ ամբողջ ամբոցը իմ ձեռքումն է, պատասխանում է Ասկար ամին պարծենալով:—«կամենամ կը փակեմ, կամենամ կը բաց անեմ:

—«Թոյլ տուր տեսնեմ, Ասկար ամի, ես կարող եմ գիտենալ, թէ որ բալանին որ դռանն է պատկանում, ասում է փարիշանը:

—«Չես կարող, պատասխանում է Ասկար ամին:

—«Կարող եմ, ասում է փարիշանը.—«Եկ գըռաւ դանք:

—«Ի՞նչով, հարցնում է Ասկար ամին:

—«Ինչով որ դու կամենաս, պատասխանում է փարիշանը:

—«Եթէ դու իմացար, ասում է Ասկար ամին, —«թէ որ բալանին որ դռանն է պատկանում, ես կը տամ քեզ տասը հատ ոսկի. իսկ եթէ չիմացար, դու պիտի տաս ինձ մի զոյգ համբոյր:

—«Շատ լաւ, համաձայնվում է փարիշանը և սկսում է մատը մի առ մի դնել բալանիների վրա, ասելով.—«Ահա այդ մեծ դռան բալանին է, այդ փոքր դռան բալանին է, այդ միջին դռան բալանին է, այդ դրսի դռան բալանին է, և միւսներն էլ այդ կարգով:

—«Ես տարայ, ես տարայ, բացականչում է Աս-

կար ամին ուրախութիւնից վեր-վեր թռչելով:—«Ոչ մէկը չը կարողացար գիտենալ:

—«Ի՞նչպէս չը կարողացայ, պատասխանում է փարիշանը չը կոտրվելով.—«ապա դու իմ սխալները ցոյց տուր, տեսնեմ:

—«Այս բոլէխ ցոյց կը տամ, ասում է Ասկար ամին և սկսում է մի առ մի ցոյց տալ, թէ որ բալանին որ դռանն է պատկանում, մինչև հասնում է երկու բալանի.—«Դրանցից մէկը, ասում է, զէնքերի պահեստի բալանին է, իսկ միւսը՝ նրա բակի դռան բալանին է:

Փարիշանը մտքումը նշանակում է այդ երկու բալանիները, իսկ ծերունին շարունակում է մնացածները ցոյց տալ:

—«Հիմայ տեսա՞ր, որ տարված ես, ասում է ծերունին դառնալով դէպի փարիշանը.—«հիմայ տուր տարած գրաւս:

—«Ի՞նչ տամ, ի հարկէ դու կարող ես գիտենալ, իսկ ես չեմ կարող, ասում է փարիշանը, նրան աւելի գրգռելով:—«Քո բալանիներն են, քո ձեռքումն են մաշվել, ես որտեղից պիտի գիտենամ:

—«Դէ, լաւ է, անաստուած մի տանջիր ինձ, ասում է Ասկար ամին աղաչելով.—«խօ տարել եմ, էլ ինչ խօսք ունես: Թէ ուզում ես, այն տասն ոսկին էլ կը տամ, որ խոստացայ:

—«Լաւ, տուր, ասում է փարիշանը, ոչ թէ

ոսկիները առանալու ցանկութիւնով, այլ որ մի առիթ գտնէ նրան սենեակից հեռացնելու, որովհետև գիտէր, որ ոսկիները իր սանդուխանոցում*) պահած ունի:

Ծերունու ընդունարանից մի այլ դուռ բացվում էր դէպի փոքրիկ սանդուխանոցը. Նա մըտնում է այնտեղ ոսկիները բերելու համար: Փարիչանը այդ միջոցին, օգուտ քաղելով նրա բացակայութիւնից, վեր է առնում նշանակած բանալիները և թաքցնում է իր գրպանում: Երբ յայտընվում է ծերունին, ոսկիները բռնած ձեռքում, Փարիչանը ասում է նրան.

—Չէ, Ասկար աղի, ես հոգի ունեմ Աստծուն տալու, դու տարել ես, ես ջղալութիւն *) չեմ անի. քեզ համար պահիր ոսկիներդ, ես կը տամ, ինչ որ խոստացել եմ: Եւ մանկահասակ կինը իր գեղեցիկ երեսը դէմ է անում ծերունու ցամաքած շրթունքին:

Ասկար աղին ուրախացած այդ անսպառ երջանկութիւնով, ամենևին չէ նկատում իր սենեակում կատարված գողութիւնը: Փարիչանը առանց

*) Սանդուխանոց նշանակում է պահեստի տեղ, ուր առհասարակ պահում են ընդեղէններ, թանգագին իրեղէններ:

*) Ջղալութիւն անել նշանակում է խաղի մէջ խարդախութիւն գործել:

երկար ժամանակ կորցնելու հեռանում է, խոստանալով շուտ-շուտ այցելել նրան...

Երիտասարդ արեղան, որ ուշադրութեամբ լըսում էր Սառայի պատմութիւնը, մի առանձին ոգևորութեամբ բացականչեց.

—Սքանչելի՜ սէր, դարձեալ դու ես գեր խաղում կնոջ, քո ընդունակ ստանդապահի ձեռքով...

—Այո, այդպէս է սէրը, ասաց Սառան փաթաթվելով նրա պարանոցին:

—Բոլորը հասկացայ, ասաց արեղան.—այժմ կարող ենք գնալ:

Նրանք հանգցրին նկուղատան մէջ վառվող ճրագը, և բակի դուները փակելով, հեռացան: Խաւար, ալոր-մալոր փողոցներում դեռ ամբոխի յուզմունքը դադարած չէր: Ամբողջ բերդը գտընվում էր սոսկալի մոլեգնութեան մէջ: Տիկինը իր երիտասարդ ուղեկցի հետ խառնվեցան խռովված բազմութեան մէջ:

ԺԹ.

Չը նայելով Զէյվա բերդի երեք անցքերը փակված էին հայոց զօրքերով, բայց այդ անցքերից մուտք գործելը սարսափելի դժուարութիւններ ունէր: Բնական էր, որ թուրքերը կանգնեցնէին իւրաքանչիւր անցքի վրա քանի հրացանաւորներ, այնուհետև ոչ մի հայ զինուոր չէր կարող մուտք գործել բերդի մէջ: Այդ հասկանում էր բեր-

դակալ խանը, և այդ էր նրա յամառութեան գըլխաւոր պատճառը: Նա աներևակայելի էր համարում, որ թշնամին կարողանար գրաւել իր անմատչելի ամրութիւնները: Այդ հասկանում էր և բէկը, չէր ցանկանում իր կողմից մեծ կորուստով ձեռք բերել նրա ամրութիւնները: Նա աշխատում էր իր զինուորների արիւնը փոխարինել պատերազմական խորամանկութիւններով: Իսկ այդ խորամանկութիւնները արդէն գործ դրված էին: Բայց ոչ խանը և ոչ նրա աւագանին չը գիտէին, որ թշնամին արդէն բերդի միջումն է, գործում է, որոգայթներ է լարում հէնց նրանց քնթի տակին...

Բռնակալը կարող է երկնել միայն հրէշաւոր մտքեր. ռազմագիտական նուրբ կանխատեսութիւնները նրան ծանօթ չեն: Գլխատելով իր հայ բնակիչներին, և նրանց կառափները նետելով դէպի թշնամու բանակը,—դրանով խանը մտածում էր սարսափ ձգել բէկի վրա և նրան հեռացնել իր բերդի մօտից: Խանի հրամանը արդէն յայտնի էր թէ բերդի թիւրք բնակիչներին և թէ նրա զինուորներին: Վաղորդեան նամազը կատարելուց յետոյ պիտի սկսվէր կոտորածը: Հայերի տները, կայքը, կանայքը, զաւակները արդէն հարևանցօրէն բաժանված էին իրանց դրացի մահմեդականների մէջ: Եւ այդ կարգադրութիւնները յայտնի էին իրանց՝ հայերին:

Այդ կարգադրութիւնների վրա ծիծաղում էր մի

սարսափելի մարդ, ծիծաղում էր հսկայի և սատանայի ծիծաղով: Նա գտնվում էր նոյն ժամում իւզբաշի Սարգսի տան սենեակներից մէկի մէջ, որը առանձնացած, բաժանված էր կանանց բնակարանից:

Իւզբաշի Սարգիսը մի սպիտակամօրուք ծերունի էր, խելացի, փորձված և բարեսիրտ: Նա ծանօթ էր խանին որպէս հայերի ներկայացուցիչը, որպէս նրանց տանուտէրը: Երբէք նրա տանից պակաս չէր լինում Աստուծոյ հիւրը, իսկ այս գիշեր ընդունել էր իր մօտ այն «սարսափելի մարդուն», որ վերևում յիշեցինք:—Դա տէր Աւետիքն էր, բէկի անգութ զօրապետներից մէկը: Նրա շուրջը շարված էին մի քանի հոգի բերդի հայ բընակիչների երևելիներից, ուշադրութեամբ լսում էին նրա խօսքերը:

Տանուտէրը, որպէս զի մահմեդականների կասկածը չը յարուցանէ իր տան մէջ հաւաքված ժողովի վրա, առաջուց լուր էր տարածել, թէ դիտաւորութիւն ունի հայերից մի մեծ գումար հաւաքել, ներկայացնել խանին, և դրանով նրա բարկութիւնը ամոքել, և նրա հպատակ, հաւատարիմ հայերի կեանքը ազատել կոտորածից: Այդ լուրը հասել էր խանի ականջին: Նա իր մէջ նոյնպէս ծիծաղում էր հայերի միամտութեան վրա, սպասում էր ստանալ գումարը, յետոյ հրամայել, որ նրանց գլխատեն:

Բայց խղճալի Սարգսի տան խորհուրդը, փոխանակ «փիչքէչի» վրա մտածելու, զբաղված էր այլ պատրաստութիւններով:

Տէր Աւետիքը, որ բէկի կամաւորների թւում մտնելուց յետոյ զինուորականի հագուստ էր կրում, և որը այդ բերդում մտաւ սափրիչի կերպարանքով, այժմ հագած ունէր քահանայի նախկին զգեստը: Երևի, ամենի վրա աւելի ազդեցութիւն գործելու համար, պէտք էր այդ հագուստով ներկայանալ նրանց: Նա դարձաւ դէպի իր շուրջը նստողները, ասելով.

—Ձեզ պէտք է կոտորեն, անպատճառ պէտք է կոտորեն, այդ դուք ինքներդ գիտէք: Ուրեմն ձեզ համար մի և նոյն է, թէ ինչ մահով կը մեռնէք: Աւելի լաւ չէ՞, որ սուրը ձեռքում պաշտպանէք ձեր անձը, ձեր կնիկները, ձեր զաւակները ու տղամարդի պէս մեռնէք: Բայց եթէ լսէք ինձ, ես կարող եմ հաւատացնել ձեզ, որ կենդանի կը մնաք: Դուք կազատէք ձեր անձը ու բոլոր նրանց, որոնք սիրելի են ձեզ համար: Ձեզ հարկաւոր է մի քանի ժամ կռուել միայն, և շուտով կը տեսնէք, բէկի զօրքերը ձեզ օգնութեան հասած: Այնուհետև այն, որ մահմեդականները վճռել են գործ դնել ձեզ վրա, մենք գործ կը դնենք նրանց վրա...

—Մենք պատրաստ ենք, ասաց նրանցից մէկը, —բայց դժուարութիւնը նրանումն է, որ զէնքեր չունենք, մեր զէնքերը խլեց խանը:

—Դուք ուժեղ ձեռքեր ունէք և այդ բաւական է, իսկ զէնքեր յետոյ կը տանք ձեզ, ասաց քահանան:—Հարկաւոր է սկզբում զինուորվել այն գործիքներով, ինչ որ կը գտնվի ձեր տներում. թող լինի դա կացին, ուրագ, մանգաղ, բահ, շամփուր, մահակ, վերջապէս հասարակ փայտի կտոր, մի և նոյն է: Այդ զէնքերը ձեզ պէտք են միայն փողոցներում պաշտպանվելու համար, իսկ երբ կը հասնենք ամրոցին, այնտեղ կը փոխէք ձեր ունեցածը իսկական զէնքերով:

—Ի՞նչպէս, հարցրին նրանից:

—Ես հարկաւոր չեմ համարում ձեզ բացատրել, թէ ինչպէս կարող է յաջողվել այդ, բայց իբրև քահանայ, իբրև Աստուծոյ տաճարի պաշտօնեայ, հաւատացնում եմ ձեզ, որ ինքը մեր Տէր Յիսուս Քրիստոսը կօգնէ մեզ և թոյլ չի տայ, որ իր զաւակները մորթվեն մահմեդականների ձեռքով: Ձեզ հարկաւոր է միայն այնքան քաջութիւն ունենալ, և հասնել մինչև խանի ամրոցը:

—Բոլոր դժուարութիւնները մինչև այնտեղ ողջութեամբ հասնելն է, ասաց նստողներից մէկը:

—Ոչինչ դժուարութիւն չը կայ: Ձեզ յայտնի է, որ մենք այդ մասին բոլոր կարգադրութիւնները արել ենք: Ես ինքս իմ քաջ ընկերներիս հետ կառաջնորդենք ձեզ: Դուք միայն այն ասեցէք, թէ քանի հոգի կարող էք պատրաստել:

—Աւելի քան հարիւր հոգի։

—Այդ բաւական է։ Ուրեմն պէտք չէ ժամանակ կորցնել. շուտով գնացէք, թող ձեզանից ամեն մէկը պատրաստէ իր մարդիկը։

Ծերունի Սարգիս խըլըաշին մինչև այժմ լուռ էր. երբ նկատեց, որ քահանայի խօսքերը բաւական ազդեցութիւն գործեցին, ինքն նոյնպէս աւելացրեց.

—Այդ մարդիկը, տէր հայր, անձնանուէր մարդիկ են, ես դրանց ճանաչում եմ, և՛ քաջ մարդիկ են։ Ինքս շատ անգամ ականատես եմ եղել դրանց քաջութիւններին։ Մինչև այսօր հայի ձեռքը կապված էր, այժմ, փառք Աստուծոյ, կապանքը քանդվեցաւ։ Պէտք է մենք էլ ցոյց տանք, որ մարդիկ ենք, անասուններ չենք, որ ամեն կերպ գործածեն մեզ։—Վեր կացէք, զաւակներս, դարձաւ նա դէպի նստողները,—գնացէք, ինչպէս տէր հայրը ասում է, պատրաստվեցէք։ Մեր փրկութիւնը մեր քաջութեան մէջն է։ Աստուած էլ չէ օգնում մարդուն, երբ նա ինքն իրան չէ աշխատում օգնել։ Գիտէ՞ք այն առածը, թէ կանգնած եզը ինչ օյին է հանում քնած եզան գլխին...

Բոլորը կանգնեցան ոտքի վրայ։

Ծերունին այժմ դարձաւ դէպի տէր Աւետիքը.

—Դրանք կը գնան, կը պատրաստեն իրանց մարդիկը, բայց դուք, տէր հայր, առաջուց պէտք

է յայտնէք դրանց, թէ ո՛րտեղ պիտի հաւաքվեն և երբ պէտք է յարձակում գործեն։

—Ի հարկէ, պէտք է յայտնեմ, խօսեց քահանան։—Ես իմ մարդիկների հետ կը սպասեմ ձեզ ածխավաճառների հրապարակի այն անկիւնում, որտեղից մի խուլ, նեղ փողոց տանում է դէպի խանի ամրոցը։ Դուք ամեն կողմից փոքրիկ խըմբերով, առանց աղմուկ հանելու, կը հաւաքվէք այնտեղ։ Իսկ յարձակումը կը կատարենք ուղիղ այն ժամանակ, երբ խանի ամրոցից կը յայտնվեն հրդեհի բոցերը, և երբ մի փչանք կը բարձրանայ օդի մէջ։ Այդ երկուսը՝ փչանքը և հրդեհի բոցերը կը յայտնվեն մի և նոյն բոպէում։ Այդ երևոյթները պէտք է ընտրէք ձեզ որպէս առաջնորդ. չը մոռանաք։

Ծերունին վեր կացաւ բաց անելու սենեակի դռները, որտեղ նրանք նստած էին։ Տէր Աւետիքը կրկին դարձաւ դէպի իր աջակիցները այդ խօսքերով.

—Ես ձեզանից, զաւակներս, ոչ խօսք, ոչ երդում և ոչ մի այլ ուխտ չեմ պահանջում, որովհետև, հաւատացած եմ, որ ձեր ընտանիքի և պատուի պաշտպանութիւնը պահանջում է կատարել այն, ինչ որ ձեզ պատուիրեցի։ Հիմայ գնացէք, զաւակներս, Տէր ընդ ձեզ։ Մի մոռացէք ածխավաճառների հրապարակը և մտքներումդ պահեցէք ձեզ յայտնած նշանները՝— հրդեհը և

փչանքը: Դարձեալ ասում եմ ձեզ՝ աշխատեցէք աղմուկ չը բարձրացնել, աշխատեցէք, որքան կարելի է, ձեր հագուստով նմանուել թուրքերին:

Նրանցից մէկը ասաց.

—Ձեր օծեալ աջով երդվում ենք, տէր հայր, որ կը կատարենք ձեր բոլոր խրատները, և քանի որ մեր բերանում շունչ կայ, թոյլ չենք տայ, որ մեր աչքերի առջև մեր կնիկները, մեր զաւակները յափշտակեն, և մեր գլուխները թնդանօթի փտակի տեղ գործ ածեն:

—Օրհնեալ լինիք, զաւակներս, մեր Տէր Յիսուս Քրիստոսին եմ յանձնում ձեզ. գնացէք, զաւակներս. մեր սուրբ Գրիգոր Լուսաւորիչ պապը թող ձեզ ուժ և զօրութիւն շնորհեսցէ:

Նրանք մօտեցան մէկ-մէկ համբուրեցին քահանայի աջը և հեռացան:

Այդ միջոցին ծերունի Սարգիսն էլ վեր առեց իր մահակը, որ գաւազանի տեղ էր գործ ածում, կրթնեցաւ նրա վրա, դողդողալով պատրաստվում էր դուրս գալ սենեակից:

—Դուք ո՞ւր էք գնում, Սարգիս-ապէր, հարցրեց քահանան, զարմացական ժպիտով նայելով նրա վրա:

—Գնում եմ, ասաց նա մի առանձին զգացված եղանակով.—գնում եմ տեսնեմ ջահիլները ինչ են շինում...

—Մի այդպիսի վտանգաւոր գիշերում ձեր դուրս գալը լաւ չէ, Սարգիս-ապէր, ասաց նրան քահանան:

—Օրհնած, ինչով պէտք է վատ լինի, այստեղն ինչ էլ որ ապրում եմ, այդ էլ աւելորդ է. իմ ոսկորները վաղուց պէտք է փթած լինէին:

Նա՝ չը սպասեց քահանայի հետևեալ խօսքերին, օրօրվելով, դուրս եկաւ սենեակից, որ տեսնէ, թէ ջահիլները ինչ են շինում: Զառամեալ սրտի մէջ եռ էր գալիս երիտասարդական աշխոյժը. ցանկանում էր, եթէ իր բազուկներով չէ կարող օգնել գործին, գոնէ իր խրախոյսներով քաջալերէ կռուողներին: Նա կանչել տուեց ծառային, որ առաջնորդէ իրան. ծառան գիտէր նրա սովորութիւնները: Գիշերները ծերունու աչքերը լաւ չէին տեսնում. ծառան բռնեց նրա ձեռքից, սկսեց ման ածել մթին փողոցների մէջ, անդադար զգուշացնելով. «այստեղ մի փոս կայ, այստեղ մի քար կայ» և այլն:

Տէր Աւետիքը մնաց սենեակում միայնակ. Նա վեր կացաւ, իր քահանայական զգեստը հանեց, մի կողմ ձգեց, ասելով. «Էլ ինձ պէտք չէք», յետոյ սկսեց հագնել իր աշխարհականի հագուստը և կապեց զէնքերը:

Այդ միշտ տխուր, միշտ տրտում մարդը ուրախանալ չը գիտէր. նա առհասարակ գտնվում էր մի տեսակ մռայլ տրամադրութեան մէջ, կար-

ծես թէ, նրան մի բան պակաս էր, կամ մի բան կորցրել էր: Իսկ այս գիշեր նրա խիստ դէմքի վրա երևում էր մի անսովոր ուրախութիւն, որ շատ նման էր դևերի ուրախութեանը, երբ նրանք պատրաստվում են կատարել մի սարսափելի արհաւիրք, մի հրէշաւոր գործ:

Նա մօտեցաւ նեղ լուսամուտին, սկսեց ականջ դնել փողոցից լսվող աղաղակներին: Ամբոխի խռովութիւնը դեռ դադարած չէր:

—Ո՞ւր մնացին այդ գառնուկները, չեն երևում, ասաց իր մտքում փոքր ինչ զայրացած կերպով: Նա սովորութիւն ունէր դէպի իրանից մանկահասակները վերաբերվել այդ խօսքերով:

Վերջապէս յայտնվեցան Ստեփաննոս իշխանը և Մէլիք-Փարսադանի որդի Բալի զօրավարը: Քահանան կարճ կերպով պատմեց նրանց, թէ ինչ վախճան ունեցաւ իր խորհուրդը տեղային հայոց երևելիների հետ, և վերջացրեց իր պատմութիւնը այդ խօսքերով.

—Չը գիտեմ, որքան յոյս կարելի է դնել դրանց վրա:

—Նրանց վրա յոյս կարելի է դնել, ասաց Մէլիք-Փարսադանեանը.—«Նեղ ընկած կատուն առիւծ է դառնում:» Անձնապաշտպանութեան բնազդումը կը ստիպէ նրանց կատարել իրա խոստմունքը:

—Կը տեսնենք, ասաց քահանան փոքր ինչ

երկբայական եղանակով:—Դուք ինձ այն ասեցէք, ականը պատրաստ է:

—Բոլորովին, պատասխանեց Շահումեանը:—Ուղիղ բացվում է դէպի Բայնդուր իշխանի և Մէլիք-Փարսադանի բանակը:

—Եւ նրա գոյութեան մասին ոչ ոք տեղեկութիւն չունի:

—Ոչ ոք, բացի Աստուծուց:

—Իսկ Խորէն հայր սուրբը գնացե՞լ է:

—Գնացել է, իր սիրելի Ցառայի հետ:

—Սառան մեր ամենի սէրին արժանի է, պատասխանեց քահանան կշտամբելով Մէլիք-Փարսադանեանի հեգնութիւնը:—Սառան աւելի գործեց, քան թէ մենք ամենքս:

—Իսկ փարիշմնը:

—փարիշմնը նոյնպէս, պատասխանեց քահանան մի առանձին ակնածութեամբ:—Եթէ ես նր-բան տեսնէի, փոխանակ թոյլ տալու, որ նա իմ աջը համբուրէ, ես առաջինը կը լինէի, որ նրա ձեռքը կը համբուրէի: Ամեն մի կին պաշտելի է դառնում, երբ բացի կին լինելուց, մարդ է դառնում, այսինքն կատարում է մարդկութեան համար մի լաւ բան: Այն բոլոր կանայքը, որոնց այսօր տօնում է մեր եկեղեցին, կանացիութեան նեղ սահմանից դուրս եկած, ընդհանուր մարդկային բարութեան համար գործողներն են եղել: Մեզ համար մի և նոյն է, թէ ինչ տեսակ ան-

ցեալ են ունեցել Սատան կամ փարիչանը: Թող նրանց անցեալը մռայլոտ լինի, բայց բարի գործը մինչ այն աստիճան պայծառացնում է նրանց ներկան, որ հին մռայլը կորչում է, անհետանում է նոր լուսաւորութեան մէջ: Մեր Տէր Յիսուս Քրիստոսը Մարիամ Մագթաղինացիների ձեռքով աւելի շատ գործեց, քան թէ Պօղոսի և Պետրոսի ձեռքով: Աստուած հին մեղքը չէ յիշում, երբ մարդ ներկայանում է նրան որ և է առաքինութեամբ:

Քահանայի խօսքերը բաւական ամաչեցրին Մէլիք-Փարսադանեանին, որ նա այնպէս անպատկառ կերպով վերաբերվեցաւ դէպի Սատան և դէպի փարիչանը: Տէր Աւետիքը նոյնքան խիստ էր իր քարոզների մէջ, որքան խիստ էր կեանքի պաշտում: Երիտասարդ Բալլին ոչ մի խօսք չը գտաւ նրան պատասխանելու և լուռ կացաւ: Իսկ իշխան Շահումեանը յայտնեց, որ ժամանակ է գընալու:

Երեքը միասին դուրս եկան իշխանի Սալիմի տանից. փողոցների խառնաշփոթ աղմուկը փոքր ինչ դադարած էր: Խիստ հազիւ պատահում էին զայրացած խմբեր, որոնք աղաղակներ բարձրացնելով անցնում էին: Բայց պէտք չէ մոռանալ, որ մահմեդական ամբոխը այդ ժամանակ քնած էր: Բերդի մեծ մզկիթը լիքն էր աղօթող բազմութիւնով: Ամենքը արտասուքը աչքերում Աստծուց օգ-

նութիւն էին խնդրում: Մոլլաների գլխաւորը, խանից առանձին հրահանգներ ստանալով, կանգնած էր ամբիոնի վրա, քարոզում էր, յորդորում էր, գրգռում էր բազմութեան կատաղի բարկութիւնը «անհաւատների» դէմ: Այս գիշեր նա ներկայացել էր ժողովրդին բոլորովին այլ կերպարանքով. գլխի սպիտակ չալմայի փոխարէն կըրում էր երկաթէ սաղաւարտ, քարոզչի դաւազանի փոխարէն կրում էր երկայն նիզակ, իսկ կրօնաւորի բարեպաշտական զգեստի փոխարէն հագած ունէր զրահ: Նա ասում էր, որ դատաստանի օրում բոլորը սև երեսներով, կը յայտնուեն Մուհամմէդի առեանում, եթէ թոյլ կը տան գաւուրներին ոտք կոխել այն երկրի վրա, որ պատկանում է իսլամի հաւատացեալներին: Իսկ ով որ կը կռուի, արիւն կը թափի, և մեր սահմաններից կը հալածէ գաւուրներին, նա դատաստանի օրում կը ներկայանայ Մուհամմէդի առեանում պարզ և պայծառ երեսով: Նրա ճակատի վրա կը փայլի նրա քաջութեան աստղը: Եւ մարգարէների մեծը այդ նշանով կը ճանաչէ իր քաջերին և կը վարձատրէ Աստուծոյ դրախտի ամենագեղեցիկ փառքերով:

Մեր երեք հերոսները, անցնելով մզկիթի դռնից, լսեցին այդ խօսքերը: Տէր Աւետիքը ծիծաղելով ասաց.

—Լաւ երազ է, եթէ ի բարին կատարի...

Ի.

Մի և նոյն գիշերում, երբ Զէվու բերդը պաշարված էր, երբ մօլլաների գլխաւորը մզկիթի ամբիոնից բորբոքում էր մահմեդականների կատաղի վրէժխնդրութիւնը քրիստոնեաների դէմ, երբ Դաւիթ-բէկի մարդիկը բերդի մէջ զանազան գաղտնի որոգայթներ էին լարում, երբ խանը վէզիրի հետ ունեցած աղէտաւոր խորհրդից յետոյ, դիւանատան փառաւոր դահլիճում նստած, տալիս էր իր աւագանիին իր սարսափելի հրամանը,—մի և նոյն գիշերում, երբ կանանոցի բոլոր սենեակների ճրագները հանգած էին, մի սենեակում միայն լոյս էր երևում: Դա մեզ ծանօթ Փարիչանի տիկնոջ՝ Զուբէյդա խանումի սենեակն էր:

Այդ սենեակը, որ մի քանի ժամ առաջ կատարեալ անկարգութեան մէջ էր գտնվում, այժմ ներկայացնում էր կարգ, շքեղութիւն և նրբութեան հասցրած վայելչութիւն: Վարդագոյն թաւիշով պատած, ոսկեթել փունջերով զարդարած մութաքաները իրանց պատշաճաւոր տեղումն էին: Նաշխուն գորգերի երեսի վրա սփռած էին աւելի փափուկ օթոցներ քիշմիրի ամենաթանկագին շալերից: Մի կողմում պատրաստած էր գեղեցիկ անկողին, որ բուրում էր ամենաքնքոյշ անուշհոտութիւններով:

Արծաթեայ մատուցարանների վրա դրած էին չինէական հիանալի շիշեր, լցրած զանազան տե-

սակ շէրբէթներով, իսկ նրանց մօտ շարված էին նոյնպէս արծաթեայ մեծ-մեծ գաւաթներ, նկարված գեղեցիկ քանդակներով: Մի կողմում դրած էր թանգագին ղէյլանը, որի գլուխը զարդարած էր ֆէրուզայի քարերով: Բուխարու մէջ, մեղմութեամբ վառվող կրակի վրա, եփ էր գալիս անուշահոտ սուրճը:

Դէպի որ կողմ և նայում էիր, աչքի էր զարկում շքեղութիւն, փափկութիւն, զարդարանք, մէկը միւսից աւելի գեղեցիկ: Իսկ այդ բոլոր վայելչութիւնների մէջ միայն սենեակի թագուհին ներկայացնում էր մի տխուր, գունաթափ հակապատկեր: Նա նստած էր մութաքայի վրա, մեծ հայելու առջև, որ դրած էր ոսկեայ շրջանակի մէջ: Աղախինը խնամքով սանտրում էր նրա սև գիսակները և զանազան ձևերով գանգուրներ էր տալիս:

—Ես իսկոյն կը պատրաստեմ ձեզ, նազելի տիկին, ասում էր աղախինը, շարունակելով իր գործը:—Մի վախեցէք, աշխատեցէք, որքան կարելի է, ձեր սիրտը ուրախ պահել. դա աւելի մեծ փայլ կը տայ ձեր գեղեցկութեանը: Ձեր դէմքը չափազանց գունաթափ է: Դուք գիտէք, որ խանը չէ սիրում գունաթափ դէմքը: Վնաս չունի, ես դրա ճարը կանեմ. հարկաւոր է միայն ձեր թշերը փոքր ինչ շփել ք ա ս ն ի ի արաղով, իսկոյն վարդի գոյն կը ստանան:

—Քամիի արագը լաւ չէ, սաստիկ այրում է, ասաց տիկինը հառաչելով:

—Այրում է, ուղիղ է, բայց կարմիր գոյն է տալիս:

—Զզուելի բան է, կրկնեց տիկինը.—սաստիկ հոտում է:

—Այդ ոչինչ. ես յետոյ կօծեմ ձեր թշերը վարդի իւղով և արագի հոտը կը կորչի:

Տիկինը այլ ևս չը հակառակեց: Ազախինը նըստած էր նրա ետևի կողմում, սանտրում էր մազերը: Նա շուտ-շուտ նայում էր հայելու մէջ տեսնելու տիկնոջ դէմքի արտայայտութիւնը:

—Ուրախ, որքան կարելի է, ուրախ ձևացրէ՛ք ձեզ, ասում էր նա, թեքվելով դէպի հայելին:—Ապա մի ժպտացէ՛ք, տեսնեմ:

Տիկինը ջանք արաւ ժպտալու:

—Այդ ինչ տեսակ ժպիտ է, նկատեց ազախինը, ցոյց տալով իր հմտութիւնը:—Դուք երբ որ ժպտում էիք, ձեր ամբողջ դէմքը, կարծես, խօսում էր մի տեսակ հրեշտակային անոյշ բարբառով, որ բովանդակում էր իր մէջ երկնային մուզիկայի ամենաքաղցր հնչիւնները: Ձեր թշերի վրայ յայտնվում էին երկու գեղեցիկ փոսիկներ: Այդ փոսիկները տեսնելով, խանը միշտ յիշում էր բանաստեղծի երգը, որ իր սիրուհու թշերի երկու փոսիկները նմանեցնում է Մուհամէդի դրախտի մէջ

գտնված երկու աւազաններին, որոնք բովանդակում են իրանց մէջ անմահութեան ջուրը:

Տիկինը ոչինչ չը պատասխանեց: Ցաւալի դառնութեամբ լցված էր նրա սիրտը: Նրա դէմքը ժպտալ չէր կարող: Ազախինը շարունակեց.

—Իսկ ձեր գեղեցիկ աչքերը, տիկին,—ներեցէ՛ք համարձակութեանս,—սաստիկ հանգած են երևում: Չը գիտեմ ինչու այս գիշեր այսպէս կորցրել են իրանց պայծառ փայլը:

Տիկնոջ գեղեցիկ աչքերը աւելի նսեմացան. արտասուքը հեղեղեց նրանց:

—Դու չը գիտես, Փարիշան, ասաց նա վշտալի ձայնով.—դու չը գիտես, այս գիշեր ես որքան տանջվեցայ, որքան ցաւեր կրեցի սիրելի երեխայիս պատճառով: Բայց դարձեալ պէտք է աշխատեմ ուրախ ձևանալ, դէմքս զուարթ պահել, աչքերիս հրապուրիչ արտայայտութիւն տալ և ակամայից ժպտալ, ծիծաղել... որովհետև իմ տէրը, իմ իշխանը բարեհաճել է այս գիշեր իմ տխուր օթևանին այցելութիւն գործել...: Այո, ես տխուր լինելու իրաւունք չունեմ... որովհետև իմ սիրտը ինձ չէ պատկանում... ես պիտի նրա մէջ խեղդեմ իմ բոլոր զգացմունքները, իմ բոլոր կրքերը... և պիտի կեղծեմ... միայն թէ կարողանամ իմ տիրոջը հաճոյ երևնալ... որ չը ձանձրացնեմ նրա ուրախութեան րոպէները...:—Գիտես, Փարիշան, այդ

ինչ տանջանք է… գիտես, որքան հոգեկան մեծ զոհաբերութիւն հարկաւոր է դրա համար…

—Գիտեմ… ասաց խելացի աղախինը։—Ամբողջ հինգ տարի է, որ ես ծառայում եմ ձեզ մօտ. ես միշտ նկատել եմ ձեր տխուր ժպիտը, միայն արտասուքի կաթիլների միջից, ինչպէս անձրևային կաթիլների միջից թէև անցնում են արեգակի ճառագայթները, բայց լաւ չեն ջերմացնում…

—Այո, հինգ տարի է, կրկնեց տիկինը.—բայց իմ այստեղ լինելս եօթն տարի է։ Այդ եօթն տարուայ ընթացքում իմ վիճակը եղել է մի ողորմելի վարձկան կնոջ դրութիւն, որ իր սէրը վաճառում է…. Նա կամայ-ակամայ պէտք է զուարճացնէ իր այցելուին, որովհետև դրա համար վարձուած է. նրան վճարում են…

—Փարիչան, առաջ տարաւ նա.—դու որ և իցէ ժամանակ սիրել ես։

—Սիրել եմ, տիկին։

—Ուրեմն կարող ես երևակայել, թէ որքան ծանր, որքան անախորժ բան է, երբ մարդ ակամայ ստիպուած է սիրող ձևանալ մէկին, երբ նրան սիրել կարող չէ։—Փորձել ես մի այսպիսի բան։

—Փորձել եմ, տիկին….

Աղախինը մօտեցրեց իր նոյն գիշերուայ ծանր փորձը դռնապանների գլխաւոր՝ Ասկար աղիի հետ։

Զուլէյխա խանումը ազգով յոյն էր, մի լաւ

ընտանիքից. նրան խանը գերի բերեց Էրզրումի կողմերից, երբ եօթն տարի առաջ իր աւազակային խմբերով գնացել էր այն կողմերում ասպատակութիւններ անելու։ Նրա հայրը խոստացաւ հինգ հազար ոսկի տալ խանին, միայն թէ իր աղջիկը ազատէ գերութիւնից, բայց խանը չընդունեց։ Գեղեցիկ Զուլէյխան մնաց նրա կանանոցում, բայց ընաւ փոխել չը կարողացաւ այն դաստիարակութիւնը, որ ստացել էր իր ծնողների բարեկիրթ ընտանիքում։ Խանի հարեմը լիքն էր ամեն ազգի, ամեն կրօնի կիներով. բայց նրանց և ոչ մէկին այնքան անտանելի չէր հարեմական կեանքի ստրկութիւնը, որպէս զգայուն, անկեղծ Զուլէյխային։

—Այդ դեռ ևս ներելի է, Փարիչան, երբ կինը, զանազան հանգամանքներից ստիպուած, պարտաւորվում է իր սէրը վաճառել։ Բայց անտանելին այն է, երբ կինը ստիպուած է սէր ցոյց տալ, որովհետև վախենում է։ Ոչ մի տեսակ անասունների մէջ այդ չէ լինում. միայն բռնակալ մարդը կարողանում է այդ անել տալ։ Մենք ևս մի տեսակ հարկատուներ ենք, Փարիչան, եթէ չը վճարենք պահանջված հարկը, ծեծելով կառնեն։ Բռնակալի անգթութիւնը տարածվում է և կնոջ առագաստի վրա։ Կոյր է նա, որ հարեմի մէջ սէր, երջանկութիւն և բանաստեղծական զուարճութիւններ է տեսնում…

Փարիչանին շատ հաճելի էր լսել իր տիկնոջ դառն բողոքը։ Ամբողջ հինգ տարի նա կատարել էր մի անբաղդ դատաւորի պաշտօն. միշտ լսել էր նրա դանգատները, միշտ տեսել էր նրա աչքերի արտասուքը, բայց ոչինչով չէր կարողացել բուժել նրա վիրաւորված սիրտը կամ դարման դնել նրա ցաւերին։ Իսկ այդ գիշեր փոքր էր մնում, որ նա բաց անէր իր ծածկամտութեան փականքը և ուրախալի խօսքերով աւետէր նրա փրկութիւնը, ասելով.—«Նազելի տիկին, մի քանի ժամ ևս համբերութիւն ունեցիր, և դու իմ ձեռքով ազատված կը լինես».... Բայց նա չասաց այդ խօսքերը, թողեց նրան անգիտութեան մէջ, —չասաց, թէ ինչ էր կատարվում նրա չորս կողմում, և ինքը ինչ սարսափելի դեր պիտի կատարէր ընդհանուր տագնապի բոպէում, երբ սուրն ու հուրը պիտի մահ տարածէին ամեն տեղ.... Նա միայն շտապեցրեց իր տիկնոջը, որ շուտով պատրաստվի, որովհետև խանի նրա մօտ գալու ժամը մօտենում էր։

Նա միայն մխիթարեց վշտացած տիկնոջը, ասելով.

—Հոգս մի անիր, տիրուհի, Աստուած ողորմած է. ձմեռվայ դառնաշունչ օրերից յետոյ գալիս են գարնան կենսաբեր օրերը. գիշերվայ խաւարին յաջորդում է առաւօտեան պայծառ արշալոյսը։ Մարդու կեանքի մէջ էլ այսպէս օրերի և եղա-

նակների փոփոխութիւններ են լինում. լաւը յաջորդում է վատին, լոյսը յաջորդում է խաւարին...

Փարիչանը քահանայի աղջիկ էր. նա թէև կարդալ չէր իմանում, բայց բաւական զարգացած էր. հօր տան դաստիարակութիւնից նա պահել էր շատ բան, շատ լուսաւոր հայացքներ կեանքի ու նրա պայմանների վրա։ Երբեմն հայոց աղջիկները զանազան Մանգօնների, Աբաղաների, Արղունների, Բաթուների և մողոլական այլ թագաւորների կանանոցներում առաքելուհիների սրբազան պաշտօն էին կատարում, իրանց գեղեցկութեան և սիրոյ հետ մտցնում էին քրիստոնէութիւնը կռապաշտ թագաւորների պալատներում։ Բայց մահմեդականութեան խաւար մոլեռանդութիւնը սպանեց հայ աղջիկների այդ եռանդը, նրանք այնուհետև մեծ զոհաբերութիւններով կարողացան պահել իրանց կրօնը միայն, այն ևս գաղտնի կերպով։ Փարիչանը մնացել էր հայ և քրիստոնեայ. այդ գիտէր նրա տիկինը միայն, որ ինքը նոյնպէս պահպանել էր քրիստոնէութիւնը։ Այդ կրօնական ամուր կապը աղախնի ու իր տիկնոջ մէջ առիթ էր տուել նրանց մտերմութեանը։ Այդ էր պատճառը, որ տիկինը այնպէս ընտանեբար և համարձակ կերպով թափում էր Փարիչանի առջև իր սրտի ցաւերը։

Աղախինը ետևից սանդրելով տիկնոջ գլխակ-

ները, անցաւ նրա առջևի կողմը, սկսեց ճակատի վրա թափված փունկներից *) զանազան խոպոպիկներ ոլորել։—Խանը մազերի հիւսվածքի այդ ձևը շատ է սիրում, ասաց նա, ճարպիկ մատներով շարունակելով իր գործը։—Յիշո՞ւմ էք, տիկին, այն ժամանակ ասաց խանը՝ «այդ դանդրաւոր փունկները խիստ սազ են գալիս քո երեսին». ես դեռ չեմ մոռացել նրա խօսքերը։

—Ես ոչինչ չեմ յիշում, պատասխանեց տիկինը տխուր ձայնով։

Ազախնի մտաբերած «այն ժամանակը» վեց ամիս առաջ էր, այնուհետև խանը ոչ մի անգամ չէր մտել Զուբէյդայի խանումի ընակարանը։ Այս գիշեր միայն հերթը նրան էր հասել.... Այս գիշեր միայն ներքինապետը, այն ևս շատ ուշ, նրան իմացում տուեց հարեմի իշխանի այցելութեան մասին։

—Դէ շուտ արա, երկար մի տանջիր ինձ, ասաց տիկինը, ձանձրանալով աղախնի հնարած չափազանց պաճուճանքներից։

—Իսկոյն, իսկոյն կը վերջացնեմ, պատասխանեց աղախինը։—Մնում է ձեր յօնքերին բասմա *)

*) Փ ո ւ ն կ ասում են կանանց կարճ կտրած և ճակատի վրա թափված մազերին։

*) Բ ա ս մ ա մի օծանելիք է, որով սև գունով ներկում են յօնքերը։

դնել, աչքերին սուրմա *) քաշել, հագցնել ձեզ, և դուք բոլորովին պատրաստ կը լինէք։

Նա սկսեց փետուրը թաթախել ինչ որ հեղուկի մէջ և նրանով վարպետութեամբ ներկել տիկնոջ յ օ ն ք ե ր ը, որ առանց դրան ևս սև գոյն ունէին։ Միայն հարկաւոր էր նրանց աղեղի ձև տալ, ծայրերը փոքր ինչ երկարացնել, իսկ մէջտեղում յօնքերի երկու կամարները միմեանց հետ միացնել։

Այդ գործողութիւնը կատարելու միջոցին յանկարծ լսելի եղաւ թնդանօթների որոտը։ Ամբողջ ամրոցը սարսափելով դղրդաց։ Սոսկաց և տիկինը։ Սոսկումից նրա գլուխը դողդողաց, և փետուրեայ վրձինը շեղվելով իր ուղղութիւնից, ձգեց նրա մարմարիոնի նման սպիտակ ճակատի վրա մի անկանոն սև գիծ։

—Ո՛ւֆ, հոգիս դուրս գար, այդ ինչ եղաւ, գոչեց աղախինը ինքն ևս սոսկալով, երբ նկատեց, որ իր բոլոր աշխատութիւնները տիկնոջ յօնքերը գեղեցկացնելու վերաբերութեամբ ապարդիւն եղան։—Բայց ես մեղաւոր չեմ, տիկին, եթէ դուք թնդանօթների ձայնից չը վախենայիք և ձեր գլուխը ուղիղ պահէիք, իմ ձեռքը երբէք չէր սըխալվի։ Վնաս չունի, ես իսկոյն կը սրբեմ այդ անկանոն գիծը. Նրա հետքն անգամ չի մնայ։

*) Ս ո ւ ր մ ա մի սև փոշի է, որ գործ են ածում աչքերի համար։

Բայց դուք աշխատեցէք չը վախենալ և ձեր գըլուխը չը դողդողացնել, երբ միւս անգամ կը լսէք թնդանօթների որոտը:

—Ես կաշխատեմ... պատասխանեց տիկինը վշտալի ձայնով:—Ես որոտից ու կայծակից անգամ սոսկալու իրաւունք չունեմ, երբ ինձ զարդարում են իմ իշխանի զուարճութեան համար: Ես զգացմունքից զուրկ մի առարկայ եմ: Աշխարհի կործանման րոպէում անգամ, երբ իմ տէրը ցանկանում է ինձանով ուրախանալ, ես պիտի խեղդեմ իմ սրտում իմ բոլոր զարհուրանքը և պիտի պատրաստուեմ նրան ուրախացնելու.... Այդպէս է մեր վիճակը, փարիչան: Նայիր, այնտեղ, մեզանից փոքր ինչ հեռու, արիւն և արտասուք է հոսում: Մայրերը գրկած իրանց զաւակներին, աղաչում են, որ իրանց սպանեն և խնայեն որդուն: Այնտեղ թշնամու սուրը մահ է տարածում, իսկ այստեղ ինչ է կատարւում....

—Այստեղ բռնակալի գազանային կրքերի համար մի զոհ է պատրաստւում... պատասխանեց աղախինը, չը կարողանալով զսպել իր բարկութիւնը:

Աղախինը ջրով թրջեց մի սպիտակ շորի կտոր և զգուշութեամբ սկսեց սրբել անկանոն սև գիծը նրա ճակատից: Յօնքերի ներկելը աւարտվեցաւ, մնում էին աչքերը:

Նա փղոսկրեայ բարակ գեղտիկը թաթախեց

մի փոքրիկ պարկի մէջ, որ շինված էր հաւի ոտքի կաշուց: Դրա մէջ ածած էր սուրմայի սև փոշին: Յետոյ գեղտիկը վարպետութեամբ տարաւ աչքերի երկու կոպերի միջից: Այդ գործողութիւնից յետոյ կոպերի եզերքը ընդունում էին իրանց վրա սև փոշին, և աչքերին այնպիսի արտայայտութիւն էին տալիս, կարծես թէ, նրանք նշաձև սև շրջանակի մէջ դրված լինէին: Բայց աղախինը զարմացաւ, երբ նկատեց, որ այդ անգամ սուրման ամենևին չէր բռնվում. աչքերից բղխած հեղուկը ողողում էր, տանում էր սև փոշին: Տիկինը լաց էր լինում:„

—Լաւ, լաւ, ասաց նա գեղտիկը մի կողմ դնելով,—ձեր աչքերը այնքան սև են, ձեր թերթերունքը այնքան խիտ են, որ սուրմայի կարօտութիւն չունեն: Հիմայ մնում է ձեզ հագցնել: Այդ շապիկը պէտք է փոխէք. նա բաւական երկար է և թանձր: Խանը սիրում է կարճ և թափանցիկ շապիկներ, որոնց տակից մարմնի բոլոր գեղեցկութիւնները երևում են:

—Ես ատում եմ այդ խայտառակութիւնը....

—Այդ ուրիշ բան է, որ դուք ատում էք, բայց դուք պէտք է հագնէք այն, ինչ որ նրան է դուր գալիս:

Փարիչանը առանձին նպատակ ունէր իր տիկնոջը այս գիշեր աւելի թովիչ, աւելի հրապուրիչ կերպարանքով ներկայացնել խանին, զբաղեցնել

նրան այդ գեղեցիկ արարածով, մոռանալ տալ նըրան իր բոլոր հոգսերը, իսկ յետոյ, -- յետոյ ինքը գիտէր, թէ ինչ պիտի անէր...

Տիկինը չընդդիմացաւ. նա թոյլ տուեց, մի անզգայ խրձիկի նման, որ աղախինը ինչ որ կամենում է, անէ իր հետ: Նա գիտէր հարեմական կարգերը, որոնց դէմ մեղանչել, բողոքել անհնարին էր: Պէտք էր միայն հնազանդուել:

Աղախինը հագցրեց նրան մի թափանցիկ շապիկ, որ կարված էր մետաքսեայ նուրբ կերպասից, բաց-կարմիր գոյնով, որի վրա բանված էին հասմիկի մանր, մանիշակագոյն ծաղիկներ: Օձիքը զարդարած էր մարգարիտներով, թևքերի բերանները զարդարած էին ոսկեայ փոքրիկ յուլունքներով, իսկ ստորին եզերքը՝ շարած էին ոսկեայ դըրամներով, որոնք ամենաթեթև շարժման միջոցում զրնգ-զրնգում էին, ձայներ էին հանում: Շապիկի ճեղքը, որ իջնում էր ուղղակի երկու ստինքների միջից, տեսանելի էր կացուցանում նրա սպիտակ, լիքը կուրծքը, որի վրա երևում էին արհեստական խալեր: Շապիկի վրայից հագցրեց երկնագոյն թաւիշից կարված, կարճ չափքանը, որի եզերքը զարդարած էին ոսկեթել բանվածքներով, և որը, սեղմված վայելչահասակ իրանի վրա, երևան էր հանում նրա կազմուածքի բոլոր գեղեցկութիւնները: Յետոյ միմեանց վրա հագցրեց մի քանի ուռուցիկ չալվարներ, որոնք խուփկաների ձև ունէին, և

կարծես, պատրաստուած լինէին երկնքի թափանցիկ ամպերից, որոնց միջով կարելի է նշմարել կնութեան հրաշալիքը...: Շալվարների ստորին եզերքը չորս մատ լայնութեամբ զարդարած էին մանր, արծաթեայ և ոսկեայ փողիկներով: Ծնկներից ցած, ոտների մնացած մասը բոլորովին մերկ էր մնում, որովհետև շալվարները պօղում էին մինչև ծնկները միայն:

—Ձեր ոտնեքների վրա պէտք է կապել սև յուլաններ, որովհետև սևը սպիտակ մարմնի վրա շատ սազ է գալիս, ասաց աղախինը, երբ վերջացրեց իր տիկնոջը հագցնելը:

—Իսկ սև սրտի վրա ինչն՞ է սազ գալիս, հարցրեց տիկինը տխուր ժպիտով:

—Այդ խոշոր մարգարիտներից շարած, կարմիր մանեակը, պատասխանեց աղախինը նոյնպէս ժըպտալով:

—Այո, ուղիղ այդպէս է, երբ մենք սովորած ենք մեր հոգեկան բոլոր վէրքերը, բոլոր ցաւերը ծածկել գեղեցիկ, փայլուն կեղեւի տակ...

Տիկնոջ աչքերը դարձեալ լցվեցան արտասուքով:

—Մի՛ լաց լինիր, հոգիս, աղաչում էր նրան աղախինը.—ինչ լաց լինելու ժամանակ է. ձեր աչքերի սուրման բոլորովին կը եղծվի:

Տիկինը սկսեց խուլ կերպով հեկեկալ: Լինում են րոպէներ, երբ մարդ մի առանձին թեթևութիւն է զգում, երբ լաց է լինում, բայց ինչու հա-

մար է լաց լինում,—ինքն իրան հաշիւ տալ չէ կարող։ Բայց տիկինը գիտէր, թէ ինչու համար է լաց լինում. նա խիստ խորին պատճառներ ունէր լաց լինելու...

—Բաւական է, դարձեալ աղաչում էր աղախինը.—այդպէս չէ կարելի, մի քանի րոպէից յետոյ կը յայտնուի խանը, ինչ կը լինի մեր վիճակը, եթէ ձեզ այդ դրութեան մէջ կը տեսնէ։

Փարիջանը բաւական խելացի էր, և մանաւանդ, խիստ նուրբ ճաշակ ունէր։ Հանգստացնելով իր տիկնոջը, նա սկսեց լրացնել նրա մնացած զարդարանքները։ Մարջանի խոշոր հատիկներից կազմուած մանեակը, որ մի քանի տակ անցկացրեց նրա պարանոցով, և որի շարքերը իջնում էին նրա կիսամերկ կուրծքի վրայ, մի առանձին հրապոյր, մի առանձին կախարդիչ գոյն տուեցին նրա գեղեցկութեանը։ Իսկ սև յուլունների շարքը նրա կլորիկ սրունքների վրայ սքանչելի տեսք ունէին։

—Ո՞ւր են ձեր գոհարեղէնները, հարցրեց նա, երբ նկատեց, որ գոհարեղէնների արկղիկը իր տեղումը չէր։

—Ես նրան կոտրեցի, միթէ դու չը տեսար, հարցրեց տիկինը։

—Տեսայ, հիմա որտեղ են։

—Ածել եմ այն մեծ սնդուկի մէջ, որ դրած է այն պատուհանում։

Աղախինը բաց արեց ցոյց տուած սնդուկը,

դուրս բերեց ինչ որ պէտք էր տիկնոջ պաճուճանքի համար։ Այնտեղ կային ոսկեայ ծանր ապարանջաններ, կային ոսկեայ մատանիներ թանգագին ակներով, կային զանազան տեսակ մեծ և փոքրիկ քորոցներ ալմաստեայ և մարգարտեայ գըլխիկներով, կային թևքերի վրայ կապելու բազպանդներ,—բոլորը իրանց պատշաճաւոր տեղերը բռնեցին նրա մարմնի վրայ։

Երբ ամեն ինչ վերջացած էր, տիկինը հեռացաւ հայելու առջևից, նստեց մի փոքրիկ թախտի վրայ, բոլորովին յոգնած, ջարդված, կարծես թէ, վաստակած և նուաղած լինէր մի ծանր աշխատութիւնից։ Այդ միջոցին Փարիջանը վեր առեց վարդաջրի սրուակը, սկսեց անուշահոտ հեղուկով ցօղել սենեակի չուրջը։

Մինչ այստեղ զբաղուած էին փառաւոր պատրաստութիւններով, կանանոցի բակը ներս մտան երկու հոգի։ Մէկը առջևից տանում էր գոյնզգոյն լապտեր, միւսը գալիս էր նրա ետևից։ Վերջինը խանն էր, իսկ լապտերը բռնողը՝ ներքինապետը, որին կոչում էին Կըլար-աղասի, այսինքն աղջիկների վրայ իշխող։ Դա մի բարձրահասակ արաբ էր, վայրենի դէմքով և հսկայական կազմուածքով։ Գլխի և երեսի սպիտակ մազերը սև կաշու վրայ աւելի սարսափելի էին դարձնում նրա կերպարանքը։ Գօտիից քարշ էր գալիս նրա ծանր սուրը։

—Ի՞նչպէս են ձեզ մօտ, հարցրեց խանը։

—Ձեր մեծութեան շնորհիւ բոլորը լաւ են, ապրում են հանգիստ իրանց օթեակներում, այնպէս անմերձենալի, այնպէս փակված, որպէս հաւի ճուտը ձուի կեղևի մէջ, ասաց Կըլար-աղասին, ինքն էլ զարմանալով իր տգեղ համեմատութեան վրա։ —Միայն դրսի խռովութիւնները փոքր ինչ վախեցնում են իմ գառնուկներին։

—Այդ ոչինչ, էգուց առաւօտեան բոլորին վերջ կը դրվի, պատասխանեց խանը։—Միայն դուք այս գիշեր փոքր ինչ զգաստ եղէք մինչև լուսանալը։

— Կըլար-աղասին մեռած չէ, նա հարիւր աչքեր ունի, պատասխանեց ներքինապետը խրոխտալով։ —Իմ տիրոջ շնորհիւ ծիտն էլ չէ կարող նրա կանանոցի վրայից համարձակ թռչել։

Խանի ամրոցի, մանաւանդ կանանոցի պահապանները մեծ մասամբ ծերացած մարդիկ էին։ Արևելքցին մի առանձին յարգանք ունի դէպի ծերութիւնը, և նրան ամենայն հաւատարմութեան արժանի է համարում։ Բայց անապատի արաբը այնքան երկարակեաց է լինում, որքան Նեղոսի կոկորդիլոսը։ Այդ կէտից նայելով «աղջիկների վրա իշխողի» խրոխտալը բոլորովին անտեղի չէր. նա իր ծերութեան հասակում պահպանել էր թէ երիտասարդութեան ուժը և թէ քաջութիւնը։

Այսպէս խօսելով նրանք անցան կանանոցի բակից, մօտեցան Զուբէյքիդա խանումի կացարանի դուռը։ Ներքինապետը այստեղ կանգնեց, իսկ

խանը առաջ անցաւ, մտաւ նախասենեակը, ուր տիկինը քաղցր, փաղաքշական խօսքերով ընդունեց նրան և ներս տարաւ իր սենեակը։ Խանը նստեց իր համար պատրաստված փառաւոր օթոցի վրա։ Նա բարեհաճեց հարցնել տիկնոջ առողջութիւնը։

—Իմ առողջութիւնը, իմ կեանքը, պատասխանեց տիկինը,—կախված է իմ տիրոջ ողորմածութիւնից. նրա մի քաղցր հայեացքը ինձ անմահութիւն կը բաշխէ, նրա մի խօսքը կը փարատէ իմ սրտից աշխարհի բոլոր դառնութիւնները։ Ես նրանով եմ ապրում։ Եթէ մեռած ես լինեմ, եթէ նա ոտք կոխելու լինի իմ գերեզմանի վրա, ես իսկոյն յարութիւն կառնեմ։ Իսկ այսօր որքան բախտաւոր եմ ես, որ նա բարեհաճեց ոտք կոխել իմ օթեանի անարժան շէմքի վրա։ Թող օրհնեալ լինի Աստուած, թող օրհնեալ լինեն նրա սուրբերը։

Տիկնոջ փոքրիկ ճառը չափից դուրս դուրեց խանին։ Նա հարեմի իշխանի և կնոջ «տիրոջ» բարձրութիւնից իջաւ ամուսնի աստիճանի վրա։ Նա անկեղծութեամբ բռնեց տիկնոջ ձեռքից, և նստացնելով իր մօտ, ասաց.

—Զուբէյքիդա, դու այնքան խելացի ես, քո մէջ այնքան հարուստ հոգեկան գանձեր կան, որ չէ կարելի քեզ չը սիրել։ Դու այն կենդանի աղբիւրն ես, որ բղխում է Սահարայի ընդարձակ անապատի օասիսի մէջ, և դէպի որը խորին փափագով վա-

զում է յոգնած, նուաղած ուղեղը իր ծարաւը յագեցնելու համար: Դու այն բարերար արմաւենին ես, որ յագեցնում է Եամենի աւազուտներում թափառող, ոտնատանջ ճանապարհորդի քաղցը: Ես այդ անբախտներից մէկն եմ, Զուրէյլիդա: Ճակատագիրը հալածում է ինձ: Ես վաղեցի քեզ մօտ փոքր ինչ կազդուրվելու, փոքր ինչ փարատելու իմ սրտի ցաւերը: Ես վաղեցի քեզ մօտ ապաստան գտնելու...

Տիկինը բոլորովին ապշած էր մնացել: Նա իր ականջներին չէր հաւատում, որ այդ խօսքերը արտասանում է այն խիստ, դաւող, վայրենի մարդը, որին կեանքի փափուկ կողմերը ամենևին ծանօթ չէին, որը սովորած էր միայն իշխել, հրամայել և ամեն մի ազնիւ զգացմունք իր ոտքերի տակ ջարդուփշուր անել: Այժմ այդ ինչ անբնական փոփոխութիւն էր առաջ եկել նրա մէջ: Տիկինը հասկանալ չէր կարողանում: Նա միայն աչքերը խոնարհած, չէր համարձակվում նայել իր տիրոջ երեսին, զարմանում էր նրա խոնարհամտութեան վրա, տատանվում էր, և իր լեզուի բոլոր պերճախօսութեամբ, մի բառ անգամ չէր գտնում նրան պատասխանելու:

—Զուրէյլիդա, մի զարմացիր, ասաց նա աւելի մեղմ ձայնով, և նրա ձեռքը չը թողնելով իր ափի միջից:—Մի զարմացիր, կրկնեց նա,—ինչպէս ինձ չէ զարմացնում իմ դրութիւնը: Ես այ-

սօր, այս գիշեր միայն հասկացայ իմ թշուառութիւնը, հասկացայ, թէ ինչ ողորմելի արարած եմ ես:— Այս գիշեր, երբ թշնամին պատել է իմ շուրջը, երբ մահը կանգնած է իմ գլխի վրա, ես ինձ բոլորովին միայնակ և օգնութեան կարօտ եմ զգում, չը նայելով, որ հազարները սուրը ձեռքում սպասում են իմ հրամանին: Այո, Զուրէյլիդա, այդ ինչ դրութիւն է: Ինչու ես ոչ ոքին հաւատալ, ոչ ոքի վրա յոյս դնել կարող չեմ: Ինչու ես մենակ եմ մնացել:

—Դու միշտ մենակ ես եղել... պատասխանեց կինը սառն կերպով:—Երբ որ թոյլ կը տաս ինձ խօսել ճշմարիտը և արդարը, ես կասեմ քեզ բոլորը:

—Խօսիր, մի ծածկիր, ես եկել եմ քեզ լսելու. քո ամեն մի խօսքը առողջարար բալասանի նման կը բուժէ իմ սրտի վէրքերը:

—Բայց կարող է և նշտարի նման ծակել...

—Թող ծակէ, թող աւելի ես վիրաւորվէ: Բժշկի նշտարը առողջացնելու նպատակ ունի:

Տիկինը հրամայեց փարիչաներին, որ սուրճ մատուցանեն, ղէյլան տան, յետոյ հեռանան: Աղախինը վեր առաւ սուրճի արծաթեայ ամանը կրակի վրայից, ածեց գեղեցիկ ֆինջանների մէջ, մատուցրեց մէկը իր տիրոջը, միւսը իր տիկնոջը: Մինչև նրանց խմելը, նա պատրաստեց անուշահոտ թամբաքուից թանգագին ղէյլանը, դրեց խանի

առջև, իսկ ինքը հեռացաւ, իր ետևից կողպելով դուռը: Դուրս գալով մթին նախասենեակը, նա կծկուեցաւ դրան ետևում, սկսեց ականջ դնել:

—Ես ասացի, թէ դու միշտ մենակ ես եղել, շարունակեց տիկինը ընդհատուած խօսակցութիւնը:—Որովհետև բռնակալը իր երկրպագուների, իր պաշտողների, իր շողոքորթների անհուն բազմութեան մէջ դարձեալ միշտ մնում է մենակ: Նա ընկեր, բարեկամ, սրտակից, մտերիմ,—ոչ ոք չունի: Նա չէ զգում իր թշուառ միայնակութիւնը, որովհետև իշխանութեան փառքը սև մառախուղի նման ծածկում է նրա աչքերից այն, ինչ որ ճըշմարիտ է, ինչ որ ուղիղ է, ինչ որ աւելի օգտաւէտ է: Նա ապրում է յարատև խաբէութեան մէջ և չէ նկատում, որ ամեն ինչ իր չորս կողմում կեղծ է, պատիր է, փթած է: Նա չէ զգում իր ոչնչութիւնը, որովհետև երբ հրամայում է,—ամեն ինչ կատարված է, և այդ պահում է նրան մշտական մոլորութեան մէջ: Կենդանի միտքը, առողջ դատողութիւնը անծանօթ է մնում նրան, նրա համար որ, ամեն մի իրաւացի ընդդիմադրութիւն, ամեն մի խելացի հակաճառութիւն խորտակվում է նրա կոպիտ կամքի առջև: Նա միշտ այն կարծիքի մէջ է մնում, թէ ինչ որ ցանկանում է ինքը, թէ ինչ որ հաճոյ է իրան,—այն է լաւը, արժանը, վայելուչը: Եւ եթէ բախտի յաջողութիւնները այսպիսիներին փոքր ինչ շողոքոր-

զում են, այն ժամանակ նրանք աւելի վայրենի են դառնում: Նրանք կարծում են, թէ ամեն ինչ ստեղծված է միմիայն իրանց վայելչութեան համար, և ինչ որ իրանց հաճելի չէ, և ինչ որ չէ ծառայում իրանց, կարող են ոչնչացնել: Նրանք իրանց միշտ անկարօտ են զգում, որովհետև միշտ սովորած են տեսնել իրանց չորքը մի կեղծ պատրաստակամութիւն: Բայց խոնարհութեան մէջ անկեղծութիւն չը կայ, թէև ամեն ինչ խոնարհվում է նրանց առջև, որովհետև վերևից ճնշում կայ:—Բայց երբ բարձրանում է մի փոթորիկ, երբ հասնում է վտանգը, երբ զարկում է սոսկալի տագնապի րոպէն, այն ժամանակ շողոքորթների, երկրպագուների, կեղծ բարեկամների անհուն բազմութիւնը և ստրուկների նման չքանում են, անհետանում են և մէկն էլ չէ մընում, որ բռնէ իր պաշտած մարդու ձեռքից: Այդ բաւական չէ.— նրանք դառնում են ամենասարսափելի թշնամիներ...

—Բոլորը ճշմարիտ է... ասաց խանը, հոգւոց հանելով:—Ես երբէք բարեկամ չեմ ունեցել, ես միշտ մենակ եմ եղել, թէև շրջապատված անթիւ կեղծաւորներով: Բայց ինձ թող մխիթարէ իմ տունը, իմ ընտանիքը, որ ինձ համար օտար չէ, որ ամենից մօտ է ինձ:

—Դու տուն ունես, բայց ընտանիք չունես, պատասխանեց տիկինը խստութեամբ:—Ընտանի-

քից ես ի զուր է քեզ մխիթարութիւն սպասել:

—Ե՞ս, ընտանիք չունեմ, բացականչեց նա պժգլածի նման:—Ո՞վ ունի այնքան կնիկներ, որքան ես. ո՞վ ունի այնքան զաւակներ, որքան ես: Մի գիշերվայ մէջ եօթը որդիներ ծնվեցան ինձ համար:

—Ոչխարների հօտի մէջ մի գիշերում երբեմն ծնվում է հարիւրը, բայց հօտը ընտանիք չէ կազմում:— Լսիր, խան, առաջ տարաւ նա իր խօսքը.—ես սկզբից քեզանից խնդրեցի, որ չը պիտի բարկանաս ինձ վրա, երբ իմ բերանից կը լսես քեզ անսովոր, կծու խօսքեր:

—Ես չեմ բարկանայ:

—Ուրեմն կը շարունակեմ: Ես ասացի, որ դու ընտանիք ես չունես, որ դու զուրկ ես և ընտանեկան մխիթարութիւնից,—այդ խօսքը քեզ զարմացնում է, քեզ օտարոտի է թւում: Դու մտածում ես. ինչպէս կարող է մի մարդ զուրկ լինել ընտանիքից, որը հարիւրաւոր կնիկներ ունի, որը բազմաթիւ զաւակների հայր է: Այդ բաւական չէ: Ընտանիքի հիմքը ս է ր ն է: Կա՞յ արդեօք սէր քո ընտանիքի մէջ:— Անկարելի է որ լինի: Եթէ քո կնիկները սէր են ցոյց տալիս, այդ նրա համար է, որ կամ վախենում են քեզանից, կամ շողոքորթում են աւելի ընծաներ ստանալու համար: Միթէ դա մի և նոյն կեղծ յարաբերութիւնը չէ, որ դու ունես քո ծառաների, պաշտօ-

նակալների ու հպատակների հետ, որոնք նոյնպէս խոնարհվում էին քեզ, շահերի կամ երկիւղի պատճառով: Ոչինչ զանազանութիւն չը կայ: Եթէ դու քննելու լինես քո կնիկների ամեն մէկի սիրտը, փոխանակ սիրոյ, կը գտնես նրանց մէջ խորին, գաղտնի ատելութիւն դէպի քեզ:—Ինչու:— Որովհետև նրանցից և ոչ մէկը իր յօժարութեամբ չէ կապվել քեզ հետ. կամ գերի է բերվել, կամ իբրև ընծայ է ստացվել, կամ փողով է գնվել: Իսկ դու պահանջում ես նրանցից ճշմարիտ սէր, կարեկցութիւն, ցաւակցութիւն, հաւատարմութիւն և այն բոլոր գեղեցիկ յատկութիւնները, որ կարող է ունենալ լաւ կինը: Դու իրաւունք չունես պահանջելու, քանի որ դու ինքդ չես սիրում նրանց:

—Ե՞ս, չեմ սիրում, գոչեց դժբախտ ամուսինը վրդովվելով:— Ինչ որ ուզում ես, ասա, Ջուբէյդա, այդ յանդիմանութիւնը գոնէ մի անիր ինձ: Ես սիրող սիրտ ունեմ:

—Քեզ այդպէս թւում է միայն, որովհետև դեռ չես հասկացել սիրոյ ճշմարիտ նշանակութիւնը, ասաց տիկինը, պահպանելով իր սառնասրտութիւնը:—Դու չես սիրում, դու միայն վ ա յ ե լ ու մ ե ս. իսկ այդ երկու բառերի մէջ ահագին տարբերութիւն կայ: Դու վայելում ես քո կնիկների սէրը, ինչպէս վայելում ես քո մնացած հարստութիւնները: Քո հարեմը ամենագեղեցիկ կնիկների

մի ճոխ ժողովածու է, մի անսպառ հարստութիւն է, ինչպէս հարստութիւն պէտք է համարել քո նժոյգների երամակները, քո ոչխարների հօտերը, քո ամբարանոցների թանգագին մթերքները,—այդ բոլորը ծառայում է քո զուարճութիւնների համար:

—Միթէ կարելի է այսպիսի համեմատութիւն անել, հարցրեց խանը վշտանալով:

—Համեմատութիւնը ճիշտ է: Զանազանութիւնը նրա մէջն է միայն, որ քո ձիաները, ոչխարները, և ամբարանոցների թանգագին մթերքները զգացմունք չունեն, գիտակցութիւն չունեն, և այդ պատճառով էլ չեն կարող հասկանալ, թէ ինչպէս են վարվում իրանց հետ, և հետևաբար չեն կարող ունենալ դէպի քեզ ոչ սէր և ոչ ատելութիւն: Բայց քո կնիկները այդպէս չեն. նրանք, որպէս բանական արարածներ, զգացմունք ունեն, նրանք կարող են հասկանալ իրանց դրութեան անտանելիութիւնը:

Եօթն տարվայ գերիի փակված լեզուն բաց էր եղել: Նա կամենում էր թափել իր սրտի բոլոր դառնութիւնները, բոլոր թոյնը, բոլոր ցաւերը ինչ որ հաւաքվել էին իր գերութեան եօթն տարիների ընթացքում:

—Ինչ որ խօսում ես դու, նրա խօսքը կտրեց խանը, հակառակ է մուսուլմանների սովորութիւններին, հակառակ է մեր օրէնքներին:

—Սէրը ոչ մի օրէնքի չէ հպատակում, պատասխանեց տիկինը,—և առաւել մուսուլմանների օրէնքին: Նա մարդու ազատ զգացմունքն է, ինչպէս կրօնը:

—Դու գիտես, խան, հարցրեց նա,—որ ես քրիստոնեայի աղջիկ էի, դու ինձ գերի վեր առեցիր իմ ծնողների տնից: Իմ հայրը շատ կարդացած մարդ էր, նա սովորել էր մեր ազգի բոլոր նշանաւոր իմաստունների գրքերը: Նա սիրում էր ուսուցանել ինձ շատ բաներ, ինչ որ ինքը սովորել էր: Մեր երկրում իմ հօրը մի անհաւատ մարդ էին համարում, որովհետև նրա կարծիքները, նրա մտքերը տարբերվում էին հաւատաւոր մարդիկների կարծիքներից: Իմ մայրը մի ջերմեռանդ, քրիստոնեայ կին էր. նա էլ իր կողմից աշխատում էր կրթել ինձ քրիստոնէական բարեպաշտութեան մէջ:—Ուրեմն ինչու ես զարմանում դու, որ իմ խօսքերը հակառակում են մուսուլմանների սովորութիւններին կամ նրանց օրէնքներին: Ես այդպէս եմ սովորել:

—Ուրեմն դու դեռ պահպանել ես քո քրիստոնէութիւնը, հարցրեց խանը զայրացած կերպով:

Տիկինը մնաց շուարված, չը գիտէր ինչ պատասխանել: Նա իր դատողութիւնների մէջ շատ հեռու գնաց, վիրաւորեց խանի ոչ միայն անձնասիրութիւնը, այլ և նրա կրօնական զգացմունքը:

Այդ բաւական չէր, նա մերկացրեց իրան։ Այժմ մի կերպով պէտք էր փարատել նրա տարակուսանքը։

—Այո, պատասխանեց նա,—ճշմարիտն ասած, ինքս էլ չը գիտեմ, թէ ինչ կրօնքի եմ պատկանում։ Բայց որովհետև մեր վիճաբանութիւնը ամուսնական սիրոյ վրա էր, շարունակենք դրա վրա խօսել։

Տիկնոջ անորոշ պատասխանը փոքր ինչ համոզեցրեց խանին, նա ասաց.

—Խօսիր։

—Ճշմարիտ սէրը պէտք է փոխադարձ լինի, —շարունակեց տիկինը։—Իսկ փոխադարձ սէր կարող է կայանալ միայն մի զոյգի մէջ։ Բայց երբ որ այրը ունի հարիւր կնիկներ, կամ կինը ունի հարիւր այրեր, այդ դէպքում ճշմարիտ սէրը զրկւում է գոյութիւն ունենալուց։

—Ես կարող եմ հարիւր կնիկներ ունենալ և հարիւրին էլ սիրել, ընդհատեց խանը,—այդ ուրիշ բան է, եթէ նրանց մէջ կը գտնվեն այնպիսիները, որ ինձ դուր չեն գալ։

—Դա անհնարին է, պատասխանեց տիկինը, —դու կարող ես սիրել հարիւր կնիկներ, այլ խօսքով ասելով, դու կարող ես վայելել աւելի քան հարիւր կնիկներ, բայց հարցը դրանումն է, արդեօք նրանք էլ կը սիրեն քեզ։ Որովհետև քո սէրը կատարեալ չի լինի, եթէ փոխադարձապէս

նրանք էլ չը սիրեն քեզ։—Այս աւելի անհնարին է, այն մտքով, որ դու, որքան էլ ցանկանայիր, չէիր կարող քո սէրը, քո հոգին, քո սիրտը բաժանել հարիւր կնիկների վրա, որոնք կոչվում են քո ամուսիններ։ Իսկ ամուսնական սէրը մի անբաժանելի զգացմունք է. նա պէտք է իր զուգակցին միայն պատկանի, երբ բաժանվեցաւ և օտարների վրա,—նա մեռաւ, այլ ևս գոյութիւն ունենալ չէ կարող։ Այդ է պատճառը, որ այսօրվայ քո դժբախտութեան բովէում քո բազմաթիւ կնիկներից և ոչ մէկը չը կայ, որ քեզ ցաւակից լինէր։ Որովհետև, նա որ չէ բաժանել քո սէրը, չէ կարող բաժանել և քո ցաւերը։

—Հիմա տեսնում ես, որ դու ընտանիք չունես, —առաջ տարաւ տիկինը։—Դու ունես միայն կնիկների մի խոշոր խումբ, որոնց պահում ես երկաթեայ կապանքների մէջ, որոնք հպատակում են քեզ ամենայն խոնարհութեամբ, որովհետև հակառակելու, ընդդիմութիւն գործելու հնար չունեն։ Բանտարկեալը կը հնազանդվի իր բանտապետին, բայց նրան չի սիրի։ Քո հարեմատունը քո կնիկների բանտն է.—դա ընտանիք չէ։ Քո զաւակները ծնվում են, մեռնում են, դու ամենեքին տեղեկութիւն չունես։ Դու գիտես, որ իմ աղջիկը արդէն չորս ամիս է, որ մեռած է. դու գիտես, որ իմ որդին այժմ մահամերձ հիւանդ է։ Դու ոչինչ չը գիտես, որովհետև ներքինապետը չէ

յայտնել քեզ, մի գուցէ քո ուրախութեան ժամերից մի քանի րոպէ խլած լինի: Քո զաւակները ծնվում են, մեծանում են որպէս վայրենիներ: Նրանց դաստիարակում են Աֆրիկայի անապատներից բերված սևերը, որոնք գազաններից ոչինչով չեն զանազանվում: Նրանք հարկաւոր դէպքում ոչ միայն իրաւունք ունեն ծեծելու քո զաւակներին, այլ ծեծում են և քո կիներին:—Եւ այդ բոլոր հրէշաւոր խառնակութիւնը դու կոչում ես ընտանիք...

—Քո կիները ուրիշ ոչինչ չեն, եթէ ոչ, մետաքսի, գոհարների և ոսկու մէջ պատած ստրուկներ: Ստրուկը կարող է կին լինել, բայց ամուսին լինել կարող չէ, քանի որ իր ստրկութեան մէջ կը մնայ: Նայիր ինձ վրա, նայիր այդ սենեակին, դու կարծում ես այդ բոլոր զարդարանքը, այդ բոլոր շքեղութիւնը քո սիրոյ համար է: Ամենևին: Ներքինապետը ինձ հրամայեց պատրաստվել և ես պատրաստվեցայ: Իսկ եթէ դու իմ սիրտը այս րոպէում քննելու լինես, նրա մէջ կը գտնես դառնութիւն, ցաւ, անբժշկելի վէրքեր....

—Ինչու, հարցրեց խանը կատաղած կերպով:

—Որովհետև դու էլ ինձ չես սիրում:

Տիկինը իսկոյն ուղղեց իր սխալը, ասելով.

—Նրա համար որ, ես արդէն քեզ ասեցի, որ երեխաս հիւանդ է: Մայրը չէ կարող տխուր, վըշ-

տացած չը լինել հիւանդ զաւակի անկողնի մօտ:

Դրսից թշնամու թնդանօթները, իսկ իր տան մէջ կնոջ խօսքերը,—երկուսն էլ միօրինակ ներգործութիւն էին անում բռնապետի սրտի վրա: Թշնամին—ճնշված, հալածահարված հայ էր, իսկ կինը—հարեմի ստրուկ: Երկու համանման վիճակներ, որ չէին տարբերվում: Երկու ստրուկներն ևս ապստամբել էին բռնապետի դէմ: Բայց կնոջ խօսքերը աւելի ուժգին, աւելի խորտակիչ կերպով ազդում էին նրա սրտի վրա, քան թշնամու սարսափելի գնդակները բերդի հաստահիմն պարսպների վրա: Ընտանեկան կռիւը աւելի սոսկալի էր, քան արտաքին պատերազմը: Կինը բողոքում էր բռնութեան դէմ:

—Որովհետև ես ոչ մի տեղ մխիթարութիւն գըտնել կարող չեմ, որովհետև իմ ընտանիքս էլ ինձ հալածում է... հարցրեց խանը խելագարվածի նման:

—Ոչ ոք մեղաւոր չէ, պատասխանեց տիկինը:

—Դու ինքդ ես պատրաստել քեզ համար այդ վիճակը:—Քո տունը, քո օջախն անգամ բողոքում է քո դէմ...

—«Իսկ ես այդ բողոքի թարգմանը կը լինեմ... ասաց իր մտքում Փարիչանը և հեռացաւ սենեակի դռան ետևից, ուր թագկացած, լսում էր նըրանց խօսակցութիւնը:

ԻԱ.

Փարիչանը հեռանալով տիկնոջ սենեակի դըռ-

նից, մտաւ իր քնարանը. նա գտաւ իր տիկնոջ երեխային հանգիստ քնած. այդ նրան մի առանձին ուրախութիւն պատճառեց: Նստեց նրա անկողնի մօտ, սկսեց կարեկցաբար նայել հիւանդի ջերմից չառագունած երեսին: Այժմ նոր զգաց, որ ինքը սաստիկ յոգնած է: Այս գիշեր որքան աշխատել էր նա, որքան վազվզել էր, որքան նեղութիւններ էր կրել...: Եթէ նրա տեղ մի ուրիշը լինէր, խեղոյն կը հանգէր, կը պառկէր և կը հանգստանար: Բայց նա չը քնեց. նստած խորին ուշադրութեամբ լսում էր, թէ ինչ ձայներ էին գալիս դրսից: Դրսից այժմ ձայներ չէին լսվում, լսւվում էր միայն սաստիկ քամու ձայնը, որ խլացնում էր իր մէջ բոլոր միւս հնչիւնները:

Կէս ժամից յետոյ նա դուրս եկաւ իր քնարանից, կրկին մօտեցաւ տիկնոջ սենեակի դռանը: Ականջը տուաւ դէպի դռան ճեղքը, ձայն չէր լսվում. նայեց ճեղքից, ճրագի լոյս չէր երևում: Այստեղ, երևի, քնած էին: Նա չուռ եկաւ, տեսաւ ծերունի Աստղին, նախասենեակի մի անկիւնում կծկված: Ոտքով զարկեց, զարթեցրեց նրան, ասելով.

—Քաւթառ, այստեղ ինչ քո քնելու տեղն է. դու խօ իմանում ես, որ խանը տիկնոջ մօտ է. կորիր, մի այլ տեղում մրափիր:

Ծերունի ներքինին, չը կամենալով «անզգամի» հետ մի ղալմաղալ սարքել և իր տիրոջ ու տիկ-

նոջ քունը խանգարել, և մանաւանդ, հասկանալով իր սխալը, որ այն գիշեր անպատշաճ էր իրան քնել տիկնոջ դռան հանդէպ,—մրմրթալով վեր կացաւ և աղոցի թեփով լցրած իր բարձը ու վերարկուն վեր առեց, հեռացաւ:

Ագախնը կրկին վերադարձաւ իր քնարանը: Նրա դէմքը այժմ փայլում էր ուրախութիւնից: Նա սկսեց մերկանալ իր հագուստը: Նրա սենեակում պահված էին շատ տեսակ հագուստներ, ամէն սեռի, ամէն դասակարգի մարդկանց համար: Դա հարեմական խորհրդաւոր անհրաժեշտութիւններից մէկն էր: Ով որ ծանօթ է մահմետական կանանոցների գաղտնիքներին, կը հասկանայ, թէ որպիսի դէպքերում կարող էին ծառայել այդ հագուստները: Այդ հագուստներից նա ընտրեց ախոռապան սպասաւորի հագուստը: Երբ հագնվեցաւ, ժպտելով մօտեցաւ հայելուն. «այժմ սատանան ևս չէ կարող ճանաչել ինձ», ասաց ուրախութեամբ իր վրա նայելով: Երբ բոլորովին պատրաստ էր, մօտեցաւ քնած երեխային, զգուշութեամբ համբուրեց նրան, յետոյ ճրագը մարելով, դուրս գնաց:

Նա անցաւ կանանոցի բակը: Գիշերային խաւարը սարսափելի էր. մի քայլ հեռաւորութեան վրա անկարելի էր մի բան որոշել: Իսկ քամին այժմ սկսել էր աւելի կատաղաբար փչել: Նա մի պատոյտ գործեց բակի մէջ. բակը անապատի նման

պատարկ էր։ Ոչ ոք չը կար, ոչ մի մարդկային ձայն չէր լսվում, ոչ մի լուսամուտից ճրագ չէր երևում, ամբողջ հարեմը ննջում էր խորին, խաղաղական քնի մէջ։

Նա մտեց մի նեղ մուտքի, որ ոլոր-մոլոր սանդուղքներով տանում էր դէպի կտուրը։ Սկսեց վեր բարձրանալ։ Սանդուղքները վերջանում էին մի փոքրիկ տափարակով, որտեղ էր կտուրի դուռը։ Այդ դռան վրա շատ ուշադրութիւն չէին դարձնում։ Կանանոցի ամեն մի փոքր ի շատէ նշանաւոր աղախինը ունէր իր մօտ այդ դռան բանալին։ Դա նրանց գաղտնի յարաբերութիւնների անցքն էր, երբ պէտք էր մէկի հետ տեսնվել կտուրի վրա։ Փարիշանը հանեց գրպանից մի բանալի, բաց արեց դուռը, անցաւ կտուրի վրա և կրկին իր ետևից կողպեց նրան։

Նա անցաւ կանանոցի տափարակ կտուրներից. այստեղ պահապաններ չը կային, միայն վախենում էր չը հանդիպել շներին։ Նրա բախտից շըները այս գիշեր խմբով գնացել էին մի քածի ետևից։ Նրանք հրապուրված էին իրանց սիրոյ առարկայով։

Անցնելով կանանոցի կտուրները, նա հասաւ դիւանատան կտուրներին. դրանք աւելի բարձր էին, դրանց վրա վեր ելնելու համար պէտք էր բարձրանալ մի պատից։ Նա իր հասակի հետ չափեց պատի բարձրութիւնը, նկատեց, այնքան ցած

չէր, որ կարողանար հեշտութեամբ անցնել։ Բայց դարձեալ փորձ փորձեց մի կերպով վեր բարձրանալու. ձեռքերը տարաւ պատի հարթ մակերևութի վրա, մատներով սկսեց շօշափել, արդեօք կարող էր մի բռնելու տեղ գտնել։ Ճեղքերի մէջ գտաւ երկու բռնելու տեղ, չանկռեց, բաւական վեր բարձրացաւ, բայց որովհետև ոտները դնելու տեղ չը կար, կրկին ցած ընկաւ։ Այդ անյաջողութիւնը չը վհատեցրեց նրան, սկսեց հնարների վրա մտածել։ Մի փոքր հեռու կանգնած էր վառարանի ծխանը, որ սիւնի ձևով վեր էր բարձրանում և շինված էր անթուրծ աղիւսներից։ «Այդ աղիւսները կը քանդեմ և իմ ոտների համար սանդուղքներ կը պատրաստեմ», մտածեց նա, և մտեցաւ ծխանին։ Բայց նախ քան քանդելը պէտք էր գիտենալ՝ դա մի՞ սենեակի ծխան էր, արդեօք այնտեղ մարդիկ բնակվում էին, թէ ոչ։ Տեսաւ, որ կանանոցի բաղանիքների մի սենեակի ծխան էր, ուր գիշերային այն ժամում ոչ ոք լինել չէր կարող, ուրեմն, եթէ քանդելու ժամանակ վառարանի մէջ վերևից աղիւսի կտորտանք ընկնէին, ոչ ոք չէր իմանայ։ Սկսեց քանդել։ Գլխաւոր դժուարութիւնը առաջին աղիւսը պոկելու մէջն էր, որը նա պոկեց իր մատները արնելու չափ ցաւեցնելով։ Մնացած աղիւսները հեշտութեամբ պոկեցան, որովհետև բռնված էին հասարակ ցեխով։ Պոկած աղիւսները նա բերում էր, միմեանց վրա

չարում էր պատի մօտ, և այսպիսով պատրաստեց իր համար սանդուղքներ: Ոտքերը դրեց նրանց վրա, վեր բարձրացաւ: Այժմ նրա ձեռքերը հասնում էին պատի վերնապարսպին. երկու ձեռքով բռնեց այնտեղից և կատուի նման թռաւ միւս կտուրի վրա:

Այժմ նա գտնվում էր դիւանատան կտուրի վը-րա. նրա ոտների տակումն էր ամրոցի գլխաւոր մասը: Մի քանի րոպէ լուռ կանգնած, դևի նման նայում էր գիշերային խաւարի մէջ խորասուզված ամրոցի վրա: Քամին այստեղ աւելի սաստիկ էր փչում, բերելով իր հետ աղաղակների մի խուլ խառնաձայնութիւն, որ աւելի նման էր ծովի ալիքների պարբերական դղրդիւններին:

Նա անցաւ դէպի ամրոցի խոհանոցի կտուրը, որը բաւական ցած էր առաջինից: Լեռնային երկրի աղջիկը, սարերի վրա, մանկութիւնից սովորած էր ժայռերի բարձրութիւնից ոստնել, կամ դէպի ներքև ցատկել: Նա ծանօթ էր կտուրների դրութեանը, գիտէր, որ դիւանատան կտուրի բարձրութիւնը խոհանոցի կտուրից իր հասակի մէկուկէս չափը հազիւ կը լինէր: Ուրեմն կարելի էր ցած ոստնել առանց ոտքը կոտրելու: Այդպէս էլ արեց. բռնեց պատից և զգուշութեամբ ցատկեց դէպի ներքև: Այստեղ մի երկար բաց շինուածքի մէջ դարսած էին կոտրած, չոր փայտեր, խոհանոցի համար գործ ածելու: Նա վազեց դէպի այն կող-

մը, ուր դարսած էին փայտերը: Նստեց կտուրի վրա, գրպանից հանեց աբէթը և կայծհանը, զարկեց քարին, աբէթը վառվեցաւ: Նրանով վառեց քիբրիթը *), որ իր մօտ ունէր: Յետոյ գրպանից հանեց մի կտոր չորի փաթոթ, որ թաթախած էր ձէթով, քիբրիթը դրեց նրա մէջ, մի քանի վայրկեան բռնեց քամու առջև, որ աւելի բոցավառվի, և ապա նետեց փայտակոյտի մէջ: Ինքը իսկոյն հեռացաւ, վստահ լինելով, որ այնուհետև քամին կը շարունակէր նրա սկսած գործը...:

Այստեղից կամենում էր նա գնալ ախոռատան կտուրների վրա: Բայց այնտեղ գնալու համար ճանապարհ չը կար, որովհետև կտուրները կից չէին, բաժանված էին ախոռատան ընդարձակ բակով: Մի բարձր, նեղ պատ միայն միացնում էր ախոռատանը խոհանոցի հետ, նրա ետևի կողմից: Այդ պատի վերին մասը այնքան նեղ էր, որ նրա վրայով ոտքով գնալ անհնարին էր, մանաւանդ գիշերային մթութեան մէջ: Հեշտ կարելի էր աւելի քան քսան արշին բարձրութիւնից ցած գլորվել և ջարդուփշուր լինել: Բայց ոչ վտանգը և ոչ պատի բարձրութիւնը չը վախեցրին Փարիչանին: Նա ճարտար աղջիկ էր և հնարագէտ: Զգու-

*) Քիբրիթ նշ. ծծումբի մէջ թաթախած թելի բարակ պատրոյգ, որ հին ժամանակներում գործ էին ածում որպէս լուցկի:

չութեամբ հեծաւ պատի վրա, ինչպէս մարդիկ նստում են ձիու վրա: Սկսեց երկու ձեռքերը դէմ տալով, փոքր առ փոքր առաջ սողալ: Պատի տարածութիւնը բաւական երկար էր: Եթէ այդ արշաւանքը նա կատարէր ցերեկով, շատ կարելի է, որ գլուխը պտոյտ գար, աչքերը շաղուէին և վերևից գլորվէր դէպի ցած: Բայց խաւարը բաւական նպաստում էր նրան: Ինչպէս մի հմուտ լարախաղաց, սառնարիւնութեամբ պահպանելով իր հաւասարակշռութիւնը, նա սողալով առաջ էր գնում: Մի քանի տեղ կանգ առեց, որ փոքր ինչ հանգստանայ: Ձեռքերի կաշին, անողորմ շփվելով անհարթ պատի հետ, կիսով չափ պլոկվեցաւ: Բայց նա ցաւ չէր զգում: Ինչպէս ցաւ չեն զգում այն վիրաւորները, որ դեռ կռուի ջերմ ոգևորութեան մէջն են լինում:

Քամին այժմ աւելի սաստկացաւ: Այդ քամին ուրախացնում էր նրան, ոչ միայն այն պատճառով, որ զովացնում էր նրա շառագունած, վառված դէմքը, այլ առաւել նրա համար, որ պատի վրայից սողալու ժամանակ, ցած թափված հողերի և քարերի կտորտանքի ձայնը չէր լսվում: Երկար աշխատելուց յետոյ վերջապէս նա հասաւ ախոռատան կտուրներին:

Այստեղ տանիքների վրա կիտած էին խոտի ահագին դէզեր, իսկ մարագները լիքն էին յարդով: Նա մօտեցաւ այդ դէզերից մէկին, և սա-

տանայի նման կծկվեցաւ նրա մօտ: Կայծհանը, աբէթը և քիբրիթը դարձեալ գործ դրվեցան. Նըրանցով վառեց ցամաք խոտը: Քամին փչեց, ցամաք խոտը բոցավառվեցաւ, և մի քանի րոպէի մէջ, կրակը անցաւ մի դէզից միւսը, և հրդեհը տարածվեցաւ ամբողջ ախոռատան մէջ: Մնում էին յարդանոցները: Նա վեր առեց խոտի մի քանի կիսավառ խուրձեր, նետեց յարդանոցների երթիկներից: Շուտով երթիկներից հրեղէն սիւները բարձրացան օդի մէջ:

Նա այժմ իր գործը կատարած էր համարում, քաշվեցաւ մի կողմ, ուր կրակի լոյսը չէր հասնում, կանգնեց մթութեան մէջ, և խորին ուշադրութեամբ նայում էր դէպի երկինքը: Այդ միջոցին մի փ շ ա ն ք փչփչալով բարձրացաւ օդի մէջ: Ջարդագուշակ փշանքը պայթեց և նրա հրեղէն կայծերը, անէծքի տարափի նման, ցրիւ եկան անբախտ բերդաքաղաքի վրա....

—Հրդեհ... օգնեցէք... լսելի եղաւ ամեն կողմից և ախոռատան ծառաները դուրս պրծան իրանց քնարաններից:

—Հրդեհ... գոչեցին և դիւանատան պահապանները, երբ նկատեցին, որ խոհանոցը այրվում է, կրակը սկսել է անցնել դէպի դիւանատան սենեակները:

—Հրդեհ... աղաղակեց և նա, որ այդ բոլոր

չարիքների պատճառն էր, և վազելով ցած իջաւ կտուրներից ախոռատան բակը:

Ընդհանուր խառնակութեան մէջ նա աննկատելի կերպով բակից դուրս եկաւ դէպի փողոցը: Ախոռատան սպասաւորի հագուստը նրան պահպանեց ճանաչվելուց:

Նա սկսեց վազել դէպի ածխավաճառների հրապարակը, անդադար աղաղակելով.

—Հրդեհ... օգնեցէք, ամրոցը այրվում է....

Ածխավաճառների հրապարակի վրա, ուր Աւետիքը, Շահումեան Սուխիաննոս իշխանը և Մելիք—Փարսադանեան Բալի զօրապետը ժամադիր էին եղած միանալ տեղացի հայերի հետ և գրաւել ամրոցի զէնքերի մթերանոցը: Բայց դրանց և ոչ մէկի հետ անձամբ ծանօթ չէր Փարիչանը. ծանօթ էր միայն Խօրէն հայր սուրբի հետ, որը այնտեղ չէր: Նա գտաւ հրապարակի վրա մի խառնիճաղանճ բազմութիւն, որը վազում էր դէպի ամրոցը, աղաղակելով.

—Օգնեցէք, ամրոցը այրվում է...

Փարիչանն էլ խառնվեցաւ այդ բազմութեան հետ: Նրանք զինված էին բահերով, բրիչներով, կացիններով, մանգաղներով, և այլ այդպիսի գործիքներով: Տեսնողը կը մտածէր, որ գնում են հրդեհը հանգցնելու:

Բազմութիւնը հետզհետէ աճում էր, ստուարանում էր, նրա հետ խառնվում էին նոր և նոր մար-

դիկ, և բոլորը վազում էին դէպի ամրոցը, որպէս թէ հրդեհը հանգցնելու համար:

Այն փողոցում, որի միջով անցնում էր բազմութեան փոթորկային հոսանքը, մի փոսի միջից լսելի եղաւ դողդոջուն ձայն.

—Տօ, հէրօրհնած, կամաց, կողքս կոտրեցիր:

Այն անձը, որին ուղղած էր այդ ձայնը, նայեց փոսի մէջ, տեսաւ այնտեղ մի ընկած ծերունի, որին փոքր էր մնում ոտքերի տակ ջարդուփշուր անէր, երբ ինքը վազ տալու ժամանակ թռաւ նրա վրայից: Իսկոյն ճանաչեց նրան, և ձեռքերը բռնելով, ասաց.

—Ա՛խ, Սարգիս-ապէր, դու ես:

—Տէր հայր, դու ես, հարցրեց նա կանգնելով:

—Անպիտան ծառան ինձ թողեց այստեղ, ինքը, չեմ իմանում, ուրեղ կորաւ:

—Ես քեզ չէի ասում, որ տանից դուրս չը գաս, ասաց նրան տէր հայրը: - Լաւն այն է, որ յետ դառնաս, Սարգիս-ապէր, ես մի մարդ կը տամ, որ քեզ տուն տանէ:

—Տանը ինչ պիտի չինեմ, որդի, պատասխանեց ծերունին, մոռանալով իր կողքի ցաւը:—Ես պիտի իմ աչքերով տեսնեմ, թէ ինչպէս է այրվում, ինչպէս է կործանվում այն ամրոցը, որ հազարաւոր հայերի գլուխ է կերել... ես պիտի տեսնեմ, անպատճառ պիտի տեսնեմ, ու իմ անէծքը պիտի խառնեմ կրակի բոցերի հետ...

Տէր հայրը նկատեց, որ անկարելի է ծերունուն համոզել, որ նա տուն դառնայ, և որպէս զի միւս անգամ այսպիսի փոսերի մէջ չընկնի, յանձնեց նրան մի մարդու, որ տանէ դէպի ամրոցը։ Իսկ ինքը անցաւ բազմութեան առաջը, գոռալով։

—Գնանք, ուշանում ենք…

Դա տէր Աւետիքն էր, իսկ ծերունին՝ մեզ նախածանօթ Սարգիս Խուլբաշին։

Փարիչանը խաւարի միջից լսեց նրանց խօսակցութիւնը. այժմ նոր հասկացաւ, որ այդ բահերով, բրիչներով, կացիններով զինուած բազմութիւնը տեղացի հայերի խումբն էր, որոնց առաջնորդում էր տէր Աւետիքը իր ընկերների հետ։

Նրանք աղաղակելով անցան Թուրքերի Թաղը, անցան մի քանի ծուռ ու մուռ փողոցներ և հասան ամրոցին։ Հրդեհը այժմ աւելի տարածվել էր. ախոռատնից անցնում էր դէպի կանանոցը, իսկ խոհանոցից դէպի դիւանատունը։ Բերդաքաղաքի Թիւրքերի մեծ մասը այստեղ էր։ Կրակը հանգցնելու համար նրանք ոչինչ հնարներ չունէին, միայն աշխատում էին մթերքները դուրս կրել այն շէնքերից, որոնց դեռ կրակը չէր հասել։ Ամրոցի պահապանները և ծառաները հսկում էին աւելի գողութիւնների վրա։ Բայց ընդհանուր խառնակութեան մէջ «շունը տիրոջը չէր ճանաչում»…

—Այդ որտեղն է այրվում, հարցրեց Փարիչանը մի Թիւրքից։

—Ամրոցը… պատասխանեց նա շտապելով, և մի ահագին սնդուկ քարշ տալով դէպի իր տունը։

—Աստուած ինքը ողորմութիւն անէ… պատասխանեց Փարիչանը լալագին ձայնով, և ցոյց տալով, որ չէ նկատում աւազակի իր իշխանի պալատից յափշտակած աւարը։

Փարիչանը նկատեց, բազմութեան նոյն խումբը, որ զինված էր բահերով և բրիչներով, փոխանակ դէպի հրդեհը գնալու, մի պտոյտ գործեց, և լռութեամբ անցաւ դէպի ամրոցի ետևը, դէպի այն կողմը, ուր կրակը դեռ չէր հասել։ Ինքն էլ գնաց նրանց հետ։ Նրանք մտան մի նեղ փողոց, որի մի կողմը ամրոցն էր, իսկ միւս կողմում՝ խանի ամբարանոցները։ Այդ փողոցը դատարկ էր, այստեղ մարդիկ չը կային։

Ամբարանոցների մէջ մթերված էր խանի հարստութեան մեծ մասը. այնտեղ էր և զէնքերի պահեստի տեղը։ Տէր Աւետիքը մօտեցաւ ամբարանոցի գլխաւոր դուռը, և իր սրի կոթով բաղխելով դուռը, գոչեց մի և նոյն եղանակով, որպէս քահանան տան կուսանաց յիշատակը կատարելու գիշերը, եկեղեցում ձեռքի խաչովը բաղխում է տաճարի վարագոյրը, ասելով.

—«Բաց մեզ, Տէր, զդուռն ողորմութեան…

—«Եկայք, օրհնեալք Հօր իմոյ, և վայելեցէք

զշլատրաստեալն վասն ձեր բարութեան, պատասխանեցին ներսից և խորէն հայր սուրբը բաց արեց դռները:

Բազմութիւնը խռնվում ներս թափվեցաւ բացված դռնից: Խորէն հայր սուրբը առաջնորդեց նրանց դէպի զէնքերի պահեստի տեղը: Սառան, որ հայր սուրբի հետ առաջուց եկած էր այնտեղ, արդէն բաց էր արել պահեստի դուռը և իր ձեռքում բռնած ճրագով լուսաւորում էր մուտքը: Բազմութիւնը ներս մտաւ: Նրանք մի կողմ ձգեցին իրանց բահերն ու բրիչները, և սկսեցին մթերանոցից վեր առնել իրանց ցանկացած զէնքերը: Այդ տևեց մի քանի րոպէ միայն:

—Այժմ դուք զէնքեր ունէք, ասաց տէր Աւետիքը, դառնալով դէպի բազմութիւնը.—Ձեր զէնքերը խլել էր խանը. ես փոխարէնը տուեցի ձեզ նոյն խնկ խանի զէնքերից: Դա մեղք բան չէ.—յափշտակութեան փոխարէն յափշտակութիւն: Հիմա գնացէք, զաւակներս, պաշտպանեցէք ձեր ընտանիքը, ձեր տները: Ես գիտեմ, որ խանը, իր ամբողջ վրէժխնդրութիւնը կը թափէ ձեր ընտանիքների վրա:— Գնացէք, այդ երիտասարդը կառաջնորդէ ձեզ: Նա ցոյց տուեց Մէլիք-Փարսադանեան Բալի զօրապետի վրա:

Կռիւը, պատերազմը իր առանձին ոգևորութիւնն ունի, մի տակալի ոգևորութիւն, որ սրտի և հոգու ուրախութիւնը գտնում է խորտակելու,

ոչնչացնելու և մահացնելու մէջ: Տէր հօր խօսքերը աւելորդ էին: Զայրացած, վրէժխնդրութեան ծարաւի բազմութիւնը այժմ լիքը գիտէր իր գործը: Խանը, արդարև, բերդի պաշարվելուց առաջ խլեց նրանց զէնքերը, զրկելով անձնապաշտպանութեան ամեն միջոցներից: Այժմ նրանց մի առանձին բաւականութիւն էր պատճառում կռւել թշնամու հետ նրանից խլած զէնքերով:

—Դուք անհոգ կացէք, տէր հայր, պատասխանեցին նրանք:—Մեր կնիկների լէչակը թող մեր գլխին լինի, եթէ չարդարացնենք այն յոյսը, որ դուք մեզ վրա դրած էք:

—Օրհնեալ լինիք, զաւակներս, դէ գնացէք, ասաց քահանան, և դառնալով դէպի Մէլիք-Փարսադանեանը, աւելացրեց.

—Բալի, ընտրիր խուլ փողոցները, և մինչև հայոց թաղ հասնելը, խոյս տուր կռիւներից:

Բազմութիւնը Մէլիք-Փարսադանեանի առաջնորդութեամբ հեռացաւ: Բայց մէկը մնաց այնտեղ:

Սառան, որ ճրագը ձեռքում լուսաւորում էր զէնքերի մթերանոցը, ճանաչեց նրան, և ճրագը դնելով պատուհանում, վազեց դէպի նա, գրկելով, ասաց.

—Ա՜խ, Փարիչան, դո՞ւ ես, այդ ինչպէս եկար այստեղ, պատմիր, ինչպէս եկար:

Փարիչանը մի քանի խօսքով պատմեց իր վեր-

ջին գործողութիւնները: Այդ միջոցին տէր Աւե-
տիքը, խորէն հայր սուրբը և Շահումեան Ստե-
փաննոս իշխանը, առանձնացած մթերանոցի մի
կողմում, ինչ որ խօսում էին: Սառան տարաւ
փարիշանին նրանց մօտ, և ներկայացնելով,
ասաց.

—Ահա այն աղջիկը, որ տուեց ինձ այդ մթե-
րանոցի բանալիները, և որը վառեց այդ մեծ
կրակը, որ ամբողջ քաղաքը լուսաւորում է...

Քահանան, վարդապետը և իշխանը մի առան-
ձին ուրախութեամբ նայեցին ախոռատան սպա-
սաւորի հագուստով ծածկած հերոսուհու վրա:

—Զաւակս, ասաց քահանան, նրա ձեռքից
բռնելով և ճակատը համբուրելով.—դու արժանի
ես մեր ամենի սիրոյն և յարգանքին: Քո քոյրիկ-
ները այսուհետև կարող են պարծենալ, որ հայոց
աղջիկների մէջ ես տակաւին չէ հանգած հայրե-
նասիրութեան կրակը: Ես ճանաչում եմ քո հօրը.
դու մի որբ աղջիկ ես, բայց այսօրից դու կը
լինես մեր զօրագնդի որդեգրուհին՝—դուստրը:

—Համբուրեցէք ձեր դստերը, դարձաւ նա դէպի
խորէն հայր սուրբը և Շահումեան իշխանը:

Երկուսն էլ համբուրեցին նրա ճակատը:

Ուրախութեան արտասուքը խեղդեց քաջա-
սիրտ աղջկան: Նա մի բառ անգամ չէր գտնում
իր շնորհակալութիւնը արտայայտելու: Արդարև,
նա մի թշուառ որբ էր: Մօրից զրկվեցաւ նա

դեռ իր տասն տարեկան հասակում, իսկ հայրը
կռւից մեռաւ, երբ նրան բռնութեամբ տարան
խանի պալատը: Այժմ որքան ուրախ էր նա, որ
փոխանակ իր կորուսած ծնողների, եղաւ որդեգ-
րուհի մի քաջ և յաղթող զօրագնդի:

—Շնորհակալ եմ, ասաց նա,—որ դուք անհայր
և անմայր որբին ձեր դուստր էք կոչում, բայց
թող ձեր դստերը համարձակութիւն ունենայ
խնդրելու ձեզանից մի ուրիշ բան ևս:

—Խնդրիր, ասաց նրան տէր Աւետիքը,—ես գի-
տեմ, որ դու այնքան խելացի ես, որ անկարելի
բան չես խնդրի:

—Ի հարկէ չեմ խնդրի, պատասխանեց Փարի-
չանը, այժմ փոքր ինչ համարձակութիւն ստա-
նալով.—իմ խնդիրքս այն է, որ իմ տիկնոջը,
որին կոչում են Զուբէյդա խանում, առնէք ձեր
պաշտպանութեան ներքոյ, խնայէք նրա կեանքը
ընդհանուր կոտորածի ժամանակ: Նա մի բարի,
քրիստոնեայ կին է:

—Մենք կը կատարենք քո ցանկութիւնը, պա-
տասխանեց տէր Աւետիքը:

ԻԲ

Որպէս ամառնային գիշերներում ճրագի լոյսը
դէպի ինքն է հրապուրում զանազան միջատներին,
այնպէս էլ ամրոցում յայտնված հրդեհը ամեն
կողմից դէպի ինքն էր կոչում բերդաքաղաքի բնա-
կիչներին: Ոմանք լոկ հետաքրքրութեան համար,

ոմանք օգնութիւն հասցնելու համար, ոմանք զուարճանալու համար վազում էին դէպի հրդեհը: Ամբոխը մի մեծ երեխայ է, սիրում է կրակի հետ խաղալ: Բերդի պարիսպների մօտ կանգնեցրած պահապան զօրքերն անգամ, հակառակ զինուորական կարգապահութեան, թողեցին իրանց պահականոցները և վազեցին դէպի ամրոցը: Կրակը յեղաշրջեց ամեն օրէնք, կանոն և այն բոլոր կարգադրութիւնները, որ տնօրինված էին թշնամուն դէմ դնելու համար:

Հանգցնելու հնար չը կար: Երկու մեծ գետերից, որ անցնում էին բերդի մօտով, ջուր վերցնել անկարելի էր, որովհետև թշնամին դրսում կանգնած էր: Իսկ բերդի մէջ գտնված ջուրը խմելու անգամ բաւական չէր:

Հրդեհը հետզհետէ տարածվում էր: Կրակը խանոցի մասից անցել էր դէպի դիւանատունը, իսկ ախոռատան կողմից մօտենում էր կանանոցին: Կատաղի քամին, մի հսկայական փուքսի նման, աւելի բորբոքում էր, աւելի բոցավառում էր նրան:

Այժմ սկսել էր այրվել դիւանատունը: Դա ամրոցի ամենագեղեցիկ մասն էր: Ահագին դահլիճների կամարները, որոնց վրա նկարիչները գործ էին դրել իրանց բոլոր ճարտարութիւնը, խորտակվում էին, և գլորգլորով կործանվում էին դէպի ցած: Հրեղէն բոցերը, խառն ծխային թանձր ամպերի հետ, դուրս էին հասնում աշխարհի բոլոր չը-

քեղութիւններով զարդարված սենեակներից: Պալատի փառքը, գեղեցկութիւնը և ամեն զեղխութիւններով լի վայելչութիւնը լուծվում էր, մոխիր էր դառնում: Եւ ում ձեռքով:—Մի աղախնի, մի թոյլ աղջկայ ձեռքով: Դա մի դառն խրատ է, որով ժողովուրդը պատժում է բռնակալի ամբարտաւանութիւնը, որով կամենում է ցոյց տալ նրա ոչնչութիւնը: Երկրների երկաթէ գաւազանով իշխողին պատժում է իր ստրուկներից ամենատկարի ձեռքով: Կարծես, կամենում է հասկացնել նըրան. «տես, դու էլ նոյնպիսի մի մարդ ես, որպէս այն բիւրաւոր մարդիկը, որոնց ճնշում ես քո ոտքերի տակ»...

Երկու սոսկալի տարերք՝—կրակը և քամին—կարծես միաբանվել էին մի սերտ դաշնակցութեամբ, ոչնչացնելու բոլորը, ինչ որ կառուցել էր բռնակալ ձեռքը իր զոհերի արիւնով և արտասուքով: Երկու տարերք գործում էին. քամին, որպէս Արդարադատի վրէժխնդրութեան շունչը, և կրակը, որպէս հարստահարված ժողովրդի անէծքի արտայայտութիւնը...

Հրդեհը աւելի և աւելի ծաւալվում էր, տարածելով իր շուրջը մի սոսկալի լուսաւորութիւն: Կանանոցի կիսամերկ գեղեցկուհիները, սարսափելով յանկարծակի վտանգից, քնաթաթախ դուրս էին թափվել իրանց օթեակներից: Այդ թշուառները, մի այլ պատսպարան չը գտնելով, հաւաք-

վել էին բակի մէջ, և ուխտաւորի նման մինը միւսի կողքին սեղմված, դողդղում էին, լաց էին լինում: Նրանք մոռացել էին հարեմի փակված կնոջ թէ երկիւղը և թէ ամօթխածութիւնը, և դառն հառաչանքներով օգնութիւն էին աղաղակում: Նրանց ձայնը դիպաւ Ներքինապետի ուշադրութիւնը, որը զայրացած կերպով մօտեցաւ, և սպառնական խօսքերով ասաց.

—Քածեր, այդ ինչ աղմուկ է, ինչու էք հաւաքվել այստեղ, դուք չէք տեսնում, որ մարդիկ են նայում ձեզ վրա:

Կնիկները նկատեցին, որ կտուրների վրա, իրաւ որ, բաւական մարդիկ էին հաւաքված: Նրանք աշխատում էին քաշվել մի կից շինվածք, որ միացնում էր կանանոցը դիւանատան հետ, որպէս զի արգելէն կրակի առաջ խաղալը: Հարեմական կարգերին ընդդէմ էր, որ այդ մարդիկը տեսնէին խանի գեղեցիկ խանումներին, որոնք հրդեհի ծիրանեգոյն լուսաւորութեան առջև ներկայացնում էին կենդանի պատկերների մի սքանչելի խումբ, զարհուրած, շուարած ընդհանուր սոսկումից, որպէս Պոմպէի և Հերքուլանի կնիկները Եթնայի հրաբխութեան րոպէներում:

—Ձէք լսում, դեռ կանգնած էք, գոռաց Ներքինապետը:

—Ո՞ւր գնանք, եղաւ թշուառների պատասխանը:

—Գժոխքը և գերեզմանը... եղաւ Ներքինապետի պատասխանը:—Մտէք ձեր օթեակները:

—Շուտով կրակը մեր օթեակներին կը հասնի, համարձակվեցաւ հակառակել մէկը:

—Երբ որ այրվելու լինէք, այն ժամանակ ձեզ հրաման կը տամ դուրս գալու:

Կնիկների խումբը ցրիւ եկաւ, ամէն մէկը մտաւ իր սենեակը, սարսափով սպասում էր կրակի մօտենալուն:

Ամրոցի բոլոր մուտքերը բաց էին, որ ժողովուրդը կարողանար օգնութիւն հասցնել: Միայն կանանոցի դռների մօտ կանգնեցրած էին պահապաններ: Այստեղ անցուդարձը արգելված էր:

Կանանոցի կտուրի վրա հաւաքված բազմութիւնից երեքը գաղտնի կերպով բաժանվեցան և մօտեցան տանիքի մեջ ծանօթ փոքրիկ դռանը: Ընդհանուր խառնակութեան մէջ ոչ ոք չը նկատեց նրանց մեկնիլը: Նրանցից մէկը գրպանից հանեց բանալին, բաց արեց փոքրիկ դուռը: Երեքն էլ ներս մտան, դուռը կրկին փակվեցաւ:

—Դուք այստեղ սպասեցէք, ես կը գնամ նրան կը բերեմ, հազիւ լսելի ձայնով ասաց նրանցից մէկը:

Երկուսը մնացին դռան մօտ, ներսի կողմից, իսկ երրորդը սկսեց մութ սանդուղքներով ցած իջնել: Երբ հասաւ վերջին աստիճանին, նա կանգնեց, և նայում էր դէպի կանանոցի բակը, որը

երբեմն լուսաւորվում էր հրդեհի բոցերով, իսկ երբեմն խաւարը պատում էր, երբ ծխային սև ամպերը ծածկում էին կրակի ճառագայթները: Նա ընտրեց խաւարի այդ վերջին րոպէներից մէկը, և արագութեամբ վազեց դէպի Զուբէյդայ խանումի սենեակը: Ներքինի Ասադը այնտեղ չէր. ծերունին իր սղոցի թեփով լցրած բարձը վեր էր առել, և աստուած գիտէ, թէ որ անկիւնում պառկած էր: Նա մտաւ խանումի սենեակը, որը միայնակ նըստած էր, գրկած ունելով իր հիւանդ երեխային, և գտնվում էր մի տեսակ տխուր, ուշակորոյս ինքնամոռացութեան մէջ: Տեսնելով անծանօթ մարդուն իր սենեակը մտնելիս, տիկինը սթափվեցաւ, և լալագին ձայնով աղաղակեց.

—Ինչ որ ուզում ես, տար, ես բոլորը քեզ կը տամ, ի սէր Աստուծոյ, երեխային մի սպանիր:

Նա կարծեց, որ անծանօթը բէկի զինուորներից մէկն էր, մտել էր իր սենեակը կողոպտելու: Բայց նա մօտենալով տիկնոջը, կամաց շշնջաց.

—Սուս կաց, մի վախիր, ես եկայ քեզ էլ, քո երեխային էլ ազատելու:—Չես ճանաչում ինձ: Վերջին խօսքերի ժամանակ նա մի կողմ ձգեց գլխի ահագին մօրթէ գդակը և նրա տակից դուրս թափվեցան կանացի երկայն գիսակները:

—Ա՛խ, փարիչան, դո՞ւ ես, բացականչեց տիկինը ուրախանալով:—Ո՞րտեղ էիր, ինչու ինձ մենակ թողեցիր, ու՞ր գնացիր:

—Սուս, կրկնեց փարիչանը,—կամաց խօսեցէք, վեր կացէք, պատրաստվեցէք, գնանք, քանի որ դեռ ուշ չէ: Ես յետոյ կը պատմեմ ձեզ, թէ որտեղ էի:

—Ո՞ւր գնանք, ինձ ո՞րտեղ ես տանում, հարցրեց տիկինը չփոթվելով:

—Մի այնպիսի ապահով տեղ, ուր դուք ազատված կը լինիք: Շտապեցէք, ժամանակ կորցնելու չէ, մի քանի րոպէից յետոյ բէկի զինուորները կը թափվեն ամրոցի վրա և կրակից մնացածը նրանք սրով կը ոչնչացնեն:

—Ո՞ւր գնանք, ինձ ո՞րտեղ ես տանում, դարձեալ հարցրեց տիկինը, նստած տեղից չը շարժվելով:

—Սուսայի տունը, պատասխանեց աղախինը նրա ձեռքից բռնելով:—Սուսան ձեր լաւ բարեկամն է. նա այնքան բարի է, որ դուք կարող էք նրա վրա վստահութիւն ունենալ: Նա ինքը այստեղ է, եկել է ձեզ տանելու, սանդուղքների վրա սպասում է:

Տիկինը իսկոյն չը պատասխանեց. տխուր մտածութիւններ տիրեցին նրա սրտին: Նա թաշկինակը սեղմեց աչքերի վրա, և րոպէական լռութիւնից յետոյ, արտասուախառն հեկեկանքով հարցրեց.

—Դու ինձ առաջարկում ես փախչել, փարիչան...

—Այո՛, փախչել,—պէտք է անպատճառ փախչել այդ Սոդոմից, որ Աստուծոյ բարկութեան հրովը կործանվում է...

Նրանց խօսակցութիւնը ընդհատեց մի սոսկալի որոտաձայն դղրդոց։ Կարծես, հարիւր թնդանօթներ միասին արձակեցին, և կիսուեր ամրոցը հիմքից շարժվեցաւ, օրօրվեցաւ, և փոքր էր մնում, որ մնացած մասերն էլ կործանվէին, տակնուվրա լինէին։

Փարիչանը վազեց, բաց արեց լուսամուտը, նայեց դէպի ծխի և փոշու մէջ կորած բակը։

—Այդ ինչ էր, հարցրեց սարսափած տիկինը։

—Ներքինապետի բարձր աշտարակը կործանվեցաւ, նրա փառքը և իշխանութիւնը տապալվեցաւ, ծիծաղելով ասաց Փարիչանը։—Կրակը անցնում է դէպի կանանոցը։

Իրաւ, փուլ եկողը Ներքինապետի աշտարակն էր, որի բարձրութիւնից «աղջիկների իշխանը» տիրում էր ամբողջ կանանոցի վրա։ Նա կործանվեցաւ և իր ծանրութեան տակ փշրեց և մի քանի այլ շինվածքներ։ Նրա որոտաձայն դղրդոցը բարձրացրեց հարեւրաւոր կնիկների բերաններից զարհուրելի աղաղակներ, իսկ տիկնոջ գրկում՝ զարթեցրեց քնած երեխային։

Նա իր գեղեցիկ աչքերը բաց արեց, և լուսամուտից տեսնելով դրսի լուսաւորութիւնը, ժըպտալով ասաց.

—Արևը դուրս է եկել, ես որքան շատ քնեցի։

—Հա՛, զաւակս, շատ քնեցիր, պատասխանեց մայրը, նրան համբուրելով։—Բայց դա արևը չէ, այնտեղ կրակ են վառում...

—Ի՞նչու համար են վառում։

—Այնպէս, վառում են...

—Երևի, մի բան խորովում են։

Մայրը ոչինչ չը գտաւ պատասխանելու, կրկին համբուրեց իր զաւակին։ Փարիչանը տեսնելով, որ ժամանակը անցնում է, սկսեց շտապեցնել իր տիկնոջը։

—Ուշանում ենք, տիկին, ասաց նա.—տուեցէք ինձ երեխային, իսկ դուք ծածկվեցէք այդ վերարկուի մէջ։

Տիկինը դրեց երեխային աղախնի գիրկը, ինքը վեր կացաւ։

—Ո՞ւր ենք գնում, հարցրեց հետաքրքիր երեխան։

—Պարտէզը, պատասխանեց աղախինը,—այնտեղ լաւ է, այդպէս չէ՞։

—Լաւ է, ասաց երեխան,—այնտեղ խնձոր կայ։

Աղախինը իր վերարկուի տակ ծածկեց երեխային, որ նրան ոչ ոք չը տեսնէ։ Իսկ նրա մայրը արդէն պատրաստ էր, Նրա թուլասըրտութիւնը անցաւ։ Ազատութեան յոյսը զօրութիւն տուեց նրան։ Նա թողնում էր այն զնդանը,

ուր ամբողջ եօթն տարի տանջվել էր, մաշվել էր, ուր թաղել էր իր երիտասարդութեան ամենաթանգագին օրերը: Բայց երբ դուրս եկան սենեակից, տիկնոջ աչքերը դարձեալ լցվեցան արտասուքով: Բնակարանը մարդու մտերիմ ընկերն է, նրա հաւատարիմ խորհրդապահն է: Ամբողջ եօթն տարի այդ չքեղազարդ սենեակին, ուր կենդանի թաղված էր նա, հաւատացել էր իր սրտի ցաւերը: Նրա լուռ, գեղազրական պատերը միայն վկայ էին եղել նրա արտասուքներին, բայց մխիթարել չէին կարողացել: Այժմ թողնում էր իր ապարանը:

Բակում մարդիկ էին ման գալիս: Խաւարի մէջ դժուար էր որոշել նրանց: Լոյս չը կար, բայց խեղդող ծուխը թանձր մառախուղի նման ծածկել էր շինվածքները: Երբ իջան բակը, տիկինը հարցրեց.

—Հիմա Սառան որտեղ է:

—Սանդուղքների վրա, նրա հետ կայ և մի տղամարդ, պատասխանեց աղախինը:

Սառայի անունը լսելիս, երեխան գլուխը դուրս հանեց աղախնի վերարկուի տակից, և ճչալով բացականչեց.

—Սառային չեմ ուզի, Սառան վատ է, նա բողազս հուփ կը տայ...

Խեղճ երեխան մտաբերեց իր բժշկին և իր կո-

կորդի նոյն գիշերվայ ցաւը: Բայց փարիչանը հանգստացրեց նրան, ասելով.

—Չէ, սիրելիս, դա այն Սառան չէ, դա ուրիշ Սառա է, քեզ լաւ բաներ կը տայ:

Երբ սկսեցին բարձրանալ սանդուղքներից, տիկինը հարցրեց:

—Ո՞վ է Սառայի հետ եղող տղամարդը:

—Մի վարդապետ, որին կոչում են Խորէն հայր սուրբ: Նա շատ լաւ մարդ է:

—Վ՞արդապետ, զարմանալով կրկնեց տիկինը:

—Այո, վարդապետ: Նա մի քաջ տղամարդ է, և Սառայի բարեկամն է:

Զբաղված լինելով այդ խօսակցութիւններով, փախստականները չը նկատեցին, որ մի մարդ խաւարի միջից լրտեսում էր նրանց: Դա ներքինի Ասատն էր: Հէնց որ լսեց ծերունին երեխայի ճիչը, թէ «Սառային չեմ ուզի», իսկոյն ճանաչեց նրա ձայնը, յետոյ սկսեց ականջ դնել տիկնոջ և աղախնի խօսակցութիւններին: Երբ փախստականները ոտք դրեցին սանդուղքների վրա, սկսեցին բարձրանալ, նա հասկացաւ բոլորը, և իսկոյն վազեց ներքինապետի մօտ, նրան իմացում տալու համար:

Այդ միջոցին փախստականները արդէն գտնվում էին սանդուղքների վերին աստիճանների վրա: Սառան բաց արեց փոքրիկ դուռը, և բոլորը

միասին դուրս եկան կտուրի վրա, դուռը իրանց ետևից կողպեցին։

Երեխան դարձեալ իր գլուխը դուրս հանեց աղախնի վերարկուի տակից, և տեսնելով հրդեհի շրջակայ լուսաւորութիւնը, ասաց.

—Հա՛ւ, այդ որքան կրակ են վառել... ի՞նչ են եփում, մայրիկ։

Փարիչանը մտածեց երեխայի ձայնը կտրել, ասելով.

—Եթէ դու միւսանգամ կը խօսես, ես «բօբօխին» կը կանչեմ...

Երեխան երկիւղից գլուխը ներս քաշեց աղախնի վերարկուի տակ և կծկվեցաւ նրա գրկի մէջ։ «Բօբօխը» մի երևակայական էակ էր, որի սարսափելի նշանակութիւնը միայն երեխան գիտէր։

Կտուրի վրա հաւաքված բազմութիւնը այժմ աւելի շատ էր։ Բոլորը գոռում էին, գոչում էին, և մինը միւսին չէր հասկանում։ Նրանք աշխատում էին քանդել կից շէնքերը, որպէս զի կրակի առաջ անցնելը արգելեն։ Փախստականները շտապով անցան յուզված, խառնափնթոր բազմութեան միջից, և կտուրից իջան փոքրիկ պարտէզը, որ կից էր կանանոցին։

Այդ պարտէզը խանի տիկինների զբօսանքի դրախտն էր։ Այստեղ ներքինիների հսկողութեան ներքոյ բաց էին թողնում նրանց, ուր զուարճանում էին, թռչկոտում էին, վազվզում էին և զանազան խաղեր էին անում, որպէս կանանոցների գիշերօթիկ աշակերտուհիները վերակացուների հսկողութեան ներքոյ։ Այստեղ երբեմն, գիշերային մթութեան ժամանակ, դուրս էին գալիս խանի գեղեցկուհիները և հանդիպում էին վարդենիների տակ թաքնված սիրահարին...

Ներքինապետը, լսելով Աստղից Զուլէյխա խանումի փախստեան մասին, խիստ կատաղեցաւ։

—Ո՞ր կողմով փախան, թշուառ ծերուկ, հարցրեց նա,—էգուց խանը քեզ կենդանի այրել կը տայ։

—Աստուած է վկայ, որ ես մեղաւոր չեմ, պատասխանեց սարսափած ծերուկը, ցոյց տալով կտուրի սանդուղքները։

Ներքինապետը վազեց դէպի սանդուղքները։ Իսկ ծերուկը իր սղոցի թեփով լցրած բարձը, իր անբաժան ընկերը, գրկած, գնաց դէպի իր տիկնոջ բնակարանը, և գլուխը դնելով սենեակի դրան մօտ, պառկեց, դարձեալ մի և նոյն վաղեմի տպաւորութեան ներքոյ երևակայելով, թէ իր տիկինը այնտեղ է։

Ներքինապետը բարձրանալով սանդուղքներից, փոքրիկ դուռը գտաւ փակված։ Նա մի սաստիկ քացի տուեց և տախտակները փշրվեցան հսկայի ոտքի հարուածքից։ Անցաւ կտուրի վրա և վազեց

դէպի պարտէզը, ընազդումով հասկանալով, որ
փախստականները այն կողմով պիտի գնացած
լինէին, որովհետև այնտեղ մարդիկ չը կային:
պարտէզից մի դուռ բացվում էր ուղիղ դէպի
փողոցը:

—Կանգնեցէ՛ք, կանչեց ներքինապետը որոտա-
լից ձայնով, երբ լսեց փախստականների ոտքերի
խշխշոցը պարտէզի խոտերի վրա:

Խորէն հայր սուրբը կանգնեց, միւսներին սպա-
լով, որ հեռանան:

—Ձեզ եմ ասում, կանգնեցէ՛ք, կրկնեց ներ-
քինապետը աւելի խրոխտալից ձայնով:

—Ի՞նչ ես կամենում, հարցրեց երիտասարդ ա-
բեղան, վիթխարիի առաջը կտրելով:

—Ո՞ւր ես տանում դրանց:

—Այդ իմ գիտնալու գործն է:

—Քո գիտնալու գո՞րծն է, խօսեց դառն ծիծաղով
վիթխարին:—Ահա այդ էլ իմ գիտնալու գործն է...

Վերջին խօսքերի հետ նա իր ծանր սուրը սաս-
տիկ թափով իջեցրեց դէպի աբեղայի գլուխը:
Բայց աբեղան զարմանալի ճարպկութեամբ իր
սրով յետ մղեց նրա զարկը: Վիթխարին կրկին
բարձրացրեց իր սուրը, գազանային կատաղու-
թեամբ մռնչելով.

—Հիմայ գիտացիր...

Աբեղան մի կողմ թեքվեցաւ, իսկ վիթխարիի

սուրը, դիպչելով ծառի ահագին ճիւղին, կտրեց և ցած ձգեց:

Այդ միջոցին երիտասարդ աբեղան իր սուրը խրեց նրա կողքի մէջ: Հարուածքը թէև սաստիկ էր, բայց վիթխարին, ամենևին ցաւ չը զգալով, կրկին անգամ յարձակում գործեց: Նոյն րոպէում Սառան վրա վազեց, և առեց իր խէնջարը խըրելով հսկայի փորը, ասաց.

—Սատկիր, անպիտան, մինչև երբ պիտի չարչարես մեզ:

Վիթխարին մի մեծ կոճղի նման ցած գլորվեցաւ, և մռնչելով փչեց հոգին:

Փախստականները մօտեցան պարտէզի դռանը, որ փակված էր փայտեայ վանդակապատով:

—Թողէ՛ք, ես դրա բաց անելու ձևը գիտեմ, ասաց Փարիշանը, ձեռքը տանելով դէպի դռան սողնակը:

Ի՞նչ սատանայական հնարք գործ դրեց նա, յայտնի չէ, բայց սողնակը իսկոյն յետ քաշվեցաւ, դուռը բացվեցաւ և նրանք դուրս եկան փողոցը: Այստեղ Փարիշանը հարցրեց իր ընկերոջից.

—Գիտէ՞ք նա ով էր:

—Գիտեմ...ասաց ընկերը և նրա ձայնի մէջ լսելի եղան ուրախութեան հնչիւններ:

Դուրս գալով փողոցը, փախստականները դիմեցին ուղղակի դէպի հայոց թաղը: Արշալոյսը

սկսել էր շառագունիլ և երկնքի վրա մոխրագոյն ամպեր ցոլացնում էին արևի ծագման վաղահաս նշոյլները։ Բայց փողոցների մէջ դեռ տիրում էր խաւարը։ Շրջակայ անտառապատ լեռները այնքան բարձր էին, որ երկար մրցում էին արևի հետ, մինչև թոյլ էին տալիս նրա ճառագայթներին մուտք գործել խոր ձորի մէջ թաղված բերդաքաղաքը։

Բերդի բնակիչները գտնվում էին սարսափելի խռովութեան մէջ։ Իսկ անտառային թռչունները սկսել էին իրանց վաղորդեան ուրախ չըլչըլկոցը։ Նրանք, կարծես, ծիծաղում էին մարդիկների բարբարոսութիւնների վրա, կարծես, ասում լինէին նրանց. «տեսէ՛ք, մենք որքան ուրախ ենք, որքան երջանիկ ենք, որովհետև միմեանց դէմ ոխ, թշնամութիւն չունենք, նրա համար որ, բաժանելու էլ ոչինչ չունենք»…

Խորէն հայր սուրբը և տիկինը գնում էին առաջ։ Տիկինը լուռ էր, ոչինչ չէր խօսում։ Երիտասարդ արեղան մի քանի անգամ փորձեց խօսեցնել նրան, բայց ստացաւ կարճ, սառն պատասխաններ։

—Դուք, երևի, յոգնեցաք, տիկին, ասաց նա, նկատելով, որ չէ կարողանում հետևել իրան։

—Այո, եօթն տարի կանանոցի մէջ փակված մնալով, ես համարեա կորցրի ման գալու ընդու-

նակութիւնը, պատասխանեց տիկինը տխրութեամբ։

—Թոյլ տուեցէք բռնել ձեր թևքից։

Տիկինը իր թևքը մեկնեց նրան։

Մի և նոյն կարեկցութիւնը ցոյց տուեց Սառան փախչողին, ասելով.

—Դու յոգնեցար, սիրելի՛ս, ինձ տուր երեխային, ես կը գրկեմ։

—Այդպէս լաւ է, պատասխանեց փախչողը,— երեխան կարող է խանգարել քեզ, դու մի քաջ թիկնապահի պաշտօն ես կատարում, քո ձեռքերը պէտք է ազատ լինեն։

—Ծիծաղո՞ւմ ես իմ վրա, փախչողս։

—Ի՞նչու եմ ծիծաղում, ես տեսայ, թէ ինչպէս դու ծակեցիր նիզակաւորի կողքը. կարող է մի այդպիսի դէպք դարձեալ պատահել։

Նրանց մօտից մեծ աղմուկով անցան մի քանի մահմեդական զինված խմբեր։ Բայց որովհետև գիտէին, որ այդ ժամանակ փողոցներում ոչ մի հայ չի համարձակվի դուրս գալ, այդ պատճառով ոչ ոք ուշադրութիւն չը դարձրեց նրանց վրա։

Մէկը միայն հարցրեց.

—Ո՞ւր էք գնում։

—Դէպի այդ կողմը, պատասխանեց Խորէն հայր սուրբը։

—Հայոց թաղով չէք կարող անցնել, բոլոր փողոցները բռնված են։

—Ի՞նչպէս բռնված են:

—Բռնված են... գնացէ՛ք, կը տեսնէ՛ք...

Նա անցաւ, ժամանակ չունենալով բացատրութիւն տալու:

Եւ իրաւ, հասնելով հէնց առաջին փողոցը, նրանք գտան փակված: փողոցի մուտքը բռնված էր ամուր սանգխառով (պատնէշ): Հայ բնակիչները դիզել էին միմեանց վրա իրանց սայլերը, գութանները, արօրները և տնային զանազան կարասիները, այսպիսով կազմել էին մի ամուր պատնէշ: Կին, աղջիկ, տղամարդ, ծեր և պատանի, հրացանները ձեռքներին բռնած, կանգնել էին պատնէշի ետեւում:

—Այստեղից անցնել անկարելի է, գնանք միւս փողոցով, ասաց խորէն հայր սուրբը:

—Ի՞նչու, դրանք խօ հայեր են, պատասխանեց Սառան:—Մեզ ի՞նչ վնաս պիտի տան:

—Հայեր են, բայց մինչև նրանց հասկանալը, թէ մենք ովքեր ենք, հարիւրաւոր հրացաններ կարձակեն մեզ վրա:

Նրանք շուռ տուեցին դէպի միւս փողոցը:

—Ի՞նչպէս շուտ պատրաստվեցան, ասաց Սառան մի առանձին ուրախութեամբ:

—Զէնքը մարդուն քաջութիւն է ներշնչում, պատասխանեց խորէն հայր սուրբը:—Մենք տուեցինք նրանց զէնքեր, իսկ նրանք կը տան մեզ լաւ զինուորներ:

—Միթէ հայերը զինուորական ընդունակութիւն ունեն, հարցրեց տիկինը:

—Հայերը նոյնպիսի մարդիկ են, ինչպէս բոլոր մարդիկը, պատասխանեց խորէն հայր սուրբը:—Դու տուր մարդուն աչքի լոյս, նա կը գտնէ իր ճանապարհը...

ԻԳ

Մի և նոյն ժամում, երբ հրդեհը տարածվում էր ամրոցի մէջ, երբ հոյակապ շինվածքները գռգռալով խորտակվում էին, երբ մարդիկների բազմութիւնը աշխատում էր կրակի ծաւալման առաջը առնել,—համարեա մի և նոյն ժամում, երբ փախստականները դուրս եկան պարտէզից, խանը կատաղի վրդովմունքով կանգնած էր դիւանատան ընդարձակ բակի կենտրոնում, իսկ նրա հանդէպ կանգնած էր վէզիրը: Կրակի սաստիկ լուսաւորութիւնը ամեն կողմից տեսանելի էր կացուցանում երկրի այդ երկու պետերին:

Բաւական հեռու կանգնած էին խանի դրանիկները և չէին համարձակվում մօտենալ նրան: Բարկութեան րոպէներում նա նոյնքան կատաղի էր, որպէս այն հրդեհը, որ լափում էր շինութիւնները: Դրանիկներից ոմանք զանազան հրամաններ էին տալիս ամբոխին, իսկ ոմանք սպասում էին խանի հրամանին:

—Վէզիր, դա քրիստոնեաների գործն է, ասաց խանը:

—Այո, քրիստոնեաների գործն է, պատասխանեց վեզիրը։

—Այստեղի՞ քրիստոնեաների, աւելացրեց խանը։

—Այո, այստեղի քրիստոնեաների, հաստատեց վեզիրը։

—Ես այս րոպէիս կը հրամայեմ, որ նրանց կոտորեն, չան նման կոտորեն։

—Այժմ խիստ ուշ է… պատասխանեց վեզիրը։

—Ի՞նչու։

—Չէ՞ք լսում։

—Ի՞նչը։

—Թմբուկների ձայնը։

—Լսում եմ։ Այդ ի՞նչ ձայն է։

—Բէկի զօրքերի թմբուկների ձայնն է։ Թշնամին մտնում է բերդը։

Խանը գունաթափւեցաւ։

—Թշնամի՞ն մտնում է բերդը… կրկնեց նա մի այնպիսի ծիծաղով, որ բարկութեան ժամանակ փոխարինում է արտասուքին։ - Ապա ո՞րտեղ են իմ զօրքերը, իմ զօրապետները, որ կարգված էին բերդը պահպանելու համար։

—Նրանցից ոմանք փախել են, իսկ ոմանք եկել են այստեղ կրակը հանգցնելու համար։ Թշնամին մեր տան մէջ կրակ ձգեց, որ մեզ դրանով զբաղեցնէ, իսկ ինքը միջոց գտաւ գրաւելու մեր բերդը։

—Հիմայ ի՞նչ պէտք է արած, հարցրեց խանը յուսահատ կերպով։

—Եթէ դուք ինձ թոյլ կը տաք, ես կը դիմեմ յաղթողին և հնազանդութիւն կը յայտնեմ։

—Երբէ՛ք։

—Դուք դրանով կազատէք հազարաւորների կեանքը սարսափելի կոտորածից։

—Թող բոլորն էլ ինձ հետ կոտորւեն, քան թէ խոնարհւեն գաւուրի առջև։ Դու չը գիտես, վէզիր, մեր կրօնի հանգամանքը. մուսուլմանին թոյլ տուած չէ խոնարհւել այլադաւանի լծի ներքոյ. մուսուլմանը կամ պէտք է տիրէ, կամ պէտք է ոչնչանայ։

Այդ միջոցին դիւանատան բակը մտաւ մի խուռն, զինված բազմութիւն։ Նրանց առաջնորդում էր մօլլաների գլխաւորը, մի բաց սուր ձեռքումը բռնած։ Նրա առջևից գալիս էին երկու չաուշներ *), որոնք տանում էին երկու հոգևոր դրօշակներ։ Չաուշները քարոզ էին կարդում.

—Մուսուլմաններ, ղէյրաթի **) օր է։ Գաւուրները գրաւեցին մեր բերդը։ Աստուած և նրա մարգարէն հրամայում են զէնքով ընդդիմանալ թշնամուն։

---

*) Չաուշ նշ. հոգևոր ջաուչի, հրապարակական քարոզներ կարդացող։

**) Ղէյրաթ նշ. նախանձախնդրութիւն։

Այդ խօսքերը վառեցին ամբոխի կատաղութիւնը և հազարաւոր ձայներ կրկնեցին.

—Պատրաստ ենք, պատրաստ ենք:

Խանը մօտեցաւ մօլլաների գլխաւորին, և նրա ձեռքը բռնելով, ասաց.

—Ես էլ պատրաստ եմ: Աստուծոյ և նրա մարգարէի հրամանի հետ աւելացնում եմ և իմ հրամանը.—պէտք է մինչև մեր արեան վերջին կաթիլը ընդդիմանանք թշնամուն:

Ամբոխի մոլեռանդութեանը չափ չը կար: Նրան հրամայում էր Աստուած իր հոգևոր ներկայացուցչի բերանով, հրամայում էր մարգարէն իր մարմնաւոր ներկայացուցչի՝ երկրի իշխանի բերանով:

Ջաւուշները, սրբազան դրօշակները առաջ տանելով, դուրս եկան ամրոցից: Նրանց հետևում էին՝ մօլլաների գլխաւորը և խանը, իսկ յետոյ—ամբոխը:

Երբ դուրս եկան ամրոցի առջևի հրապարակի վրա, խանը դարձաւ դէպի մօլլաների գլխաւորը այդ խօսքերով.

—Դուք, հոգևոր տէր, առաջնորդեցէք ամբոխին, իսկ ես կառաջնորդեմ զօրքերին:

—Այդպէս էլ պէտք է, պատասխանեց մօլլաների գլխաւորը:

Նրանք բաժանվեցան:

Մօլլաների գլխաւորը ամբոխի հետ սկսեց ա-

ռաջ գնալ: Ջաւուշները բարձր ձայնով կրկնում էին մի և նոյն խօսքերը: Բազմութիւնը հետըհետէ ստուարանում էր, ամեն մարդ, զէնքը առած, միանում էր ամբոխի հետ:

Խանը մնաց հրապարակի վրա: Երբ բոլորը հեռացան, հրամայեց վէզիրին.

—Թմբուկները ածել տուր, որ զօրքը հաւաքվի:

Մինչև դրանց զօրքի հաւաքվելը, մենք անցնենք բէկի զօրքերի մէջ, տեսնենք այնտեղ ինչ էր կատարվում:

Մի և նոյն րոպէում, երբ երկու չ ա ւ ո ւ շ ն ե ր ը, բերդի փողոցների մէջ հոգևոր թափօր կատարելով, կարդում էին Աստուծոյ և նրա մարգարէի հրամանը,—մի և նոյն րոպէում հայոց բանակների մէջ երկու ջ ա ռ չ ի ն ե ր բարձր ձայնով հրատարակում էին բէկի հրամանը. «չը խղճալ, կոտորել անխնայ կերպով»...

Այդ հրամանի հրատարակվելուց մի քանի ժամ առաջ, Գեղվայ *) գետի ափի վրա զետեղված բանակի մօտ, սարի բարձրաւանդակի վրա, միայնակ նստած էր մի մարդ: Նա աչքերը յառած, անհամբերութեամբ նայում էր երբեմն դէպի բերդը, երբեմն դէպի երկինքը: Թէև խաւարի միջից ոչինչ տեսնել չէր կարող, բայց այն, որ ցանկա-

*) Գեղվայ գետը կոչվում է և Օխչու գետ, որովհետև անցնում է Օխչի աւանի մօտով:

նում էր տեսնել, խաւարի միջից աւելի պայծառ կերպով կարող էր երևալ: Ձանձրոյթը, անհամբերութիւնը, սրտի վրդովմունքը մեղմացնելու համար, նա ստէպ-ստէպ վառում էր իր կարճ չիբուխը և ծխում էր: Նա նմանում էր այն մոլեռանդ աստղահմաններին, որ ամբողջ գիշերը լուսացնում են, երկինքի վրա որոնելով իրանց ցանկացած աստղին, որպէս զի նրանով կատարեն մի մեծ, սքանչելի կախարդութիւն:

—Այդ պատարագիչներից ոչինչ չի դուրս գայ, ասաց նա իր մտքում, աւելի բարկանալով.—ամեն բան նրանց մօտ ծէս է, արարողութիւն է, խորհուրդ է....

Պատարագիչներ կոչում էր նա քահանաներին:

—Հարիւր ծովի ջրով լուանալու ես լինես նրանց, դարձեալ խունկի հոտը չի կորչի նրանցից... աւելացրեց նա:

Նրա շուրջը լուռ, ապառաժ և անտառ էր: Նա նստած էր մի քարաժայռի բեկորի վրա և թիկն էր տուած մի ահագին կաղնիի: Այդ դրութեան մէջ նմանում էր նա այն վիթխարի անտառային յուշկապարիկներից մէկին, որ իրանց ծարաւը յագեցնում են մարդկային արիւնով: Նա նստած էր այստեղ սկսած այն ժամանակից, երբ բէկի բանակի մէջ ստացվեցաւ բերդից ուղարկված գաղտնի նամակը:

Նրա բարկութիւնը, անհամբերութիւնը, վրդով-

մունքը հետզհետէ սաստկանում էր: Եթէ մէկը խաւարի միջից կարողանար հետազօտել նրա դէմքը, կը սարսափէր: Բայց ինչու էր զայրացած նա: Այդ մարդը բնաւորութեամբ բարի, գթած և խաղաղ էր: Բայց խաղաղ մարդկանց բարկութիւնը նմանում է խաղաղական ովկիանոսի սոսկալի փոթորիկներին, որոնք թէև յաճախ չեն պատահում, իսկ երբ որ պատահում են, ճանապարհորդները ազատ չեն մնում նաւաբեկութիւնից:

Նրա ահարկու դէմքը փոքր ինչ պայծառացաւ, երբ իր նստած բարձրաւանդակի հեռաւորութիւնից նշմարեց բերդի մէջ լոյսի ծիրանեգոյն շառաւիղներ: Շառաւիղները հետզհետէ աճում էին և արշալոյսի առաջին ճառագայթների նման ցոլանում էին շրջակայ բարձրութիւնների վրա: Երբեմն խաւարում էին նրանք, կարծես, սև, միգանման ամպերը անցնում էին նրանց վրայով և ծածկում էին լոյսի պայծառութիւնը: Այդ միջոցին բերդից մի փշանք բարձրացաւ օդի մէջ, պայթեց և հրեղէն կայծերը թափվեցան դէպի ամեն կողմ:

—Վերջացաւ... ասաց նա, վեր կենալով.—վարագոյրը բացվեցաւ, պատարագիչը երևան եկաւ...

Նա սկսեց սարի բարձրութիւնից ցած իջնել: Ստորոտում, գետի ափի մօտ, գտնվում էր բանակը: Ձիաւորների մեծ մասը արթուն էր: Սկսեց դիմել դէպի ծերունի Մէլիք-Փարսադանի վրանը, իր մտքում ասելով.

—Նա այժմ արթուն կը լինի: Ծերացած դեւերը եօթն տարին միանգամ են քնում, այն էլ եօթն օր շարունակ:

Եւ իրաւ, ծերունի զօրավարի վրանում լապտերը դեռ վառվում էր: Նա ներս մտաւ, գտաւ նրան միայնակ նստած, կարդում էր մի փոքրիկ գիրք: Դա Նարեկ էր, որը սովորութիւն ունէր բարեպաշտ ծերունին կարդալ ամեն երեկոյ և առաւօտ:

—Թող այդ գիրքը, ասաց նա նստելով.—պարսից Թագաւորի «բաթման-ղլիջը» քեզ համար լաւ խաբար է բերել:

—Ի՞նչ խաբար, հարցրեց ծերունին, Նարեկը թագցնելով իր ծոցի մէջ:

—Տէր Աւետիքը արդէն իր դալլաքութիւնը *) բանեցրեց խանի գլխի վրա... ասաց նա ծիծաղելով:

Ծերունի զօրավարը գիտէր, որ տէր Աւետիքը սափրիչի կամ դալլաքի կերպարանքով էր մտել բերդը, բայց թէ ի՞նչ դալլաքութիւն էր բանեցրել,—այդ մասին դեռ տեղեկութիւն չունէր: Նա հարցրեց.

—Ի՞նչ դալլաքութիւն:

—Մեր սպասած հրդեհը և փչանքը երևացին

*) Դալլաքութիւն նշանակում է սափրիչութիւն, բայց ժողովրդի բերանում խորամանկութեան, խաբէութեան նշանակութիւն ևս ունի:

բերդի մէջ, պատասխանեց պարսից թագաւորի «բաթման-ղլիջը»:

Մի քանի րոպէ առաջ Նարեկ կարդացող բարեպաշտի երեսի կնճիռները պայծառացան մի անսովոր ուրախութեամբ: Նա բռնեց Բայինդուրի ձեռքը, ասելով.

—Շնորհակալ եմ, իշխան, իրաւ որ, լաւ խաբար է: Դու քո աչքերով տեսա՞ր:

—Ես իմ աչքերով տեսայ, ուրիշի աչքերովը չը տեսայ, պատասխանեց իշխանը:—Ես այս գիշեր չեմ քնել. սև ագռաւի նման նստած էի սարի գագաթի վրա, ժամերով նայում էի, թէ երբ կը յայտնվի այդ անիծեալ փչանքը:

—Օրհնեալ լինի Աստուած, ասաց ծերունի զօրավարը, երեսը խաչակնքելով:

—Թող մի քիչ էլ օրհնեալ լինի տէր-Աւետիքը, որ մեր գործը հեշտացրեց: Ես, իրաւն ասեմ, մի քանի րոպէ առաջ այնքան բարկացած էի նրա վրա, որ եթէ ձեռքս ընկնէր, անպատճառ մօրուքը կը կտրէի: Բայց այժմ ներում եմ նրան, թէև մեզ շատ սպասել տուեց: Հիմայ, եթէ տեսնելու լինեմ, մեծ ուրախութեամբ նրա մօրուքը կը համբուրեմ:

Մի բարեմիտ ծիծաղ անցաւ ծերունու առաքինի դէմքի վրա:

—Նա խիստ շատ արժանաւորութիւններ ունեցող մի մարդ է, ասաց նա:

—Ափսոս, որ ակերտեր է, պատասխանեց իշխանը։—Եթէ ձեր փեսան չը լինէր, ես կը ստիպէի նրան թողնել փիլոնը, բայց դուք ամբողջ տոհմով ակերտերների և Նարեկի սիրահար էք։

Ծերունի զօրավարը նկատեց, որ Բայինդուր իշխանի հետ այդ տեսակ խօսքերով ժամանակահատ լինելը վերջ չէր կարող ունենալ, այդ պատճառով, դարձաւ պէտքի գործը, հարցնելով.

—Ի՞նչ էք կարծում, մենք պէտք սպասենք միւսներին, թէ ոչ։

—Ո՞ւմ պէտք է սպասենք, պատասխանեց նա. —սպասելու ոչինչ չունենք։ Միւսներն էլ մեզ նման երկու աչքեր ունեն, ի հարկէ, կը տեսնեն բերդի մէջ պատահածը և իրանց անելիքը կը հասկանան։

—Այդ իրաւ է, բեկի բոլոր զօրապետներին յայտնի են այն նշանները, որոնց տեսնելու ժամանակ պէտք է յարձակում գործեն։ Բայց հարցը նրանումն է, թէ ով առաջ պէտք է յարձակում գործէ։

—Մենք, պատասխանեց իշխանը մի առանձին հպարտութեամբ։—Հերթը մերն է։ Մեր բանակը կանգնած է ուղիղ փորված ականի հանդէպ, որտեղից պէտք է մտնել բերդը։ Առաջ մենք պէտք է մտնենք, որ միւսների համար ճանապարհ բաց անենք։—Պարսից թագաւորի «բաժման-գիրքը» իր

ձեռքը կտրել կը տայ, եթէ մէկը համարձակվի նրանից առաջ մտնել բերդը։

Ծերունի զօրավարը համոզվեցաւ, որ հերթը իրանցն էր։ Մխիթար սպարապետը իր զօրապետների հետ բռնել էին Հալիձորի գետի վերին անցքը։ Դաւիթ-բէկը և Ներսէս եպիսկոպոսը բռնել էին Հալիձորի գետի ներքին անցքը։ Իսկ իրանց բանակը գտնվում էր Գետվայ գետի անցքի վրա, ուղիղ բերդի մէջ փորված ականի հանդէպ։ Ուրեմն առաջ իրանք պէտք է անցնէին ականնից, որ մնացած զօրքերի համար ճանապարհ բաց անէին։

—Դուք չէ՞ք կանչել տալ այստեղ «Արտաօին», հարցրեց նա ծերունի զօրավարից։

Արտաօ կոչում էր Բայինդուր իշխանը Աֆթանդիլ գնդապետին նրա դէմքի բաւական թուխ գոյն ունենալու համար։ Այդ մականունը այնքան յատկանիշ էր, որ ընդունելութիւն գտաւ բոլոր զօրքերի մէջ։

Ծերունի զօրավարը իր թիկնապահներից մէկին հրամայեց կանչել Աֆթանդիլ գնդապետին։

Երբ երիտասարդ գնդապետը յայտնվեցաւ, նրա թուխ, բայց իր գեղեցիկ գծագրութիւններով ախորժելի դէմքը փայլում էր ուրախութիւնից։ Նա արդէն գիտէր բոլորը։ Բայց ծերունի զօրավարը դարձեալ պարտք համարեց նրան ասել.

—Հասաւ այն ուրախալի ժամը, որին մենք մեծ անհամբերութեամբ սպասում էինք։ Բերդի մէջ ամեն ինչ պատրաստ է։ Այժմ պէտք է յարձակում գործել։ Մենք պէտք է անցնենք ականի միջով, որի գոյութեան պատմութիւնը ձեզ յայտնի է։ Պէտք է անցնենք առանց աղմուկի, առանց շփոթի։ Մեր խոհեմութիւնիցն է կախված գործի յաջողութիւնը։

Բայինդուր իշխանը համբերութիւն չունէր լսելու ամեն մի խրատ, ամեն մի հրահանգ, մանաւանդ երբ այդպիսիները արտասանվում էին քարոզի կամ ճառի ձևով։ Այդ պատճառով նա կտրեց ծերունի զօրավարի խօսքը, ասելով.

—Հէնց այդ խոհեմութիւն կոչված բանից, այդ երկար քարոզներից սպիտակեցան պարսից Թագաւորի «բաթման գլխի» սև մազերը։ Ո՞ր գիժը չը գիտէ, թէ պէտք չէ սկզբից աղմուկ բարձրացնել։ Մինթէ գողը, որ գիշերով մտնում է քնած քաղաքացու տունը, թմբուկ ածելով է մտնում։— Թողնենք դրանք։ Ես մի խնդիրք ունեմ առաջարկելու. դուք պէտք է թոյլ տաք ինձ, որ առաջ ես իմ մարդիկներով անցնեմ ծակից (ականից)։

—Թող այդ լինի ինձ մի ուրախչէք *) այն

*) Ուրախչէք նոյն նշանակութիւնն ունի, ինչ որ պարսից հայերը ասում են մ ու ժ տ ա լ ը ղ, այսինքն մի վարձատրութիւն, որ տալիս են աւետիք կամ ուրախալի լուր յայտնողին։

ծառայութեան համար, որ առաջ ես բերեցի ձեզ բերդում յայտնված գործերի աւետիքը։

Ծերունի զօրավարը թէև մեծ վստահութիւն ունէր Բայինդուր իշխանի քաջութեան վրա, բայց հաւատալ նրա պատերազմական զգուշութիւններին չէր կարող։ Նա իր յարձակումների մէջ շատ անգամ Քօր-օղլիի սովորութիւնն ունէր, առանց յետ ու առաջ նայելու, կայծակի նման նետվել։ Այս պատճառով բաւական մեղմութեամբ նկատեց նրան։

—Ձեզ, կարծեմ, բաւական ծանօթ չէ բերդի դիրքը։

—Բերդը այնպէս լուսաւորված է, որ կոյր մարդն էլ կարող է ամեն բան տեսնել, պատասխանեց իշխանը փոքր ինչ վրդովված ձայնով։

—Ի՞նչով է լուսաւորված։

—Կրակով։ Նայեցէք, վերջին խօսքերի հետ նա բարձրացրեց վրանի վարագոյրը։

Նրանք նայեցին։ Հրդեհի ճառագայթները ցոլանում էին շրջակայ լեռների բարձրութիւնների վրա։

—Շատ ապրի տէր Աւետիքը, ասաց նա, ձեռքից բաց չը թողնելով վարագոյրը,—տեսնո՞ւմ էք, մեզ ընդունելու համար ինչ գեղեցիկ ճրագալոյց է պատրաստել։

Զօրապետների խորհուրդը իրաւունք տուեց Բայինդուր իշխանին առաջ անցնել։ Նա այնքան

սիրելի էր իր ընկերների մէջ, որ չը կամեցան զրկել նրան այդ ուրախութիւնից: Իշխանը շնորհակալութիւն յայտնեց և հեռացաւ:

ԻԴ

Գալով իր բանակը, Բայինդուր իշխանը իսկոյն հրամայեց չուել: Երկար պատրաստութիւնների պէտք չը կար. զինուորներից ամէն մէկը գիտէր, թէ ինչ պէտք էր անել: Նրանք վաղուց պատրաստուած էին: Միայն զօրապետը հարկաւոր համարեց գրգռել նրանց ինքնասիրութիւնը, յայտնելով, որ զինուորական խորհուրդը մի առանձին պատիւ արեց նրանց, թոյլ տալով ամենից առաջ մտնել բերդը:— Այդ պատիւը մեծ է և ամենայն գովութեան արժանի, ասաց նա,—և ես յոյս ունեմ, որ դուք կապացուցանէք, որ արժանի էք այդ պատուին:

Յետոյ իր սովորական զուարճախօսութեամբ դարձաւ նա դէպի զինուորները, հարցնելով.

—Ո՞վ կայ ձեր մէջ, որ գոմէշի ուժ և դևի ճարպիկութիւն ունենայ:

Մի խումբ առաջ անցաւ: Նա ցոյց տուեց փոքրիկ թնդանօթները, ասելով.

—Մենք այնպիսի սատանայական տեղերով պիտի գնանք, որ չորքոտանին իր գլուխը կը կոտրէ. հիմա դրանց տանելը երկոտանիի գործ է. քարշ տուեցէք ձեզ հետ. դրանք մեզ շատ հար-

կաւոր կը լինին այնտեղ: Նա ձեռքը մեկնեց դէպի բերդը:

—Մեր ուսերի վրա կը տանենք, պատասխանեցին քաջերը, և աւելի քան քսան ուժեղ տղամարդիկ սկսեցին շարժել թնդանօթները, որ մի քանի օր առաջ խլել էին պարսիկներից: Նրանց թիւը չորս էր:

Իշխանը առաջ անցաւ և հրամայեց հետևել իրան: Ամբողջ զօրախումբը գնաց նրա ետևից:

Ճանապարհը, եթէ կարելի է նեղ գեծանը *) ճանապարհ կոչել, տարածւում էր Գեղվայ գետի աջ եզերքի վրայով: Մի կողմում հոսում էր գետը, միւս կողմում բարձրանում էր անտառապատ լեռը: Պէտք էր գնալ այդ լեռան կողքերովը: Ծառերի, մացառների և մօշի փշոտ պատատուկների մէջ կորած շաւիղը այնքան նեղ էր, որ հազիւ կարող էր մի մարդ միայն անց կենալ: Իսկ այդ մարդը ստիպված էր անդադար իր սրով կտրատել մացառները, որ տեղ-տեղ փակում էին անցքը: Այդ պաշտօնը կատարում էր ինքը Բայինդուր իշխանը, պարսից թագաւորի ընծայած, մի բաթմանի ծանրութիւն ունեցող թրովը: Նա գնում էր առջևից, իսկ նրա ետևից գալիս էին ուղտերի քարաւանի նման շարված

---

*) Գեծան նշանակում է սիւնեցիների բարբառում լեռների վրա կամ անտառների մէջ եղող նեղ շաւիղները. գիծ կամ գծել բառերից է:

զինուորները: Բոլորը լուռ էին. Նրանց ոտների և փշերի հետ կռւող հագուստների խշխշոցն անգամ չէր լսվում, որովհետև այդ արշաւանքը կատարվում էր մի և նոյն սարսափելի ժամում, երբ քամին կատաղաբար փչում էր ձորի միջից և իր հնչման մէջ ամեն այլ ձայներ խլացնում էր:

Երբ մօտեցան բերդին, պէտք էր բարձրանալ դէպի մի սեպացած զառիվեր, որի վրա կանգնած էր բերդը: Զինուորների ոգևորութիւնը այնքան մեծ էր, որ նրանք բոլորովին ոչնչի տեղ էին դնում քարափների ժայռոտ առապարը: Նրանց օգնում էին քարերի վրա բուսած ծառերը և թփերը մագլցելու համար:

Երբ հասան բերդի պարսպին, իշխանը կանչել տուեց այն երիտասարդին, որ ականի միջով անցնելով, բերել էր տէր Աւետիքի նամակը:

—Տղայ, անունդ ինչ է, հարցրեց նրանից:

—Ղազար:

—Եթէ Ղազար լինէր, ես քո գլուխը կտրել կը տայի:

Երիտասարդը սարսափեց զօրավարի օտարոտի նկատողութիւնից:

—Դէ, առաջ անցիր, մեզ ցոյց տուր այն ծակը, որ բաց են արել պարսպի տակով:

Երիտասարդը հասկացաւ, որ ականի մասին է խօսում, լռութեամբ առաջ անցաւ և սկսեց առաջնորդել նրան:

Պէտք էր մի փոքրիկ պտոյտ գործել պարսպի շուրջը և հասնել ականի տեղը: Թէև հրդեհի ճառագայթները բաւական լոյս էին տարածել բերդի շրջակայքում, բայց անտառի խտութեան մէջ, եթէ ցերեկով ևս մարդիկ անցնելու լինէին, դարձեալ ոչ ոք չէր տեսնի նրանց: Այստեղ տիրում էր խաւարի մշտական թագաւորութիւնը: Եւ տէր Աւետիքի ռազմագիտական հանճարը ընտրել էր այդ կողմը միայն իր փորվածքի համար:

—Ահա այստեղ է, կանգնելով ցոյց տուեց առաջնորդը:

—Դու քո պարտքը կատարեցիր, հիմա հերթը իմն է, ասաց իշխանը:—Դէն գնա:

Ականի մուտքը ծածկված էր մամուռով և թարմ խոտերով, այնպէս բնական կերպով, որ բնաւ չէր զանազանվում լեռան խոտով ծածկված մակերևոյթից: Դուրս բերած հողը ածել էին գետի մէջ:

Բայնդուրի իշխանը ձեռքերով յետ քաշեց խոտերն ու մամուռները, քանի րոպէից յետոյ բաց եղաւ ստորերկրեայ քարանձաւի բերանը: Նա երեսը խաչակնքեց և ներս մտաւ: Բոլորը հետևեցին նրա օրինակին:

—Տղերք, գլուխներդ ցած պահեցէք, շատ մի բարձրացրէք, ասում էր նա.—վերևից հող է թափվում:

Յետոյ ինքն իրան ասաց.

—Այդ տէր-տէրները այնքան թաղելու սովորած են, ինչ որ փորել տալու լինեն, անպատճառ գերեզմանի նմանութիւն կունենայ։

Նա խարխափելով առաջ էր գնում, և միւսները հետևում էին նրան, որպէս խլուրդները իրանց ստորերկրեայ մթին որջի մէջ։

Երբ դուրս եկան սրահից, իշխանը նայեց իր շուրջը, տեսաւ՝ այնտեղ կանգնած էր մարդկների մի խումբ։

—Օ՛հ, էդ էր պակաս, ասաց նա, կարծելով, թէ պարսիկներ են։

—Տղե՛րք, պատրաստվեցէ՛ք, ձայն տուեց նա իր զինուորներին։

—Հանգիստ կացէ՛ք, այդ մենք ենք, խօսեց խումբից մէկը և տէր Աւետիքը առաջ եկաւ։

Նա գրկեց իշխանին և համբուրվեցան։

—Ի՞նչպէս է, լաւ եմ սարքել, հարցրեց քահանան։

—Երբ տէրտէրը զինուոր է դառնում, այն ժամանակ իր փարախուէն պէտք է հաւաքէ *) սատանան, պատասխանեց իշխանը ծիծաղելով։ Յետոյ իր խօսքերին աւելի լուրջ կերպարանք տալով, ասաց.

—Լաւ էք սարքել, բայց դեռ պարծենալու ժամանակ չէ. դու ինձ այն ասա, թէ գործերը ինչ դրութեան մէջ են, միայն կարճ-կտրիր, երկար լսելու համբերութիւն չունեմ։

*) Փարախուէն հաւաքելը ժողովրդի լեզւում կը նշանակէ խոյս տալ, գործից հեռանալ։

Քահանան սկսեց հաղորդել իր համառօտ զեկուցումը.

—Ամրոցը խօ տեսնում էք ինչ դրութեան մէջ է։

—Այդ ես տեսնում եմ, դու այն ասա, ինչ որ չեմ տեսնում։

—Խանի զէնքերի պահեստը գրաւած է, առաջ տարաւ քահանան.—տեղացի հայերը զինված են. հայոց փողոցները ամրացրած են պատնէշներով. նրանք կը պաշտպանեն իրանց ընտանիքը մահմետականների վրէժխնդրութենից։

—Խանը ինչ է շինում։

—Խանը պատրաստվել է իր զինուորներով ընդդիմադրել։ Իսկ մօլլաների գլխաւորը առաջնորդում է ամբոխին։

Վերջին խօսքը փոքր ինչ դժուարութեան մէջ գցեց իշխանին։

—Երբ հոգևորականը բանի մէջ է մտնում, գործը ծանր կերպարանք է ստանում, ասաց նա։

—Հոգ չէ, պատասխանեց տէր Աւետիքը.—դուք հոգևորականին թողեցէ՛ք, որ հոգևորականը պատասխանէ։

—Այսինքն դու։

—Այո՛, ես։

Մինչև զբաղված էին այդ խօսակցութիւններով,

Բայինդուր իշխանի զօրքի մնացած մասն էլ դուրս եկաւ ականի միջով:

—Հիմայ գիտէք ինչ պէտք է անել, տէր հայր, ասաց իշխանը.—այդ ծակը խիստ նեղ է. մինչև Մէլիք-Փարսադանի և Ալթմանդիլի զինուորները դրա միջով անցկենալու լինեն, բաւական ժամանակ կը կորչի: Պէտք է քանդել տալ պարիսպը:

—Մեծ դժուարութիւն չունի, ես այս րոպէիս կը հրամայեմ, որ քանդեն, պատասխանեց քահանան:—Գործիքներ այստեղ կան. ականափորների բահերը, բրիչները դեռ այստեղ են մնացել:

Զինուորները վրա վազեցին, սկսեցին քանդել պարիսպը: Քարը, կիրը, որ արհեստի շնորհիւ միացել, երկաթի ամրութիւն էին ստացել, նրանց կատաղի հարուածների տակ փշրվում էին և թափվում էին ցած:

—Ես մոռացայ հարցնելու, կրկին դարձաւ իշխանը դէպի քահանան.—որտեղ են Շահումեանը, Խորէնը, Բալին:

—Շահումեանը և Բալին կարգված են առաջնորդելու տեղացի հայերին, իսկ Խորէնը զբաղված է մի այլ գործով:

—Ի՞նչ գործով:

—Նա պիտի ազատէ խանի կնիկներից մէկի կեանքը:

—Այդ լաւ է, կնոջ գործը վարդապետին յանձնել:

—Այդ կինը, մանաւանդ նրա աղախինը, բաւական օգնեցին մեզ:

—Գեղեցիկ է:

—Ես չեմ տեսել:

—Դու ինչ գիտէիր, հաղորդեցիր ինձ, տէր հայր, խօսքը փոխեց իշխանը.—հիմա մնում է ինձ յայտնել քեզ բէկի հրամանը.

—Յայտնեցէք:

—«Չը խղճալ, կոտորել անխնայ կերպով»:

—Ես առանց այդ հրամանի նոյնը կանէի, պատասխանեց քահանան:

—Շատ ապրես, տէր հայր, խաչը վկայ, օրինաւոր մարդ ես եղել, ես այդ չէի իմանում: Բեր ձեռքդ համբուրեմ:

Քահանան յետ քաշեց իր ձեռքը, նշանակութիւն չը տալով իշխանի կատակներին:

Ականը փորված էր բերդի այն կողմում, որ համարեա թէ ամայի էր: Այստեղ կային բազմաթիւ հին շինուածքների աւերակներ, և աւելի ոչինչ: Քանդված եկեղեցին ցոյց էր տալիս, որ մի ժամանակ բերդի այս կողմում կար հայոց մի ամբողջ թաղ: Որ ժամանակ, և ինչ հանգամանքներից ստիպված, նրանք թողեցին իրանց բնակարանները,—յայտնի չէր: Այդ աւերակների մէջ կարող էին հազարաւոր զինուորներ թաքնվել և անյայտ մնալ: Այդ կէտից նայելով, տէր Աւետիքը ընտրել էր բերդի ամենահիւանդոտ տեղը:

Հետուից լսելի եղան խառնաձայն աղաղակներ, որոնց հետևեցին հրացանի ձայներ։

—Այդ ինչ ձայներ են, հարցրեց Բայինդուր իշխանը տէր Աւետիքից։

—Երևի, մահմեդականները յարձակվեցան հայոց թաղի վրա, պատասխանեց նա, աւելի ուշադրութեամբ ականջ դնելով ձայներին։—Այո, յարձակվեցան։ Նրանք սովորութիւն ունեն յարձակումից առաջ վայրենի աղաղակներ բարձրացնել։

—Հայերը կարող են ընդդիմադրել։

—Երկար, ի հարկէ, չեն կարող, բայց մինչև մեր հասնելը, կը դիմանան։

—Ուրեմն էլ ինչու ենք սպասում, հարցրեց իշխանը։

—Սպասում ենք, որ Մէլիք-Փարսադանը և Աւթանդիլ գնդապետը գան։

—«Մինչև Շուշանը կը զարդարվի, պատարագը կարձակվի»... պատասխանեց իշխանը։—Մինչև նրանց գալը, գուցէ հայերին կը կոտորեն։

—Հրամայեցէք թմբուկները ածեն. մենք նրանց աղաղակներին կը պատասխանենք մեր թմբուկներով։ Դա բաւական սարսափ կը ձգէ նրանց վրա։

—Դրանով բան չի դառնայ։ Այդ ֆանդերը ես քեզանից լաւ եմ ճանաչում, տէր հայր։ Ուրացողները արջին խփելու ժամանակ սկզբից «հուշա»

չեն անում։ *) Յանկարծակի զարկը աւելի սոսկալի է լինում։

Նա հրամայեց առաջ բերել թնդանօթները։

—Խիստ զուարճալի բան է այդ հրանօթները գործածել ամբոխով լի փողոցների մէջ։ Այնպէս չէ, տէր հայր, հարցրեց նա, ձեռքը քսելով նրանցից մէկի փողին, նոյն գգուանքով, որպէս մի սիրահար փայփայում է իր նազելի եարին։—Զուարճալի է, կրկնեց նա,—այնպէս հնչում է, որպէս սուր մանգաղը խիտ խոտաբոյսերի մէջ։

Մինչ դրանք զբաղված էին այդ պատրաստութիւններով, յայտնվեցան Մէլիք-Փարսադանը և Աֆթանդիլ գնդապետը իրանց զինուորներով։ Նրանք համարձակ անցան քանդված պարսպի միջով։

Ծերունի զօրավարը շատ ուրախացաւ, տէր Աւետիքին ողջ և առողջ գտնելով։ Տէր հայրը նրա փեսան էր, այսինքն դստեր ամուսինը։

—Զօրանաս, ասաց նրան դիմելով,—դու իմ երեսը սպիտակացրիր թէ բէկի և թէ Ներսէս սրբազանի մօտ։

Բայինդուր իշխանը, որ չէր կարող այդ տեսակ քնքշութիւնների համբերել, ընդհատեց նրանց խօսքը, ասելով.

—«Ճուտը աշնանը կը համրուեն»... Հիմա գնա

---

*) Հուշա անել՝ հչ. խրտնեցնել։

չնորհակալութիւնների ժամանակ չէ։ Սպասեցէք, մինչև տեսնենք, այդ ղալմաղալները ինչով կը վերջանան։ Լսում էք պարսիկների աղաղակները։ Հայոց Թաղի վրա կրակ են թափում։

Այժմ աղաղակները աւելի կատաղի կերպով էին հնչում, բայց հրացանների ձայնը երբեմն որոտում էր, երբեմն ընդհատվում էր։ Ծերունի զօրավարը ուշադրութեամբ հետևում էր բոլոր հնչումներին։ Նրա ականջները այն աստիճան սովորած էին այդ տեսակ ձայների, որ համարեա աչքերի տեղ էին ծառայում։

Նա կռւի ժամանակ նոյնքան սառնասիրտ էր, նոյնպէս չէր շտապում, որպէս չէր շտապում, երբ խորին ոգեւորութեամբ կարդում էր իր Նարեկը։

Այժմ լսելի եղան խուլ բոմբիւններ, որ աւելի նման էին թնդանօթների որոտմունքին։ Ծերունի զօրավարը սկսեց աւելի ուշադրութեամբ հետեւել նրանց։

—Դու սխալվում ես, Բայինդուր, դարձաւ նա դէպի իշխանը.—պարսիկները չեն, որ կրակ են թափում, այլ այդ մերոնք են կրակ թափողները։

—Մերոնք,—այսինքն ո՞վքեր։

—Հալիձորի գետի վերին կողմից Մխիթար սպարապետը, իսկ ներքին կողմից բէկը։

—Այդ միայն սատանան կարող է ջոկել քրիստոնեայի և մահմեդականի թնդանօթի ձայների

զանազանութիւնը, պատասխանեց Բայինդուր իշխանը մրմռթալով։

—Մարդն էլ կարող է ջոկել այդ, ասաց ծերունի զօրավարը ժպտալով.—միայն հարկաւոր է դրա համար սովոր լինել, ծանօթ լինել նրա լեռների դիրքի և բնաւորութեան հետ. այն ժամանակ հեշտ կը լինի հասկանալ, թէ իւրաքանչիւր հնչիւն ինչպէս է տարածվում, որպիսի արձագանքներ է արձակում։ Լաւ ականջ դրեցէք, թնդանօթների ձայնը բոլորովին բերդի դիմացն է գալիս, բայց մեզ այնպէս է թւում, որ բերդի ներսիցն է։

—Ուրեմն բէկը և Մխիթար սպարապետը յարձակում են գործում առանց մեզ իմացում տալու։

—Նրանք ինձ իմացում տուեցին։

—Ե՞րբ։

—Մի քանի րոպէ նրանից յետոյ, երբ դու բաժանվեցար ինձանից և սկսեցիր դիմել դէպի ականը։

—Իսկ մեր շարժման մասին տեղեկութիւն ունե՞ն։

—Ի հարկէ ունեն. ես հէնց նրանց ուղարկած սուրհանդակների բերանով տեղեկութիւն տուեցի։

—Հիմա հասկանում եմ, որ սիւնեցու ականջները ուրիշ տեսակ կազմված են, քան թէ մեզ նման մեղաւորներինը..., պատասխանեց հեգնութեամբ իշխանը։—Այսու ամենայնիւ, այդ աւե-

րանների մէջ մենք երկար սպասելու գործ չունենք. շտապենք, եթէ չենք ցանկանում, որ խեղճ հայերի թաղը դրանց նման աւերակ դառնան։ Բէկը կամ Մխիթար սպարապետը հեշտութեամբ բերդը առնել չեն կարող. իսկ մենք բերդի միջումն ենք։ Մենք պէտք է բաց անենք նրանց առջև դռները։

Վիճաբանութիւնը դադարեց։ Այդ խօսքերից յետոյ կարգադրեցին իրանց գործողութեան եղանակը, թէ ով որ կողմով պէտք է առաջ գնայ։ Զինուորները երեք մաս բաժանվեցան. մէկ մասին պիտի առաջնորդէր Աֆթանդիլ գնդապետը տէր Աւետիքի հետ, միւս մասին պէտք է առաջնորդէր Մէլիք-Փարսադանը, իսկ երրորդ մասին Բայինդուրը։

ԻԵ

Ջէվու (գեղի) բերդը հայոց Բաղաց թագաւորների բազմաթիւ բերդերից մէկն էր։ Այդ տոհմի վերջին երկու անբախտ թագաւորները, երկու եղբայրներ՝ Գրիգոր և Սմբատ անժառանգ էին։ Գրիգորը միայն ունէր մի դուստր Կատա անունով։ Եւ որպէս զի իր թագաւորութիւնը չընդհատվի, նա հրաւիրեց Խաչէնի Ջալալեան իշխաններից մի երիտասարդ Հասան անունով, տուեց Կատային նրան կնութեան և նրա հետ նուիրեց իր փեսային Բաղաց իշխանութեան աթոռը։ Ցուսով երկու

եղբայրներն էլ վախճանվեցան, առանց տեսնելու իրանց թագաւորութեան կործանումը։

Այդ միջոցներում արևելքում զօրացաւ մանգոլական տարրը և հեղեղի նման սկսեց տարածվել դէպի ամեն կողմ։ Երիտասարդ Հասանը այնքան քաջութիւն չունեցաւ, որ դէմ դնէր թշնամու արշաւանքներին. թողեց իր երկրի բերդերն ու ամրութիւնները անտէր, և իր անձը ու ընտանիքը միայն ազատելու համար, հեռացաւ իր հայրենիքը՝ Խաչէն։ Եւ այսպէս Անդոկի նման սարսափելի հսկայի թագաւորութիւնը վերջացաւ Հասանի նըման երկչոտ թզուկով։

Այնուհետև Ջէվուն, ինչպէս կողմանի միւս բերդերը, փոխնիփոխ ընկաւ երբեմն պարսից, երբեմն արաբացոց և երբեմն թիւրքաց իշխանութեան ներքոյ։ Հայ բնակիչները սկսեցին ցրիւ գալ, իսկ նըրանց փոխարէն հետզհետէ զետեղվեցան մահմեդականները։

Դաւիթ-բէկի օրերում Ջէվուն ունէր մօտ հինգ հազար տուն բնակիչներ, որոնց թւում հայերը խիստ չնչին փոքրամասնութիւն էին ներկայացնում։

Բայց երբ խանը լսեց բէկի արշաւանքը դէպի իր բերդը, նա հաւաքեց շրջակայ թիւրքական գիւղերի բնակիչներին ևս բերդի մէջ, այնպէս որ, պաշարման ժամանակ այնտեղ կար մահմեդականների բաւական մեծ բազմութիւն։

Երկու բան կարող է մահմեդականին քաջութիւն տալ, սիրտ տալ թշնամու հետ կռուելու համար. մէկը, աւարառութեան ցանկութիւնը, միւսը, կրօնական մոլեռանդութիւնը: Պատերազմական մի այլ իդէալ անծանօթ է նրան: Այդ երկու պայմաններն են, պաշարված բերդի մահմեդականների վերաբերութեամբ, տնօրինված էին: Խանը իրաւունք էր տուել նրանց կոտորելու, կողոպտելու իրանց դրացի բոլոր հայերին: Իսկ մոլլաների գլխաւորը, որպէս վարձատրութիւն այդ բարեպաշտութեան համար, խոստացել էր Մուհամմէդի դրախտը:

Այդ էր պատճառը, երբ խանը հրամայեց վեզիրին, որ ածել տայ պատերազմական թմբուկները, այդ միջոցին, հրդեհով բռնված ամրոցի հանդէպ, հրապարակի վրա, մի քանի րոպէի մէջ հաւաքվեցան նրա բազմաթիւ զինուորները, որոնք առաջ բոլորովին վհատած և սրտաբեկ էին եղած: Նրանք կրկին վստահութիւն և խրախոյս ստացան, երբ լսեցին խանի քաջալերական խօսքերը: Իսկ երբ մոլլաների գլխաւորը իր չաուշների բերանով յայտնեց Աստուծոյ և նրա մարգարէի հրամանը, ամբողջ մահմեդական ամբոխը ոգևորվեցաւ կրօնական խաւար յափշտակութեամբ, և մի մարդու նման, ոտքի ելաւ կռուելու «անհաւատների» դէմ:

Խանը վեզիրի հաղորդած տեղեկութիւնները յուսահատական համարելով, աւելի ճիշտ ասած,

չը հաւատալով նրան, այժմ դարձաւ դէպի իր զօրքերի գլխաւոր հրամանատարը, հարցնելով.

—Աքպար, ինչ ես կարծում, որքան զինուորներ կունենայ բէկը:

—Իմ տէրը թող ողջ լինի, պատասխանեց զօրապետը.—դաւուլը որքան զինուորներ կարող է ունենալ. շատ-շատ՝ մի քանի հարիւր հոգի: Բայց բանը թւի մէջը չէ. դիցուք թէ ունենայ մի քանի հազար, մի քանի բիւր զինուորներ: Բայց միթէ ճանճերի բազմութեանը կարելի է նշանակութիւն տալ:

Բռնակալները այն աստիճան սովորած են լինում չողոքորդութիւնների, որ թէև հասկանում են չողոքորդի ստութիւնը, խաբէութիւնը, բայց դարձեալ սիրում են լսել նրանց: Դա մի ախտ է, նոյն մոլութիւնների նման, երբ մէկը թէև հասկանում է, որ ափիոնի կամ արաղի գործածութիւնը թունաւորում է, ոչնչացնում է իր կազմուածքը, բայց դարձեալ սիրում է գործ ածել:

—Ուրեմն յաղթութիւնը մեր կողմն է, ասաց խանը:

—Տարակոյս չը կայ, պատասխանեց զօրապետը մի առանձին արհամարհական ժպիտով:—Թող իմ տէրը միայն հրամայէ իր ծառային, այն ժամանակ կը տեսնէ, թէ Աքպարը ինչ խաղ կը խաղայ այդ անհաւատների գլխին:

—Զօրանաս, Աքպար, ասաց խանը գոհունա-

կութեամբ.—Ես կը վարձատրեմ, առատութեամբ կը վարձատրեմ քո քաջութիւնը։

Վէզիրը քթի տակից ծիծաղելով, լսում էր այդ խօսակցութիւնը։ Իսկ մնապարծ Աքպարը աւելի ևս փքեց գլուրահաւան խանին, ասելով.

—Տէր իմ, ձեր սրի զօրութիւնից լեռները դողում են, իսկ ծովերը սոսկալով ալեկոծվում են։ Մարդը ինչ է, որ կարողանայ դիմանալ ձեր ամենակարողութեան առջև։

Զինված բազմութիւնը հրապարակի վրա աւելի և աւելի ստուարանում էր։ Նրանց հետ խառնվում էին և այնպիսինները, որ զէնքեր չունէին։ Խանը հրամայեց վէզիրին, որ բաց անել տայ զէնքերի պահեստի դուռը և նրանց զէնքեր բաժանել։

—Այնտեղ այլ ևս զէնքեր չեն մնացել, ասաց նրան վէզիրը։

—Ի՞նչպէս չեն մնացել, հարցրեց խանը վրդովվելով։

—Մեր զէնքերը այժմ մեր թշնամու ձեռքումն են, պատասխանեց վէզիրը սառնասրտութեամբ։

—Ի՞նչպէս մեր թշնամու ձեռքումն են, հարցրեց խանը կատաղելով։

—Նրանք յափշտակել են մեր զէնքերը։

—Դու ամէն ինչ գիտես, վէզիր, բայց յայտնում ես ինձ միայն այն ժամանակ, երբ գործողութիւնը արդէն կատարված, վերջացրած է։ Այդ ինչ է նշանակում։

—Այդ այն է նշանակում, որ մեր թշնամին (թէև Աքպարը նրան ճանճերի հետ է համեմատում) այնքան խորամանկ է, այնքան ճարպիկ է, որ ժամանակ չէ տալիս մեզ նախատեսնելու, թէ ինչ է ցանկանում անել ինքը։ Մենք հասկանում ենք այն ժամանակ միայն, երբ գործը կատարած է լինում։

Աքպարը, որ վաղուց ոխ ունէր վէզիրի հետ, օգուտ քաղելով խանի բարկութիւնից, խօսեց.

—Ես կարծում եմ, որ տէր վէզիրի համար շատ դժուար չէր լինի թշնամու գործողութիւնները նախատեսնել, եթէ նա աչքերը չը փակէր, որ թշնամին իր ցանկացածը անի։ Այդ դէպքում, ի հարկէ, ճանճն էլ կարող է մի բան անել։

—Դու զրպարտիչ ես, Աքպար, պատասխանեց նրան վէզիրը։

—Դու դաւաճան ես, վէզիր, պատասխանեց նրան Աքպարը։

Պետական երկու մեծ մարդիկը, վէզիրը և զօրքերի գլխաւոր հրամանատարը, սկսեցին միմեանց նախատել։ Այդ բանակռիւը կատարվում էր հրապարակի վրա, այն րոպէում, երբ մի կողմում այրվում էր ամրոցը, իսկ միւս կողմից, լսելի էին լինում թշնամու հրանօթների որոտմունքները։ Խանը արտաքսեց Աքպարին, և դառնալով իր թիկնապահներին, հրամայեց.

—Տարէ՛ք դրան, բանտարկեցէք, ես առաւօ-

տեսան, հէնց այդ հրապարակի վրա, դրան գլխատել կը տան:

Զօրքերի գլխաւոր հրամանատարի ուրախութեանը չափ չը կար. Նա յաղթեց իր թշնամուն. վէզիրին տարան:

Ճանապարհին իր մտքումը ասաց նա. «եթէ մինչև առաւօտ դու կենդանի մնալու լինես, մեռա չանէի, ինձ գլխատել տուր»...

Յետոյ խանը դառնալով դէպի չողոքորթը ու զրպարտիչը, ասաց նրան.

—Քեզ, Աքբար, այս րոպէից վէզիր եմ նշանակում: Դու կը մնաս մի և նոյն ժամանակ քո հրամանատարութեան պաշտօնի մէջ:

Շողոքորթը մինչև գետին խոնարհվեցաւ և գլուխ տուեց, ասելով.

—Իմ հոգին և իմ արիւնը նուիրված է իմ տիրոջը, ես նրա փառքի համար պիտի գործեմ և նրա մեծութեան համար պիտի աշխատեմ:

Նոր վէզիրը և հին հրամանատարը սկսեց կարգի դնել զօրքերը: Նրանք զէնքեր ունէին, և որի մօտ մի զէնք աւելորդ էր, առնում էր, տալիս էր չունեցողին: Մի քանի րոպէի մէջ գունդերը պատրաստվեցան և նրանց վրա զօրապետներ կարգվեցան:

Թշնամու թմբուկների ձայներին այժմ աւելի սաստկութեամբ փոխարինեցին հրանօթների ձայները: Հեռուից կրակ էին թափում: Խանը ստիպ-

ված էր թողնել ամրոցը հրդեհի կամքին և մի կրակից դիմել դէպի միւս կրակը: Նա ամենևին չը մտածեց, նա, կարծես, մոռացել էր, որ հրդեհի բոցերի մէջ մնում են նրա բազմաթիւ կնիկները, նրա զաւակները...

Նա օգնութեան կանչեց Աստծուն ու նրա մեծ մարգարէին, յետոյ հրամայեց զօրքերին, որ առաջ խաղան:

Խանը, որքան ուրիշ բաներում տգէտ էր, այնքան պատերազմական գործի մէջ հմտութիւն ունէր: Նա նկատեց, որ թշնամու հրանօթները զանազան կողմերից էին կրակ թափում.—բերդի դրսից և բերդի ներսից: Այդ պատճառով, իր զօրքերը մի քանի մասերի բաժանելով, առանձին զօրապետների առաջնորդութեամբ, ուղարկեց նրանց հանդէպ: Իսկ ինքը իր թիկնապահներով և մի փոքրիկ խմբի հետ մնաց, որ վերահսկէ այլ և այլ կէտերում կատարված գործողութիւնների վրա:

Ամբողջ բերդաքաղաքը ծխում էր վառօդի մուխի մէջ: Այդ աղէտալի գիշերը յիշեցնում էր չարշամբէի *) այն հանդիսաւոր գիշերներից մէկը,

*) Չարշամբայ—կամ չհարշամբայ նշանակում է չորեքշաբթի: Պարսիկների մէջ դեռ մնացել է վաղեմի սովորութիւնը, երբ մօտենում են իրանց տարեմուտին (նօվրուզ) վերջին ամբողջ ամսայ ընթացքում, իւրաքանչիւր չորեքշաբթի գիշեր, հրավառութիւնների և հրացանաձգութիւնների հանդէս են կատարում կտուրների վրա:

երբ թէ հարստի ապարանքի և թէ աղքատի խրճթի կտուրների վրա կրակներ են վառվում, և ամեն տանիքից, ամեն լուսամուտից հրացաններ են արձակվում:

Մօլլաների գլխաւորը մահմեդական ամբոխի հետ արդէն յարձակվել էին հայոց թաղի վրա: Նրանք թնդանօթներ չունէին, զինված էին հրացաններով, ատրճանակներով և խէնջարներով:

Խանը իր թիկնապահների հետ նախ դիմեց դէպի նրանց կողմը, տեսնելու, թէ ամբոխը ինչպէս է գործում: Այստեղ կռիւը գտնվում էր իր զարհուրելի կերպարանքի մէջ: Փողոցների լուսաւորութիւնը այդ ժամանակներում դեռ սովորութիւն չէր: Խաւար գործողութիւնը կատարվում էր գիշերային խաւարի մէջ, որը մի վայրկենական լուսաւորութիւն էր ստանում, երբ հրանօթները կրակ էին թափում: Նրանց լոյսի հետ խաւարում էր հարիւրաւորների կեանքը…

Քամին, սոսկալի փոթորիկը, որ մի քանի ժամ առաջ կատաղաբար փչում էր, այժմ համարեա թէ դադարած էր: Նա տեսնելով մարդիկների բարբարոսութիւնը, մեղմացրեց իր կատաղութիւնը:

Խանի թիկնապահների թւում գտնվում էր նրա մերձաւոր ազգականներից մէկը, որին կոչում էին Հաջի-Ֆարաջ: Նա տեսնելով, որ իր տէրը անձնավստահ կերպով առաջ է մղվում, զգուշացրեց նրան, ասելով.

—Խան, ի զուր էք մտնում այդ կրակների մէջ:

—Ես ցանկանում եմ աւելի մօտից տեսնել կռիւը, պատասխանեց նա, ուշադրութիւն չը դարձնելով:

—Մօտ գնալ անհնարին է. դուք ի զուր ձեր անձը վտանգի կը ենթարկէք: Ահա այստեղից ևս կարելի է շատ բան տեսնել:

Նա ցոյց տուեց մի բարձրաւանդակ, որ կազմվել էր այնտեղ ածած աղբերից: Խանը բարձրացաւ նրա վրա: Այստեղ հաւաքված էին անմաքուր բերդաքաղաքի անմաքրութիւնները:

Դէպքերը շատ անգամ զարմանալի կատակներ են պարունակում իրանց մէջ, և ամենահասարակ իրողութիւնը արտայայտում է մի խորին, փիլիսոփայական միտք: Իշխանի հոյակապ ամրոցի կողքին տեսնում ես աղբանոց: Նրա չքնաղազարդ դահլիճների հանդէպ՝ ողորմելի խրճիթներ, աղքատութիւն: Մէկը վայելում է, հազարաւորները տուժում են:—Դա արևելքի և արևելեան իշխանութեան ճիշտ նկարագիրն է: Դա բռնութեան և ստրկութեան անհամեմատ հակապատկերն է:

Դէպքերը այժմ դուրս-քաշեցին բռնակալին իր փառաւոր ամրոցից և կանգնեցրին աղբանոցի բարձրութեան վրա:—Դրա մէջն է բուն կատակը, անցքերի հետաքրքիր խաղը: Նա իր բարձրաւանդակից նայում է, թէ ինչպէս է կռւում, ինչպէս է արիւն թափում ժողովուրդը: Բայց ում համար:

—Նոյն անձի համար, որ իրան կեղեքում է, տարկացնում է: Ահա դրա մէջն է ամբոխի ամենագլխաւոր յիմարութիւնը...

Մի աննշան փոքրամասնութիւն բողոքում էր բռնութեան դէմ, իսկ խաւար մեծամասնութիւնը աշխատում էր խեղդել նրա բողոքը: Ինչու:—Որ այն մէկ անձի իշխանութիւնը պահպանէ, որ նա աւելի երկար ժամանակ ունենայ ճնշելու, կեղեքելու և իր ստրուկների արիւնը ծծելու...

—Նայեցէք, խան, ցոյց էր տալիս Հաջի-Ձաբաջը կատարվող բարբարոսութիւնները:—Մերոնք աշխատում են անց կենալ, բայց փողոցի մուտքը բռնված է պատնէշով: Հայերը պատնէշի ետևից հրացաններ են արձակում: Նրանք արձակում են և կտուրների վրայից: Տեսէք այդ անզգամ կնիկներին, ինչպէս օգնում են իրանց տղամարդերին: Նրանք առնում են դատարկ հրացանները, արագութեամբ լցնում են, և շուտով տալիս են տղամարդերի ձեռքը նետելու համար: Ո՞վ տուեց դրանց այդքան զէնքերը:

Խանը ոչինչ չը պատասխանեց:

—Նայեցէք, խան, ասաց Հաջին, այժմ մի առանձին ուրախութեամբ առաջ տանելով իր նկատողութիւնները:—Մերոնք խորտակեցին պատնէշը...անցկացան...: Հայերը խոյս են տալիս...: Ա՜խ, թշուառականներ... նրանք դարձեալ կանգնեցին... մտան մի այլ պատնէշի ետևում... այժմ կրկին պաշտպանվում են...

Օդի մէջ լսելի եղան խուլ որոտմունքներ, որոնց հետևեցին խառնաշփոթ աղաղակներ: Մահմեդական ամբոխը սկսեց սարսափելի աղմուկով դուրս փախչել հայոց թաղից:

—Հեռանանք, խան, գոչեց նրա ու սակաւ զարհուրած խօսակիցը:

—Այդ ինչ պատահեց, հարցրեց խանը, տեղից չը շարժվելով:

—Ո՞վ գիտէ, ինչ պատահեց: Մերոնք փախչում են: Հեռանանք, եթէ չենք ցանկանում ընկնել այդ կատաղի փախստականների ոտքերի տակ:

—Ի՞նչ պատահեց, կրկին հարցրեց խանը:

—Միթէ չէք տեսնում, պատասխանեց մի այլ թիկնապահ:

—Ես ոչինչ չեմ տեսնում:

Եւ իրաւ, նա ոչինչ չէր տեսնում: Բարկութիւնը, վրդովմունքը զրկել էին նրա աչքերը տեսութիւնից: Նա միայն լսո՜ւմ էր խառնաշփոթ, յուսահատական աղաղակներ, և աւելի ոչինչ:

—Մերոնց վրա զօրքեր եկան, ասաց թիկնապահը,—երևի, թշնամու զօրքերը: Մերոնց թնդանօթները են բռնել, այդ պատճառով փախչում են:

—Որտեղից կարող էին մտնել թշնամու զօր-

քերը, հարցրեց Խանը, չը հաւատալով իր ականջներին.

—Այդ Աստուած գիտէ, պատասխանեց Թիկնապահը:—Երբ Աստուած բարկանում է մարդիկների վրա, գետնի տակիցն էլ կրակ է դուրս բերում, աստղերի մօտիցն էլ կրակ է ցած թափում...

Խանը մտածեց իջնել իր բարձրաւանդակից: Նրան տիրեց երկիւղի նման մի զգացմունք, և անվեհեր սիրտը սկսեց սաստիկ բաբախել:

Սարսափած ամբոխը փոթորկի նման յետ էր մղվում: Յանկարծ փոթորիկը կանգնեց, անշարժ մնաց, կարծես թէ, նա ճանապարհ չէր գտնում իր հոսանքի համար:

—Այդ ինչու կանգնեցին, երևի, ընդդիմադրում են, հարցրեց Խանը:

—Ոչ, փողոցի միւս ծայրից ուրիշ զօրք յայտնվեցաւ, ասաց Հաջին:—Մերոնց ճանապարհը կտրեցին... մերոնք այժմ գտնվում են երկու կրակների մէջ... առջևից և ետևից... Դրա համար էլ չը գիտեն, թէ դէպի ո՛ր կողմը փախչեն...

Թնդանօթները այժմ սկսեցին աւելի մօտից արձակել: Ամեն մի արձակման րոպէում լուսաւորվում էր փողոցի բաւական ընդարձակ տարածութիւնը: Այդ սոսկալի լուսաւորութեան մէջ Խանը նշմարում էր դիակների կոյտերը, նշմարում էր, թէ որպէս գնդակահար մարդիկ, արմա-

տախիլ եղած ծառերի նման, տապալվում էին մէկը միւսի վրա:

—Ա՜խ, որքան մարդիկ են ընկած... բացականչեց նա ողբալի ձայնով:—Ո՞րտեղից ներս մտան այդ անհաւատները...

Նրան ոչ ոք չը պատասխանեց, որովհետև ոչ ոք չը գիտէր, թէ թշնամին որտեղից ներս մտաւ:

—Մարդիկ հիմա սկսեցին փախչել կտուրների վրայով, նկատեց թիկնապահներից մէկը:

—Ի՞նչպէս են բարձրանում կտուրների վրա, հարցրեց Խանը:

—Փողոցի պատերը տեղ-տեղ խփած ցած են:

Թնդանօթներ արձակողը Բայինդուր իշխանի զօրախումբն էր: Իսկ նրա հակառակ կողմից ժողովրդին երկու կրակների մէջ դնողը Աֆթանդիլ գնդապետն էր:

Մի քանի կէտերի վրա յայտնվեցան հրդեհի նշաններ:

—Շտապենք, գոչեց Խանը:—Պէտք է դէպի այս կողմը դարձնել մեր զինուորներին: Շուտով անհաւատները ամբողջ բերդը կը ոչնչացնեն:

Հրդեհի նշանները այժմ աւելի պարզ կերպով էին երևում: Զարհուրած բնակիչները չը գիտէին ուր փախչել:

Խանը և իր թիկնապահները ընտրեցին դատարկ, մթին փողոցներից մէկը, և սկսեցին առաջ վազել, որ զօրքը օգնութեան կանչեն: Զօր-

քը այդ ժամանակ, բերդի մի այլ կողմում, նոյնպէս թշնամու հետ գործ ունէր:

Խանի ուշադրութիւնը գրաւեց խաւարի միջից մի խօսակցութիւն. նա իր քայլերը դանդաղացրեց:

—Թող անիծվի այսպիսի խանը, ասում էր ձայներից մէկը:—Եթէ չէր կարող թշնամուն դէմ դնել, էլ ինչու մեզ ձգեց այդ կրակի մէջ...

Կարծես, մի սուր ցցեցին խանի սրտում:

—Մայրիկ, կոչեց մի երեխայական ձայն.—ինձ գրկիր, ես յոգնեցայ...

—Ի՞նչպէս գրկեմ, զաւակս, պատասխանեց մայրը.—քո փոքրիկ քոյրը գրկումս է:

—Ինձ շալակիր, մայրիկ, ես էլ չեմ կարողանում գալ:

—Ի՞նչպէս շալակեմ, զաւակս, քո փոքրիկ եղբայրը ուսիս է:

—Մայրիկ, ես այստեղ կը նստեմ:

—Այստեղ լաւ չէ, զաւակս, մի քիչ էլ առաջ գնանք, յետոյ կը հանգստանանք:

—Ի՞նչու այստեղ լաւ չէ, մայրիկ:

—Այնպէս, զաւակս, լաւ չէ...

—Նրանք կը գան:

—Ո՞վքեր:

—Նրանք, որ հօրս ծեծում էին:—Ի՞նչու ընկաւ հայրս, մայրիկ:

Թշուառ մայրը և անբախտ ամուսինը ոչինչ

չը գտաւ պատասխանելու: Նրանք հեռացան, անհետացան խաւարի մէջ: Խանը այլ ևս չէր լըսում մօր և զաւակի խօսակցութիւնը:

—«Թող անիծվի այսպիսի խանը»... մտաբերեց նա մօր բանադրանքը, և այդ աւելի դառն կերպով այրեց նրա սրտին, քան այն բոլոր կրակները, որ թափում էր թշնամին:

Մթին, ամայի փողոցով անցաւ նա հրապարակի վրա: Այստեղ մարդիկ նոյնպէս վազվզում էին դէպի զանազան կողմեր: Մի քանի փողոցներ խաչաձև կերպով կտրում էին հրապարակը: Խանը չը գիտէր՝ նրանցից ո՞րը ընտրել:

—Յետ նայեցէք՝ խան, ասաց նրա թիկնապահներից մէկը.—ամբողջ «Փոս-թաղը» այրվում է:

Խանը նայեց և ոչինչ չը պատասխանեց:

—Այդ մարդիկը այնտեղից են փախչում, աւելացրեց թիկնապահը:—Տեսնում էք, նրանցից շատերը շալակած ունեն իրանց տնային կարասիները:

—Ո՞ւր են գնում, հարցրեց խանը:

—Երևի, իրանք էլ չը գիտեն...

Խանը ընտրեց խաչաձև փողոցներից մէկը և անցաւ: Այդ միջոցին յայտնվեցաւ թշնամիների մի խումբ, որ մի և նոյն փողոցով գալիս էր ուղիղ նրա հանդէպ: Նրանք այնքան մօտ էին, որ խանը մինչև անգամ լսում էր նրանց ձայները:

խանը յետ դարձաւ: Բայց մի քանի քայլ հեռանալուց յետոյ նկատեց, որ ինքը մենակ է: Նրա թիկնապահները կամ թողեցին նրան և փախան, կամ, թշնամու մօտից տեսնելով, չփոթվեցան և աչքից կորցրին իրանց տիրոջը: Վերջինը աւելի հաւանական էր: Նա մնաց մենակ: Իր բերդի, իր ժողովրդի մէջ մենակ մնաց նա: Այլ ևս ոչ ոք չէր նայում նրա վրա: Այժմ միայն տիրեց նրան տագնապի զարհուրանքը: Բայց նա այնքան սրտի և կամքի ամրութիւն ունէր, որ բոլորովին չը շուարվեցաւ, չը յուսահատվեցաւ:

Նա մտաւ մի նեղ քուչայ: Աշխատում էր կրկին չը հանդիպել թշնամուն: Ամեն տնից, որ անցնում էր նա, լսում էր ցաւալի ձայներ, յուսահատական աղաղակներ, լաց, արտասուք: Մարդիկ, սարսափելի ճգնաժամի մէջ, չը գիտէին որտեղ թագցնել իրանց գլուխը: Նա լսում էր ժողովրդի սուգն ու ողբը և անց էր կենում:

Անցուդարձը նեղ քուչայի մէջ չափազանց դժուարին էր: Երբեմն ետևից, երբեմն առջևից զարկվում էին նրան փախստական մարդիկ, և հայհոյանքով անց էին կենում: Մէկը գլուխը սաստիկ խփելով նրա ճակատին, ասաց.

—Կո՞յր ես, չես տեսնում. ճանապարհովդ ուղիղ գնա:

Երկրի իշխանը լուռ կացաւ:

Դրանք այն ստրուկներն էին, որ նրա չուաքն

անգամ տեսնելիս, մինչև գետին կը թէքվէին և հարիւր անգամ գլուխ կը տային: Այժմ իրանց գլուխները զարկում էին նրա գլխին...: Ճակատագիրը ահա այսպիսի խաղեր ունի...

Նեղ քուչան դուրս հանեց նրան մի բաւական ընդարձակ փողոց: Այստեղ մարդիկ աւելի խոշոր խումբերով էին վազվզում: Այդ մարդիկը զինված էին:

—Մերոնք կոտորվեցան... մերոնք կոտորվեցան... աղաղակում էին նրանք:

—Ի՞նչպէս կոտորվեցան, հարցրեց խանը, նրանցից մէկին կանգնացնելով:

—Կոտորվեցան էլի, պատասխանեց նա, արագ վազելուց դժուարութեամբ շունչ քաշելով:—Թշնամին դրսից խորտակում էր բերդի երկաթէ դռները. մերոնք աշխատում էին արգելել. նրանք յաղթեցին, խորտակեցին դռները և ներս մտան:

—Ո՞ր դռները:

—Երկաթէ դռները:

Բերդի բոլոր դռները երկաթից էին շինված: Բայց փախստականի պատմութիւնը այն դռների մասին էր, որ ուղիղ բացվում էին դէպի Մխիթար սպարապետի բանակի կողմը: Ուրեմն բերդի մէջ մուտք գործողը նա պիտի լինէր:

—Յետոյ ինչ եղաւ, հարցրեց խանը:

—Յետոյ չեմ իմանում ինչ եղաւ, պատասխանեց նա.—ես փախայ:

—Դու զինուո՞ր ես։

—Ապա ինչ եմ։

Խանը նկատեց, որ այդ բոլոր փախստականները իր զինուորներն էին։ Նա մտածեց կանգնեցնել նրանց։ Նա կամեցաւ յայտնել իր ով լինելը և իր իշխանական բարձր հրամանով ստիպել նրանց յետ դառնալ, կռուել, մինչև արեան վերջին կաթիլը կռուել։

Մինչ այդ մտածութեան մէջ էր նա, տեսաւ, իրաւ որ, թշնամու զօրքը բերդի «Մեղրու դուռ» կոչված մուտքից ներս մտնելով, առաջ էր գալիս։ Նրանցից ոմանք բռնած ունէին վառած ջահեր, և փողոցը, որտեղից անցնում էին, այդ ջահերով լուսաւորված էր։ Մի տան լուսամուտից արձակեցին նրանց վրա տորճանակ։ Գունդը կանգնեց և մի քանի րոպէի մէջ տունը հիմնայատակ դարձաւ։ Բնակիչների դիակները խառնվեցան բնակարանի փլատակների հետ։

Գունդը մօտենում էր։ Ջահերի լոյսը ճառագայթում էր խանի սարսափած, գունաթափ դէմքի վրա։ Նա մի կողմ քաշվեցաւ, որ չը ճանաչվի. թագնվեցաւ մի մթին անկիւնում։ Գունդը անցաւ։ Այժմ նա ևս կամենում էր դուրս գալ իր թագստի տեղից։ Բայց դէպի ո՞ր կողմը գնալ։ Նա իր բերդի բոլոր փողոցների հետ ծանօթ չէր. նա ծանօթ էր մի քանի ուղիղ փողոցների, որոնց միջով հանդիսաւոր կերպով անցնում էր, երբ իր

ամրոցից դուրս գալով, գնում էր որսորդութեան։ Մի քանի րոպէ անշարժ մնաց իր թագստի տեղում. դուրս չեկաւ, վախենում էր թշնամու խումբերի հանդիպել։

Նրա մօտից, խաւարի մէջ խարխափելով, անցնում էին մի քանի հոգի։ Նա մտածեց, թէ իրան են որոնում և աւելի պինդ կերպով սեղմվեցաւ իր թագստի մէջ։

—Աքպար, կամաց գնա, որ ես հասնեմ, կանչում էր մէկը նրա ետևից։

—Վազիր, ես կանգնել չեմ կարող, ասում էր Աքպարը հեռուից։

—Ես վիրաւորված եմ, օգնիր ինձ, շարժվել չեմ կարողանում, աղաչում էր առաջին ձայնը։

Աքպարը ոչինչ չը պատասխանեց և անցաւ։

Խանը ճանաչեց իր նոր վէզիրին և իր զօրքերի գլխաւոր հրամանատարին։

—Ի՞նչու է փախչում նա, հարցրեց խանը մէկից, որ ուրուականի նման, խաւարի միջով, մօտեցաւ իրան։

—Երևի «ճանճկը» շատ են նեղացնում... պատասխանեց նա ծիծաղելով։

Խանը ճանաչեց իր հին վէզիրի ձայնը։

Բայց միթէ նա բանտարկված չէր, ով բաց թողեց նրան, հիմա ո՞ւր է գնում,—այդ հարցերը չփոթեցրին խանին։ Վէզիրը թողեց խանին և

դիմից դէպի վիրաւորեալը, որին չը կամեցաւ օգնել Աքպարը:

Խանը մնաց մտատանջութեան մէջ: «Ինձ ճանաչեց, մտածում էր նա,— երևի, ինձ որոնում էր և գտաւ: Հիմա կաշխատէ ինձ մատնել, անպատճառ մատնել թշնամու ձեռքը... Ա՛խ, որքան դառն կերպով ծիծաղեց նա իմ դիւրահաւատութեան վրա. ինձ յիշեցրեց իմ յիմարութիւնը, որ ես Աքպարի խօսքերը հալած իւղի տեղ ընդունեցի, երբ նա թշնամուն ճանճերի հետ էր համեմատում...: փախչեմ... բայց ուր փախչեմ...: Գոնէ գտնվէր մի մարդ, որին ես յայտնէի իմ ով լինելը, և նա կառաջնորդէր ինձ»...

Վէգիլը կրկին վերադարձաւ դէպի խանը: Այն վիրաւորը, որի մօտ գնաց նա օգնելու, արդէն մեռած էր: Դա խանի քաջ և նշանաւոր զօրապետներից մէկն էր:

—Հիմա համոզվեցա՞ք, խան, որ մեր թշնամիները ճանճեր չեն եղել... հարցրեց պաշտօնից զրկված վէգիլը, կանգնելով նրա առջև:

Խանը ոչինչ չը պատասխանեց, միայն վրդովվեցաւ ծերունու յանդգնութեան պատճառով:

Ծերունին հասցրեց երկրորդ հարուածքը.

—Տեսա՞ք, խան, ինչպէս էր փախչում ձեր նոր վէգիլը և զօրքերի պառատախոս հրամանատարը «ճանճերի» առջևից...

—Տեսայ, պատասխանեց խանը դառնութեամբ:

—Բայց ես հրամայեցի, որ ձեզ բանտարկեն, այդ ինչպէս եղաւ, որ փախաք բանտից:

—Ես չը փախայ, ես փախչելու սովորութիւն չունեմ: Իրաւ է, դուք հրամայեցիք ինձ բանտարկել, բայց չը մտածեցիք, որ դուք այլ ես բանտ չունէիք:

—Ի՞նչպէս չունէի:

—Ձեր բանտը, մինչև ինձ այնտեղ հասցնելը, արդէն քանդված էր: Ձեր աւելի քան մի քանի հարիւր բանտարկեալները, որոնք ըստ մեծի մասին հայեր էին, օգուտ քաղելով բերդի մէջ պատահած խռովութիւններից, փշրել էին իրանց շղթաները և իրանց ձեռքով քանդել էին բանտը: Այս պատճառով ձեր հրամանը անկատար մնաց, որովհետև տեղ չը գտան ինձ բանտարկելու:

—Իսկ իմ բանտապետները, պահապանները ինչպէս չը զսպեցին անզգամներին:

—Բանտարկեալները կոտորեցին նրանց:

Այն բոլոր թշուառութիւններից յետոյ, որոնց ականատես էր եղած այն գիշեր բերդի դժբախտ իշխանը, այդ լուրը աւելի խոր խոցեց նրա սիրտը:

—Եւ դուք, ազատվելով բանտից, երևի, մի առիթ էիք որոնում վրէժխնդիր լինելու ձեզ բանտարկողից, հարցրեց նա:

—Ոչ, ես վրէժխնդիր չեմ լինում այն անձից, որ արդէն դժբախտութեան մէջ է գտնվում, պա-

տասխանից ծերունի վեզիրը կարեկցական եղանակով։—Ընդհակառակն, ես շտապեցի ձեզ օգնելու։ Երկար որոնում էի ձեզ։ Երբ թշնամու գունդը անցաւ, ջահերի լուսաւորութեան առջև ճանաչեցի ձեզ և մօտեցայ։

Վեզիրի ցաւակցական պատասխանը աւելի վիրաւորեց խանին. Նա իր սովորական հպարտութեամբ ասաց.

—Շնորհակալ եմ, աղա՛ս, որ ձեր օգնութեանը այլ ես կարօտութիւն չունեմ։ Դուք միայն ինձ այն ասեցէք, կռիւներից ինչ տեղեկութիւն ունիք։

—Ես անցայ համարեա բոլոր կէտերի վրա, ուր որ կռւում էին մեր զօրքերը։ Զօրքերը, պէտք է խոստովանած, քաջութեամբ էին պաշտպանվում։ Եթէ նրանց առաջնորդները այնպիսի վատ, երկչոտ և ագէտ մարդիկ չը լինէին,—եթէ նրանք չը թողնէին իրանց գունդերը և չը փախչէին, գուցէ ձեր զինուորները թոյլ չէին տայ, որ թշնամին ամէն կողմից մտնէր բերդը։

—Լաւ, բոլորը հասկացայ... ասաց խանը զայրացած ձայնով.—խնդրում եմ, որ հիմա ինձ մենակ թողնէք։

—Ես ձեզ երկար չեմ ձանձրացնի, որովհետև ինքս էլ շտապում եմ...

—Ո՞ւր պիտի գնաք։

—Բէկի մօտը։

—Բէկի մօտ, հարցրեց խանը կասկածանքով։ —Ինչ գործ ունիք այն աւազակի հետ։

—Գնում եմ, որ ընկնեմ նրա ոտքերի առջև, համբուրեմ, աղաչեմ, պաղատեմ, որ խնայէ մնացածներին և կոտորել չը տայ։

Գոռոզ իշխանը, որ իրան երբէք թոյլ չէր տայ որ և իցէ խնդիրքով դիմել երկրի թագաւորներին անգամ, բռնեց պաշտօնազուրկ վեզիրի ձեռքից, և աղաչելով ասաց.

—Լսեցէք, վեզիր, ես ձեզ կոչում եմ ձեր առաջվայ պաշտօնի անունով,—եթէ մնացել է ձեր մէջ յարգանքի որ և իցէ նշոյլ դէպի ձեր նախկին տէրը, ընդունեցէք նրա տուած խորհուրդը, և մի գնացէք այն աւազակի մօտ։

—Ես հիմա էլ յարգում եմ ձեզ, ինչպէս միշտ, պատասխանեց վեզիրը սառն կերպով։—Բայց բիւրաւոր մուսուլմանների կեանքը աւելի մեծ նշանակութիւն ունի ինձ համար, քան թէ ձեր տուած խորհուրդը։

—Բէկը այն գազաններից չէ, որ ընդունէ ձեր խնդիրքը, դուք ի զուր ձեզ կը ստորացնէք միայն։

—Ես յանձն եմ առնում այդ ստորութիւնը, բայց մի և նոյն ժամանակ գիտեմ, որքան անգութ է բէկը, այնքան էլ մեծահոգի է։

—Բայց այդ ստորութիւնը վերաբերում է ամբողջ մուսուլմաններին,—մի գաւուրից գթութիւն խնդրել...

—Մուսուլմաններին կրօնքով թոյլ է տուած հարկը պահանջած դէպքերում թագիա անել *)։

Խանը, նկատելով, որ ոչինչ կերպով չէ կարող համոզել յամառ ծերունուն, ասաց.

—Գնացէք, այդ ձեր կամքն է, միայն խօսք տուեցէք ինձ, որ դուք չէք ներկայանայ այն աւազակի մօտ իբրև իմ վէզիր, և իմ կողմից ոչինչ չէք խօսի։

—Ես հաստատ խօսք եմ տալիս ձեզ, որ կը ներկայանամ իբրև հասարակ մարդ։

Վէզիրը հեռացաւ։

Խանը մնաց մենակ։ Չը գիտէր ինչ անել, ուր գնալ։ Նրան տիրեց սարսափելի վհատութիւն։ «Ամեն բան կորաւ, ամեն ինչ ոչնչացաւ, այլ ևս ոչնչի վրա յոյս դնելու տեղ չէ մնացել»... մտածում էր նա։

Նա մտաբերեց իր ամրոցը, իր կնիկները, իր զաւակները։ «Ոչ, մտածեց նա, ես պիտի չտապեմ դէպի իմ տունը, քանի որ թշնամին չէ գրաւել նրան»...

Նա դուրս եկաւ իր թագստի տեղից։ Բայց վախենում էր, որ ճանաչվի, վախենում էր թշնամու ձեռքը ընկնելուց։ Գիշերը անցել էր արդէն. օրը

*) Թագիա անել նշ. ստիպողական պահանջների և հանգամանքների հետ յարմարվել, թէև նրանք հակառակ լինէին մահմեդական օրէնքներին։

լուսանալու մօտ էր. երկինքը սկսել էր պարզվիլ։

«Իմ հագուստը կարող է մատնել ինձ, պէտք է փոխել», մտածեց նա։

Այդ պէտքը լրացնելու համար մեծ դժուարութիւն չը կար. փողոցները ծածկված էին դիակներով. նա մօտեցաւ մէկին և սկսեց մերկացնել։ Կաշեայ գօտիից քարշ ընկած չղթայաձև մորակից նկատեց նա, որ դա մի ջորեպանի դիակ էր, գուցէ իր ջորեպաններից մէկի դիակը։ Բայց հագուստների մէջ ընտրութիւն անելու ժամանակ չունէր նա. այդ աւելի լաւ էր, աւելի անճանաչելի կարող էր դարձնել նրան։ Նա հանեց իր իշխանական զգեստը և մի կողմ ձգեց։ Նրա հետ, կարծես, մերկացաւ իր բոլոր փառքը...

Հագուստը փոխելուց յետոյ նա բռնեց առաջին հանդիպած փողոցը և սկսեց առաջ գնալ։ Անցուդարձը սարսափելի էր։ Նեղ փողոցի անձկութեան մէջ կենդանի մարդկանց մարմինները խառնվում էին ընկած դիակների հետ։ Կանայք, երեխաներ, անզօր ծերունիք, չը կարողանալով դուրս պրծնել մարդկանց սոսկալի հոսանքի միջից, ցած էին գլորվում, և հազարաւոր ոտքերի տակ տրորվում էին, ճխլտվում էին։ Որից ազատվածը զոհ էր գնում ամբոխի կատաղի անգթութեանը։

Բայց ո՞ւր էր գնում այդ փոթորկային, խելակորոյս բազմութիւնը։ Նա փախչում էր։ Նա ա-

ամեն ինչ մոռացած տուն, ընտանիք, զաւակներ, իր ազատութիւնը աշխատում էր գտնել փախուստի մէջ, ամենևին չը մտածելով, արդեօք հնար ունի՞ փախչելու:

Մարդկային բարբարոսութիւնը, անգթութիւնը կատարում էր մի հսկայական խաղ, որի նմանը յօրինում են փոքրիկ մանուկները, միայն փոքրիկ ձևով: Ո՞վ չէ տեսել այն խաղը, թէ ինչպէս են պատժում կարիճներին: Շիկացած ածուխներով կազմում են մի հաւասար բոլորակ, թունաւոր միջատներին ձգում են այդ հրեղէն բոլորակի մէջ: Նրանք սկսում են այս կողմ և այն կողմ վազվզել, որ մի ելք գտնեն փախչելու, ազատվելու: Բայց ամեն կողմից կրակի հանդիպելով, յետ են դառնում: Հազար անգամ կատարում են նրանք մի և նոյն շրջանը, մի և նոյն փորձը, բայց կեանքի պաշտպանութեան տագնապի մէջ, միշտ մոռանում են կրակը, մինչև կրկին անգամ չեն հանդիպում նրան: Վերջը յուսահատութիւնից, անճարութիւնից, իրանց խայթոցը ցցում են իրանց մարմնի մէջ և անձնասպանութիւն են գործում:

Մի և նոյն դրութեան մէջ էր բերդաքաղաքը: Ամեն կողմից պաշարված էր թշնամու սրերով և կրակներով: Ժողովուրդը մէջ տեղում այս կողմ և այն կողմ էր փախչում, որ ազատութեան ելք գտնէ: Բայց ամեն տեղ հանդիպում էր կրակ-

ների: Մի և նոյն ճանապարհով հազար անգամ անցել էր և անցնում էր նա, բայց ելք չէր գտնում, միայն իր ոտքերի տակ տրորում էր իր նման անբախտներին...

Ծպտեալ ջորեպանը անցաւ մարդկանց դիակներով ծածկված փողոցների միջէն յատակի վրայով և դուրս եկաւ մի փոքրիկ հրապարակի վրա: Նա ճանաչեց, որ դա մեծ մզկիթի առջևի փոքրիկ հրապարակն էր: Մզկիթի դրան հանդէպ ցցված էր մի նիզակ, որի ծայրին երևում էր մի մարդկային գլուխ: Նրա մօտ վառվում էին մի քանի ջահեր և ամեն կողմից տեսանելի էին կացուցանում կառափը:

—Այդ ինչ գլուխ է, հարցրեց խանը մէկից:

—Մօլլաների գլխաւորի գլուխն է, պատասխանեց նա:—Հիմա ամեն տեղ պտռում են խանին, որ նրա գլուխն էլ կտրեն և ցցեն դրա մօտ: Ախ, եթէ ինձ յաջողվէր գտնել նրան, ինչ մեծ ընծայ կը ստանայի...

—Դու ինչ ազգից ես, հարցրեց խանը սառնասրտութեամբ:

—Ես Բայնդուր իշխանի զինուորներիցն եմ: Նա խոստացել է հարիւր ոսկի տալ, ով կը տանէ նրան խանի գլուխը, իսկ երկու հարիւր ոսկի, երբ կենդանի կը ներկայացնէ նրան:

Խանը լռութեամբ հեռացաւ իր վտանգաւոր խօսակցից: Նա ընտրեց բերդի մի խուլ, յետնա-

կած կողմը։ Լեռնային անհարթութիւնների վրա կառուցած քաղաքը, բոլորովին զուրկ էր տափարակ տարածութիւններից, մանաւանդ այն կողմը, որ այժմ ընտրեց նա։ Վազում էր նա ամենայն արագութեամբ, առանց յետ ու առաջ, առանց աջ ու ձախ նայելու։ Խորտուբորտ, զառուփոռ, անհաւասար անցքերի մէջ երբեմն սայթաքվում էր, երբեմն ոտքը, գլուխը քարերին էր զարկում, երբեմն ցած էր գլորվում և երկար մնում էր անշարժ, մինչև կրկին ուշի էր գալիս, յետոյ դողդողալով բարձրանում էր, և կրկին շարունակում էր իր փախուստը։ Նա յոգնած էր, սաստիկ յոգնած։ Նա, որ իր կեանքում հարիւր քայլ ոտքով ման չէր եկել, այս գիշեր մի քանի անգամ անցել էր ամբողջ քաղաքը, զանազան ուղղութեամբ պտոյտներ գործելով։ Նա յոգնած էր, բայց յոգնածութիւն չէր զգում։ Երկիւղը, հոգեկան վրդովմունքը, անաջողութիւնների կատաղութիւնը այն աստիճան գրգռել էին նրա ջղերը, որ խելագարի նման գտնվում էր մի տեսակ տենդային գրգռութեան մէջ։ Այդ հիւանդոտ դրութիւնը մարդկանց երբեմն աւելի ուժ և զօրութիւն է տալիս, քան թէ ունէին նրանք, երբ առողջ էին։ Այդ էր պատճառը, որ նա լուսնահարի նման, ոչնչի տեղ էր դնում, անցնում էր հանդիպած խոչնդոտները, առանց ցաւ զգալու, թէև նրա մարմինը ջարդ ու փշուր էր լինում։ Բայց երբ

ընկաւ մի փոսի մէջ, երկար դուրս գալ չը կարողացաւ։

Ճակատագիրը, կարծես, վճռել էր մինչև վերջին ծայրը տառապացնել նրան, քամել տալ նրան դժբախտութեան մրուրը մինչև վերջին կաթիլը, և զգալ տալ նրան իր ոչնչութիւնը… Փոսի մէջ մի քանի օր առաջ ջուր էր կանգնած. ջուրը ցամաքել էր և իր տեղը թողել էր թանձր ցեխ։ Նա խրվեցաւ այդ ցեխի մէջ։ Երկար թաւալվում էր նա իր փափուկ անկողնի մէջ, առանց հասկանալու թէ որտեղ է գտնվում։ Վերջը ուշի եկաւ, և խարխափելով, մի կերպով դուրս եկաւ փոսից, մոռանալով, որ գլխարկը թողեց այնտեղ։ Գլխաբաց շարունակեց իր ճանապարհը։ Այժմ նրա մտքի և յիշողութեան խաւարի մէջ աղօտ լուսով փայլում էր մի կէտ միայն՝—իր հարեմը....

ԻԶ

Դուրս գալով փոսից, խանը շարունակեց իր դանդաղ ընթացքը։ Նա գտնվում էր սարսափելի ինքնամոռացութեան մէջ։ Նրան տիրել էր այն երազական դրութիւնը, երբ մտքի տեղ արթուն է մնում միայն երևակայութիւնը։ Ամեն առարկայ, ցնորքի նման, նրա վրա միայն վայրկենական տպաւորութիւն էր գործում. յանկարծ երևան էր գալիս և շուտով էլ մոռացվում էր։ Երդի մէջ բարձրացած տանկալի աղաղակները, հրանօթների որոտը,

յուզված, զարհուրված ամբոխի դղրդոցը նա այլ ևս չէր լսում: Նրա ականջներին դիպչում էին միայն անորոշ և ոչինչ նշանակութիւն չունեցող ձայներ, և անցնում էին քամու մեղմ սոսափիւնի պես: Նա չէր տեսնում և հրդեհների բոցը, որ բարձրանում էր թէ աղքատի խրճթից և թէ հարուստի ապարանքից, և հրեղէն վիշապների նման, պըտըտվում էր, գալարվում էր օդի մէջ: Նա տեսնում էր միայն լոյսի հազիւ երևցող նշոյլներ, որոնք մոլաշրջիկ կրակների նման վառվում էին և րոպէական լուսաւորութիւնից յետոյ, դարձեալ անհետանում էին:

Նա դուրս եկաւ ամրոցի մօտ մի և նոյն անբացատրելի բնազդումով, ինչպէս լուսնոտները գնում են իրանց ցանկացած տեղը, թէև քնած են լինում: Մտաւ գիւղատան բակը, կանգնեց և մի քանի րոպէ խորին ապշութեամբ նայում էր վառվող շինվածքների վրա: Նրա դէմքի վրա երևաց մի տեսակ անմիտ ժպիտ, գլուխը շարժեց և իր քայլերը ուղղեց դէպի կանանոցը: Այստեղ հարեմական բոլոր կարգերը խանգարված էին: Դռների մօտ պահապաններ չը կային, ներքինիներ չէին երևում, բայց այսու ամենայնիւ, ոչ ոք դեռ այնտեղ մուտք չէր գործել, մի և նոյն աւանդական երկիւղածութեան շնորհիւ, որպէս մէկը չէ համարձակվում մտնել մի որ և իցէ ամայի տաճարի մէջ, թէև նրա դռները բաց է

տեսնում: Թշնամին, դեռ ևս իր գործը բոլորովին վերջացրած չը լինելով մահմեդական ամբոխի և զօրքի հետ, մինչև այստեղ տակաւին չէր հասել:

Կնիկների բազմութիւնը, փակված իրանց օթեակներում, օրհասական երկիւղի մէջ, սպասում էին սոսկալի ճգնաժամին: Կինը, մանաւանդ մահմեդական կինը, պատերազմի ժամանակ, աւելի փոքր երկիւղ ունի, քան թէ տղամարդը: Նրա մէջ գտնվում են այնպիսի արժանաւորութիւններ, որ թշնամին նրա հետ բաւական մեղմութեամբ է վարվում: Այդ կէտից նայելով, կնիկների երկիւղը այնքան թշնամու կողմից չէր, որքան ամրոցում յայտնված հրդեհից: Կրակը արդէն անցել էր կանանոցի մէջ, մի քանի սենեակներ այրվում էին: Կնիկները դուրս փախչելու թոյլտւութիւն չունէին, որովհետև, իրանց վրա հսկողներից մէկը պէտք է լինէր, որ նրանց իրաւունք տար դուրս գալու, իսկ այդ մէկը, որ ներքինապետն էր, չը կար:

Նա ուրուականի նման անցաւ կանանոցի բակից և մտաւ Զուրէյխա խանումի նախասենեակը: Ծերունի Ասատը իր սովորական պարտաճանաչութեամբ, իր ուղտի թեփով լցրած բարձը գլխի տակին դրած, և վերմակի փոխարէն, իր վերարկուի մէջ փաթաթված, պառկել էր տիկնոջ օթեակի դրան հանդէպ: Խանը չը նկատեց նրան, և կոխ տալով նրա վրայից անցնելու միջոցին,

ծերունի պահապանը քնաթաթախ վեր թռաւ, զարկվեցաւ նրան, և նա, չը կարողանալով պահպանել իր դիրքը, ընկաւ ծերունու վրա: Երկու քնէածներ սկսեցին անգիտակցաբար միմեանց տրորել, միմեանց կողքերը ջարդել: Վերջը ծերունուն յաջողվեցաւ բռնել խանի կոկորդից, գոչելով. «Գողը... գողը... շուտ հասէք... բռնվեցաւ գողը»...

Նրա ձայնին ոչ ոք օգնութեան չը հասաւ:

Միայն ծերունու աղաղակը և այն սաստիկ ցնցումը, որ գործեց նա խանի մարմնի վրա, այն հետևանքն ունեցան, որ խանը լուսնահարի նման արթնացաւ, և չը յիշելով ծերունու մի քանի րոպէ առաջվայ գործողութիւնները, այնքանը միայն զգաց, որ իր կոկորդը գտնվում է նրա ճանկերի մէջ: Զօրեղ ձեռքով նրան մի կողմ գլորեց և ինքը վեր կացաւ, ասելով.

—Ճանաչիր քո տիրոջը, անզգամ:

Այդ խրոխտ ձայնի մէջ ծերունին ճանաչեց խանին, բայց նախասենեակի մթութեան մէջ չը կարողացաւ տեսնել նրա ցեխի մէջ թաթախված ջրեպանի հագուստը:

—Հեռացիր այստեղից, հրամայեց խանը և մտաւ տիկնոջ սենեակը:

Սարսափած ծերունին ոտքը դուրս դրեց նախասենեակի շէմքից, բայց յանկարծ յիշեց իր ողո-

ցի թեփով լցրած բարձը և վերարկուն: Նա դողդողալով յետ դարձաւ, վեր առեց իր գիշերային անբաժան ընկերները և հեռացաւ:

Նրա մէջ այժմ տիրապետում էր մի զգացմունք միայն, մահուան և դատապարտութեան զգացմունքը: Նա յիշեց ներքինապետի խօսքերը, որ տիկնոջ փախուստի լուրը առնելու ժամանակ ասաց նրան. «Խանը քեզ կրակի մէջ կենդանի այրել կը տայ»... Իսկ այժմ իր յանցանքը աւելի ծանրացաւ: Նա բռնեց խանի կոկորդից, նա ապտակեց նրան: Բայց ինչու չը հրամայեց նա իսկոյն կտոր-կտոր անել, իսկոյն խեղդել իր անզգամ ծառային: Այդ միտքը սաստիկ տանջում էր ծերունուն: «Ես արժանի եմ մի այսպիսի պատժի», մտածեց նա և առանձնացաւ կանանոցի մի անկիւնում, նստեց, խոնարհաբար սպասում էր իր դատապարտութեան րոպէին:

Խանը մտնելով տիկնոջ սենեակը, գտաւ նրան իր գեղեցիկ, վայելչական կարգուսարքի մէջ: Այնտեղ դեռ վառվում էր ճրագը, տարածելով իր շուրջը բաց-վարդագոյն լուսաւորութիւն, որ արտափայլում էր նոյն գոյնով թաւիշեայ վարագոյրներից: Սիրելի խանումի սենեակում ամեն ինչ իր տեղումն էր. թէ փափուկ մութաքաները ոսկեայ փունջերով, թէ նախշուն օթոցները, և թէ արծաթեղէն կամ հաղուագիւտ չինապակիից կազմված անօթները, բոլորը, բոլորը իրանց պատշա-

ճաշը տեղերն էին բռնած: Միայն պակաս էր սենեակի թագուհին:

Ամրոցի իշխանը այժմ գտնվում էր իր տան մէջ, բայց որպէս մի յանցաւոր, որպէս մի փախստական, որ ոչ ոքին երևնալու համարձակութիւն չունի: Նա կանգնած էր ոտքի վրա, և իր ջորեպանի ցեխոտ հագուստով մինչև անգամ չէր համարձակվում մերձենալ այն գեղեցկութիւններին, որոնցմով շրջապատված էր ինքը: Նա աչքերը յառած, խորին տխրութեամբ նայում էր այն օթոցին, ուր իր մօտ նստած էր նոյն գիշերը խանումներից ամենագեղեցիկը և ամենախելացին: Յիշեց նրա սքանչելի դէմքը, մտաբերեց նրա լի ճշմարտութիւններով խօսքերը: Այստեղ, այս օթոցի վրա նստած, նա, որպէս մի անողոք մարգարէուհի, կարդում էր բռնակալի ճակատագիրը, բացատրում էր նրա խաբուսիկ վիճակը: Խօսում էր ընտանիքի և ամուսնական սիրոյ վրա: Ա՛խ, որքան իմաստալից, որքան խորախորհուրդ էին նրա խօսքերը: ինքն այն ժամանակ չը հասկացաւ, և եթէ հասկացաւ, բարկութիւնը, հպարտութիւնը, եսականութիւնը թոյլ չը տուեցին խոստովանել նրանց ճշմարտութիւնը: Ա՛խ, եթէ այժմ այստեղ լինէր այն մարգարէուհին: Նա պատրաստ էր գրկել նրա ոտները, համբուրել, և նրա ոտների առջև խոստովանել, թէ ինքը մարդկային ծնունդներից ամենաթշուառը և ամենահրէշաւորն է: Բայց նա չը

կար. նրա փոխարէն գրկեց այն անուշահոտ բարձը, որի վրա գեղեցիկ գլուխը դրած, նա քնած էր այն գիշեր,—գրկեց, և իր երեսը սեղմելով նրա վրա, սկսեց թանալ դառն արտասուքներով...

Այժ ինչ_ զգացմունք էր. ինչու էր տանջվում. ինչու էր այնպէս սպանված նա: Այն րոպէում, երբ կորչում, ոչնչանում էին՝ փառք, մեծութիւն, իշխանութիւն, երբ նրա ամբողջ զօրութիւնը խորտակվում էր թշնամու ուժի առջև, երբ իր կեանքն անգամ սոսկալի վտանգի մէջ էր,—նա ոչինչ չէր ափսոսում, ոչինչ չէր մտաբերում, մտաբերում էր միայն այն կնոջը, որը այնպէս անխնայ կերպով յանդիմանեց նրա գազանութիւնը, թէ իր տան և թէ իր իշխանութեան մէջ:

Յօթն տարվայ սարկուհին միանգամ միայն բաց արեց փակված լեզուն, միանգամ միայն խօսեց ճշմարիտը ու արդարը, և միանգամից գրաւեց իր բռնաւորի սիրտն ու յարգանքը: Բայց մի՞թէ այդ հասկանում էր նա: Նա ոչինչ չէր հասկանում, միայն զգում էր:

Նա զգում էր, որ սիրելի կնոջ ներկայութիւնը, նրա մի խօսքը, նրա մի ժպիտը կարող էր մխիթարել նրան, կարող էր փարատել նրա բոլոր թշուառութիւնները: Բայց նա չը կար: Նրան կորցնելով, ամեն ինչ կորցրեց նա...

Նա գլուխը վեր բարձրացրեց աննման կնոջ բարձի վրայից, և սոսկալով վեր թռաւ, որպէս

մի անարժան, անմաքուր էակ, որ չէ համարձակվում իր հպարտութեամբ պղծել մի որ և իցէ սրբութիւն: Կանգնեց ոտքի վրա: Այժմ վայրենի կերպով նայում էր իր շուրջը և ականջ էր դնում:

Հրանօթների ձայնը սկսեց աւելի մօտից լսելի լինել: Թշնամին մերձենում էր ամրոցին: Բայց ինչ էր մնացել այդ գեղեցիկ, հոյակապ շինուածքից: Բոլորը լափեց կրակը: Մնում էր միայն հարեմը—կնիկների ընտիր հաւաքածուն: Ամեն բան կարելի էր տալ թշնամու ձեռքը, իսկ այդ հաւաքածուն—ոչ:

Մի փոքր հեռու, փողոցներում, կոտորածը դեռ շարունակվում էր: Շուտով նոյն բարբարոսութիւնը սկսվելու էր և այստեղ—կանանոցում:

Բայց այստեղ չէին կոտորի, այստեղից գերի կը տանէին: Այդ աւելի սարսափելի էր: Խանը չէր կարող համբերել մի այսպիսի անարգանքի, որ այն կնիկները, որոնց ինքը գրկել էր, որոնց Աստուած ստեղծել էր միայն նրա հաճոյքի և զուարճութեան համար,—պատկանէին մի ուրիշին, կամ մի օտար մարդու ձեռքը շօշափէր նրանց:

Դառն իրականութիւնը դարձեալ խռովեց, դարձեալ գրգռեց նրա երևակայութիւնը: Նրան երևում էր, թէ իր կնիկներին կիսամերկ, ոտաբոբիկ, թօկերով կապած, անասունների նման կանգնեցրել էին մի մեծ քաղաքի հրապարակի վրա և վաճառում էին: Նրան երևում էր, որ իր զաւակնե-

րը, պատառոտած հագուստներով, թափառում էին նոյն քաղաքի փողոցներում և անցնողներից ողորմութիւն էին խնդրում: Իսկ ինքը, մի կթոց շալակած, պտըտում էր դռնից-դուռ, և ողորմելի ձայնով աղաղակում էր, որ իրան աղբ կամ մի այլ բան տան դէն ածելու:

Հրանօթների ձայնը այժմ աւելի մօտից սկսեց լսելի լինել: Կանանոցի մէջ բարձրացաւ խառնաշփոթ աղմուկ: Ամբողջ շինուածքը դղրդում էր: Կարծես թէ, դռները խորտակում էին:

Նա դողդոջուն ձեռքով վեր առեց ճրագը և մի քանի րոպէ փետացածի նման մնաց անշարժ: Մի սոսկալի խորհուրդ ալեկոծում էր նրա սիրտը: Նա տարուբերվում էր անվճռականութեան մէջ, որպէս մի կատաղի եղեռնագործ, որ պատրաստվում է կատարելու մի մեծ յանցանք: «Թող նզովեալ լինի սատանան»... ասաց նա և իր քայլերը ուղղեց դէպի դուռը:

Ճրագը ձեռքում նա անցաւ կանանոցի բակը, մտաւ մի փոքրիկ տալան, այստեղից մտաւ մի բաւական ընդարձակ սենեակ, որի բանալին իր մօտ ունէր: Դա նրա առանձնասենեակն էր: Ներս մտնելուց յետոյ կրկին կողպեց դուռը: Մօտեցաւ այն փառաւոր օթոցին, որի վրա սովորաբար նստում էր ինքը: Ոտքով օթոցը մի կողմ հեռացրեց, թեքվեցաւ և մատով սեղմեց մի փոքրիկ երկաթեայ տախտակ, որը ճռնչալով վեր բարձրացաւ:

Ցախատալի տակում բացվեցաւ մի նեղ ձեղք, որի մէջ մի բանալի հազիւ կարող էր շարժվել: Նա հանեց իր քսակից մի այլ բանալի, անցկացրեց ձեղքի մէջ, մի քանի անգամ պտտոյտ տալուց յետոյ, ծանր, երկաթեայ դռնակը յատակից խախտելով վեր բարձրացաւ, և բացվեցաւ մի մթին և նեղ անցք, որտեղից մի մարդ հազիւ կարող էր մուտք գործել: Նա ճրագը ձեռքում սկսեց փոքրիկ սանդուղքներով ցած իջնել:

Սանդուղքները տանում էին մի երկար, ստորերկրեայ շինուածքի մէջ, որ ամենևին լուսամուտներ չունէր: Այդ շինուածքը փորված էր ապառաժի մէջ և ծածկված էր ահագին կամարներով: Նա աւելի բնական քարանձաւի ձև ունէր, քան մարդկային արհեստի կերտուածքի: Նրա վերին յարկում գտնվում էր ամբողջ կանանոցը: Այստեղ խանը պահում էր իր գանձերը: Բայց բերդի պաշարվելու ժամանակ նա տեղափոխեց այնտեղ, տօպրակների մէջ լցրած, մի նոր մթերք: Ի՞նչ էր նա, —ոչ ոք չը գիտէր: Նա թողեց ոսկով և արծաթով լի արկղիկները և մօտեցաւ այդ տօպրակներին: Ճրագը մի կողմ դրեց և ինքը չոքեց խոնաւ յատակի վրա: Նրա դէմքը այժմ արտայայտում էր մի խորին հանդարտութիւն, որպէս մի մարդ, որ արդէն հաշտվել էր իր խղճի հետ: Նա իր պղտոր աչքերը բարձրացրեց դէպի երկինքը և լռութեամբ կարդաց մի կարճ աղօթք: Յետոյ վեր

առեց ճրագը և սառնասրտութեամբ մօտեցրեց տօպրակներից մէկին: Նոյն վայրկենում ստորերկրեայ շինուածքը սոսկալի բոմբիւնով որոտաց և ամբողջ կանանոցը բարձրացաւ, ցնդեց օդի մէջ...

ԻԵ.

Օրհասական գիշերը անցաւ, կրակի, կոտորածի գիշերը: Վաղորդեան արեգակը իր ուրախ ճառագայթները տարածեց մոխիր դարձած բերդաքաղաքի աւերակների վրա:

Բերդից ոչ այնքան հեռու, հայոց բանակատեղում կանգնած էր մի առանձին վրան: Այդ վրանը տաղաւարի ձև ունէր, համարեա մի և նոյն ձևը, որ մինչև այսօր էլ կարելի է տեսնել Սիւնեաց աշխարհի խաշնարած ցեղերի մօտ: Շրջապատը հիւսած էր եղէգներով, իսկ առաստաղը ծածկված էր թանձր թաղիքներով, որ տարածել էին բարակ, ճկուն ձողերի կորաձև կամարների վրա *):

Վրանում նստած էր Ներսէս սպարապետը, իսկ նրա հանդէպ չոքած էր խանի ծերունի վէզիրը:

—Ես, սպարապետ, խօսեց նա.—դիմում եմ ձեզ ոչ իբրև վէզիր և ոչ իբրև մի պաշտօնական անձն, այլ իբրև մի հասարակ մարդ սիրտը լի ցաւերով ու վշտերով:—Դիմում եմ ձեզ, այն յուսով, որ

---

*) Այդ տեսակ վրանները կոչվում են ալաչուղ, թէ հայերի և թէ թիւրքերի մօտ մի և նոյն ձևն ունեն:

հաստատած եմ, իմ աղաչանքները աւելի հեշտու-
թեամբ ընդունելութիւն կը գտնեն մի հոգեւորակա-
նի մօտ, որի պաշտօնն է քարոզել գթութիւն, ո-
ղորմածութիւն և խիղճ, որի կոչումն է ներել
թշնամուն, որին ծանօթ չէ ոխը, ատելութիւնը,
նախանձը։ — Ես դիմում եմ ձեզ որպէս Յիսուս Քը-
րիստոսի աշակերտի և Նրա վարդապետութիւնը
ժողովրդին քարոզողի, նոյն Յիսուս Քրիստոսի,
որ ասում էր. երանի ողորմածներին, որովհետև
նրանք ողորմութիւն կը գտնեն։ Ողորմեցէք մեզ,
սրբազան, ընկած մարդուն այլ ևս ոտքով չեն խը-
փում։ Բէկը կընդունէ ձեր խորհուրդները. օգնեցէք
ինձ խնդրել նրանից, որ դադարեցնէ կոտորածը։
Այդ մարդիկը, թէև ձեր կրօնից չեն, բայց Ա-
ստուծոյ ստեղծուածներ են։ Աստուծուն շատ հաճելի
չի լինի, երբ անաստուածների, միջամների հետ ան-
գամ անգթութեամբ են վարւում։

—Ձեր խօսքերը շատ գեղեցիկ են, վէզիր, պա-
տասխանեց սրբազանը նրան ուշադրութեամբ լը-
սելուց յետոյ.—Եւ ես ուրախ եմ, որ դուք այնքան
կարդացած էք երևում, որ լաւ ըմբռնել էք մեր
կրօնի ոգին։ Բայց այն բանը, որ կոչում էք ան-
գթութիւն, դուք ինքներդ սովորեցրիք մեզ։ Վար-
ժապետը չի պիտի նախատէ իր աշակերտին, երբ
նա նոյնն է գործում, ինչ որ սովորել է իր վար-
պետից։

—Ինչպէս մենք սովորեցրինք, հարցրեց վէզիրը։

—Այո, դուք սովորեցրիք. ես այս րոպէիս կը
բացատրեմ ձեզ։ Այդ դաստիարակութիւնը կատա-
րեցիք դուք բոլորովին անգիտակցաբար, ոչ թէ մի
տարւայ մէջ, այլ շատ դարերի ընթացքում։ Դուք
մի մոռացէք, որ դուք մի գաղթական հիւր էք
մեր երկրում, այն անշնորհակալ հիւրերից մէկը,
որ տան տիրոջը սպանում է, իսկ ինքը սկսում է
տաքանալ նրա օջախի կրակովը։ Այդ սպանու-
թիւնը գործեցիք դուք։ Այդ երկիրը պատկանում
էր մեր նախնիքներին։ Այստեղ մենք ունէինք
մեր թագաւորութիւնը, մեր իշխանութիւնը։ Բոլո-
րը ոչնչացրիք դուք։ Մեր հայրենիքում մի քար չէ
մնացել, որ դուք չը ներկէիք մեր պապերի արիւ-
նով. մեր հայրենիքում մի տաճար չէ մնացել, որ
դուք հարիւր անգամ քանդած չը լինէիք։ Որքան
կամեցաք՝ կոտորեցիք, որքան կամեցաք՝ ոչնչաց-
րիք։ Հայաստանի երեսուն միլիօն հայ բնակիչ-
ներից թողեցիք հինգ միլիօն միայն. այդ ևս այն
մտքով, որ նրանց կենդանի մահացնէք, որ նրանց
մերկ ու քաղցած թողնէք, իսկ ինքներդ նրանց
աշխատանքով ապրել կարողանաք։ Դուք Ջանկիզ-
խանի, Մանգո-խանի, Հուլագու-խանի, Լէնկ-թէ-
մուրի և այլ այդ տեսակ հրէշների մեզ մօտ բե-
րած գազանների չար կորիւններն էք։ Դուք մեր
աշխարհը աւերակ դարձրիք, իսկ Թաթառստանը,
Մօղօլստանը, Աւղանստանը լցրիք մեր երկրից
տարած գերիներով։ Ես եթէ ամբողջ օրերով խօ-

սէր ձեզ հետ, դարձեալ չէի կարող ուրանալ այն բոլոր բարբարոսութիւնների աղէտաւոր պատմութիւնը, որ դուք և ձեր նախնիքը կատարել էք մեր հայրենիքում։ Մեր կնիկներին, մեր աղջիկներին, մեր երեխաներին, մեր ընտիր տղամարդերին հազարներով լցնում էիք Աստուծոյ տաճարների մէջ, կրակ էիք տալիս և այրում էիք։ Ձեր պապերից մէկը կործանեց մեր սքանչելի մայրաքաղաքը՝ Անին. այնքան կոտորել տուեց, որ փողոցների միջով արեան վտակներ էին վազում։ Բայց դրանով ևս չը կշտացաւ գազանը, հրամայեց մորթել հազարաւոր ծծկեր երեխաներ, նրանց արիւնով լցրեց մի ահագին լճակ, մտաւ այդ լճակի մէջը լողացաւ, որ դրանով զօրացնէ սրտի բարկութիւնը։ Ձեր բարբարոսութիւնը, բացի մարդկանցից, տարածվեցաւ և մեր երկրի վրա։ Մեր երկիրը մի ծաղկեալ դրախտ էր, բուսուցանում էր Աստուծոյ շնորհած բոլոր բարիքները։ Բայց դուք նրան բոլորովին անապատ դարձրիք, Միջին Ասիայի տըխուր անապատների նման, որտեղից դուրս էին եկած ձեր նախնիքը։ Մեր հարուստ քաղաքները կործանեցիք, մեր չէն գիւղերը աւերակ դարձրիք, մեր վաճառականութիւնը, մեր արհեստը, մեր ճարտարութիւնը ոչնչացրիք և ամեն տեղ տարածեցիք աղքատութիւն ու սով։ Դուք, անապատի զաւակներ, սիրում էք անապատ, ամայութիւն, և մահացութիւն։ Ձեզ համար անտանելի է ծաղկեալ կեանքը, մարդկային երջանիկ բարօրութիւնը և աշխատասէր ժողովրդի արդիւնաւոր գործունէութիւնը։ Դուք սիրում էք իշխել միայն աւերակների վրա։ Ամեն ինչ, որ լաւ էր, ամեն ինչ, որ օգտաւէտ էր, դուք խլեցիք մեզանից, իսկ փոխարէնը տուեցիք մեզ ձեր վայրենութիւնը, ձեր անկրթութիւնը։ Եւ այժմ զարմանում էք, որ մենք վարվում ենք ձեզ հետ մի և նոյն եղանակով, ինչպէս դուք վարվել էք մեզ հետ հազարաւոր տարիների ընթացքում։—Հիմայ հասկանում էք, որ դուք ինքներդ այդպէս դաստիարակեցիք մեզ, որ դուք ինքներդ սովորեցրիք մեզ անգթութիւնը։

—Հասկանում եմ... պատասխանեց վեզիրը։— Բայց որդին ինչով է մեղաւոր, որ տուժէ իր պապերի յանցանքների համար։

—Որդին մեղաւոր չէր լինի, եթէ ինքն էլ մի և նոյն կերպով չը գործէր, եթէ ինքն էլ չը շարունակէր իր պապերի բարբարոսութիւնը, ասաց սըրբազանը։—Դուք չը փոխվեցաք, դուք մնացիք նոյնպէս անկիրթ, նոյնպէս վայրենի, որպէս էիք հազար տարիներ առաջ։ Ամբողջ աշխարհը փոխվեցաւ, դուք մնացիք մի և նոյնը։

—Ի՞նչու չը կրթեցիք մեզ, քանի որ դուք ձեր քաղաքակրթութեամբ աւելի բարձր էիք մեզանից, հարցրեց վեզիրը։

—Այդ մեր յանցանքն է, պատասխանեց սրբազանը։—Բայց ձեզ կրթելու համար մի մեծ դժուա-

րութիւն, մի մեծ արգելք կար։ Ձեզ կրթելու համար հարկաւոր էր նախ ձեր ձեռքից խլել սուրը և նրա փոխարէն տալ գիրքը։ Այդ անելու համար մենք բաւական ուժ և պատրաստականութիւն չունէինք։ Մի ժողովուրդ չէ կարող կրթել միւսին, երբ ինքը գտնվում է նրա իշխանութեան ներքոյ։ Վարժապետը պէտք է ազատ լինի իր աշակերտների վերաբերութեամբ։ Մենք ձեզ կարող ենք կրթել, երբ դուք մեր հպատակներ կը լինէք։

—Այդ անկարելի բան է, ասաց վէզիրը դառն ժպիտով։—Իսլամը չէ հպատակում, իսլամը տիրում է, իշխում է...

Նկատելով, որ իր վերջին պատասխանը անախորժ տպաւորութիւն գործեց սրբազանի վրա, նա փոխեց խօսքը, ասելով.

—Սրբազան, ես համաձայն եմ ձեզ հետ, որ մեր նախնիքը և մենք ինքներս վատ ենք վարվել ձեր ազգի հետ։ Ես բոլորովին արդարացնում եմ այն պատճառները, որ ստիպեցին ձեզ սուր բարձրացնել մեր դէմ։ Բայց երբէք չեմ կարող իրաւացի համարել, երբ դուք կանցնէք չափն ու սահմանը մարդկային խղճի, և յաղթող մարդու մեծահոգութիւնը կը փոխարինէք բարբարոսի անգթութիւնով։

—Ես բացատրեցի ձեզ, որ այդ անգթութիւնը ձեզանից սովորեցինք։

—Այդ ուղիղ է, բայց քրիստոնեային վայել չէ,

ասաց վէզիրը։— Ես կը պատասխանեմ ձեզ ձեր կրօնի վարդապետի խօսքերով. դուք պարտաւոր էք ձեր թշնամիներին սիրել, դուք պարտաւոր էք ձեզ անիծողներին օրհնել, դուք պարտաւոր էք ձեր ատելիներին բարութիւն անել, դուք պարտաւոր էք աղօթել նրանց համար, որ միշտ նեղացնում են, որ միշտ չարչարում են ձեզ։

Սրբազանը սկսեց ծիծաղել։

—Այդ բոլոր պատուիրանքները մենք կատարել ենք, վէզիր, աւելի քան հազար տարի մենք հնազանդ էինք այդ պատուիրանքներին։ Բայց փոխանակ շահվելու, նրանց մէջ գտանք մեր դժբաղդութիւնը։ Մեր վիճակը աւելի և աւելի ծանրացաւ։ Մենք կորցրինք բոլորը, ինչ որ ունէինք, և վերջապէս օտարի լծի տակ ստրուկ դարձանք։ Մենք կարծում էինք, թէ սիրելով մեր թշնամիներին, բարութիւն անելով մեր ատելիներին, այսպիսով կը փափկացնենք նրանց բարք ու վարքի կոշտութիւնը, կը մեղմացնենք նրանց վայրենութիւնը և փոխադարձապէս սէր կը վայելենք նրանց կողմից։ Բայց կեանքի փորձի մէջ ընդհակառակն եղաւ։— Մենք հաւատարիմ մնացինք մեր Փրկչի հրամանին. ով որ մեր ձախ երեսին ապտակով զարկեց, աջն էլ շուռ տուեցինք. ով որ մեր շապիկը պահանջեց, մեր պատմուճանն էլ նրան տուեցինք։ Բայց արդիւնքն ինչ եղաւ։— Այն, որ մեր հնազանդութիւնով, մեր զոհաբերու-

թիւններով աւելի լրբացրինք մեր թշնամուն, աւելի գրգռեցինք նրա կատաղութիւնն ու ընչաքաղցութիւնը: Մեր խոնարհութիւնը, մեր հեզութիւնը նկատելով, մեր թշնամին աւելի բռնացաւ մեզ վրա և աւելի սաստիկ կերպով սկսեց ճնշել, տրորել մեզ: Այդ էր պատճառը, որ մենք վերջ ի վերջոյ խելքի եկանք, սկսեցինք մեր թշնամիների հետ վարուել նոյն կերպով, ինչպէս նրանք են վարվում: Եւ այդ վարմունքը դուք ինքներդ սովորեցրիք մեզ:

Վէքիլը ոչինչ չը գտաւ պատասխանելու:

—Ասացէք, խնդրեմ, հարցրեց սրբազանը.— դուք ինչպէս կը վարվէիք մեզ հետ, եթէ այդ կռուի մէջ յաղթութիւնը ձեր կողմը լինէր:

—Մենք ձեզ կը կոտորէինք:

—Ապա ինչու էք զարմանում մեր մէջ մի և նոյն վարմունքը, երբ յաղթութիւնը մեր կողմն է:

—Նրա համար, որ ձեր կրօնը ձեզ հրամայում է ներել, իսկ մեր կրօնը մեզ հրամայում է կոտորել:

—Դուք դարձեալ կրօնի վրա էք հիմնում ձեր պատասխանները:

—Որովհետև կրօնաւորի հետ եմ խօսում:

—Այո, կրօնաւորի հետ էք խօսում, ասաց սրբազանը,—բայց մի մոռացէք, որ այդ կրօնա-

ւորը միացրել է իր մէջ թէ պատերազմող և թէ աղօթող մարդու յատկութիւնները:

—Այդ ես աչքի առաջ ունեմ, պատասխանեց վէքիլը, պահպանելով իր սառնասրտութիւնը:— Բայց մի հարց եմ առաջարկում ձեզ. ինչպէս կը վարվէր Աստուած յանցաւոր Սոդոմի և Գոմորի հետ, եթէ գտնուէր լինէր նրանց մէջ գոնէ մի քանի արդար մարդիկ:

—Այդ քաղաքները այլ ևս չէր այրի կրակով, պատասխանեց սրբազանը:

—Ես բոլորովին համաձայն եմ ձեզ հետ: Մեր նախնիքը և մենք նոյնպիսի յանցաւորներ ենք եղել, որպէս Սոդոմի և Գոմորի չարագործները: Բայց եթէ մի մարդ եղել է այդ բերդի մէջ արդարադատ, ճշմարտասէր և գթած դէպի տառապեալները, միթէ դուք այդ մի մարդու համար չէիք խղճայ միւսներին:

—Ո՞վ է այդ մարդը:

—Նա, որ խօսում է ձեզ հետ:

Սրբազանը մտածութեան մէջ ընկաւ: Վէքիլը առաջ տարաւ իր խօսքը.

Ես ձեզ չեմ խաբում, սրբազան, և խաբելու սովորութիւն երբէք չեմ ունեցել: Դուք կարող էք տեղեկանալ բոլոր հայերից, որ բնակվում են այդ բերդում, դուք կարող էք հարցնել բոլոր հայ գիւղացիներից, որ գտնվում էին մեր իշխանութեան ներքոյ: Ես եղել եմ միշտ ողորմած դէպի այդ

ժողովուրդը, որովհետև իմ նախնիքը նոյնպէս հայեր են եղել և մեր ընտանիքի մէջ դեռ պահպանել են այդ ազգի բարոյականութեան նշոյլները: Ես, իբրև վէզիր, միշտ աշխատել եմ մեղմացնել իմ բռնապետի անգթութիւնը, և որքան կարողացել եմ, ազատել եմ քրիստոնեաներին նրա կատաղութիւնից: Ոչ թէ նրա համար, որ ես մի առանձին համակրութիւն ունէի դէպի քրիստոնէութիւնը, ոչ, այլ առաւելապէս այն պատճառով, որ քրիստոնեաները մեզ համար լաւ հպատակներ էին, մեր կաթնատու կովն էին, պէտք էր խնայք տանել նրանց վրա: Ես բաւական փաստեր ունեմ իմ խօսքերի ճշմարտութեան մասին, բայց աւելորդ եմ համարում մի առ մի յիշել: Շատ անգամ հայերի վերաբերութեամբ իմ միջամտութիւնները, իմ բարեխօսութիւնները ենթարկել են ինձ իմ բռնապետի բարկութեանը, մինչև անգամ պատժի: Հէնց այս գիշեր նա հրամայեց ինձ բանտարկել, և ինձ այս առաւօտ հրապարակի վրա պիտի գլխատել տար, եթէ յաջողութիւնները նրա կողմը լինէին:

Սրբազանը դարձեալ դժուարանում էր հաւատալ նրա խօսքերի անկեղծութեանը: Վէզիրը մօտեցաւ, բռնեց նրա փէշից և իր աղերսաւոր աչքերը դարձնելով նրան, ասաց.

—Ընդունեցէք իմ աղաչանքը. թող բարութիւնը և առաքինութիւնը վարձատրված լինի. դրանով

դուք կը սովորեցնէք մարդիկներին բարի լինել:

—Բարութիւնը և առաքինութիւնը պէտք է վարձատրել, պատասխանեց սրբազանը:— Բայց նախ քան խոստանալը, թէ կարող եմ կատարել ձեր խնդիրքը, ես հարկաւոր եմ համարում մի բան հարցնել ձեզանից, յուսով եմ, որ անկեղծութեամբ կը պատասխանէք:

—Հարցրէք:

—Դուք ինչ տեսակ յարաբերութիւններ կը պահպանէք մեզ հետ մեր այդ բոլոր կռիւներից, մեր յաղթութիւններից յետոյ:

—Ես կը մնամ ձեզ անհաշտ թշնամի:

—Իսկ հայ ժողովրդի վերաբերութեամբ:

—Կաշխատեմ կրկին մեր իշխանութեան տակ ձգել:

—Իսկ մահմեդական ժողովրդի վերաբերութեամբ:

—Կաշխատեմ նրանց գրգռել ձեր դէմ, որ թօթափեն օտարի լուծը: Յուսով եմ, որ դուք չէք դատապարտի իմ մէջ այդ սէրը դէպի իմ կրօնակիցները, որովհետև մի և նոյն սէրը ունէք դուք ձեր ժողովրդի վերաբերութեամբ:

—Ես յարգում եմ ձեր անկեղծութիւնը, ասաց սրբազանը.—բայց դուք մի բան առաջ խոստովանեցաք, որ ձեր նախնիքը հայեր են եղել:

—Իսկ ես մահմեդական եմ և իմ կրօնի նախանձախնդրութիւնն ունեմ:

—Ձեր կրօնը ձեզանից ոչ ոք չէ խլում. բայց դուք ազգով հայ էք:

—Մահմետականութեան մէջ ազգ չը կայ. ամբողջ իսլամը մի ժողովուրդ է կազմում:

Սրբազանը փոքր ինչ մտածելուց յետոյ, ասաց.

—Լաւ, ես ցանկութիւն չունեմ բռնանալ ձեր համոզմունքների վրա, թէև նրանք ծուռ ու սխալ են: Խոստանում եմ օգնել ձեզ և բէկին ընդունել տալ ձեր խնդիրքը, միայն այն պայմանով, որ դուք հէնց այս օրից թողնէք մեր աւերակուած երկիրը:

—Այդ պայմանը ես ընդունել չեմ կարող:

—Բայց եթէ բէկը լսելու լինի ձեր վերջին խօսքերը, ձեզ գլխատել կը տայ:

—Ինձ համար մի և նոյն է, թող ինձ գլխատել տայ, բայց խնայէ մնացածներին:

Մինչ այդ խօսակցութեան մէջ էին, նկատեցին, որ բանակի միւս ծայրից յառաջնեցաւ բէկը, նստած իր ձիւնի պէս սպիտակ նժոյգի վրա: Նրա մի կողմից, նոյնպէս ձիաւորված, գնում էր Մեխիթար սպարապետը, իսկ միւս կողմից՝ Թորոս իշխանը: Թիկնապահների խումբը հետևում էր նրանց: Յաղթութեան իշխանը հանդիսաւոր կերպով դիմում էր դէպի դեռ ևս մխացող բերդաքաղաքը:

—Դա ով է, հարցրեց վէզիրը, շարունակելով նայել:

—Բէկը, պատասխանեց սրբազանը.—երևի, գընում է բերդը տեսնելու:

Վէզիրը վեր կացաւ, դառնութեամբ ասելով.

—Գնում է տեսնելու, թէ ինչպէս են կոտորել, ինչպէս են ոչնչացրել... և եթէ մի բան պակաս է մնացել, լրացնել տայ.... Դրա մէջն է յաղթութեան փառքը և յաղթողի անսահման բերկրութիւնը, - որինով զովացնել իր վրէժխնդրութեան ծարաւը.... Ես էլ կը գնամ, կընկնեմ նրա ձիու սմբակի տակ, երեսս կը քսեմ փոշիներին, կաղաչեմ, կը պաղատեմ, որ բաւականանայ եղածով, որ դադարեցնէ արիւնհեղութիւնը...

—Գնացէք, ձեր մենակ գնալը աւելի յարմար է, պատասխանեց սրբազանը,—բայց ձեր խօսքերի մէջ զգոյշ եղէք, աշխատեցէք չը բարկացնել նրան: Իսկ ես ձեր ետևից կը գամ, կօգնեմ ձեզ իմ բարեխօսութիւնով:

Վէզիրը հեռացաւ: Իր կեանքում երբէք մի այսպիսի տխրութիւն յանձն առած չէր նա: Գաւուրի մօտ աղերսարկու լինել, դաւուրից գթութիւն խնդրել,—այդ անարգանքը մահուչափ ըսպանիչ էր նրա համար: Բայց նա յանձն առեց այդ ծանր զոհաբերութիւնը բազմաթիւ մուսուլմանների կեանքը փրկելու համար:

Գինիից դարձած բացախը աւելի թթու է լի-

նում»... մտածեց սրբազանը և տխրութեան մը-ռայլը անցաւ նրա բազմահոգ դէմքի վրա: Այդ մարդը, որպէս ինքը խոստովանեց, հայոց ծագումից է: Նոր կրօնի մոլեռանդութեան հետ միացրել է և հայի խելքը: Դա շատ վտանգաւոր բան է: Հայի խելքը հայի դէմ աւելի կործանիչ հետևանքներ է ունենում, քան թէ օտարինը: Հայը ընդունելով մի նոր կրօն, աւելի խաւարամիտ, աւելի վնասակար է դառնում իր ազգութեանը, քան նոյն կրօնին պատկանող ամբողջ հասարակութիւնը, որը մեր ազգից չէ: Ոչ ոք այնքան չէ վնասել հայոց հայրենիքին, որքան մեր արիւնակից դաւաճանները, որոնք մեզ թողնելով, անցան թշնամու կողմը: Ինչից է այդ: Դժուար է հասկանալ, բայց դժբախտաբար այդպէս է»...

Նա դուրս եկաւ իր վրանից և սկսեց գնալ ծերունի վէզիրի տանից: Արեգակը բաւական բարձրացել էր հօրիզոնի վրա, բայց ձորի անտառապատ խորութեան մէջ տակաւին ջերմութիւն չէր զգացվում: Վաղորդեան խոնաւ գոլորշիները բարձրանալով ծմակների միջից, տեղ-տեղ բամբակի աճագին կտորտանքի նման խառնում էին և ձիւնափայլ մառախուղի ձև էին ստանում: Ամենուրեք տիրում էր լռութիւն և անդորրութիւն. այլ ևս չէին լսվում գիշերային հրացանաձգութիւնների ձայները:

Բէկը, աչքերը յառած դէպի բերդը, իր երկու ուղեկիցների հետ, առաջ էր գնում: Նրա սառն դէմքի վրա չէր երևում ոչ յաղթողի ուրախութիւնը և ոչ էլ անբաւական մարդու դժգոհութիւնը, այլ մի տեսակ խորին մտածութիւն, որը, կարծես, արտայայտելիս լինէր այդ միտքը. «լաւ է, այդ բոլորը շատ լաւ է, բայց դրանից յետոյ ինչ պէտք է անել»...

Նա դարձաւ դէպի Մխիթար սպարապետը, ասելով.

—Այդ բերդը բաւական յոգնեցրեց մեզ. նա միշտ կը մնայ այդ ճանապարհի վրա որպէս մի դժուարարձակելի հանգոյց և որպէս մի մեծ խոչընդոտ, եթէ նրան ողջ թողնելու լինենք: Պէտք է այդ հանգոյցը բոլորովին ոչնչացնել:

—Ինչու ոչնչացնել, պատասխանեց սպարապետը.—քանի որ թշնամու ձեռքումն էր, նա կարող էր մեզ խոչընդոտ լինել, իսկ այժմ, երբ ընկաւ մեր ձեռքը, նոյն ծառայութիւնը կարող է մատուցանել և մեզ:

—Այդ իրաւ է: Բայց ես նպատակ ունեմ շինել տալ մի նոր բերդ, այստեղից հեռու, մի աւելի յարմար դիրքի վրա...

Դեռ չաւարտած իր խօսքը, բէկը նկատեց, որ մի մարդ բռնեց նրա ձիու սանձը, ասելով.

—Իշխան, խնդիրք ունեմ...

Բէկը կանգնեցրեց իր ձին: Նա չոքեց գետնի

վրա, և արտասուալի աչքերով ձեռքե՛րը դէպի երկինք բարձրացնելով, ասաց.

—Աստուած իր քաջերին յաղթութիւն է շնորհում և նրանց հզօր ձեռքը բարձրացնում է ազգերի ու ժողովուրդների վրա։ Նրանց ձեռքով խորտակում է Ամենակալը իշխողների գաւազանը և ոչնչացնում է նրանց զօրութիւնը, — այն իշխողների, որ ոտնակոխ են անում Աստուծոյ սահմանած օրէնքները, որոնց հիմքն է արդարութիւնը, որը կշիռն է ամեն իրաւունքների։ Դուք, իշխան, Արդարադատի բարկութեան սուրն էք, որով կամեցաւ Նա պատժել մեզ մեր մեղքերի համար։ Բայց Աստուծոյ ուղարկած պատուհասը իր սահմանն ունի։ Նա թէև տալիս է հզօրների ձեռքում իր վրէժխնդրութեան սուրը, բայց մի մոռացէք, իշխան, որ այդ սրի երախակալը գ թ ու թ ի ւ ն ն է։ Նա թէև յաղթութիւն է շնորհում իր քաջերին, բայց մի մոռացէք, իշխան, որ այդ յաղթութեան պսակը ն ե ր ո ւ մ ն է։ Այժմ ձեր ոտքերի փոշու տակ ընկած մարդը ձեզանից այդ երկու ողորմութիւնն է խնդրում՝—գթութիւն և ներումն։ Որովհետև Աստուած գթած է և ներող։ Թող օրհնեալ լինի Նրա ամենակարողութիւնը, թող անպակաս լինի ձեզանից Նրա շնորհը։

Բէկը որքան էլ խստասիրտ լինէր, որքան էլ զայրացած լինէր իր հայրենիքի թշնամիների վրա, այսու ամենայնիւ, ծերունու խօսքերը ազդեցին

նրա սրտին, և դառնալով դէպի սպարապետը, հարցրեց.

—Ո՞վ է այդ մարդը։

Այդ միջոցին վրա հասաւ Ներսէս սրբազանը, և առաջ անցնելով, պատասխանեց.

—Դա Ալամաղ-կուլի-խանի վէզիրն է, այն բռնապետի, որը իր ամրոցով այս գիշեր ցնդեց օդի մէջ։ Մի քանի րոպէ առաջ ինձ մօտ էր։ Ես երկար խօսեցի դրա հետ մահմեդականների դարևոր բարբարոսութիւնների մասին։ Նա համաձայնվեցաւ ինձ հետ և արդարացրեց մեր վարմունքը։ Ընդունեցէք, բէկ, ծերունի վէզիրի խնդիրը, հրամայեցէք դադարեցնել կոտորածը։ Թող ձեր շնորհն ու ողորմածութիւնը լինի վարձատրութիւն այդ մարդու այն ծառայութիւնների համար, որ իր պաշտօնավարութեան ընթացքում կատարել է այստեղի հայերի վերաբերութեամբ։ Նա իր բոլոր բարերարութիւնները պատմեց ինձ և նրանց անկեղծութեան մէջ—ես կասկած չունեմ։

—Ես կը հրամայեմ դադարեցնել կոտորածը, բայց բերդը պէտք է քանդվի, ասաց բէկը, և դառնալով դէպի ծերունի վէզիրը, աւելացրեց.

—Հէնց այս օրից, վէզիր, դու պիտի առնես քեզ հետ այդ բերդում մնացած մահմեդականներին և պիտի գաղթես դէպի Պարսկաստան։

Վէզիրը կամեցաւ մի խօսք ևս ասել, բայց սըրբազանը ակնարկեց նրան լռել:

Բէկը անցաւ դէպի բերդը:

ԻԲ.

Արծուանիկ կամ Նախջևանիկ *) կոչված աւանը մի ժամանակ Բարգիւշատի **) վիճակի գլխաքաղաքն էր: Այդ աւանը գոյութիւն ունի մինչև այսօր, գտնվում է մի լեռնային բարձրաւանդակի արևմտեան կողմի տափարակի վրա: Այստեղից երևում են Բարգիւշատի անտառապատ լեռնադաշտերը, որոնք սքանչելի տեսարաններով տարածվում են մինչև Երասխի հովիտը: Այստեղից երևում են հեռաւոր Ղարադաղի բարձրագագաթ սարերը, որոնք տարածվում են Երասխի աջ ափերի վրա:

Արծուանիկից դէպի ցած, սարի ստորոտից սկսվում է մի գեղեցիկ, բոլորաձև հովիտ, որը կըտրատվում է խորին ձորերով: Այդ ձորերի մթութեան մէջ, մինը միւսի մօտ, թաղնված են՝ Զափնիս, Բրկեննանց, Սևաքար, Շարադին հայաբնակ

---

*) Այդ աւանը կոչվում է նաև Երիցվանիկ, Երիցանկի վանքի պատճառով, որ գտնվում է աւանի մօտ, լեռան գագաթի վրա, և ժողովրդի մէջ յայտնի է անունով Կարմիր վանք:

**) Բարգիւշատը հին Բաղունիք կոչված գաւառն է:

գիւղերը: Ցիչեալ գիւղերը 2—3 ժամի ճանապարհով միայն հեռու են Արծուանիկից:

Արծուանիկը այժմ կորցրել է իր հին նշանակութիւնը, բայց նրա վաղեմի փառքի փշրանքները տակաւին պահպանվել են: Աւանի սարոտում մինչև այսօր երևում են մի հին ամրոցի աւերակների հետքերը. երևում են խորին այրեր, մթին քարանձաւներ, որ գտնվում են այդ ամրոցի մօտ, որոնք առաջ ծառայում էին որպէս պատսպարաններ, որպէս թագստի տեղեր:

Արծուանիկից շատ հեռու չէ այդ աւանի գերեզմանատունը, որ ունի առանձին եկեղեցի: Մի նեղ ճանապարհ տանում է դէպի ննջեցեալների հանգստարանը: Այդ ճանապարհի մի կողմում, ամենաւոր կաղնի ծառի հովանիի տակ, կայ մի առանձնացած գերեզման, որի վրա ձգած է մի հասարակ քար առանց խաչի և արձանագրութեան: Ինչու է նա առանձնացած, ինչու է նա բացակայ հասարակաց գերեզմանատնից, որ հեռու է նրանից մի հարիւր քայլով միայն:

Այդ գերեզմանը, թէև արհամարհված է մարդերից, բայց նրանցից մոռացված չէ: Հասարակաց գերեզմանատունը տեղ չը տուեց նրան իր հասարակութեան մէջ:- Բայց ամեն անգամ, երբ քահանան անցնելով նրա մօտից, գնում է ննջեցեալների հանգիստը օրհնելու,—ամեն անգամ, երբ տոների մայրերը գնում են իրանց հարազատների շի-

րիմների վրա խունկ ծխելու, աղօթելու,—ամեն անգամ, երբ մշակը գնում է դաշտը վար վարելու, նրանք անցնում են այդ միևնոյն գերեզմանի մօտով, անցնում են թքելով նրա վրա և անէծք կարդալով։

Այն օրից, որ այդ գերեզմանը գոյութիւն ունի, անցել է մէկ ու կէս դար, բայց ժողովուրդը դեռ չէ ներել նրան։ Ժողովուրդը միշտ անիծում է նրան։ Հարցրու պատահած մարդից, թէ մանուկ լինէր նա և թէ ալեւոր,—ո՞ւմն է պատկանում այդ նզովեալ գերեզմանը։ Նա քեզ կը պատասխանէ.

—Դա Մելիք-Ֆրանգիւլ դաւաճանի գերեզմանն է. հէնց այստեղ սպանեցին նրան, այստեղ էլ թաղեցին։ Նրա դիակը թոյլ չը տուեցին թաղել հասարակաց հանգստարանում, ննջեցեալների հանգիստը չը պղծելու համար։

Յետոյ ձեր խօսակիցը աւելի հեռու կը գնայ պատմական մանրամասների մէջ ու ձեզ կասէ.

—Տեսնում էք այդ ամրոցի աւերակները, որ երեւում են ձորի միւս կողմում.—դրանք մի ժամանակ չէն էին և պատկանում էին հէնց այդ դաւաճանին։ Երբ նրան սպանեցին, ամրոցն էլ քանդեցին։

—Ո՞վքեր քանդեցին։

—Մեր պապերը, կը պատասխանէ նա.—դաւաճանը մեր երկրին շատ վնասներ է տուել, դրա համար էլ սպանեցին նրան։

Յետոյ կաւելացնէ նա այնքան հետաքրքիր պատմութիւններ «դաւաճանի» մասին, որոնք մոռացուած են մեր գրաւոր պատմութեան մէջ, բայց հարիւր յիսուն տարի կենդանի մնացին ժողովրդի յիշողութեան մէջ և դեռ երկար կենդանի կը մնան։

Մելիք-Ֆրանգիւլին հարկ չը կայ նորից ներկայացնել մեր ընթերցողներին, որովհետև նրանք ծանօթ են այդ չարագործի հետ մեր վէպի առաջին գրքի մէջ։ Բայց այն օրից շատ փոփոխութիւններ պատահեցան նրա կեանքի մէջ, այդ փոփոխութիւնները մենք կը պատմենք մի քանի խօսքով միայն։

Ընթերցողը յիշում է, որ Մելիք-Ֆրանգիւլը Բարգիւշատի իշխանութիւնը ստանալու համար, չալաբիան կոչված թիւրք ցեղի խանի մօտ ընդունեց մահմեդականութիւն և իր աղջիկը խոստացաւ նրան կնութեան տալ։ Խանի միջնորդութեամբ Ֆաթալի-խանից ստացաւ նա Բարգիւշատի մելիքութիւնը։

Ծերունի խանը իր գեղեցիկ հրաշալի մաջուններով աշխատում էր վերադարձնել իր մանկութիւնը, որ մելիքի գեղեցիկ աղջկայ ամուսինը դառնայ։ Բայց մաջունները չօգնեցին, խանը մեռաւ, և օրիորդը թէև ազատուեցաւ փթած ծերուկի կինը լինելուց, բայց նրա հայրը Ֆաթալի-խանի հետ իր յարաբերութիւնները միշտ բարեկամական պահելու համար, իր աղջկան տուեց նրա եղբայր

Աղասի-խանին: Դրանով նրա աստիճանը բարձրացաւ, բացի մէլիքութիւնից, ստացաւ խանի մօտ ն ա ղ ի ր ի պաշտօնը:

Երբ Դաւիթ-բէկը յայտնվեցաւ, Սիւնեաց աշխարհի պետերից երկու մարդ միայն չը միացան նրա հետ. մէկը Տաթևի Մէլիք-Դաւիթ ուրացողը, միւսը, Արծուանիկի Մէլիք-Ֆրանգիւլ ուրացողը: Երկուսն էլ Ֆաթալի-խանի գործիքները, նրա չար արբանեակներն էին: Մէլիք-Դաւիթ ուրացողի վախճանը մեր ընթերցողներին յայտնի է: Դաւիթ-բէկը նրան գլխատել տուեց. նրա ամբողջ ընտանիքը Սատանի-կամուրջից *) ածել տուեց Որոտնայ գետի մէջ: Նրա որդի Շահ-կուլին, կռուի դաշտից փախչելու ժամանակ, Տանձատափի **) գիւղում սպանվեցաւ մի կնոջ ձեռքով: Մնում էր Մէլիք-Ֆրանգիւլը:

Զէյվա բերդի գրաւումից երկու օր յետոյ, այդ մարդը, իր ամրոցի սենեակներից մէկի մէջ, ան-

*) Սատանի-կամուրջը գտնվում է Որոտնայ գետի վրա, հեռու է Տաթևի վանքից մէկ ժամու ճանապարհով. Նա կոչվում է սատանայի կամուրջ այն պատճառով, որ բնական կերպով կազմված է հետզհետէ աճող ստալակտիտներից: Կամուրջի մօտ կայ մի աղբիւր, որ պարունակում է իր մէջ կրային բաղադրութիւն, նրա ջրի քարանալուց կազմվել է կամուրջը:

**) Տանձատափը գտնվում է Տաթևի վանքի հանդէպ:

հանգիստ կերպով անցուդարձ էր անում: Գիշեր էր: Սենեակի դուռն հանդէպ կանգնած էր մի այլ մարդ մռայլոտ կերպարանքով և ճանապարհի հագուստով: Երևում էր, որ նա հէնց նոր վերադարձել էր իր ուղևորութիւնից: Այդ մարդուն կոչում էին քէչալ Համբարձում. նա մէլիքի գզիրն էր:

—Ուրեմն այդպէս, բերդը առեցին... խօսեց մըտայոյզ մէլիքը, շարունակելով իր անցուդարձը:

—Յետոյ ի՞նչ արեցին:

—Յետոյ ի՞նչ պէտք է անէին, պատասխանեց քէչալը ծիծաղելով.—կարող էք երևակայել, թէ ինչ կանէին. մարդիկներին կոտորեցին, տները այրեցին, խանին իր ամրոցի հետ թաղեցին օդի մէջ. հիմա Զէյվան, նայեցէք, այսպէս է դարձել: Վերջին խօսքերի միջոցին նա բաց արեց իր ափը, ցոյց տալու համար, թէ բերդի տեղը նրա ափի նման հարթ հաւասար է դարձել:

—Շատ են կոտորել:

—Աւելի քան չորս հազար հոգի: Բոլորին կը կոտորէին, եթէ խանի վէզիրը և Ներսէս սրբազանը չը միջնորդէին բէկի մօտ:

—Մնացած բնակիչները ի՞նչ եղան:

—Հայերին գաղթեցրին ուրիշ տեղ *), իսկ

*) Հին Զէյվայի հայ բնակիչները, այդ բերդի աւերակ դառնալուց յետոյ, գաղթեցին Բարգիւշատի Մուղանջիկ կոչված մասում, հիմնեցին նոր Զէյվան, որ մինչև այսօր գոյութիւն ունի:

թիւրքերին հրամայեցին հեռանալ դէպի Պարսկաստան *):

Մէլիքի վրդովմունքը հասկանալի էր. նա անդադար մատներով գզգզում էր իր երկայն մօրուքը, որ թիւրքերի սովորութեան համեմատ ներկած էր խինայով:

Նա դարձաւ կանգնեց իր լրտեսի առջև, հարցնելով.

—Բերդը ոչնչացնելուց յետոյ բէկի զօրքերը որտեղ գնացին:

—Գնացին դէպի զանազան կողմեր նոր յաղթութիւններ անելու համար:

—Կարո՞ղ ես առանձին-առանձին պատմել ինձ, թէ զօրապետներից որը ո՛ր կողմ գնաց:

—Ինչու չեմ կարող, պատասխանեց լրտեսը, դարձնելով իր բերած տեղեկութիւնների վրա:— Ինքը բէկը Մխիթար սպարապետի և Ներսէս արքապանի հետ գնացին Որոտնայ բերդի վրա: Մէլիք-Փարսադանին, Աֆթանդիլ փոխապետին և Պապ զօրապետին ուղարկեցին դէպի Գենուազի կողմերը Մեղրին առնելու համար: Իսկ Թորոս իշխանին ուղարկեցին դէպի մեր կողմը:

---

*) Իսկ նոյն բերդի թիւրք բնակիչները, անցան Երասխը, գնացին Պարսկաստան և Մարանդի գաւառում հիմնեցին մի նոր գիւղ, որը մինչև այսօր էլ կոչվում է Չէյվայ կամ Չէվա:

—Ուրեմն իմ հին թշնամին իմ դէմ են ուղարկել... ասաց նա ատամները կրճտացնելով:

Թորոս իշխանը և Մէլիք-Ֆրանգիւլը տոհմային թշնամութիւն ունէին միմեանց հետ, որ ժառանգել էին իրանց պապերի ժամանակից: Նրանց թշնամութիւնը աւելի սաստկացաւ, սկսեալ այն օրից, երբ Մէլիք-Ֆրանգիւլը մահմեդականութիւն ընդունելով, մտաւ Ֆաթալի-խանի պաշտպանութեան ներքոյ և սկսեց Թորոս իշխանի երկրի վրա յարձակումներ գործել: Թորոս իշխանի երկիրը՝ Զանգեզուրի գաւառը սահմանակից էր Բարգիւշատին, որ իշխում էր Մէլիք-Ֆրանգիւլը:

—Թորոսի հետ այլ ևս ովքեր կան, հարցրեց մէլիքը բաւական մտածութիւնից յետոյ:

—Թորոսի հետն է իշխան Ստեփաննոս Շահումեանը, Մէլիք-Փարսադանի որդի Բաղի զօրապետը և Թորոսի ազգական Մէլիք-Նուբարը:

—Բոլորը լաւ պտուղներ են... ասաց մէլիքը դառն ժպտալով:—Ընտրութիւնը վատ չէ... այդ բէկը, երևում է, գործ հասկացող մարդ է... իմ դէմ ուղարկում է այնպիսի մարդիկ, որոնք հին հաշիւներ ունեն ինձ հետ վերջացնելու...

—Բայց դու կարո՞ղ ես ինձ ասել, թէ որքան հոգուց է բաղկացած Թորոսի զօրախումբը, դարձաւ նա դէպի լրտեսը:

—Կարող եմ, պատասխանեց լրտեսը.—մատներով կարելի է համրել նրա ունեցած զօրքը.

—հինգ հազար հոգուց աւել չի լինի. հազար հո-գու չափ ձիաւորներ են, իսկ մնացածները հե-տևակներ:

—Ի՞նչպէս են զինված:

—Զէնքերի կողմից, պէտք է ասած, վատ չեն. Ասլամազ-Կուլի-խանի բոլոր ընտիր զէնքերը հիմա դրանց ձեռքումն է:

Մելիքը դարձեալ լուռ կացաւ, չարունակեց իր անցուդարձը սենեակի մէջ: Նրա մի քանի րոպէ առաջ մռայլված դէմքը այժմ փոքր ինչ պարզ-վեցաւ: Իր մտքում նա խկոյն հաշուեց, թէ թըշ-նամու հինգ հազարի դէմ ո՞րքան զօրք կարող էր դուրս բերել ինքը և իր պաշտպան Ֆաթալի-խա-նը: Նա կրկին դարձաւ դէպի լրտեսը.

—Դու ինձ ոչինչ չասեցիր տէր Աւետիքի մա-սին:

—Հա՛, մոռացայ, «մեծ էշը ախոռումն է մնա-ցել»... պատասխանեց քէչալը ծիծաղելով:—Տէր Աւետիքը Բայինդուր իշխանի հետ (այդ գիժը մի զարմանալի մարդ է) և Տաթևի միաբան Խորէն հայր սուրբի հետ գնացին դէպի Զանգեզուրի և Սիսիանի կողմերը:—Մի բան ասեմ ծիծաղեցէք. դրանց զօրքի մէջ կայ մի կին, որին կոչում են Սառա, դա, ասում են, Խորէն հայր սուրբի սի-րուհին է. կայ և մի աղջիկ, որին կոչում են Փա-րիչան, դա ամբողջ զօրախմբի որդեգրուհին է: Ամեն անգամ կռուից առաջ այդ աղջիկը իր ձեռ-

քով արագ է բաժանում զինուորներին, որ լաւ կռուեն: Անիծածը շատ գեղեցիկ է, եթէ ինձ էլ խմացնէր, խաչը վկայ, ես էլ սուրբ կը դառ-նայի...

Լրտեսի վերջին խօսքերը ոչ շարժեցին մելիքի ծիծաղը և ոչ էլ հետաքրքրեցին նրան: Նա ընդ-հատեց հրապուրված քէչալի պատմութիւնը, հարցնելով.

—Քո ինձ հաղորդած տեղեկութիւնները ինչ-պէս հաւաքեցիր:

—Ես բէկի բանակի մէջ էի, շատ բան այնտեղ խօսվում էր... ասաց լրտեսը, յետոյ սկսեց պատ-մել, թէ որպիսի խորամանկութիւններ գործ դրեց իր ցանկացած տեղեկութիւնները ձեռք բերելու համար:

—Քեզ չը ճանաչեցին:

—Ի՞նչպէս կարող էին ճանաչել: Ամեն կողմից միշտ նոր և անծանօթ մարդիկ են գալիս և միա-նում են նրանց զօրքերի հետ: Սկզբից երդվում են տալիս և ընդունում են:

—Դու էլ երդուեցա՞ր:

—Ի հարկէ երդուեցայ, բայց հաւատացած եմ, որ նրանց խաչն ու աւետարանը իմ աչքերը չեն քօռացնի, հիմա շատ գեղեցիկ կերպով տեսնում եմ:

—Շա՛տ ապրիս, Համբարձում, համակրութեամբ ասաց նրան մելիքը:—Բոլորը հասկացայ, ինչ որ հարկաւոր էր ինձ գիտենալ: Հիմա կարող ես

գնալ, դու ճանապարհից ես եկել, յոգնած կը լինես, քեզ պէտք է հանգստանալ: Ես վաղ առաւօտեան կրկին կանչելու եմ քեզ:

Լրտեսը գլուխ տուեց և հեռացաւ:

Մելիքը մնաց միայնակ:

Գիշերից բաւական անցել էր. աքաղաղները ձայնում էին. ամրոցի մէջ տիրում էր խորին լռութիւն. բոլորը քնած էին: Արթուն էր միայն ամրոցի տէրը: Նա ես մօտեցաւ, և առանց հանվելու պառկեց անկողնի վրա, որ պատրաստուած էր մի և նոյն սենեակում: Երկար պառկած մնաց, բայց քնել չը կարողացաւ: Դառն մտածութիւններ ալեկոծում էին նրա սիրտը: Նա նմանում էր մի մարդու, որ սարսափելի նաւաբեկութիւնից յետոյ, մնում է մի կտոր տախտակի վրա, սկսում է կռուել ալիքների հետ, յուսալով, որ նրանք կամ կը տանեն նրան դէպի ծովի անդունդը, կամ կը ձգեն ցամաքի վրա…

Լրտեսից ստացած տեղեկութիւնները բէկի յաջողութիւնների մասին թունաւոր նետերի նման ծակոտում էին նրա սիրտը: Նրա վրա ուղարկուած էր իր հին թշնամին՝ Թորոս իշխանը, Զանգզուրի տէրը: Այդ հպարտ, գոռոզ, ոխակալ իշխանի վրէժխնդրական ոգին նրան վաղուց յայտնի էր: Նա գիտէր, որ իշխանը կը վարուէր իր հետ այնպէս, որպէս բէկը վարուեց Դաւիթ ուրացողի հետ: Եւ Թորոսը շատ իրաւացի պատճառներ ունէր

այդպէս վարվելու: Ինքը զգում էր, թէ որքան վնասներ էր հասցրել նրան, որքան վշտեր էր պատճառել նրան… այդ բոլորի համար պէտք էր տուժել…

Բայց նրա աչքի առջև դրած էր մի ընդհանուր գործ՝ հայոց աշխարհի փրկութեան գործը: Բէկը և նրա կուսակիցները ուրիշ ոչինչ չէին, եթէ ոչ այդ գործի գլուխ տանող բանուորները: Իր անձնական, մասնաւոր հաշիւները Թորոսի հետ կորչում էին, անհետանում էին այդ գործի մեծութեան առջև:

Մելիքը բնաւորութեամբ բարի մարդ էր, բայց սաստիկ փառասէր: Իր փառասիրութեանը զոհեց նա հայրենական կրօնը և մինչև անգամ իր հարազատ աղջիկը: Բայց նա իր համոզմունքներով իսկապէս ոչ քրիստոնեայ էր և ոչ մահմետական: Նպատակը նրա մէջ արդարացնում էր ամէն տեսակ միջոցներ: Նրան հարկաւոր էր պահպանել իր տոհմային ժառանգութիւնը՝— Բարգիւշատի գաւառի իշխանութիւնը: Դրա համար պէտք էր գրաւել երկու հզօր պաշտպաններ, որպէս էին՝ Ֆաթալի-խանը և նրա եղբայր Աղասի-խանը: Նա գրաւեց նրանց, մէկի համար ուրանալով իր կրօնը, իսկ միւսին տալով իր աղջիկը:

Բայց իբրև հայ, նա ցանկանում էր Հայաստանի բարին, ցանկանում էր, որ այդ երկիրը ազատ լինի, բախտաւոր լինի, ցանկանում էր, որ նա

ունենայ իր հայ իշխողը, բայց այդ իշխողը լինի ոչ այլ ոք, բայց միայն—ինքը: Այսպէս այսպէս էր հասնում նրա փառասիրութիւնը:

Նա բարկանում էր բէկի յաջողութիւնների վրա, ոչ այն պատճառով, որ այդ յաջողութիւնները օգտակար չէր համարում իր հայրենիքին, այլ առաւել այն պատճառով, թէ ինչու ինքը չը պիտի լինէր պարագլուխ այդ ազգային շարժմանը, ինչու ուրիշները պիտի վայելէին այն փառքը, որին ինքն էր միայն արժանի:

Բայց նա ոչ մի ազգային շարժման պարագլուխ լինել կարող չէր. նա կորցրել էր իր հաւատարմութիւնը հայ ժողովրդի աչքում: նա խորթացել էր հայ հասարակութեան համար: Ինչու: Նրա համար որ, նա այլ ևս այնպէս չէր աղօթում, ինչպէս միւս հայերը: Ո՞վ էր մեղաւոր, ինքը թէ հասարակութիւնը, որ նրան դուրս էր վռնդում իր միջից, որ զզուանքով խորշում էր նրանից: Այդ զզուանքը աւելի կատաղեցնում էր նրան և յախամայից ծնեցնում էր նրա մէջ մի այսպիսի միտք. «եթէ դուք ինձ չէք ճանաչում իբրև ձեր մարմնից և արիւնից, ես յաւիտեան ձեզ ճանաչել չեմ ցանկանայ»...

Նա վեր կացաւ պառկած տեղից, սկսեց կըրկին անցուդարձ անել սենեակի մէջ: Խիղճը տանջում էր նրան: «Ոչ, մտածում էր նա, ինձ չի ների ոչ երկինքը և ոչ երկիրը, եթէ ես կը դաւա-

ճանեմ իմ հայրենիքի փրկութեան գործին: Բէկի յաջողութիւնները դեռ չէ կարելի բոլորովին ապահովված համարել: Նա, ճիշդ է, փշրեց մեր երկրի նշանաւոր բռնաւորներից մէկին՝ Ասլամազ-կուլի-խանի զօրութիւնը, բայց դեռ ամենահրէշաւոր վիշապը մնում է, որի գլուխը նոյնպէս պէտք է խորտակել: Այդ վիշապը Ֆաթալի-խանն է, որ նստած է մեր երկրի սրտի մէջ, իսկ ես—նրա աջ ձեռքն եմ: Առանց ինձ նա ոչինչ է, իսկ առանց նրան ես ոչինչ եմ: Մեր երկուսի միաւորութիւնը կազմում է մի դարաւոր ամբողջ, որի առջև կը ոչնչանան բէկի բոլոր զօրութիւնները: Բայց միթէ Աստուած և նրա սուրբերը կը ներեն ինձ, եթէ ես միանամ օտարի հետ և պատերազմեմ իմ հայրենիքի փրկիչների դէմ: Միթէ ապագայ սերունդը մինչև յաւիտեան անէծքով և նախատինքով չի դատապարտի իմ յիշատակը: Ոչ, ես ուրացողի անունը կրեցի, բայց դաւաճանի անուն ժառանգել չեմ ցանկանայ: Կը գնամ բէկի և Ներսէս պարոնի մօտ, կը չոքեմ նրանց առջև ու կասեմ. «ընդունեցէ՛ք ձեր անառակ որդուն. կորած էի՝ գտնուեցայ, մեռած էի՝ կենդանացայ»...

«Բայց ես ուշացայ, ես շատ ուշացայ: Ես այդ պիտի անէի այն ժամանակ, երբ մեր երկրի պետերը հաւաքուեցան Տաթևի վանքի տաճարի մէջ և սուրբ Կարապետի գերեզմանի վրա ուխտ ուխ-

տեցին, համատարածութեան երգում տուեցին: Ես ուշացայ: Հիմա նրանք այլ ևս չեն հաւատայ իմ անկեղծութեանը: Եւ իրաւունք ունեն չը հաւատալու: Իմ ամբողջ կեանքը, իմ գործունէութիւնը միշտ վատ վկայութիւն կը տան իմ մասին: Ես միշտ ծածկված եմ եղել մի կեղծ, խաբուսիկ կեղեւով: Դրսից ներկայացել եմ որպէս պաշտօնեայ, որպէս գործիք օտարի, իսկ ներսից պաշտպանել եմ իմ ազգի շահերը: Ես յայտնապէս վնաս եմ տուել իմ ազգին, բայց գաղտնապէս օգնել եմ նրան: Բայց ով է քննում մարդկանց սիրտը, որ թագնված է խաւարի և մթութեան մէջ: Ամեն ինչ դատում են արտաքին փաստերով, որ աւելի աչքի են զարկում, որ աւելի շօշափելի են:

«Ի՞նչ պիտի անես, երբ օտարի, երբ թշնամու ծառայութեան մէջ ես գտնվում: Մի պատառ պէտք է ձգես նրա բերանը, որ կարողանաս ամբողջը ազատել: Ես տուեցի Ֆաթալի-խանին մի վանք, որ նա իր համար ամարանոց կառուցանէ և դրանով ազատեցի մեր բոլոր վանքերը: Ես տուեցի նրա եղբօրը իմ հարազատ աղջիկը և դրանով ազատեցի հազարաւոր աղջիկներ մահմեդականի կին լինելուց: Ես ուրացայ իմ կրօնը, ընդունեցի մահմեդականութիւն, որ դրանով գրաւեմ իմ թշնամու մտերմութիւնը, որ դրանով աւելի խոր մտնեմ նրա սրտի մէջ, որ կարողանամ նրան իմ ձեռքում պահել: Այդ բոլորը արեցի ես

միայն նպատակների համար: Բայց Աստուած յայտնի է, որ իմ նպատակները չար չէին: Նրանք կարող են այժմ չար երևալ, որովհետև իմ նախաձեռնութիւնը անկատար մնաց... ես չը կարողացայ ի կատար հանել այն մեծ շինվածքը, որի հիմքը դրել էի»...

Այսպէս տարուբերվում էր, օրօրվում էր իր մտածութիւնների մէջ այդ դժբախտ մարդը, բայց մի ելք, սրտի և հոգու հանգստութիւն գտնել չէր կարողանում:

Սենեակի օդը խեղդելու չափ ծանր էր. գուցէ այդպէս երևում էր նրան: Բորբոքված սրտի կրակը յարուցել էր նրա մէջ մի տեսակ տենդային ջերմութիւն, որ ազդում է և ուղեղի վրա: Նա մօտեցաւ պատուհանին, բաց արեց լուսամուտը, նայեց նրա հանդէպ, որ փոքր ինչ զովանայ, որ փոքր ինչ ազատ շունչ առնէ:

Դրսում խաղաղ գիշեր էր: Նա երկար մի առանձին հաճութեամբ նայում էր գիշերային խաւարի մէջ: Այդ խաւարը համապատասխանում էր նրա մտքի խաւարին: Որպէս մթնոլորտի մթութեան մէջ նա որոշ ոչինչ չէր տեսնում, այնպէս էլ իր մտքի խաւարի մէջ ամեն ինչ պարզ չէր, ամեն ինչ պատած էր խորին մռայլով:

Յանկարծ նրա աչքին ընկաւ լուսնի նորածին եղջիւրը, որը նշմարվում էր հօրիզոնի վրա, և կամաց-կամաց իջնում էր դէպի իր մուտքը: Տխ-

գեղջի մթութեան մէջ այդ աղօտ լուսատու կէտը կլանեց նրա ուշադրութիւնը: Կարծես, նա պիտի պարզէր նրա մտքի մռայլը, կարծես, նրանից էր սպասում իր ճակատագրի վճիռը:

«Թող Աստուած ինքը վճռէ»... ասաց նա և գրպանից հանեց իր երկայն տերողորմեան, ըսկսեց մէկ-մէկ դարձնել նրա հատիկները, աչքերը չը հեռացնելով լուսնի վրա նայելուց:

Տերողորմեայի վրա կային յիսուն հատիկներ, ամեն անգամ, երբ յիսուն թիւը լրանում էր, նա եղունգով մի խազ էր գծում պատի վրա: Երկար այդ գործողութիւնը շարունակում էր նա, անշարժ աչքերը սեւեռած պահելով լուսնի վրա: Պատի վրայի խազերը հետզհետէ աւելանում էին:

Լուսինը մայր մտնելու մօտ էր: Այժմ նրա ձեռքերը սկսեցին դողդողալ և սիրտը սաստիկ բաբախում էր: Բայց տերողորմեայի հատիկները շարունակում էր դարձնել:

Լուսինը ծածկվեցաւ լեռների ետեւում, թողնելով հորիզոնի վրա մի աղօտ լուսաւորութիւն: Նա սոսկալի զգացմունքով գծեց պատի վրա վերջին խազը: Մի քանի րոպէ մնաց շուարած, խուլ անվճռականութեան մէջ: Յետոյ սկսեց հաշուել, գումարել խազերը:

«Մէկ, երկու, երեք.... խազերի ամբողջ թիւը քսան և մէկ է.... ուրեմն գումարը կը լինի մի հազար և յիսուն»...

Նա սարսափելով ձեռքը խփեց իր ճակատին և քարացածի նման մնաց անշարժ:

Վիճակը դուրս եկաւ յօգուտ Ֆաթալի-խանին...

ԻԹ

Արծուանիկ աւանի արեւելեան կողմում բարձրանում է մի անտառապատ սար, որը պարսպի ձեւով տարածվում է հիւսիսից դէպի հարաւ: Այդ սարի կուրծքին կպած է գեղեցկադիր աւանը, իսկ սարի վրա, հովանաւորված ահագին կաղնի ծառերով, կանգնած է «Կարմիր վանքը», որ կառուցվել է նոյն լեռան կարմրագոյն քարերից, սուրբ Նախավկայի անունով: Այդ հոյակապ վանքը չորրորդ դարու վերջերում հիմնեց Երիցակ անունով ճգնաւորը, դրա համար էլ կոչվում է Երիցակայ վանք:

Երիցակը կազմեց այդ վանքում մշտակեաց կրօնաւորների մի միաբանութիւն, որոնք միայն Աստուծոյ և Նրա սուրբերի հետ էին խօսում, և իր ճգնաւորական օրինակով աւելի քաջալերեց աբեղաների խստակեցութիւնը: Երբ Սիւնեաց Սահակիա մելիքը Հայոց Մուշէ հայրապետին նստացրեց իր ոսկեպատ կառքի մէջ, որ լծած էր ըսպիտակ ջորիներով, և փառաւոր հանդէսով ուղարկեց նրան Երիցակին հրաւիրելու, որ նա ընդունէ Սիւնեաց կաթողիկոսութեան աթոռը, այդ

ժամանակ Երիցակը պարանով կախվեցաւ վանքի պարսպից և կամենում էր փախչել:

Մինչև այսօր ժողովրդի մէջ դեռ մնացել է վաղեմի աւանդութիւնը այն մասին, թէ երբ Մուշէ հայրապետը աշխատում էր համոզել Երիցակին, որ նա ընդունէ կաթողիկոսական աթոռը, սուրբ ճգնաւորը համեստութեամբ հրաժարվում էր, ասելով, թէ ինքը արժանաւորութիւն չունի այդ բարձր կոչմանը: Այդ միջոցին նրա խցի դրան մօտ իջան մի խումբ աղաւնիներ, և նրանցից մէկը, թռչելով նստեց սուրբ ճգնաւորի ուսի վրա, և մարդկային բարբառով ասաց. «արժան է, արժան է»:

Խօսում են և այն, թէ երբ սուրբ ճգնաւորը մի անգամ որպէս ուխտաւոր գնացած էր Երուսաղէմի հայոց վանքը, յանկարծ Յիսուս Քրիստոսի ծննդեան տօնի ճրագալոյցի երեկոյին մտաբերեց իր հեռաւոր վանքը, որ գտնվում էր Սիւնեաց աշխարհում, մտաբերեց իր միաբանակից եղբայրներին և ցանկացաւ՝ նրանց հետ միասին կատարել ծննդեան տօնը: Երբ այդ ցանկութեամբ սուրբ Բէթլէհեմի այրի դրան հանդէպ կանգնած լաց էր լինում նա, մօտեցաւ մի կին, և նստեցրեց նրան մի կախարդական սաւանի վրա, որը մի ակնթարթում Երուսաղէմից հասցրեց նրան Սիւնեաց աշխարհը և իր վանքը Արծուանիկում: Միաբանները դեռ չէին աւարտել ճրագալոյցի երեկոյեան պա-

տարագը, երբ տեսան նրան և զարմացան: *)

Երիցակայ վանքը Սիւնեաց աշխարհի ամենափառաւոր վանքերից մէկն էր. նրա հօյակապ շինվածքը ներկայացնում էր հայկական ճարտարապետութեան զքանչելի գործերից մէկը: Նրա չուրջը գտնվում էին մենակեաց միաբանների համար գեղեցիկ խուցեր, ընդարձակ սեղանատուն, ամբարանոցներ լի ամեն տեսակ պաշարեղէններով և ախոռատուներ բազմաթիւ անասուններով: Այստեղ կերակրվում էին մարդկային հասարակութիւնից հալածված ուրուկներ և այլ տեսակ ախտաւորներ, որոնց վրա միաբանութիւնը առանձին խնամք էր տանում և բժշկում էր:

Վանքը, որպէս մի գեղեցիկ պսակ, դրած էր լեռնային բարձրաւանդակի վրա, հովանաւորված անտառի մշտականաչ ծառաստանով, որի լռութեան մէջ, թռչունների ուրախ երգերի հետ, հնչվում էին Աստծուն նուիրված աղօթքների սաղմոսերգութիւնները: Նրա ստորոտում, ժայռերի արանքում գտնվում էին բնական քարանձաւներ, որոնց մուտքը թաքնված էր խիտ պատատուկների մէջ, որոնք ծտերի բոյնի նման կախված էին անդունդի վրա, որը հազարաւոր քայլերի խորութեամբ, որպէս մի հսկայական վիհ, բացվում էր դէպի ցած:

*) Այդ աւանդութիւնը նկարագրում է և Ստեփաննոս Օրբելեանը իր Սիւնեաց պատմութեան ԺԹ գլխում:

Այդ քարանձաւների խուլութեան մէջ առանձնացած էր աշխարհից բոլորովին հրաժարուած ճգնաւորների միաբանութիւնը, որոնք ոչ արեւ լոյս էին տեսնում և ոչ ադամորդիների երես:

Բայց Դաւիթ-բէկի յայտնվելուց մի քանի տարի առաջ այդ վանքը, որ աւելի քան տասն և երկու դար գոյութիւն ունէր, բոլորովին քայքայվեցաւ, բոլորովին զրկվեցաւ իր վայելչութիւնից:

Այդ ժամանակ վանքի միայն մերկ կմախքն էր մնացել: Հոյակապ տաճարի արտաքին սրբատաշ քարերը պոկած էին. կանգնած մնում էին միայն ահագին կամարները *): Բացի տաճարից, վանքի բոլոր շինութիւնները քանդած էին: Իսկ նրանց փոխարէն, մի քանի քայլ հեռաւորութեան վրա, կառուցած էր մի հիանալի ամարանոց: Այդ ամարանոցը պատկանում էր Ֆաթալի-խանին: Նա շինել էր վանքի քարերով: Անգութ թիւրքը չը խնայեց մինչև անգամ եպիսկոպոսների շիրիմներին, սրբերի գերեզմաններին, և նրանց տապանաքարերը գործ ածեց բաղնիքների ու ախոռատների շինութեան համար: Միշտ աղօթող ճգնաւորների մենարաններում այժմ բնակվում էին ուղտապաններ:

Ֆաթալի-խանը, որպէս մի խաշնարած ցեղի

*) Մի և նոյն դրութեան մէջ մնում են մինչև այսօր:

գլխաւոր, իր հօտերը տարվայ տաք եղանակները առաջ անց էր կացնում Ղարադաղի լեռների վրա, իսկ ձմեռը վերադառնում էր Բարգիւշատի գաւառը, բնակվում էր իր սեփական ձմերանոցում, որ գտնվում էր Ալթինջի գիւղում: Բայց այն օրից, երբ նա բարեկամացաւ Մէլիք-Ֆրանգիւլ ուրացողի հետ, փոխեց իր կենցաղավարութեան եղանակը: Մէլիքը նրան մի առանձին ծառայութիւն անելու համար, թոյլ տուեց իր սեփական աւանի՝ Արծուանիկի մօտ ամարանոց կառուցանել: Խանը ընտրեց Երիցակայ վանքի գտնված տեղը, որը իր սքանչելի դիրքով, իր լեռնային բարձրութեամբ և գեղեցիկ անտառներով ամեն յարմարութիւններ ունէր ամարանոցի համար:

Մէլիքը մատնեց մահմեդականի ձեռքը այդ քրիստոնէական վաղեմի սրբավայրը, մի լոկ նպատակի համար, որ նրան իր մօտ պահէ, որ պատահած ժամանակ կարողանայ նրա ուժերից օգուտ քաղել:

Խանը շինեց իր հիանալի ամարանոցը հայոց վանքի քարերով և մի հարուստ հայից յափշտակած փողերով: Այդ հայի անունն էր Խօջա-Օհան, որը բնակվում էր իր հիմնած սեփական գիւղում, որ իր անունով կոչվում էր Խօջահան *): Խօջա-Օ-

*) Այդ գիւղը այժմ թիւրքաբնակ է և կիսաւեր դրութեան մէջ, գտնվում է Բարգիւշատի գաւառում:

համը մի երևելի վաճառական էր, խանը մեղադրեց նրան այն յանցանքի մէջ, իբր թէ նա հեռաւոր երկրներից զէնքեր է տեղափոխում իր թշնամիների համար: Այդ առիթով սպանեց նրան, նրա անբաւ հարստութիւնը յափշտակեց և նրա ամբողջ ազգատոհմը բռնաւորի անգթութեանը զոհ դարձաւ:

Առաւօտ էր, այն գեղեցիկ, խաղաղ առաւօտներից մէկը, որ միայն լեռնային անտառապատ աշխարհներին յատուկ է:

Փաթալի-խանի ամարանոցի մէջ դեռ բոլորը քնած էին: Մի տիկին միայն զարթել էր, հագնւել էր, պատրաստւում էր կատարել վաղորդեան աղօթքը: Արևելքի առաջին ճառագայթները, ներս սողալով սենեակի պատուհաններից, լուսաւորում էին նրա չքնաղ օթևանը վառ-ծիրանեգոյն պայծառութեամբ: Բայց տիկինը իջեցրեց պատուհանների վարագոյրները, կարծես, այդ լոյսը կարող էր արգելք լինել նրա աղօթելուն: Յետոյ ներսից կողպեց նախասենեակի դուռը, որ ոչ ոք իրան չը խանգարէ:

Մահմեդական կանայքը ամենևին աղօթելու ազատութիւն չունեն, իսկ տղամարդիկը միայն աղօթում են ի ցոյց մարդկան՝ հրապարակների վրա, ճանապարհների եզերքում, մի խօսքով, որտեղ որ պատահի:

Բայց այդ տիկինը, կողպելով իր սենեակի դռները, ոչ թէ կատարում էր մի յայտնի պատուէր,

այլ աւելի երկիւղ ունէր, մի գուցէ իր աղօթելը նկատելի լինի:

Դուռը կողպելուց յետոյ, նա միանձնուհու հանդարտ քայլերով, մօտեցաւ սենեակի արևելեան կողմի պատին, և զգուշութեամբ բարձրացրեց մետաքսեայ վարագոյրը, որ քարշ էր ընկած պատի երեսից: Վարագոյրի ետևում յայտնւեցաւ մի խաչ, որ փորած էր քարի վրա: Տիկինը ծունկ իջաւ նրա առջև, ձեռքերը փակեց կուրծքի վրա և իր ջերմեռանդութեամբ լի աչքերը դարձրեց դէպի երկինքը:

Խաչի ներքև, քարի վրա նշմարւում էին մի քանի եղծւած հայերէն տառեր: Երևում էր, սենեակի շինութեան ժամանակ այդ քարը պատահմամբ ընկել էր այնտեղ: Ամբողջ ամարանոցը կառուցւած լինելով վանքի քարերով, որոնց վրա դեռ պահպանւել էին քրիստոնէական տաճարի յիշատակարանները, միայն ծեփած էին գաճով, որ աչքի չը զարկին: Բայց այն օրից, երբ յայտնւեցաւ այդ խաչը, տիկինը համարում էր իր համար մի սրբազան գիւտ: Յանկարծ պոկւեցաւ պատի ծեփը և նրա տակից երևաց խաչը: Տիկինը իր միակ մխիթարութիւնը ծածկեց վարագոյրով, և այնուհետև իր սովորական աղօթքները կատարում էր նրա հանդէպ:

Ընթերցողը կարող է նախագուշակել, թէ ով էր այդ բարեպաշտ տիկինը, որ մահմեդական հարեմի մէջ աղօթում էր քրիստոնէական խաչի

տաշն: Դա մեր վաղեմի ծանօթ Սիւրէն էր, Տաթեւի Դաւիթ ուրացողի աղջիկը, Ֆաթալի-խանի նշանաւոր խանումներից մէկը:

Այն օրից, որ մենք բաժանվեցանք Սիւրէի հետ, անցել է տասն եօթն տարի. դա մի նշանաւոր թիւ է կնոջ հասակի համար: Սիւրէն այժմ կորցրել է իր մանկական թարմութիւնը. նա տարիքն առած կին է, բայց առաջվայ նման նոյնպէս գեղեցիկ է նա, նոյնպէս հրապուրիչ է, միայն հասունացած կնոջ գեղեցկութեամբ:

Վերջին տարիներում աւելի մաշվեցաւ, աւելի թառամեց չքնաղ գեղեցկուհին, մանաւանդ այդ ամարանոցը հիմնվելուց յետոյ: Նրան խիստ ծանր էր բնակվել մի տան մէջ, որ կառուցվել էր հայոց տաճարի փլատակներում: Նա չէր կարողանում զսպել իր արտասուքը, երբ ամեն օր իր աչքի առջեւ տեսնում էր նոյն տաճարի աւերակները: Այդ աւերակները մի քանի քայլ միայն հեռու էին նրա բնակարանից: Ամեն անգամ, երբ գիշերային լռութեան ժամանակ, նա իր սենեակի պատուհանից նայում էր կործանված վանքի փըշրանքների վրա, նրան երեւում էր, որպէս թէ աբեղաների սեւազգեստ դասը, դուրս գալով իրանց շիրիմներից, խաչ եւ աւետարան ձեռքերում բռնած, կատարում էին մի տխուր հոգեւոր թափօր, որը աւելի նման էր թաղման հանդէսի: Նրանք անէծք եւ նզովք էին կարդում այն բռնա-

կալի վրա, որ բռնողից, ոչնչացրեց իրանց մշտական աղօթքների սրբավայրը:

Իսկ այդ առաւօտ տիկինը սովորականից աւելի տխուր էր: Վերջացնելով աղօթքը, նա կրկին ցած թողեց վարագոյրը, ծածկեց խաչը, որ ոչ ոք չը տեսնէ: Յետոյ մօտեցաւ պատուհանին, բաց արեց լուսամուտը, նստեց նրա հանդէպ եւ սկսեց մտախոհ կերպով նայել դէպի գեղազարդական հեռուն: Նրա աչքերի առջեւ բացվում էր մի սքանչելի տեսարան. մանիշակագոյն հօրիզօնի վրա նկարված էին Բարգիւշատի եւ Զանգզուրի գեղեցիկ, անտառապատ լեռները, որոնց միջից իր մերկ գագաթով վեր էր բարձրացել հսկայ Խուստուփը: Իսկ միւս կողմում իր յաւերժական սառնամանիքներով ձգվում էր Կապէջի շղթան, որը իր ձիւնապատ գագաթներով ներկայանում էր մի հսկայապատկեր ծաղկեալ, կանաչազարդ տարածութեան մէջ: Այդ բոլորը, լուսաւորված վաղորդեան արեգակի պայծառ ճառագայթներով, շնչում էր նորածին օրվայ ջերմ, կենսատու շնչաւորութեամբ: Բայց տիկնոջ սրտին նրանք ոչինչ ուրախութիւն, ոչինչ մխիթարութիւն չէին ազդում: Նրա միտքը թռել եւ սլացել էր հեռու եւ հեռու, դէպի այն կանաչազարդ լեռների ետեւը, ուր կռւում էին հայոց քաջերը, որոնց թւում կռւում էր եւ իր սիրելին....

Յանկարծ նրա դէմքը բոլորովին մռայլվեցաւ,

նա ամբողջ մարմնով դողաց, երբ պատուհանից նկատեց, մի մարդ իր նշանաւոր սև ջորու վրա հեծած, բարձրանում էր Արծուանիի աւանի զառիվերից և ուղիղ գնում էր դէպի իրանց ամարանոցը։ Նրա ջորու առջևը ընկած ոտքով գալիս էին երկու զինուած չաթրներ։ «Ինչ գործ ունի մեզ մօտ այդ չարագործը այդպէս վաղ առաւօտեան»... մտածեց տիկինը և աչքերով սկսեց հետևել նրան։

Զարագործը մօտեցաւ ամարանոցի գլխաւոր դռանը, ցած իջաւ ջորուց, երիվարը պահ տուեց իր չաթրներից մէկին, և միւս չաթրին իր հետ առնելով, սկսեց բախել դուռը։

Այդ միջոցին տիկնոջ սենեակը ներս մտաւ, բոլորովին հագնուած և պատրաստուած, գեղեցիկ Ֆաթիման։

Ֆաթիմային մենք թողեցինք, երբ նա դեռ փոքրիկ աղջիկ էր, երբ նրան ձեռքի վրա էին ման ածում, իսկ այժմ աճել է նա, խօսում է, գնում է, գիտէ իրան պահել։ Տեսնելով մօր տխրամած դէմքը, նա մօտեցաւ, և գրկելով նրա պարանոցը, ասաց.

—Մայրիկ, դու էլի լաց ես լինում... երբ դու լաց ես լինում, իմ աչքերիցս էլ արտասուք է վազում։

Մայրը համբուրեց նրան, ասելով.

—Ինչու, զաւակս, քո ինչ լաց լինելու ժամա-

նակն է։ Ես էլ լաց չեմ լինում. այս առաւօտ չը գիտեմ ինչ է պատահել աչքերիս հետ, կարծես թէ, այրվում լինեն...

Մայրը Թաշկինակը տարաւ դէպի աչքերը, սրբեց արտասուքը։ Ֆաթիման փոքր ինչ հանգստացաւ, և աւելի փաղաքշութիւն ստանալով, ասաց մօրը.

—Գիտես այս առաւօտ ես ինչու եմ այսպէս շատ վեր կացել, այսպէս լաւ հագնվել։

—Դու միշտ շատ ես վեր կենում, զաւակս, պատասխանեց մայրը, փայփայելով նրա առանձին խնամքով սանրված սև զանգուրները։

—Այդպէս է, շատ եմ վեր կենում, մանաւանդ երբ լաւ առաւօտ է, պատասխանեց նա փոքր ինչ պարծենկոտութեամբ։— Բայց այսօր մի ուրիշ պատճառ կայ։

Ֆաթիման պատմեց մօրը, թէ այն առաւօտ հայ գիւղացիները, իրանց ամեն տարվայ սովորութեան համեմատ, տօն պիտի կատարեն։ Հարս, աղջիկ, տղամարդիկ, ալևորներ հաւաքվելու են կործանված վանքի փլատակների մօտ,— պար պիտի բռնեն, երգ կը երգեն, լաւ հանդէս պիտի կատարվի։

Տիկինը բոլորովին մոռացել էր, որ այն օր իրանց ամարանոցից ոչ այնքան հեռու կատարվելու էր մի ժողովրդական տօն։ Հայ գիւղացիները խմբվելու էին իրանց պաշտամունքը և յար-

դանքը մատուցանելու այն աւերակներին, ուր կանգնած էր մի ժամանակ նրանց պապերի սրբութեան տաճարը:

—Մայրիկ, դու ինձ թոյլ կը տաս, որ ես էլ գնամ, այդպէս չէ՞, հարցրեց Ցաթլիման, դարձեալ ընկնելով մօր կուրծքի վրա:—Նայիր, արդէն հաւաքւել են... հիմա կը սկսեն...

Վերջին խօսքերի միջոցին Ցաթլիման վեր կացաւ, վազեց դէպի սենեակի այն լուսամուտը, որ ուղիղ բացվում էր դէպի վանքի աւերակները, և բարձրացնելով վարագոյրը, ուրախութեամբ ցոյց տուեց.

—Նայիր, նայիր, հաւաքւել են, մայրիկ:

Մայրը նայեց դէպի այն կողմը, բայց շուտով չը պատասխանեց: Ցաթլիման կրկին դարձաւ դէպի մայրը աղերսական դէմքով.

—Թոյլ տուեցէք, գնամ, մայրիկ, այնտեղ կը տեսնեմ Մարիամին, Հռիփսիմէին, Գոհարին, դրանք շատ լաւ աղջիկներ են. ինձ ասացին, որ իրանք էլ կը լինեն այդ տօնին:

—Ո՞վքեր են այդ աղջիկները, դու որտեղից ես ճանաչում նրանց, հարցրեց մայրը:

—Արծուանիկից են, պատասխանեց Ցաթլիման.—երբ ես գնում եմ անտառը ման գալու, շատ անգամ պատահում եմ նրանց: Շատ լաւ աղջիկներ են, ինձ համար պտուղներ են քաղում, ծաղիկներ են քաղում: Ես նրանց հետ նրանց լեզ-

ուով եմ խօսում, նրանք թիւրքերէն չեն իմանում: Ես հիմա բոլոր բոյսերի, ծառերի, ծաղիկների, պտուղների անունները հայերէն լեզուով իմանում եմ, որը չեմ իմանում, հարցնում եմ, նրանք ինձ ասում են:

Մայրը գրկեց իր զաւակը և մի առանձին սիրով համբուրեց նրան: Ցաթլիման նկատելով, որ իր պատմութիւնը դուր է գալիս մօրը, շարունակեց.

—Քանի օր առաջ Հաֆիզան ինձ հետ երբ էր, անտառում պատահեցինք այն հայ աղջիկներին: Ես սկսեցի նրանց հետ նրանց լեզուով խօսել. Հաֆիզան ինձ ասաց.—«Ամօթ չէ, որ խօսում ես գաւուրների լեզուով»:

—Դու Հաֆիզային ականջ մի դիր, զաւակս, նա խելացի աղջիկ չէ, պատասխանեց մայրը, ուղղելով մի քանի մազեր, որ անկարգ կերպով ընկել էին նրա ճակատի վրա և խանգարում էին կամարաձև յօնքերի գեղեցկութիւնը:

—Այո, նա խելացի աղջիկ չէ, նա գէժ է, աւելացրեց Ցաթլիման:—Լսիր, մայրիկ, ինչ պատահեց միանգամ. անտառից վերադառնալու ժամանակ անցանք այդ եկեղեցու աւերակների մօտով. այն հայ աղջիկները մեզ հետ էին. նրանք հէնց որ տեսան աւերակները, մօտեցան քարերին և սկսեցին համբուրել, իրանց երեսի և կուրծքի վրա այսպիսի նշան անելով (Ցաթլիման խաչակնքեց իր դէմքը): Հաֆիզան

սկսեց ծիծաղել նրանց վրա։ Աղջիկներից մէկը՝ Հռիփսիմէն բարկացաւ։ Հաֆիզան սկսեց ծեծել նրան։ Ես ասեցի՝ ինչու ես ծեծում, խեղճ է։ Նա ինձ պատասխանեց.—«Գաւուրն ինչ է, որ խեղճ լինի»։ Ես Հռիփսիմէին մի աղլուխ ընծայեցի, որ լաց չը լինի։—Դու խօ չես բարկանայ, մայրիկ, այդ քո տուած աղլուխն էր։

—Չէ, զաւակս, չեմ բարկանայ, ես քեզ մի նորը կը տամ, ասաց մայրը, ուրախանալով իր զաւակի բարեսրտութեան վրա։

—Բայց մի բան էլ կայ, մայրիկ, վախենում եմ, որ ասեմ...

—Ի՞նչ բան, զաւակս, ասա, ինչու՞ ես վախենում։

—Ես Հռիփսիմէին համբուրեցի, մայրիկ, երբ լաց էր լինում, գրկեցի նրան։ Նա շատ սիրուն աղջիկ է։—Խօ մեղք չէ՞, մայրիկ։ Հաֆիզան ինձ նախատում էր, ասում էր հայի աղջիկը պիղծ է, ասում էր մեղք է, երբ մարդ համբուրում է նրանց։ Հաֆիզան նրանց հացը չէ ուտում։

—Մեղք չէ, զաւակս, պատասխանեց մայրը.—նրանք էլ քեզ նման Աստուծու ստեղծածներն են։ Աստուած թէ քեզ և թէ նրանց հաւասար կերպով սիրում է։

—Բայց ինչու՞ են այդպէս անում, հարցրեց հետաքրքիր Ֆաթիման, դարձեալ խաչակնքելով իր դէմքը։

Եթէ Ֆաթիման չափահաս աղջիկ լինէր, գուցէ

մայրը կը բացատրէր «այնպէս անելու» նշանակութիւնը, գուցէ կը սովորացնէր, որ ինքն էլ այնպէս անէ։ Բայց այդ մասին լռեց նա, միայն խրատեց իր զաւակին միշտ բարի լինել և յարգել օտարների կրօնական զգացմունքը, չը հետեւել չար Հաֆիզայի օրինակին։ Հաֆիզան նոյնպէս խանի աղջիկներից մէկն էր, միայն ծնված մահմեդական մօրից. Նա իր ծնողից ստացել էր և նրա մոլեռանդութիւնը։

—Հիմա թոյլ տուր գնամ, մայրիկ, ասաց Ֆաթիման կանգնելով.—հանդէսը սկսվում է։ Ես մենակ կը գնամ, Հաֆիզային ինձ հետ չեմ տանի։

Թէև տիկնոջը շատ հաճելի չէր մի այնպիսի խառնափնթոր բազմութեան մէջ թողնել իր դուստրը, բայց չը կարողացաւ մերժել նրա աղաչանքը, մանաւանդ, որ ինքը ցանկանում էր մի քանի րոպէ առանձնացած մնալ։ Այդ պատճառով թոյլ տուեց նրան գնալ, միայն պատուիրեց, որ շատ չուշանայ և շուտով վերադառնայ։

—Մենակ մի՛ գնա, ասաց նրան,—աղախնին քեզ հետ տար։ Կանչիր այստեղ Փէրիին։

Այսպէս էր աղախնի անունը. դա տիկնոջ հին սպասաւորներից մէկն էր, մի օրիորդ, որին մենք վաղուց արդէն ճանաչում ենք։ Երբ յայտնվեցաւ նա, տիկինը հրամայեց, որ Ֆաթիմային տանէ

հայերի ամնախմբութեան տեղը և նրա հետ միասին վերադառնայ:

—Չը մոռանաս, ասաց նրան,—ներքինապետ Ահմէդին յայտնել, որ ինձ մօտ գայ:

Ցամթիման ուրախութեամբ փէրիի հետ դուրս գնաց: Տիկինը մնաց միայնակ: Նա ցանկանում էր միայնակ մնալ. դրա համար էլ հեռացրեց աղախիններին:

Տիկինը չը հեռացաւ լուսամուտից, որի մօտ առաջ նստած էր: Նա անհամբերութեամբ սպասում էր ներքինապետին: Նրա մտքից դուրս չէր գալիս սև ջորու վրա նստած մարդը: «Ի՞նչ գործ ունի այսպէս վաղ առաւօտեան այդ անիծեալը մեզ մօտ»... դարձեալ կրկնեց նա իր մտքում:

Քառորդ ժամից յետոյ յայտնվեցաւ ներքինապետը: Նա բոլորովին ծերացել էր. տարիքը այն աստիճան հալել, մաշել էին նրան, որ առանց դրան ես փոքրիկ Ահմէդը, այժմ դառամեալ երեխայի կերպարանք էր ստացել:

—Դուք ինձ կանչել էիք, տիկին, հարցրեց նա, զգուշութեամբ ներս մտնելով, և խոնարհ կերպով գլուխ տալով:

—Այո, կանչել էի: Բայց ինչու ուշացար, հարցրեց տիկինը:

—Ինձ ուշացրեց իմ հետաքրքրութիւնը, պատասխանեց ծերունին:—Մէլիք-Ցրանգիւլը եկաւ խանի մօտ: Ես մտածեցի, թէ էլի մի սատանա-

յութիւն կանենայ, որ այսպէս վաղ առաւօտեան գալիս է խանի մօտ: Աշխատում էի մի բան հասկանալ:

—Ես էլ հէնց դրա համար կանչել տուի քեզ:

—Դուք տեսաք նրան:

—Լուսամուտից տեսայ. իր սև ջորու վրա նստած, գալիս էր:—Ինչու է եկել:

—Ոչինչ հասկանալ չը կարողացայ: Խանը դեռ քնած էր, երբ նա եկաւ. ինձ յայտնեց, թէ շատ հարկաւոր գործ ունի, ցանկանում է խանին տեսնել: Ես պատասխանեցի, թէ խանը քնած է, կարող է փոքր ինչ սպասել, մինչև կը վերկենայ: Նա դարձեալ շտապեցրեց ինձ, ասելով, թէ սաստիկ ստիպողական գործ ունի, սպասել կարող չէ, պէտք է հէնց այդ րոպէիս տեսնէ: Ես ստիպվեցայ գնալ խանին զարթեցնել: Նա ընդունեց մէլիքին իր քնարանում, առանց հագնվելու, ինքը անկողնում պառկած: Ցետոյ դռները ներսից կողպեցին և առանձնացան:

—Ի՞նչ բանի վրա էին խօսում:

—Նախասենեակի դռներն անգամ կողպել էին. անկարելի էր մի բառ անգամ լսել: Բայց առանց լսելու ես ես գիտեմ, թէ ինչ խորհրդով է եկել մէլիքը:

—Ի՞նչ խորհրդով է եկել:

—Թորոս իշխանը զօրքով գալու է խանի վրա. մէլիքը եկել է նրան իմացում տալու, որ իրանք

էլ զօրքերի պատրաստութիւն տեսնեն իշխանի առաջը առնելու համար:

—Այդ դուք որտեղից էք իմանում:

—Իմանում եմ, հաստատ տեղեկութիւններ ունեմ, տիկին:

—Թորոսի հետ այլ ես ովքեր կան:

—Իշխան Ստեփաննոս Շահումեանը:

Այդ անունը լսելու ժամանակ տիկնոջ տխրամած դէմքը նկատելի կերպով պայծառացաւ: Բայց նա իր ուրախութիւնը թաքցնելու համար խօսքը փոխեց, հարցնելով.

—Կռիւներից ինչ էք լսում:

—Բէկը ամեն տեղ յաջողութիւններ ունի. Զէվու բերդը բոլորովին ոչնչացրած է. մեր երկրի ամրութիւնները մինը միւսից յետոյ ընկնում են նրա զօրութեան առջև, ասաց ծերունին մի առանձին ոգևորութեամբ, յետոյ սկսեց մանրամասնաբար պատմել Ասլամազ-Կուլի-խանի աղէտաւոր վախճանը և բէկի այլ յաղթութիւնները:

—Այդ բոլորը շատ ուրախալի է, ասաց տիկինը ծերունու պատմութիւնը հաճութեամբ լսելուց յետոյ:—Բայց պէտք է մի կերպով իմանալ, թէ այդ չարագործը ինչ սատանայական որոգայթներ լարելու համար է եկել:

—Ես ձեզանից աւելի հետաքրքիր եմ, տիկին, պատասխանեց ծերունին:

—Մէլիքի գնալուց յետոյ ուշադիր եղէք, թէ ինչ կարգադրութիւններ կանէ խանը:

—Ես քայլ առ քայլ կը հետևեմ նրա գործողութիւններին:

—Հիմա կարող էք գնալ. ես ձեզ ուշացնում եմ:

Ծերունին գլուխ տուեց և հեռացաւ:

Տիկինը դարձեալ մնաց միայնակ:

—«Նա» հայոց զօրքի մէջն է.... մտածեց անբախտ կինը,--«նա» ինձ ազատելու համար է պատերազմում:

Լ.

Ֆաթալի-խանի ամարանոցից մինչև Արծուանիկ աւանը մէկ ժամի ճանապարհ հազիւ կը լինէր: Ամարանոցը գտնվում էր լեռան գագաթի վրա, իսկ աւանը կպած էր նոյն լեռան կուրծքին:

Մէլիք-Ֆրանգիւլը երկար չը մնաց խանի մօտ: «սախլողական» խորհուրդը վերջացնելուց յետոյ, նա դարձեալ նստեց իր սև ջորու վրա, և չաթրներին առջևը ձգած, վերադարձաւ Արծուանիկ:

Նրա ամրոցը գտնվում էր այդ աւանի ստորոտում: Թէև պարսկական խաների ապարանքների նրբութիւնը և գեղեցկութիւնը չունէր նա, բայց վիթխարիութեան և ամրութեան կողմից աւելի գերազանց էր նրանցից: Նա աւելի բերդի ձև ունէր, քան թէ պալատի: Դրսից ներկայացնում էր մի քառակուսի շինվածք, ահագին պարիսպներով,

որոնց չորս անկիւններում բարձրանում էին չորս բրգաձև աշտարակներ։ Իսկ ներսից բաժանված էր զանազան բակերի, զանազան մասների, որոնց իւրաքանչիւրը ծառայում էր տիրոջ կեցութեան այլ և այլ պէտքերին, նրա անտեսութեան այլ և այլ յարմարութիւններին։

Մէլիքի ընտանիքը շատ ստուար չէր, այդ պատճառով սենեակների մեծ մասը մնացել էր դատարկ և ամայի։ Նրա կինը վախճանվեցաւ հէնց նոյն տարվայ մէջ, երբ նա փոխեց իր կրօնը։ Այնուհետև մէլիքը այլ ևս չամուսնացաւ։ Նրա երկու որդիներից մէկը՝ Հախին, հօրից բաժան բնակվում էր գիւղում, հայ հասարակութեան մէջ, և ամենևին յարաբերութիւններ չունէր մահմեդական հօր հետ։ Իսկ միւսը՝ Մկրտումը հօր մօտ էր բընակվում և նրա հետ հաշտ էր ապրում, թէև իր ընտանիքով պահպանել էր քրիստոնէութիւնը։

Խանի մօտից վերադառնալով ամրոցը, մէլիքը իսկոյն առանձնացաւ իր սենեակում, հրամայելով, որ իր մօտ ոչ ոքի չը թողնեն։ Նրա դէմքը փայլում էր ուրախութիւնից։ «Վերջապէս կիսով չափ հասայ նպատակիս... ասաւ նա ինքնիրան, և ձեռքերը միմեանց հետ շփելով, սկսեց անցուդարձ անել սենեակի մէջ։ «Նեղ ընկած առիւծը կատու է դառնում»... Ես երբէք չէի կարող համոզել, խելքի բերել և իմ կամքը ընդունել տալ այդ գոռոզ, մի և նոյն ժամանակ յիմար խանին, եթէ

թշնամին նրա դրան մօտ նստած չը լինէր... Թորոսը օգնեց ինձ... Այսուհետև ես կարող եմ ինձ կատարելապէս Բարգիւշատի և Զանգզուրի տէրը համարել... Թէև ինձ չը յաջողվեցաւ ամբողջ Սիւնեաց աշխարհի իշխողը լինել, բայց առ այժմ այդ երկու գաւառներն էլ բաւական են... Ամեն ինչ փոքրից է սկսվում... Եթէ յաջողութիւնը մեր կողմը կը լինի, այնուհետև կը կատարվի իմ վաղեմի բաղձանքը... Բայց յաջողութիւնը անպատճառ մեր կողմը պէտք է համարել... Ես գործերը այնպէս կը տանեմ, որ պառաւ աղուէսին իր պոչիցը ծուղակի մէջ կը ձգեմ...

Նա այժմ հաշտված էր իր խղճի հետ։ Նրա սիրտը լցված էր մի տեսակ վայրենի ուրախութեամբ, որ զգում են գազանները միայն, երբ մօտենում են իրանց զոհին։ Նա մօտեցաւ իր թըղթերի պահարանին, վեր առեց այնտեղից մի թերթ թուղթ։ Յետոյ ծալապատիկ նստեց փառաւոր օթոցի վրա, թուղթը դրեց ծնկի վրա, սկսեց գրել։ Երկար գրում էր նա, մինչև թերթի առաջին, երկրորդ և երրորդ երեսները լցվեցան։ Իր պարապմունքը ընդհատում էր միայն այն ժամանակ, երբ պէտք էր ծխել երևակայութիւնը աւելի զրգռելու, աւելի զօրացնելու համար։ Երբ վերջացրեց իր գործը, թերթը նամակի ձևով ծալեց և ապա կնքեց։ Յետոյ հրամայեց կանչել իր մօտ գզիր Համբարձումին։

—Դու բաւական հանգստացած ես, Համբարձում, հարցրեց նա, երբ յայտնվեցաւ գզիրը:

—Այդ ինչ հարցմունք է, մէլիք, խօսեց գզիրը չողոքորդի սուտ քաղցրութեամբ.—Համբարձումը եթէ գերեզմանում էլ դրած լինի, դարձեալ միշտ պատրաստ կը լինի իր տիրոջը ծառայելու:

—Շատ ապրիս, Համբարձում, ես քո ծառայութիւնները չեմ մոռանայ, հէնց այդ րոպէիս քեզ մի լաւ խ ա լ ա թ կը տամ, ասաց մէլիքը:—Կանչիր այստեղ Նազլիին:

Երբ Նազլին, այսինքն տիկինը յայտնվեցաւ, մէլիքը հրամայեց նրան, որ գզիրի համար ոտքից մինչև գլուխ մի ձեռք հագուստ բերէ:

—Տրեխները չը մոռանայ, տրեխներս բոլորովին մաշվել են, նկատեց գզիրը:

—Չի մոռանայ, ասաց մէլիքը:—Դու ինձ այն ասա, թէ որտեղ թողեցիր Թորոսի բանակը:

—Բեխ գիւղի հանդէպ:

—Կարո՞ղ ես այսօր մի նամակ հասցնել Թորոսին:

Գզիրը մօտեցաւ լուսամուտին, գլուխը դուրս տարաւ, և նայելով արեգակին, ասաց.

—Դեռ արևը մայր չը մտած, կը հասցնեմ: Բայց ներեցէք համարձակութեանս, տէր իմ, դուք Թորոսին նամա՞կ...

—Այո, Թորոսին և ոչ մի այլ մարդու:

—Ձեր ծառայի հարցմունքը նրա համար էր, եթէ Թորոսը մի բան հարցնելու լինի, ես ինչ ձևով պէտք է պատասխանեմ:

—Դուք պիտի ձևացնէք, թէ ոչինչ չը գիտէք, ոչինչ բանի մասին տեղեկութիւն չունէք:

—Այսինքն ես ինձ պէտք է փոքր ինչ յիմարի տեղ դնեմ:

—Այո: Քեզ հետ կը լինի և տէր Յարութը. դա նրա ուղեկցի և առաջնորդի պաշտօնը կը կատարէ: Նամակը տէրտէրի ձեռքումը կը լինի:

—Ուրեմն այստեղ պէտք է կանչել տէրտէրին:

—Կանչիր: Ասա, որ մի խաչ և Աւետարան իր հետ բերէ:

Գզիրը հեռացաւ: Այդ առաջին անգամն էր պատահում, որ մէլիքը նրա հետ այսպէս ծածկամտութեամբ էր վարվում: Նա գնաց Արծուանիկ աւանը տէրտէրին որոնելու: «Տէրտէր... խաչ և Աւետարան»... կրկնում էր իր մտքում զարմանալով:—«Այդ ինչ բան է, երևի, գժվել է մէլիքը, կրկին հայանալ է ցանկանում»...

Քահանան ևս ոչ սակաւ զարմացաւ, երբ գզիրը յայտնեց նրան մէլիքի հրամանը: Այնօրից, որ մէլիքը ընդունել էր մահմեդականութիւն, դեռ ոչ մի քահանայի ոտք չէր կոխել նրա տան շէմքը, իսկ այսօր հրաւիրում էր նրան խաչով և Աւետարանով:

Քահանային կոչում էին տէր Յարութ, նրա իսկական անունը Յարութիւն էր: Եթէ մինչև իդիօտութեան հասցրած բարեպաշտութիւնը կարելի

է առաքինութիւն կոչել, այդ կէտից, այդ քահանային կարելի էր ամենաառաքինի կրօնաւորներից մէկը համարել: Նա իր կեանքում ժամից յետ չէր մնացել, նապաստակի միս չէր կերել. հաւատում էր Յիսուս Քրիստոսի փրկագործութեանը, հաւատում էր և այն բանին, թէ թիւրքի մեռելները գիշերները իրանց գերեզմաններում հանգիստ չեն մնում, իրանց պատանքներով դուրս են գալիս, թափառում են այստեղ և այնտեղ, և զանազան անասունների ձայներ են հանում:

—Ի՞նչ կայ, Համբարձում, քո հոգուն մատաղ, ինչու է կանչում մէլիքը, հարցրեց նա երկչոտ ձայնով:

—Երբ մէլիքը կանչում է, էլ չեն հարցնում ինչ կայ, տէր հայր. գլուխը քարշ են գցում ու գնում են, պատասխանեց գզիրը փոքր ինչ խիստ կերպով:

Տէր հայրը այլ ևս ոչինչ չը հարցրեց և հետևելով գզիրի խօսքին, գլուխը քարշ գցեց, և սկսեց գնալ դէպի մէլիքի ամրոցը: Մինչև այնտեղ հասնելը, նա իր մտքում աւարտեց «եկեսցէի» կէսը, յուսալով, որ գոնէ այդ փրկարար աղօթքը կազատէ նրան բռնակալի բարկութիւնից:

Երբ նրան ներս տարան մէլիքի սենեակը, նա խոնարհութեամբ գլուխ տուեց և կանգնեց դրան մօտ: Խեղճ տէրտէրի դէմքի վրա գոյն չէր մնացել, ամբողջ մարմնով դողում էր:

—Հրամայեցէք, տէր հայր, հրամայեցէք նստեցէք, ասաց մէլիքը, տեղ ցոյց տալով:

Մէլիքի քաղաքավարի խօսքերը փոքր ինչ հանգստացրին նրան. կիսամաշ փարաջայի փէշերը հաւաքեց, անհամարձակ կերպով մօտեցաւ և չոքեց ցոյց տուած տեղում:

—Դուրս գնա, Համբարձում, դարձաւ մէլիքը դէպի գզիրը:

Գզիրը դուրս եկաւ: Չը նայելով, որ նազիրը արդէն պատրաստել էր նրան խոստացված խալաթը, բայց նա չը գնաց հագնելու, այլ կանգնեց նախասենեակում և ականջը մօտ տարաւ դրանը: Նրանսին աւելի հետաքրքրում էր տէրտէրին կանչելու գաղտնիքը, քան թէ մէլիքի ընծայած խալաթը:

—Հանգիստ նստեցէ՛ք, տէր հայր, ասաց մէլիքը, նկատելով, որ քահանան պատժված աշակերտի նման չոքել է գորգի վրա:

Այդ ազնւութիւնը աւելի հանգստացրեց տէր հօրը. նա այժմ իր դիրքը փոխեց և ծալապատիկ նստեց: Մէլիքը դարձաւ նրան այդ խօսքերով.

—Ես կանչեցի ձեզ, տէր հայր, մի կարևոր յանձնարարութեան համար, բայց նախ քան գործի վրա խօսելը, ինձ պէտք է փոքր ինչ ծանօթանալ ձեր կրօնական հայեացքների հետ.—դուք ինչպէս էք հասկանում խոստովանութիւնը, տէր հայր:

Անակնկալ հարցը կրկին շփոթեցրեց խեղճ քա-

հանայքն, որը գծրագրաբար գրված բաներից շատ փոքր տեղեկութիւն ունէր։

—Որդի, ինչ ասեմ... պատասխանեց նա ծոծրակը քորելով.—խոստովանութիւնը խոստովանութիւն է... խոստովանվում են, յետոյ հաղորդութիւն են առնում...

—Այդ ես գիտեմ, ասաց մէլիքը,—որ առանց խոստովանվելու հաղորդութիւն չեն տալիս, բայց ես խոստովանութեան նշանակութեան մասին եմ հարցնում։

—Հա՛, իմանում եմ, դուք խոստովանութեան նշանակութեան մասին էք հարցնում, կրկնեց քահանան։—Խոստովանութիւնը մի այդպիսի բան է. մարդիկ գալիս են, չոքում են քահանայի առջև, (ինչպէս ես մի րոպէ առաջ չոքած էի) գլուխները խոնարհեցնում են, յետոյ խոստովանվում են։ Դրանից յետոյ արժանանում են Յիսուս Քրիստոսի մասն ու պատարագին։

Այդ խօսքերը արտասանելու ժամանակ նա խաչակնքեց իր դէմքը։ Չը նայելով, որ տէր հօր վերջին պատասխանը համարեա մի և նոյնն էր, ինչ որ առաջինը, միայն ուրիշ դարձուածներով, այսու ամենայնիւ, մէլիքը գոհ մնաց դրանով և առաջարկեց մի երկրորդ հարց.

—Կարծեմ խոստովանահայր քահանան պարտաւոր է որպէս խորին գաղտնիք պահել իր լսածները, այդպէս չէ՞, տէր հայր։

—Հա՛, որդի, այդպէս է, պէտք է որպէս խորին գաղտնիք պահէ, եթէ ուրիշին ասելու լինի, մեծ պատիժ կայ։

—Ի՞նչ պատիժ։

—Սուրբ Աւետարանի մէջ գրված է. Երբ տէրն մեր Յիսուս Քրիստոս, ամպերի վրա նստած, կը գայ ահեղ դատաստան անելու, այդ տեսակ քահանաների գլուխները կը հաւաքեն և ցորենի հասկների նման մի ահագին երկանաքարի տակ կաղան։

—Այդպէս է, փառաւորվիս, տէր հայր, ասաց մէլիքը, հաստատելով նրա բացատրութիւնները։—Հիմա խօսենք գործի վրա։ Ես պատուիրել էի գզիրին, որ ձեզ ասէ՝ մի խաչ և Աւետարան բերէք ձեզ հետ։

—Բերել եմ, որդի, այստեղ ծոցումն է, ասաց քահանան, ձեռքը տանելով դէպի իր հագուստի լայն ծոցը, որ ծառայում էր նրան որպէս պահարան ամեն տեսակ բաներ պահելու համար։ Այնտեղից դուրս բերեց մի մեծ խաչ և Աւետարան, որ փաթաթած էր գունաւոր թաշկինակի մէջ։

—Շնորհակալ եմ, տէր հայր, ասաց մէլիքը, համբուրելով խաչն ու Աւետարանը։—Հիմա լսեցէք իմ յանձնարարութիւնը. ես ձեզ ուղարկելու եմ մի մարդու մօտ։

Քահանայի ուրախութեանը չափ չը կար, երբ

տեսաւ, որ մահմեդականութիւն ընդունած մելիքը համբուրեց իր խաչն ու Աւետարանը: Նա մեծ յօժարութեամբ պատասխանեց.

—Եթէ ինձ դժոխքն էլ ուղարկելու լինէք, դարձեալ պատրաստ եմ ձեր հրամանը կատարելու:

—Ես ձեզ դժոխքը չեմ ուղարկի, դուք լաւ մարդ էք, պատասխանեց մելիքը ժպտալով:—Ես ձեզ պիտի ուղարկեմ Թորոս իշխանի մօտ:

—Թորոս իշխանի մօտ, թող օրհնեալ լինի նրա ծնունդը, շատ քրիստոնեայ մարդ է: Նրա հանգուցեալ հայրն էլ օրինաւոր մարդ էր, ամեն անգամ, երբ կը տեսնէր ինձ, կասէր. «Տէրտէր, քէֆդ ո՞նց է»: Հանգուցեալը շատ բարեհոգի էր:

—Աւելի լաւ, որ ճանաչում էք, ասաց մելիքը: —Այդ խաչն ու Աւետարանն էլ պիտի ձեզ հետ տանէք:

—Կը տանեմ, որդի, եթէ հարկաւոր է, ինչու չը պիտի տանեմ:

—Հիմա ինձ տուեցէք խաչն ու Աւետարանը:

Քահանան կատարեց նրա հրամանը:

—Հիմա նայեցէք, ինչ եմ անում, ես յետոյ դրա խորհուրդը կը բացատրեմ ձեզ:

Քահանան աչքերը լայն բացելով, սկսեց հետաքրքրութեամբ նայել: Մելիքը վեր առեց իր մի քանի րոպէ առաջ պատրաստած նամակը, դրեց Աւետարանի մէջ, ասելով.

—Տեսնում էք, այդ նամակը որտեղ եմ դնում:

—Տեսնում եմ, ինչպէս չեմ տեսնում, ուղիղ Մարկոսի աւետարանի երկրորդ գլխի մէջ:

—Այդպէս է, ասաց մելիքը, սուրբ գիրքը ծալելով:

Յետոյ նա վեր առեց մի մաքուր մետաքսեայ թաշկինակ, փռեց գորգի վրա, նախ Աւետարանը դրեց նրա վրա, յետոյ խաչը դրեց Աւետարանի վրա, և երկուսը միասին ծրարի ձևով փաթաթեց թաշկինակի մէջ: Երբ այդ գործողութիւնը վերջացաւ, նա թաշկինակի ծայրերը կնքեց մոմով: Քահանան զարմացած նայում էր:

—Հիմա կը բացատրեմ ձեզ, տէր հայր, թէ ինչու այդպէս արեցի, դարձաւ դէպի նրան մելիքը:—Այդ խաչն ու Աւետարանը, այսպէս կնքած, իմ նամակի հետ կը տանէք Թորոս իշխանի մօտ, և իմ կողմից կը հաւատացնէք նրան, որ բոլորը, ինչ որ գրուած է իմ նամակի մէջ, նոյնպէս անկեղծ են և հաւատարմութեան արժանի, որպէս այդ սուրբ Աւետարանի խօսքերը: Եւ որպէս զի նա կասկածանքով չընդունէ ձեր վկայութիւնը, ես քրիստոնէական հաւատով կրկին համբուրում եմ այդ սուրբ խաչն ու Աւետարանը, և ձեր աչքի առաջև երդվում եմ իմ նամակի անկեղծութեան մասին:

Վերջին խօսքերի միջոցին նա կրկին համբու-

րեց սրբութիւնները, և ձեռքը դնելով նրանց վրա, հանդիսաւոր կերպով երդուեցաւ:

—Բայց ես չի՞ պիտի գիտենամ, թէ ինչ է գըրված նամակի մէջ, հարցրեց քահանան:

—Դուք չի պիտի գիտենաք. այդ մի գաղտնիք է: Ես ձեզ ուղարկում եմ Թոմաս իշխանի մօտ իբրև վկայ, որ ձեր ականջով լսեցիք իմ երդումը և ձեր աչքով տեսաք, թէ որպէս ես քրիստոնէական ջերմեռանդութեամբ համբուրեցի այդ սրբութիւնները: Ես զղջում եմ իմ հին յանցանքների համար, տէր հայր, և գլուխս խոնարհեցնելով ձեր առջև, որպէս մի ապաշխարող, խոստովանվում եմ, որ ես միշտ եղել եմ հոգով և սրտով քրիստոնեայ, միայն հանգամանքները ստիպել են ինձ թաքցնել իմ հաւատը: Օրհնեցէք ինձ, տէր հայր, թող ձեր օրհնութիւնը սրբէ իմ գործած ակամայ մեղքերը…

Քահանան, ձեռքը դնելով նրա գլխի վրա, օրհնեց նրան: Մէլիքը ասաց.

—Յիշո՞ւմ էք, տէր հայր, մի քանի րոպէ առաջ ձեր ասած պատիժը, որ գրված է սուրբ Աւետարանի մէջ, խոստովանութիւնը ուրիշներին յայտնող քահանաների մասին:

—Յիշում եմ, ինչպէս չէ, նրանց գլուխները ցորենի հատիկների նման ահագին երկանաքարի տակ կաղան:

—Դուք պէտք է գաղտնի պահէք իմ քրիստո-

նէութեան խոստովանութիւնը, կարող էք յայտնել Թոմաս իշխանին միայն, եթէ նա ձեզանից հարցնելու լինի:

—Այդ մասին միամիտ կացէք, ասաց քահանան:

Թէև տէր հօրը մինչև այսօր չէր պատահել մի այսպիսի նորաձև խոստովանութեան, մի այսպիսի նորաձև երդման վկայ լինել, բայց շատ անգամ լսել էր, որ մեծ մարդիկ սովորութիւն ունեին ուղարկել միմեանց մօտ կնքված սրբութիւններ, որպէս առհաւատչեայ իրանց երդման և ուխտադրութեան: Այդ սովորութիւնը ունէին մինչև անգամ մահմեդականները: Բայց ինչ որ վերաբերում էր նամակի բովանդակութեանը, այդ մասին շատ հետաքրքիր չեղաւ նա, բաւական համարելով մէլիքի խօսքը, թէ դա մի գաղտնիք է:

—Ե՞րբ պէտք է տանել, հարցրեց քահանան:

—Հէնց այս րոպէիս: Այնքան շտապողական է, որ չէ կարելի յետաձգել:

—Ես չը գիտեմ հիմա որտեղ է Թոմաս իշխանը:

—Ես գիտեմ. իմ գզիրը ձեզ կը տանէ ուղիղ նրա մօտ:

—Բայց ծերացած քահանային դժուար կը լինի ոտքով գնալ, եթէ իշխանը հեռու է գտնվում:

—Ես կը հրամայեմ պատրաստել ձեզ համար իմ ախոռատան ամենաընտիր ձիաներից մէկը, և

ձեր վերադառնալուց յետոյ, այդ ձին կը տանէք, կը կապէք ձեր ախոռում, որպէս իմ կողմից ընծայ:

—Օրհնեալ լինիք, որդի, Աստուած ձեր իշխանութիւնը մեր գլխից անպակաս անէ, ասաց քահանան, բոլորովին մոռանալով այն փոքրիկ կասկածներն անգամ, որ իր սրտում ունէր մէլիքի անկեղծութեան մասին:

Յետոյ մէլիքը հրամայեց, որ նախաճաշիկ տան, որպէս զի տէրտէրը սոված ճանապարհ չը գնայ: Նախաճաշիկի ժամանակ մէլիքը բարեհաճեց տէր հօր հետ մի քանի հանաքներ անել, երբ նկատեց, որ նա միս չէր ճաշակում, որովհետև Թուղքի մարթած էր: Գզիր Համբարձումն էլ այդ միջոցին, իր տիրոջ ընծայած նոր խալաթը հագած, ուրախ դէմքով կանգնել էր սենեակի դրան առջև և երբեմն խառնվում էր խօսակցութեան մէջ: Տիրական սեղանից նրան էլ մի քանի պատառ տուեցին, նա համեստութեամբ դուրս եկաւ և սկսեց նախասենեակում ուտել:

Նախաճաշիկից յետոյ տէրտէրը վեր առեց կընքած խաչն ու Աւետարանը և դրեց իր ծոցի նուիրական պահարանի մէջ: Իսկ մէլիքը ճանապարհ դրեց իր պատգամաւորներին մինչև ամրոցի դուռը: Այդ միջոցին քահանան չը նկատեց, որ նա մի կողմ տանելով գզիրին, ինչ որ խօսեց նրա ականջին:

Օրից հինգ ժամ հազիւ անցած կը լինէր, երբ մէլիքի պատգամաւորները ճանապարհ ընկան: Քահանան մի առանձին բաւականութեամբ առաջ էր քշում իր նոր ստացած ձին: Ձին թէև պառաւ էր, բայց ազնիւ նժոյգների յատուկ արժանաւորութեամբ դեռ պահպանել էր իր աշխոյժը: Նա աւելի թռչում էր, քան թէ ընթանում էր: Գզիրի եաբուն հազիւ կարողանում էր վազ տալով նրա սովորական ընթացքին հետևել:

—Մի քիչ կամաց քշիր, տէրտէր, կանչեց նա քահանայի ետևից.—ինչո՞ւ ես շտապում, որքան էլ հանդարտ գնանք, դարձեալ այսօր կը հասնենք:

Տէրտէրը քաշեց իր ձիու սանձը, մինչև գզիրը հասաւ:

—Շատ լաւ ձի է, ասաց նա,—բայց ափսոս մի քիչ պառաւ է:

—Պառաւ մարդուն պառաւ ձին սազ կը գայ, պատասխանեց գզիրը ծիծաղելով.—«փէշքէշի ձիու ատամներին չեն մտիկ անում», տէր հայր:

Յանկարծ գզիրը փոխեց իր զուարճախօսութիւնը, և տէրտէրի ուշադրութիւնը դարձնելով իրանց ետևում կատարվող տեսարանի վրա, սարսափած ձայնով բացականչեց.

—Տէր Աստուած, այդ ի՞նչ բան է…

—Ի՞նչ բան է, հարցրեց տէրտէրը, ոչ սակաւ վախենալով:

Գզիրը ձեռքը մեկնեց դէպի ամրոցը ասելով.

—Չէ՞ք տեսնում:

Քահանան նայեց դէպի այն կողմը: Լեռնային մարդը լեռնային արծուի սրատեսութիւն ունի: Նա թէև ծերացած էր, թէև ամրոցից բաւական հեռացել էին, բայց դարձեալ կարողացաւ նշմարել, թէ ինչ էր կատարվում այնտեղ:

Ամրոցի գլխաւոր մուտքի մօտ երևում էր խուռն բազմութիւն. աշխատում էին դռները խորտակել. մարդիկ վազվզում էին այս կողմ և այն կողմ: Դռները խորտակեցին. բազմութիւնը ներս թափվեցաւ. մի քանիսը բարձրացան կտուրների վրա. երևում էր, մէկին որոնում էին: Յետոյ լսելի եղան աղաղակներ, որոնց հետ միախառնվեցան և հրանօթների ձայներ:

—Տէր Աստուած, կրկնեց գզիրը,—այդ ինչ պատահում է...

Քահանան սառածի նման սարսափով նայում էր դէպի ամրոցը: Նրա շրթունքները խուլ կերպով շարժվում էին, երևում էր, որ դարձեալ «Եկեսցէ» էր կարդում:

Նրանք կանգնած էին մի բարձրաւանդակի վրա, որտեղից բաւական մեծ տարածութիւն շրջակայքից տեսնվում էր: Այդ միջոցին նկատեցին, որ մի մարդ ձորի միջով վազէ-վազ անցնում էր: Գզիրը ճանաչեց նրան, և անունը տալով կանչեց, որ իրանց մօտ գայ: Նա թէև լսեց, բայց դար-

ձեալ շարունակեց վազելը: Գզիրը այժմ աւելի բարձր ձայնով կանչեց և նա մօտեցաւ:

—Այդ ինչ պատահում է, Վանի-ապեր, հարցրեց նորից գզիրը,—ուր ես այդպէս վազելով գնում:

Վանի-ապերը մէլիքի ծառաներից մէկն էր. նա խիստ ողորմելի ձայնով պատասխանեց.

—Էլ ինչ լինի, Աստուած ինքը մի ողորմութիւն անէ... խանի մարդիկը թափվեցան ամրոցի վրա, ջարդում են, կոտորում են, մէլիքին են որոնում...

—Յետոյ բռնեցին... հարցրեց տէրտէրը դողալով:

—Աստուած ազատեց: Մինչև ամրոցի դռները խորտակելը, մինչև նրանց ներս մտնելը, մէլիքը ձորի կողմի աշտարակից պարանով ցած իջաւ, մտաւ թփերի մէջ և անյայտացաւ: Էլ չը կարողացան գտնել:

Տէրտէրը աչքերը դէպի երկինք դարձնելով, երեսը խաչակնքեց, ասելով.

—Փառք քեզ, Աստուած, փառք:

Գզիրը նոյնպէս հետևեց տէր հօր օրինակին, գըդակը վեր առեց, և քէչալ գլուխը բաց անելով, մի և նոյն խօսքերը կրկնեց: Յետոյ հարցրեց Վանի-ապերից.

—Հիմա դու ուր ես այսպէս շտապով գնում:

—Գնում եմ Ջափնիս գիւղը, մէլիքի որդի

Մկրտումը այնտեղ է, գնում եմ նրան իմացում տալու, որ թաղնվի, խանի մարդիկը նրան էլ են պտռում։

—Ինչու համար, ինչ յանցանք ունեն, հարց-րեց ապշած քահանան։

—Ո՞վ է իմանում։ Մելիքի տան բոլոր դռները կնքեցին, ասում են, ինչ որ ունէ, չունէ, բոլորը պէտք է «խանլղ» դարձնեն։ Թող Աստուած ա-նիրաւի պատիժը տայ և մեզ ողորմութիւն անէ...

Վերջին խօսքերը արտասանեց նա արտա-վելով, յետոյ դարձաւ դէպի Զափնիս գիւղի կող-մը, սկսեց առաջվայ նման վազել։ Քանի րօպէից յետոյ ծածկվեցաւ ծառերի յետքում։

Տէրտէրը և գզիրը չուարած կերպով նայում էին միմեանց երեսին, չը գիտէին շարունակել իրանց ճանապարհը, թէ յետ դառնալ։

—Պէտք է գնալ, ասաց գզիրը,—այդ նամակը առանց ուշացնելու պէտք է տեղ հասցնել։ Կա-րելի է մելիքը այդ բոլոր դժբախտութիւնները նախատեսում էր, և հէնց դրանց մասին էլ գրած լինի իր նամակը։

—Պէտք է նամակը հասցնել, մեքենաբար կրրկ-նեց տէրտէրը և քշեց իր ձին։

ԼԱ.

Ընդունելով Մելիք-Ֆրանգիւլի նամակը, Թորոս իշխանը քահանայից հարկաւոր հարցուփորձը ա-նելուց յետոյ, հրամայեց նրան և գզիրին պահել

մի առանձին վրանում, մինչև ինքը իր զօրա-պետների հետ կը կազմէր պատերազմական խոր-հուրդ։ Նա սպասում էր Մելիք-Նուբարի վերա-դարձին, որը մի քանի մարդիկների հետ ծպտեալ կերպով ուղարկված էր թշնամու գիրքերը և պատ-րաստութիւնները հետազօտելու համար։ Մելիք-Նուբարը վերադարձաւ շատ ուշ, կէս գիշերին։ Իշխանը իսկոյն իր վրանում կազմեց խորհուրդը։ Ներկայ էին Սոսիփաննոս Շահումեանը, Մելիք-Փարսադանեան Բալին և Մելիք-Նուբարը։ Բոլորի դէմքերի վրա նշմարվում էր մի հեգնական ծի-ծաղ, միայն այն մարդը, որին ուղղված էր նա-մակը, սառն էր։ Նա սկսեց կարդալ։

Նամակը ուղղված էր Թորոս իշխանին և ըս-կսվում էր այդ խօսքերով.

«Ամեն հանգամանքներ կարող են հակառակ վկայութիւն տալ իմ նամակի անկեղծութեան մա-սին, իմ խոստմունքների հաւատարմութեան մա-սին։ Այդ ես չեմ հերքում, Թորոս։ Ձեզ դիմում է այդ նամակով ձեր հին, ախերիմ թշնամին, որի հայրը թշնամի է եղել ձեր հօր հետ, որի պապը թշնամի է եղել ձեր պապի հետ։ Ամբողջ դարե-րի ընթացքում իմ և ձեր տոհմի յարաբերութիւն-ները դրօշմված են եղել արիւնով և անէծքով...

«Ես ձեզ մօտ ուղարկում եմ քահանայ, խաչ և աւետարան, որպէս առհաւատչեայ իմ երդմանը և դրած ուխտին,—ես ձեզ մօտ ուղարկում եմ

այդ սրբութիւնները, որոնց ճշմարտութիւնը ես վաղուց ուրացած եմ, որոնց ես ամենայն անգթութեամբ հալածել եմ:

«Խոստովանվում եմ, այդ բոլորը փոխանակ գրաւելու ձեր հաւատը դէպի ինձ, ձայն կը տան իմ խաբեբայութեան մասին: Ես ինքս, եթէ ձեր տեղ լինէի, ուրիշ կերպով չէի ընդունի, երբ որ իմ թշնամիներից մէկը այդ ձևով կը գրէր ինձ:

«Բայց մի բան կայ, որ կարող է արդարացնել ինձ:

«Ամեն կրօնքները ընդունում են, որ մարդը, որքան էլ չարագործ լինէր, դարձեալ ընդունակ է զղջալու, ուղղվելու և բարի մարդ դառնալու: Դրա մէջն է մարդու առաւելութիւնը գազաններից: Գազանը բնութիւնից ծնված է գազան լինելու համար, իսկ մարդը հանգամանքներից դառնում է գազան: Աւելի բարեյաջող հանգամանքները կարող են փոխել նրան դէպի լաւը:

«Հանգամանքները ինձ համար այժմ փոխված են: Մինչև այսօր օտարներից վայելած փառքը, աջակցութիւնը, պաշտպանութիւնը հրապուրում էր ինձ: Ես սովորված էի զոհել ամեն սուրբ բան իմ պաշտպանից այդ շնորհները վայելելու համար: Բայց այնօրից, երբ բէկի զօրքերը մտնեցան մեր սահմաններին, խանը սկսեց կասկածանքով վերաբերվել դէպի ինձ: Մեր յարաբերութիւնները այժմ սաստիկ լարված են, և ես ամեն րոպէ սպասում եմ նրա կողմից մի որ և իցէ վտանգ:

Իմ տունը շրջապատված է լրտեսներով: Խանը իմ իւրաքանչիւր քայլին հետևում է:

«Այսու ամենայնիւ, նրա արթնութիւնը, նրա աչալրջութիւնը իմ վերաբերութեամբ բոլորովին ապարդիւն անցաւ: Ես գաղտնի կերպով իմ որդու և այլ հաւատարիմների ձեռքով կարողացայ իմ հայ հպատակներից աւելի քան երկու հազար հոգի զէնքի տակ կոչել: Մի հրաման բաւական է, որ մի քանի ժամվայ մէջ բոլորին կոխի դաշտը դուրս բերէ:

«Այդ զօրքերը ես պատրաստել եմ ձեզ օգնելու համար, Թորոս, որ դրանով գուցէ կարողանամ քաւել իմ հին մեղքերը, որ գործել եմ ես իմ ազգի և իմ հայրենիքի վերաբերութեամբ:

«Մեր անձնական, մասնաւոր հաշիւները, կարծում եմ, առիթ չի պիտի տան ձեզ զրկել ինձ կատարելու իմ պարտքը: Մասնաւոր հաշիւները մի կողմ են դրվում, երբ երևան է գալիս ընդհանուր ազգային սուրբ գործը: Թոյլ տուեցէք ինձ, Թորոս, մասնակից լինել այդ գործին, մի մերժէք իմ ծառայութիւնը, որով կամենում եմ ես քաւել իմ յանցանքը, որը օրըստօրէ ծանրանում է խղճիս վրա:

«Խանի զօրքը բաղկացած է մօտ տասն հազար հոգուց. նա ամրացել է Ըղուարդ գիւղի մերձակայքում: Բայց բէկի սուր յաջողութիւնները

այն աստիճան սարսափի մէջ են ձգել դրանց, որ տասն այդքան ուժը դարձեալ ոչինչ նշանակութիւն ունենալ չէ կարող հայրենիքի փրկութեան գաղափարով ոգեւորուած սակաւաթիւ հայ զինուորների առջեւ:

«Երբ ձեր գունդերը կը մտնեն Եղուարդին, ես իմ մարդիկներով կը միանամ ձեզ հետ: Ես կարող էի փոխանակ այդ նամակի, իմ երկու հազարով զինել ձեր բանակը, բայց ինձ արգելք եղան երկու պատճառներ. նախ, որ ձեր յաղթութիւնը տակաւին ստոյգ չէր, երկրորդ, որ ես մի այդպիսի վարմունքով իմ բոլոր գիւղացիների ընտանիքները կենթարկէի խանի վրէժխնդրութեանը, նախ քան նրանց կռուի դաշտը դուրս գալը: Իսկ պատերազմի ժամանակ այդ վտանգը կարելի է անցած համարել:

«Վերջացնելով նամակս, վկայ եմ կոչում իմ անկեղծութեանը ոչ միայն այն խաչը և աւետարանը, որ իմ ուխտի և երդման կնիքով կնքած ձեզ մօտ եմ ուղարկում,—այլ մեր հայրենիքի սուրբ յիշատակը, որը նոյնքան պաշտելի է ինձ համար, որքան ձեզ համար:»

Նամակի ընթերցումից յետոյ տիրեց խորին լռութիւն: Զօրապետներից իւրաքանչիւրը մտածութեան մէջ էր: Վերջը Թորոս իշխանը ընդհատեց լռութիւնը, հարցնելով.

—Ի՞նչ կարծիք ունէք այդ նամակի մասին:

Պատասխանը շուտով չը տրուեցաւ: Նամակը այն աստիճան պարզութեամբ և մի և նոյն ժամանակ վարպետութեամբ էր գրուած, որ դժուար էր իսկոյն կարծիք յայտնել:

—Ի՞նչու էք լռում, կրկին հարցրեց Թորոս իշխանը:

—Ես անկեղծութիւն չեմ գտնում այդ նամակի մէջ, պատասխանեց իշխան Ստեփաննոս Շահումեանը:

—Ես էլ նոյնպէս, ասաց Մէլիք-Փարսադանեան Բալի զօրապետը:

Մէլիք-Նուբարը ոչինչ չը խօսեց:

—Ես ձեր երկուսի հետ ևս համաձայն կը լինէի, ասաց Թորոս իշխանը, նամակը մի կողմ դնելով.—ես ոչինչ նշանակութիւն չէի տալ Մէլիք-Ֆրանգիւլի երդմանը, ուղարկած խաչին և աւետարանին, որովհետև նա մի այնպիսի մարդ է, որի համար սուրբ բան չը կայ: Բայց ինձ հետաքրքրում է մի բան միայն:

—Ի՞նչ բան, հարցրեց իշխան Շահումեանը:

—Քահանայի պատմութիւնը խանի մարդիկների յարձակման մասին մէլիքի տան վրա, նրա տան մէջ կատարուած խուզարկութիւնները, նրա փախուստը և այլն: Այդ բոլորը ցոյց է տալիս, որ մէլիքը ոչ միայն խանի հետ իր կապերը խզած է, այլ իր վրա հրաւիրել է և նրա կասկածը:

—Քաջամամ կարող էր այդ պատմութիւնը ինքը հնարել, նկատեց Մելիք-Փարսադանեանը։

—Քաջամայրն ես ճանաչում եմ, պատասխանեց Թորոս իշխանը.—Նա այնքան միամիտ, պարզ և մինչև անգամ յիմար մարդ է, որ ոչինչ պատմութիւն հնարելու շնորք չունի։ Նա պատմում է այն, ինչ որ իր աչքով տեսել է։

—Այդ աւելի վատ է, որ նա յիմար է, ասաց Մելիք-Փարսադանեանը,—որովհետև յիմարներին խօսքի մէջ բռնել աւելի դժուար է, քան թէ խելօքներին։ Յիմարը միշտ յիմարութիւն է ասում, բայց երբ խելօքը միանգամ միայն յիմարութիւն է խօսում, իսկոյն նկատվում է։

Իշխան Շահումեանը ասաց.

—Ես Քաջամայի անկեղծութեան մասին կասկած չունեմ. նա այդ պատմութիւնը ինքը չէ հնարել, այլ խօսում է այն, ինչ որ իր աչքով է տեսել։ Բայց շատ հաւանական է, որ այդ բոլորը իրանց մէջ նախապէս սարքել են մելիքը և խանը։ Ահա որպէս. մելիքը կարող էր սկզբից խանին յայտնած լինել մեզ նամակ գրելու դիտաւորութեան մասին, և նրա բովանդակութիւնը կարող էր խանին ամբողջապէս հաղորդած լինել, և իր նամակի ստուգութեանը աւելի հաւանականութիւն ընծայելու համար, կարող էր հէնց ինքը խանին առաջարկած լինել, որ իր տան վրա մարդիկ ուղարկէ, խուզարկութիւններ անել տայ, յետոյ ինքը

ուշադրութիւնից պարտանել. քաշ ընկնի, և հէնց խանի մարդիկների աչքի առջև փախչէ և այլն։—Այդ բոլորը, կրկնում եմ, կարող էին նախապէս սարքած լինել։ Ես համոզված եմ, որ այդպէս է, աւելի այն պատճառով, որ այդ գործողութիւնները կատարվում են հէնց նոյն րոպէում, երբ մելիքի մեզ մօտ ուղարկված պատգամաւորները ամրոցից շատ չէին հեռացել, որ կարողանային տեսնել և պատմել մեզ։

—Ձեր նկատողութիւնները շատ ճիշտ են, ասաց Թորոս իշխանը,—Մելիք-Ֆրանգիւլի նման մի մարդ շնորք ունի դրանից աւելի սատանայական խարդախութիւններ գործ դնելու։ Բայց իմ կարծիքով, այդ մթին կնճիռը աւելի հեշտ կարող է լուծել մեզ համար Մելիք-Նուբարը, և ես կը ցանկանայի, որ նա հաղորդէ մեզ, արդեօք ինչ եզրակացութիւնների հասաւ իր հետախուզութիւնների ժամանակ Մելիք-Ֆրանգիւլի վերաբերութեամբ։

Մելիք-Նուբարը յայտնեց, թէ սուտ չէ, որ խանի մարդիկը յանկարծ շրջապատել են նրա ամրոցը, կամեցել են նրան կալանաւորել և նա փախել է։ Իսկ թէ այդ խաղը կատարվել է խանի և Մելիք-Ֆրանգիւլի համաձայնութեամբ, այդ մասին փաստեր ձեռք բերել նա չը կարողացաւ։ Այն ևս սուտ չէ, ասաց նա, որ մելիքը գնացել է իր հօր գիւղացիներին, բայց թէ ինչ նպատակով,—

իրանք գիւղացիները չը գիտեն։ Այդ գիտեն մէլիքի մի քանի մտերիմները միայն, որոնք գաղտնի կերպով պատրաստել են գիւղացիներին։—Այդ մարդերից և ոչ մէկի հետ, ասաց նա, ինձ չը յաջողվեցաւ տեսնվել. նրանք գիւղից-գիւղ շրջում են ծպտեալ կերպարանքով, ճանաչել անհնարին է։ Հետաքրքրականն այն է, աւելացրեց նա, որ այդ բոլոր պատրաստութիւնները, այդ խորին ծածկապահութիւնը հայ գիւղացիների զինուորվելու վերաբերութեամբ, գործ է դրված, ոչ միայն պատրաստութիւնները մեզանից թաքցնելու համար, այլ նոյն իսկ խանից և նրա մարդիկներից ծածուկ պահելու համար։ Այստեղից ինքն ըստ ինքեան ծագում է մի հարց. արդեօք ինչ հարկ կար այս աստիճան խիստ գաղտնիք պահել, եթէ խանի և մէլիքի յարաբերութիւնները բարեկամական լինէին։

—Մեզ խաբելու համար, պատասխանեց իշխան Շահումեանը։—Մէլիք-Ֆրանգիւլին լաւ յայտնի է, որ մենք այն մարդկանցից չենք, որ իսկոյն նրա խոստմունքները զուտ ճշմարտութեան տեղ ընդունենք։ Նա գիտէ, որ մենք կը քննենք գործը իր ամենամանրամասն պարագաներով։ Եւ դրա համար բոլոր պարագաները յարմարացրել է իր խաբէութիւնը քօղարկելու համար։

—Բայց ինձ զարմացնում է մի բան, աւելացրեց իշխան Շահումեանը.—մէլիքը մեզ գրում է, որ փախստական նամակ ուղարկելու, չտա կը ցանկա-

նար ինքը անձամբ իր մարդիկների հետ դիմել մեր բանակը, բայց այդ չարեց նա այն պատճառով, որ նախ մեզանից հաճութիւն չէր ստացած, երկրորդ, չը կամեցաւ խանի վրէժխնդրութիւնը հրաւիրել իր զինուորների ընտանիքների վրա։ Ընդունենք, որ այդ պատճառաբանութիւնները հաւանական են։ Բայց այժմ, երբ նրա անհաւատարմութիւնը յայտնվեցաւ խանին և խանը կամեցաւ կալանաւորել նրան, և նա միջոց գտաւ փախչելու, —այդ բոլորից յետոյ այլ ես ինչն էր արգելում նրան անձամբ դիմել մեր բանակը։

—Այդ բացատրում է մէլիքի գիրը նրանով, պատասխանեց Մէլիք-Փարսադանեանը.—որ եթէ նա փախչելուց յետոյ գալու լինէր մեր բանակը, զգանով ժամանակ կը կորցնէր և իր մարդիկը հաւաքելու, զօրք կազմելու միջոց չէր ունենայ։

—Որքան մեզ մօտ ուղարկված քահանան պարզ և միամիտ մարդ է, այնքան այդ գիրը անպիտան և նենգաւոր է երևում, պատասխանեց իշխան Շահումեանը։

Վիճաբանութիւնները հետզհետէ աւելի տաքանում էին։ Թորոս իշխանը խնդիրը բաւական պարզված նկատելով, խօսեց.

—Այդ բոլոր հակաճառութիւններից ծագում է երկու հարց. առաջին, կարօղ ենք արդեօք կատարելապէս հաւատալ այդ մարդու խոստմունքներին, երկրորդ, եթէ չենք կարող, ինչ վտանգ ու-

նենք մերժելու նրան։—Կատարելապէս հաւատալ չենք կարող, որովհետև չօշափելի ապացոյցներ չունենք նրա անկեղծութեան մասին։ Մերժել ևս չենք կարող, որովհետև դուցէ նա չէ խաբում մեզ։ Այդ երկու միմեանց հակառակ հարցերը հաշտեցնելու համար, իմ կարծիքով, պէտք է ընտրել միջին ճանապարհ, այսինքն՝ ոչ բոլորովին հաւատալ և ոչ իսպառ մերժել նրան։

—Ի՞նչպէս կարելի է այդ, հարցրեց իշխան Շահումեանը փոքր ինչ մտածելով։

—Կարելի է, պատասխանեց Թորոս իշխանը հանդարտութեամբ։ - Մենք չենք հաւատայ նրան դրանով, որ թոյլ չենք տայ մտնելու մեր զօրքերի մէջ։ Մի և նոյն ժամանակ չենք մերժի նրա ծառայութիւնը դրանով, որ չենք արգելի, երբ նա իր մարդկանցով կը սկսէ առանձին կերպով կռուել խանի հետ։

—Նա կարող է այդ ժամանակ իր զէնքը մեր դէմ դարձնել։

—Շատ հաւանական է։ Բայց մենք ոչինչ չենք կորցնի։ Նա հիմա էլ կարող է բացարձակ կերպով դուրս գալ խանի զօրքերի հետ և կռուել մեր դէմ։

—Զանազանութիւնը մեծ է, ասաց իշխան Շահումեանը։—Նա այնքան վտանգաւոր չի լինի, երբ սկզբից իբրև յայտնի թշնամի կը դուրս գայ մեր հանդէպ։ Բայց երբ նա սկզբից մեզ բարե-

կամ կը ձևանայ, իսկ յետոյ կը դաւաճանէ, այդ ժամանակ կարող է աւելի վնասել մեզ, քան թէ յայտնի թշնամին։—Իմ կարծիքով, պէտք է բոլորովին մերժել նրա օգնութիւնը, թող ինչ որ կամենում է, այն անէ։

Իշխան Շահումեանը Թորոսի քրոջ որդին էր, մանկութիւնից զրկված լինելով հօրից, և մեծանալով իր քեռու խնամակալութեան ներքոյ, ստացել էր նրա մօտ աւելի համարձակութիւն։ Այդ էր պատճառը, որ այսպէս սաստիկ հակառակում էր նրա կամքին։

—Ես աւելի կը պարզեմ իմ միտքը, ասաց Թորոս իշխանը։—Իմ կարծիքի մէջ այն միակ առաւելութիւնը կայ, որ մենք չենք զրկի մի նոր ուժից, որը ինքնակամ առաջարկում է մեզ իր օգնութիւնը։ Շատ կարելի է, որ նրա խոստմունքները անկեղծ լինեն։ Շատ կարելի է, որ նա խաբում է մեզ։ Բայց թէ նրա խաբէութիւնը և թէ անկեղծութիւնը մեզ համար դեռ բոլորովին մթութեան մէջ են։ Այդ մտքով ես աւելի նպատակայարմար եմ համարում, թոյլ տալ նրան, որ գործով ապացուցանէ իր անկեղծութիւնը։ Եւ այդ այլ կերպ չէ կարող լինել, բայց միայն բացարձակ կերպով յայտնել նրան, թէ մենք ընդունում ենք քո ծառայութիւնը, բայց բոլորովին հաւատալ քեզ չենք կարող։ Դու պէտք է գործով արդարացնես քո խոստմունքները։ Երբ կը տեսնենք՝ կախի դաշ-

տում դու էլ մի կողմից կը ջարդես խանի զօրքերը, կամ կը յաղթվես, կամ յաղթութիւն կանես, այն ժամանակ մենք բարեկամութեան ձեռք կը մեկնենք քեզ: Բայց առ այժմ ընդունել քեզ քո մարդկնների հետ մեր զօրքերի թւում չենք կարող: Դու պէտք է առանձին գործես: Միանալ կարող ես մեզ հետ միայն կռւից յետոյ:

Իշխանը դեռ չաւարտած իր խօսքը, նրա թիկնապահներից մէկը ներս մտաւ, յայտնեց, թէ մի անծանօթ մարդ կամենում է ներկայանալ:

—Չէ՞ ասում, թէ ով է:

—Չէ ասում, պատասխանում է, թէ ինձ միայն իշխանը պէտք է ճանաչէ:

—Ներս թողեցէք:

Վրանը շրջապատող պահապանները զինաթափ արեցին նրան և ներս տարան: Բոլորի վրա տիրեց զարմացում: Անակնկալ այցելուն ինքը՝ Մէլիք-Ֆրանգիւլն էր: Նա մտնելով վրանի մէջ, ոտքի վրա կանգնած, խօսեց.

—Ես յետոյ մտածեցի, որ իմ ձեզ մօտ ուղարկած պատգամաւորութիւնը կարող էր այն յաջողութիւնը չունենալ, ինչ որ ես սպասում էի, դրա համար աւելի բարւոք համարեցի անձամբ դիմել ձեր բանակը, իմ լեզուով արտայայտելու հպատակութեան հաւատքը: Այդ մասին պէտք է հաղորդել լինել Ֆաթալի-խանին, որը այնքան անխոհեմ գտնվեցաւ, որ ինձ փախց-

րեց իմ ամրոցից: Այժմ ձեր առջև կանգնած է մի հին յանցաւոր, կամ հրամայեցէք նրան գլխատել, կամ ներումն շնորհելով, ընդունեցէք նրա մոռացած լուման մեր աշխարհի ընդհանուր զոհաբերութեան գանձանակի մէջ:

—Նստեցէք, մէլիք, ասաց Թորոս իշխանը, նրան տեղ ցոյց տալով:

—Ես չեմ նստի, մինչև իմ վիճակը չը վճռվի, պատասխանեց նա, տեղից չը շարժվելով:

—Նստեցէք, կրկնեց իշխանը այժմ աւելի մեղմ ձայնով:

Նա նստեց ցոյց տուած տեղում, Թորոսի մօտ: Այդ միջոցին Ստեփաննոս Շահումեանը վրդովված կերպով վերկացաւ և անխօս դուրս եկաւ գլխաւոր հրամանատարի վրանից: Նրա վրդովմունքը բոլորը նկատեցին:

Նրա երկու հաւատարիմ, անբաժան զինակիցները՝ Ջումշուդը և Աղասին դրսում սպասում էին իրանց պարոնին: Երբ նա յայտնվեցաւ, զինակիցներից մէկը նրա առջևն ընկած, միւսը ետևից գնալով, առաջնորդեցին նրան դէպի իր վրանը:

Մթին գիշեր էր: Նորածին լուսինը վաղուց արդէն մայր էր մտել: Նրանք անցան բանակի միջով և եկան այնտեղ, ուր զետեղված էր երիտասարդ իշխանի զօրախումբը: Նա մտաւ իր վրանը և հրամայեց լապտերը վառել: Յետոյ նստեց թանձր թաղիքի վրա, որով ծածկված էր վրանի յատակը:

Լապտերի աղօտ լոյսի առջև նրա մռայլված դէմքը աւելի սարսափելի էր։ Նա թիկն տուեց մի եախթանի, որ պարունակում էր իր մէջ նրա զինուորական սարքաւորքը։

Նա այժմ մոռացել էր թէ գլխաւոր հրամանատարի յանձնարարութիւնը, թէ Մելիք Փրանգիւլի խաբեբայական խաղերը և մտածում էր միայն մէկ առարկայի վրա, իր սիրոյ, իր վաղեմի անդրանիկ սիրոյ անդրանիկ առարկայի վրա։ «Այդ անհասկանալի է... մտածում էր նա։ Ինչու նա մի մարդ, մի լուր չուղարկեց ինձ մօտ։ Անկարելի է, որ նա անզգուշութիւն ցուցանէր մեր սրչաւանքի մասին։ Նա այնքան խելացի է, այնքան շրջահայեաց է, որ կարող էր հասկանալ, թէ ինչ է կատարւում իր շուրջը և նրա համեմատ կարգադրէր իր վիճակը.... Բայց ինչու է լռել։ Միթէ չէ՞ մտածում, որ ես ժամէ-ժամ, րոպէից-րոպէ սպասում եմ նրա կարգադրութեանը.... Միթէ նա չը գիտէ, որ իմ կեանքը, իմ երջանկութիւնը նրան սպասելու համար է։ Բայց ինչու է թողնում ինձ անգիտութեան և մոլորութեան մէջ»....

Նա վեր առեց մի կտոր թուղթ, շտապ ձեռքով գրեց մի քանի տողեր, և կնքելով յետոյ կանչեց Ջամշուդին։

—Դու խանի ամարանոցի հետ լաւ ծանօթ ես, —հարցրեց, երբ յայտնվեցաւ Ջամշուդը։

—Ինչպէս մեր տան հետ, պատասխանեց Ջամշուդը ինքնավստահութեամբ։

—Դու ճանաչում ես խանի ներքինապետին։

—Ճանաչում եմ, նրան կոչում են Ահմէդ։

—Կարող ես այդ նամակը մինչև արևի ծագելը հասցնել նրան, —մինչև արևի ծագելը, հասկանում ես, այսինքն կռուի սկսելուց առաջ, որովհետև մենք կռիւը սկսելու ենք դեռ լոյսը չը բացված։

—Կարող եմ։

—Իսկ եթէ ներքինապետին չը կարողանաս գտնել։

—Դուք ինձ ասեցէք, թէ նամակը ում անունով էք գրել, ես կը հասցնեմ նրան։

—Խանի տիկնոջ Սիւրիի անունով։

—Հասկանում եմ...։ Նրան հասցնելը աւելի հեշտ է։ Ես նամակը կը կապեմ մի կտոր քարի և ներս կը ձգեմ ուղիղ տիկնոջ լուսամուտի պատուհանից։ Ես քար ձգելու մէջ սխալ չեմ անում։ Ապակին կը կոտրուի և տիկնոջ ուշադրութիւնը կը դարձնէ նամակի վրա։ Ես իմանում եմ, տիկնոջ ննջարանի լուսամուտները դէպի որ կողմն են բացվում։

—Յետոյ դու պիտի սպասես պատասխանին։

—Կը սպասեմ, եթէ պատասխանը հարկաւոր է։

—Հարկաւոր է։ Բայց ինչ միջոցով կը ստանաս։

—Եթէ նամակը ներքինապետի ձեռքով ուղար-

կեցի, ինքը ներքինապետը պատասխանը կը բերէ, իսկ եթէ լուսամուտից ներս ձգեցի, շատ հասկանալի է, որ նոյն լուսամուտից պատասխան կը ստանամ:

—Բայց կարող են հանգամանքները փոխուած լինել, այն ժամանակ մեր այդ նախամտածութիւնները բանի պէտք չեն գայ:

—Այս հանգամանքների համեմատ նոր հնարներ կը մտածեմ նամակը տեղ հասցնելու համար:

—Դու ինչ կերպարանքով կը մտնես ամարանոցին, որ քեզ չը ճանաչեն:

—Մուրացկանի կերպարանքով, մուրացկանին ամեն տեղ թողնում են:

—Ուրեմն դու սովորած կը լինես ոտքով գընալ, որովհետև մուրացկանը ձի չէ նստում. իսկ ոտքով մինչև առաւօտ ամարանոցը հասնել չես կարող:

—Ես ձիով կը գնամ. գիշերային խաւարի մէջ ձիու վրա նստած մուրացկանը շատ աչքի չի ընկնի: Իսկ երբ լուսացաւ, ձին պահ կը տամ իմ ուղեկցին, որը անտառում կը սպասէ ինձ:

—Ուրեմն դու մի ուրիշին ևս պիտի վեր առնես քեզ հետ:—Ո՞ւմին կը տանես:

—Ումին որ դուք կը հրամայէք:

Իշխանը փոքր ինչ մտածելուց յետոյ ասաց.

—Լաւ է, որ Աղասիին վեր առնես:

—Ես էլ այսպէս եմ մտածում:

—Իսկ պատասխանը ո՞րտեղ կը բերես ինձ:

—Որտեղ որ դուք կը լինէք:

—Ուրեմն իսկոյն ճանապարհ ընկէք, դու և Աղասին:

Խորամանկ Զումռուդը առեց նամակը, գլուխ տուեց և հեռացաւ: Սպասաւորները ոչ մի ծառայութեան մէջ այնքան արի, այնքան ճարպիկ չեն լինում, որքան իրանց տիրոջ սիրային խնդիրգաների մէջ...

Զումռուդի հեռանալուց յետոյ երիտասարդ իշխանի վրանը ներս մտաւ Մելիք-Փարսադանեան Բալի զօրապետը:

—Ինչով վերջացաւ, հարցրեց նրանից Շահումեանը:

—Նոյնպէս, ինչպէս իր վերջին որոշումով մեզ յայտնեց հրամանատարը.—Մելիք-Ֆրանգիւլը պէտք է իր մարդիկների հետ կռուէ խանի հետ ուրիշ կողմից, առանձին, առանց մեր գունդերի մէջ խառնվելու: Բայց դուք ի զուր վրդովվեցաք, Ստեփան: Թօրոս իշխանը մի հմուտ, պատերազմող մարդու բոլոր յատկութիւններն ունի, ինչ պէտք է ասած, որ նա չափազանց բարեսիրտ է, ներող է, մեծահոգի է, չէ կարող մերժել մի մարդու, որ այս աստիճան խոնարհվում է և իր ոտքով նրա դուռն է դիմում, թողութիւն խնդրելու: Նա այնքան ազնիւ է, որ չէ կարողանում հաւատալ, թէ մարդիկ մինչև այն աստիճան կարող են ցած և

անպատիւ լինել, որ այդ բոլորից յետոյ դարձեալ մտածեն խաբել նրան:

—Այդ բարերարութիւն չէ, դա ամենապարզ միամտութիւն է, որը ներելի չէ մի մարդու, որ ամբողջ զօրախմբի հրամանատար է, որ իր ձեռքի տակ գտնված իւրաքանչիւր զինուորի կեանքի համար պատասխանատու է: Բարերարութիւնը պատերազմի ժամանակ մի սև փող չարժէ: Ես իմ քեռուն աւելի լաւ եմ ճանաչում, քան թէ դուք. նա, խիստ է, քաջ է, մեծահոգի է, լաւ զօրապետ է, բայց թոյլ է:

—Եթէ դուք այնտեղ մնայիք և տեսնէիք, թէ ինչպէս էր լաց լինում Մելիք-Ֆրանգիւլը, թէ ինչպէս էր աղաչում, պաղատում և մեր առջև թափում իր սրտի վշտերը, կարծում եմ, որ դուք էլ կը խղճայիք նրա վրա:

—Երբէք: Այդպիսիների լացը, արտասուքը անառակ կանանց արտասուքի նման է, որ ամեն րոպէ պատրաստ է: Նրանք անդադար անամօթ կերպով կը դաւաճանեն իրանց սիրողներին, բայց հէնց որ բռնվեցան անհաւատարմութեան մէջ, կը սկսեն լաց լինել, արտասուք թափել, զղջալ և հաւատարմութեան երդում տալ: Իսկ երբ իրանց նպատակին հասան, բոլորը կը մոռանան...

—Չէ կարելի այս տարիքում կասկածամիտ լինել:

—Տայ Աստուած, որ ես սխալված լինեմ, բայց

ես համոզված եմ, որ իմ կասկածանքները անտեղի չեն:

Երկու երիտասարդ զօրապետների վիճաբանութիւնը ընդհատեց թմբուկների ձայնը, որ լսվի եղաւ բանակի մէջ:

—Այդ ինչ ձայն է, հարցրեց Իշխան Շահումեանը:

—Պատրաստվելու հրաման է, պատասխանեց Մելիք-Փարսադանեանը:—Թորոսը հրամայեց գիշերով արշաւանք գործել, որ մինչև լոյսը բացվելը հասնենք Կոխի դաշտը:—Մնաք բարեաւ, ես գընում եմ իմ խումբը պատրաստելու: Նա հեռացաւ:

Իշխան Շահումեանը նոյնպէս գնաց դէպ իր վրանից և հրամայեց չուելու թմբուկը ածել:

ԼԲ.

Եթէ այսօր ճանապարհորդը «Կարմիր վանքի» (Երիցակայ վանքի) բարձրաւանդակից կը ցանկանայ իջնել դէպի արևմտեան կողմի ձորը, և չի վախենայ սարեակի նման ուղղաձիգ ապառաժներից գլորվել դէպի իր առջևը բացվող խորխն անդունդը, այլ սողալով քարաժայռերի կատարը բռնելով, և վայրենի մացառներից, թուփերից բռնելով, կամաց-կամաց ցած կիջնէ, նա կը գտնէ քարափի սրտի մէջ մի նեղ, բնական քարանձաւ, հովանաւորված տաղաւարային ծառերով: Այդ քարանձաւի մուտքը այժմ փակված է հաստատ

փայտեայ դռնով. Նրա մէջ կայ մի մռայլված գերեզման, որին խիստ սակաւ անգամ ուխտաւորները գալիս են այցելութիւն գործելու:

Եթէ հարցնելու լինես Արծուանիկի գիւղացիներից, թէ այդ ում գերեզմանն է, ինչու է այդ քարանձաւը ուխտատեղի դարձել,—նրանք քեզ այսքանը միայն կարող են պատասխանել, թէ այդ այրի մէջ մի ժամանակ մի ճգնաւոր էր բնակւում, երբ նա մեռաւ, թաղեցին հէնց իր ճգնարանում. նա շատ սուրբ մարդ էր, դրա համար էլ ժողովուրդը պաշտում է նրան:

Գուհիթ-բէկի ապստամբութեան օրերում այդ ճգնաւորը դեռ կենդանի էր, բնակւում էր մի և նոյն այրում: Այրը ուրիշ լուսամուտ չունէր. դռան մէջ վերևի կողմից բացված էր մի քառակուսի ծակ, որից լոյսը ներս էր թափանցում: Այդ բնակարանը, որ բնութիւնը ստեղծել էր գազանների համար, այժմ ծառայում էր որպէս ճգնարան մի մենակեացի, որի արտաքին տեսքը նոյնքան սարսափ էր ազդում, որքան վայրենացած մարդու կերպարանքը:

Առաւօտը լուսանալու մօտ էր, բայց նա դեռ քնած էր: Նրա պարզ անկողինը կազմված էր չորացրած, փափուկ խոտերից, որոնց վրա պառկել էր նա. բարձի փոխարէն գլխի տակ դրել էր իր թևքը, իսկ վերմակի փոխարէն իր վրա ծածկած ունէր մի ահագին վայրի մորթի: Ամեն առաւօտ,

այդ ժամանակը զարթած էր լինում նա, կատարելու իր վաղորդեան աղօթքը, իսկ այս առաւօտ քունը յաղթել էր նրան: Գիշերը նա խիստ ուշ վերադարձաւ իր այրը. ուր էր նա, որտեղ էր թափառում, յայտնի չէր:

Վաղ-առաւօտեան նրա քունը խանգարեցին. մի մարդ մօտեցաւ այրի դռանը, սկսեց սաստիկ բաղխել: Նա զարթնեց և իսկոյն բաց արեց դուռը: Եկւորը յայտնեց նրան, թէ խանը կանչում է:

—Ի՞նձ, այսպէս վաղ... ինչ գործ ունի ինձ հետ խանը, հարցրեց նա փոքր ինչ շփոթված կերպով:

—Չը գիտեմ, կանչում է:

—Լաւ, դուք գնացէք, ես իսկոյն կը գամ:

Եկւորը հեռացաւ: Ճգնաւորը նոյնպէս պատրաստւեցաւ գնալու: Նրա հագուստը բաղկացած էր մէկ կտորից միայն. դա սպիտակ, կոշտ կտաւից կարված շապիկ էր, որ իջնում էր մինչև նրա մերկ սրունքները և բոբիկ ոտները: Բազուկների և պարանոցի վրա փաթաթած ունէր երկաթէ տէրողորմեաներ սև հատիկներով: Ուսից քարշ էր ընկած մի մախաղ, որ նման էր հովիւների մախաղին: Այդ պարզ, նախնական զգեստը լրացնում էր ահագին վայրի մորթին, որ ձգեց ուսերի վրա:

Ընթերցողը իսկոյն կը մտաբերէ, որ այդ տարօրինակ անձնաւորութեան հետ, կարծես թէ, ծանօթ լինի. կարծես թէ, մի քանի անգամ նրան հանդիպած

լինի: Այո, ընկերոջդ յիշողութիւնը իրան չի խաբի, եթէ այդպէս մտածէ: Մեր պատմութեան ընթացքում մի անգամ այդ մարդուն տեսանք չալարիան կոչված խաշնարած ցեղի իմամի (հոգևոր գլխաւորի) չադրում. խօսում էր գերմանական գիտութիւններից և ծերունի իմամին մանկանալու համար երկրաչափութեան մաջուններ էր պատրաստում: Նոյն ժամանակ տեսանք նրան Ֆաթալի-խանի չադրում բժշկական հնարներ էր գործ դնում խանի մշտական առողջութեան համար: Դա մի և նոյն անձնաւորութիւնն է,—դա մի և նոյն դ ե ր վ ի շ ն է: Այն օրից անցել են շատ տարիներ. այժմ բաւական ծերացել է դերվիշը. մօրուքի և գլխի սև, և երբեք չը սանրված, չը լուացված, չը կտրված մազերի մէջ այժմ յայտնվել են սպիտակ ալիքներ. մուգ-ղահվէի գոյն ունեցող դէմքը այժմ բաւական գունատվել է, թառամել է:

Իմամի մեռնելուց յետոյ խանը թոյլ չը տուեց նրան գնալ իր հայրենիքը. պահում էր իր մօտ և շատ անգամ ախորժանօք լսում էր նրա պատմութիւնները, թէ ինչ են գրել, ինչ են խօսացել իմաստուն մարդիկ: Երբեմն կատարում էր նրա բարի խորհուրդները: Երբ խանը, քանդելով «Կարմիր վանքը», նոյն լեռան բարձրաւանդակի վրա իր համար ամարանոց շինեց, դերվիշը ընտրեց իր բնակութեան համար, վանքի աւերա-

տում, մեր վերևում նկարագրած այրը: Կարծես, մի առանձին գաղտնիք կապել էր այդ խորհրդաւոր մարդուն իր ճգնարանի հետ, կարծես, մի խորին պատճառ թոյլ չէր տալիս հեռանալ նրան բռնակալի ամարանոցի մերձակայքից:

Ինչ էլ որ լինէր այդ գաղտնիքը, մենք թողնում ենք այժմ նրա վրա խօսելը, միայն այսքանը կասենք, որ պարսիկ դերվիշը և հայ ճգնաւորը շատ չեն զանազանվում միմեանցից: Երկուսն էլ աշխարհի հոգսերից, աշխարհի վայելչութիւններից հրաժարված մարդիկ են. երկուսն էլ թողած իրական կեանքի պէտքերը, անձնատուր են լինում վերացական գաղափարների, զուարճանում են երևակայական հոգեզմայլութիւններով: Բայց այդ դերվիշի մէջ նկատվում էր մի բան, որ աւելի իրական էր, որ աւելի ձգտում էր դէպի մարդկային բարին, թէև նա ամենայն զգուշութեամբ աշխատում էր ծածկել...

Ստանալով խանի հրաւէրը, նա վեր առեց իր ահագին, կոճղնաւոր գաւազանը, որ սովորաբար կրում են իր դասակարգի մարդիկը, և գնաց դէպի ամարանոցը: Նա իր այրի դուռը չը կողպեց, որովհետև այնտեղ գողանալու ոչինչ չը կար. իր ամբողջ կայքը նա իր վրա կրած ունէր.—սպիտակ չալմէկը, վագրի մորթին, տէրողորմեանները և հովիւի մախաղը,—այդ էր նրա հարստութիւնը: Գլխին գտակ չունէր. Թաղիքի նման խճճված

մազերը գլխարկի տեղ էին ծառայում: Ոտները զուրկ էին հողաթափներից:

Նա անցաւ վանքի աւերակների մօտից: Մի օր առաջ հայ գիւղացիները հաւաքված այնտեղ, կրօնական հանդէս էին կատարում: Իսկ այսօր ամբողջ տարածութիւնը ծածկված էր զինված ձիաւորներով:

Արշալոյսը դեռ նոր էր սկսել շառագունել: Օդը լցված էր եղևինների անտառի թարմ անուշհոտութեամբ: Թռչունները կատարում էին իրանց վաղորդեան օրհներգութիւնը լոյսի Արարչին: Իսկ մարդիկ պատրաստվում էին արիւն թափելու: Դերվիշը նայեց այդ աղետալի տեսարանի վրա և տխուր մտախոհութեամբ անցաւ:

Մտնելով ամարանոցը, դերվիշին տարան խանի դահլիճը: Նա գտաւ խանին միայնակ, բոլորովին զինված, պատերազմական հագուստով: Երբ ներս մտաւ նա, խանը յարգանքով ոտքի ելաւ և ողջունեց նրա գալուստը: Դերվիշը մօտեցաւ, և առանց սպասելու, որ իրան նստելու տեղ ցոյց տան, անփոյթ կերպով բազմեցաւ նոյն փառաւոր օթոցի վրա, ուր առաջ նստած էր խանը: Դերվիշը, այդ չքաւոր մերկիմաստակը, միակ մարդն է մահմեդական հասարակութեան մէջ, որի բոբիկ, փոշոտ ոտները համարձակ կերպով կոխում են իշխանների թանգագին գորգերը:

—Ես ձեզ, հայրիկ, այսպէս վաղ առաւօտեան

նեղութիւն տուի մի քանի հարցմունքների համար, խօսեց խանը ակնածութեամբ:—Ես շատ անգամ լսել եմ ձեզանից իմաստուն խօսքեր, շատ անգամ ձեր բարի խորհուրդներով օգնել էք ինձ: Յուսով եմ, որ այժմ, երբ աւելի կարօտութիւն ունեմ ձեր խրատներին, դուք ինձ կը տաք իմ ցանկացած տեղեկութիւնները:

—Ամեն տեղեկութիւնները, ամեն գաղտնիքները Աստուծոյ մօտ են, պատասխանեց դերվիշը.—ինչ որ Ամենագէտը կազդէ ինձ, ես կը հաղորդեմ ձեզ:

—Շնորհակալ եմ, ասաց խանը, և դառնալով դէպի սպասաւորը, հրամայեց.

—Հայրիկի համար մի ղահվէ:

Այդ միջոցին խանին կից սենեակից կանչեցին: Նա վերկացաւ, գնաց, դերվիշին ասելով.

—Մինչև դուք կը վայելէք ձեր ղահվէն, ես կը վերադառնամ:

Սպասաւորը նոյնպէս հեռացաւ ղահվէ պատրաստելու. հայրիկը մնաց դահլիճում միայնակ: Նա աչք ածեց օթոցի վրա, ուր առաջ նստած էր խանը, տեսաւ այնտեղ զանազան թղթեր, նամակներ, որ նոր էին ստացված: Հետաքրքրութեամբ վեր առեց նրանցից մէկը, և հայրիկի վարժ աչքերը արագութեամբ վազեցին տողերի վրա: Նամակը գրված էր Թորոս իշխանի բանակից, Մէլիք-Ֆրանգիւլի ձեռքով, որին հայրիկը լաւ ճանաչում

էր, և վերջանում էր այդ խօսքերով. «Աստծուն փառք տալով, աւարտում եմ իմ ձեզ հաղորդած տեղեկութիւնները. մեր նպատակները գեղեցիկ կերպով կատարւեցան... ամեն ինչ կարգադրւեցաւ այնպէս, որպէս դուք և ես ցանկանում էինք»...

Մի աղօտ մռայլ անցաւ դէրվիշի առանց դրան ևս դորշ դէմքի վրա. Նամակը դրեց իր տեղը, երբ լսելի եղաւ նախասենեակից սպասաւորի ոտնաձայնը:

Սպասաւորը ներս բերեց մի ֆինջան դառն ղահվէ առանց շաքարի, մատուց դէրվիշին:

—Լաւ էք պատրաստել, օրհնեալ լինիք, ասաց նա փոքր ինչ ճաշակելով. բաւական դառն է և թանձր, այդ ես սիրում եմ: Բայց դուք գիտէք իմ սովորութիւնը, զաւակս, որ ղահվէից յետոյ անմիջապէս ղէյլան եմ ծխում:

—Գիտեմ, ասաց սպասաւորը և դուրս գնաց նրա պատուէրը կատարելու:

Հայրիկը սկսեց կրկին նայել թղթերի վրա և շտապ կերպով մինը միւսից յետոյ աչքից անցկացնել: Խանը հաւատաց նրան իր թղթերը, որովհետև աշխարհից հրաժարված, մարդկային գործերով չը հետաքրքրվող, անփոյթ, անհոգ դէրվիշից նրա կարծիքով ինչ կասկած կարելի էր ունենալ: Նա մտածել անգամ չէր կարող, որ դէրվիշը ուշադրութիւն կը դարձնէ իր թղթերի վրա:

Վերջին թուղթը դնելով իր տեղը, նա հոգւոց հանելով արտասանեց.

—Եթէ ես փոքր ինչ առաջ գիտենայի...

Այդ միջոցին ներս մտաւ խանը:

—Պատերազմ է, հայրիկ, ասաց նա ուրախութիւնից պայծառացած դէմքով:—Իմ զօրքերը այժմ պատերազմի դաշտումն են: Երանի ձեզ, հայրիկ, որ ձեր խաղաղ այրի մէջ փակւած, որպէս Դիօգինէսը իր կարասում, ապրում էք բոլորովին ազատ այդ տեսակ հոգսերից: Ձեր թագաւորութեան սահմանները վերջանում են ձեր այրի չորս պատերով: Գոհ էք այդ անձկութեան մէջ, որովհետև ոչ ոքի հետ բաժանելու մի բան չունէք: Իսկ ես իմ իշխանութեան լայնատարած սահմանների մէջ հանգիստ չեմ, որովհետև պէտք է անդադար կռւեմ, պէտք է արիւնով պահպանեմ ինչ որ ունեմ...

Դէրվիշը ոչինչ չը պատասխանեց. նա ծխում էր և իր կարդացած թղթերի բովանդակութեան վրա էր մտածում:

—Հիմա գուշակեցէք, հայրիկ, թէ բախտը ինչ է խոստանում ինձ, հարցրեց նա, հաւաքելով թղթերը, և կողպելով մի փոքրիկ արկղիկի մէջ:—Ես այս րոպէիս պատրաստւում եմ գնալ պատերազմ. նախագուշակեցէք, թէ ինչով կը վերջանայ կռիւը:

—Իսկոյն կասեմ ձեզ, պատասխանեց դէրվիշը, երբ թամբաքուի ծխով բաւական բորբոքեց իր ե-

ընակայութիւնը:—Հրամայեցէք, որ տան ինձ մի հարթ տախտակ:

Սպասաւորը պահանջած տախտակը դրեց նրա առջևը: Գուշակողը դուրս բերեց իր մախաղի միջից երեք հատ պղնձէ գնդակներ, որ քառակուսի ձև ունէին, նարդի կոչված խաղատախտակի «զառերի» նմանութեամբ: Այդ գնդակները բախտահմանների լեզուով կոչվում են «ռ ա մ»: Քառակուսիների իւրաքանչիւր կողմի վրա գծած էին հնդկական թւանշաններ:

—Նախ գուշակեցէք, օրը բարի է, թէ չար, խնդրեց խանը:

Դէրվիշը պղնձէ գնդակները առեց ափի մէջ, շարժեց, լաւ կերպով մի աղօթք կարդալով, յետոյ երեքը միասին ձգեց հարթ տախտակի վրա: Գնդակները պտըտվեցան, պտըտվեցան և ապա դադար առին:

Դէրվիշը արտագրեց մի թղթի կտորի վրա գընդակների այն կողմի թւանշանները, որ դէպի վեր էին նայում: Յետոյ սկսեց հաշուել, գումարել և նրանցից հետևանքներ դուրս բերել: Երբ վերջացրեց իր համարումները, ասաց.

—Դուք հարցրիք՝ օրը բարի է, թէ չար: Իմ գընդակները մինչև կէս օր չար են ցոյց տալիս, իսկ կէսօրից յետոյ փոքր առ փոքր սկսվում է բարին:

—Հասկացայ, ասաց խանը գոհունակութեամբ:

—Հիմա գուշակեցէք, թէ կռիւը ինչպէս կը վերջանայ:

Դէրվիշը նորից ձգեց գնդակները տախտակի վրա, և առաջվայ նման համարումներ անելով, պատասխանեց.

—Մինչև կէս օր յաղթութիւնը ձեր թշնամու կողմը կը լինի, իսկ կէսօրից յետոյ բախտը կը դառնայ ձեր կողմը:

—Փառք լինի ամենակալ Աստծուն, բացականչեց խանը ուրախութեամբ.—յաղթութիւնը դարձեալ ինձանով է վերջանում:

—Բայց ձեր ուրախութիւնը կարճատև է երևում... ասաց դէրվիշը խորհրդաւոր ձայնով:

—Ի՞նչպէս, հարցրեց խանը գունաթափվելով:

—Ես չեմ կամենում խլել ձեզանից ձեր քաջալերութիւնը...

—Մի՛ խնայէք, ասացէք, խնդրեմ, ես հեշտ յուսահատվող մարդ չեմ:

—Սպասեցէք, իսկոյն կը բացատրեմ ձեզ:

Դէրվիշը կրկին գնդակները ձգեց տախտակի վրա և լռութեամբ պատասխանեց.

—Իրաւ է, այդ կռուի մէջ յաղթութիւնը ձեզանով կը վերջանայ:—Բայց...

—Մի թագցրէք, ասացէք խնդրեմ, անհամբերութեամբ հարցրեց խանը:

—Բայց յետոյ... մի քանի օրից... գուցէ մի քանի շաբաթներից յետոյ... կը կատարվի մի այլ,

աւելի սարսափելի կռիւ, որի մէջ դուք կը յաղթվէք…

Խանը բաւական հանգիստ կերպով պատասխանեց.

—Այդ ոչինչ. մի քանի շաբաթներից յետոյ թող աշխարհը կործանվի, ինձ համար փոյթ չէ, բաւական է, որ այսօր ես կռւի դաշտից յաղթող կը վերադառնամ:

—Եթէ դուք գիտենայիք այդ մի քանի շաբաթներից յետոյ կատարվող կռւի հետեւանքը ձեր անձի վերաբերութեամբ, այդպէս արհամարհանքով չէիք վերաբերվի դէպի ձեր ճակատագիրը…

—Ի՞նչ հետեւանք:

—Իմ լեզուն չէ զօրում արտասանելու համար:

—Ասեցէք, ես սրտի ամրութիւն ունեմ:

—Ապագայ կռիւը կը վերջանայ ձեր մահով…

Խանը ընկաւ մտածութեան մէջ:

—Եթէ ցանկանում էք այդ մահը հեռացնել ձեզանից, դուք այժմ պէտք է հաշտվէք թշնամու հետ, աւելացրեց դէրվիշը:

Խանը սկսեց ծիծաղել:

—Սիրելի դէրվիշ, պատասխանեց նա,—դուք գուշակում էք ապագայի մասին. մինչեւ ապագայում կատարվող կռիւը դեռ բաւական ժամանակ կայ, թէեւ կարճ ժամանակ: Բայց այդ կարճ միջոցում ես կարող եմ շատ փոփոխութիւններ պա-

տահել: Գուցէ այն ժամանակ ձեր գնդակները բոլորովին ուրիշ կերպ ցոյց կը տան:

—Տացէ Ամենակալը, որ ուրիշ կերպ ցոյց տան, բայց երբէք չէ՛ պատահել, որ իմ գնդակները խաբէին ինձ, այդ պատճառով ես կրկին խորհուրդ եմ տալիս հաշտվել թշնամու հետ:

—Գիտէք, դէրվիշ, ասաց խանը մօտենալով եւ կանգնելով ուղիղ գուշակողի առջեւ:—Պատերազմական յաղթութիւնը պատերազմող մարդու համար իր առանձին քաղցրութիւնն ունի, որպէս որսը որսորդի համար: Այսօրվայ յաղթութիւնը այնքան անսահման ուրախութիւն կը պատճառէ ինձ, որ ես այդ ուրախութիւնը երբէք չէի ցանկանալ փոխել իմ ապագայ կեանքի հետ:

—Այդ ձեր բարի յօժարութիւնիցն է կախված, ասաց դէրվիշը, եւ հաւաքելով իր գնդակները, վերկացաւ:

—Դուք գնո՞ւմ էք:

—Այո, դուք այնքան վաղ կանչեցիք ինձ, որ միջոց չունեցայ կատարելու իմ առաւօտեան աղօթքը:

—Աղօթեցէք եւ ինձ համար, հայրիկ:

—Ես միշտ իմ աղօթքների մէջ յիշում եմ ձեզ…

Խանի դահլիճից դուրս գալուց յետոյ, բակում դէրվիշին մօտեցաւ ներքինապետ Ահմէդը եւ հազիւ լսելի ձայնով ասաց.

—Ինձ սպասեցէք…

Դէրվիշը դանդաղ քայլերով գնաց իր ճգնարանը։

Քանի րոպէից յետոյ խանը, զինված, զրահաւորված, և շրջապատված թիկնապահներով, դուրս եկաւ դահլիճից։ Ընդարձակ բակը լիքն էր բազմութիւնով։ Բացի զինուորականներից, այնտեղ թափված էին զանազան սէիդներ, մոլլաներ, ախունդներ, աղքատներ, մուրացկաններ, որ իրանց օրհնութիւններով ճանապարհ դնեն պատերազմի իշխանին։ Երբ յայտնվեցաւ նա դահլիճի դռան սանդուղքների վրա, բազմութիւնը, կարծես, մի ձայնով գոռաց. «Աստուած, Աստուած յաջողութիւն շնորհեսցէ, ձեր սուրը կտրուկ անէ, իսկ թշնամու գլուխը ցած խոնարհեցրած»...

Խանը կանգնեց սանդուղքների բարձրութեան վրա։ Երկու մանկլաւիկները, երկու մատուցարաններ բռնած, կանգնել էին նրա մօտ։ Մատուցարանների վրա դիզած էին ոսկի և արծաթի դահեկաններ։ Նա սկսեց լի բռնով վեր առնել դահեկանները և ցրվել ամբոխի վրա։ Տիրեց ընդհանուր խառնակութիւն և իրարանցում։ Իւրաքանչիւրը աշխատում էր իր մասն ունենալ ոսկեղէն և արծաթեղէն կարկուտից, որ թափվում էր վերևից։ Երբ վերջացաւ, խանը ցած իջաւ սանդուղքներից։ Կրկին սկսվեցան օրհնութիւնները, կրկին հնչեցին մաղթանքները։

Խանը ցած իջաւ սանդուղքներից. բազմութիւ-

նը փողոցի նման բացվեցաւ և նրան ճանապարհ տուեց։ Օրհնութեան աղաղակները դեռ չէին լռել։ Ոսկին և արծաթը ոգևորել էր բոլորին։ Այդ միջոցին խանի ուշադրութիւնը իր վրա դարձրեց մի երիտասարդ մուրացկան, որ ամբոխի միջից դժուարութեամբ դուրս գալով, ասաց.

—Ինձ ոչինչ չը հասաւ։ Թող աղքատներին հովանաւորող Իմամ-Մուրթզայի աջը ձեզ օգնական և պահապան լինի, ողորմեցէք ինձ։

Այդ խօսքերը այնպիսի մի խղճալի ձայնով արտասանեց նա, և նրա ցնցոտիները, կերպարանքը այն աստիճան սրտաշարժ էին, որ խանը գթաց նրա վրա և մեկնեց իր ձեռքը։

—Իմ ձեռքերը չեն շարժվում, որ ընդունեմ ձեր առատ ողորմութիւնը, ասաց մուրացկանը։

—Խեղճ, երևի, գօսացել են, ասաց խանը, մի առանձին գթութեամբ նայելով նրա վրա։—Այդ երիտասարդ հասակում, որպէս կուչ է եկել, որպէս ծալվել է նա։

Խանը իր ձեռքով ձգեց նրա գրպանում մի ոսկի և անցաւ։ Ամբոխը հետևեց նրան և հաւաքվեցաւ ամարանոցի դռան հանդէպ։

Երիտասարդ մուրացկանը, մի կծկված գունդի նման, հազիւ-հազ շարժվելով, օրօրվելով քարշ եկաւ, նստեց բակի պատի մօտ, սկսեց իր գօսացած անդամները ջերմացնել նոր ծագած արեգակի ճառագայթներով։

—Ա՛խ, եթէ ինձ մի կտոր հաց տային, հառաչեց նա.—երկու օր է ոչինչ չեմ կերել։

Նրա դառն հառաչանքը լսեց ներքինապետ Ահմէդը, որ շտապով անցնում էր։

—Ես այս րոպէիս քեզ համար հաց կը բերեմ, ասաց նրան և հեռացաւ։

Խանը այդ միջոցին նստեց իր գեղեցիկ նժոյգի վրա, և շրջապատուած հարիւրաւոր ձիաւորներով, դիմեց դէպի կռիւի դաշտը։ Մահմեդական ամբոխի օրհնութիւնները դեռ երկար և երկար լսելի էին լինում, մինչև նա բաւական հեռացաւ և անտառի ծառերը ծածկեցին նրան բազմութեան տեսութիւնից։

Երիտասարդ մուրացկանը մեծ ախորժակով ըսպասում էր իրան խոստացված հացին։ Բայց ներքինապետը շատ չուշացաւ, շուտով բերեց նրան մի քանի կտոր փաթաթած լաւաշներ, և տալով նրան, ասաց.

—Պինդ բռնիր, լաւաշների մէջ պանիր եմ փաթաթել, չը վէր գցես...

—Աստուած օրհնէ քեզ, ասաց մուրացկանը և ընդունեց հացը։

Նրա ձեռքերը, որ քանի րոպէ առաջ գոսացած էին, չէին բացվում, որ ընդունեն խանի ընծայած ոսկին, այժմ խիստ ամուր կերպով բռնել էին լաւաշների փաթաթը, որ պանիրը միջից վայր չընկնի։ Նա պահպանելով իր մարմնի առաջվայ

դիրքը, նոյնպէս կռացած, նոյնպէս կուչ եկած, դուրս եկաւ ամարանոցից և իր դողդոջուն քայլերը ուղղեց դէպի անտառը։ Զարմանալին այն էր, որ որքան հեռանում էր նա մարդկային բնակութիւնից, որքան խոր մտնում էր անտառի մէջ, այնքան նրա կծկված, կուչ եկած մարմինը պարզվում էր և ուղիղ ձև էր ստանում։

Վերջը նա մտաւ մի խուլ ծմակի մէջ, ուր անտառապատ լեռները այնքան մօտենում էին միմեանց և այնքան վեր էին բարձրացած, որ երեւում էր երկնքի մի փոքրիկ, կապտագոյն կտորը միայն։ Այստեղ, այս խորին ձորակի մէջ արածում էին երկու թամքած ձիաներ. նրանց մօտ կանգնած էր մի տղամարդ։

—Վերջապէս եկար դու, Ջումշուդ, ասաց տղամարդը, երբ հեռուից տեսաւ նրան։—Ես կարծում էի, որ խանի մարդիկը քո բուրթը գցել են...

—Ջումշուդի մայրը այնպէս տղայ չէ ծնել, որ խանի մարդիկը կարողանային նրա մազին դիպչել... պատասխանեց կեղծ մուրացկանը և մօտեցաւ նրան։

—Օհօ, հաց էլ ես բերել, մեռած, դու ինչ էիր իմանում, որ ես քաղցած եմ, հարցրեց առաջինը։

—Լաւաշների մէջ պանիր էլ կայ, Աղասի, սպասիր, իսկոյն կը բաց անեմ։

Նա սկսեց բաց անել լաւաշների փաթաթը,

քայց փոխանակ պանիրի նրանց մէջ յայտնվեցաւ մի նամակ:

—Ղօչա՜ղ տղայ ես, ղօչաղ... գոչեց Աղասին ուրախութիւնից թռչկոտալով, երբ տեսաւ նամակը:—Այդ լաւաշները մենք կուտենք, իսկ նամակը կը հասցնենք իշխանին, որ նա էլ իր սիրտը հովացնէ...

Զաւմչուգը այդ միջոցին սկսեց մերկանալ իր մուրացկանի ցնցոտիները և հագնել իր հագուստը, որ ընկերի մօտ պահված էր: Նա կապեց նաև իր զէնքերը, և թռչելով ձիու վրա, ասաց Աղասուն.

—Մենք ուշանում ենք: Խանը վաղուց արդէն իր ձիաւորներով գնացել է:

Աղասին էլ հեծաւ իր ձին:

—Բա դու ինձ չես պատմելու, թէ ինչպէ՞ս գընացիր, ինչպէս եկար, ո՞վ տուեց քեզ այդ նամակը:

—Շատ մի խօսիր, ճանապարհին կը պատմեմ:

Երկու երիտասարդ ձիաւորները փութացին դէպի կուփ տեղը, որ շատ հեռու չէր Արծուանիկից:

ԼԳ.

Արեգակը այժմ թափում էր իր լոյսը և ջերմութիւնը լեռնային աշխարհում: Բնութիւնը ժըպտում էր գեղածիծաղ պայծառութեամբ: Գիշերային խաւարի մէջ մրափած անտառը, զարթնելով իր հսկայական քնից, այժմ օրօրվում էր, ծփում էր կանաչազարդ ծովի նման: Ծառերը, ծաղիկ-

ները, չարժվելով մեղմ զեփիւռի հրապուրանքից, կարծես, գրկվում էին, համբուրվում էին, աղջաւնում էին միմեանց առաւօտը:

Օրվայ այդ խորհրդաւոր ժամուն սքանչելի բընութեան հետ զարթնում է և մարդկային կեանքը: Հովիւը իր հօտերը քշում է դէպի լեռների զառիվերը. մշակը դաշտում կամ հերկում է, կամ հնձում է. ձորերի և ծմակների մէջ նախշուն թիթեռնիկների նման վժվժում են գիւղացի աղջիկները: Մարդը սկսում է գործել:

Իսկ այդ առաւօտ մարդկային կեանքը, կարծես, մեռել էր: Ոչ մի արարած չէր երևում Արծուանիկի շրջակայքում: Մինչև անգամ չինական խրճիթների ծուխը, կարծես թէ, մարել էր: Ի՞նչ էր պատճառը:—Փոքր ինչ հեռու այդ գիւղից մարդիկ կռւում էին. հզօրները արիւն էին թափում, իսկ տկարները երկիւղից փախել, թագնվել էին անտառների մթութեան մէջ, որ իրանց կեանքը և կայքը ազատ պահեն հզօրների բարբարոսութիւնից:

Մի մարդ միայն նստած էր իր ճգնարանի մուտքի հանդէպ, և տխուր խորհրդածութեան մէջ, ժայռերի բարձրութիւնից նայում էր դէպի շրջակայ ձորերը: Ահագին պեխի ծառի տերևախիտ ոստերը պահպանում էին ալևոր գլուխը արևի այրող ճառագայթներից: Երբեմն մի չոգք ժապաւէնի նման ճիւղերի միջից ցոլանում էր նրա

մոյգպղնձագոյն դէմքի վրա և աւելի որոշ կեր-
պով արտայայտում էր երեսի տխուր գծերը։

—«Սպասիր ինձ», ասաց նա, ես սպասում եմ, բայց ինչո՞ւ այդքան ուշացաւ...

Քառորդ ժամից յետոյ մի այլ ծերունի, ծառերից բռնելով, ժայռերի վրա մագլցելով, ցած էր իջնում դէպի ճգնարանը։ «Էլ ոչ աղօթք պէտք է և ոչ ծնրադրութիւն, ասում էր նա ինքն իրան, —այդ քարափներից ամեն օր իջնելը մի մեծ ապաշխարութիւն է...

Լսելով նրա ձայնը, պեխի ծառի ստուերի տակ նստած մարդը, որը ոչ այլ ոք էր, եթէ ոչ դէրվիշը, վերկացաւ, մօտեցաւ եկւորին, սկսեց օգնել նրան, որ ցած իջնի։ Եկւորը ներքինապետն էր։

—Դուք ինձ բաւական սպասել տուիք, Ահմէդ, ասաց նրան դէրվիշը։

—Եթէ դուք գիտենայիք պատճառները, չէիք մեղադրի ինձ, պատասխանեց ներքինապետը։

Երկուսն էլ մտան այրի մէջ. այնտեղ աւելի ապահով էր, ոչ ոք չէր տեսնի նրանց։

—Հիմա պատմեցէք, ինչ խօսեցիք խանի հետ, հարցրեց ներքինապետը, նստելով խոտեղէն օթոցի վրա, որով ծածկված էր այրի յատակը։

Դէրվիշը պատմեց, թէ ինչ նպատակով էր կանչել իրան խանը, ինչ գուշակութիւններ արեց ինքը պատերազմի վախճանի մասին, և ինչ խոր-

հուրդներ տուեց նրան, որոնք դժբախտաբար ընդունելութիւն չը գտան։

—Ես գուշակութիւններին շատ փոքր եմ հաւատում, ասաց ներքինապետը,—դուք ինձ այն ասեցէք, թէ ինչո՞վ կարողացաք հասկանալ, որ այսօր խանը յաղթող կը հանդիսանայ, իսկ մի քանի օրից յետոյ կրկին կռիւ կը լինի, որի մէջ նա կը յաղթվի։

—Այդ բոլորը հասկանալու համար, պատասխանեց դէրվիշը,—ոչ կախարդութիւն և ոչ էլ գերբնական գիտութիւններ պէտք են, այլ հարկաւոր է փոքր ինչ առողջ դատողութիւն ունենալ։ Եթէ դուք կարդացած լինէիք Մելիք-Ֆրանգիւլի խանին գրած նամակները, մի և նոյն նախագուշակութիւնները կանէիք։

—Մելիք-Ֆրանգիւլի նամակները... գոչեց ծերունին ապշափելով։—Ի՞նչպէս յաջողվեցաւ ձեզ կարդալ այդ չարագործի նամակները։

Դէրվիշը այնքան մտերիմ էր ներքինապետի հետ և այնքան յարգում էր նրա բարեկամութիւնը, որ ոչինչ չը ծածկեց նրանից և մանրամասնօրէն պատմեց, թէ ինչ հանգամանքներից օգուտ քաղելով, կարողացաւ կարդալ նամակները։ Յետոյ հաղորդեց նրան նամակների բովանդակութիւնը, որից պարզ երևում էր, թէ որպիսի խաբէութեամբ հայոց զօրքերին պէտք է որոգայթի մէջ ձգէին։

—Հիմա հասկանում եմ... ասաց ներքինապետը

հոգւոց հանելով.— դուք այդ նամակների բովանդակութիւնից կարող էիք նախագուշակել այսօրվայ կռւի աղէտալի վախճանը: Բայց ինչով էք իմանում, որ յետոյ մի ուրիշ կռիւ կը լինի, որի մէջ խանը կը յաղթվի:

—Այդ շատ հեշտ է իմանալ. այսօրվայ կռւի մէջ խանի զօրքերի յաջողութիւնը պէտք է վերաբերել Մէլիք-Ֆրանգիւլի դաւաճանութեանը: Իսկ յետոյ, շատ հաւանական է, որ բէկը աւելի լաւ պատրաստութեամբ զօրքեր կուղարկէ և նրանք կը ջարդեն մահմեդականներին:

—Այդ բոլորը շատ հաւանական է, ասաց ներքինապետը:—Բայց դեռ ուշ չէ, կարելի է այսօրվայ չարեաց առաջը առնել: Իսկ ես բոլորովին շուարած եմ, խելքս համարեա գլխումս չէ: Դուք իմաստուն մարդ էք, դերվիշ, մի խորհուրդ տուէցէք, արդեօք ինչով կարող ենք վտանգը հեռացնել:

—Դուք դեռ չեկած, ես դրա վրա էի մտածում, պատասխանեց դերվիշը:—Բայց միթէ դուք մինչև այսօր չէիք նկատում Մէլիք-Ֆրանգիւլի խարէութիւնները, ինչու չը փութացիք նախապէս զգուշացնել հայոց զօրապետներին:

—Ես նկատում էի, որ գաղտնի կերպով ինչ որ դաւաճանութիւն սարքվում է, թէև ինձ համար բոլորովին պարզ չէր նրա մանրամասնութիւնները, այսու ամենայնիւ, շտապեցի մի սուրհանդակ

ուղարկել Թորոս իշխանի մօտ և զգուշացնել նրան:

—Բայց Թորոսը կարող էր չը հաւատալ ձեր սուրհանդակին, որովհետև նա ձեզ չէ ճանաչում:

—Այդ ես մտածեցի, դրա համար էլ սուրհանդակը ուղարկվեցաւ «տիկնոջ» կողմից, ոչ թէ ուղղակի Թորոսի մօտ, այլ Ստեփաննոս իշխանի մօտ: Իշխանի յարաբերութիւնները «տիկնոջ» հետ ձեզ յայտնի են...

—Յա՜յտնի են... Յետո՞յ:

—Յետոյ սուրհանդակը կէս ճանապարհի վրա բռնվեցաւ, բերվեցաւ ամրոցը:

—Տէր ողորմեա: Յետո՞յ:

—Նա բերվեցաւ գիշերը: Բարեբախտաբար խանը ամրոցում չէր, որ իսկոյն հարցափորձ անէր նրանից, գնացել էր իր եղբայր Աղասի-խանի մօտ պատերազմի մասին կարգադրութիւններ անելու: Սուրհանդակին բանտարկեցին, պահեցին մինչև խանի վերադառնալը: Իմ անհանգստութեանը չափ չը կար: Մտածում էի, որ «տիկնոջ» ոչ միայն պատիւը, այլ և կեանքը վտանգի մէջ է: Ուրիշ ճար չը կար, ես ստիպվեցայ կատարել մի մեծ եղեռնագործութիւն...

—Եղեռնագործութիւն, հարցրեց դերվիշը զարհուրելով:

—Այո՛, եղեռնագործութիւն, պատասխանեց ծերունի ներքինապետը արտասուքը աչքերում:—

Մինչև խանի վերադառնալը իր եղբօր մօտից, մինչև սուրհանդակից հարց ու փորձ լինելը, ես նրան խեղդել տուի բանտի մէջ։ Իմ ամենահաւատարիմ, ամենասիրելի բարեկամն էր սուրհանդակը, բայց ես այդ եղեռնագործութիւնը կատարեցի, որ իմ թանգագին «տիկնոջ» կեանքը ազատեմ խանի բարկութիւնից։

—Այդպէս էլ պէտք էր, պատասխանեց դերվիշը, հանգստացնելով ծերունի ներքինապետին, որը այժմ աւելի սաստիկ կերպով սկսեց ողբալ իր բարեկամի կորուստը։—Դուք դրանով ոչ միայն ազատեցիք «տիկնոջ» կեանքը, այլ օգնեցիք ընդհանուր գործին։ Ընդհանուր գործին չը վնասելու համար մի բարեկամի կեանքը ոչինչ նշանակութիւն չունի, կարելի է զոհել։ Բայց ինձ այն ասեցէք, նամակներ չը գտան սուրհանդակի մօտ։

—«Տիկինը» նամակ չէր յանձնած. սուրհանդակը պէտք է բերանացի հաղորդէր բոլորը։ Եւ որպէս զի իշխանը նրա խօսքերին հաւատ ընծայէր, «տիկինը» որպէս նշան սուրհանդակի ձեռքով ուղարկել էր իր մատանին, մի և նոյն մատանին, որ իր օրիորդ ժամանակ ստացել էր իշխանից որպէս նրանց սիրոյ գրաւական։ Դուք գիտէք, որ «տիկինը» իշխանի հարսնացուն է եղել, բայց օրիորդի անգութ հայրը զրկել է նրան և իր աղջիկը տուել խանին։

—Այդ տխուր պատմութիւնը ես գիտեմ... պատասխանեց դերվիշը։—Դուք ինձ այն ասացէք, ինչ եղաւ մատանին։

—Սուրհանդակը մատանին մի այնպիսի տեղում պահած ունէր, որ կալանաւորելու ժամանակ չէին գտել։ Բայց որովհետև ինձ յայտնի էր պահած տեղը, խեղդողներին ասել էի, նրանք հանել էին և վերադարձրին ինձ։

—Երեսուն տարի կը լինի, առաջ տարաւ ներքինապետը,—որ ես ծառայում եմ խանի մօտ, բայց երբէք այս տեսակ հսկողութիւններ, այս տեսակ զգուշութիւններ չեմ տեսել նրա ամրոցի մէջ։ Անիրաւ Մէլիք-Ֆրանգիւլը նոր կարգեր է մտցրել. լրտեսները ամեն տեղ վխտում են, ամեն քայլ դիտում են, ոչինչ չես կարող անել։ Ես չեմ հասկանում, միթէ մարդ կարող է այս աստիճան դաւաճան լինել, այս աստիճան վնասակար լինել իր ազգին և հայրենիքին։ Եւ ինչ շահ ունի։

—Շահ ունի նա, պատասխանեց դերվիշը դառնութեամբ։—Խանը արդէն ստորագրել է իր հրովարտակը, որով ամբողջ Զանգուր վիճակի իշխանութիւնը որպէս վարձատրութիւն շնորհում է դաւաճանին։ Ձեզ յայտնի է, որ Զանգուրը Թորոս իշխանի հայրենական ժառանգութիւնն է։ Ուրեմն նրա ժառանգութիւնը գրաւելու համար դաւաճանը աշխատում է ոչնչացնել Թորոսին։ Եւ Զանգուրը, դուք գիտէք, որ արդէն Մէլիք-Ֆրանգիւլին

պատկանող Բարգիւշատի հետ սահմանակից է, այդ երկու վիճակները միացնելով, դաւաճանը տէր կը լինի մի ընդարձակ երկրի։ Ահա ձեզ գըլխաւոր նպատակը, որ գրգռում է նրան ամեն տեսակ անիրաւութիւններ գործել։ Եւ միշտ այդ է եղել Մէլիք-Ֆրանգիւլի ու Թորոս իշխանի տոհմերի մէջ կատարված դարևոր երկպառակութիւնների պատճառը։

—Ցաւալի է, չափ ցաւալի, ասաց Ներքինապետը, գլուխը շարժելով,—որ մարդիկ իրանց անձնական շահերի համար դաւաճանում են իրանց ազգին…

—Թողնենք այդ, ծերունու խօսքը ընդհատեց դէրվիշը։—Ես ժամանակ եմ կորցնում… ես պէտք է վաղուց գնացած լինէի… Բայց սպասեցի ձեզ, որովհետև դուք ամրոցի բակում ինձ յայտնեցիք, թէ կամենում էք ինձ հետ տեսնվել։ Եթէ մի այլ ասելիք չունէք, ինձ թոյլ տուեցէք, որ ճանապարհ ընկնեմ…

—Ունեմ, պատասխանեց ծերունին,—մի ասելիք էլ ունեմ և դա ամենակարևորն է…

Ներքինապետը պատմեց նրան, թէ «տիկինը» ինչ նամակ ստացաւ իշխան Շահումեանից կեղծ մուրացկանի ձեռքով, պատմեց այդ նամակի բովանդակութիւնը, պատմեց և այն, թէ «տիկինը» ինչ պատասխանեց նոյն մուրացկանի ձեռքով իշխանին։

Դէրվիշի մռայլված դէմքը փոքր ինչ պարզվեցաւ։ Նա հարցրեց.

—Այդ բոլորը գիտէիք դուք, բայց ինչու էիք ծածկում ինձանից։

—Այդ բոլորը կատարվեցաւ այն ժամանակ, երբ դուք դուրս եկաք խանի դահլիճից, պատասխանեց ծերունին։—Դրա համար էլ, երբ ես բակում հանդիպեցայ ձեզ, խնդրեցի, որ սպասէք ինձ, որպէս զի ես միջոց ունենամ հաղորդելու ձեզ այդ նորութիւնը։

—Շնորհակալ եմ, ասաց դէրվիշը կանգնելով։—Դուք այժմ կարող էք գնալ. թող ձեր իմ մօտ լինելը չը նկատեն։ Գնացէք, մխիթարեցէք «տիկնոջը», որ դեռ ևս ժամանակ կայ մի բան անելու, և ես դրա համար պատրաստվում եմ…

Ծերունի Ներքինապետը նոյնպէս կանգնեց։

—Ասացէք «տիկնոջը», որ նշանակեալ ժամումը իմ այրի մէջ գտնվի։ Ահա բանալին յանձնում եմ ձեզ։

Դէրվիշը տուեց իր աղքատիկ բնակարանի բանալին Ներքինապետին։ Յետոյ նա վեր առեց իր երկայն կոթաւոր տապարը, որ սովորաբար կրում են դէրվիշները, երբ հեռու տեղ են գնում, և դուրս եկաւ այրից։ Ներքինապետը կողպեց այրի դուռը, բանալին դրեց իր գրպանը, և ապա դառնալով դէրվիշին, հարցրեց.

—Հիմա դուք ո՞ւր էք գնում։

— Գնում եմ այնտեղ, ուր մարդիկ միմեանց կոտորում են…

ԼԳ.

Բարգուշատի վիճակի Եղվարդ գիւղը Արծուանիկից (այսինքն Ֆաթալի-խանի և Մելիք-Ֆրանգիւլի բնակութեան տեղից) մէկ ու կէս մղոն հազիւ հեռաւորութիւն ունէ: Եղվարդի մօտ գտնվում է մի նեղ դաշտ, որ մինչև այսօր կոչվում է Նարգիզլու-դամի: Այդ անունը նշանակում է Նարգիզների կամ շուշանների դաշտ: Եւ իրաւ, այդ ծաղկազարդ դաշտը արժանի է իր անունին: Շրջապատած անտառախիտ լեռներով և գեղեցիկ, կանաչազարդ բլուրներով, այդ դաշտը ներկայացնում է երկրի շքեղ բնութեան հիանալի տեսարաններից մէկը:

Պատմութիւնը լռում է այդ դաշտի մասին *):
Բայց ժողովրդական աւանդութիւնը շուշաններ և նարգէսներ բուսեցնող դաշտի մասին բոլորովին այլ կարծիք է յայտնում: Նա ասում է, այդ շուշանները, այդ նարգէսները բուսնել սկսան այն օրից, երբ հայոց քաջերի արեան կաթիլները թափվեցան այդ դաշտի վրա: Նա պատմում է այն սարսափելի կռիւի բոլոր մանրամասնութիւնները, որ տեղի ունեցաւ մէկ ու կէս դար առաջ:

*) Պատմութիւնից այնքանը միայն յայտնի է, որ կռիւը կատարվեցաւ Եղվարդ գիւղի մերձակայքում:

Լուսնկայ գիշեր էր: Նարգէսների դաշտում միայնակ թափառում էր բաց, թաւահեր գլխով, բոբիկ ոտներով, երկայն, սպիտակ կտաւեայ շապիկը հագած մարդը: Նա թափառում էր դիակների մէջ, որպէս Եղիշէն Աւարայրի դաշտում: Դէպի ամեն կողմ տիրում էր մահուան լռութիւնը: Հրացանների ձայնը, սուրերի շառաչիւնը, մարտիկների կատաղութիւնը բոլորովին դադարել էր: Լսելի էին լինում միայն դեռ չը հանգստացած վիրաւորների դառն հառաչանքները:

Նա անցնում էր, ինչպէս մի ուրուական, դանդաղ, չափաւոր քայլերով: Դիակների մէջ մէկին որոնում էր նա: Նրա աչքերը, որ սովոր չէին լաց լինելու, այժմ լցված էին արտասուքով,—դառնութեան և սրտմտութեան արտասուքով: Նա իր շուրջը սփռված էր տեսնում խարէութեան և ստոր դաւաճանութեան հազարաւոր զոհերը:— Դաւաճանութիւն մի հայի իր ազգակից եղբայրների դէմ: Այդ էր նրան բարկացնում:

Երկար թափառում էր նա: Երբ որ խնդրած դիակը գտնել չը կարողացաւ, իր քայլերը ուղղեց դէպի մերձակայ բլուրը, բարձրացաւ նրա գագաթի վրա, սկսեց նայել դէպի իր շուրջը: Լուսնի լուսով, այդ բարձրահասակ մարդը, իր երկայն, սպիտակ շապիկով, նկարված էր բլուրի գագաթի վրա, որպէս մի սպիտակ արձան: Նա ականջ էր դնում, հետազօտում էր բոլոր ձայնե-

րը, որ լսվում էին նրա շրջակայքում։ Յետոյ կամաց-կամաց ցած իջաւ բլուրից, բռնեց Արծուանիկի ճանապարհը, սկսեց առաջ ընթանալ։

Այժմ աւելի շտապով էր փոխում իր քայլերը. ստէպ նայում էր դէպի երկինքը, որպէս մի մարդ, որ ժամանակը չը կորցնելու համար շուտ-շուտ նայում էր ժամացոյցին։ Քանի րոպէից յետոյ նա անհետացաւ մթին ձորերի մէջ։

Շտապով գնում էր նա։ Այսպէս անցաւ մի քանի ձորեր, մի քանի բլուրներ։ Յանկարծ կանգ առեց։ Մի ձայն գրաւեց նրա ուշադրութիւնը.

—«Եթէ մինչև արևի ծագելը կարողանայի դուրս գալ այստեղից»...

Այս խօսքերը գրաւեցին նրան դէպի այն կողմը, որ կողմից լսվում էին։ Նա տեսաւ մի մարդ, երկու ձեռքով գլուխը բռնած, թուփերի միջով սողում էր։

—Ո՞վ ես, հարցրեց նրանից։

—Վիրաւոր եմ։

—Տեսնում եմ, որ վիրաւոր ես, բայց ես այդ չեմ հարցնում։

—Երբ վիրաւորին տեսնում են, էլ ուրիշ բան չեն հարցնում, շտապում են օգնել։

Նրա պարանոցը ետևի կողմից կիսով չափ կտրված էր. արիւնը դեռ հոսում էր. երիտասարդը երկու ձեռքով պինդ բռնել էր գլուխը, որ ցած չընկնի։ Անծանօթը խուրջին դուրս բերեց իր

մախաղի միջից մի քանի կտաւիք և փաթաթեց վէրքը։ Արիւնը դադարեց։

—Այդ դրութեան մէջ դու ինչպէս հասար մինչև այստեղ, հարցրեց անծանօթը։—Գիտես որքան ճանապարհ ես անցել։

—Գիտեմ, աւելի քան մէկ մղոն։ Այդ դրութեան մէջ էլ առաջ կը գնայի, մինչև շունչս կտրվէր...

—Հիմա դու ինձ կասես, թէ ով ես։

—Ես Մէլիք-Փարսադանեան Բալի զօրապետն եմ։—*)

—Լսել եմ քո անունը։—Քեզ այստեղ թողնել չէ կարելի, ում կը ցանկանայիք, որ տանէին ձեզ։

—Հալիձոր գիւղը, իմ հօր տունը։

Անծանօթը մտածութեան մէջ ընկաւ. ինքը տանել, հասցնել վիրաւորին իր հօր տունը չէր կարող, որովհետև այն ժամում նա ուրիշ աւելի կարևոր, աւելի անհրաժեշտ հոգսեր ունէր, իսկ այնպէս անխնամ թողնել նրան, նոյնպէս չէր

*) Էր ընդ կատարելումն՝ նաև Բալի զօրավարն, որդի Մէլիք-Փարսադանին, որոյ պարանոցն կիսով չափ հատեալ ընկեցեալ էին ի բացի մերձ ի խոտամանն։ Ըստի յետ սակաւուց իբրև ուշաբերեալ լինէր, կալեալ ձեռօք զգլուխն ի վերայ իւր երթայր մտանէր ի մացառս վայրացն մինչև ցմութ գիշերոյն, և ի գիշերի յուղի անկեալ գայր, և յետ երից աւուրց ի Հալիձոր հասանէր։

Պատմ. Դաւիթ-բէկին եր. 41.

կարևլի: Վիրաւորը, կարծես, նկատեց անծանօթի մտատանջութիւնը և ասաց նրան.

Այդ անտառների, այդ մացառների մէջ անկարելի է, որ մեր զինուորներից չը գտնվեն. աղէտալի կռւից յետոյ մնացածները ցրւեցան այդ լեռների ծմակներում: Իմ մօտ այնքան ձայնի ուժ չէ մնացել, որ կարողանամ կանչել նրանց: Դուք միայն ձայն տուեցէք «բէկ», նրանք որտեղ որ են, կը յայտնվեն. այս մեր այս գիշերվայ նշանաբանն է:

Անծանօթը թողեց վիրաւորին, բարձրացաւ մի ժայռի վրա, և մի քանի անգամ իր սուր, ձգական ձայնով կրկնեց նշանաբանը: Ծառերի միջից յայտնվեցան երկու հոգի:

—Տարէք ձեր զօրապետին, որտեղ ինքը գտնվում է, ասաց նրանց, ցոյց տալով վիրաւորին:

Նրանք մօտեցան և գրկեցին զօրապետին:

—Ես չի պիտի գիտենամ, թէ դուք ով էք, —հարցրեց վիրաւորը,—որ ձեր երախտիքը անմոռաց պահեմ իմ սրտում:

—Ես անուն չունեմ, պատասխանեց անծանօթը.

—ինձ կոչում են իմ կարգի անունով. ես մի դէրվիշ եմ:

Դէրվիշը հեռացաւ և չարունակեց գնալ Արծուանիկի ճանապարհով:

Կռիւը սկսվեցաւ վաղ առաւօտեան, Եզդաարդ

գիւղի մօտ, Նարգէմների դաշտում: Մէլիք-Ֆրանգիւլի գլխաւոր դաւաճանութիւնը նրանումն էր, որ նա թշնամու ուժերը անհամեմատ շատ փոքր էր ցոյց տւել Թորոս իշխանին: Մինչև անգամ թաքցրել էր, որ Աղասի-խանը (Ֆաթալի-խանի կրտսեր եղբայրը) իր առանձին զօրախմբով պիտի օգնէ եղբօրը: Այսու ամենայնիւ, հայոց զօրքերը աներևակայելի հերոսութեամբ կռւում էին, թէև թւով տասնապատիկ փոքր էին քան թշնամու զօրութիւնը:

Դէրվիշը, գտնելով պատերազմի դաշտը, խիստ վաղ յայտնեց Թորոսին Մէլիք-Ֆրանգիւլի խաբեութեան մասին, բայց իշխանը չը հաւատաց նրա խօսքերին և պատասխանեց.

—Եթէ նա կը դաւաճանէ ինձ, ես դարձեալ մի մեծ կորուստ չեմ ունենայ. շատ-շատ այդքան միայն կարող է անել, որ իր երկու հազարով կանցնէ թշնամու կողմը:

Թորոս իշխանը իր զէնքի յաջողութեան արբեցութեան մէջն էր գտնվում: Ոչինչ չէր վհատեցնում նրան, ոչինչից երկիւղ չունէր, երբ նկատում էր, որ մահմեդականների բազմութիւնը, հունձքի որաների նման, հազարներով տապալվում էին հայոց սրերի և գնդակների առջև:

Աղասի-խանը, վէրք ստանալով, սպանվեցաւ: Նրա զօրախումբը, որ բաղկացած էր աւելի քան

ութ հազար հոգուց, *) մեծ մասամբ ջարդվեցաւ: Ոչ սակաւ ջարդվեցան և Ֆաթալի-խանի զօրքերը. Նրանք սկսեցին հետզհետէ տեղի տալ կռւի դաշտից:

Իր երկու հազարով կռւում էր մահմեդականների հետ և Մելիք-Ֆրանգիւլը: Նա բռնել էր մի առանձին ամուր դիրք, որտեղից յարձակումներ էր գործում: Նա բաւական հեռու էր հայոց զօրաբաժիններից, այդ պատճառով ոչ ոք չէր նկատում, որ նրա զինուորները առանց գնդակների, դատարկ հրացաններ էին արձակում թշնամու վրա:

Երեկոյեան պահուն, երբ արեգակը մայր մտնելու մօտ էր, պարսիկները բոլորովին կոտրված, սկսեցին փախչել: Հայոց զօրքերը հետամուտ եղան և, հալածում էին նրանց: Այդ առիթ տուեց ուշադրութիւն չը դարձնել այն յարմար դիրքերի վրա, որ սկզբից բռնել էին հայերը: Նրանք բարձրութիւններից իջան նեղ դաշտի մէջ, որ երկու կողմից սեղմված էր լեռներով: Այդ միջոցին դաւաճանը կատարեց իր չար դիտաւորութիւնը:

Երբ պարսիկները փախչում էին և հայերը հա-

*) Պատմութիւնը այդ ճակատամարտի մէջ թըշնամու զօրութիւնը 80—հազար հոգուց բաղկացած է ցոյց տալիս. չափազանցութիւն կայ թւի մէջ:

լածում էին նրանց, ետևից վրա հասաւ Մելիք-Ֆրանգիւլը և սկսեց հայերին ջարդել: Նոյն ժամանակ յետ դարձան և փախչող պարսիկները, երկու կողմից հայերին մէջտեղ առեցին, սկսվեցաւ սարսափելի կոտորածը: Տեղի դիրքը նպաստեց նրանց, որովհետև դա մի նեղ դաշտ էր, ինչպէս ասեցինք, երկու կողմից սեղմված լեռներով, իսկ առջևից և ետևից բռնված էր թշնամու զօրքերով: Հայերը միայն երկու կրակների մէջ տեղում: Մի կողմից պարսիկները, իսկ միւս կողմից՝ Մելիք-Ֆրանգիւլը իր նման հայերով...

Կոտորածը դեռ շարունակվում էր, մինչև գիշերային խաւարը բոլորովին պատեց կռւի դաշտը:

Ինքը Ֆաթալի-խանը վէրք ստացաւ. Նրա եղբայր Աղասի-խանը սպանվեցաւ: Սպանվեցաւ և հայոց զօրքերի գլխաւոր հրամանատարը՝ Թորոս իշխանը: Այդ հզօր առիւծի ամբողջ մարմինը պատած էր վէրքերով, բայց դեռ կռւում էր: Նա ընկաւ քաջի և հերոսի մահով:

Հայոց միւս զօրապետներից Մելիք-Փարսադանեան Բալլին վէրք ստացաւ պարանոցի վրա. (դրան տեսանք մենք:) Իշխան Ստեփաննոս Շահումեանը գերի բռնվեցաւ: Նրա ձին գնդակահար լինելով, ցած ընկաւ և տակով արեց իշխանին. այդ միջոցին պարսիկները վրա հասան և գերեցին նրան: Զօրապետներից ազատվեցաւ Մելիք-Նուբարը, որը միայն հազար և չորս հարիւր հայ

գիտուրների հետ ողջ մնաց սարսափելի կոտորածից... *)

*) «Բայց Մելիք-Յրանդուլն Երկցվանիկ (Արծուածիկ) աւանին, որ և ասի Կարմիր-վանք ի կողմանս Բարգիւշատայ, գնաց առ Թորոսն այսպէս... (Նամակի օրինակը մենք թողեցինք:) Այլ զայս ամենայն անօրէն մօրք, նենգաւոր խորհրդով գրէր, զի ի ծուղակս թշնամւոյն գնա անկանիցի, առ ի հաւատարիմ ցուցանել զինքն Սուլթանին (Յաթալի-խանին:) Եւ ոչինչ փոյթ եղև նմա լինելն անհաւատարիմ, նենգաւոր, թշնամի Աստուծոյ իւրոյ, և ժողովրդեանն մատնիչ և սատանիչ...

«Եւ հաւատայ Թորոս բանից նորա, և եկ գընաց միամտութեամբ և եհաս ի յԾղեխարդ, որ է ի սահմանս Բարգիւշատայ ինքն և ամենայն զօրք իւր, և բանակեցաւ անդ: Եւ եկն առ նա Յրանդուլն երկու հազարաւ, և եկաց ի մի կողմն Թորոսին:

«Եհաս անդր և Բաթալի Սուլթանն (Յաթալի-խանը) և եղբայր նորին Աղասի խանն բազում զօրօք, քան որչափ էր ընդ Թորոսին, կրկնապատիկ, և եռապատիկ, և առաւել ևս իբրու ութսուն հազարաւ: Եւ իբրև ճակատեցան ընդդէմ իրերաց զօրքն Սուլթանին և զօրքն Թորոսին, զօրքն Սուլթանին փախստեայ լինէին, և սոքա զհետ լինէին նոցա:

«Եւ մինչդեռ վանեալս առաջի տանէին զնոսա, անօրէն Յրանդուլն զարս արձակէր զկնի Սուլթանին. և ասէ, զինչ գործէք, զմարդ փախչիք, դարձարո՛ք ի կրունկս, զի ահա ես ընդ ձեզ եմ, դուք ի յառաջոյ, և ես զկնի նոցա, խորտակեսցուք զնոսա: Եւ արարին այնպէս, և պաշա-

ԼԵ.

Յաթալի-խանը նոյնպէս վիրաւորված էր: Մելիք-Յրանդուլը կռուի դաշտից նրան համարեա ձեռքի վրա տարաւ մինչև իր ամարանոցը: Երբ վիրաւորյալները հաւաքվեցան, քննեցին վէրքը և յայտնեցին, որ վտանգաւոր չէ, այն ժամանակ միայն Մելիք-Յրանդուլը հանգստացաւ, և արտասուքը սրբելով, Աստծուն փառք տալով, հեռացաւ հիւանդի մահճի մօտից։

Երկու օր էր, որ նա իր տանը չէր եղել. շտապում էր տուն գնալ, որ իր բարեկամների հետ տօնէ իր այն օրվայ անսպառ յաղթութիւնը: Նրա սև ջորին, երկու չաթիրները, դպիր Համբարձումը, խանի ամարանոցի դռանը կանգնած, սպասում էին նրան: Նա դուրս եկաւ, նստեց ջորու վրա և գնաց իր ամրոցը, որ շատ հեռու չէր:

Գիշերից բաւական անցել էր: Լուսինը երբեմն մտնում էր ամպերի կտորտանքի տակ և ուէլի

րեցին զզօրսն Թորոսին ի յառաջոյ, և զկնի, և սկսան կոտորել, և զԹորոս սպանին, և միայն հազար չորեքհարիւր-արք զերծեալ ի նոցանէ անկան ի Ջանդուր, և մնացեալքն ամենեքեան անկան անդ:

«Ահա զայսպիսի մեծ անօրէնութիւն գործեաց Յրանդուլն, և ոչ այսչափ միայն, այլ և առաւել հաճոյանալոյ վասն Սուլթանին, և ցուցանելոյ հաւատարիմ զինքն, ուրացաւ նաև զհաւատսն:»

Պատմ. Դաւիթ-բէկի եր. 22, 23, 24,

թանձրացնում էր գիշերային խաւարը, իսկ երբեմն դուրս էր գալիս և իր գունատ լոյսը թափում էր լեռների, բլուրների մթին կատարների վրա: Ջրերը մնում էին խաւարի մէջ. նրանց մէջ արևի լոյսն անգամ չէ թափանցում:

Մէլիք-Ֆրանգիւլը բախտաւոր, և իր ըղձալի նպատակին հասած մարդու անսահման բերկրութեամբ, քշում էր իր ջորին: Նրա առջևից և ետևից գնում էին երկու անբաժան չաքրները, իսկ կողքից գնում էր գզիր Համբարձումը: Ճանապարհը դարիված էր և սաստիկ քարքարոտ: Ջորին որքան և սովոր էր լեռնային երկրի խոչընդոտներին, դարձեալ դժուարութեամբ էր կարողանում ոտք փոխել: Երբեմն իր երկար, կախ ընկած ականջները ցցում էր նա, և խրտնելով յետ-յետ էր քաշվում: Ի՞նչեր էին երևում նրա աչքերին, յայտնի չէր: Եթէ նա Բաղամի էշի նման մարդկային լեզուով խօսէր, գուցէ մի բան կասէր: Բայց գզիրը նրա խրտնելու պատճառը բացատրեց նրանով, որ ճանապարհի աջ և ձախ կողմերում բարձրացած ծառերի, թփերի և մացառների միջից երբեմն երկչոտ նապաստակն էր վազում, երբեմն կաքաւն թռչունն էր թռչում, և վախեցնում էին յիմար անասունին:

—Այդպէս է, ասաց մէլիքը,—իմ ականջներին էլ, կարծես թէ, մի քանի անգամ խշխշոցի ձայներ դիպան այդ ծառերի միջից:

Թէ այսպէս, թէ այնպէս, ընթացքը բաւական դանդաղ էր առաջ գնում, և այդ առիթ էր տալիս մէլիքին խօսել իր գզիրի հետ:

Երբ մարդիկ սաստիկ ուրախ են և լաւ տրամադրված, խօսակիցների մէջ խտրութիւն չեն դնում: Մինչև անգամ ամենամեծ մարդիկը պատրաստ են, եթէ իրանց հաւասարը չը գտնին, ամենաստոր ստորադասների հետ մասլահաթներ անել: Բայց գզիրը մէլիքի մտերիմներից մէկն էր: Խօսում էին այն օրվայ կռիւի մասին: Մէլիքը հարցրեց.

—Ես մինչև այժմ չեմ կարողանում հասկանալ, թէ ինչ եղաւ Թարօսի գլուխը. որքան պտռել տուի, գտնել չը կարողացայ: Ես նրա մարմինը պիտի կտոր-կտոր անել տայի:

—Հէնց այդպէս էլ եղած էր, մէլիք, միամիտ կացէք, պատասխանեց գզիրը դիւական հրճուանքով:—Ես իմ աչքերով տեսայ, ամբողջ մարմինը պատած էր վէրքերով: Այդ մարդը, ճշմարիտ ասած, երկաթի մարմին ունի. այնքան վէրքեր ստանալուց յետոյ, դարձեալ քաջութեամբ կռւում էր: Եթէ գլուխը գտնելով չը զարկէին, գուցէ չէր սպանվի:

—Բայց մարմինը, մարմինը ինչ եղաւ, դարձեալ հարցրեց մէլիքը:

—Երբ ընկաւ, թիկնապահները իսկոյն վեր առին, պատասխանեց գզիրը:

— Ո՞ւր տարան:

— Այն խառնակութեան մէջ ով կարող էր գիտենալ, թէ ուր տարան:

Մելիքը շատ տխրեց, որ նրան չը յաջողվեցաւ իր բարբարոսութիւնը գործ դնել թշնամու անշունչ դիակի վրա:

— Իսկ Ստեփաննոս Շահումեանը, տեսաք, ինչպէս սատանայի նման անհետացաւ... ասաց մելիքը, ափսոսելով այդ մեծ կորուստի համար:

— Այո, սատանայի նման անհետացաւ... կրկնեց գզիրը ոչ սակաւ ափսոսանքով:

Ջորին դարձեալ ընդհատեց նրանց խօսակցութիւնը: Գիշերային ճանապարհորդութեան ժամանակ անասունները աւելի զգոյշ են լինում քան թէ մարդիկ: Այս անգամ աւելի սաստիկ կերպով խրտչելով, նա յետ-յետ քաշվեցաւ և փոքր էր մնում մելիքին խփել քարերի վրա:

— Ի՞նչ է պատահել այդ անասունի հետ, հարցրեց մելիքը, նրա սանձը քաշելով.

— Ծառերի միջից շշնջիւն լսեցի, ասաց չաթրներից մէկը:

Այդ միջոցին կայծակը իր անսահմանելի անախորժ ձայնով գոգռաց, տերևները միմեանց զարկվեցան, իբր թէ անտառների այդ անքուն հսկողը, մի ծառից թռչում էր միւսի վրա:

— Ցնդում էք, կայծակն է, ասաց գզիրը և շարունակեց իր ընդհատված խօսքը.

— Դուք զբաղված էիք կռւի մէջ, չէիք նկատում, մելիք, Թորոսի ընկնելուց յետոյ, մինչև երեկոյեան մութը պատելը, Ստեփաննոս Շահումեանը իր մարդիկներով պաշարվում էր: Ես տեսայ՝ պատերազմի ամենաջերմ ժամանակը, նրա ձին հրացանի գնդակից վէրք ստացաւ, ցած գլորվեցաւ և իշխանին տակով արեց: Այդ միջոցին մերոնք վրա հասան և գերեցին նրան: Նրա երկու թիկնապահները՝ Ջումշուդը և Աղասին երկար կռւում էին, որ ազատեն իրանց իշխանին, բայց չը կարողացան:

— Այդ բոլորը ես իմանում եմ, ասաց մելիքը, — նրան հայոց միւս գերիների հետ բերեցին մինչև խանի առաջը, այնտեղ կալանաւորեցին, բայց նրանից յետոյ ուր կորաւ:

— Ո՞ւր պիտի կորչէր, շատ հաւանական է, կամ ինքը հնար գտաւ փախչելու, կամ ուրիշները փախցրին նրան:

— Վերջին կարծիքը աւելի հաւանական է... և ես մէկի վրա կասկած ունեմ... անպատճառ նրա գործն է... նա կաշառած կը լինի պահապաններին և փախցրած... թէպէտ պահապանը մի սև փողի համար հոգի կը տայ... իսկ ամբոխի մէջ բոլորը զբաղված էին խանի վէրքով... այդ խառնակութեան մէջ, եթէ գերիների կէսն էլ փախցնելու լինեին, ոչ ոք չի նկատի: *) Թող, Աստուած

*) Ես զամենայն ի նոցանէ (ի հայ գերեաց) կեն-

տայ, խանը առողջանայ, այն ժամանակ ես ան-
պատճառ պատժել կը տամ այն անզգամին, որ
մի այսպիսի պատուական որսը մեր ձեռքից դուրս
հանեց...

Մէլիքի կասկածը, իշխանին փախցնելու վերա-
բերութեամբ, տիկին Մխիթարի և Ներքինապէտ Ահ-
մէզի մասին էր, որոնց գաղտնի յարաբերութիւն-
ները իշխանի հետ նրան վաղուց արդէն յայտնի
էին:

Մէլիքը և իր ուղեկիցները բաւական հեռացել
էին խանի ամարանոցից և մօտեցել էին Արծուա-
նիկ աւանին: Նա դեռ մտածում էր «պատուա-
կան որսի» վրա, որից զրկվեց. իրաւ որ, նրա
վրէժխնդիր, չարութիւնից անյագ սրտի համար մեծ
կորուստ էր: Այդ միջոցին նրա ուշադրութիւնը
գրաւեց մի երկայն, սպիտակ ստուեր, որ հեռուից
ուրուականի նման յանկարծ աչքի ընկաւ և կրկին
անյայտացաւ խաւարի մէջ:

դանի կալեալ, մեծաւ տանջանօք ի Բարգիւշատ
ածին, ընդ որս էր և Մխիթարնոս Շահումեան: Եւ
սուգ եղեւ Դաւիթ (բէկ) ի վերայ քաջին Մխիթարն-
նոսի, և այնքան զօրացն ի զուր տարապարտուց
կորուսելոյ: Իսկ Մխիթարնոս իբրև ածեալ եղև ի
Բարգիւշատ, հանդիպեցաւ անդ ի տան խանին
բարեկէր ումն թուրք, որ գթացեալ ի նա փախոյց.
և իբրև ազդ եղև Դաւթի զերծումն նորին, մխի-
թարեցաւ ի սգոյն:

Պատմ. Դաւիթ-բէկի. եր. 40—41:

Զօրեն դարձեալ ցցեց իր ականջները, և սար-
սափելով դէպի այն կողմը նայեց: Բայց մէլիքը
այդ երևոյթը վերաբերեց իր փոքր ինչ գրգռված
երևակայութեանը և կրկին սկսեց խօսել «պա-
տուական որսի» վրա:

—Այս անգամ ազատվեցաւ նա... եթէ մի ան-
գամ էլ իմ ձեռքը ընկնելու լինի, ես գիտեմ, թէ
ինչ կանեմ...

—Ահա ես...

Լսելի եղաւ մի ձայն, և մի մարդ թուփերի
միջից կայծակի նման դուրս ցատկելով, արձա-
նացաւ մէլիքի առջև: Այդ ձայնի հետ ճայթեց
մի ատրճանակ և գնդակը ուղիղ անցաւ դաւա-
ճանի կուրծքի մէջ: Նա մի կողմ թեքվեցաւ և
գլուխը քարշ ընկաւ սև ջորու կողքից, որովհետև
ոտները ասպանդակներից իսկոյն չը դուրս եկան:
Զօրեն այժմ աւելի սաստիկ պատճառ ունէր խրտ-
չելու, սկսեց վազ տալ և իր մէջքից քարշ ընկած
տիրոջ գլուխը զարկել քարերին...

Մէլիքի երկու անբաժան չաթրները ենթարկ-
վեցան նրա վիճակին. երկու ուրիշ տղամարդիկ,
նոյն թուփերի միջից դուրս գալով, սրերի հա-
րուածների տակ նրանց ցած գլորեցին: Իսկ գզի-
րին բռնեցին:

—Սպասեցէք, դրան դեռ թողեցէք, հրամայեց
առաջինը, և մօտենալով գզիրին հարցրեց.

—Ճանաչո՞ւմ ես ինձ:

—Ճանաչում եմ. դուք Գենուայի իշխան Ստեփաննոս Շահումեանն էք, պատասխանեց նա լըրբաբար:—Հենց այս րոպէիս մէլիքի հետ ձեզ վրա էինք խօսում...

—Գո՛ւ էիր, որ խաչն ու աւետարանը բերեցիր մեր բանակը մեզ խաբելու համար:

—Այո՛, ես էի, և դուք այնքան միամիտ գտնուեցաք, որ խաբուեցաք:

—Այժմ ինչով վարձատրեմ քո այդ ծառայութիւնը:

—Այդ սրով:

Նա ձեռքը մեկնեց դէպի իշխանի սուրը:

—Ոչ, անզգամ, ես իմ սուրը չեմ պղծի քո արիւնով:

Նա դարձաւ դէպի իր երկու թիկնապահները՝ Ջումշուդին և Ազատին, հրամայեց նրանց.

—Դրան պառկեցրէք և գլուխը ջախջախեցէք քարով:

Ջումշուդը պառկեցրեց նրան, գլուխը դրեց մի տափակ քարի վրա, իսկ Ազատին մի ահագին քար բարձրացնելով ասաց.

—Այդ սատանայական գլուխը, որ այնքան միջոցներ է հնարել մէլիքի չարագործութիւնների համար, արժանի է այդ վարձատրութեանը:

—Նա արդէն վարձատրված է... պատասխանեց լիրբը տակից.—այսօր մի քանի հազար հայոց կտրած գլուխների արժէք ունեցաւ...

—Անզգամ... գոչեց Ազատին և իր բոլոր ուժով ցած թողեց քարը:

Անզգամի գլուխը տափակ գաթայի ձև ստացաւ:

Այնտեղ, ուր կատարվեցաւ այդ փոքրիկ դրամանն, գտնվում էր մի խրամատ, որ առաջացել էր հեղեղներից: Դիակները ձգեցին այդ խրամատի մէջ: Իսկ ձին, Աբիսողոմի ձիու նման, վազ տալով, մտել էր ծառերի մէջ, և այնտեղ փշոտ թուփերի հետ փաթաթվելով, կանգնել էր: Զանազանութիւնը նրա մէջն էր միայն, որ Աբիսողոմի երկայն մազերը փաթաթվել էին ծառերի ճիւղերին, իսկ մէլիքի հագուստի երկայն փէշերը, այն հագուստի, որ մի ժամանակ նա ստացել էր խանից որպէս խ ա լ ա թ: Նրա դիակը նոյնպէս ձգեցին խրամատի մէջ, իսկ ձիուն բաց թողեցին: Նա ուղիղ գնաց դէպի տիրոջ ամրոցը նրա բօթը տանելու համար: Ամրոցը շատ հեռու չէր այդ տեղից:

Իշխան Շահումեանը, իրաւ որ, կռուի դաշտում գերի բռնվեցաւ և բազմաթիւ հայ գերիների հետ բերվեցաւ խանի ամրոցը: Ջումշուդը և Ազատին մինչև այնտեղ հասցնելը հսկում էին նրան, որ ճանապարհին մի կերպով ազատեն, բայց հնար չեղաւ: Նրանք դարձեալ չը հեռացան ամրոցից, ուր կալանաւորված էր իրանց տէրը, և գիշերային մթութեան մէջ անհամբեր կերպով դեգերում էին նրա մերձակայքում:

Բայց ամրոցի մէջ բոլորի հայեացքը դարձրած էին դէպի վիրաւորված խանը, մանաւանդ երբ իմացվեցաւ նրա եղբօր՝ Աղասի-խանի կռւի մէջ սպանվիլը, ամբողջ ամրոցը սուգի մէջ ընկաւ: Այդ էր պատճառը, որ գերիների վրա շատ ուշադրութիւն չէին դարձնում. նրանց անասուննե-րի նման լցրել էին ախոռատան բակում, թոկե-րով կապկապել էին և դռների մօտ պահապան-ներ էին դրել:

Գերիներին յայտնի էին նոյն օրվայ կռւի բո-լոր հետևանքները, նրան յայտնի էր և իշխանի վիրաւորութիւնը: Գիշերով վերադառնալով կռւի դաշ-տից, նա առանց ժամանակ կորցնելու, վիրաւոր-ված խանին իր ցաւակցութիւնը յայտնելու պատ-րուակով, մտաւ նրա ամրոցը: Խանին նա տես-նել չը կարողացաւ և տեսնել շատ ցանկութիւն էլ չունէր: Այնտեղ գտաւ ներքինապետ Ահմէ-դին և հաղորդեց նրան իշխանի հետ պատահած դժբախտութիւնը:

Ներքինապետը այս գիշեր հարկաւոր աչքեր էր ստացել և արգոսի նման ամեն բանի վրա հսկում էր: Նա իսկոյն շտապեց գերիների մօտ, իբր թէ նրանց համբարելու համար է գնում, որ պահապանները զեղծումներ գործ չը դնեն: «Խա-նը այսպէս վիրաւորված, ընկած է, ամեն բան մնացել է անգլուխ, ասում էր նա, պէտք է զգոյշ լինել, որ անկարգութիւններ չը պատահեն»...

Պատերազմի խռովութեան պատճառով իշխանը մնացել էր առանց ճանաչվելու. Նրան խառնել էին հասարակ գերիների հետ: Երբ ներքինապետը, բո-լորին աչքից անցկացնելով, հասաւ նրան, դար-ձաւ դէպի պահապաններից մէկը, և ծիծաղելով ասաց.

—Դրան ինչու էք բերել այստեղ:

—Դա էլ հայ է, պատասխանեց պահապանը:

—Դու կարծում ես ամեն հայ մեր թշնամի է:

—Ապա ինչ է:

—Յիմար, դա Սևաքարի գիւղացիներիցն է, ես ճանաչում եմ, Մելիք-Ֆրանգիւլի խումբիցն է, որ այսօր օգնում էին մեզ, որ մերոնցից աւելի լաւ էին կռւում Թարասի զօրքերի հետ:

—Ես այդ չէի իմանում:

—Դու չէիր իմանում, որ Մելիք-Ֆրանգիւլի ամ-բողջ խումբը բաղկացած էր հայերից, բայց մեր բարեկամ հայերից:

—Այդ ես իմանում էի:

—Էլ ինչ ես գլխիդ զօռ տալիս:

Ներքինապետը հրամայեց իսկոյն արձակել «սև-աքարցի գիւղացուն»: Նրա հրամանը անմիջապէս կատարվեցաւ: Ներքինապետը մահմեդական ամրո-ցում այն անձնաւորութիւններից մէկն է, որի խօսքը դողութեամբ են լսում:

Ազատվելով իր կապանքներից, իշխանը ներքի-նապետից տեղեկացաւ, որ Մելիք-Ֆրանգիւլը խա-

նի մօտն է, տեղեկացաւ և այն, որ գիշերը ամրոցում չէ մնալու, այլ գնալու է իր տունը: Այդ տեղեկութիւնները բաւական էին նրան իսկոյն կազմելու իր ձեռնարկութեան ծրագիրը: Նա մտածեց օգուտ քաղել հանգամանքներից և նոյն գիշերվայ մէջ պատժել, անպատճառ պատժել այն դաւաճանին, որ այդքան թշուառութիւնների պատճառ դարձաւ:

Նրա երկու մտերիմները, Զաւշուղը և Աղասին, ինչպէս վերևում տեսանք, խանի ամրոցի մերձակայքում գերւում էին: Ներքինապետին յայտնի էր նրանց ինչ տեղում թաքնված լինելը:

—Այդ ծառերի մէջ, ասաց նա իշխանին,—կը գտնէք ձեր թիկնապահներին:

—Շնորհակալ եմ, Ահմէդ, պատասխանեց իշխանը, երախտագիտաբար բռնելով ներքինապետի ձեռքը:—Ես չեմ ցանկանում երկար խօսքերով արտայայտել ձեզ իմ սրտի զգացմունքը: Դուք կատարեցիք և կատարում էք այն, ինչ որ ամեն մի հայի պարտքն է իր հայրենիքի փրկութեան գործի համար անելու: Դա սուրբ է և ամենայն համակրութեան արժանի: Դուք ազատեցիք իմ կեանքը, որ մեր հայրենիքին է պատկանում. հիմա գնացէք, աշխատեցէք ազատել «մի ուրիշ կեանք», որ միայն ինձ է պատկանում...

—Ես այդ մասին ամեն ինչ կարգադրել եմ... պատասխանեց ներքինապետը:

—Շատ շնորհակալ եմ, ասաց իշխանը:—Ո՞րտեղ կը տեսնենք:

—«Կարմիր վանքի» աւերակների մէջ...

Նրանք բաժանվեցան: Ներքինապետը սկսեց դիմել դէպի խանի ամրոցը, իսկ իշխանը գնաց դէպի այն կողմը, որ ցոյց տուեց ներքինապետը, և որտեղ նա յոյս ունէր գտնել Զաւշուղին և Աղասին:

Գտնելով նրանց, իշխանը հարցրեց.

—Դուք միայնակ էք այստեղ:

—Ոչ, մի խումբ ձիաւորներ փոքր ինչ հեռու, անտառում կանգնած են, ապահովութեամբ պատասխանեցին նրանք, երբ տեսան իրանց իշխանին:

—Ձիաւորները թող մնան իրանց տեղում, դուք բաւական էք ինձ, եկէք իմ ետևից:

Նրանք թաքնվեցան ծառերի մէջ, ճանապարհի այն կողմում, որտեղից պիտի անցնէր Մէլիք-Ֆրանգիւլը իր տունը գնալու համար: Եւ երբ դաւաճանը յայտնվեցաւ, բաւական մօտից հետևում էին նրան, և մինչև անգամ լսում էին նրա խօսակցութիւնը իր գզիրի հետ:

Գիշերային խաւարը մի կողմից, խիտ ծառերի մասսայը միւս կողմից, անտեսանելի էին կացուցանում նրանց: Միայն մէլիքի շղոշ ջորին կարողացաւ նկատել դարանամուտների ներկայութիւնը, բայց նրա նախազգուշութիւնների վրա ուշադրութիւն չը դարձրին:

Երբ չարագործի գլուխը ձգեցին խրամատի մէջ, յետոյ Իշխանը Զուռնաչուղի և Աղասիի հետ գնացին դէպի «Կարմիր վանքի» աւերակները: Այդ ժամանակ նրանց պատահեց դէրվիշը և անհամբերութեամբ հարցրեց.

—Վերջացրի՞ք...

—Վերջացրինք... պատասխանեց Իշխանը:—Իսկ դո՞ւք...

—Մենք էլ վերջացրինք... ասաց դէրվիշը խորհրդաւոր ձայնով, և սկսեց առաջնորդել նրանց դէպի «Կարմիր վանքի» աւերակները:

Այդ աւերակների մէջ կարող էր մի ամբողջ լէգէօն թաղնուել: Վանքի կիսաւեր տաճարը, միաբանների բազմաթիւ խուցերից շատերը դեռ անբողջ էին:

Խուցերից մէկի մէջ նստած էր այդ վանքը բնակողի գեղեցիկ կինը՝—Սիւրին: Մօր ծնկների վրա գլուխը դրած, քնել էր տիկնոջ աղջիկը՝—Ֆաթիմանը: Վաղուց կրակ չը տեսած բուխարու մէջ ծըխում էին մի քանի կտոր փայտեր, և տարածում էին իրանց աղօտ լոյսը տիկնոջ անհանգիստ դէմքի վրա: Նրա առջև կանգնած էր Ներքինապետը և քաջալերում էր նրան.

—Մի՛ վախէք, տիկին, հիմա կը գայ նա... որտեղ որ է, շուտով կը յայտնուի... նա չի ուշանայ...

—Գուցէ մինչև նրա գալը...

Տիկինը չը կարողացաւ վերջացնել սոսկալի խօսքը: Ներքինապետը հասկացաւ նրան, և աշխատեց հանգստացնել.

—Ոչ ոք չէ՞ նկատել ձեր ամրոցից դուրս գալը. հիմայ այնտեղ ամենքը խանի վէրքի վրա են մըտածում. կանանոցը մնացել է բոլորովին անտէր. ո՞վ պէտք է հասկանայ, որ կիններից մէկը պակաս է: Եթէ տանն էլ պակասելու լինի, այդ կը հասկանան, գուցէ մի քանի օրից յետոյ: Իսկ մեզ բաւական է այս գիշերը միայն...

Տիկինը չէր վախենում. նա միայն զգուշանում էր: Այն անսահման ուրախութիւնը, որ այժմ լըցրել էր նրա սիրտը, չէր կարող տեղի տալ երկիւղի: Նա զգուշանում էր, մի գուցէ զրկվէր այդ ուրախութիւնից:

—Մենք վատ տեղ ընտրեցինք... ասաց նա:

—Այդ աւերակներից աւելի ապահով տեղ չը կայ, պատասխանեց Ներքինապետը:

—Նա իմանո՞ւմ է, որ ես այստեղ սպասում եմ նրան:

—Իմանում է. ես նախապէս յայտնել եմ բոլորը:

—Ծանօթ է ճանապարհների հետ:

—Դէրվիշը կառաջնորդէ նրան:

Դրսից լսելի եղան ոտքերու ձայներ:

—Գալիս են... ասաց Ներքինապետը և շտապով դուրս եկաւ խուցից:

Այդ լուրը այնպիսի մի ուրախութիւն ազդեց տիկնոջը, որ նա ամբողջ մարմնով ցնցվեցաւ: Այդ ցնցումից զարթնեց Ֆաթիման, որ նրա ծընկների վրա պառկած էր:

—Ես մի լաւ երազ տեսայ, մայրիկ, ասաց նա.

—կուզես, պատմեմ:

Մայրը ուշադրութիւն չը դարձրեց նրա երազի վրա և ցնորվածի նման վազեց դէպի խուցի դուռը: Այդ միջոցին մի երիտասարդ գրկեց նըրան:

Դէրվիշը, Ներքինապետը, Ջումշուդն ու Աղասին մնացին խուցի դռանը, ներս չը մտան, որ իրանց ներկայութեամբ չը խանգարեն երկու վաղեմի սիրահարների հոգեզմայլութեանը:

—Այդ ով է, մայրիկ, հարցրեց Ֆաթիման:

—Քո հայրը, զաւակս, պատասխանեց մայրը:

Իշխանը մի ձեռքով բռնեց տիկնոջ ձեռքից, միւսով Ֆաթիմայի ձեռքից, և դուրս եկան խուցից: Այդ միջոցին մօտեցան դէրվիշն ու Ներքինապետը և օրհնեցին նրանց բախտաւորութիւնը: Նոյնը արեցին Ջումշուդն ու Աղասին:

Հեռանալով վանքի աւերակներից, նրանք դիմեցին դէպի անտառը, որի մէջ պահված էր իշխանի ձիաւորների խումբը:

Այստեղ իշխանը բռնեց դէրվիշի ձեռքը, և հրաժարական ողջոյն տալով, ասաց.

—Շնորհակալ եմ ձեր բարերարութեան համար,

դէրվիշ, ես չեմ մոռանայ ձեր առաքինութիւնները:

Աւելի սրտաշարժ էր տիկնոջ հրաժարականը.

—Ես հօր կողմից անբախտ եմ եղել, դէրվիշ, ասաց նա.—իսկ դուք ամբողջ տասն տարի մխիթարել էք ինձ, և ինձ վրա հայրական խնամք էք ունեցել: Թոյլ տուեցէք ինձ համբուրել ձեր աջը, և այդ թող լինի իմ խորին երախտագիտութեան հատուցումը:

Դէրվիշը մեկնեց նրան իր աջը, ասելով.

—Ձեր բախտաւորութիւնը, տիկին, ինձ համար մեծ վարձատրութիւն է: Ես այսուհետև ինձ միշտ երջանիկ կը համարեմ, որ կարողացայ ձեզ համար մի բարիք գործել:

Ներքինապետը գրկվեցաւ դէրվիշի հետ և արտասուքը աչքերում ասաց նրան.

—Ցաւում եմ, որ դուցէ միւսանգամ չի պիտի կարողանամ տեսնել ձեզ և չի պիտի լսեմ ձեր իմաստուն խօսքերը: Ես կը ցանկանայի ձեր ճըգնարանի աւելի մօտ լինել: Բայց ձեզ յայտնի է, որ իմ կեանքը նուիրված է իմ սիրելի տիկնոջը: Նա այժմ հեռանում է այստեղից, իսկ ես նրանից բաժանվել չեմ կարող:

—Գնացէք, Տէրը թող ձեզ հետ լինի, ասաց դէրվիշը.—բայց ես կը մնամ բռնակալի ամրոցի մօտ... կապրեմ նրա քանդած աւերակների մէջ... դուցէ

մի անգամ ևս դարձեալ հարկատու կը լինեն գործին…

Նրանք մտան մթին անտառը, ուր սպասում էին ձիաները: Դերվիշը իր վերջին օրհնութիւնը տալով, ճանապարհ դրեց նրանց:

Նա երկար կանգնած գիշերային խաւարի մէջ, խորին բերկրութեամբ նայում էր դէպի այն կողմը, ուր գնաց հարեմի գերութիւնից ազատուած կինը սիրելի տղամարդի հետ: Երբ ձիաների ոտնաձայնը բոլորովին լռեց, նա կրկին վերադարձաւ դէպի «Կարմիր վանքի» աւերակները և մըտաւ իր ճգնարանը…

—

Բարգիւշատի Եղուարդ գիւղի եկեղեցու դռան հանդէպ կայ մի փոքրիկ գերեզմանատուն: Այդ գերեզմանատան համարեա թէ եզրի վրա այժմ գտնվում է մի հոյակապ շիրիմ, որ որոշվում է միւսներից իր մեծութեամբ: Տապանաքարի մէկ երեսի վրա քանդակված է մենամարտութեան հանդէս: Մի զինակիր, մէկ ձեռքով բաց սուրը բռնած, միւսով իր տիրոջ ձիու սանձը, կանգնել է: Մի փոքր ինչ հեռու նրա տէրը մենամարտում է մի հսկայի հետ: Տապանաքարի միւս երեսի վրա արհեստաւորի ֆանտազիան ստեղծել է մի այլ խորհրդաւոր պատկեր: Մի աղուէս, ամեհի առիւծի գլուխը իր բերանի մէջ առած, աշխատում է

կլանել նրան:—Խորամանկութիւնը ոչնչացնում է քաջութիւնը:

Տապանաքարի արձանագրութիւնը ժամանակից եղծված է: Հարցրէք. այդ ում գերեզմանն է: Ձեզ կը պատասխանեն.

—Դա Զանգեզուրի իշխան Թորոսի գերեզմանն է, այն հերոսի, որ իր ամբողջ կեանքում կռուեց մեր հայրենիքի թշնամիների հետ, իսկ վերջը զոհ եղաւ Մելիք-Ֆրանգիւլ դաւաճանի խորամանկութեանը…

Յետոյ ձեզ ցոյց կը տան «Նարգիզների դաշտը», ուր կատարվեցաւ ողբալի պատերազմը:

—

Երրորդ գրքի վերջը:

ՄԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

«Դաւիթ Բէկի» երրորդ գրքի 47—50 երեսների մէջ մտան մի քանի պատմական և աշխարհագրական սխալներ, որովհետև այդ երեսները տպված էին նախ քան մեր 1881 թուի ճանապարհորդութիւնը Սիւնեաց աշխարհում, որ կատարվեցաւ այդ վէպը իր տեղում ուսումնասիրելու նպատակով: Մեր սխալը ուղղելու համար, սկսեալ 47 երեսի 13-րդ տողից մինչև 50 երեսի 6-րդ տողը փոխեցինք հետևեալ կերպով.

Դաւիթ-բէկը ընտրել էր իր հայրենիքի ամենաընդարձակ մասը, որ ընդհանուր անունով կոչվում էր Մեծ-Սիւնիք: Այստեղ դեռ շարժում չը կար, թէ և այս կողմերումն էին երկրի գլխաւոր ուժերը, թէ և այստեղ էին հայոց նշանաւոր մէլիքները: Մեծ-Սիւնիք նահանգը բաժանված էր այդ ժամանակ եօթն ընդարձակ գաւառների, որոնք սկսեալ Երասխի ափերից տարածվում էին մինչև Սևանայ լիճը, մինչև Հաքարի գետը: Այդ եօթն գաւառները հետևեալներն էին.

1. Գողթան, ուր տիրում էր Մէլիք-Մուսան, 2. Գենուազ, ուր տիրում էր իշխան Ստեփաննոս Շահումեանը, 3. Ղափան, ուր տիրում էր Մէլիք-Փարսադանը, 4. Զանգուր, ուր տիրում

էր Թորոս իշխանը, 5. Բ ա ր դ ի ւ շ ա տ, ուր տիրում էր Մէլիք-Ֆրանգիւլը, 6. Ս ի ս ի ա ն, ուր տիրում էր Բայինդուր իշխանը, 7. Ջ ա ն դ ա զ ո ր, ուր տիրում էր Մխիթար սպարապետը: Այս կողմերում դեռ շարժում չը կար, դեռ սպասում էին, դեռ գտնվում էին անվճռականութեան մէջ:

Շարժումը սկսվել էր վերոյիշեալ գաւառների, այսինքն Մեծ-Սիւնիքի հիւսիս-արեւելեան կողմերում: Այստեղ սկսեալ Երասխի ափերից մինչեւ Գանձակի սահմանը, որ էր Քուրակ-չայ գետը, տարածվում էին հինգ փոքրիկ գաւառներ, որոնք միասին կազմում էին մի ամբողջ նահանգ, որ կոչվում էր Փոքր-Սիւնիք կամ Արցախ: Դա այժմեան Ղարաբաղն է:

Ղարաբաղի կամ Արցախի հինգ գաւառները հետեւեալներն էին.

1. Գ ի ւ լ ի ս թ ա ն, ուր տիրում էր Մէլիք-Իւսուբը, 2. Ջ ր ա բ ե ր դ, ուր տիրում էր Մէլիք-Աթամը, 3. Խ ա չ ե ն, ուր տիրում էր Մէլիք-Ալլահվէրդին, 4. Վ ա ր ա ն դ ա, ուր տիրում էր Մէլիք-Յիւսէյնը, 5. Դ ու ղ ա խ, ուր տիրում էր Մէլիք-Եգանը:

Յիշեալ հինգ գաւառները կազմում էին հինգ հայ մէլիքութիւնների դաշնակցական մի իշխանութիւն, որ պարսիկները կոչում էին Խ ա մ ս ա-մ է լ ի ք լ ա ր, *) այսինքն հինգ մէլիքութիւններ:

*) Խ ա մ ս ա արաբերէն նշ. հինգ:

Այդ հինգ մէլիքներից մէկը, Դուղախի Մէլիք-Եգանը, որ յետոյ կոչվեցաւ Մէլիք-Աւան-խան, *) գերիշխանութիւն ունէր միւսների վրա: Նրա գլխաւոր դաշնակիցն էր Աւան-Միրզան, **) որ բնակվում էր իր անմատչելի ամրոցում, որ գտնվում է այժմեան Շուշի քաղաքի մօտ եւ մինչեւ այսօր կոչվում է Աւանի քերծ (Աւանի ժայռ:)

Աւան-Միրզան մեր պատմութեան մէջ յայտնի է անունով Յովհաննէս իշխան: Նրան երբեմն կոչում են գուգարացոց, երբեմն ուտէացոց, իսկ երբեմն իր բերդի անունով կոչում են Մեծ-Սղնախի իշխան, որովհետեւ իշխում էր զանազան տեղերում, ուր իր սուրը յաջողութիւն էր գտնում: Նա չափազանց խիստ, կամակոր եւ հպարտ մի անձնաւորութիւն էր, իր մէջ կրում էր արկածախնդիր ասպետի բոլոր յատկութիւնները: Իր թըշ-

*) Մէլիք-Եգանը Նադիր-շահին մատուցած իր մեծ ծառայութիւնների համար նրանից ստացաւ խանութեան աստիճան եւ կոչվեցաւ Մէլիք-Աւան-խան: Իսկ յետոյ ռուսաց Աննա Իվանովնա կայսրուհու ժամանակ իր ընտանիքով գնաց Ս. Պետերբուրգ, փառաւոր ընդունելութիւն գտաւ ռուսաց արքունիքում եւ գեներալ մայորի աստիճան ստացաւ:

**) Մ ի ր զ ա բառը պարսից լեզւում, երբ իբրեւ ածական յատուկ անունների վերջն է դըրվում, նշանակում է իշխան, պրինց, այդ ածականը տալիս են արքայազուններին միայն:

նամիներին սարսափի մէջ պահելը—գլխաւոր պայմանն էր նրա զօրութեան: Ահա այդ հերոսից գլխաւորապէս օգուտ քաղեց Մէլիք-Աւան-խանը (Մէլիք-Եգանը) իր մեծ ձեռնարկութիւնների մէջ:

Լինելով գլուխ հինգ դաշնակցական մէլիքութիւնների, Մէլիք-Աւան-խանը միացրել էր ամբողջ Ղարաբաղը (Փոքր-Սիւնիքը կամ Արցախը) և այսպէսով կազմել էր մի ահագին ուժ: Երբ ռուսները տիրեցին Դէրբէնդը և Բաքուն, նա սկսեց իր դաշնակից Աւան-Միրզայի հետ բանակցութիւններ անել Պետրոս մեծի հետ, առաջարկելով կայսրին իրանց ծառայութիւնը, և խնդրելով նրա հովանաւորութիւնը պարսից լծից ազատվելու համար: Այդ է պատճառը, որ այդ երկու նշանաւոր իշխանների անուններին մենք յաճախ հանդիպում ենք ռուսաց հին աքտերում:

Այդ երկու Աւանները, *) *որպէս երկու հզօր հսկաներ, ամենայն եռանդով աշխատում էին իրանց հայրենիքի վերածնելութեան գործում. մէկը, իբրև հանճարեղ քաղաքագէտ, միւսը, իբրև քաջ պատերազմող:*

---

*) *Աւան, Եգան, Օհան բառերը Յովհաննէս յատուկ անուան աղճատվածներն են սիւնեցիների բարբառում:*

ՎՐԻՊԱԿՆԵՐ

7—	եր.	14 տող	*Զ ո ւղ ա—Ջուղայ:*
20	»	6 —	*ց ր վ ի մ ք—ցրվինք:*
21	»	14 —	*ա ն կ ա խ ո ւ խ ե ա ն — անկախութեան:*
23	»	8 —	*ո ւ ն ի—ունէր:*
50	»	6 —	*փ ո ք ր Ս ի ւ ն ի ք ի և Ա ր ց ա խ ի ն ա հ ա ն գ ն ե ր ո ւ մ—փոքր Սիւնիքի կամ Արցախի նահանգում:*
51	»	14 —	*է ր—իր:*
58	»	27 —	*բ ա լ ա ն ի ն—բանալին:*
62	»	27 —	*Ղ ա փ ա ն—Սիսիան:*
92	»	4 —	*մներձոգ—քրոջ որդի:*
98	»	27 —	*Ղ ա ր ա բ ա ղ—Ղափան:*
100	»	26 —	*հ կ փ վ ա ծ—կոփված:*
168	»	4 —	*Բ ա ղ ա բ ե ր դ—Ալթինջի բերդ:*
172	»	2 —	*ք ո ւ ր դ ե ր է ն—թիւրքերէն:*
176	»	10 —	*ց ո ղ ի—ցօղի:*
204	»	26 —	*ս օ ս ի ա ց—սօսեաց:*
208	»	26 —	*կ ի ն—էին:*
255	»	4 —	*խ ո խ ո ւ մ ն ե ր ի— խոխոմների:*
290	»	25 —	*ի ր ա—իրանց:*
290	»	27 —	*ա հ ա ն ա ն—քահանան:*
430	»	2 —	*պ ա հ պ ա ն ե լ—պահպանվել:*
459	»	1 —	*հ օ տ ե ր ը—հօտերով:*
467	»	9 —	*ե ր ր է ր—էր, երբ:*
554	»	16 —	*տ ե ս ն ե լ—տեսնելու:*

ՀՀ Ազգային գրադարան
NL0375158

59164